

R. BAKHTCHADJIAN

FAMOUS ARMENIANS
AT THE BEGINNING OF THE XXI CENTURY

Contribution to Modern Civilisation

ARMENIAN BIOGRAPHICAL CENTRE
MARSEILLES 2008

Ռ.ԲԱԽՉԱԶՅԱՆ

21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԻԻ
ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԵՐ

Ներդրում ժամանակակից
քաղաքակրթության մեջ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՄԱՐՍԵԼ 2008

Ա Ռ Ա Տ Ա Բ Ա Ն

Ձի թէպէտ եւ եմք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանել, եւ զօրութեամբ տկար եւ ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոյ յիշատակի, զոր եւ ոչ մի ոք ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենագրել:

Մովսէս ԽՈՐԵՆԱՅԻ
«Պատմութիւն Հայոց»
(5-րդ դար)

Պատմահայր Խորենացու բազմիցս հիշատակված այս տողերն այսօր մույնքան արդիական են, որքան 16 դար առաջ: Արժանի են «գրոյ յիշատակի» բյուրավոր հայերի անուններ, որոնք հաճախ «եւ ոչ մի ոք ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենագրել»:

Յարդ, մտավոր այն հսկայական ներդրումը, որ աշխարհասփյուռ հայությունն ունի ժամանակակից քաղաքակրթության զարգացման մեջ, իր մի զգալի մասով արժանի փաստագրման և վերլուծության չի արժանացել: Հատկապէս օտարալեզու ընթերցողը սահմանափակ տեղեկություններ ունի այն դերի ու ավանդի մասին, որ տարբեր երկրներում բնակվող հայերն ունեն գործունեության զանազան ասպարեզներում: Սույն հատորը ընթերցողին է ներկայանում մասամբ լրացնելու այդ բացը:

Կենսագրականների այս հատորը, որն արդյունք է երկարամյա նախապատրաստական աշխատանքի, նպատակ ունի հայ և օտար ընթերցողին ներկայացնել ժամանակակից՝ 21-րդ դարի սկզբի հայազգի այն անհատներին, որոնք նշանակալից ներդրում ունեն հասարակական, քաղաքական և գիտական մտքի, տնտեսական առաջընթացի, արվեստի և գրականության զարգացման մեջ ամբողջ աշխարհում: Այն չի ընդգրկում միայն մարզական ոլորտը, որն իր հարստությամբ կարող է առանձին ուսումնասիրության նյութ ծառայել:

Երկլեզվյա (հայերեն և անգլերեն լեզուներով) ներկա հրատարակության առկայությունը հնարավորություն կտա նախնական համառոտ տեղեկություններ ստանալ Հայաստանի և սփյուռքի մեր հայրենակիցների մասին մասնագիտա-

ISBN 978-2-9532736-01

Չեղինակային իրավունքները պաշտպանված են օրենքով:
All rights reserved.

կան ամենատարբեր բնագավառներում: Բացի այս, հատորը հնարավորություն կտա տարբեր երկրներում բնակվող մեր հայրենակիցներին և օտարներին, թեև սահմանափակ, բայց ընդհանրական պատկերացում կազմել հայության դերի մասին ժամանակակից աշխարհում՝ միաժամանակ նպաստելով սփյուռքի տարբեր հատվածները միմյանց և հայրենիքի հետ կամրջելուն: Մեր նպատակներից մեկն էլ եղել է ցույց տալ, որ հայազգի կամ հայկական ծագում ունեցող բազում անհատների գործունեությունը, իբրև կանոն, դուրս է գալիս ազգային շրջանակներից և ծառայում է համամարդկային արժեքների ստեղծմանն ամենատարբեր բնագավառներում:

Ունենալով «Ով ով է» հրատարակություններին բնորոշ գրեթե բոլոր առանձնահատկությունները՝ ներկա հատորն այնուամենայնիվ չի դասվում կենսագրական հրատարակությունների այդ շարքին: Կենսագրականների ընտրությունը հիմնված չի եղել լոկ նեղ մասնագիտական ասպարեզում հանրաճանաչության ընդունված չափանիշների կամ ընդգրկված անձանց հասարակության մեջ զբաղեցրած պաշտոնական դիրքի առաջնայնության նկատառումների վրա: Ամենից առաջ հաշվի է առնված այն հսկայական գործնական նպաստը, որ հիշատակված անհատներից յուրաքանչյուրն իր գործունեությամբ բերել է Հայաստանին, սփյուռքի տարբեր հատվածներին և մեր ժողովրդին՝ ընդհանրապես: Հանրագիտարաններում կամ տեղեկատու կենսագրական հատորներում տեղ գտնող հոդվածները սովորաբար չեն արտացոլում այդ անհատների գործունեության այս կողմը:

Սփյուռքահայ մեր հայրենակիցներից շատերի կենսագրականները տասնյակ անգամ տպագրվել են օտար լեզուներով լույս ընծայված բազմաթիվ կենսագրական հեղինակավոր հատորներում և հանրագիտարաններում, սակայն, ցավոք, տեղ չեն գտել ո՛չ Հայաստանի, ո՛չ էլ սփյուռքի հայերեն հրատարակություններում: Իսկ տարբեր բնագավառներում աշխատող մեր հայրենաբնակ գործիչները, մասնագետներն ու արհեստավարժները հաճախ հայտնի են միայն օտարալեզու ընթերցողների շատ նեղ շրջանակին: Բազմաթիվ են այն դեպքերը, երբ օտարալեզու հանրագիտարանները կամ կենսագրական հատորները ներկայացնելով մեր հայրենակիցներին, նրանց դերը այս կամ այն մասնագիտական բնագավառում, հազվադեպ դեպքերում են անդրադառնում նրանց ծառայություններին սեփական ժողովրդին, որի մշակույթի, սովորույթների, կրթության, ազգային առանձնահատկությունների կրողներն են այդ անհատները: Մինչդեռ այս հանգամանքը չափազանց էական է: Էական է հենց իրենց՝ այդ անձանց սեփական գնահատմամբ: Հաճախ հենց ազգային ծագումն է նպաստել այդ անհատների ձևավորման և սոցիալ-քաղաքական ամենատարբեր պայմաններում նրանց ընդունակությունների դրսևորման համար: Շատ նշանավոր հայազգի անհատների համար իրենց ծագումը հպարտության և ներշնչանքի հիմնական աղբյուրն է: Այդ մասին են վկայում հատորի պատրաստման ընթացքում մեզ հասած բազմաթիվ նամակները: Ժամանակակից պայմաններում, երբ սփյուռքի բազմաթիվ հատվածներ հայապահպանման տեսակետից երբեք չեն հիմքերի վրա են շարունակում իրենց գոյությունը, առավել մեծ նշանակություն է ստանում այն անհատների գործունեության գնահատումը, որոնք իրենց հայի կերպարով օրինակ են ծառայում ամբողջ ազգի համար:

Նկատի առնելով, որ տարբեր երկրներում բնակվող մեր հայրենակիցների զգալի մասն ու հատկապես օտարները չեն տիրապետում հայերենին, բոլոր կենսագրականները գրեթե ամբողջականորեն հարկ համարեցինք ներկայացնել նաև անգլերեն լեզվով:

Կենսագրականները կազմվել են Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաթերթի» հիման վրա ստացված տվյալներով: Ցավոք, ոչ բոլոր դեպքերում է, որ հնարավոր է եղել կենսագրականների կազմումն ու խմբագրումն իրականացնել անմիջականորեն ընդգրկված անձանց կողմից ստացված տվյալների հիման վրա:

Բազմաթիվ դեպքերում ընդգրկված անձանց հասցեագրված մեր դիմումները մնացել են անպատասխան: Նման պարագայում ստիպված ենք եղել օգտագործել տեղեկատվական աղբյուրներում եղած և բաց ու հանրամատչելի տպագրությամբ հրատարակված տվյալները: Այդ մասին հատուկ նշում է արված յուրաքանչյուր հոդվածի վերջում: Ակնկալտ է, որ նման դեպքերում գրեթե անհնարին է դառնում կենսագրականների ներկայացումը բոլոր անհրաժեշտ տվյալների ընդգրկմամբ և լիակատար անթերիության ապահովումը առանձին կենսագրական մանրամասների վերաբերյալ: Բոլոր դեպքերում աշխատել ենք հիմնվել հնարավորինս հավաստի տեղեկությունների վրա: Այս կանխակցությամբ հայցում ենք ընթերցողի ներողամտությունը բոլոր հնարավոր ակամա վրիպումների, բացթողումների ու թերությունների համար՝ հուսալով, որ դրանք կսրբագրվեն հետագա հատորներում:

Հեղինակը բնավ չի հավակնում ամբողջական համարել ներկայացվող անձանց ցանկը: Այսուհանդերձ, հայ և օտար ընթերցողներն առաջին անգամ այստեղ կգտնեն իրենց անձանոթ բազմաթիվ անուններ, որոնք այս կամ այն պատճառով անհրաժեշտ ուշադրության չեն արժանացել մինչև այժմ հանրագիտական կամ կենսագրական հրատարակություններ պատրաստողների կողմից: Յուրաքանչյուր ընթերցող կարող է անմիջապես ակնարկել այս կամ այն ասպարեզում հայտնի շատ անունների բացակայությունը: Որոշ դեպքերում դա պայմանավորված է մեզ հասանելի անհրաժեշտ կենսագրական տեղեկությունների խիստ սահմանափակվածությամբ կամ գործնականորեն դրանց բացակայությամբ, ինչպես նաև ոմանց անտարբերությամբ այս հատորի ստեղծման նկատմամբ: Այս կապակցությամբ հիշեցնենք մեր հարգարժան ընթերցողին, որ այդ բացն աստիճանաբար կլրացվի հետագա հատորներում: Այս հատորն առաջին փորձն է մեր ժամանակակից ակնավոր հայազգի դեմքերի առնվազն մի փոքր խմբին ներկայացնելու հանրության լայն շրջանակներին:

Ցանկը չի կազմվել հատուկ սահմանափակումներով՝ ընդգրկված անձանց թվի տեսակետից (այն անհրաժեշտաբար մնում է շարունակելի): Ընդգրկումն այս հատորում յուրաքանչյուր դեպքում հիմնված է եղել միայն այն արժանիքների վրա, որ այդ անձինք ունեն մասնագիտական կամ հասարակական գործունեության առանձին ասպարեզներում և որոնք համապատասխանում են որոշակի չափանիշների:

Հատորն, ակներևաբար, հաստատում է այն փաստը, որ աշխարհասփյուռ հայությունը նեկայումս ունի հսկայական մտավոր ներուժ, որը միայն մասամբ է ուսումնասիրված և պատշաճորեն ներկայացված հայ և օտար ընթերցողին: Ցրված լինելով ամբողջ աշխարհում՝ ներկայումս օգտագործվում է այդ ներուժի

չնչին մասը: Հույսով ենք, որ հատորն օգտակար կլինի և՛ հայ, և՛ օտար ընթերցողին և գործնական նշանակություն կունենա յուրաքանչյուր ընթերցողի համար հարստացնելու իր իմացությունը մեր ժամանակակիցների՝ 21-րդ դարի ակնառու հայերի մասին:

Հեղինակը գոհունակությամբ նկատի կառնի բոլոր դիտողություններն ու առաջարկությունները: Բացի այս, հեղինակը խնդրում է իր ընթերցողներին առաջարկել բոլոր այն անձանց թեկնածությունը, ովքեր կարող են արժանի տեղ զբաղեցնել այս հրատարակության հաջորդ հատորներում: Հայկական կենսագրական կենտրոնը հավաստիացնում է, որ յուրաքանչյուր առաջարկվող անուն բարյացակամորեն ու մանրամասնորեն կուսումնասիրվի և որոշակի չափանիշների համապատասխանության դեպքում կընդգրկվի հետագա հատորներում:

Հատորի անգլերեն բաժնի պատրաստմանն իր մասնակցությունն է բերել ամերիկահայ պատմաբան և քաղաքագետ, դր. Կ. Մոնճյանը, որի համար հեղինակն իր խորին շնորհակալությունն է հայտնում:

Հեղինակն իր երախտագիտությունն է հայտնում բոլոր այն անձանց, ովքեր քաջալերեցին այս նախաձեռնությունը և նպաստեցին հատորի ստեղծմանը: Շնորհակալություն նաև այն անձանց, ովքեր իրենց արժեքավոր առաջարկություններով հարստացրեցին ընդգրկված անձանց ցանկը:

Հատուկ շնորհակալություն այն անձանց, ովքեր աջակցեցին հատորի հրատարակմանը նաև ֆինանսապես, հատկապես ամերիկահայ մի բարերարի, որը չցանկացավ հրապարակել իր անունը, և Ռուսաստանի հայերի միության ղեկավարությանը:

*Հեղինակ
Մարսել, Ֆրանսիա
2008թ.*

Հեղինակի մասին

Իրեն մասնագիտություն ընտրած լինելով բնական գիտությունների (քիմիական ֆիզիկա և օրգանական քիմիա) ուսումնասիրության ոլորտը՝ սույն հատորի հեղինակը միշտ էլ առանձնակի հետաքրքրություն է ցուցաբերել նաև հայկական իրականության մեջ առկա հիմնախնդիրներին և՛ հայրենիքում, և՛ սփյուռքում: Այդ հետաքրքրությունների շրջանակում էլ առաջացել է սույն հատորի ստեղծման մտահղացումը, որի իրականացման նպատակով Ֆրանսիայի Մարսել քաղաքում հիմնել է Հայկական կենսագրական կենտրոն ընկերությունը 2004 թվականին:

Հեղինակի կենսագրությունն իր հիմնական գծերով կապված է գիտական մի քանի հաստատությունների հետ: Նախ գերագնացությամբ ավարտելով Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը 1979 թվականին՝ աշխատել և ուսանել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում, որտեղ և պաշտպանել է իր թեկնածուական ատենախոսությունը քիմիայի բնագավառում 1986 թվականին, ապա իր գիտական հետազոտությունները շարունակել է Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի ստորաբաժանումներից մեկում՝ ստանալով դոկտորի գիտական կոչման վկայագրի ֆրանսիական համարժեք՝ 1998 թվականին, այնուհետև նաև Էքս-Մարսելի համալսարանի գիտական լաբորատորիաներում:

Բնագիտության ոլորտում հեղինակ է մոտ 60 գիտական աշխատության՝ հոդվածների, զեկույցների, գյուտերի: Բացի այս, զանազան հոդվածներ է հրատարակել Հայաստանի և սփյուռքի պարբերականների էջերում: Անդամակցել է Նյու Յորքի գիտությունների ակադեմիային, «Արարատ» գիտությունների միջազգային ակադեմիային, Ամերիկյան կենսագրական ինստիտուտին և այլ մասնագիտական ու հասարակական կազմակերպությունների:

Նրա աշխատանքներն արժանացել են բազմաթիվ գիտական դրամաշնորհների և մրցանակների, այդ թվում ԱՄՆ-ի Միջազգային գիտական հիմնադրամի 1993թ. և Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի 1996թ. դրամաշնորհների, Ֆրանսիայի «Պրովանս-Մետրոպոլի» տնտեսական և գիտական զարգացման հանձնախմբի մրցանակի՝ 1999թ-ին, Ամերիկյան կենսագրական ինստիտուտի պատվավոր անդամի կոչման՝ 2003թ-ին և այլն: Նրա կենսագրականն ընդգրկված է «Ով ով է աշխարհում» (ԱՄՆ-ի «Մարկիս» հրատարակության 18-րդ և հետագա հատորներում, սկսած 1998թ-ից), «20-րդ դարի նշանավոր մարդիկ» (Միջազգային կենսագրական կենտրոն, Քեմբրիջ, 2000թ.) և աշխարհի մոտ երկու տասնյակ այլ կենսագրական հրատարակություններում:

Սույն հատորը հեղինակի առաջին ամբողջական աշխատությունն է արդի ժամանակաշրջանի հայագի նշանավոր գործիչների կենսագրականների ներկայացման ասպարեզում, որն իրականացրել է տարիների ընթացքում իր հավաքած նյութերի հիման վրա:

ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ

Ա

ԱԲԳԱՐՅԱՆ Էղվարդ (Ռուսաստան)	18
ԱԲԳԱՐՅԱՆ Վարդգես, Արա (ԱՄՆ)	18
ԱԲԵԼՅԱՆ Տիրան (ԱՄՆ)	19
ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Արա (Ռուսաստան)	21
ԱԶԱՏՅԱՆ Վիլեն (Ռուսաստան)	22
ԱԶՆԱՎՈՒՐ Շարլ (Ֆրանսիա)	23
ԱԼԻԽԱՆՈՎ Տիգրան (Ռուսաստան)	25
ԱՂԱՆԲԵԿՅԱՆ Աբել (Ռուսաստան)	26
ԱՂԱՏԱՆՅԱՆ Նիկոլայ (Ռուսաստան)	27
ԱՂԲԱԲՅԱՆ Միհրան (ԱՄՆ)	28
ԱՃԵՍՕՂԱՈՒ Տարոն (ԱՄՆ)	29
ԱՄԻՐԻՆԱՆՅԱՆ Ռոբերտ (Հայաստան)	30
ԱՅԼԱՄԱԶՅԱՆ Էղվարդ (Ռուսաստան)	30
ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ Կարապետ (Գերմանիա)	31
ԱՌԱԶԵԼՅԱՆ Նորայր (Հայաստան)	32
ԱՎԱԳՅԱՆ Հայկ (Եգիպտոս)	33
ԱՐԱԲՅԱՆ Արմանդ (ԱՄՆ)	34
ԱՐԱՍ Ա (Լիբանան)	36
ԱՐԵՎՇԱՏՅԱՆ Սեն (Հայաստան)	37
ԱՐՄԱՆԻ Նորա (ԱՄՆ)	38
ԱՐՄԵՆ Կարո (ԱՄՆ)	39
ԱՐՄԵՆՅԱՆ Րաֆֆի (Կանադա)	40
ԱՐՍԼԱՆ Անտոնիա (Իտալիա)	41
ԱՐՍԼԱՆՅԱՆ Լևոն Կարլոս (Արգենտինա)	42

Բ

ԲԱԲԱՅԱՆ Բորիս (Ռուսաստան)	42
ԲԱՂԱՆՅԱՆ Ստեփան (Հայաստան)	43
ԲԱԼԱՅԱՆ Զորի (Հայաստան)	44
ԲԱԼԱԶՅԱՆ Պիտեր (ԱՄՆ)	45
ԲԱԼԻՈԶՅԱՆ Արա (Կանադա)	46
ԲԱԼՅԱՆ Ռոմե (Ֆրանսիա)	47
ԲԱՂԴԻԿՅԱՆ Բեն, Հայկ (ԱՄՆ)	48
ԲԱՂՅԱՆ Ջեյմս (ԱՄՆ)	49
ԲԱՅՐԱԿԿԱՐՅԱՆ Իզաբել (Կանադա)	51

ԲԱՐՈՆՅԱՆ Ժան-Բատիստ (Բելգիա)	52
ԲԱՐՍԵՂՈՎ Յուրի (Հայաստան)	52
ԲԵՂԵԼՅԱՆ Հարո (Միացյալ Թագավորություն)	53
ԲՐՈՒՏԵՆՅ Կարեն (Ռուսաստան)	55

Գ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Էմիլ (Հայաստան)	56
ԳԱԳՈՍՅԱՆ Ռոբերտ (ԱՄՆ)	57
ԳԱՍՊԱՐՅԱՆ Տիվան (Հայաստան)	58
ԳԱՐԵԳԻՆ Բ (Հայաստան)	59
ԳԱՐՈՅԱՆ Մարիոս (Կիպրոս)	60
ԳԱՖԵՍՃՅԱՆ Ջերալդ (ԱՄՆ)	61
ԳԵՎՈՐԳՅԱՆ Ժիրայր (ԱՄՆ)	62
ԳԵՎՈՐԳՅԱՆ Ռեյմոն, Հարություն (Ֆրանսիա)	63
ԳՈՎՃՅԱՆ Ալեքսի (Ֆրանսիա)	64
ԳՐԻԳՈՐՅԱՆ Գեղամ (Հայաստան)	65
ԳՐԻԳՈՐՅԱՆ Ռուբեն (Բուլղարիա)	66
ԳՐԻԳՈՐՅԱՆ Սամվել (Ռուսաստան)	67
ԳՐԻԳՈՐՅԱՆ Սուսաննա (Գերմանիա)	69
ԳՐԻԳՈՐՅԱՆ Վարդան (ԱՄՆ)	69
ԳՈՒՅՈՒՄՏՅԱՆ Տիգրան (ԱՄՆ)	71
ԳՈՒՐԶԱՂՅԱՆ Գրիգոր (Հայաստան)	73

Դ

ԴԱԲԱՂ Միհրան (Գերմանիա)	74
ԴԱՍԱՂՅԱՆ Ռայմոնդ (ԱՄՆ)	75
ԴԱՍԼԱՍՅԱՆ Ժան Ժակ (Ֆրանսիա)	76
ԴԱՐԶԻ Արա (Միացյալ Թագավորություն)	77
ԴԵՅԻՐՄԵՆՏՅԱՆ Ժակ, Արա (Ֆրանսիա)	78
ԴԵՎԵՏՅԱՆ Պատրիկ (Ֆրանսիա)	79

Զ

ԶԱԶԱՐՅԱՆ Գագիկ (Ռուսաստան)	80
ԶԵՄԱՆՅԱՆ Արմեն (ԱՄՆ)	81
ԶԵՅՈՒՆՅԱՆ Պերճ (Հայաստան)	82
ԶԵԲԻՅԱՆ Պողոս Լևոն (Իտալիա)	83

Է

ԷԳՈՅԱՆ Ատոմ (Կանադա)	84
ԷԼԻԲԵԿՅԱՆ Որբերտ (Հայաստան)	86
ԷՐՆԵԿՅԱՆ Էդուարդո (Արգենտինա)	87

Թ

ԹԵՐԶՅԱՆ Երվանդ (ԱՄՆ)	88
ԹՈՍՈՒՆՅԱՆ Գարեգին (Ռուսաստան)	90
ԹՈՐԳՈՍ արքեպիսկոպոս ՍԱՆՈՒԿՅԱՆ (Իսրայել)	91
ԹՈՐՈՍՅԱՆ Լևոն (Ավստրիա)	92
ԹՈՐՈՍՅԱՆ Տիմ (Հայաստան)	93
ԹՈՓՈԲԻՍԱՆՅԱՆ Արի (Ֆրանսիա)	94
ԹՈՒՂԱՏՅԱՆ Բարսեղ (Թուրքիա)	95

Ժ

ԺԱՆՍԵՍ (Ֆրանսիա)	96
ԺԵՐԱՆՅԱՆ Ռիշար (Ֆրանսիա)	97

Ի

ԻԳՆԱՏԻՈՒՍ Պոլ , Որբերտ (ԱՄՆ)	98
ԻՍՏԵՓԱՆՅԱՆ Որբերտ (Միացյալ Թագավորություն)	99

Լ

ԼՈՒԿԱՍ Կարո (Իրան)	101
--------------------	-----

Խ

ԽԱՆՏՅԱՆ Արսիսե (Կանադա)	102
ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ Զավեն (ԱՄՆ)	103
ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ Կարեն (Ռուսաստան)	105
ԽԱՉԻԿՅԱՆ Լևոն (Ավստրալիա)	106
ԽԱՉԻԿՅԱՆ Զեննեթ (ԱՄՆ)	107
ԽՏՇՅԱՆ Զավեն (Լիբանան)	108
ԽՐԱԽՈՒՆԻ Զարեհ (Թուրքիա)	109

Կ

ԿԱՆԴԻՐ Աստուսիո (Բրազիլիա)	110
ԿԱՍՅԱՆ Աննա (Վրաստան)	111
ԿԻՐԿՈՐՅԱՆ Կիրկ (ԱՄՆ)	112
ԿՈՆՂԱԶՅԱՆ Կերեն (Կարեն), (ԱՄՆ)	113
ԿՈՍՏԻԿՅԱՆ Գրեգ (ԱՄՆ)	114

Հ

ՀԱԿՈԲՅԱՆ Իոսիֆ (Ռուսաստան)	115
ՀԱԿՈԲՅԱՆ Հակոբ (Հայաստան)	116
ՀԱԿՈԲՅԱՆ Վիլեն (Հայաստան)	117
ՀԱԿՈԲՅԱՆՅԱՆ Հայկազ (Հայաստան)	118
ՀԱՍԲԱՐՉՈՒՄՅԱՆ Սերգեյ (Հայաստան)	119
ՀԱՍԱՍՅԱՆ Մանվել (Պաղեստին)	120
ՀԱՏՏԵՃՅԱՆ Որբեր (Թուրքիա)	121
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ալեքսանդր (Հայաստան)	122
ՀԵՐՈՒՆԻ Պարիս (Հայաստան)	123
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ռիչարդ (ԱՄՆ)	124
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Սևադա (Հայաստան)	125

Ղ

ՂԱՐԱԲԵԿՅԱՆ Արամ (Հայաստան)	127
ՂՈՒԿԱՍՅԱՆ Արկադի (Լեռնային Ղարաբաղ)	128

Ճ

ՃԵՐԵՃՅԱՆ Էդվարդ (ԱՄՆ)	129
-----------------------	-----

Ս

ՍԱՆԹԱՇՅԱՆ Ադոլֆ (Հայաստան)	130
ՍԱՆՃՅԱՆ Փանոս (Լիբանան)	132
ՍԱՆՍՈՒՐՅԱՆ Տիգրան (Հայաստան)	132
ՍԱՇԻԿՅԱՆ Մաթևոս (Մեթյու) (ԱՄՆ)	133
ՍԱՐԳԱՐՅԱՆ Որբերտ (Ռուսաստան)	134
ՍԱՐՏԻՆ Անդրեա (ԱՄՆ)	135
ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ Ռադիկ (Հայաստան)	136
ՍԵԼԻԶՅԱՆ Գենարի (Ռուսաստան)	137

ՍԵՀՐԱԲՅԱՆ Ռոբերտ (ԱՄՆ)	137
ՍԵՍՐՈՊ արքեպիսկոպոս ՍՈՒԹԱՖՅԱՆ (Թուրքիա)	138
ՍԵՐԺԱՆՈՎ Ալեքսանդր (Ռուսաստան)	139
ՍԻԿՈՅԱՆ Ստեփան (Ռուսաստան)	140
ՍԻՀՐԱՆՅԱՆ Անդրանիկ (Ռուսաստան)	141
ՍԻՆԱՍՅԱՆ Կարապետ (Բուլղարիա)	142
ՍԻՐԶՈՅԱՆ Էդվարդ (Հայաստան)	144
ՍՆԱՅԱԿԱՆՅԱՆ Ռուբեն (Հունգարիա)	145
ՍՈՍՃՅԱՆ Կարապետ (ԱՄՆ)	146
ՍՍՐՅԱՆ Վլադիմիր (Հայաստան)	147
ՍՈՒԹԱՖՅԱՆ Կյող, Արմեն (Ֆրանսիա)	148

Ն

ՆԱԶԱՐԵԹՅԱՆ Սերգեյ (Հայաստան)	149
ՆԵՐՍԵՍ-ՊԵՏՐՈՍ XIX ԹԱՐՍՈՒՆԻ (Լիբանան)	150
ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Արևույ (Հայաստան)	151

Շ

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ (Լիբանան)	152
ՇԱՀԳԻԼՅԱՆ Վահան (Ռուսաստան)	153
ՇԱՀՆԱԶԱՐՈՎ Կարեն (Ռուսաստան)	154
ՇԵՐ (ԱՄՆ)	155

Ո

ՈՍԿԱՆՅԱՆ Վարուժան (Ռումինիա)	157
------------------------------	-----

Չ

ՉԱԶՄԱԶՉՅԱՆ Արտո (Կանադա)	158
ՉԵԹԻՏՅԱՆ Հովհաննես (Հայաստան)	160
ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ Տորոջ (ԱՄՆ)	160
ՉԻԼԻՆԳԱՐՈՎ Արթուր (Ռուսաստան)	162
ՉԻԼԻՆԳԻՐՅԱՆ Լևոն (Միացյալ Թագավորություն)	163
ՉՈՐԱՆՅԱՆ Արամ (ԱՄՆ)	164
ՉՈՐԱՆՅԱՆ Վլադիմիր (Ռուսաստան)	166
ՉՈՒԲԱՐՅԱՆ Ալեքսանդր (Ռուսաստան)	167
ՉՈՒՐՈՒԿ Սերժ (Ֆրանսիա)	168

Պ

ՊԱՊՅԱՆ Հասմիկ (Ավստրիա)	169
ՊԱՐՍԱՍՅԱՆ Էմա (Հայաստան)	170
ՊՈՂՈՍՅԱՆ Էրիկ (ԱՄՆ)	171
ՊՈՂՈՍՅԱՆ Սիխայիլ (Ռուսաստան)	172

Ջ

ՋԻԳԱՐԻՆԱՆՅԱՆ Արմեն (Ռուսաստան)	173
--------------------------------	-----

Ս

ՍԱՀԱԿՅԱՆ Բակո (Լեռնային Ղարաբաղ)	174
ՍԱՐԳԻՍՈՎ Պավել (Ռուսաստան)	174
ՍԱՐԳՍՅԱՆ Սերժ (Հայաստան)	175
ՍԱՐԳՍՅԱՆ Սոս (Հայաստան)	176
ՍԱՐԳՍՅԱՆ Ֆադեյ (Հայաստան)	176
ՍԱՐՈՒԽԱՆ Խոսե (Մեքսիկա)	178
ՍԵՂՐԱԿՅԱՆ Պերճ (ԱՄՆ)	179
ՍԵՂՐԱԿՅԱՆ Սեդրակ (Լիբանան)	180
ՍԵՍԵՐՏՅԱՆ Հրաչ (ԱՄՆ)	180
ՍԵՅՍՅԱՆ Ռուբեն (Ռուսաստան)	181
ՍԵՅՐԱՆՅԱՆ Ալեքսանդր (Ռուսաստան)	182
ՍԵՎԱՆ Սևդա (Բուլղարիա)	183
ՍԻՍՈՆՅԱՆ Մարգարիտ (Ռուսաստան)	184
ՍԻՍԱԿՅԱՆ Ալեքսեյ (Ռուսաստան)	185
ՍՆԱՊՅԱՆ Պողոս (Լիբանան)	186

Վ

ՎԱՀՐԱՍՅԱՆ Հերման (Իտալիա)	187
ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆ Վարդուիի (Հայաստան)	188

Տ

ՏԱՏՐՅԱՆ Վահագն (ԱՄՆ)	189
ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆՅ Նորատ (Ռուսաստան)	190
ՏԵՐ-ԵՂԻԱՅԱՆ Սամվել (ԱՄՆ)	191
ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆ Արկադի (Հայաստան)	191
ՏԵՐ-ԹՈՐՈՍՅԱՆ Բաբկեն (ԱՄՆ)	192

ՏԵՐ-ԿՅՈՒՐԵՂՅԱՆ Արմեն (ԱՄՆ)	193
ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆՑ Գեորգի (Ռուսաստան)	195
ՏԵՐ-ՍԵՐԿԵՐՅԱՆ Ռոբերտ (Ֆրանսիա)	196
ՏԻԳՐԱՆՅԱՆ Հարրի (Կանադա)	197
ՏՅՈՒՐԵԿՅԱՆ Կարլ Գարեգին (ԱՄՆ)	198
ՏՈՆԱՊԵՏՅԱՆ Պատրիկ (Ֆրանսիա)	199
ՏՈՏՈՆՅԱՆ Արտյոմ (Ռուսաստան)	200

Փ

ՓԱՇԱՅԱՆ Զարիգ (ԱՄՆ)	201
ՓԱՐԼԱԹՅԱՆ Նշան (ԱՄՆ)	202
ՓԵԼԵՇՅԱՆ Արտավազդ (Ռուսաստան)	203
ՓԻՐՈՒԶՅԱՆ Լև (Ռուսաստան)	204

Ք

ՔՅՈՒՐԶՅԱՆ Հարություն (Հունաստան)	205
ՔՈՉԱՐՅԱՆ Ռոբերտ (Հայաստան)	206
ՔՐԶԻԱՇԱՐՅԱՆ Հակոբ (Ֆրանսիա)	207
ՔՐԶԻԱՇԱՐՅԱՆ Սերժ, Պերճ (Ֆրանսիա)	208
ՔՐԶՅԱՇԱՐՅԱՆ Ստեփան (Ավստրալիա)	208

Օ

ՕԳԱՆԵՍՅԱՆ Յուրի (Ռուսաստան)	210
ՕՀԱՆՈՎ Ռաֆայել (Ռուսաստան)	211
ՕՍԻՊՅԱՆ Յուրի (Ռուսաստան)	212
ՕՐԲԵԼՅԱՆ Կոնստանտին (ԱՄՆ)	213
ՕՐԲԵԼՅԱՆ Կոնստանտին (Հարրիի) (Ռուսաստան)	214

Ֆ

ՖՐԱՆԳՈՒԼՅԱՆ Գեորգի (Ռուսաստան)	215
--------------------------------	-----

21-րդ ԴԱՐԻ ՍԿԶԲԻ ՆՇԱՆԱԿՈՐ ՀԱՅԵՐ

Ա



ԱԲԳԱՐՅԱՆ Էդվարդ

ABGARYAN Edvard

Սոցիոլոգ: Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Գործարարության և իրավաբանության ինստիտուտի ղեկավար: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է Ստեփանավանում (Հայկական ԽՍՀ) 1933թ. հուլիսի 14-ին (հայրանունը՝ Արամ):

Ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը (1959թ.) և Մոսկվայի ավիացիոն ինստիտուտի առաջին ֆակուլտետը (1962թ.): Ստացել է գիտությունների թեկնածուի գիտական աստիճան սոցիոլոգիայի ասպարեզում (Մոսկվայի պետական համալսարան, 1968թ.): Փիլիսոփայական գիտությունների դոկտոր է (1979թ.):

Եղել է 23/64 օդանավաշինական փակ ձեռնարկության ճարտարագետ (1962-66թթ.), այնուհետև ԽՍՀՄ կոմունիստական երիտասարդական միության կենտրոնական կոմիտեի պատասխանատու-կազմակերպիչ (1966-70թթ.), ապա Կոմերիտական բարձրագույն դպրոցի գիտական կենտրոնի լաբորատորիայի վարիչ (1970-72թթ.): Ղեկավարել է ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության Քրեական հանցագործությունների տեղեկատվության հետախուզական կենտրոնը (1972-76թթ.): Պաշտոնավարել է իբրև Մոսկվայի պետական համալսարանի երիտասարդների կոմունիստական դաստիարակության ամբիոնի վարիչ (1976-85թթ.): Առևտրի համալ-

սարանում ղեկավարել է փիլիսոփայության և սոցիոլոգիայի ամբիոնը (1985-96թթ.): Գործարարության և իրավաբանության ինստիտուտի հիմնադիրն ու ղեկավարն է (սկսած 1995թ-ից):

Հեղինակ է մոտ 200 գիտական հոդվածի՝ գլխավորապես քրեագիտության և սոցիոլոգիայի մեջ մաթեմատիկական մեթոդների կիրառման ասպարեզում: Անդամ է 9 միջազգային և ռուսական ակադեմիաների, այդ թվում Ռուսաստանի բնական գիտությունների, Տեղեկատվության, Անվտանգության, ապահովության և օրինապահության հիմնախնդիրների ակադեմիաների:

Պարգևատրվել է «Մեղեմապետ և բարեգործ» ոսկե մեդալով, «Վիկտորիա Թագուհու» մեդալով (Մեծ Բրիտանիա), Ռուսաստանի Դաշնության գիտության վաստակավոր գործչի կոչմամբ, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար»՝ առաջին աստիճանի շքանշանով, «Եվրոպական մրցանակով»՝ 21-րդ դարի բարեգործի «Սուրբ Սոֆիա» միջազգային մեդալով (Օքսֆորդ, 2004թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա:



ԱԲԳԱՐՅԱՆ Վարդգես, Արա

APKARIAN Vartkess, Ara

Քիմիայի բնագավառի (քիմիական ֆիզիկա) պրոֆեսոր: Գիտությունների դոկտոր: Իրվայն, Կալիֆոռնիա, ԱՄՆ: Ծնվել է Դա-

մասկոտում (Սիրիա) 1955թ. սեպտեմբերի 2-ին: Հարություն Աբգարյանի և Սոնա Պալիկյանի որդին է: Ամուսնացել է Ալիս Բատսի հետ (Էվանստոն, 1980), դուստրը՝ Նարե:

Ուսանել է Բեյրութի Հովակիմյան-Մանուկյան վարժարանում (Լիբանան, 1973թ.): Լոս Անջելոսի Հարավային Կալիֆոռնիայի համալսարանում ստացել է գիտության մագիստրոսի գիտական աստիճան քիմիայի բնագավառում (ԱՄՆ, 1976թ.): Հյուսիսարևմտյան համալսարանում արժանացել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճանի քիմիայի բնագավառում (Էվանստոն, Իլինոյսի նահանգ, 1980թ.): Հետդոկտորական գիտական աշխատանքները շարունակել է նույն հաստատությունում (1980-81թթ.), ինչպես նաև Կոռնելի համալսարանում (1981-83թթ.):

Ուսումնառության տարիներից սկսած զբաղվել է քիմիական և ուլտրամառնուշակագույն լազերների (Գիտության ազգային հիմնադրամի դրամաշնորհով, 1975-76թթ.), տատանողական էներգիայի փոխանցման (1976-80թթ.), պինդ վիճակում հազվագյուտ գազերի տատանողական-պտտական շարժման (1980-81թթ.), գազի և մակերեսի փոխազդեցության (1981-83թթ.) ուսումնասիրություններով: Կալիֆոռնիայի համալսարանի քիմիական ֆակուլտետում (Իրվայն) պաշտոնավարել է իբրև օգնական-պրոֆեսոր (1983-89թթ.), այնուհետև պաշտոնակից պրոֆեսոր (1989-91թթ), ապա պրոֆեսոր (սկսած 1991 թվից): Եղել է նույն համալսարանի Ֆիզիկայի դպրոցի քիմիական և նյութագիտական բաժնի հիմնադիրն ու տնօրենը (1997-2000թթ.): 2004 թվից սկսած ղեկավարում է Կալիֆոռնիայի համալսարանի քիմիական բաժինը (Իրվայն): Իբրև հրավիրված պրոֆեսոր դասավանդել է Փարիզի հարավային համալսարանում (1994թ.), Բեռլինի ազատ համալսարանում (1997թ.), Կուրայի Գիտության և միջուկային տեխնոլոգիայի բարձրագույն ինստիտուտում (2004թ.):

Հեղինակ է մեկ արտոնագրված գյուտի և 100-ից ավելի գիտական հոդվածների քիմիական ֆիզիկայի տարբեր բնագա-

վաններում, մասնավորապես լուսաֆիզիկայի, խիտ միջավայրում քիմիական շարժման, լազերային լուսաշափոթյան և այլն:

Ֆիզիկայի ամերիկյան ընկերության ընտրված անդամ է (1994թ.): Անդամակցում է քիմիայի և ֆիզիկայի ամերիկյան տարբեր ընկերությունների (սկսած 1974թ-ից): Լա Վեռնի համալսարանի հոգաբարձուների խորհրդի անդամ է:

Հայաստանի «Գիտության և նոր տեխնոլոգիաների զարգացման ազգային հիմնադրամի» ղեկավար հանձնախմբի անդամ է: Անդամ է Ամերիկայի հայկական համագումարի (սկսած 1995թ-ից): Անդամակցել է Հայկական բարեգործական ընդհանուր միությանը (1960-80թթ.) և «Թեքեյան» մշակութային միությանը (1978-81թթ.):

Արժանացել է Քամիլ և Հենրի Դրեյֆուսի անվան (1983թ.), Ալֆրեդ Պ. Սլոանի անվան (1990թ.) և Ալեքսանդր Ֆոն Հունբերգի անվան (1996թ.) մրցանակների: Պարգևատրվել է Գիտության առաջընթացի ամերիկյան ընկերության մրցանակով (2005թ.), «Ֆակուլտետի ակնառու դասավանդողի» մրցանակով (Կալիֆոռնիայի համալսարան, 2006թ.), Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի նշանավոր շրջանավարտի մրցանակով (2007թ.):

2007թ. Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաթերթի» տվյալների հիման վրա, խմբագրված հատորի հեղինակի կողմից



ԱՔԵԼԻԱՆ Տիրան

APELIAN Diran

Նյութագիտության և ճարտարագիտության բնագավառի մասնագետ: Գիտության դոկտոր, պրոֆեսոր: Վորսեստեր,

Մասաչուսեթս, ԱՄՆ: Ծնվել է Կահիրեում (Եգիպտոս), ծնողների հետ ԱՄՆ է տեղափոխվել 15 տարեկանում: Ամուսնացած է Մեղա Արեյանի հետ:

Ուսանել է Դրեքսելի համալսարանում, ստացել է գիտության պսակավորի գիտական աստիճան մետաղագիտական ճարտարագիտության բնագավառում (1968թ.): Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտում արժանացել է գիտության դոկտորի գիտական աստիճանի (1978թ.):

Աշխատել է Բեթլեհեմի Պողոսյանի գիտահետազոտական լաբորատորիայում (1972-76թթ.): 1976թ-ից սկսած տարբեր պաշտոններ է վարել Դրեքսելի համալսարանում, այդ թվում Նյույորքի ճարտարագիտության բաժնի ղեկավարի (1983թ.), համալսարանական պրոֆեսորի, ճարտարագիտական քոլեջի ղեկավարի տեղակալի, Նյույորքի ճարտարագիտության ֆակուլտետի փոխնախագահի պաշտոնները: Վորսեստերի ճարտարագիտական ինստիտուտի ռեկտորն է սկսած 1990 թվից: Տնօրենն է Մետաղական պրոցեսների ինստիտուտի և մետաղների ճարտարագիտության Հանունտի անվան պրոֆեսոր է Վորսեստերի ճարտարագիտական ինստիտուտում (սկսած 1997թ-ից):

Հեղինակ է մոտ 400 գիտական հոդվածի, 4 գրքի՝ նյութերի մշակման ճարտարագիտության, մասնավորապես մետաղների և համաձուլվածքների պնդացման, փոշիացած վիճակում մետաղների ծուլման, ալյումինիումի ծուլման, մետաղների պլազմային մշակման բնագավառներում: «Թեթև մետաղներ» գիտական հանդեսի գլխավոր խմբագիրն է: Անդամ է «Մետաղների ծուլում» միջազգային հանդեսի (Oxphor), սկսած 1998թ-ից) և «Ալյումինիումի ուսումնասիրություններ» հանդեսի (սկսած 1998թ-ից) խմբագրական կազմերի: «Նյութագիտության և ճարտարագիտության հանրագիտարանի», որը հրատարակվում է «Էլսևիեր» հրատարակչության կողմից,

«Մետաղների ծուլում» շարքի խմբագիրն է (սկսած 1998թ-ից): Տարածքային խմբագիրն է «Մետաղների ծուլման տեխնոլոգիա» գիտական հանդեսի (սկսած 1998 թվից): Հրատարակման է պատրաստում «Մետաղածուլման տեխնոլոգիան և գիտությունը» սովորածավալ դասագրքերի շարքը (համահեղինակ՝ Լ.Արմբերգ, «Ջոն Վայլի» հրատարակչություն):

Ակնառու, պատվավոր և ցմահ անդամ է Հյուսիսային Ամերիկայի դրոշմային կադավարման (մետաղի) ուսումնասիրման ընկերության: ԱՄՆ-ի Նյույորքի ուսումնասիրության ազգային խորհրդակցական խորհրդի ենթահանձնախմբի նախագահն է մետաղագիտության գծով: Մետաղագետների ամերիկյան միության անդամ է (1987թ.): Ֆրանսիական մետալուրգների միության պատվավոր անդամ է (2000թ.):

Պարգևատրվել է Հովարդ Թեյլորի անվան ոսկե մեդալով (Մետաղների ծուլումն ուսումնասիրողների ընկերության կողմից, 1978թ.), Հուլի անվան մեդալով՝ Մետաղագետների ամերիկյան միության կողմից (1990թ.), Կաբակչյանի անվան մրցանակով՝ գիտության ասպարեզում (Ամերիկայի հայ ուսանողների միության կողմից, 1990թ.), Մատևոնի անվան ոսկե մեդալով՝ Հանքանյութեր, մետաղներ և նյութեր ուսումնասիրողների ընկերության կողմից (1992թ.), Փոշեմետալուրգների ամերիկյան ընկերության մրցանակով (2004թ.), Թեթև մետաղների տեխնիկական սպասարկման մրցանակով՝ Հանքանյութեր, մետաղներ և նյութեր ուսումնասիրողների ընկերության կողմից (2005թ.): Արժանացել է Քսիանի (Չինաստան) Հյուսիսարևմտյան ճարտարագիտական համալսարանի պատվավոր դոկտորի և պրոֆեսորի կոչումների (1997թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Արա

ABRAHAMIAN Ara

Տնտեսագետ, գործարար, բարեգործ: Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության նախագահ, Յունեսկո-ի «Բարի կամքի դեսպան», «Սոզլասիե» («Համաձայնություն») փակ բաժնետիրական ընկերության նախագահ: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է Մալիշկա ավանում (Եղեգնաձորի շրջան, Հայկական ԽՍՀ) 1957թ. ապրիլի 15-ին: Արշավիր և Պայծառ Աբրահամյանների որդին է: Ամուսնացել է Նատալյա Աբրահամյանի հետ (1987թ.), որդին՝ Վլադիսլավ, դուստրերը՝ Յուլիա և Աննա:

Ուսանել է Երևանի Հայկական գյուղատնտեսական ինստիտուտում՝ ստանալով տնտեսագետի մասնագիտություն:

Աշխատել սկսել է վաղ հասակից: Ուսումնառությունից հետո եղել է «Նեյրոն» գիտատեխնիկական միավորման (ԽՍՀՄ էլեկտրոնային արդյունաբերության նախարարություն, Երևան) ճարտարագետ, ապա տնօրենի տեղակալ (1981-85թթ.), այնուհետև միավորման գլխավոր տնօրեն (Երևան, 1985-89թթ.): Պաշտոնավարել է որպես ԽՍՀՄ էլեկտրոնային արդյունաբերության նախարարության բաժնի վարիչի տեղակալ (Մոսկվա, 1989-91թթ.): Ղեկավարել է «Կոմեքս» (էլեկտրոնային արդյունաբերության նախարարության «էլեկտրոնիկա» պետական միավորման) ընկերությունը (1991-93թթ.): Հիմնադրել է «Սոզլասիե» («Համաձայնություն») փակ բաժնետիրական ընկերությունը (1993թ.) և

ընտրվել նրա նախագահը (ընկերությունը բազմաճյուղ է և ներառում է աղամանդների և բնական քարերի արդյունահանում, շինարարություն, օդանավերի թռիչքների կառավարման համակարգեր, քիմիական արդյունաբերություն և այլն): Ի թիվս այլ ձեռնարկությունների, 2000թ-ին հիմնադրել է նաև «21-րդ դարի համաձայնություն» հրատարակչությունը: Հիշարժան է նրա դերը Ռուսաստանի Դաշնության նախագահի գրասենյակի և Կրեմլի հարակից կառույցների վերակառուցման գործում:

Հիմնադիրն ու նախագահն է Ռուսաստանի հայերի միության (Մոսկվա, 2000թ.):

Նախաձեռնողն ու կազմակերպիչն է Հայերի համաշխարհային կոնգրես կազմակերպության առաջին՝ հիմնադիր համագումարի, 52 երկրի 138 հայկական համայքի ներկայացուցիչների մասնակցությամբ (Մոսկվա, 2003թ.): Ընտրվել է այդ կազմակերպության նախագահ (2003թ.): Կազմակերպիչն է «Քաղաքակրթությունների երկխոսություն» տարածքաշրջանային ֆորումի (Մակեդոնիա, Օխրիդ, 2003թ.): Հովանավորել կամ աջակցել է բազմաթիվ բարեգործական ու մարդասիրական ձեռնարկների իրականացմանը Ռուսաստանում և Հայաստանում (դպրոցների շինարարություն, բարեգործական ճաշարանների հիմնում կարիքավորների համար, բժշկական նորագույն սարքերի գնում ախտորոշման կենտրոնների համար, եկեղեցու և հուշարձանների շինարարություն, կրթաթոշակների հատկացում ուսանողներին, դասագրքերի և մենագրությունների տպագրություն, համակարգչային դասարանների ստեղծում և այլն):

Պարգևատրվել է ԽՍՀՄ էլեկտրոնային արդյունաբերության նախարարության Պատվավոր աշխատողի շքանշանով (1991թ.), Ռուսաստանի Դաշնության նախագահի «Պատվոգրով» (1996թ.), «Սուրբ Կոնստանտին Մեծի» շքանշանով (1999թ.), Ռուսաստանի վաստակավոր շինարարի կոչմամբ (1999թ.), Հայ առաքելական եկե-

ղեցու բարձրագույն՝ «Մուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով (2000թ.), Ռուսաստանի Դաշնության 2001, 2003 և 2005թթ. «Տարվա մարդը» ազգային մրցանակի դափնեկրի կոչմամբ, Ռուսաստանի Դաշնության «Բարեկամություն» շքանշանով (2002թ.), Յունեսկո-ի «Խաղաղության դեսպան» պատվավոր կոչմամբ (2003թ.), Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Ոսկե մեդալով» (2003թ.), Ֆրանսիայի բարձրագույն՝ «Պատվո լեգիոնի» շքանշանով (2006թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ԱԶԱՏՅԱՆ ՎԻԼԵՆ

AZATYAN Vilen

Քիմիական ֆիզիկայի բնագավառի մասնագետ: Գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ: Մոսկվայի շրջան, Չերնոգոլովկա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է 1931թ. մարտի 21-ին Երևանում: Վաղարշ Ագաթյանի և Աննա Դավթյանի որդին է: Ամուսնացել է Լիլիանա Վարդանյանի հետ (Մոսկվա, 1959թ.), դուստրը՝ Կարինե:

Միջնակարգ դպրոցն ավարտել է Երևանում 1950թ-ին: Ուսանել է Մոսկվայի պետական համալսարանի քիմիական բաժնում (1950-54թթ.): 1963թ-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, և նրան շնորհվել է քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (Մոսկվա): Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում արժանացել է քիմի-

ական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի (Մոսկվա, 1978թ.): Ֆիզիկական քիմիայի բնագավառի պրոֆեսոր է (Մոսկվա, 1985թ.): Ընտրվել է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ (Մոսկվա, 2000թ.):

Եղել է Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի կրտսեր գիտաշխատող (Մոսկվա, 1954-56թթ.), այնուհետև Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտի ասպիրանտ (Մոսկվա, 1956-59թթ.): Պաշտոնավարել է իբրև Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ավագ գիտաշխատող (Մոսկվա, 1959-82թթ.): Նույն հաստատությունում եղել է գիտական լաբորատորիայի վարիչ (Մոսկվա, 1982-88թթ.): Ղեկավարել է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Կառուցվածքային մակրոկինետիկայի ինստիտուտի «Շոթայական տարափուլ պրոցեսների լաբորատորիայի» (Չերնոգոլովկա, Մոսկվայի շրջան, սկսած 1982թ-ից):

Հեղինակ կամ համահեղինակ է ավելի քան 400 գիտական հոդվածի՝ հրատարակված ռուսաստանյան, եվրոպական և ամերիկյան գիտական հանդեսներում, 20 գյուտի, երկու մենագրության՝ «Շոթայական առաջխաղացման խափանումը» (Մոսկվա, 1997թ.), «Շոթայական ռեակցիաների խափանումը» («Գորդոն և Բրիչ» հրատարակչություն, Լոնդոն, 2000թ.): Գիտական աշխատությունները վերաբերում են շոթայական ռեակցիաների, մակերեսային երևույթների, գազային փուլում այրման երևույթների ուսումնասիրությանը:

Թղթակից-անդամ է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի (Մոսկվա, 2000 թվից սկսած): Անդամ է Մաքուր և կիրառական քիմիայի միջազգային միության (UPAC), Այրման միջազգային ինստիտուտի (Պիտսբուրգ, ԱՄՆ), Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի նախագահության Այրման և պայթյունի գիտական խորհրդի: Ընդգրկված է «Կինետիկա և կատալիզ», «Ֆիզիկական քիմիայի ամսագիր», «Ինքնատարածվող բարձր ջերմաստիճանային սինթեզ» գիտական

հանդեսների խմբագրական կազմում: «Ռուսաստանի հայերի միության» Մոսկվայի խորհրդի անդամ է:

Արժանացել է Միջազգային հրատարակչական ընկերության «Գիտություն, պարբերականներ» մրցանակի, «2002 թ-ին գիտական պարբերականներում լավագույն հրատարակման համար»՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի մրցանակի: Նրա ղեկավարած գիտական հետազոտությունները ներկայումս հովանավորվում են Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի նախագահության «Ջրածնային էներգետիկա» ծրագրի, Արևմտյան Եվրոպայի և նախկին ԽՍՀՄ հանրապետությունների համագործակցության միջազգային ընկերության (INTAS) և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի դրամաշնորհներով:

2005թ. Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաթերթի» տվյալների հիման վրա, խմբագրված հատորի հեղինակի կողմից



ԱԶՆԱՎՈՐ ՇԱՐԼ

AZNAVOUR Charles

Երգիչ, երգահան, բանաստեղծ, կինոդերասան, բեմադրիչ: Փարիզ, Ֆրանսիա: Ծնվել է 1924 թվականի մայիսի 22-ին Փարիզում: Ծննդով՝ Ազնավուրյան Շահնուր, Վաղինակ: Միշա (Միքայել) և Քնար Ազնավուրյանների որդին է: Ամուսնացել է Միշելինի (1946թ.), Պրեսլիի (1956թ.) և Տոբեյի (1968թ.) հետ, դուստրերը՝ Սեդա, Պատրիսիա և Կատիա, զավակները՝ Պատրիկ և Միշա:

Սովորել է Մանկական թատերական դպրոցում, ապա Փարիզի Էլեկտրոնիկայի կենտրոնական դպրոցում:

Համագործակցել է Պիեռ Ռոշեի և Էդիտ Պիաֆի հետ՝ մասնակցելով համերգային շրջագայությունների Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Կանադայում (սկսած 1946թ-ից): 50-ական թվականների կեսերից սկսած մեծահամերգներ է տվել աշխարհի բազմաթիվ նշանավոր բեմերում, այդ թվում «Ալիամբրայում» և «Օլիմպիայում» (Փարիզ, 1957թ.), «Կարնեգի հոլում» (ԱՄՆ, 1961), ապա Հունաստանում, Հյուսիսային Աֆրիկայի երկրներում, Լիբանանում, Խորհրդային Միությունում: Մի քանի ամիս անընդմեջ «Մեկ անձի շուր» կոչվող ծրագրով ելույթներ է ունեցել «Օլիմպիայում» (1965թ.): Համերգներով հանդես է եկել Կանադայում, Լատինական Ամերիկայի երկրներում (1966թ.), ԱՄՆ-ում (1970-71թթ.), Վենետիկում (սկսած 1971թ.), վերադառնալով Փարիզ՝ «Օլիմպիայում», «Մյուզիք հոլում» և «Կոնգրեսների պալատում» (1970-71թթ.), ապա Լոնդոնում (սկսած 1974թ-ից) և Բրոդվեյում (ԱՄՆ, 1977թ.), այնուհետև դարձյալ «Օլիմպիայում» և «Կոնգրեսների պալատում» (1991թ., Լիզա Մինելլիի հետ), Նյու Յորքի «Մարկիզի թատրոնում» (1998թ.), Մոսկվայի «Կրեմլի համագումարների պալատում» (2005թ.) և այլն: Հիշարժան է նրա համերգը Երևանի «Հանրապետության հրապարակում» (2006թ.): 1990թ. հրատարակել է իր ստեղծագործություններից կազմված 30 խտացյալ ձայնասկավառակ («ԷՄԻ» ընկերության հետ), ապա «Ավելի կապույտ» (1997), «Ազնավուր-2000» (2000թ.), «Էմիգրանտները» (2001թ.), «Լուտրեկ» (2003թ.), «Ես ճամփորդում եմ» (2005թ.) խտացյալ ձայնասկավառակները:

Հեղինակ է ավելի քան 1000 երգի (450-ը՝ ֆրանսերեն, 150-ը՝ անգլերեն, 8-ը՝ իսպաներեն և 6-ը՝ գերմաներեն, նաև իտալերեն լեզուներով): Ֆրանսերեն լեզվով երգերի ամենաշատ ձայնասկավառակներ վաճառած (մոտ 100 միլիոն օրինակ) հեղինակն է աշխարհում: Նրա հեղինակած (երաժշտության և խոսքերի) ու երգացանկի հիմնական մասը կազմող ստեղծագործությունները երգեր են սիրո մասին: Համաշխարհային տարածում ունեն նրա «Բոհեմը», «Մայրիկ», «Նա», «Տարեք ինձ», «Դեռ երեկ», «Մնա», «Մի աղջնակ», «Եթե

դու շինեիր», «Բժշկական սեր», «Որքան տխուր է Վենետիկը» և հարյուրավոր այլ երգեր: Երգերի մի մասը թարգմանված է մոտ երկու տասնյակ լեզուներով: 1915թ. Հայոց մեծ եղեռնին է նվիրված նրա «Նրանք ընկան» երգը (1975թ.): 1988 թվականի Սպիտակի երկրաշարժի կապակցությամբ է գրված «Քեզ համար Հայաստան» երգը (ծայնագրմանը մասնակցել են 90 հանրահայտ երգիչ-երգչուհիներ, վաճառվել է 1 միլիոն ձայնակավառակ և հասույթը հատկացվել է երկրաշարժից տուժածներին): Հեղինակ է երկու օպերետի՝ «Պարոն տոնահանդես» (1965թ.) և «Դուշկա» (1973թ.), նաև «Լուտրեկ» երաժշտական ներկայացման (2000թ.): Նրա ստեղծած երաժշտությունը հնչում է մոտ մեկ տասնյակ ֆիլմերում:

Հեղինակ կամ համահեղինակ է բազմաթիվ գրքերի, մասնավորապես «Ազնավորը Ազնավորի մասին» (1970թ.), «Երեկ, երբ ես դեռ երիտասարդ էի» (1979թ.), «Բառերն ազդագրի վրա» (բանաստեղծական ժողովածու, 1991թ.), «Անցյալ ժամանակը» (2003թ.) և այլն:

Նկարահանվել է մոտ 60 ֆիլմում: Հիշատակության են արժանի նրա կերտած գլխավոր դերերը «Կրակեք դաշնակահարին» (Տրյուֆո, 1959թ.), «Օրֆեի պատգամը» (Կոկտո, 1960), «Երկաթե թմբուկը» (Շլենդորֆ, 1979), «Էդիտ և Մարսել» (1982թ.), «Ճշմարտությունը Չարլիի մասին» (2003թ.), «Արարատ» (2002), «Հայր Գորիո» (Բալզակի համանուն վեպի հիման վրա, Բուդապեշտ, 2003թ.), «Տարեք ինձ» (Բենսիմոն, 2005թ.) ֆիլմերում:

Գլխավոր տնօրենն է «Շարլ Ազնավորի հրատարակումներ» հիմնարկության (հավաքածուներն ընդգրկում են Էդիտ Պիաֆի, Շարլ Տրենեի և ֆրանսիական շանսոնի աստղերի ստեղծագործությունները):

Հիմնադիրն է Ազատ մամուլի պաշտպանության ընկերության (2004թ.): Բազմիցս եղել է Կաննի կինոյի միջազգային փառատոների ժյուրիի անդամ: Յունեսկո-ի «Բարի կամքի» կազմակերպության պատվիրակ է:

Հիմնադիրն է «Ազնավորը Հայաստանի համար» (1989թ.) բարեգործական ընկե-

րության, որը մեծ ծառայություն մատուցեց երկրաշարժից տուժածներին օգնելու և երկրաշարժի հետևանքները վերացնելու աշխատանքներում: Անդամ է «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (սկսած 1992 թվից): Հայաստանի Հանրապետության պաշտոնական ներկայացուցիչն է Յունեսկո-ում (1992 թվին ստացել է Հայաստանի Հանրապետության դիվանագիտական անձնագիր):

Արժանացել է «Չայնասկավառակի համար» գլխավոր մրցանակի (Պ. Ռոշի հետ, 1947թ.), «SACEM» հեղինակների և երգահանների ֆրանսիական մրցանակի (1950թ.), Ամերիկյան հեղինակների և երգահանների մրցանակի (1969թ.), Վենետիկի փառատոնի «Ոսկե առյուծ» մրցանակի (1971թ.), Էդիտնի անվան մրցանակի (1971թ.) «Պլատինե ալբոմ» մրցանակի (Մեծ Բրիտանիա, 1974թ.), «Վերմեյ» շքանշանի (Փարիզ, 1969թ.), «Շարլ Կրոյ» ակադեմիայի դափնեկրի կոչման (1973թ.), Ֆրանսիական շանսոնի մեծ մրցանակի (1995թ.), Երգահանների պատվո սրահի անդամության (1996թ.), «Երաժշտության հաղթանակ» մրցանակի՝ իբրև «Տարվա լավագույն երգիչը տղամարդկանց մեջ» (1997թ.), Կաննի կինոփառատոնի «Պատվավոր Կեսար» մրցանակի (1997թ.), Ֆրանսիայի Հանրապետության «Սպայական պատվո լեգիոնի» շքանշանակրի պատվավոր կոչման (արվեստի և գրականության ասպարեզում, 1997թ.), Ֆրանսիայի Հանրապետության «Պատվո լեգիոնի հրամանատարի» շքանշանի (2001թ.), Երևանի պատվավոր քաղաքացու կոչման (1998թ.), Հայաստանի Հանրապետության բարձրագույն՝ «Հայրենիքի շքանշանի» (Երևան, 2005թ.): Նրա անվամբ է կոչվում Երևանի Արվյան փողոցում գտնվող հրապարակներից մեկը: Գյումրի քաղաքում կանգնեցված է նրա արձանը:

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ԱԼԻԽԱՆՈՎ Տիգրան

ALIKHANOV Tigran

Դաշնակահար: Ռուսատանի Դաշնության ժողովրդական արտիստ, Մոսկվայի Չայկովսկու անվան պետական երաժշտանոցի ռեկտոր, պրոֆեսոր: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է Մոսկվայում 1943թ. հունվարի 22-ին: Աբրահամ Ալիխանովի (Ալիխանյանի, նշանավոր միջուկային ֆիզիկոս) և Ռոշալ Սոլոմոնովայի (ջութակահար) որդին է: Ամուսնացել է Լ.Գոլուբի (երգեհոնահար) հետ:

Սովորել է Մոսկվայի Չայկովսկու անվան պետական երաժշտանոցին կից դպրոցում՝ նշանավոր դաշնակահար Անահիտ Սմբատյանի դասարանում: Ուսանել է Մոսկվայի Չայկովսկու անվան պետական երաժշտանոցում (1961-66թթ.): Կատարելագործվել է նույն հաստատության ասպիրանտուրայում (1966-69թթ.):

Դասավանդել է Մոսկվայի պետական մանկավարժական ինստիտուտում (1966-73թթ.), ապա Մոսկվայի Չայկովսկու անվան պետական երաժշտանոցում (1973-84թթ.): Եղել է նույն հաստատության դոցենտ (1984-89թթ.), պրոֆեսոր (սկսած 1989թ-ից), Քառյակների և համույթների ամբիոնի վարիչ (սկսած 1992թ-ից): 2005թ-ից այդ հաստատության ռեկտորն է:

Համերգներով հանդես է եկել նախկին Խորհրդային Միության բազմաթիվ քաղաքներում, այդ թվում Մոսկվայում (50 համերգ, որից մոտ 25-ում Բեթհովենի ստեղծագործությունների կատարումներով), Սանկտ Պետերբուրգում, Տալլինում, Նովոսիբիրսկում, Ռիգայում, Երևանում, ինչպես նաև ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Իտալիայում, Ավստրիայում, Հունաստանում, Չե-

խիայում, Սլովակիայում, Բուլղարիայում, Հունգարիայում, Հարավաֆրիկյան Հանրապետությունում և այլն, Բեթհովենի, Մոցարտի, Շոպենի, Շուբերտի և այլ կոմպոզիտորների ստեղծագործությունների կատարումներով, հաճախ նաև Շոստակովիչի անվան լարային քառյակի, «Մեծ թատրոնի» (Մոսկվա) մեներգիչների և երգչախմբի մասնակցությամբ: Առաջին անգամ կատարողն է Մեսիանեի «Տուրանգալիլա» սիմֆոնիայի (Բրատիսլավա, 1984թ.), Վիլյա-Լորոսի «Բրազիլական բախիսներ, 3-րդ» ստեղծագործության (Սանկտ Պետերբուրգ, 1986թ.), Դենիսովի «Դաշնամուրի կվինտետի»՝ Մոսկվայի լարային քառյակի մասնակցությամբ, Նոր տարվա համերգային փառատոնում (Մոֆիա, 1989թ.), Տանենի «Վլինտետի»՝ Գավո սրահում (Փարիզ, 1989թ.) և Տրենտոյի փառատոնում (Իտալիա, 1989թ.): Մասնակցել է ժամանակակից դասական երաժշտության փառատոներին Մոսկվայում («Մոսկովյան աշուն», Շոստակովիչի անվան փառատոն, «Ավանգարդ» երաժշտական փառատոն), Սանկտ Պետերբուրգում (Ժամանակակից դասական երաժշտության փառատոն), Տալլինում, Կրակովում:

Եղել է Տանենի անվան համույթների համառուսաստանյան մրցույթի (Կալուգա, 1996թ.), Սաֆոնովի անվան համառուսաստանյան մրցույթի (Կազան, 1997թ.) և Սինսինատիի անվան դաշնակահարների միջազգային մրցույթի (ԱՄՆ, 1998թ.) ժյուրիի անդամ:

Մարգարիտ Լոնգի անվան դաշնակահարների միջազգային մրցույթի դափնեկիր է (Փարիզ, 1967թ.): Պարզևատրվել է Հունգար հեղինակների ստեղծագործությունների տարածման և հեղինակային իրավունքների պաշտպանության գործակալության մրցանակով (Հունգարիա, 1985թ.): Արժանացել է Ռուսաստանի վաստակավոր արտիստի (1986թ.), Ռուսաստանի Դաշնություն ժողովրդական արտիստի (2002թ.) կոչումներին:

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ԱՂԱՆԲԵԿՅԱՆ Աբել

AGANBEGYAN Abel

Տնտեսագետ: Տնտեսագիտական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի անդամ: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է 1932թ. հոկտեմբերի 8-ին Թբիլիսիում (Վրաստան): Գյոզ Աղանբեկյանի (Հունգարիայի կոմունիստական կուսակցության առաջնորդներից մեկը, ընդհատակյա թերթի խմբագիր, բռնադատվել է 1937թ-ին) որդին է: Ամուսնացած է, ունի որդի և դուստր:

Ավարտել է Մոսկվայի պետական տնտեսագիտական ինստիտուտը (1955թ.): Տնտեսագիտության ասպարեզում ստացել է գիտությունների թեկնածուի (1957թ.), ապա դոկտորի (1963թ.) գիտական աստիճաններ: Ընտրվել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի անդամ (1974թ., թղթակից-անդամ՝ 1964թ-ին):

Պաշտոնավարել է Խորհրդային Միության Նախարարների խորհրդի աշխատանքի և աշխատավարձի պետական կոմիտեում (1955-61թթ.): Եղել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Սիբիրի մասնաճյուղի Տնտեսագիտության և արդյունաբերական արտադրության ինստիտուտի (Նովոսիբիրսկ) բաժնի վարիչ (1961-66թթ.), ապա տնօրեն (1967-84թթ.): Իբրև նախագահության անդամ և ակադեմիկոս-քարտուղար ղեկավարել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Տնտեսագիտության բաժանմունքը (1987-89թթ.): Նշանակվել է Ռուսաստանի Դաշնության կառավարությանն առընթեր Ազգային տնտեսագիտական ակադեմիայի ռեկտոր (1989-2002), եղել է նույն հաստատության Տնտեսական քաղաքականության և տնտե-


սագիտական տեսության բաժանմունքի վարիչ (սկսած 1989թ-ից):

Միխայիլ Գորբաչովի պաշտոնավարության շրջանում եղել է տնտեսական հարցերի գծով նրա խորհրդատուն և առաջիններից մեկը, ով մասնակցել է նախկին Խորհրդային Միության տնտեսական վերակառուցման քաղաքականության մշակմանը: Մշակել է Ռուսաստանի մի շարք շրջանների, այդ թվում Արևմտյան Սիբիրի և Հեռավոր Արևելքի նավթով և գազով հարուստ շրջանների տնտեսական հեռանկարային զարգացման ծրագիրը: Հեղինակ է բազմաթիվ մենագրությունների, գրքերի և հոդվածների տեսական և կիրառական տնտեսագիտության ասպարեզում: Հիշարժան են նրա «Վերակառուցման տնտեսական դիմագիծը» (1988թ.), «Խորհրդային տնտեսության ապագան» (1988թ.), «Ռուսաստանի սոցիալ-տնտեսական զարգացումը» (2004թ.) աշխատությունները: «Էկո» տնտեսագիտական հանդեսի գլխավոր խմբագիրն է:

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր անդամ է (Երևան, 2000թ.): Բրիտանական ակադեմիայի (Հասարակական գիտությունների ազգային ակադեմիա, Մեծ Բրիտանիա) թղթակից-անդամ է (1988թ.): Հունգարիայի գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ է (1988թ.) և Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ (1986թ.): Ռուս-բրիտանական «Լինկ» խորհրդատվական հիմնարկի և «Չենիթ» ռուսական բանկի տնօրենների խորհուրդների նախագահն է: Ղեկավարում է «Տնօրենների ակումբը» (Ռուսաստանի արդյունաբերության և բանկերի ղեկավարներին միավորող կազմակերպություն):

Երկու անգամ պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով (ԽՍՀՄ): Արժանացել է Վասիլի Լեոնտևի անվան շքանշանի (2004թ.): Պատվավոր դոկտորի կոչումներ է ստացել Լոձի (Լեհաստան) և Ալիկանտի (Իսպանիա) համալսարաններում:

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ԱՂԱՏԱՆՅԱՆ Նիկոլայ

AGADJANIAN Nicolai

Բնախոս բժշկագետ (ֆիզիոլոգ): Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է Խաչատուր 1928թ. հունվարի 28-ին: Ալեքսանդր և Սոֆիա Աղաջանյանների որդին է: Ամուսնացել է Ամալիա Աղաջանյանի հետ, դուստրերը՝ Գայանե և Սոֆիա:

Ուսանել է Դաղստանի պետական բժշկական ինստիտուտում (1946-51թթ.): Ուսումը շարունակել է ԽՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի ֆիզիոլոգիայի ինստիտուտի, այնուհետև ԽՍՀՄ ռազմաօդային ուժերի Ավիացիոն բժշկության ինստիտուտի ասպիրանտուրայում (1951-56թթ.): Նույն հաստատությունում պաշտոնավարել է նախ իբրև կոստեր, ապա ավագ գիտաշխատող և լաբորատորիայի վարիչ (1956-63թթ.): Պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով թեկնածուի (1956թ.), ապա դոկտորական՝ ստանալով դոկտորի (Տիեզերական բժշկության ինստիտուտ, 1967թ.) գիտական աստիճաններ բժշկական գիտությունների բնագավառում: ԽՍՀՄ առողջապահության նախարարության Կենսաբանական հիմնահարցերի ինստիտուտում ղեկավարել է լաբորատորիա, ապա բաժին, այնուհետև բաժանմունք (1963-81թթ.): 1981թ-ից սկսած աշխատանքի է անցել Պ. Լուլուբայի անվան ժողովուրդների բարեկամության համալսարանում իբրև պրոֆեսոր և նորմալ ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ:

Գործուն մասնակցություն է ունեցել Խորհրդային Միությունում տիեզերական թռիչքների անձնակազմի բժշկական սպա-

արկման և տիեզերական բժշկագիտության զարգացման բնագավառներում:

Հեղինակ է ավելի քան 500 գիտական հրապարակման՝ հոդվածների, մենագրությունների, դասագրքերի, գիտահանրամատչելի գրքերի և այլն: Հիշարժան են նրա «Օրգանիզմը և զագային միջավայրը», «Լեռները և օրգանիզմի դիմադրությունը», «Տիեզերք և բժշկություն», «Կենսաբանական ռիթմեր», «Օրգանիզմի պահեստաբանները» աշխատությունները: Հսկայական ներդրում ունի գիտական կադրերի պատրաստման գործում նախկին ԽՍՀՄ-ում, Ռուսաստանում և աշխարհի բազմաթիվ երկրներում: Եղել է մոտ 170 թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների գիտական ղեկավար և խորհրդատու: «Վերականգնողական բժշկություն» գիտական ամսագրի խմբագրական կազմի նախագահն է: Անդամ է «Մարդու էկոլոգիա», «Տիեզերական տարածություն և էկոլոգիական բժշկություն», «Նոր բժշկական տեխնոլոգիաների տեղեկատու», «Միկրոէլեմենտներ» գիտական հանդեսների խմբագրական կազմերի:

Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս է (սկսած 1993թ-ից): Անդամ է Ռուսաստանի էկոլոգիական ակադեմիայի (1992թ.), Տիեզերագնացության միջազգային ակադեմիայի (1983թ.), Բենեային բժշկության և մարդու էկոլոգիայի ընկերության (2000թ.), Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի (1994թ.): Ղեկավարում է Ռուսաստանի առողջապահության նախարարության «Առողջապահություն և էկոլոգիա» և «Էկոլոգիական-ֆիզիոլոգիական հիմնահարցեր և հարմարվողականություն» գերատեսչական հանձնախմբերը: Կենսոլորտի հարցերով Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի և «Մարդու էկոլոգիայի» հարցերով Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի գիտական խորհրդատուն է: Ռուսաստանի Դաշնության վաստակավոր գիտնական է (1988): Բաշկիրստանի գիտությունների ակադեմիայի պատվավոր ակադեմիկոս է (1995թ.): Ժողովուրդների բարեկամության ռուսաստանյան համալսարանի և Օդագնացության և տիեզերական բժշկու-

թյան գիտահետազոտական ինստիտուտի պատվավոր պրոֆեսոր է (1996թ.): Պատվավոր դոկտոր է Արխանգելսկի պետական բժշկական ակադեմիայի (1997թ.): Ռուսաստանի բարձրագույն կրթության վաստակավոր գործիչ է (1997թ.):

Պարգևատրվել է «Կարմիր աստղի», «Ժողովուրդների բարեկամության», «Գազարինի անվան» և «Կելդիշի անվան» շքանշաններով: 4 անգամ ստացել է Ժողովրդական տնտեսության նվաճումների համամիութենական ցուցահանդեսի շքանշան, այդ թվում ոսկե և արծաթե: Արժանացել է 14 այլ կառավարական պարգևների, կոչումների և շքանշանների:

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ԱԴԲԱԲՅԱՆ Սիրան

AGBABIAN Mihran

Կալիֆոռնիայի հարավային համալսարանի Չեմպիոնի անվան ճարտարագիտության պրոֆեսոր, Հայաստանի ամերիկյան համալսարանի պատվավոր նախագահ, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ: Լոս Անջելոս, Կալիֆոռնիա (ԱՄՆ): Ծնվել է 1923թ. դեկտեմբերի 9-ին Կիպրոսում (հայրը՝ վերապատվելի Սիրական Աղբաբյան): Ամուսնացած է Էլիզաբեթ Աղբաբյանի հետ:

Ռուսներ է Բեյրութի ամերիկյան համալսարանի ֆիզիկայի բաժնում (արվեստների պատվավոր, 1944թ.), ապա քաղաքացիական ճարտարագիտության բաժնում (արվեստների պատվավոր, 1947թ.): Այնուհետև ռուսներ է Կալիֆոռ-

նիայի տեխնոլոգիական ինստիտուտում (Կալիֆոռնիայի հարավային համալսարան)՝ ստանալով գիտության մագիստրոսի աստիճան (1947թ.): Կառուցվածքային ճարտարագիտության բնագավառում նրան շնորհվել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան (Կալիֆոռնիայի հարավային համալսարան, Բերկլի, 1951թ.):

Հիմնել է «Աղբաբյան միավորում» ճարտարագիտական խորհրդատվական ձեռնարկությունը (1963-96թթ.): Եղել է Կալիֆոռնիայի հարավային համալսարանի քաղաքացիական ճարտարագիտության ամբիոնի վարիչ, Միջավայրի ճարտարագիտական ուսումնասիրման բաժնի տնօրեն, Ֆրեդ Չեմպիոնի անվան ճարտարագիտության պրոֆեսոր, (1984-93թթ.): Իբրև առաջին նախագահ ղեկավարել է Հայաստանի ամերիկյան համալսարանը (1991-96թթ.): Ներկայումս նույն համալսարանի պատվավոր նախագահն է (սկսած 1997 թվից):

Հեղինակ է մեծ թվով մենագրությունների և ուսումնասիրությունների՝ քաղաքացիական և ռազմական ճարտարագիտության, կիրառական մեխանիկայի, միջուկային էներգիայի օգտագործման կառույցների նախագծման, կառույցների հակերկրաշարժային կայունության վերլուծության, երկրաշարժադինամիկայում կառույցների ստեղծման և բազմաթիվ այլ ասպարեզներում:

Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադիր-անդամներից մեկն է (1991թ., այդ համալսարանի հիմնադրման մասին է նրա «Նոր սկիզբ» նոր սերնդի համար» գիրքը, 2002թ.):

ԱՄՆ-ի ճարտարագիտության ազգային ակադեմիայի անդամ է (1992թ.): Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ է (սեյսմոլոգիա, սկսած 1998թ-ից): Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի (1992թ.) և մասնագիտական բազմաթիվ միությունների անդամ է: ԱՄՆ-ի ներկայացուցիչն է բազմաթիվ միջազգային գիտական հանձնախմբերում: Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտոր է (1994թ.):

Պարգևատրվել է «Էլիս Այենդ» ամերիկյան մեդալով (1995թ.), Տիգրան Կաբակչյանի անվան մրցանակով (Ամերիկահայ ուսանողական միություն, 1996թ.), Հայաստանի Հանրապետության «Մովսես Խորենացի» մեդալով (2001թ.), ԱՄՆ-ի Հայկական կրթական հաստատության կողմից՝ «Նշանակալից ձեռքբերումների համալ» մրցանակով (2003թ.), «Սուրբ Սահակ, Սուրբ Մեսրոպ» շքանշանով (Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի կողմից), Գնահատագրերով (Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա-ի և Հայ կաթողիկե եկեղեցու պատրիարք Հովհաննես-Պետրոս 18-րդի կողմից):

2005թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ԱՃԵՍՕՂՈՒ Տարոն

ACEMOGLU Daron

Տնտեսագետ: Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի կիրառական տնտեսագիտության Կինդերգերի անվան պրոֆեսոր: Քեմբրիջ, Մասաչուսեթս, ԱՄՆ: Ծնվել է Ստամբուլում (Թուրքիա) 1967թ. սեպտեմբերի 23 ին: Գևորգ և Իրմա Աճեմօղլուների որդին է:

Ռուսներ է Յորքի համալսարանում՝ ստանալով արվեստների պատվավորի աստիճան (1989թ.), այնուհետև ավարտել է Լոնդոնի տնտեսագիտական դպրոցը մագիստրոսի աստիճանով մաթեմատիկական տնտեսագիտության բնագավառում (1990թ.): Նույն հաստատությունում նրան շնորհվել է փիլիսոփայության դոկտորի գիտական կոչում տնտեսագիտության ասպարեզում:

Լոնդոնի տնտեսագիտական դպրոցում եղել է տնտեսագիտության դասախոս (1992-93թթ.), օգնական-պրոֆեսոր (1993-97թթ.), Պենսիլվանիայի անվան օգնական-պրոֆեսոր (1997-2000թթ.): Պաշտոնավարել է իբրև Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի տնտեսագիտության պրոֆեսոր (2000-2004թթ.): Ներկայումս Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի կիրառական տնտեսագիտության Կինդերգերի անվան պրոֆեսոր է (սկսած 2004թ-ից):

Հեղինակ կամ համահեղինակ է մեծ թվով հոդվածների քաղաքատնտեսության, տնտեսական զարգացման, տնտեսագիտական տեսությունների, աշխատանքի տնտեսագիտության և հարակից ասպարեզներում: Հիշարժան են նրա «Բռնապետության և ժողովրդավարության տնտեսական ծագումը» աշխատությունը (համահեղինակ՝ Ջ. Ռոբինսոն, Քեմբրիջ, 2006թ.) և «Ժամանակակից տնտեսական զարգացումը» դասագիրքը (2007թ.): Խմբագիրն է «Տնտեսագիտական և վիճակագրական հանդես» և համախմբագիրը «Տնտեսական զարգացման ամսագիր» գիտական պարբերական հրատարակությունների: Եղել է Թագավորական տնտեսագիտական ընկերության (Մեծ Բրիտանիա, 2001թ.), Եվրոպական տնտեսագիտական ընկերության Ալֆրեդ Մալշայի անվան (2003թ.), Լոնդոնի տնտեսագիտական դպրոցի Լ. Ռոբինսոնի հիշատակի (2003թ.), Ստոկհոլմի Աստրո Ջենեկայի անվան (2003թ.), Աշխատանքի տնտեսագիտության եվրոպական խորհրդի (2004թ.) հրավիրված դասախոս:

Անդամ է Ամերիկայի գիտությունների և արվեստների ակադեմիայի (2006թ.), Աշխատանքի տնտեսագիտության միության, Էկոնոմետրիկ ընկերության, Եվրոպական տնտեսագիտական ընկերության (2003թ.), Առաջավոր հետազոտությունների կանադական ընկերության, Թուրյուզի տեղեկատվական տեխնոլոգիաների մշակման ընկերության, ԱՄՆ-ի տնտեսական-քաղաքական հետազոտությունների կենտրոնի, Թուրքիայի գիտությունների ակադեմիայի և այլն:

Արժանացել է Ադամ Սմիթի հիշատակի

մրցանակի (1989թ.), Յորքի համալսարանի ֆակուլտետների ղեկավարների հատուկ մրցանակի (1989թ.), Մակ Կենգիի անվան (1992թ.) և Հոբսոնի անվան (1990թ.) գիտական մրցանակների (Լոնդոնի տնտեսագիտական դպրոց), Ամերիկյան տնտեսագետների միության Ջ. Բ. Քլարկի անվան մեդալի (2005թ.), Չիկագոյի համալսարանի Շուլցի անվան մրցանակի (2004թ.), Աշխատանքի տնտեսագիտական միության Ռոզենի անվան մրցանակի՝ նշանակալից ներդրման համար (2004թ.), «Տնտեսագիտական հանդեսում» տպագրված լավագույն հոդվածի համար մրցանակի (1995թ.), Ականավոր գիտնականի կոչման և մրցանակի՝ Թուրքական գիտական ընկերության կողմից (2006թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ԱՄԻՐԽԱՆԻԱՆ Ռոբերտ

AMIRKHANIAN Robert

Կոմպոզիտոր: Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ: Հայաստանի ժողովրդական արտիստ: Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ: Պրոֆեսոր: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է 1939թ. նոյեմբերի 16-ին Երևանում: Ամուսնացած է, երկու երեխայի հայր է:

Ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական երաժշտանոցը (1969թ.):

Եղել է Հայաստանի ռադիոյի երաժշտական խմբագիրը (1969–1972թթ.): Դասավանդում է Երևանի Կոմիտասի անվան պետական երաժշտանոցում (սկսած 1970 թ–ից), այդ հաստատության պրոֆեսոր է և երաժշտության տեսության ամբիոնի վարիչ (1991-ից): Հայաստանի կոմպոզիտորների

միության նախագահն է (1999թ–ից): Ընտրվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր (Մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնախմբի անդամ, 1999–2003թ.):

Նրա երաժշտական ստեղծագործությունները բազմաժանր են: Հեղինակ է «Դաշնամուրային կոնցերտի», «Լարային կվարտետի», երգչախմբային ստեղծագործությունների, երգաշարերի, 16 կինոնկարի և մոտ 30 մուլտֆիլմի երաժշտության: Մեծ ժողովրդականություն են վայելում նրա ստեղծած «Առաջին խոսքն իմն է» երգաշարը (Ալիսիա Կիրակոսյանի խոսքերով), «Երազ իմ երկիր հայրենի», «Հայի աչքեր», «Կարմիր ծաղիկ մը գարունի» և բազմաթիվ այլ երգեր, ինչպես նաև «Հայկական բանակի հիմնը» և մանկական երգերը («Պոլ–պոլ», «Դինգ–դոնգ»՝ գրված մուլտֆիլմերի համար): Հեղինակային համերգներով հանդես է եկել աշխարհի բազմաթիվ քաղաքներում:

Բազմաթիվ երաժշտական մրցույթների դափնեկիր է: Արժանացել է Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչի (1984թ.) և Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստի (1987թ.) կոչումներին: Պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով (1998թ.): Ռուսաստանի հայերի միությունը նրան շնորհել է «Արծաթե խաչ» շքանշանը (2008թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ԱՅԼԱՄԱԶՅԱՆ Էդվարդ

AILAMAZIAN Edward

Մանկաբարձության և կնախտաբանության (գինեկոլոգիա) բնագավառի բժշկա-

գետ: Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս: Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Սանկտ Պետերբուրգ, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է 1940թ. հունվարի 2-ին Եգորովսկում (Մոսկվայի շրջան): Հայրամուր՝ Կարապետ: Ամուսնացել է Լարիսա Անտոնովնայի հետ, որդին՝ Նիկոլայ:

Ուսանել է Պիրոգովի անվան Մոսկվայի պետական բժշկական ինստիտուտում (այժմ՝ Ռուսաստանի պետական բժշկական համալսարան), այն ավարտել է 1964թ–ին: Ստացել է բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (1970թ.): Բժշկական գիտությունների դոկտոր է (սկսած 1984թ–ից):

Իբրև գլխավոր բժիշկ աշխատել է Կարելիայի շրջանային հիվանդանոցում (1964–65թթ.): Այնուհետև աշխատանքի է անցել Լենինգրադի Պավլովի անվան առաջին բժշկական ինստիտուտում (ներկայումս՝ Սանկտ Պետերբուրգի պետական բժշկական համալսարան, սկսած 1965թ–ից): Ի թիվս այլ պաշտոնների, զբաղեցրել է այդ հաստատության մանկաբարձության և կնախտաբանության ամբիոնի վարիչի պաշտոնը (1983–88թթ.): Ներկայումս Օտտայի անվան մանկաբարձության և կնախտաբանության ինստիտուտի (Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիա) տնօրենն է (սկսած 1988թ–ից): Հիմնադիրն ու ղեկավարն է Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետի մանկաբարձության և կնախտաբանության ամբիոնի (սկսած 1998թ–ից):

Հեղինակ կամ համահեղինակ է մոտ 300 գիտական հրատարակման՝ հոդվածների, մենագրությունների, դասագրքերի: Հիշարժան են նրա «Անհապաղ օգնությունը մանկաբարձության մեջ՝ ծայրահեղ իրավիճակներում», «Մանկաբարձության», «Կնախտաբանություն» (դասագրքեր բարձրագույն ուսումնական հաստատությունների համար) աշխատությունները: Եղել է 100-ից ավելի թեկնածուական կամ դոկտորական ատենախոսությունների գիտական ղեկավար կամ խորհրդատու: «Մանկաբարձություն և կանացի հիվանդություններ» ասագրի գլխավոր խմբագիրն է:

Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս է (սկսած 1999թ., թրթակից–անդամ՝ 1994թ–ից): Անդամ է Ազգային էկոլոգիական անվտանգության միջազգային ակադեմիայի, Մանկաբարձության և կանացի հիվանդությունների եվրոպական ընկերության, Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի հյուսիսարևմտյան մասնաճյուղի նախագահության: Նախագահն ու խորհրդատուն է «Կանանց էկոլոգիական և վերարտադրողական ֆունկցիան», «Մանկաբարձություն և կնախտաբանություն» (Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիա) պրոբլեմային հանձնախմբերի:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր դոկտոր է:

Պարգևատրվել է «Ժողովուրդների բարեկամության շքանշանով» (1997թ.): Ռուսաստանի Դաշնության պետական մրցանակի դափնեկիր է (2002թ.): Ռուսաստանի Դաշնության վաստակավոր գիտնական է (1993թ.): Արժանացել է Պավլովի անվան մրցանակի (Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիա, 2003թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ Կարապետ

ANTRANIKIAN Garabed

Կենսաբան: Գիտության դոկտոր, պրոֆեսոր: Համբուրգի համալսարանի Տեխնիկական միկրոկենսաբանության ինստիտուտի տնօրեն: Համբուրգ, Գերմանիա: Ծնվել է Ամմանում (Հորդանան) 1951թ. ապրիլի 30-ին: Ժողժ. Անդրանիկյանի և Էլիզա Շոհնեյանի որդին է: Ամուսնացել է

Ժամնետ Անդրանիկյանի հետ (Գյոթինգեն), երեխաները՝ Արմեն և Սևան:

Ուսանել է Ամերիկյան համալսարանում՝ ստանալով գիտության բակալավրի և մագիստրոսի աստիճաններ կենսաբանության բնագավառում (Բեյրյութ, Լիբանան, 1970-76թթ.): Գյոթինգենի համալսարանում արժանացել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճանի միկրոկենսաբանության բնագավառում (1980թ.): Նույն հաստատությունում ստացել է հետդոկտորական գիտական մասնագիտացում (1988թ.):

Համբուրգի Տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսոր է (1989թ.): 1990թ-ից սկսած ղեկավարում է այդ համալսարանի Տեխնիկական միկրոկենսաբանության ինստիտուտը:

Եղել է «Էքստրենոֆիլների կենսատեխնոլոգիա» (39 մասնակից, 1993-96թթ.), «Էքստրենոֆիլները իբրև բջջային գործարաններ» (58 մասնակից՝ 13 արդյունաբերական ձեռնարկությունից, 1997-99թթ.), «Կենսաբանական կատալիզ» (60 մասնակից, 11 ծրագիր, 2000-2004թթ.) եվրոպական միացյալ գիտահետազոտական ծրագրերի համակարգող ղեկավար: Ղեկավարել է «Պրոցեսների ճարտարագիտություն և կենսաբանական կատալիզ» ծրագիրը (2002-2004թթ.): Գերմանիայի Դաշնակցային Հանրապետության կառավարության կողմից ստեղծված «Կենսաբանական կատալիզի նորարարական կենտրոնի» համակարգողն է (սկսած 2002թ-ից):

Հեղինակ է 140 գիտական հոդվածի, 47 արտոնագրի (որից 27-ը՝ եվրոպական և ամերիկյան): Խմբագիրն է «Կիրառական միկրոկենսաբանություն» տեղեկատու հատորի (2006թ.): Համախմբագիրն է «Էքստրենոֆիլներ», «Միկրոկենսաբանության արխիվ», «Շոփային կենսատեխնոլոգիա» գիտական հանդեսների:

Էքստրենոֆիլների ուսումնասիրման միջազգային միության նախագահն է (2005թ-ից): Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր դոկտոր է (2002թ.): Պարգևատրվել է Գերմանիայի Դաշնակցային Հանրապետության Բունդեստագի նախագահի կողմից՝ Շրջակա միջավայրի

պահպանման գերմանական հիմնադրամի մրցանակով, շրջակա միջավայրի պահպանության գործին բերած ծառայությունների համար (2004թ.):

2006թ. Դայկական կենսագրական կենտրոնի «Դարցաթերթի» տվյալների հիման վրա, խմբագրված հատորի հեղինակի կողմից



ԱՌԱՔԵԼՅԱՆ Նորայր

ARAKELIAN Norair

Մաթեմատիկոս: Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի անդամ: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է 1936թ-ին Հայկական ԽՍՀ Արթիկի շրջանում: Հունան Առաքելյանի և Արաքսիա Արիստոյանի որդին է: Ամուսնացել է Մարիետա Ավետիսյանի հետ (Երևան, 1968թ.), դուստրերը՝ Անահիտ և Արաքսիա:

Ուսանել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում՝ այն ավարտելով 1958թ-ին: Ստացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (Երևանի պետական համալսարան, 1962թ.), ավագ գիտաշխատողի գիտական կոչում «Ֆունկցիաների տեսություն» մասնագիտությամբ (Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիա, 1967թ.), դոկտորի գիտական աստիճան մաթեմատիկայի բնագավառում (ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Ստեկլովի անվան մաթեմատիկայի ինստիտուտ, Մոսկվա, 1970թ.), պրոֆեսորի կոչում (Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիա, 1989թ.):

Աշխատել է Երևանի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետի մա-

թեմատիկական վերլուծության և ֆունկցիաների տեսության ամբիոնում (1958-59թթ.): Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի Մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտում պաշտոնավարել է նախ իբրև կրտսեր (1959-64թթ.), ապա ավագ գիտաշխատող (1965-71թթ.): Եղել է Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի Մաթեմատիկայի ինստիտուտի փոխտնօրեն (1971-74թթ.) և տնօրեն (1974-91թթ. և սկսած 1997թ-ից): Երևանի պետական համալսարանում ղեկավարել է ֆունկցիաների տեսության ամբիոնը (1991-97թթ.): Պաշտոնավարել է իբրև Երևանի պետական համալսարանի ռեկտոր (1991-93թթ.):

Հեղինակ կամ համահեղինակ է 42 գիտական աշխատության, մասնավորապես մաթեմատիկական վերլուծության և կոմպլեքս ֆունկցիաների տեսության բնագավառում: Եղել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի «Մաթեմատիչեսկիե զամետկի» («Մաթեմատիկական գրառումներ») գիտական հանդեսի խմբագրական կազմի անդամ (1970-80թթ.), «Անալիզ» («Վերլուծություն») միջազգային մաթեմատիկական հանդեսի և «Տեղեկագիր Հայաստանի գիտությունների ակադեմիայի, Մաթեմատիկա» ամսագրի խմբագրական կազմի անդամ:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի իսկական անդամ է (սկսած 1990թ-ից), թղթակից անդամ է եղել 1974-90թթ-ին: Նույն հաստատության նախագահության անդամ է եղել 1991-94թթ. և սկսած 2006թ-ից: Իբրև նախագահ ղեկավարել է Հայկական մաթեմատիկական միությունը (1994-97): Գործուն մասնակցություն է ունեցել մաթեմատիկոսների միջազգային գիտաժողովներին Նիսում (Ֆրանսիա, 1970թ.), Վանկովերում (Կանադա, 1974թ.), Վարշավայում (Լեհաստան, 1983թ.), եղել է «Կոմպլեքս վերլուծություն» ծրագրերի համընթաց անդամ (1983թ.): Հայաստանի «Մաթեմատիկական հետազոտություններ» հիմնադրամի նախագահն է:

Պարգևատրվել է Հայկական ԽՍՀ լուսավորության նախարարության «Արժաթե մեդալով» միջնակարգ դպրոցն ավարտե-

լուց հետո (1953թ.), «Ոսկե մեդալով» և «Մրցանակով մաթեմատիկայի բնագավառում»՝ Համամիութենական կոմերիտմիության կողմից (ԽՍՀՄ, 1970թ.): Արժանացել է դրամաշնորհների Միջազգային գիտական հիմնադրամի (որպես գլխավոր հետազոտող, 1995թ.) և «ԻՆՏԱՍ»-ի (INTAS) կողմից (1996թ.): Ստացել է «Հայաստանի գիտության վաստակավոր գործչի» կոչում (2003թ.): Տրիերի համալսարանի (Գերմանիա) պատվավոր դոկտոր է (2004թ.):

2005թ. Դայկական կենսագրական կենտրոնի «Դարցաթերթի» տվյալների հիման վրա, խմբագրված հատորի հեղինակի կողմից



ԱՎԱԳՅԱՆ Հայկ

AVAKIAN Haig

Դաշնակահար, երգահան, երաժշտագետ, խմբավար, երաժշտական խմբագիր: Կահիրեի «Տոնական երգչախմբի» հիմնադիր և խմբավար: Կահիրե, Եգիպտոս: Ծնվել է 1970թ-ին Ալեքսանդրիայում (Եգիպտոս):

Ավարտել է Ալեքսանդրիայի երաժշտանոցը: Կատարելագործվել է Կահիրեի օպերայում, մասնավոր դասընթացներում, Լոնդոնի թագավորական երաժշտանոցում (1996թ.), Փարիզում՝ Երաժշտական մանկավարժական բարձրագույն դպրոցում (2001թ.):

Իբրև դաշնակահար նվագել և դասավանդել է Կահիրեի երաժշտանոցում (1994-97թթ.), Կահիրեի օպերայում (սկսած 1993թ-ից), մասնակցել է համերգների Լիբանանում, Իտալիայում, Բելգիայում, Ֆրանսիայում և այլն: «Դիսնեյ պրոդակցի» արաբերեն կրկնօրինակումների երաժշտական տնօրենն է (սկսած

1998թ-ից): Ալեքսանդրիայի գրադարանի երգչախմբի խմբավարն է, ղեկավարել է 1000 հոգուց բաղկացած մանկական երգչախումբը Ալեքսանդրիայի գրադարանի բացման կապակցությամբ 2003թ-ին: Ղեկավարել է Կահիրեի սիմֆոնիկ նվագախումբը (45-րդ համերգաշրջանը, 2004թ-ին և Կահիրեում Ռոսսինիի համերգային փառատոնի 3 օպերա, 2003թ-ին): Մարոկկոյի Թագավորությունում կայացած Գարնանային փառատոնում ղեկավարել է իր երեք սիմֆոնիկ ստեղծագործության կատարումները (2004թ-ին): Կահիրեի սիմֆոնիկ նվագախումբը նրա ղեկավարությամբ մասնակցել է Միջերկրականի եվրոպական առաջին փառատոնին, համերգներ է ունեցել Օնտարիոյում, Նեապոլում, Հռոմում և Կալարիայում: Կահիրեի «Տոնական երգչախմբի» հիմնադիրներից է, նրա խմբավարը և գեղարվեստական ղեկավարը (սկսած 2000թ-ից):

Հեղինակ է մոտ 30 երգչախմբային ստեղծագործության, այդ թվում Եգիպտոսի ավետարանական եկեղեցու պատվերով գրված երգչախմբային ստեղծագործության՝ մեներգչի, 90-հոգանոց երգչախմբի և նվագախմբի համար (2000թ.), սիմֆոնիկ գործերի (կատարված Ալեքսանդրիայի լարային, Կահիրեի սիմֆոնիկ և Օպերային թատրոնի նվագախմբերի, Ալեքսանդրիայի գրադարանի երգչախմբի, «Միջնաբերդի փառատոնային նվագախմբի» կողմից), «Ա. Խաչատրյանի ստեղծագործությունների կատարումների ընտրանի» սեղմ սկավառակի, եգիպտական թատրոնների ներկայացումների համար գրված երաժշտության և այլն:

Խմբագիրն է Զուխաջյանի «Արշակ Բ» օպերայի ամբողջական հրատարակության (Ջ. Փափազյանի հետ, 2003թ.): Կահիրեում լույս տեսնող «Ծիծեռնակ» երաժշտական հանդեսի գլխավոր խմբագիրն է (սկսած 2001թ-ից):



ԱՐԱՐՅԱՆ Արմանդ

ARABIAN Armand

Իրավաբան: ԱՄՆ-ի Նահանգային գերագույն դատարանի գլխավոր դատավոր 1990-96թթ.: Իրավագիտության պրոֆեսոր, իրավագիտության պատվավոր դոկտոր: Տարզանա, Կալիֆոռնիա (ԱՄՆ): Ծնվել է Նյու Յորքում 1934թ. դեկտեմբերի 12-ին: Օվանես (Հովհաննես) Արաբյանի և Աղավնի Յալյանի որդին է: Ամուսնացած է Նանսի Մեդրյանի հետ, ունի մեկ դուստր և մեկ որդի: Ավարտելով Բոստոնի համալսարանը՝ ստացել է արվեստների պսակավորի գիտական աստիճան (1956թ.): Այնուհետև Բոստոնի համալսարանի իրավաբանական բաժնում արժանացել է իրավագիտության դոկտորի գիտական աստիճանի (1961թ.): Ուսանելով Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի իրավաբանական կենտրոնում՝ ստացել է իրավագիտության մագիստրոսի գիտական աստիճան (1970թ.):

Ավարտելով դեսանտային հետախույզների զինվորական դպրոցը՝ իբրև հետևակի սպա ծառայել է Ամերիկյան բանակում (1956-58թթ.): Եղել է փաստաբան (1962-63թթ.): Ընդգրկվել է Կալիֆոռնիայի դատարանի կազմում (1962թ.): Վան-Նույսում (Կալիֆոռնիա) զբաղվել է մասնավոր իրավաբանական գործունեությամբ (1963-72թթ.): Պաշտոնավարել է իբրև Քաղաքային դատարանի դատավոր (1972-73թթ.): Նահանգապետ Ռոնալդ Ռեյգանի (հետագայում՝ ԱՄՆ-ի նախագահ) կողմից նշանակվել է Լոս Անջելոսի քաղաքային դատարանի և Գերագույն դատարանի անդամ (1972թ.): Եղել է Հյուսիսային Վալիի դատարանի գլխավոր դատավորը (Սան Ֆերնանդո, 1973-83թթ.): Աշխատել է Կալիֆոռնիայի վճռաբեկ դատարանում իբրև պաշտոնակից դատավոր (1983-90թթ.):

Նշանակվել է (նահանգապետ Դոկմեջյանի կողմից) Կալիֆոռնիա նահանգի Գերագույն դատարանի 105-րդ գլխավոր դատավոր (1990-96թթ.): Եղել է Վալիի համալսարանի իրավաբանական դպրոցի փոխտնօրեն (1977-78թթ.): Դասախոսել է Սան Ֆերնանդո Վալիի իրավաբանական ընկերությունում և Պեպերդայնի համալսարանի իրավաբանական բաժնում (1996թ.): Վերջինիս պատվավոր դոկտոր է սկսած 1990թ-ից: Ներկայումս Պեպերդայնի համալսարանի իրավագիտության պրոֆեսոր է: Հարավային Կալիֆոռնիայի (սկսած 1990թ-ից) և Արևմտյան Լոս Անջելոսի (սկսած 1994թ-ից) համալսարանների իրավագիտության պատվավոր դոկտոր է:

Հեղինակ է Գերագույն դատարանի կողմից հրապարակված 94 մեծամասնական կարծիքի, 17 համընկնող կարծիքի, 6 համընկնող և վիճահարույց կարծիքի, 16 տարակարծության: Հեղինակ է մի շարք գիտական հրապարակումների դատավարության, դատապաշտպանության, գործնական իրավաբանության հարցերի ասպարեզներում:

Անդամ է կամ անդամ է եղել Սան Ֆերնանդո Վալիի քրեական գործերի իրավաբանական ընկերության (1969-90թթ.), Երիտասարդ դատապաշտպանների ընկերության ղեկավար հանձնախմբի (1970թ.), Բոստոնի համալսարանի շրջանավարտների խորհրդի (սկսած 1977թ-ից), Դոկմեջյանի կողմից ստեղծված Քրեական հանցագործությունների գոհերին պաշտպանող իրավաբանական խորհրդակցական հանձնախմբի՝ իբրև գլխավոր դատապաշտպան (1980թ.), Գերագույն դատարանի իրավաբանական հրահանգների ժյուրիի (1982-83թթ.), Պեպերդայնի համալսարանի իրավաբանական բաժնի այցելուների հանձնախմբի (սկսած 1988թ-ից), «Միզմա, Ֆի, Էպսիլոն» ընկերության՝ իբրև նահանգային ղեկավար (1968-69թթ.), Դեսանտային վետերանների միջազգային ընկերության (1987թ.): Հիմնադիրն է Քրեական հանցագործների հետքերի հայտնաբերման միջազգային միության (1977թ.):

Պարգևատրվել է «Հուշագրով»՝ արդարադատության բնագավառում նշանակալից ձեռքբերումների համար, Արևմտյան

պետական իրավաբանական դպրոցի կամանգ միավորման կողմից (1973թ.), վերջինիս «Գովասանագրով» (1976թ.), «Արժանիքների համար» մրցանակով՝ հասարակությանը և ազատ արհեստների զարգացմանը բերած նշանակալից և անաչառ ծառայության համար (Սան Ֆերնանդո Վալի, 1977թ.), «Գնահատանքով»՝ ազատ արհեստների զարգացմանը բերած ակնառու ծառայությունների համար, Բոստոնի համալսարանի կողմից (1978թ.), «Գնահատանքով»՝ ակնառու ծառայությունների համար, Կալիֆոռնիայի սեռական ոտնձգության հետաքննման ընկերության կողմից (1978թ.), «Արժաքե ցուցանակ» շքանշանով՝ ազատ արհեստների զարգացմանը բերած նշանակալից ներդրումների համար, Բոստոնի համալսարանի Իրավաբանական դպրոցի կողմից (1981թ.), «Արժանիքների համար» մրցանակով, որը տրվում է արական սեռի անձանց՝ բռնաբարության զոհերի պաշտպանության վերաբերյալ օրենքներում օրենսդրական փոփոխությունների և նշանակալից ձեռքբերումների համար (1982թ.), «Երաշխավորագրով»՝ կին կոնգրեսական Բոբբի Ֆիլդերի կողմից, հասարակությանը բերած ակնառու ծառայությունների համար (1982թ.), «Ձեռքբերումների գնահատման և խելամուտության օրինակ ծառայելու մասին» Լոս Անջելոսի քաղաքապետի և Քաղաքային խորհրդի հատուկ որոշմամբ (1982թ.), «Երաշխավորագրով»՝ Լոս Անջելոս քաղաքի կառավարիչների խորհրդի կողմից (1982թ.), «Հուշագրով»՝ արդարադատության համակարգում 10 տարի անբասիր ծառայության համար՝ Լոս Անջելոսի քաղաքապետ Թոմ Բրեդլիի կողմից (1982թ.), «Գնահատման վկայագրով»՝ օրենքին և արդարադատությանը բերած ծառայությունների համար, Լոս Անջելոսի ոստիկանության խորհրդի կողմից (1982թ.), «Հուշագրով»՝ 10 տարի օրինակելի ծառայության համար, Սան Ֆերնանդո Վալիի քրեական հանցագործության հետաքննման ընկերության կողմից (1982թ.), Լինցի հիշատակի մրցանակով՝ Սան Ֆերնանդո Վալիի իրավաբանական ընկերության կողմից (1986թ.), Պապպասի անվան ակնառու գիտնականի մրցանակով՝ Բոստոնի հա-

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա

մալարանի իրավաբանական դպրոցի կողմից (1987թ.), «Կենսա ձեռքբերումների մրցանակով»՝ Ֆերնանդո Վալիի իրավաբանական ընկերության կողմից (1993թ.), «Տարվա մարդը» մրցանակով՝ «Արարատ» հիմնադրամի կողմից (1995թ.), «Տարվա նշանավոր դատավորը» մրցանակով՝ Մալբու իրավաբանական ընկերության կողմից (1996թ.), Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի «Ալբերտ Էյնշտեյն» մեդալով (2003թ.), «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» մեդալով՝ Հայ առաքելական եկեղեցու կողմից՝ տրված Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի ձեռքով (2004թ.), «Էլիս Ալենդ» մեդալով (2004թ.), Լոս Անջելոսի կանանց միության բարձրագույն մրցանակով՝ կանանց իրավունքների պաշտպանության համար (2005թ.):

Սան Ֆերնանդո Վալիի իրավաբանական ընկերությունը սահմանել է Արմանդ Արաբյանի անվան իրավունքի և լրատվամիջոցների ամենամյա մրցանակ: Պեպերդայնի համալսարանի իրավագիտության դպրոցում պարբերաբար անցկացվում են Արմանդ Արաբյանի անվան մրցույթներ (սկսած 1999թ-ից): «Դատավոր Արմանդ Արաբյանի անվան հոգու առողջության ամենամյա մրցանակ» է սահմանվել սեռական հանցագործությունների դեմ պայքարի «Պրոջեկտ Սիսթերա» կազմակերպության կողմից (2002թ.):

2006թ. Գայկական կենսագրական կենտրոնի «Չարգաբերթի» տվյալների հիման վրա, խմբագրված հատորի հեղինակի կողմից



ԱՐԱՄ Ա

ARAM I

Նորին Սուրբ Օծույթյուն Տեր Տեր Արամ Առաջին Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ: Անթիլիաս, Լիբանան: Ծնվել է 1947-ի մար-

տի 8-ին Բեյրութում (Լիբանան): Ծննդով՝ Քեշիշյան Պետրոս: Հարություն Քեշիշյանի և Լուսին Կովտիկյանի որդին է:

Նախնական կրթությունը ստացել է Ազգային Մեսրոպյան վարժարանում, ապա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության Դպրեվանքում (Անթիլիաս, 1961-65թթ.): Շարունակելով ուսումը Դպրեվանքում՝ ստացել է արվեստների պսակավորի աստիճան (1968թ.): Այնուհետև ուսանել է Մերձավոր Արևելքի աստվածաբանական ճեմարանում՝ ստանալով աստվածաբանության մագիստրոսի աստիճան (Բեյրութ, 1972թ.): Բեյրութի ամերիկյան համալսարանում արժանացել է կրոնի պատմության մագիստրոսի կոչման (1975թ.): Կրթությունը կատարելագործել է Շվեյցարիայի Բոսսեի էքոմենիկ ինստիտուտում, Օքսֆորդի համալսարանի արևելագիտության բաժնում և Նյու Յորքում՝ Ֆորդհամ համալսարանում (1975-88թթ.): Ֆորդհամ համալսարանում արժանացել է փիլիսոփայության դոկտորի կոչման (1988թ.):

Ձեռնադրվել է արեղա (1968թ.), ստացել վարդապետական աստիճան (1970թ.): Ընտրվել է Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդական Տեղապահ (1978թ.) և Առաջնորդ (1979թ.): Ստացել է Ծայրագույն վարդապետության աստիճան և ձեռնադրվել Եպիսկոպոս (1980թ.): 1985թ-ին ստացել է Արքույթյան տիտղոս: Հայ եկեղեցիների Նվիրապետական բոլոր աթոռների գահակալների ներկայությամբ 1995թ-ի հուլիսին օծվել է Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ:

Եղել է Միջին Արևելքի եկեղեցիների խորհրդի հիմնադիրներից մեկը և նրա Գործադիր վարչության անդամ (1975-90թթ.): Նշանակվել է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության ներկայացուցիչ Վիեննայում՝ Կաթոլիկ էքոմենիկ կազմակերպությունում, ապա ընտրվել է նույն կազմակերպության պատվավոր անդամ (1977թ.): Ընտրվել է «Համաշխարհային կրոնի թանգարանի» պատվավոր նախագահ (1994թ.): Եկեղեցիների համաշխարհային խորհրդի աշխատանքին մասնակցել է սկսած 1970թ-ից, եղել է Երիտասարդական բաժանմունքի խորհրդի անդամ, ապա «Հավատք և Կարգ» հանձնախմբի ու

նրա գործադիր վարչության անդամ, Վանկովերի համաժողովում ընտրվել է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական վարչության անդամ (1983թ.), Կանբերրայի (Ավստրալիա) համաժողովում Կենտրոնական ու Գործադիր վարչությունների ատենապետ (1991թ.), Հարաբեի (Չինբաբվե) 8-րդ համաժողովում վերընտրվել է այդ պաշտոններում (1998թ.):

Հեղինակ է մեծ թվով հոդվածների (հայերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով, որոնց մի մասը թարգմանված է նաև այլ լեզուներով) և գրքերի: Հիշարժան են նրա «Ներսես Շնորհալի-Աստուածաբան ու Էքիմենիստ» (Պէյրութ, 1974թ.) «Վերականգնումի կամքով» (Պէյրութ, 1983թ.), «Դէպի 1700-ամեակ Սուրբ Թադէի ճամբով» (Պէյրութ, 1996թ.), «Հայ Եկեղեցոյ ճշմարիտ դիմագիծը» (Անթիլիաս, 1979թ.), «Որդի Աստուծոյ, որդի մարդոյ» (Անթիլիաս, 1999թ.), «Ազգ. եկեղեցի, հայրենիք» (Անթիլիաս, 1999թ.), «Հասարակ առաքելութիւն» (Անթիլիաս, 2003թ.), «Հայ եկեղեցու 1700-ամյակին ընդառաջ» (անգլերեն, Անթիլիաս, 2001թ.), «Եկեղեցի լինելու հավակնությունը փոփոխական աշխարհում» (անգլերեն, Նյու Յորք, 1997թ.), «Եկեղեցին մեծ փորձությունների առջև» (ֆրանսերեն, Անթիլիաս, 2001թ.), «Արդարություն, խաղաղություն, փոխըմբռնում» (ֆրանսերեն, Անթիլիաս, 2003թ.), «Քրիստոնեական հավատքը միջինարևելյան խաչմերուկում» (անգլերեն, Բեյրութ, 2004թ.), «Տէր Զօր, Համազգային Ուխտապետի» (Անթիլիաս, 2005թ.), «Ծառայութեան Մեծութիւնը» (Անթիլիաս, 2005թ.) գրքերը:


Կրոնական առարկաներ է դասավանդել Հայկազյան քոլեջում, Դպրեվանքում, Բեյրութի համալսարանում, Բեյրութի ամերիկյան համալսարանում, դասախոսել է աշխարհի զանազան համալսարաններում և միջազգային կազմակերպություններում:

Շինարարական լայնածավալ աշխատանքներ է ձեռնարկել Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության կառույցների, հատկապես կաթողիկոսարանի, Դպրեվանքի նոր լսարանների, մատենադարանի, թանգարանի, արխիվի ընդարձակման, վերակառուցման և վերակա-

հավորման համար: Երիտասարդ ընտանիքների համար նոր բնակարաններ է կառուցել Ֆարայում (Բեյրութ):

Արժանացել է աշխարհի բազմաթիվ երկրների պետական բարձրագույն պարգևների և միջազգային հեղինակավոր կազմակերպությունների պատվավոր կոչումների: Կենսագրական ընդգրկված է «Ով ով է աշխարհում» («Մարկիս», ԱՄՆ) հրատարակության և այլ հրատարակությունների բազմաթիվ հատորներում:

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա Օսմոնություն-Որոշ անվանումներ բերված են կրոնական գրականության մեջ գործածվող ձևով



ԱՐԵՎՇԱՏՅԱՆ ՍԵՆ

AREVSHATYAN Sen

Փիլիսոփա, աղբյուրագետ: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի անդամ: Փիլիսոփայական գիտությունների դոկտոր: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է 1928թ. հունվարի 7-ին Երևանում:

Ավարտել է Երևանի պետական համալսարանը (1951թ.): Ստացել է փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան (1972թ.):

Եղել է Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության բաժնի գիտաշխատող (1954-57թթ.), ապա ավագ գիտաշխատող (1957-59թթ.): Նույն ակադեմիայի Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում գրադեցրել է ավագ գիտաշխատողի (1972-79թթ.) և խմբի ղեկավարի (1990թ-ից) պաշտոնները: Դասավանդել է Երևանի պետական համալսարանում (1975-78թթ.): Աշխատել է իբրև Մ. Մաշտոցի անվան մա-

տենադարանի բաժնի վարիչ (1959–82թթ.): Իբրև տնօրեն ղեկավարել է Մ. Մաշտոցի անվան մատենադարանը (1982–2007թթ.): Ներկայումս Մատենադարանի խորհրդի նախագահն է (2007թ.):

Հեղինակ է մեծ թվով հոդվածների և գրքերի, որոնք հիմնականում վերաբերում են հայոց հին և միջնադարյան փիլիսոփայության պատմությանը, աղբյուրագիտությանը, հայ միջնադարյան հեղինակների երկերի քննական բնագրերի թարգմանությանը և հրատարակմանը:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի անդամ է (1996թ., թղթակից անդամ՝ 1982թ–ից): «Արարատ» գիտությունների միջազգային (Փարիզ, 1993թ.), Բնական և հումանիտար գիտությունների (Ռուսաստանի Դաշնության, 1995թ.), Ազգային անվտանգության հիմնախնդիրների ուսումնասիրման (1998թ.) ակադեմիաների անդամ է: Եղել է Հայաստանի մշակույթի ֆոնդի հիմնադիրն ու նախագահը (1986–89թթ.):

Հայկական ԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր է (1978թ.): Պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով, Հայ առաքելական եկեղեցու «Սուրբ Սահակ, Սուրբ Մեսրոպ» շքանշանով, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ոսկե մեդալով (2008թ.):

2008թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ԱՐՄԱՆԻ Նորա

ARMANI Nora

Դերասանուհի, բեմադրիչ, թատերագիր: Լոս Անջելոս, Կալիֆոռնիա, ԱՄՆ: Ծնվել է Կահիրեում (Եգիպտոս): Ծննդով՝

Էքսերջյան (Էքսերճեան): Ամուսնացել է Ժիրայր Փափազյանի հետ:

Ուսանել է Կահիրեի համալսարանում՝ ստանալով պսակավորի աստիճան թատերական արվեստի ասպարեզում: Ավարտել է Լոնդոնի համալսարանի Տնտեսագիտական բարձրագույն դպրոցը՝ սոցիոլոգիայի ասպարեզում ստանալով մագիստրոսի աստիճան: Հաճախել է կինոյի, թատրոնի և պարարվեստի բազմաթիվ դասընթացների, այդ թվում Լոնդոնի «Սիտի Լիտ» դասընթացին, Կալիֆոռնիայի համալսարանի և Ամերիկյան թատերարվեստի դասընթացներին Լոս Անջելոսում, Թատերարվեստի թագավորական ակադեմիայի դասընթացներին Լոնդոնում, Մոխեսեի թատրոնի պարարվեստի դասընթացին Սանկտ Պետերբուրգում և կատարելագործվել է եվրոպական և ամերիկյան մի շարք նշանավոր թատրոններում:

Նրա խաղացանկն ընդգրկում է Օեքսպիրի, Մոլիերի, Շոուի, Չեխովի, Համերշտեյնի և այլոց ստեղծագործությունների գրական հերոսների բեմական մարմնավորումը անգլիական, ֆրանսիական, եգիպտական և հայկական թատրոններում (դերեր է խաղացել 7 լեզվով): Բեմադրիչն է «Վերջին կայարանը» ֆիլմի (Հայաստան, 1994թ.): Իբրև գլխավոր դերերի դերակատար նկարահանվել է մի շարք ֆիլմերում՝ «Վերջին ժամկետը՝ 7 օր» (Հայաստան, 1992, 1994, 1998թթ.), «Նորահայտ Եվան» (Պորտուգալիա, 1995թ.), «Լաբիրինթ» («Հայֆիլմ», 1999), «Հարևաններ, հարևանուհիներ» (2005թ.) և այլն: Հեղինակ է թատերախաղերի (գրված մեծ մասամբ մեկ դերասանի համար)՝ «Միևնույն բազմոցի վրա՝ Նորա Արմանիի հետ» (անգլերենով, թարգմանված է նաև ֆրանսերեն և իտալերեն, բեմադրվել է մոտ 25 ամերիկյան և եվրոպական քաղաքներում, սկսած 2002թ–ից), «Նանտո, Նանտո» (բեմադրվել է Փարիզում և Վենետիկում, 2000–2001թթ.): Համահեղինակն է «Այց Արարատին»՝ հայ քնարերգությանը նվիրված գրական–գեղարվեստական ներկայացման (տարբեր լեզուներով, բեմադրել է Ժիրայր Փափազյանի հետ և լույս է տեսել «Այց Արարատին, հայ քնարերգություն» խորագրով, առանձին հատորով, «Մարս» հրատ., 1987թ.) և «Թաթիլներ ապրիլին»

ներկայացման (նվիրված Մեծ եղեռնի 90–ամյակին, 2005թ.): Ունի կինոքննադատական հոդվածներ, հատկապես հիշարժան է նրա «Խորհրդահայ կինոյի ազգային ինքնությունը (1965–75թթ.)» աշխատությունը (միաժամանակ դոկտորական ատենախոսություն):

Եղել է Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության կինոյի վարչության առաջին պաշտոնական ներկայացուցիչը ԱՄՆ–ում՝ հայկական ֆիլմերը տարածելու իրավասությամբ (ներառյալ իր հիմնադրած «Մերոնք Ֆիլմ» հիմնարկության միջոցով) և արտասահմանում հայկական ֆիլմերի փառատոների կազմակերպիչ (սկսած 1991թ–ից): Հյուրախաղերով բազմիցս հանդես է եկել Երևանում:

Արժանացել է «Լավագույն դերասանուհի» մրցանակի («Լաբիրինթ» ֆիլմի համար, 1999թ.), «Դրամա–Լոգ» մրցանակի (երկու անգամ, Լոս Անջելոս, 1988 և 1989թթ.), «Կինոյի ոսկե աստղ» մրցանակի (Կալիֆոռնիա, 1985թ.), «Թատրոնի և կինոյի լավագույն դերասանուհի» մրցանակի (Երևան, 1991թ., Հայաստանի թատերական գործիչների և Հայաստանի կինոգործիչների միությունների կողմից), Հայաստանի գրողների միության հատուկ մրցանակի (Երևան), Ռոտերդամի ֆիլմերի միջազգային փառատոնի մրցանակի՝ «Հետադարձ ճանապարհ» («Ալ Ավրա») ֆիլմի համար:

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ԱՐՄԵՆ Կարո (Գարո)

ARMEN Garo

Կենսաբանական տեխնոլոգիայի և դեղագործության ասպարեզի գործարար, ֆիզիկական քիմիայի բնագավառի մաս-

նագետ, բարեգործ: «Անտիգենիկս» բաժնետիրական ընկերության (ԱՄՆ) հիմնադիր և գլխավոր գործադիր տնօրեն, «Էլան» ընկերության (Իռլանդիա) նախագահ: Նյու Յորք, ԱՄՆ: Ծնվել է Կ.Պոլսում (Ստամբուլ) 1953թ–ին: Ամուսնացած է, երկու երեխայի հայր է:

Ուսանել է Կ. Պոլսի Մխիթարյան վարժարանում: Մեկնել է Նյու Յորք, ԱՄՆ (1970թ.): Սովորել է Նյու Յորքի Բլիմս քոլեջում՝ ստանալով արվեստների պսակավորի կոչում: Նյու Յորքի համալսարանում արժանացել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճանի ֆիզիկական քիմիայի բնագավառում (1979թ.):

Որպես գիտաշխատող աշխատել է Լոնգ Այլենդի (Նյու Յորքի նահանգ) Բրուկհավեյնի ազգային լաբորատորիայում (լուսասինթեզի բնագավառում, 1979–81թթ.): Վոլ Ստրիտում (Նյու Յորք) հիմնել է քիմիական և դեղագործական անալիզների առողջապահական հիմնարկություն («Հուտտոն» ընկերության համար, 1981–89թթ.): Եղել է «Դին Վիտտեր Ռեյնոլդս» ընկերության հետազոտական աշխատանքի ավագ փոխնախագահ (1986–89թթ.): Դրամական ներդրումներ է կատարել «Հուտտոն», «Ամերիկան ցիանամիդ», «Իմունեքս քանեսեր» և այլ դեղագործական–առողջապահական ընկերությունների զարգացման համար (1989–94թթ.): Հիմնել է (Պրամոդ Սրիվաստավայի հետ) «Անտիգենիկս» բաժնետիրական ընկերությունը (ԱՄՆ), որը զբաղվում է քաղցկեղի և վարակիչ հիվանդությունների բուժման համար նոր դեղամիջոցների մշակմամբ և արտադրությամբ (1994թ.): Այդ ընկերության գլխավոր գործադիր տնօրենն է: «Էլան» ընկերության (Իռլանդիա) հիմնական բաժնետերից մեկն է, եղել է նրա գլխավոր նախագահը (2002–2004թթ.): «Զոլոր կինետիկս» բաժնետիրական ընկերության հիմնադիրներից մեկն է և նրա տնօրենների խորհրդի նախագահը:

«Հայաստանի երեխաներ» հիմնադրամի նախագահն է (բարեգործական առողջապահական հաստատություն, սկսած 2000թ–ից): Նրա ջանքերի շնորհիվ հիմնադրամը միլիոնավոր դոլարների արժու-

դուքյան առողջապահական, շինարարական, ենթակառուցվածքների վերականգնման ու նորերի ստեղծման ծրագրեր է իրականացնում Հայաստանի գյուղական շրջաններում, մասնավորապես Արմավիրի շրջանի Զարակերտ գյուղում:

Արժանացել է Նյու Յորքի «Կենսաբանական տեխնոլոգիաների տարվա ձեռնարկ» մրցանակի («Էրնստ և երիտասարդներ» ընկերություն, 2002թ.), ԱՄՆ-ի «Էլիս Այլենդ» պատվո շքանշանի (2004թ.), Ալբերտ Սաբինի անվան մարդասիրական մրցանակի (Ալբերտ Սաբինի անվան պատվաստանյութերի ինստիտուտ, ԱՄՆ, 2006թ.), Հայաստանի Հանրապետության «Պատվո շքանշանի» (2007թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ԱՐՄԵՆՅԱՆ Բաֆֆի

ARMENIAN Raffi

Դիրիժոր, երաժիշտ, երգահան: Մոնրեալ, Կանադա: Ծնվել է 1942թ. հունվարի 4-ին Կահիրեում (Եգիպտոս):

Ուսանել է Վիեննայի երաժշտական ակադեմիայում (ղաշնակահարի մասնագիտությամբ, 1962թ.), ապա Լոնդոնի համալսարանում (գիտության պսակավոր մետաղազիտության բնագավառում, 1965թ.), այնուհետև դարձյալ Վիեննայի երաժշտական ակադեմիայում՝ ստանալով դիրիժորի (1968թ.) և կոմպոզիտորի (1969թ.) վկայականներ:

Արժանացել է վկայականի Դաշնակահարների միջազգային մրցույթում (Ժնև, 1964թ.) և Կարայանի անվան միջազգային մրցույթում (1972թ.), եղել է հաղթող Երիտասարդ դիրիժորների միջազգային

մրցույթում (Բեզանտն, Ֆրանսիա, 1968թ.) և Կոմպոզիտորների միջազգային մրցույթում (Վերչելի, Իտալիա, 1969թ.): 1968թ-ին հաստատվել է Կանադայում: Որպես օգնական-դիրիժոր աշխատել է «Ատլանտիկ» սիմֆոնիկ նվագախմբում (Հալիֆաքս, Նովա Սկոտիա, Կանադա): Եղել է Կիտչեներ-Վոթերլուի սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավարը և դիրիժորը (1971-93թթ.): Պաշտոնավարել է իբրև «Ստրատֆորդ Ֆեստիվալի» գեղարվեստական ղեկավար (1973-76թթ.) և հիմնադրել «Ստրատֆորդ Ֆեստիվալի» սիմֆոնիկ նվագախումբը (1974թ., այն հետագայում վերանվանվել է «Կանադայի սիմֆոնիկ նվագախումբ»): Իբրև հրավիրված դիրիժոր ղեկավարել է Քվեբեկի սիմֆոնիկ նվագախումբը (1974թ.), Տորոնտոյի սիմֆոնիկ նվագախումբը (1975թ.), Արվեստի կենտրոնի ազգային նվագախումբը (Օտտավա, 1977թ.), «Վոթերլու Ստուդիոյի» նվագախումբը (1977թ.): Աշխատել է իբրև Մոնրեալի օպերայի գեղարվեստական ղեկավար (1982-85թթ.): Համերգներով հանդես է եկել կանադական հայտնի երգիչ Ջոն Վիկերսի հետ (1989թ.): Համերգային շրջագայություններով հանդես է եկել և ղեկավարել բազմաթիվ նշանավոր նվագախմբեր ԱՄՆ-ում, Անգլիայում, Իտալիայում, Բելգիայում, Ռուսիայում, Հայաստանում և այլ երկրներում: Ի թիվս այլոց, հիշարժան են նրա դիրիժորական հաջողությունները Քվեբեկի օպերային թատրոնում («Գեղեցկուհի Հելենը»), Համիլտոնի օպերայում («Այդպես են վարվում բոլոր կանայք»), Ֆրեզնոյի «Գրանդ օպերայում» («Տրուբադուր»), Միչիգանի օպերային թատրոնում («Անուշ») և այլն: Իբրև հրավիրված պրոֆեսոր դասավանդել է Ավստրիայում (1997-99թթ.): Մոնրեալի երաժշտանոցում դասավանդում է իբրև նվագախմբերի ղեկավարման դասընթացի պրոֆեսոր (սկսած 1982թ-ից) և տնօրենն է այդ հաստատության սիմֆոնիկ նվագախմբի: Դասավանդում է նաև Տորոնտոյի համալսարանի երաժշտական ֆակուլտետում: Անդամակցել է «Կանադական երաժշտական կենտրոն» հաստատությանը (մինչև 1973թ.):

Հեղինակ է «Զգացմունքային կանտա-

տա» (մեներգի, երգչախմբի և նվագախմբի համար, 1969թ.), «Առաջընթաց» (ֆլեյտայի և դաշնամուրի համար, 1972թ.) ստեղծագործությունների և մի անավարտ օպերայի (Ս. Յվեյզի պատմվածքի հիման վրա): Իբրև դաշնակահար հանդես է եկել «Արարատ» (Ժիրայր Կանտարյանի և Ժիգելա Դեպկատի հետ) եռյակի կազմում (1971-74թթ.): Չայնագրել է մոտ 30 ձայնակավառակ: Հիմնադրել է «Բաֆֆի Արմենյանի թատրոն» համերգասրահը Կիտչեներում (անձամբ մասնակցել է նախագծման աշխատանքներին, Օնտարիո, 1980թ.):

Պարգևատրվել է Կանադայի շքանշանով (1986թ.): Արժանացել է «Պատվավոր դոկտորի» կոչման (Վոթերլու, 1980թ. և Վիլֆրիդ Լաուրիեր, 1991թ.), «Էմմի» մրցանակի՝ «Կանադական ձայնապնակի մեծ մրցանակ» անվանակարգում (հեռուստատեսային ելույթի համար, Նյու Յորք): Բեմադրիչ Վուդի Ալենը նրա ձայնակավառակներից մեկը՝ «Երաժշտություն 20-ական թվականների Բեռլինից» անվանումով, օգտագործել է իր «Ստվեր և մշուշ» ֆիլմում: Նրա 20-ամյա գործակցությունը Կիտչեներ-Վոթերլուի սիմֆոնիկ նվագախմբի հետ պաշտոնապես նշվել է, և հանդիսությունը հաղորդվել է Կանադական ռադիոյով (Կանադական հեռարձակման ընկերության կողմից, 1991թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ԱՐՍԼԱՆ Անտոնիա

ARSLAN Antonia

Արձակագիր, գրականագետ, թարգմանիչ: Պաղովայի համալսարանի ժամանակակից իտալական գրականության պրոֆե-

տոր: Պաղովա, Իտալիա: Ծնվել է 1938թ-ին Պաղովայում (հայրանունը՝ Միքայել):

Ուսանել է Համբուրգի և Գյոթինգենի համալսարաններում, ստացել է հնագետի մասնագիտական կրթություն: Ներկայումս դասավանդում է Պաղովայի համալսարանում իբրև ժամանակակից իտալական գրականության պրոֆեսոր:

Հեղինակ է մի շարք աշխատությունների, որոնք մվիրված են 19-րդ և 20-րդ դարերի իտալացի կին գրողներին արձակի ժանրում: Նրա խմբագրությամբ լույս է ընծայվել 19-րդ և 20-րդ դարերի իտալացի կին հեղինակների պատմվածքների անգլերեն ժողովածուն (համախմբագիր՝ Գաբրելա Ռոմանի, 2006թ.): Իտալերենի թարգմանիչն է (Շ. Հ. Մադիսյանի և Ա. Հ. Սիրակիի հետ) հայ մեծ բանաստեղծ Դանիել Վարուժանի ստեղծագործությունների երկու ժողովածուի՝ «Il Canto del Pane» («Հացին երգը», *Գեղինի հրապ.*, 1992թ.), «Mari di grano» («Յորյանի ծովեր», *Պաուլինի հրապ.*, 1995թ.) անվանումներով: Հայոց ցեղասպանության վերաբերյալ թարգմանաբար հրատարակել է Զ. Մութաֆյանի «Մեծ եղեռն» գրքույկը և «Հուշեր՝ ցեղասպանությունից հետո ապրած հայերի իտալական ձայները» (2001թ.) ժողովածուն: Իտալերեն է թարգմանել նաև Հյուգոյի, Լամարտինի, Վեռլենի և այլոց ստեղծագործություններից:

Հատկապես հիշարժան է նրա «Արտույտների ազարակը» («La masseria delle allodole», 2004թ.) վեպը, որը եղեռնի տարիներին մի հայ ընտանիքի տառապալից կյանքի պատմությունն է: Վեպը թարգմանվել է 14 լեզվով, այդ թվում ճապոներեն, շվեդերեն, հայերեն: Վեպի հիման վրա իտալացի կինոբեմադրիչներ Վիտտորիո և Պաուլո Տավիանի եղբայրները նկարահանել են համանուն կինոնկար, որը ցուցադրվել է Բեռլինի միջազգային կինոփառատոնում, Երևանի «Ոսկե ծիրան» միջազգային փառատոնում, Իսպանիայում և այլուր (սկսած 2007թ-ից):

Արժանացել է բազմաթիվ միջազգային և իտալական գրական մրցանակների: «Արտույտների ազարակը» վեպի համար ստացել է 15 գրական մրցանակ, այդ թվում Ջո-

գեպպե Բերդյոյի անվան («Կամպանելա», 2004թ.), «Ֆենիս-Եվրոպա» (2004թ.), Կրոնական գրականության միջազգային, Պարոնի գրադարանների, Հռոմի գրադարանների, «Պեն» («Գրիչ») ակումբի միջազգային գրական (2005թ.) մրցանակները:

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ԱՐՍԼԱՆՅԱՆ Լեոն Կարլոս

ARSLANIAN Leon Carlos

Իրավաբան, իրավագետ: Արգենտինայի Հանրապետության արդարադատության նախարարության նախկին նախարար, իրավագիտության դոկտոր: Բուենոս

Այրես, Արգենտինայի Հանրապետություն: Ծնվել է 1941թ-ին Բուենոս Այրեսում:

Եղել է Արգենտինայի ազգային դատարանի քրեական գործերի և վճռաբեկ դատարանների անդամ (1984-86թթ.): Իբրև գլխավոր դատավոր վարել է գեներալ Վիդելայի զինվորական խուճուռայի դատավարության գործը (1985թ.): Արգենտինայի Հանրապետության նախագահ Մենեմի կողմից նշանակվել է Արդարադատության նախարարության նախարար (1991-92թթ.): Եղել է Պերուի արդարադատության վարչության Իրավաբանների միջազգային հանձնախմբի փորձագետ-անդամ (1993թ.): Ղեկավարել է Մարդու իրավունքների միջլատինամերիկյան հանձնախումբը (1997թ.): Պաշտոնավարել է իբրև Բուենոս Այրեսի նահանգի անվտանգության ծառայությունների և ոստիկանության ղեկավար (1998-99թթ. և 2004-2007թթ.):

Հայ առաքելական եկեղեցու Արգենտինայի թեմի բարերարներից մեկն է: Պարգևատրվել է Արգենտինայի Հանրապետության և լատինամերիկյան մի քանի երկրների բարձրագույն պարգևներով:

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ԲԱԲԱՅԱՆ Բորիս

BABAYAN Boris

Համակարգիչներ ստեղծող ճարտարագետ: Գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է 1933թ-ի դեկտեմբերի 20-ին Բաքվում (հայրամուռը՝ Արտաշես): Անուսնացած է, ունի 3 երեխա: Ուսանել է Մոսկվայի ֆիզիկատեխնոլոգիական ինստիտուտում (1951-57թթ.): Ստացել է գիտությունների թեկնածուի (1964թ.), ապա դոկտորի գիտական աստիճան (1971թ.) համակարգչային գիտությունների բնագավառում:

Իբրև ճարտարագետ, ապա գլխավոր տեխնոլոգ, այնուհետև բաժանմունքի ղեկավար, աշխատել է Ճշգրիտ մեխանիկա-

յի և համակարգչային տեխնոլոգիայի ինստիտուտում (1956-96թթ.): Համակարգչային միկրոպրոցեսորների ինստիտուտի տնօրենն է, «Էլբրուս ինտեռնեյշնլ» ընկերության խորհրդի նախագահը (սկսած 1997թ-ից): «SPARC տեխնոլոգիաներ» ընկերության Մոսկվայի կենտրոնի գլխավոր տեխնոլոգն է (սկսած 1992թ-ից): «Ինտել» ընկերության համակարգիչների նախագծման և լուծումների որոնման խմբի տնօրենն է (սկսած 2004թ-ից): Իբրև պրոֆեսոր դասավանդել է Մոսկվայի ֆիզիկատեխնոլոգիական ինստիտուտում (1996-2004թթ.):

«Էլբրուս» համակարգիչների գլխավոր նախագծողն ու ստեղծողն է (առաջին գերհզոր համակարգիչն ստեղծել է 1978թ-ին, տասը տարի ավելի վաղ, քան արևմտյան երկրներում): Եղել է տարբեր սերունդների խորհրդային, ապա ռուսական համակարգիչների ստեղծման և ծրագրային ապահովման պատասխանատուն: Ներկայումս ղեկավարում է նոր տեսակի միկրոպրոցեսորների ստեղծման միջազգային ծրագիրը:

Հեղինակ է մոտ 100 գիտական աշխատության, 11 արտոնագրի՝ գրանցված Ռուսաստանում և ԱՄՆ-ում: Բազմաթիվ գիտական հանդեսների խմբագրական կազմի անդամ է, «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և համակարգչային համակարգեր» գիտական հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալն է:

Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ է և «Տեղեկատվական և համակարգչային տեխնոլոգիաների բաժանմունքի» անդամ (սկսած 1974թ-ից): Ռուսաստանի Դաշնության պետական մրցանակներ շնորհող հանձնախմբի անդամ է:

Արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի (1978թ.), «Լենինի» շքանշանի (1987թ.), «Պատվո», «Աշխատանքային կարմիր դրոշի», «Հոկտեմբերյան հեղափոխության» և այլ շքանշանների: Նրան շնորհվել է «Ինտել» ընկերության «Ինտել ֆելոու» պատվավոր տիտղոսը (Եվրոպայում առաջինը, 2004թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ԲԱԴԱԼՅԱՆ Ստեփան

BADALYAN Stepan

Երկրաֆիզիկոս: Երկրաբանական-հանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Հայաստանի Հանրապետություն, Գյումրի (Շիրակի մարզ): Ծնվել է 1931թ. դեկտեմբերի 24-ին: Վարդգես Բաղայանի և Գոհար Բուդույանի որդին է: Ամուսնացել է Ալվինա Բաղայանի հետ (Երևան, 1958թ.), որդին՝ Գուրգեն, և դուստրը՝ Գոհար:

Ուսանել է Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետում՝ ստանալով երկրաբան-երկրաֆիզիկոսի մասնագիտություն (Երևան, 1949-54թթ.):

Պաշտոնավարել է Խորհրդային Միության երկրաբանության նախարարության Բաժնեովյան երկրաֆիզիկական արշավախմբում իբրև երկրաֆիզիկական ջոկատի պետ, ինժեներ-ինտերպրետատոր (Ուրալ, Սվերդլովսկի մարզ, 1954-58թթ.), ապա Չեյաքինսկի երկրաֆիզիկական արշավախմբում իբրև խմբի պետ, գլխավոր երկրաֆիզիկոս (Ուրալ, Չեյաքինսկի մարզ, 1958-61թթ.): Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի Երկրաֆիզիկայի և ինժեներական սեյսմաբանության ինստիտուտում (Գյումրի, այժմ՝ Գիտությունների ազգային ակադեմիայի նույնանուն ինստիտուտ) գրադեցրել է գիտական քարտուղարի (1961-64թթ.), ավագ գիտաշխատողի (1964-66թթ.), հանքային երկրաֆիզիկայի բաժնի վարիչի (1966-69թթ.), գիտության գծով փոխտնօրենի (1972-73թթ.), տնօրենի (1973-78թթ. և 1981-89թթ.), գիտական խորհրդատուի և առաջատար գիտաշխատողի (սկսած 1989թ.-ից) պաշտոնները:

Հեղինակ կամ համահեղինակ է ավելի քան 110 գիտական հոդվածի և 4 մենա-


գրության (3-ը՝ համահեղինակությամբ), 2 գյուտի: Հիշարժան է նրա «Ընդերքի էլեկտրահետազոտումը Հայաստանի հանքավայրերում» (Երևան, 1980թ.) աշխատությունը:

Եղել է Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի նախագահության ենթակայության 3 գիտական խորհրդի անդամ (1973-89թթ), նույն ակադեմիայի «Գիտությունների երկրի մասին» բաժանմունքի, Հայկական ԽՍՀ երկրաբանական ընկերության, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Երկրաբանության ինստիտուտի մասնագիտացված գիտական խորհուրդների անդամ (1985-2000թթ.) և «Գիտելիք» ընկերության մոսկովյան շրջանային կազմակերպության նախագահ: Եղել է նաև Հայաստանի կոմունիստական կուսակցության Լենինականի քաղաքային կազմակերպության բյուրոյի անդամ (1975-78թթ.): Ընտրվել է Լենինականի քաղաքային խորհրդի 12-20-րդ գումարումների պատգամավոր (1969-90թթ.): Հայաստանի Հանրապետության սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության հյուսիսային բաժանմունքի գիտատեխնիկական խորհրդի (սկսած 2000թ-ից) և Երկրաֆիզիկայի և ինժեներական սեյսմաբանության ինստիտուտի գիտական խորհրդի անդամ է (սկսած 1961թ-ից):

Պարգևատրվել է Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության «Պատվոգրով» (1969թ.), «Արիության համար» մեդալով (1976թ.): Արժանացել է Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Ա. Պ. Ալեքսանդրովի «Շնորհակալական ուղերձի» (1976թ.), Հայաստանի Հանրապետության վարչապետի «Շնորհակալագրի» (1998թ.), Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Պատվոգրի» (2001թ.), Ուրալի Չելյաբինսկի երկրաֆիզիկական արշավախմբի «Պատվոգրի» (1960թ.), զինվորական ստորաբաժանման «Պատվոգրի» (1966թ.), «Գիտելիք» համամիութենական ընկերության վարչության նախագահի «Շնորհակալական պատվոգրի» (1976թ.), Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի «Գովեստագրի»

(1980թ.), Հայաստանի երկրաբանական ընկերության նախագահության «Պատվոգրի» (1981թ.), Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի Սեյսմոլոգիայի և սեյսմակայուն շինարարության միջգերատեսչական խորհրդի «Պատվոգրի» (1987թ.), բազմաթիվ այլ պարգևների՝ ծննդյան 50, 60 և 70-ամյա տարելիցների առթիվ (1981, 1991 և 2001թթ.):

2004թ. Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաթերթի» տվյալների հիման վրա, խմբագրված հատորի հեղինակի կողմից



ԲԱԼԱՅԱՆ Զորի

BALAYAN Zori

Հրապարակախոս, լրագրող, արձակագիր, բժիշկ, ճանապարհորդ, հասարակական գործիչ: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է 1935թ. փետրվարի 10-ին Լեռնային Դարաբաղի Ստեփանակերտ քաղաքում:

Ավարտել է Ռ-յազանի (Ռուսաստան) բժշկական ինստիտուտը:

Որպես բժիշկ աշխատել է Կամչատկայում (մոտ 10 տարի): Կատարել է բազմաթիվ ճանապարհորդություններ «Վուլկան» և «Հեյզեր» նավակներով, Կամչատկայից ճանապարհորդել է հասնելով Օդեսա (անցնելով 22 հազար կիլոմետր տարածություն), Կամչատկայից դուրս գալով՝ կտրել-անցել է Խաղաղ օվկիանոսը և մտել Ատլանտյան օվկիանոս, շնասահնակով անցել է Կամչատկայի և Չուկոտկայի տունդրաները (1971-73թթ.), «Կիլիկիա» միջմադարյան հայկական նավով ճանապարհորդել է Եվրոպայի շուրջը (2004-06թթ.): Այս ճանապարհորդությունները նյութ են դարձել նրա բացմաթիվ գրքերի համար:

Եղել է Խորհրդային Միության Գերա-

գույն Խորհրդի պատգամավոր (1988-91թթ.): Գործուն մասնակցություն է ունեցել Արցախյան շարժմանը և պատերազմին: Լինելով առաջիններից մեկը՝ արցախյան հիմնահարցը ներկայացրել է Խորհրդային Միության այդ ժամանակվա իշխանություններին: Նախաձեռնել ու կազմակերպել է Արցախին ցույց տրվող օգնությունը: Արցախյան պատերազմի ժամանակագիրն է:

Հեղինակ է մեծ թվով ճամփորդական գրառումների, հրապարակախոսությունների, վավերագրական ակնարկների, բնապահպանական թեմաներով ու առողջ կենսակերպի մասին հոդվածների: Հիշարժան են նրա «Հարկավոր է տղամարդկային խոսակցություն» (ռուսերեն, Մոֆիա, 1980թ., Երևան, 1974թ.), «Երկու կրակի մեջ» (Երևան, 1979), «Վերջին աղբյուրը» (նվիրված Սևանա լճի հիմնախնդիրին, Երևան, «Լույս», 1983թ.), «Օջախ» (Մոսկվա, 1984, Երևան, 1981թ.), «Դժոխք և դրախտ» (հայերեն, ռուսերեն, անգլերեն, Լու Անջելոս, 1997թ., Երևան, 1995թ.), «Անդունդ» (հայերեն, ռուսերեն, Երևան, 2004թ.), «Զիմ Կիլիկիա» (Երևան, 2005թ.) և մոտ երեք տասնյակ այլ գրքերը: Նրա ստեղծագործությունները թարգմանվել են բազմաթիվ լեզուներով, միայն «Բաց նամակ նորապսակներին» (1980թ.) գրքույկը տպագրվել է 15 լեզվով:

Մոսկվայում հրատարակվող «Լիտերատուրնայա գազետա» («Գրական թերթ») լրագրի սեփական թղթակիցն է Հայաստանում: Անդամ է Հայաստանի գրողների (1972թ-ից սկսած) և Լրագրողների միությունների: Եղել է նախկին Խորհրդային Միության լրագրողների միության անդամ: «Բալկանյան շարժում» միջազգային էկոլոգիական կազմակերպության համակարգողն է: Մարզիկ է և սպորտի վարպետ:

Արժանացել է Հայկական ԽՍՀ պետական մրցանակի (1988թ.), Խորհրդային Միության լրագրողների միության մրցանակի, Ն. Օստրովսկու անվան համամիութենական գրական մրցանակի: Պարգևատրվել է Ռուսաստանի բժշկական տեխնիկական ակադեմիայի «Ոսկե մեդալով» (2006թ.), Հայաստանի Հանրապետության «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» առաջին աստիճանի մեդալով

(2006թ.): Երևանի պատվավոր քաղաքացի է (2005թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ԲԱԼԱԶՅԱՆ Պիտեր

BALAKIAN Peter

Գրող, բանաստեղծ, քննադատ: Փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր: Համիլտոն, Նյու Յորք (ԱՄՆ): Ծնվել է Տիներում (Նյու Ջերսի, ԱՄՆ) 1951թ. հունիսի 13-ին: Ամուսնացած է, երկու երեխայի հայր է:

Ուսանել է Բուկնելի համալսարանում՝ ստանալով արվեստների պսակավորի կոչում (1973թ.): Նյու Յորքի համալսարանում ստացել է մագիստրոսի աստիճան (1975թ.): Բրաունի համալսարանում նրան շնորհվել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան ամերիկյան քաղաքակրթության ուսումնասիրության ասպարեզում (1980թ.):

Կոլզեյտի համալսարանի անգլերեն լեզվի, ինչպես նաև Մ.Դոնալդի և Կոնստանս Ռեբարի անվան հասարակագիտության պրոֆեսոր է (դասավանդում է ամերիկյան գրականություն, ստեղծագործական գրչարվեստ, Հայոց ցեղասպանության և հոլոքոստի պատմություն, սկսած 1980թ-ից): Ղեկավարում է Կոլզեյտի համալսարանի Բարոյագիտության և աշխարհի հասարակությունների ուսումնասիրման կենտրոնը, 1980թ-ից):

Հեղինակ է մոտ մեկ տասնյակ գրքերի: Հիշատակության են արժանի նրա «Այրվող Տիգրիսը, Հայոց ցեղասպանությունը և ամերիկյան արձագանքը» («Հարպեր-Քոլինս» հր., 2003թ.), «Ճակատագրի սև շունը (հուշագրություն)» («Բեյսիկ բուքս» հր., 1997թ.), արձակ ստեղծագործությունները և «Հունիսյան ծառ. նոր բանաստեղծություն-

ների հատընտիր, 1974–2000» («Հարպեր–Քոլինս» հր., 2001թ.), «Փշոտ ներկարար» (Կարնեզի Մելոն համալսարանի հրատ., 1996թ.), «Արյունոտ լուրեր իմ ընկերոջից. Միամանր» (Քարգմանություններ, Վայնի պետական համալսարանի հրատ., 1996թ.), «Թեոդոր Ռոյտկեի հեռավոր դաշտերը» (Լուիզիանայի պետական համալսարանի հրատ., 1989թ.), «Լույսի տխուր օրերը» (1983թ.), «Պատասխան ամայի կղզուց» (1988թ.) բանաստեղծական ժողովածուները: Խմբագիրն է «Դեսպան Մորգենթաուի պատմածը» (Վայնի պետական համալսարանի հրատ., 2003թ.) ժողովածուի և հեղինակը «Ամերիկյան և 1915թ. Հայոց ցեղասպանությունը» (խմբագրությամբ՝ Ջեյ Վինտերի, Քենթրիջի համալսարանի հրատարակ., 2004թ.) ժողովածուի գլուխներից մեկի: Նրա բանաստեղծությունները տպագրված են նաև բազմաթիվ ամերիկյան գրական հանդեսներում: Հեղինակ է մեծ թվով հեռուստատեսային և ռադիո ծրագրերի՝ հեռարձակված հեղինակավոր կայանների կողմից («Էյ Բի Սի – միջազգային նորություններ», «Սի Էն Էն – երեկոյան նորություններ» և այլն):

Արժանացել է բազմաթիվ մրցանակների և պարգևների, այդ թվում Ամերիկյան բանաստեղծների մրցանակի (1977թ.), Նյու Ինգլենդի բանաստեղծական ակումբի Դանիել Վարուժանի անվան մրցանակի (1987թ.), Կոլումբիայի համալսարանի Հայկական կենտրոնի «Անահիտ» գրական մրցանակի (1990թ.), Գուգենհեյմի անվան մրցանակի (1999թ.), Նյու Ջերսիի խորհրդի «Մարդասիրական գրքի համար» մրցանակի (1998թ.), «Նյու Յորք Թայմս» և «Լոս Անջելոս Թայմս» թերթերի 1977թ.–ի նշանակալից գրքի համար մրցանակի («Ճակատագրի սև շունը» հուշագրություն համար), «Պի Ի Էն – Մարթա Ալբրանտ» մրցանակի՝ լավագույն հուշագրության համար (1998թ.), «Նյու Յորք Թայմս և պարբերական հրատարակություններ» հիմնարկության 2003թ. նշանակալից գրքի մրցանակի՝ «Այրվող Տիգրիսը» գրքի համար, Ազգային կրթական ընկերության խմբագրական դրամաշնորհի (Բրահամ գրատան հանդես), Արվեստների համար ազգային դրամաշնորհի (2004թ.), Ռաֆա-

յել Լենկինի անվան մրցանակի՝ «Այրվող Տիգրիսը» գրքի համար (2005թ.), Հայ առաքելական եկեղեցու «Սուրբ Մեսրոպ, Սուրբ Սահակ» շքանշանի (Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից, 2005թ.), Հայաստանի Հանրապետության «Մովսես Խորենացի» մեդալի (2007թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ԲԱԼԻՈՅԱՆ Արա

BALIOZIAN Ara

Գրող, քննադատ, թարգմանիչ: Կիտչեներ, Օնտարիո, Կանադա: Ծնվել է 1939 թվականի դեկտեմբերի 10–ին Աթենքում (Հունաստան): Կանադայում բնակվում է 1957 թվականից: Ուսանել է Վենետիկի Մուրադ–Ռաֆայելյան վարժարանում, այնուհետև Կա Ֆոսկարի համալսարանում (Վենետիկ) տնտեսագիտություն և քաղաքագիտություն մասնագիտությամբ: Հեղինակ է ավելի քան 30 գրքի և բազմաթիվ հոդվածների հայերեն և անգլերեն լեզուներով: Գրել է պատմվածքներ, քառերգություններ, հուշագրություններ, ինչպես նաև գրական–քննադատական, հրապարակախոսական և պատմավերլուծական աշխատություններ, թարգմանել է հայ դասականների ստեղծագործություններից: Տասնամյակներ շարունակ նրա հոդվածները տեղ են գտել Ամերիկայի («Արմենիան ռիփորթեր», «Արմենիան լայֆ վիբլի», «Նոր Կեսանք»), Եվրոպայի և Մերձավոր Արևելքի հայկական մամուլի էջերում: Նրա լավագույն գործերի թվում են «Հայերը, նրանց պատմությունն ու մշակույթը» (1975թ., հետագայում այն սկսեց

օգտագործվել իբրև սփյուռքահայ կրթական հաստատությունների դպրոցական դասագիրք), «Հայաստան, դիտարկումներ: Ժողովածու» (1975թ.), «Հանճարի դիմակարը և այլ պատմվածքներ» (1980թ.), «Չարիտրելի լուրջունը: Ինքնակենսագրական վիպակ» (1982թ.), «Նոր աշխարհում» (1982թ.), «Կռունկի կանչը: Խոզի փառասիրությունը» (1983թ.), «Հայոց ցեղասպանությունը և արևմուտքը» (1984թ.), «Հույն բանաստեղծուհին և այլ ստեղծագործություններ» (1988թ.), «Ոչ–դիվանագիտական դիտարկումներ» (1995թ.) «Հայկական հարցերի բառարան» (1998թ.), «Սահմանումներ, հայոց պատմության և մշակույթի քննական ուղեցույց» (1998թ.) և բազմաթիվ այլ գրքեր: Հայերենից անգլերեն և ֆրանսերեն է թարգմանել հայ դասականների՝ Գրիգոր Չոհրապի, Կոստան Չարյանի, Չաբել Եսայանի ստեղծագործություններից: Նրա ստեղծագործությունները թարգմանվել են ֆրանսերեն, գերմաներեն, հոլանդերեն, իսպաներեն, հունարեն, ռուսերեն և հայերեն լեզուներով: Գրական գործունեության համար բազմիցս արժանացել է պետական մրցանակների և դրամաշնորհների: Նրա ստեղծագործության մասին գրված աշխատություններից հիշարժան է Լորենց Թերզյանի «Աջակցություն, Արա Բալիոզյանը և հայ դատը» (1990թ.) գիրքը:

2008թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ԲԱԼՅԱՆ Ռոժեր

BALIAN Roger

Ֆիզիկոս: Ֆրանսիայի ինստիտուտի (Գիտությունների ակադեմիայի) անդամ:

Պրոֆեսոր: Մետոն, Ֆրանսիա: Ծնվել է Լիոնում 1933թ. հունվարի 18–ին: Նուբար Բալյանի և Նվարդ Ավետիսյանի որդին է: Անունացել է Կատիա Սենթրջյանի հետ (Փարիզ, 1957), որդիները՝ Պիեր և Ժակ: Ուսանել է Փարիզում՝ Ճարտարագիտական բարձրագույն դպրոցում (Պոլիտեխնիկական դպրոց, 1952–54թթ.): Սակլեյի գիտական կենտրոնի Տեսական ֆիզիկայի բաժնի տնօրենն է (սկսած 1956թ.–ից): Եղել է Հռչի «Տեսական ֆիզիկայի ամառային դասընթացների» դպրոցի հիմնադիր–տնօրենը (1972–80թթ.): Իբրև պրոֆեսոր դասավանդել է Ճարտարագիտական բարձրագույն դպրոցում (1972–98թթ.): Հեղինակ է ավելի քան 200 գիտական աշխատության՝ հոդվածների և գրքերի: Հատկապես հիշարժան են նրա «Սիկրոսկոպիկից մինչև մակրոսկոպիկ» («Էլիպս» հրատ., Փարիզ, երկու հատորով, 1982թ.) և «Սիկրոֆիզիկայից մինչև մակրոֆիզիկա: Վիճակագրական ֆիզիկայի մեթոդները և կիրառությունը» («Սպրինգեր Վերլագ» հրատ., երկու հատորով, 1991թ., 1992թ.) աշխատությունները: Նրա և ամերիկյան գիտնական Ֆ. Լոուի անվամբ է կոչվում մաթեմատիկայում հայտնի և տեսական ֆիզիկայում կիրառվող թեորեմներից մեկը՝ «Բալյան–Լոուի թեորեմը»: Ֆրանսիայի ինստիտուտի (Գիտությունների ակադեմիայի) անդամ է (սկսած 1995թ.–ից, թղթակից–անդամ՝ 1977–95թթ.): Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ է (սկսած 2003թ.–ից): Ուսասլայի գիտությունների թագավորական ընկերության անդամ է (Շվեդիա, սկսած 1988թ.–ից): Արժանացել է «Պատվո լեգիոնի» («Ասպետի»), «Երախտիքի» («Սպայի»), «Դափնեպսակի» («Հրամանատարի») ֆրանսիական բարձրագույն պետական պարգևներին և կոչումներին: Պարգևատրվել է աշխարհի բազմաթիվ երկրների գիտական մրցանակներով և պատվավոր կոչումներով:

2006թ. Գայական կենսագրական կենտրոնի «Գարգաթերի» տվյալների հիման վրա, խմբագրված հատորի հեղինակի կողմից



ԲԱՂՂԻԿՅԱՆ Բեն Հուր, Հայկ

BAGDIKIAN Ben Hur, Haig

Լրագրող, գրող, հրապարակախոս, քաղաքական մեկնաբան: Բերկլիի Կալիֆոռնիայի համալսարանի Լրագրողական բարձրագույն դպրոցի պատվավոր պրոֆեսոր: «Վաշինգտոն փոստ» օրաթերթի նախկին խմբագիր: Բերկլի, Կալիֆոռնիա, ԱՄՆ: Ծնվել է 1920թ-ի հունվարի 30-ին Մարաշ քաղաքում (Թուրքիա): Հոգևորական Արամ Բաղդիկյանի և Դուդեհ Ուվեգյանի որդին է: Ցեղասպանությունից փրկված նրանց ընտանիքը գաղթել է ԱՄՆ և ապաստան գտել Բոստոնում 1920թ-ին: Ամուսնացել է Էլիզաբեթ Օգասայանի (զավակները՝ Քրիստոֆեր և Ֆրեդրիկ), ապա Մարլեն Գրիֆիցի հետ:

Ուսանել է Վորսեստերում՝ Զլարկի համալսարանում, նախապատրաստվելով ուսումը շարունակել բժշկության ասպիրենտում, միաժամանակ խմբագրել է համալսարանական թերթը (Մասաչուսեթս, մինչև 1941թ.):

Եղել է «Սպրինգֆիլդ մորնինգ յունիոնի» թղթակիցը (1941-42թթ.): Ծառայել է Ամերիկյան ռազմաօդային ուժերում (սկսած 1942թ-ից, Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում): Աշխատել է իբրև «Պրովիդենս ժուրնալ-բյուլետեն» թերթի վաշինգտոնյան գրասենյակի ղեկավար և թղթակից (Ռոուդ Այլենդ, 1947-61թթ.): Չքաղվել է ազատ լրագրությանը (1961-67թթ.): Իբրև նախագծի տնօրեն ղեկավարել է լրատվամիջոցների ուսումնասիրության ծրագիրը (Ռ-անդ, 1967-69թթ.): 1967թ-ին սկսում է աշխատել է իբրև «Վաշինգտոն փոստ» օրաթերթի խմբագրության տեղական լուրերի խմբագիր, իսկ 1970թ-ից գլխավոր խմբագրի տե-

ղակալ (մինչև 1977թ.): 1971թ-ին «Վորթեյթի գործի» բացահայտման նպատակով «Պենտագոնյան փաստաթղթերի» ձեռք բերման և բաց մամուլին տրամադրման գործում կարևոր դեր է խաղացել: Իբրև լրագրության պրոֆեսոր դասավանդել է Բերկլիի Կալիֆոռնիայի համալսարանի Լրագրության ավարտական դպրոցում (1977-91թթ.)՝ ղեկավարելով այդ հաստատությունը (1985-88թթ.): Նույն հաստատությունում նրան շնորհվել է պատվավոր պրոֆեսորի կոչում լրագրության ասպիրենտում (1991թ.): Եղել է նաև «Կոլումբիական լրատվական հանդեսի» թղթակիցը և «Սի-Բի-Էս» հեռուստակայանի քաղաքական մեկնաբանը:

Հեղինակ է 7 գրքի՝ «Առատության մեջ տեղում, աղքատներն Ամերիկայում» («Բիկոն պրես», 1963թ.), «Լրատվության մեքենաները» (Նյու Յորք, «Հարպեր», 1971թ., որն ունեցել է նաև ճապոներեն, պորտուգալերեն և իսպաներեն հրատարակություններ), «Դավադրության էֆեկտը և այլ հանցագործություններ մամուլի ազատագրված միջոցով» («Հարպեր», 1976թ.), «Ութ բանտարկյալ և նրանց պահակները» (Նյու Յորք, «Հարպեր», 1976թ.), «Կրկնակի դիտարկում. մտորումներ իմ ժառանգության, կյանքի և մասնագիտության մասին» (Բոստոն, «Բիկոն պրես», 1995թ.), «Լրատվական մենաշնորհը» (ունեցել է 6 հրատարակություն՝ 1983, 1987, 1990, 1993, 1997 և 2000թթ-ին, «Բիկոն պրես» հրատ.), «Լրատվական նոր մենաշնորհը» (նույն հրատ., 2004թ.): Խմբագրել է մի քանի գրքեր, որոնցից հիշարժան է «Բանտերի խայտառակությունը» (փաստաթղթերի ժողովածու, Լեոն Դաշի համահեղինակությամբ, 1972թ.): Նրա հողվածներն ու թղթակցությունները մոտ կես դար շարունակ տպագրվել են նաև «Ատլանտիկ» ամսագրում, «Նյու Յորք թայմս սանդի մագազին», «Դը Լոնդոն թայմս», «Դը պրոգրեսիվ», «Դը մեյշն» և այլ պարբերականներում:

Եղել է Ազատ և պատասխանատու մամուլի Լովել Մելետի անվան հիմնադրամի նախագահ (1966-70թթ.), Լրագրողների պաշտպանության հանձնախմբի տնօրեն-

ների խորհրդի անդամ (1981-85թթ.), Մարդասիրության ազգային դրամաշնորհի ներկայացուցչական կազմի անդամ (1967-70թթ.), Զլարկի համալսարանի հոգաբարձու (1967-76թթ.), Ամերիկայի քաղաքացիական ազատությունների միության Ազգային բանտերի վերաբերյալ ծրագրի ղեկավար հանձնախմբի անդամ (1974-81թթ.), Հասարակական գիտությունների հետազոտական խորհրդի Քաղաքական ռեժիմի և զանգվածային հաղորդակցության հանձնախմբի անդամ (1974-80թթ.), Ամերիկյան գրադարանային ընկերության Տեղեկատվության ազատության ու հավասար մատչելիության հանձնաժողովի անդամ (1983-87թթ.), Տվյալների կենտրոնի տնօրենների խորհրդի հիմնադիր-անդամ (1990-97թթ.), Քաղաքացիական ազատությունների միության ազգային ղեկավար խորհրդի անդամ (սկսած 1998-ից), «Մարկլ» հաստատության «Լրագրերի գոյատևման ուսումնասիրության» նախագծի տնօրեն: Անդամակցել է Հայագիտական ուսումնասիրությունների ազգային ընկերությանը (1957-2000թթ.):

Արժանացել է Ջորջ Ֆոստեր Պիբոդիի անվան («Պուլիցեր»)՝ ամերիկյան լրագրողական ամենահեղինակավոր մրցանակի (1951թ.), Սիդնե Հիլման հիմնարկության մրցանակի (1955թ.), Ջոն Մայնոն Գուգենհեյմ ընկերության անդամակցության (1962թ.), «Սիզմա, դելտա, չի» լրագրողական ազգային մրցանակի (1975թ.), «Արժանիքների հիշատակման» մրցանակի՝ իբրև «լրագրության մեջ ամենաուշադիր քննադատի» (Լրագրողական դպրոցների ղեկավարների ամերիկյան միության կողմից, Կալիֆոռնիայի համալսարան, 1978թ.), Լրագրողների պատվո սրահի անդամակցության (Ռոուդ Այլենդ, 1992թ.), Ջեյմս Մադիսոնի անվան մրցանակի (Ամերիկյան գրադարանների միության կողմից), Կառավարական լրատվության ասպիրենտում, 1992թ.), պատվավոր կոչումների՝ Բրաունի համալսարանի գրականության պատվավոր դոկտորի (1961թ.), Ռոուդ Այլենդի համալսարանի գրականության պատվավոր դոկտորի (1992թ.), Զլարկի համալսարանի գրականության

դոկտորի (1963թ.), Բերկլիի Կալիֆոռնիայի համալսարանի «Արժանիքների հիշատակման» (որն համարժեք է գիտական պատվավոր բարձրագույն կոչումներին, 1990թ.):

2007թ. Ֆայկական կենսագրական կենտրոնի «Չարցաբերթի» սուլայների հիման վրա, խմբագրված հատորի հեղինակի կողմից



ԲԱՂՅԱՆ Ջեյմս

BAGIAN James

Տիեզերագնաց, ճարտարագետ, բժիշկ, պետական ու վարչական գործիչ: Բժշկագիտության դոկտոր, պրոֆեսոր: Միչիգան, ԱՄՆ: Ծնվել է 1952թ-ի փետրվարի 22-ին Ֆիլադելֆիայում (Պենսիլվանիա, ԱՄՆ): Ֆիլիպ և Ռոզ Բադյանների որդին է: Ամուսնացել է Տանդի Բենսոնի հետ, երեխաները՝ Քրիստա, Կիմբերլի, Բրիան և Միքայել:

Ուսանել է Ֆիլադելֆիայի կենտրոնական դպրոցում (Պենսիլվանիա, ավարտել է 1969թ.): Դրեքսելի համալսարանում ստացել է գիտության բակալավրի կոչում ճարտարագիտական մեխանիկայի բնագավառում (1973թ.): Թոմաս Ջեֆերսոնի անվան համալսարանում նրան շնորհվել է բժշկագիտության դոկտորի կոչում (1977թ.): 1986թ-ին արժանացել է արհեստավարժ ճարտարագետի վկայագրի:

Իբրև ճարտարագետ աշխատել է «3Մ» ընկերությունում (Բրիստոլ, Պենսիլվանիա, 1973թ.): ԱՄՆ-ի Օդանավերի փորձարկման կենտրոնում եղել է ճարտարագետ-մեխանիկ (Պատուկսեն Ռիվեր, Մերիլենդի նահանգ, 1976-78թթ.): Լինդոն Ջոնսոնի անվան տիեզերագնացության կենտրո-

նում պաշտոնավարել է իբրև վիրաբույժ և բժշկական հետազոտությունների հանձնակատար (1978թ.): Գնդապետի զինվորական աստիճանով ծառայել է ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերում իբրև Ռ-ազմաօդային ուժերի տիեզերագնացության բժշկական և վիրաբուժական դպրոցների փրկարար-վիրաբույժ՝ ունենալով արիեստավարժ պարաշյուտիստի որակավորում (1500 թռիչքային ժամ, Սան Անտոնիո, Տեխաս, 1978-81թթ.): ԱՄՆ-ի Տիեզերագնացության և տիեզերքի ազգային վարչությունում (NASA) աշխատել է իբրև բժիշկ և պատրաստվել իբրև տիեզերագնաց (սկսած 1980թ-ից): Երկու անգամ մասնակցել է տիեզերական թռիչքների, առաջինը՝ 5 օր (80 պտույտ երկրի շուրջը) տևողությամբ, 1989թ-ին «Դիսքավորի» տիեզերանավով: Երկրորդ թռիչքն իրականացրել է «Կոլումբիա» տիեզերանավով 1991թ-ին, կենսաբանական գիտական հետազոտություններ կատարելու նպատակով: Տիեզերական թռիչքների ընդհանուր տևողությունը եղել է 337 ժամ: Ղեկավարել է Միջկապի Բոնոն հիվանդանոցի առողջապահական ծառայությունը (1994-95թթ.): Եղել է Շրջակա միջավայրի պահպանման պետական գործակալության տրանսպորտի միջոցների գրասենյակի գործադիր տնօրեն (1995-98թթ.): ԱՄՆ-ի կառավարության Բուժվող հիվանդների շահերի պաշտպանության ազգային կենտրոնի և Վետերանների առողջության պահպանման և գործերի պետական վարչության տնօրենն է (սկսած 1999թ-ից): 2003թ-ին նշանակվել է «Կոլումբիայի» աղետի պատճառների հետազոտման պետական հանձնախմբի բժշկական խորհրդատու և գլխավոր վիրաբույժ:

Բժշկական սպասարկման միացյալ համալսարանի Էդվարդ Հեբերտի անվան բժշկական բարձրագույն դպրոցի ռազմական և արտակարգ իրավիճակների բժշկության և Տեխասի համալսարանի բժշկական բաժնի կանխարգելիչ առողջապահության պրոֆեսոր է: Հեղինակ է բազմաթիվ գիտական աշխատությունների, որոնք հիմնականում նվիրված են տիեզե-

րական բժշկությանը և շրջակա միջավայրի պահպանման բնագավառում մարդկային գործունի դերի ուսումնասիրությանը:

ԱՄՆ-ի ազգային ճարտարագիտական ակադեմիայի անդամ է (սկսած 2000թ-ից): Անդամ է Տիեզերական բժշկության միության, Արտակարգ իրավիճակների բժշկական քոլեջի, Մեխանիկ-ճարտարագետների ամերիկյան միության: Տիեզերագնացության և տիեզերքի ազգային վարչության (NASA) թռիչքային վիրաբույժների միության ցմահ անդամ է: Գնահատանքի և անդամության է արժանացել «Ֆի կապպա ֆի», «Ֆի էտա սիզմա», «Ֆի տաու սիզմա», «Տաու բետա ֆի», «Ալֆա օմեգա ալֆա» պատվո միությունների կողմից:

Պարգևատրվել է ԱՄՆ-ի բանակի Բարձրագույն կադետի շնորհով (1970թ.), Օրթոպեդիական մրցանակով (Ջեֆերսոնի համալսարան, 1977թ.), Տիեզերագնացության միջազգային դաշնության Կոմարովի անվան մրցանակով (1989թ.), «Սիկորսկի փրկարար ուղղաթիռներ» մրցանակով (1990թ.), Տիեզերագնացության և տիեզերքի ազգային վարչության «Նվաճումների համար» (1991թ.) և «Տիեզերական թռիչքի համար» մրցանակներով (1989 և 1991թթ.), Ամերիկայի հայ ուսանողական միության Կաբակյանի անվան մրցանակով (1989թ.), Գերագանց ծառայության մեդալով (1992թ.), Տիեզերական վիրաբուժության Ռենդոլֆ Լավլեյսի անվան մրցանակով (1992թ.), Ամերիկյան տիեզերագնացության միության Բոյնտոնի անվան մրցանակով (1992թ.), Ամերիկյան բժշկական միության Դեյվիսի անվան մրցանակով (2001թ.), Ամերիկյան բժշկական քոլեջների միության «Նորարարության համար» մրցանակով (2002թ.), «Ամերիկային մատուցած ծառայությունների համար» շքանշանով (2003թ.), Առողջապահական բացառիկ ծառայության համար ֆեդերալ մրցանակով (2004թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ԲԱՅՐԱԿԴԱՐԻԱՆ Իզաբել

BAYRAKDARIAN Isabel

Օպերային երգչուհի (սոպրանո): Նյու Յորքի Մետրոպոլիտեն օպերայի, Կանադական օպերային ընկերության և աշխարհի բազմաթիվ այլ օպերային թատրոնների մեներգչուհի: Կանադա, Տորոնտո: Ծնվել է 1974թ. Բեյրյութում (Լիբանան): Կանադայում բնակվում է 1989թ-ից: Ամուսնացած է դաշնակահար Սերուժ Քրաջյանի հետ:

Ավարտել է Տորոնտոյի համալսարանը՝ ստանալով գիտության և արվեստի պատվավոր պատկավորի աստիճան կենսաբժշկական ճարտարագիտության ասպարեզում (1997թ.): Չայնային և երաժշտական ընդունակությունները կատարելագործել է Տորոնտոյի թագավորական երաժշտանոցում (1992-96թթ.):

Ելույթներ է ունեցել աշխարհի լավագույն օպերային թատրոնների բեմերում՝ Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» օպերայում և «Կարնեգի հոլում», Միլանի «Լա Սկալա» օպերայում, Փարիզի «Բաստիլ» օպերայում և «Տետր դե Շանզ Էլիզե» համերգարահում, Չիկագոյի «Լիրիկ» օպերայում, Լոնդոնի թագավորական օպերայում, Տորոնտոյի, Սան Ֆրանցիսկոյի, Բոստոնի, Օտտավայի, Դրեզդենի, Սալզբուրգի, Տոկիոյի, Երևանի և բազմաթիվ այլ քաղաքների օպերաներում: Նրա օպերային դերերգերի ցանկն ընդգրկում է Սյուզաննայի (Մոցարտի «Ֆիգարոյի ամուսնությունը»), Ջերիմայի (Մոցարտի «Դոն Ժուան»), Ռոզինայի (Ռոսսինիի «Սևեյան սափրիչ»), Պամինայի (Մոցարտի «Կախարդական սրինգ»), Կլեոպատրայի (Հենդելի «Հուլիոս Կեսար»), Ռոմիոյի (Հենդելի «Քսենթես»), Էմիլիայի (Հենդելի «Ֆլավիո»), Թերեզայի (Բերլիոզի «Բենեմեմտո Չելլիմի»), Կա-

տերինի (Բոլկովի «Տեսարան կամրջից»), Նորինայի (Դոնիչետիի «Դոն Պասկալ») և բազմաթիվ այլ գլխավոր դերերգերի կատարումներ: Մենահամերգներ է ունեցել բազմաթիվ նշանավոր երգիչ-երգչուհիների (Պլաչիդո Դոմինգոյի հետ Լոս Անջելոսում, Յո-Յո Մայի, Պինչաս Ջուկերմանի հետ Կանադայի Արվեստի ազգային կենտրոնում և այլն) և սիմֆոնիկ նվագախմբերի մասնակցությամբ: Առաջին ձայնակալառակին («Բարի լույս», 2002թ.) հաջորդել են բազմաթիվ ալբոմներ՝ «Ազուլաո» (2004, արժանացել Ջունո մրցանակի՝ «Տարվա լավագույն ալբոմ» անվանակարգում), «Պոլին Վիարդո Գարսիա» (2006թ.), «Աշխարհի ամալը» (2006թ.), «Մոցարտ» (Շանդի և Բրաունի հետ, արժանացել է Ջունո մրցանակի՝ «Տարվա լավագույն ալբոմ» անվանակարգում, 2007թ.), երգերի ձայնագրություններ՝ «Երկու աշտարակ», «Օղակների տիրակալը», «Արարատ» ֆիլմերում, ինչպես նաև Կոմիտասի ստեղծագործությունների կատարումների ձայնագրությունը Սերուժ Քրաջյանի և Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբի նվագակցությամբ: Կանադական «Սի Բի Սի» հեռուստակայանը նրա մասին նկարահանել է «Երկար ճամփորդություն դեպի տուն» փաստավավերագրական ֆիլմը, որն արժանացել է Ժեմինի կանադական մրցանակի (2006թ.):

Արժանացել է Նյու Յորքի Մետրոպոլիտեն օպերայի Ազգային խորհրդի մրցանակի (1997թ.), Պլաչիդո Դոմինգոյի հիմնադրած «Օպերալիա» մրցանակի (2000թ.), Էլիզաբեթ Թագուհու ոսկե հորելյանի անվան մեդալի, երեք անգամ Ջունո մրցանակի՝ «Լավագույն դասական ձայնակալառակի համար» անվանակարգում, Վիրջինիա Պարկեր մրցանակի՝ Կանադական արվեստի խորհրդի կողմից (2005թ.), Լեոնի Ռիզանել մրցանակի՝ Ջորջ Լոնդոն հաստատության կողմից, Հայ առաքելական եկեղեցու «Սուրբ Սահակ և Սուրբ Մեսրոպ» շքանշանի (2005թ.):

2008թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա:



ԲԱՐՈՆՅԱՆ Ժան-Բատիստ

BARONIAN Jean-Baptiste

Գրող, գրականագետ: Ֆրանսերեն լեզվի և գրականության թագավորական ակադեմիայի անդամ (Բելգիա): Բրյուսել, Բելգիա: Ծնվել է Անվերում (Բելգիա) 1942թ. ապրիլի 26-ին (ծն.՝ Բարոնյան Ժոզեֆ Լու, որոշ ստեղծագործություններում գործածել է Ալեքսանդր Լու գրական կեղծանունը): Ամուսնացած է, երկու երեխայի հայր է:

Ավարտել է Լուվենի կաթոլիկական համալսարանը՝ արժանանալով գիտության պսակավորի և իրավագիտության դոկտորի կոչումներին (1969թ.):

Իբրև գիտաերևակայական գրականության բաժնի տնօրեն և խմբագիր աշխատել է «Մարաբու» հրատարակչությունում (1970–77թթ.): Պաշտոնավարելով գանազան հաստատություններում՝ հիմնականում զբաղվել է գրական գործունեությամբ: Իբրև գրականագետ և գրական քննադատ աշխատակցել է «Լը Վիֆ Լ'Էքսպրես» (Բրյուսել) և «Մագազեն լիտերեր» (Փարիզ) գրական հանդեսներին:

Նրա ստեղծագործությունները բազմաժանր են: Գրել է վեպեր, պատմվածքներ, նովելներ, գրականագիտական և գրաքննադատական աշխատություններ, կենսագրականներ, հեքիաթներ և մանկական ստեղծագործություններ: Հեղինակ է 50 գրքի և բազմաթիվ հոդվածների գրական պարբերականներում: Հիշարժան են նրա ոստիկանական-դետեկտիվ, ինչպես նաև գիտաերևակայական վեպերն ու պատմվածքները: Նրա լավագույն ստեղծագործությունների թվում են «Մայրասպանը» (1982թ.), «Լորդ Ջոն» (1986թ.), «Կյանքը շարունակվում է» (1990թ.), «Խենթ մարդասպանը» (1995թ.), «Հյուսիսի քամին» (1996թ.),


«Մայիտակ ապոկալիպս» (2000թ.), «Սև թիթոներ» (2006թ.) վեպերը, «Ուրվականը քաղաքում» (1996թ.), «Ի թիվս այլ ոճիրների» (1999թ.), «Իննը մանր, շատ սովորական հանցագործություն» (2006թ.) պատմվածքների ժողովածուները, «Բողեր» (կենսագրություն, 2006), «Ֆրանսերեն ֆանտաստիկ գրականության համայնապատկերը» (1978թ.), «Միմենոն վիպասանը» (2003թ.), «Միմենոնը կամ գորշ վեպը» (2003թ.) գրական-վերլուծական աշխատությունները, հեքիաթները մանուկների համար և այլն: Ստեղծագործությունները թարգմանված են մոտ մեկ տասնյակ լեզուներով, այդ թվում հայերեն:

Հիմնադիրն ու նախագահն է «Ժողովարձ միմենոնի բարեկամներ» ընկերության (1987թ.) և խմբագիրը «Միմենոնի տետրեր» ամենամյա հրատարակության:

Ընտրվել է Ֆրանսերեն լեզվի և գրականության թագավորական ակադեմիայի անդամ (Բելգիա, 2002թ.): Բելգիայում ֆրանսերենով ստեղծագործող գրողների միության անդամ է:

Ի թիվս բազմաթիվ այլ մրցանակների, արժանացել է Բելգիայի ֆրանսիական համայնքի խորհրդարանի գրական մրցանակի (2007թ.): Պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության ոսկե մեդալով (2005թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ԲԱՐՍԵՂՈՎ Յուրի

BARSEGOV (BARSEGHOV) Yuri

Միջազգային իրավունքի ասպրեզի իրավագետ: Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Հայաստա-

նի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է 1925թ. մարտի 7-ին Թբիլիսիում (Վրաստան): Հայրանունը՝ Գեորգի: Ամուսնացած է, երկու զավակի հայր է:

Ավարտել է ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարության Միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը (1950թ.), ապա նույն հաստատության ասպիրանտուրան: Ստացել է իրավաբանական գիտությունների թեկնածուի (1953թ.), ապա դոկտորի գիտական աստիճան (1984թ.) և պրոֆեսորի կոչում (1979թ.):

Պաշտոնավարել է իբրև «Արտասահմանյան գրականություն» հրատարակչության միջազգային հարաբերությունների մասին գրականության բաժնի վարիչ (1954–62թթ.): Երկար տարիներ կատարել է դիվանագիտական աշխատանք: Եղել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալի և գլխավոր իրավախորհրդատուի հատուկ օգնական (1962–68թթ. և 1972–78թթ.): ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Համաշխարհային էկոնոմիկայի և միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտում զբաղեցրել է Համաշխարհային օվկիանոսի և բնապահպանության բաժնի վարիչի պաշտոնը (1969–71թթ.): Լինելով ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնախմբի անդամ (1987–91թթ.)՝ մասնակցել է անվտանգության և խաղաղության դեմ ուղղված հանցագործությունների մասին միջազգային օրենսդրական համաձայնագրերի նախագծերի մշակմանը: Իբրև պրոֆեսոր դասավանդել է Ժողովուրդների բարեկամության ռուսաստանյան համալսարանի միջազգային իրավունքի ամբիոնում (սկսած 1979թ-ից): Այժմ վարում է Մոսկվայի միջազգային իրավունքի և քաղաքագիտության հայկական ինստիտուտի տնօրենի պաշտոնը:

Հեղինակ է 500-ից ավելի գիտական հոդվածների, բազմաթիվ մենագրությունների և գրքերի, որոնք հիմնականում նվիրված են միջազգային ծովային իրավունքի հարցերի, միջազգային իրավունքում տարածքային խնդիրների տեսական ուսումնասիրության և տարածքային վեճերի խաղաղ կարգավորման գործնական ուղիների մշակման, ցեղասպանության, մասնավոր-

րապես Հայոց ցեղասպանության, հիմնախնդիրներին: Հատկապես հիշարժան են նրա «Տարածքը միջազգային իրավունքում» (Մոսկվա, 1958թ.), «Համաշխարհային օվկիանոս, հակամարտությունից դեպի համագործակցություն» (Մոսկվա, 1984թ.), «Միջազգային ծովային իրավունքի բառարան» (համահեղինակ և խմբագիր, Մոսկվա, 1985թ.), «Ինքնորոշումը և տարածքային ամբողջականությունը» (Մոսկվա, 1993թ.), «Հայոց ցեղասպանությունը, Թուրքիայի պատասխանատվությունը և միջազգային հանրության պարտավորությունները (փաստաթղթեր և մեկնաբանություններ)» (կազմող և խմբագիր, 2 հատոր, 2002–05թթ.), «Լեռնային Ղարաբաղը միջազգային իրավունքի և քաղաքականության մեջ» (փաստաթղթերի ժողովածու, 3 հատորով, կազմող և պատասխանատու խմբագիր, 2008թ.) աշխատությունները:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ է (2004թ.): Անդամ է Ծովային իրավունքի ընկերության, Միջազգային իրավունքի ընկերության:

Պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության «Մխիթար Գոշ» (2000թ.), Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Մեսրոպ Մաշտոց» (2000թ.), «Գերմանիայի դեմ հաղթանակի համար», «Կովկասի պաշտպանության համար» և այլ մեդալներով:

2008թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա:



ԲԵԴԵԼԻԱՆ Հարո

BEDELIAN Haro

Քաղաքացիական ճարտարագիտության պրոֆեսոր, պատվավոր դոկտոր:

Քաղաքացիական ճարտարագիտության թագավորական ակադեմիայի անդամ: Տաղվորք, Միացյալ Թագավորություն: Ծնվել է 1943թ. մարտի 6-ին Նիկոզիայում (Կիպրոս): Մուշեղ Բեդեյանի և Աննիկ Նիկողոսյանի որդին է: Անուսնացել է Իվոն Բեդեյան-Արրատունի հետ, երեխաները՝ Ստեփան, Լիզա, Զլեր:

Ուսանել է Քեմբրիջի համալսարանում, այն ավարտել է ստանալով գերազանցության վկայագիր մեխանիկական ճարտարագիտության ասպարեզում (1964թ.):

Պաշտոնավարել է «Սըր Վիլյամս և գործընկերներ» (ավտոմայրուղիների նախագծում և շինարարություն), «Կիննեար Մուդի» սահմանափակ պատասխանատվության (Լոնդոնի մետրոյի «Վիկտորիա» գծի վրա «Օքսֆորդյան կրկես» կայարանի ստորգետնյա հորատանցման աշխատանքների նախագծում և իրականացում, 1967-69թթ.) «Բոուվիս» քաղաքացիական ճարտարագիտական սահմանափակ պատասխանատվության (ճանապարհաշինություն, 1969-80թթ.) ընկերություններում: «Բալֆոր Բիտի» սահմանափակ պատասխանատվության ընկերությունում եղել է մայրուղիների և հատուկ նշանակության կառույցների նախագծման խմբի պատասխանատու և հարավային բաժնի կառավարիչ (1980-91թթ.): Նույն ընկերությունում զբաղեցրել է կառավարիչ-տնօրենի (1991-92թթ.), գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի (սկսած 1992թ-ից), որոշ ժամանակահատվածում նաև «Բալֆոր Բիտի» միավորման նախագահի և գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնները: Հանդիսացել է «Բալֆոր Բիտի» ներկայացուցիչը «Տրանսմանշ Լինկ» միավորման (5 բրիտանական և 5 ֆրանսիական ընկերություններից կազմած միավորում, որն իրականացրել է XX դարի խոշորագույն կառույցներից մեկի՝ Եվրոթունելի, Ֆրանսիայի և Անգլիայի միջև թունելի, նախագծերի համակարգումն ու շինարարության ղեկավարումը) վերահսկիչ խորհրդում և վերջինիս կողմից նշանակվել է իբրև նախագծի գլխավոր հանձնակատար: Եղել է «Քոննեկտ» ընկերության գլխավոր գործադիր տնօրենը (1997-

98թթ.): Ներկայումս Պորտսմուտ համալսարանի քաղաքացիական ճարտարագիտության պրոֆեսոր է և Քաղաքացիական ճարտարագիտության բարձրագույն դպրոցի Արդյունաբերության խորհրդակցական հանձնախմբի նախագահը: Միացյալ Թագավորության նախագծային և շինարարական մի շարք խոշոր ձեռնարկությունների (Քաղաքացիական ճարտարագիտական հաստատություն, «Ֆրիշման» ընկերություն, «Բալֆոր Բիտի» միավորում և այլն) խորհրդատու է: «Նիկոլաս» խորհրդավական ընկերություն գլխավոր խորհրդատու է:

Հեղինակ է մեծ թվով հրապարակումների քաղաքացիական ճարտարագիտության ասպարեզում: Հիշարժան են նրա «Մ25 երկրաբանական հիմնահարցեր», «Դասեր, որ պետք է քաղել թունելի հորատանցման աշխատանքների փորձառությունից», «Եվրոպա: Կարո՞ղ է արդյոք Միացյալ Թագավորությունն ավարտել շինարարությունը» հոդվածները:

Ճարտարագիտության թագավորական ակադեմիայի անդամ է (Լոնդոն, 1989թ.) և եղել է նրա ղեկավար խորհրդի կազմում (1991-94թթ.): Քաղաքացիական ճարտարագիտության կապալառուների դաշնության Կապալառուների ազգային բաժանմունքի նախագահն է (1992թ): Եղել է Շինարարական արդյունաբերության միության Արտահանման խմբի նախագահը (1995-98թթ.): Քաղաքացիական ճարտարագիտական հաստատության խորհրդի անդամ է, եղել է այդ կազմակերպության ճարտարագիտական կառավարման խորհրդի նախագահը (1987-90թթ.), փոխնախագահը և ճարտարագիտության միջազգային հանձնախմբի նախագահը (2001-2004թթ.): Ընտրվել է «Ճարտարագիտության միջազգային դաշնություն» կազմակերպության Միացյալ Թագավորության ներկայացուցիչ և գործադիր խորհրդի անդամ (2003թ)՝ գործում մասնակցություն ունենալով ճարտարագիտական միջազգային գիտաժողովներին Պուերտո Ռիկոյում, Չիկագոյում, Դելիում: Հոնգ Կոնգի գլխավոր կառույցների փորձագետն է:

Միացյալ Թագավորության հայկական համայնքի հոգաբարձուների խորհրդի անդամ է: Լոնդոնի «Հայոց տան» տնօրենն է: «Տաղվորքի և Վոլտոնի անդրծովյան օգնության միության» (միջազգային բարեսիրական կազմակերպություն) հոգաբարձու է:

Պարգևատրվել է Բրիտանական Կայսրության շքանշանով (ավտոմայրուղիների կառուցմանը մատուցած ծառայությունների համար, 1986թ.): Արժանացել է Քաղաքացիական ճարտարագիտության միավորման «Մենքի պրեմիում» մրցանակի («Եվրոպա: Կարո՞ղ է արդյոք Միացյալ Թագավորությունն ավարտել շինարարությունը» հոդվածի համար), Պորտսմուտի համալսարանի պատվավոր դոկտորի կոչման (1998թ.):

2008թ. Գայկական կենսագրական կենտրոնի «Գարգաթրի» տվյալների հիման վրա



ԲՐՈՒՏԵՆՑ Կարեն

BRUTENTS Karen

Պատմաբան: Պատմական գիտությունների դոկտոր: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է 1924թ. հուլիսի 3-ին Բաքվում: Արցախից Բաքու եկած Ներսես Բրուտենցի որդին է:

Ուսանել է նախ Բժշկական ինստիտուտում (1941-46թթ.), ապա Ադրբեյջանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում՝ այն ավարտելով 1950թ-ին: Ուսումը շարունակել է Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության Հասարակական գիտությունների ակադեմիայի աս-

պիրանտորայում (Մոսկվա, 1955-58թթ.): Ստացել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Աշխատել է իբրև բժիշկ (1946-48թթ.): Դասախոսել է Կոմունիստական կուսակցության քաղաքային կոմիտեում (Բաքու, 1950-54թթ.): Եղել է «Խաղաղության և սոցիալիզմի հիմնախնդիրներ» ամսագրի բաժնի վարիչ (Պրահա, 1958-61թթ.): Աշխատանքի է անցել Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի Միջազգային հարաբերությունների բաժնում (սկսած 1961թ-ից)՝ որոշ ժամանակահատվածում լինելով նաև այդ բաժնի վարիչի տեղակալը (մինչև 1990թ.): 1990-91թթ-ին եղել է Խորհրդային Միության նախագահ Մ. Գորբաչովի խորհրդականը զարգացող երկրների («Երրորդ աշխարհի») հարցերի գծով: Ներկայումս Արտաքին քաղաքական հարաբերությունների ընկերության (միջազգային հասարակական կազմակերպություն) փոխնախագահն է (սկսած 1997թ-ից):

Խորհրդային Միության արտաքին քաղաքականության ռազմավարության տեսաբաններից մեկն է և զգալի ազդեցություն է ունեցել ազգային ազատագրական շարժումների և նոր զարգացող երկրների նկատմամբ Խորհրդային Միության վարած արտաքին քաղաքականության մշակման վրա մինչև 90-ական թվականները: Հեղինակ է մեծ թվով մենագրությունների, որոնցից մի քանիսը թարգմանաբար լույս են տեսել տարբեր լեզուներով: Հիշարժան են նրա «Արդի ազգային ազատագրական հեղափոխությունները» (Մոսկվա, «Պրոգրես» հրատ., 1977թ.), «Ռուսաստանը և խաղաղօվկիանոսյան-ասիական տարածքաշրջանը» (Մոսկվա, 1992թ.), «Խորհրդածություններ չկայացած վերակառուցման մասին» (2005թ.) աշխատությունները:

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա

Գ



ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Էմիլ

GABRIELIAN Emil

Բժշկագետ, դեղաբան: Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի անդամ: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է Աշտարակում 1931թ. հունվարի 31-ին:

Ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը (1954թ.): Կատարելագործվել է ԽՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի Դեղաբանության գիտահետազոտական ինստիտուտում (Մոսկվա 1960-61թթ.), Ի.Մ. Սեչենովի անվան էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի և կենսաքիմիայի գիտահետազոտական ինստիտուտում (Լենինգրադ, 1967թ.), Գլազգոյի համալսարանի Վեյլքոմի հիմնադրամի վիրաբուժական գիտահետազոտական լաբորատորիայում (1968-69թթ.), Կարոլինսկա ինստիտուտի Նոբելի անվան նեյրոֆիզիոլոգիայի ինստիտուտում (Ստոկհոլմ, 1969թ.) և Կլինիկական նեյրոֆիզիոլոգիայի լաբորատորիայում, Լուդոլֆի համալսարանի կլինիկայում (Շվեդիա): Ստացել է բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (1963թ), դոցենտի կոչում (1968թ.), այնուհետև բժշկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան (1971թ.) և պրոֆեսորի կոչում (1972թ.):

Աշխատել է իբրև Արթիկի (Հայաստան) բուժմիավորման գլխավոր բժիշկ և վիրաբույժ (1954-58թթ.), ապա Երևանի պետական բժշկական ինստիտուտի դեղաբանության ամբիոնի ավագ լաբորանտ, ասիստենտ (1959-68թթ.): Եղել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի պրոռեկտոր (1969-1971թթ.), ապա ռեկտոր (1971-75թթ.): Ղեկավարել է դեղաբանության ամբիոնի Արյան շրջանառության և դեղաբանության գիտահետազոտական լաբորատորիան (1972-2005թթ): Պաշտոնավարել է նաև իբրև նույն հաստատության Դեղաբանության ամբիոնի վարիչ (1988-94թթ.): Նշանակվել է Հայկական ԽՍՀ առողջապահության նախարար (1975-1989թթ.): Երևանի պետական բժշկական ինստիտուտի դեղաբանության ամբիոնի պրոֆեսոր է (սկսած 1988թ-ից): Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների գործակալության տնօրենն է (սկսած 1992թ-ից):


Հեղինակ է մոտ 350 գիտական աշխատության, գրքերի և դասագրքերի՝ պսակային և ուղեղային արյան շրջանառության ֆիզիոլոգիայի և ֆարմակոլոգիայի, արյան տարրերի և անոթի պատի ֆիզիոլոգիայի ու ֆարմակոլոգիայի, էնդոգեն ֆիզիոլոգիական ակտիվ նյութերի ֆարմակոլոգիայի (պրոստագլանդիններ, կատեխոլամիններ, ազոտի օքսիդ և այլն), հուզային ստրեսի, պարբերական հիվանդության, առողջապահության կազմակերպման և այլ ասպարեզներում:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի անդամ է (1994թ., թղթակից-անդամ՝ 1977թ-ից) և վերջինիս նախագահության անդամ (1994թ-ից): Եղել է նույն ակադեմիայի փոխնախագահ և Բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար (1994-2006թթ.): Անդամ է Գիտու-

բյուրների միջազգային ակադեմիայի (սկսած 1996թ-ից), Անգիոլոգիայի և անոթաբանության միջազգային քոլեջի գիտական խորհրդի (Նյու-Յորք, սկսած 1991թ-ից): Նախագահն է Հայաստանի դեղաբանների միության (սկսած՝ 1993թ-ից): Եղել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԺՆԱ) հիմնական դեղերի ծրագրի կառավարման խորհրդատվական հանձնախմբի անդամ (1995-1998թթ.): Ինֆորմատիկացիայի միջազգային ակադեմիայի ակադեմիկոս է (սկսած 1996թ-ից): Անդամ է Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի (սկսած 2001թ-ից), Ռուսաստանի բժշկական-տեխնիկական գիտությունների ակադեմիայի (սկսած 2001թ-ից), Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի (սկսած 1996թ-ից), «Արարատ» գիտությունների միջազգային ակադեմիայի (սկսած 1996թ-ից): Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից նշանակվել է բժշկության ոլորտում տրվող պետական մրցանակների հանձնաժողովի նախագահ (2001-2006թթ.): Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սուրբ Ներսես Մեծի անվան գիտաբժշկական կենտրոնի վարչական խորհրդի նախագահն է (սկսած 2002թ-ից): Փորձագիտության ազգային կենտրոնի խորհրդի նախագահն է (սկսած 2004թ-ից): Առողջապահության համաշխարհային կազմակերպությունում եղել է Եվրոպայում առողջապահության հետազոտման խորհրդատվական հանձնախմբի անդամ (2001-2005թթ.):

Արժանացել է Յունեսկո-ի «Կալինգայի միջազգային մրցանակի» դափնեկրի կոչման (1999թ.): Պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի», «Ժողովուրդների բարեկամության», «Ծառայություններ կյանքի համար», «Ասպետական խաչ», «Վերնադսկու ոսկե աստղ» շքանշաններով, Պիրոգովի, Կրավկովի, Մխիթար Հերացու անվան և Եվրոպայի բնական գիտությունների ակադեմիայի Պաուլ Էրլիխի անվան ոսկե մեդալներով:

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ԳԱԳՈՍՅԱՆ Ռոբերտ

GAGOSIAN Robert

Օվկիանոսագետ, ծովային երկրաբանիկոս: Գիտության պատվավոր դոկտոր: ԱՄՆ-ի գիտությունների և արվեստների ակադեմիայի անդամ: Վուդս Հոլի օվկիանոսագիտական հաստատության վաստակավոր նախագահ: «Օվկիանոսային ղեկավարում» միավորման նախագահ և գլխավոր գործադիր տնօրեն: Ֆելմուտ, Մասաչուսեթս, ԱՄՆ: Ծնվել է 1944թ-ին Մեդֆորդում (Մասաչուսեթսի նահանգ), հայրանունը՝ Պերճ: Ամուսնացել է Սյուզան Գագոսյանի հետ, ունի երկու որդի՝ Տրեյս և Ալեքս:

Ուսանել է Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտում՝ ստանալով գիտության պսակավորի աստիճան քիմիայի բնագավառում (1966թ.): Օրգանական քիմիայի բնագավառում ստացել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան Կոլումբիայի համալսարանում (1970թ.): Հետդոկտորական գիտական հետազոտություններ է իրականացրել Առողջապահության ազգային ինստիտուտում՝ Բերկլիի Կալիֆոռնիայի համալսարանում (1970-72թթ.): Լոնգ Այլենդի համալսարանի Սաուտհեմպտոնի քոլեջում և Բոստոնի հյուսիսարևմտյան համալսարանում արժանացել է գիտության պատվավոր դոկտորի կոչման (2000թ.):

Վուդս Հոլի օվկիանոսագիտության հաստատությունում եղել է օգնական-գիտաշխատող (1972-76թթ.), ապա գիտաշխատող (1972-82թթ.), այնուհետև ավագ գիտաշխատող և քիմիական բաժանմունքի վարիչ (1982-87թթ.): Նույն հաստատությունում պաշտոնավարել է իբրև գլխավոր տնօրենի տեղակալ և գիտական մասի տնօրեն (1987-92թթ.), այնուհետև նշանակվել է հաստատության տնօրեն

(1994–2002թթ.) և նախագահ (2001–04թթ.): Ներկայումս Վուդս Հոլի օվկիանոսագիտության հաստատության վաստակավոր (պաշտոնաթող) նախագահն է: Միավորված ազգերի կազմակերպությունում Կրթության, գիտության և մշակույթի հանձնախմբի ԱՄՆ-ի կոմիսարն է (սկսած 2005թ-ից): «Օվկիանոսային ղեկավարում» միավորման (Հետազոտական և կրթական օվկիանոսագիտական հաստատությունների և Միացյալ օվկիանոսագիտական հիմնարկների միավորում) նախագահն է և գլխավոր գործադիր տնօրենը (սկսած 2007թ-ից):

Հեղինակ կամ համահեղինակ է մոտ 90 գիտական աշխատության, գիտական գեկույցների, հոդվածների («Վաշինգտոն փոստ», «Նյու Յորք թայմս», «Սայնս» պարբերականներում): Մասնակցել է 14 օվկիանոսագիտական նավարկային արշավախմբի, որից 7-ում՝ իբրև գլխավոր հետազոտող-գիտնական, և 4 գիտական ուղղության զարգացման ծրագրերի: Նրա գիտական հետազոտություններն ընդգրկում են ծովային օրգանիզմների կողմից արտադրվող նյութերի, նրանց տարածման և միջավայրի վրա թողած ազդեցության ուսումնասիրությունը, ինչպես նաև մթնոլորտի դերի բացահայտումը նյութերի տեղաշարժման մեջ՝ ցամաքից դեպի ծովային միջավայր:

ԱՄՆ-ի գիտությունների և արվեստների ակադեմիայի անդամ է (2002թ.): Անդամ է ԱՄՆ-ի օվկիանոսային գործերի խորհրդի (եղել է նաև փոխնախագահ), ինչպես նաև Օվկիանոսի և մթնոլորտի ազգային վարչության ղեկավար խորհրդի և ԱՄՆ-ի օվկիանոսային քաղաքականության պետական հանձնախմբի գիտական խորհրդի (2002թ.): Իբրև նախագահ ղեկավարել է Օվկիանոսագիտական հետազոտությունների և կրթական 52 հաստատության (մոտ 70 գիտահետազոտական լաբորատորիա) միավորման հոգաբարձուների խորհուրդը (1998–2001թթ.): Անդամ է նաև Ամերիկայի երկրաբանական գիտությունների, Ամերիկյան քիմիական ընկերության, Օրգանական երկրաբանական գիտությունների ընկերության: Բնության պատմության Ամիթոսյան ազգային թանգարանի գլխա-

վոր գիտական խորհրդատուն է: Միջազգային տնտեսական ֆորումի հրավիրյալ դասախոս է (Դափոս, Շվեյցարիա, սկսած 2001թ-ից): Հյուսիսատլանտյան դաշինքի Օվկիանոսային տնտեսական ներդրումների և գործակցության հանձնախմբի, Լուիզիանայի կառավարչական խորհրդի, Ազգային գիտական հիմնադրամի ղեկավար հանձնախմբերի անդամ է:

Արժանացել է Մոնմաունտի համալսարանի «Օվկիանոսի չեմպիոն» մրցանակի (Սաուտհեմպտոն, Նյու Յորք, 2006թ.)

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա:



ԳԱՍՊԱՐՅԱՆ Տիվան

GASPARIAN Djivan

Երաժիշտ-դուդուկահար, երգահան: Հայկական ԽՍՀ և Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստ, պրոֆեսոր: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է 1923թ. հոկտեմբերի 12-ին Սոլախում (Հայկական ԽՍՀ):

Ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական երաժշտանոցը:

Եղել է Թաթուլ Ալթունյանի անվան Հայաստանի երգի ու պարի պետական համույթի մենակատար (1946–92թթ.): Դասավանդել է Կոմիտասի անվան պետական երաժշտանոցում, ստացել է պրոֆեսորի կոչում: Ներկայումս շարունակում է դասավանդել մույն հաստատությունում: Համերգներ է ունեցել «Կրոնոս կվարտետ», Հայաստանի պետական, Վիեննայի և Լոս Անջելոսի սիմֆոնիկ նվագախմբերի հետ: Համագործակցել է շատ նշանավոր երաժիշտների՝ Մ. Բրուկի, Պ. Գաբրիելի, Լ. Լիչիի, Պ. Ն. Ֆատեհ Ալի Խանի և այլոց հետ: Ամերիկայում և Եվրոպայի բազմաթիվ

երկրներում ձայնագրել է մի քանի տասնյակ ձայնասկավառակներ, որոնցից հիշատակության են արժանի Էնո Բրյանի (Լոնդոն) աջակցությամբ ձայնագրված սկավառակը նվիրված 1988 թվականի Սպիտակի և Լենինականի երկրաշարժի զոհերի հիշատակին (կոչվում է՝ I will not be sad in this World), «Սև Ռոք» (Black Rock)՝ Մ. Բրուկի հետ («Ռեալ Վորլդ», 1998թ.), «Ջիվան Գասպարյան, կվարտետ» («Լիբրա Մուզիկա», 1999թ.), «Չմայլելի դուդուկ» (Heavenly Duduk, 1999թ.), «Հայկական ֆանտազիաներ» (2000թ.) և այլն: Դուդուկի իր կատարումներով մասնակցել է «Ռոնին» (Ջոն Ֆրանկլինյանի, 1998թ.), «Օրացույց» (Ատոմ Էգոյանի, 1993թ.) և «Գլադիատոր» (Ռիդլեր Սկոտի, 2000թ.) ֆիլմերի երաժշտության ստեղծմանը: «Գլադիատոր» ֆիլմի երաժշտությունը, որը ստեղծվել է Հ. Ջիվանի կողմից, Ջ. Գասպարյանի գործուն մասնակցությամբ, արժանացել է «Ոսկե գլոբուս» Ամերիկյան կինոակադեմիայի մրցանակին (2001թ.):

Չորս անգամ արժանացել է Յունեսկո-ի կազմակերպած Համաշխարհային երաժշտական մրցույթի «Ոսկե մեդալի» (1959, 1962, 1973 և 1980թթ.): Ստացել է Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստի կոչում (1973թ.): Պարգևատրվել է «Վոմբես» միջազգային երաժշտական մրցանակով (Բեռլին, 2002թ.): Երևան քաղաքի պատվավոր քաղաքացի է (2000թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա:



ԳԱՐԵԳԻՆ Բ

GAREGIN II

Նորին Սուրբ Օծուրյուն Տեր Տեր Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս (ավա-

զանի անունով՝ Կորիչ Ներսիսյան): Սուրբ Էջմիածին, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է 1951 թ. օգոստոսի 21-ին Էջմիածնի շրջանի Ոսկեհատ գյուղում:

Ուսանել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում (ավարտել է գերագանց առաջադիմությամբ, 1965–71թթ.): Ուսումը շարունակել է Վիեննայի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետում (1972–75թթ.), ապա Բոննի համալսարանում (1975–79թթ.): Ուսումը կատարելագործել է Չագորսկի Ռուս Ուղղափառ Եկեղեցու Հոգևոր ակադեմիայի ասպիրանտուրայում (1979–80թթ.):

Ձեռնադրվել է սարկավազ (1970թ.), ապա նշանակվել է Հոգևոր ճեմարանի տեսուչի օգնական (1971թ.) միաժամանակ դասավանդելով «Նոր Կտակարան» առարկան (1971–72թթ.): Կուսակրոն քահանա է ձեռնադրվել վերանվանվելով Գարեգին աբեղա (1972թ.): Նշանակվել է Գերմանիայի հայ համայնքի հոգևոր հովիվ (1975–79թ.): Եղել է Արարատյան Հայրապետական Թեմի առաջնորդական փոխանորդի օգնական (1980 թ.), ապա առաջնորդական փոխանորդ (1983թ.): Ձեռնադրվել է եպիսկոպոս (1983թ.): Ընտրվել է Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ (1990թ.): Ստացել է Արքուքյան պատիվ և տիտղոս (1992թ.): Գարեգին Ա կաթողիկոսի կողմից նշանակվել է կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ (1998թ.): Ազգային-եկեղեցական սրբազուն մար ժողովում ընտրվել է Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց ստանալով Կաթողիկոսական ձեռնադրություն և օծում (1999թ. հոկտեմբերի 27 ին):

Հիմնադիրն է Արարատյան Հայրապետական Թեմի հովանու ներքո Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի (1989թ.), մայրաքաղաքում բացված Հայորդաց տների, որտեղ հազարավոր երեխաներ ստանում են հոգևոր ու գեղագիտական կրթություն (1992թ.), Արարատյան Հայրապետական Թեմի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի, որն իրականացնում է քրիստոնեական դաստիարակություն՝ թվով 56 հանրակրթական դպրոցում (1990թ.): Նրա ջանքերով Գևորգյան հոգևոր ճեմարանը դարձավ պետականորեն ճանաչված Աստվածա-

բանական համալսարան, իսկ Գյումրիի ընծայարանը և Վազգենյան դպրանոցը դարձան նրա մասնաճյուղերը Շիրակի և Գեղարքունյաց Թեմերում: Ուսուցչապետն է Գեորգյան հոգևոր ճեմարանի, որտեղ նա նաև դասավանդում է «Քարոզիտություն» առարկան: Հիմնադիրն է Սուրբ Էջմիածնում Գարեգին Ա-ի անվան աստվածաբանական-հայագիտական կենտրոնի՝ իր հարուստ գրադարանով:

Նրա գահակալության օրոք են օծվել Սպիտակի Սուրբ Հարություն, Երևանի Սուրբ Սարգիս, Վայքի Սուրբ Տրդատ, Տաշիրի Սուրբ Սարգիս, Մալիշկայի Սուրբ Աննա, Չարենցավանի Սուրբ Անեմափրկիչ, Ալավերդու Սուրբ Գրիգոր Նարեկացի, Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց, Առինջի Սուրբ Աստվածածին, Գյումրիի Սուրբ Հակոբ, Մարմարաշենի Սուրբ Գևորգ նորակառույց եկեղեցիներն ու Երևանի Սուրբ Սարգիս առաջնորդանիստ եկեղեցու զանգակատունը, Ռուսաստանի Դաշնության Կրասնոյարսկ քաղաքի Սուրբ Սարգիս, Պյատիգորսկ քաղաքի Սուրբ Սարգիս, Լվովի Սուրբ Աստվածածին եկեղեցիները, վերասրբագործվել են Դվինի Սուրբ Հարություն, Սանկտ Պետերբուրգի Սուրբ Կատարինե, Մոսկու Սուրբ Գևորգ եկեղեցիները, Սաղմոսավանքը, Ծաղկածորի Կեչառիսի վանական համալիրը, Լոնդոնի Սուրբ Եղիշե, Ապարանի Սուրբ Խաչ եկեղեցիները, Բաց Խորանը և Սուրբ Էջմիածնի նոր գլխավոր մուտքը, որը կրում է Սուրբ Գրիգոր Լուսավորչի անունը: 2001թ. սեպտեմբերի 23-ին նրա ձեռամբ կատարվել է Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու օծումը:

Ղեկավարել է Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակի (2001թ.), Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամյակի (2003թ.), Ս. Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» աղոթագրքի 1000-ամյակի առթիվ տոնակատարությունների լայնածավալ միջոցառումները:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր անդամ է (2003թ.): «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է, Հայկական

բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) հոգաբարձուների խորհրդի պատվո անդամ: 2000թ. Նյու Յորքում մասնակցել է ՄԱԿ-ի կազմակերպած՝ կրոնական առաջնորդների Հազարամյակի խաղաղության համաշխարհային կոնֆերանսին և ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում զեկուցում է կարդացել «Դեպի ներողամտություն և հաշտություն» թեմայի շրջանակներում:

Արժանացել է Արցախի պետական համալսարանի (2000թ.) և Երևանի պետական համալսարանի (2004թ.) պատվավոր դոկտորի կոչման: Ինֆորմատիկացիայի միջազգային ակադեմիայի անդամ է (2001թ., այս ակադեմիայի տնօրինության կողմից նրան շնորհվել է փիլիսոփայության դոկտորի կոչում): Պարգևատրվել է Հորդանանի բարձրագույն կարգի՝ «Բեթղեհեմ-2000» (2000թ.), Ռումինիայի ազգային բարձրագույն՝ «Ռումինիայի աստղ» (2000թ.), Ուկրաինայի Հանրապետության «Իշխան Յարոսլավ Իմաստուն», 5-րդ աստիճանի (2001թ.), Ֆրանսիայի «Պատվո լեգիոնի հրամանատարի» (2001թ.), Ռուս Ուղղափառ Եկեղեցու «Սուրբ Անդրեաս Առաքյալի» բարձրագույն (2004թ.), Ռուսաստանի Դաշնության «Բարեկամություն» (2006թ.) շքանշաններով:

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա
Օնոթություն - Որոշ անվանումներ բերված են կրոնական գրականության մեջ գործածվող ձևով



ԳԱՐՈՅԱՆ Մարիոս (ԿԱՐՈՅԱՆ)

GAROYIAN Marios

Քաղաքական գործիչ, քաղաքագետ: Կիպրոսի Հանրապետության Խորհրդարանի նախագահ: Կիպրոսի կառավարող Դեմոկրատական կուսակցության առաջ-

նորդ: Նիկոզիա, Կիպրոսի Հանրապետություն: Ծնվել է 1961թ. մայիսի 31-ին Նիկոզիայում (Կիպրոս): Ամուսնացել է Մինա Աղամիդուի հետ, երկու երեխայի հայր է:

Ավարտել է Նիկոզիայի «Տերա Սանտա» քոլեջը (1979թ.): Պերուջիայի համալսարանում (Իտալիա) ուսանել է քաղաքագիտություն՝ մասնագիտանալով համաշխարհային արդյունաբերության պատմության ոլորտում:

Իբրև նախագահ ղեկավարել է Պերուջիայի «Վերածնունդ» ուսանողական միությունը (1981թ.), ապա Կիպրոսի ուսանողների ազգային միությունը (1983թ.): Վերադառնալով Կիպրոս, եղել է Համայն Կիպրոսի ուսանողների և երիտասարդ գիտնականների միությունների միավորման գործադիր հանձնախմբի անդամ, ինչպես նաև Դեմոկրատական կուսակցության Նիկոզիայի նահանգային հանձնախմբի նախագահ (1986-92թթ.): Ընտրվել է Կիպրոսի դեմոկրատական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ (1988թ.), ապա նաև գործադիր հանձնախմբի քարտուղար (1997թ-ից), իսկ 2006թ-ից ղեկավարում է այդ կուսակցությունը: Պաշտոնավարել է իբրև Ներկայացուցիչների տան նախագահական գրասենյակի տնօրեն՝ նախագահներ Գալանուի և Կիպրիանուի կառավարման տարիներին (1991-2001թթ.): Եղել է հանրապետության նախագահի Մամուլի գրասենյակի տնօրենը և Կառավարության մամուլի գրասենյակի փոխխոսնակը (2003-06թթ.): Ընտրվել է Կիպրոսի Հանրապետության Խորհրդարանի անդամ (սկսած 2006թ-ից, անդամակցել է Ընտրական, Շրջակա միջավայրի, Արտաքին գործերի, Հայտարարագրերի և ֆինանսական շահերի խորհրդարանական հանձնախմբերին): 2008թ-ին ընտրվել է Կիպրոսի Հանրապետության Խորհրդարանի նախագահ: Անդամ է Ազգային խորհրդի՝ Կիպրոսի Հանրապետության նախագահի խորհրդակցական հանձնախմբի: Անդամ է Եվրոպական միջերկրածովյան խորհրդարանական համաժողովի կիպրոսյան պատվիրակության: Իբրև վերլուծաբան և եվրոպական գործերի մասնագետ՝ հեղինակ է բազմաթիվ քաղաքական հոդվածների նվիրված Կիպրոսի և Եվրոպական Միության փոխհա-

րաբերություններին, միջազգային քաղաքական զարգացումներին, որոնք տպագրվում են հիմնականում Կիպրոսի և Հունաստանի պարբերական մամուլում:

Կիպրոսի բանկի «Օնկոլոգիական կենտրոնի» խորհրդի անդամ է: Անդամակցում է բազմաթիվ մասնագիտական խորհուրդների, բարեգործական միությունների: Կարևոր ներդրում ունի Կիպրոսի հայ համայնքի զարգացման և նրա խնդիրների լուծման գործում:

Պարգևատրվել է Հունաստանի «Պատվո բարձրագույն հրամանատարի» կոչմամբ:

2008թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ԳԱՖԵՍՃՅԱՆ Տերալդ ԳԱՖԵՍՃԵԱՆ Տերալդ

CAFESJIAN Gerald

Գործարար, իրավաբան, բարեգործ: Մինեապոլիս, ԱՄՆ: Ծնվել է Բրուքլինում 1925թ. (Նյու Յորքի նահանգ): Լևոն Գաֆեսճյանի (ծնված Սվազում և Մեծ եղեռնի հետևանքով 1915թ-ին բոլոր հարազատներին կորցրած) և Նորա Թաշյանի (ծնված Կ.Պոլսում) որդին է: Ամուսնացած է Զլեռ Գաֆեսճյանի հետ, ունի դուստր և որդի՝ Կատի և Թոն անուններով:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ծառայել է Խաղաղ և Ատլանտյան օվկիանոսներում գտնվող ԱՄՆ-ի ծովային նավատորմում: Նյու Յորքի Հունտեր քոլեջում ստացել է արվեստների պսակավորի աստիճան տնտեսագիտության ասպարեզում, այնուհետև ուսանել է Նյու Յորքի Սուրբ Ջոնի անվան իրավաբանական բարձրագույն դպրոցում՝ ստանալով իրավագիտության դոկտորի կոչում:

«Վեստ Պարլիչինգ» կորպորացիայում

աշխատել է իբրև խմբագիր (Նյու Յորք, 1952–60թթ.): Նույն հաստատության Մինեսոտայի կենտրոնում պաշտոնավարել է իբրև գովազդի ղեկավար, առևտրական բաժնի փոխնախագահ, արտաքին հարաբերությունների գծով փոխնախագահ, գլխավոր փոխնախագահ և տնօրենների խորհրդի անդամ (1960–94թթ.): Մի շարք ընկերություններում դրամական խոշոր ներդրումներ է կատարել, այդ թվում Ֆլորիդա և Մինեսոտա նահանգների «Կամպիելլո» իտալական ռեստորանների համակարգում, «Հարթլանդ Ջյուս» իրավաբանական հիմնարկությունում, ինչպես նաև Իտալիայում և Հունգարիայում:

Հիմնադիրն է «Գաֆեաճեան ընտանիքի հիմնադրամ» բարեգործական հաստատության (1996թ.): Այս կազմակերպությունը նշանակալից ներդրում (մոտ 50 մլն դոլար) ունի Վաշինգտոնի Հայոց ցեղասպանության թանգարանի և հուշահամալիրի կառուցման, ԱՄՆ-ի հայկական կազմակերպությունների (Ամերիկայի հայկական համագումարի, Հայկական բարեգործական ընդհանուր միության ամերիկյան մասնաճյուղերի, Ամերիկայի հայկական համալսարանի), Հայաստանում մի շարք ծրագրերի (Հայաստանի ամերիկյան համալսարանի, «Հայաստան» հիմնադրամի, Արցախի «Հյուսիս-հարավ» մայրուղու շինարարության, «Անի և Նարոզ» հիմնադրամի, տարբեր հիվանդությունների դեմ երեխաների պատվաստման, «Նարոզի մշակումներ» համակարգչային ուսուցողական ծրագրերի, բարեգործական ճաշարանների և բազմաթիվ այլ ծրագրերի) ֆինանսավորման գործում:

Անդամ է Նյու Յորքի իրավաբանների միության, Միացյալ Նահանգների Գերագույն դատարանի, Սամոայի Գերագույն դատարանի: Բազմաթիվ կազմակերպությունների տնօրենների խորհուրդների անդամ է, այդ թվում «Վեստ Պարիշինգ», «Հյուստոն Պրոդակտ», «Յունայթիդ Հոսպիտալ» բաժնետիրական ընկերությունների, ինչպես նաև «Մինեսոտայի արվեստի թանգարան», «Մինեսոտայի համալսարանի արվեստի թանգարան», «Մինեսոտայի կարուսել» և այլ հասարակական կազմակերպությունների: Կազմակերպիչն ու հիմ-

նադիրն է Սքոտլանդի ժամանակակից արվեստի թանգարանի «Ջերալդ Գաֆեաճեան» ցուցասրահի (1999թ.), Երևանում Ժամանակակից արվեստի Գաֆեաճեանի անվան կենտրոնի և թանգարանի (2007թ.):

Պարզևատրվել է «Գործարարության և արվեստների մրցանակով» (Միացյալ Թագավորության ամենահեղինակավոր մրցանակը գործարարների կողմից արվեստների հովանավորման համար, 1996թ.), ԱՄՆ-ի «Էլիս Ալենդ» պատվո շքանշանով (2005թ.), Ֆրիտյոֆ Նանսենի անվան շքանշանով («Ֆրիտյոֆ Նանսեն» հաստատության կողմից, Երևանում Ժամանակակից արվեստի Գաֆեաճեանի անվան կենտրոնի և թանգարանի հիմնադրման համար, 2005թ.), Հայաստանի Հանրապետության «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով (հայրենիքին մատուցած ծառայությունների համար, 2006թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արդյունքների տվյալների հիման վրա



ԳԵՎՈՐԳՅԱՆ Ժիրայր

KEVORKIAN Jirair

Մաթեմատիկոս (կիրառական մաթեմատիկա): Փիլիսոփայության դոկտոր մաթեմատիկայի բնագավառում: Վաշինգտոն, ԱՄՆ: Ծնվել է 1933թ. մայիսի 14-ին Երուսաղեմում: Լևոն և Արաքսի Գևորգյանների որդին է: Ամուսնացել է Սեդա Գևորգյանի հետ: Ուսանել է Ջորջիայի տեխնոլոգիական ինստիտուտում՝ ստանալով գիտության բակալավրի (1955թ.), ապա մագիստրոսի գիտական աստիճան (1956թ., Ատլանտա, Ջորջիա): Կալիֆոռնիայի տեխնոլոգիական ինստիտուտում նրան շնորհվել է փիլիսոփայության դոկտորի գիտական աս-

տիճան օդագնացության և մաթեմատիկայի բնագավառում (Փասադենա, 1961թ.):

Աշխատել է իբրև աերոդինամիկայի մասնագետ՝ Ֆորտ Վորտում (Տեխասի նահանգ, 1956–57թթ.): Օդագնացության բնագավառում գիտական հետազոտություններ է իրականացրել Կալիֆոռնիայի տեխնոլոգիական ինստիտուտում (1961–64թթ.): Վաշինգտոնի համալսարանում եղել է օդագնացության և տիեզերագնացության պրոֆեսորի օգնական (1964–66թթ.), այնուհետև պրոֆեսոր (1966–71թթ.): Նույն համալսարանում իբրև պրոֆեսոր դասավանդել է կիրառական մաթեմատիկա (1971–2002թթ.): Եղել է Վաշինգտոնի համալսարանի կիրառական մաթեմատիկայի ամբիոնի վարիչ (1986–87 և 1988–90թթ.): Իբրև հրավիրված պրոֆեսոր դասավանդել է Փարիզի 6-րդ համալսարանի տեսական մեխանիկայի ամբիոնում (Փարիզ, 1971–72թթ.): Ֆրանսիայի առաջավոր տեխնիկայի ազգային դպրոցի և Ճարտարագիտական դպրոցի հրավերով իբրև Ֆուլբրայտ-Հեյսի անվան դասախոս, դասավանդել է «Հոսուն միջավայրերի մեխանիկա» և «Կիրառական մաթեմատիկա» առարկաները (Փարիզ, 1975–76թթ.):

Եղել է «Դուգլաս» (Մանտա Մոնիկա և Լոնգ Բիչ, Կալիֆոռնիայի նահանգ, 1958–64թթ.) և «Մակ-Դոնել Դուգլաս» (Հունդինգտոն Բիչ, Կալիֆոռնիայի նահանգ, 1964–74թթ.) օդանավաշինական ընկերությունների, Կիրառական մաթեմատիկայի արևմտյան (Բելլևյու, Վաշինգտոնի նահանգ, 1974–77թթ.), Կենտի հետազոտական (Վաշինգտոն, 1978–80թթ.) և Լոս Ալամոսի ազգային (Նյու Մեքսիկոյի նահանգ, 1971–85թթ.) լաբորատորիաների գիտական խորհրդատու:

Հեղինակ է բազմաթիվ գիտական հոդվածների և 5 մենագրության՝ կիրառական մաթեմատիկայի, տեսական և կիրառական մեխանիկայի, օդագնացության, տիեզերագնացության և այլ բնագավառներում: Հատկապես հիշարժան են նրա «Մասնակի դիֆերենցիալ հավասարումներ, անալիտիկ լուծման հնարքները» (առաջին հրատարակությունը՝ «Վադսֆորտ Բուկս» հրատ., 1990թ. և «Չապմեն ընդ Հոլ» հրատ., 1993թ., երկրորդ հրատարակությունը՝ «Սպրինգեր Վերլագ»

հրատ., 2000թ.) և «Բազմաստիճան և եզակի պերտուրբացիոն մեթոդներ» (համահեղինակ Ջ. Դ. Բոուլ, «Սպրինգեր Վերլագ», 1996թ.) աշխատությունները:

Գիտական դրամաշնորհների է արժանացել ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերի գիտական հետազոտությունների գրասենյակի, Օդագնացության և տիեզերքի ազգային վարչության, Գիտության ազգային հիմնադրամի և այլ հաստատությունների կողմից:

2005թ. Գայկական կենսագրական կենտրոնի «Գարգաբերի» տվյալների հիման վրա, խմբագրված հատորի հեղինակի կողմից



ԳԵՎՈՐԳՅԱՆ Ռեյմոն, Հարություն ԳԵՈՐԳԵԱՆ Ռեմոն, Յարութիւն

KEVORKIAN Raymond, Haroutioun

Պատմաբան: Պատմագիտության դոկտոր: Փարիզի Նուբարյան մատենադարանի տնօրեն: Փարիզի Սորբոնի III համալսարանի գիտական հետազոտությունների տնօրեն: Փարիզ, Ֆրանսիա: Ծնվել է 1953թ-ին:

Ուսանել է «Էքոլ պրատիկ դեզ օթ էտյուդ» (*École pratique des hautes études*) բարձրագույն կրթական հաստատության Պատմության և բանասիրության (չորրորդ) բաժնում:

Փարիզի VIII համալսարանի (Սեն Դնի) Աշխարհաբաղաբալական հետազոտությունների ֆրանսիական ինստիտուտում դասավանդում է ժամանակակից պատմություն: Փարիզի Սորբոնի III համալսարանի գիտական հետազոտությունների տնօրեն է և ղեկավարում է Արդի հայոց պատմության կենտրոնը: Իբրև տնօրեն ղեկավարում է Հայկական բարեգործական ընդհանուր միության Փարիզի Նուբարյան մատենադարանը (սկսած 1987թ-ից):

Հեղինակ է մոտ երկու տասնյակ գրքերի և բազմաթիվ հոդվածների՝ հայոց պատմության, Հայոց ցեղասպանության և հայկական մշակույթի ուսումնասիրությունների վերաբերյալ: Հիշարժան են նրա «Հայոց ցեղասպանությունը» («Օղիլ ժակոբ» հրատ., 2006թ.), «Հայկական տպագրությունները 1701–1850թթ.» (2000թ.), «Հայաստանը արևելքի և արևմուտքի միջև» (1996թ.), «Քրիստոնյա Հայաստանի լույսը» (համահեղինակ՝ Իվան Տրավերդի, 2006թ.), «Հայաստան՝ 3000 տարվա պատմություն» (համահեղինակ՝ Ժ.-Պ. Մահե, 1988թ.), «Հայկական գորգեր և գործվածքեղեն» (համահեղինակ՝ Պ. Աշյան, 1991թ.), «Հայկական բարեգործական ընդհանուր միության հարյուրամյակը, հատոր 1, 1906–1940թթ.» (2006թ.), «Անի, Հայաստանի մայրաքաղաքը 1000 թվականին» (2001թ.), «Հայերն Օսմանյան կայսրությունում եղեռնի նախօրեին» (համահեղինակ՝ Պ. Փարոջյան 1992թ.), «Հայերը 1917–39 թվականներին, ապաստանի որոնում» (համահեղինակներ՝ Լևոն Նորդիկյան և Վահե Թաշչյան, 2006թ., 2–րդ հրատ. 2007թ.) և բազմաթիվ այլ աշխատություններ:

Տնօրենն է և խմբագիրը «Ժամանակակից հայոց պատմության հանդես» գիտական պարբերականի (սկսած 1995թ–ից):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ԳՈՎՃՅԱՆ (ԳՈՎՏՅԱՆ) Ալեքսի ԿԵՕՎՃԵԱՆ Ալեքսի

GOVCIYAN Alexis (GÖVCIYAN)

Մանր ձեռնարկատիրության և արհեստների զարգացման ասպարեզի մասնագետ, հասարակական և քաղաքական

գործիչ: Փարիզ, Ֆրանսիա: Ծնվել է 1956թ. հոկտեմբերի 13–ին Կ.Պոլսում: Կարալիս և Սրբուհի Գովճյանների (Կեօվճեանների) որդին է: Ամուսնացած է Ֆրանսուազ Պելեքիսի հետ, զավակները՝ Միքայել, Երեմ, Աթաբու:

Ուսանել է Կ. Պոլսի Եսայան, ապա Մխիթարյան հայրերի վարժարաններում: Ավարտել է Փարիզի 9–րդ՝ Դոֆինի համալսարանի կառավարման և գործավարության բաժինը (1979թ.):

Եղել է Ֆրանսիայի արդյունաբերության, ֆինանսների և առևտրի նախարարության և Արհեստների պալատի Փարիզի բարձրագույն ինստիտուտի վարչական և ֆինանսական բաժնի տնօրեն (1990–91թթ.), ապա ընդհանուր քարտուղար (1991–95թթ.), այնուհետև ծառայողական բաժնի տնօրեն (1995–2000թթ.): 2000թ–ից այդ հաստատության գլխավոր տնօրենն է:

Հեղինակ է բազմաթիվ քաղաքական հոդվածների և փաստաթղթերի, Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման վերաբերյալ բազմաթիվ ելույթների, հոդվածների, հարցազրույցների: Հատկապես հիշարժան է նրա «Ապրիլի 24–ը՝ վկայություն 1915թ. Հայոց ցեղասպանությունը Ֆրանսիայի կողմից ճանաչելու մասին» գիրքը («Շերշ–Միդի» հրատ., 2003թ.):


Ֆրանսիական «Միություն հանուն ժողովրդավարության» կուսակցության քաղաքական բյուրոյի անդամ է: Անդամ է Մասնագիտական կրթության միջազգային շաբաթի ծրագրերի հանձնախմբի (սկսած 1998թ–ից), Արհեստավորների մասնագիտական կատարելագործման հիմնադրամի վարչական խորհրդի (սկսած 2004թ–ից), Էքսի–Մարսելի քաղաքական ուսումնասիրությունների ինստիտուտի կատարելագործման խորհրդի (2000թ–ից):

Եղել է Հայկական բարեգործական ընդհանուր միության Փարիզի և Իլ–դը–Ֆրանսի շրջանի նախագահը (1993–96թթ.) և Ֆրանսիայի մասնաճյուղի փոխնախագահը (1995–96թթ.), Սոցիալական օգնության հայկական ընկերության փոխնախագահը (1997թ–ից), Ֆրանսիայի «Ապրիլի 24» հանձնախմբի նախագահը (1998–2001թթ.): Ֆրանսիայի հայկական ընկերությունների

աշխատանքը համակարգող խորհրդի նախագահն է (սկսած 2005թ–ից): Հայոց եկեղեցու մշակութային միության անդամ է: «Հիշատակների Եվրոպա» (2001թ–ից) և «Մալվետերա–75» (1996թ–ից) ընկերությունների նախագահն է:

Արժանացել է Սենատի ակումբի անդամի և «Արժանիքների համար» շքանշանակիրների ֆրանսիական ընկերության անդամի կոչումներին: Պարգևատրվել է «Արժանիքների համար» ազգային շքանշանով (Ֆրանսիայի Սենատի նախագահի կողմից, 2001թ.), «Ակադեմիական դափնեապակով», Մտավորականների ֆրանսիական ընկերության արժաթե մեդալով, Արհեստների պալատի ոսկե մեդալով, Ֆրանսիայի Հանրապետության «Պատվո լեգիոնի» շքանշանով (Ֆրանսիայի Հանրապետության նախագահի կողմից, 2005թ.), Կենսագրական ընդգրկված է «Ով ով է Ֆրանսիայում» հրատարակության հատորներում:

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ԳՐԻԳՈՐՅԱՆ Գեղամ

GRIGORIAN Gegham

Օպերային երգիչ (տենոր), բեմադրիչ: Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստ, Լիտվայի վաստակավոր արտիստ, Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար և գլխավոր տնօրեն: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է Երևանում 1951թ. հունվարի 29–ին (հայրանունը՝ Միքայան): Ամուսնացած է, ունի 3 երեխա:

Երաժշտական կրթությունը ստացել է Երևանի Կոմիտասի անվան երաժշտանոցում: Կատարելագործվել է Միլանի (Իտալիա) «Լա Սկալա» օպերային թատրոնում:

Որպես օպերային երգիչ աշխատել է Վիլնյուսի օպերային թատրոնում (Լիտվա, 1980–88թթ.): Սանկտ Պետերբուրգում բնակված տարիներին հանդես է եկել Կիրովի անվան (Մարինյան) օպերային թատրոնում (սկսած 1989թ–ից), ինչպես նաև ելույթներ է ունեցել Մեծ թատրոնի (Մոսկվա) բեմում: Ներկայումս Երևանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավարն է և գլխավոր տնօրենը (սկսած 1999թ–ից):

Ելույթներ է ունեցել աշխարհի բազմաթիվ նշանավոր օպերային բեմերում՝ «Քովենտ Գարդենում» (Լոնդոն), Մոնտպելիեի օպերայում (Ֆրանսիա), «Լա Սկալա» օպերային թատրոնում (Միլան), Մոնտե Կառլոյի օպերայում (Մոնակո), «Օպերա դը Բաստիլյում» (Փարիզ), Վաշինգտոնի օպերայում (ԱՄՆ), «Կոնցերտգերոուում» (Ամստերդամ), «Լիցեա» թատրոնում (Բարսելոն), «Կոլոն» օպերային թատրոնում (Բուենոս Այրես) և այլն:

Նրա երգացանկն ընդգրկում է մոտ 50 օպերային դերերգ: Հիշարժան են Դոն Ալվարոյի (Վերդիի «Ճակատագրի ուժը»), Ռադամեսի (Վերդիի «Աիդա»), Պոլինի (Բելինիի «Նորմա»), Հերմանի (Չայկովսկու «Պիկովայա Դամա»), Բեգուխովի (Պրոկոֆևի «Պատերազմ և խաղաղություն»), Լենսկու (Չայկովսկու «Եվգենի Օնեգին») և այլ դերերգերի նրա կատարումները:

Իբրև գլխավոր բեմադրիչ Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում իրականացրել է Վերդիի «Տրավիատա» և «Տրոբատուր», Բիզեի «Կարմեն», Բելինիի «Նորմա» (2001թ.), Չոլիսայանի «Արշակ Երկրորդ», Հարությունյանի «Մայաթ Նովա» օպերաների, Մինկուսի «Դոն Զիշոտ» բալետի բեմադրությունները:

Արժանացել է Հայաստանի ժողովրդա-

կան արտիստի և Լիտվայի վաստակավոր արտիստի կոչումներին: Ի թիվս տարբեր երկրների բազմաթիվ պարզևների և մրցանակների, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի կողմից արժանացել է «Սուրբ Սահակ, Սուրբ Մեսրոպ» շքանշանի (Ս. Էջմիածին, 2006թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ԳՐԻԳՈՐՅԱՆ Ռուբեն

KRIKORIAN Ruben

Փիլիսոփա: Բուլղարիայի Հանրապետության Ազգային ժողովի ժողովրդական պատգամավոր: Փիլիսոփայական գիտությունների դոկտոր (Բուլղարիայի և Հայաստանի գիտությունների ակադեմիաներ), Բլագոևգրադի «Նեոֆիտ Ռիլսկի» հարավարևելյան համալսարանի մշակութային փիլիսոփայության դոցենտ, Քենթրիջի Կենսագրական դասակարգման ինստիտուտի պատվավոր պրոֆեսոր: Սոֆիա Բուլղարիա: Ծնվել է 1950թ. դեկտեմբերի 24-ին Պլովդիվում (Բուլղարիա): Օհանես (Հովհաննես) և Սաքենիկ Գրիգորյանների որդին է: Ամուսնացել է Էլկա Վոդեմիչարովա-Գրիգորյանի հետ (1974թ. Սոֆիա, Բուլղարիա), որդին՝ Յոհանես:

Ուսանել է Սոֆիայի Ս. Կլիմենտ Օբրիդսկու անվան պետական համալսարանում պատմություն և փիլիսոփայություն մասնագիտությամբ (1975-1979թթ.): Պաշտոնավարել է իբրև Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի Փիլիսոփայական և սոցիոլոգիական ուսումնասիրությունների միացյալ կենտրոնի մասնագետ-ուսումնասիրող և բաժնի վարիչ (1979-1989թթ.):

Եղել է Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի Փիլիսոփայական ուսումնասիրությունների ինստիտուտի ասպիրանտ, այնուհետև պաշտոնավարել է իբրև նույն հաստատության ղեկավար մասնագետ և փոխտնօրեն (1989-2005թթ.): Աշխատակցել է Մասնագիտական մենեջմենտի բարձրագույն ուսումնարանին (1992թ.): Տնօրենն է Մշակութային հարաբերությունների «ԻՍՏՐՕՍ» միջազգային ինստիտուտի (1991-2007թթ.), ինչպես նաև Հարավարևելյան «Նեոֆիտ Ռիլսկի» համալսարանին կից Եվրոպական ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի (1998-2007թթ.):

Հեղինակ է ավելի քան 50 գիտական հրատարակության հոդվածների, ուսումնասիրությունների և գրախոսականների: Հատկապես հիշարժան են նրա գրքերը՝ «Դուալիզմը բուլղարական և եվրոպական փիլիսոփայական մշակույթի պատմության մեջ» (1990թ.) և «Պավլիկյանությունը որպես մշակութաբանական երևույթ միջնադարում» (1995թ.): Չեկուցումներով հանդես է եկել բազմաթիվ միջազգային գիտաժողովներում:

Ընտրվել է Բուլղարիայի Հանրապետության 39-րդ (2001-2005թթ.) և 40-րդ (2005-2009թթ.) գումարումների Ազգային ժողովի ժողովրդական պատգամավոր: Եղել է Բուլղարիայի Հանրապետության Ազգային ժողովի Մարդու իրավունքների և կրոնական ազատությունների, ինչպես նաև Մշակութային հանձնախմբերի անդամ և Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդարանական խմբի համանախագահ (2001-2005թթ.): Իբրև 40-րդ գումարման Ազգային ժողովի պատգամավոր՝ անդամ է Մարդու իրավունքների և կրոնական գործերի և Քաղաքացիների բողոքների քննարկման հանձնախմբերի (սկսած 2005թ-ից): «Բուլղարիա-Հայաստան», «Բուլղարիա-Չիլի» խորհրդարանական խմբերի նախագահն է:

Ընտրվել է Բուլղարական փիլիսոփայական ընկերության երրորդ համաժողովի ղեկավար խորհրդի անդամ (1996-2001թթ.) և մենեջեր-տնօրեն (2001-2005թթ.): Հա-

րավարելյան Եվրոպայի փիլիսոփաների միության գլխավոր քարտուղարն է (2000թ-ից սկսած): «Էթնիկական և կրոնական հարաբերությունների խորհուրդ» հիմնադրամի նախագահն է (2000-2005թթ.): Բուլղարիայի Հանրապետության Նախարարների խորհրդին կից Էթնիկական և ժողովրդագրական հարցերի ազգային խորհրդի անդամ է (1999թ-ից սկսած): Բուլղարական թագավորական ինստիտուտի անդամ է (2004թ-ից սկսած):

Նախագահն է եղել Բուլղարիայի հայ հոգևոր և աշխարհիկ միությունների համազգային հանձնախմբի (1997-2005թթ.) և Հայ առաքելական եկեղեցու Բուլղարիայի թեմական խորհրդի (1999-2008թթ.): Եվրոպայի հայկական միությունների ֆորումի (Շվեյցարիա, Ժնև) վարչության անդամ է և Հարավարևելյան Եվրոպայի հայկական միությունների գործունեությունը համակարգող-խորհրդատու (1999-2007թթ.): Համաշխարհային հայկական կոնգրեսի գերագույն խորհրդի գործադիր հանձնախմբի անդամ է՝ փոխնախագահի իրավասությամբ:

Պարգևատրվել է Բուլղարիայի Հանրապետության «1300 տարի, Բուլղարիա» հոբելյանական շքանշանով: Երեք անգամ արժանացել է Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի «Գերազանցության նշան» շքանշանի: Բուլղարական փիլիսոփայական միության և Բուլղարական սոցիոլոգիական միության կողմից պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշաններով: Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն անձամբ նրան է հանձնել «Ս. Սահակ, Ս. Մեսրոպ» շքանշան (2001թ.): Ոսկե մեդալների է արժանացել ՀԲԸՄ և «Հայկական տեղեկատվական քիզնես ֆորումի» կողմից (Վառնա): 2002թ-ին ստացել է «Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակ» հոբելյանական շքանշան:

2005թ. Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաթերթի» տվյալների հիման վրա, խմբագրված հատորի հեղինակի կողմից



ԳՐԻԳՈՐՅԱՆ Սամվել

GRIGORIAN Samvel

Բնական երևույթների մեխանիկայի մասնագետ: Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է 1929թ. մարտի 18-ին (ըստ փաստաթղթի՝ 1930թ-ի) Լեռնային Դարաբաղի Հաղորթ ավանում: Սամվել Տեր-Գրիգորյանի և Սիրան Մանվելյանի որդին է:

Գերազանցությամբ («Ոսկե մեդալով») ավարտելով միջնակարգ դպրոցը՝ ուսանել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետում (1948-53թթ.): Նույն հաստատության ասպիրանտուրան ավարտելուց հետո (1953-56թթ.) պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (1957թ.): 1965թ-ին Մոսկվայի պետական համալսարանի Մեխանիկայի ինստիտուտում նրան շնորհվել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Ստացել է Մոսկվայի պետական համալսարանի պրոֆեսորի (1968թ.) և վաստակավոր պրոֆեսորի (2001թ.) կոչումներ:

Պաշտոնավարել է իբրև Մոսկվայի պետական համալսարանի մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետի կրտսեր գիտաշխատող (1956-59թթ.), ապա նույն համալսարանի Մեխանիկայի ինստիտուտի ավագ գիտաշխատող (1959-62թթ.), այնուհետև փոխտնօրեն գիտական աշխատանքների գծով (1962-81թթ.) և Բնական երևույթների մեխանիկայի բաժնի վարիչ (1981-92թթ.): Իբրև տնօրեն ղեկավարել է Մեխանիկայի

ինստիտուտը (1992–2001թթ.): Սկսած 2001թ–ից Բնական երևույթների մեխանիկայի լաբորատորիայի վարիչն է: Համատեղությամբ դասավանդել է Մոսկվայի պետական համալսարանում (սկսած 1968թ–ից), Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում (1958–59թթ.): Դասախոսություններով հանդես է եկել Պեկինի, Ռիսանի, Սիանի, Դալյանի (Չինաստան), Բերլինի (ԱՄՆ), Հայֆայի, Բեեր–Շևայի (Իսրայել), Պրահայի (Չեխիա), Վարշավայի (Լեհաստան) և այլ համալսարաններում:

Հեղինակ է ավելի քան 300 գիտական հոդվածի, 70 գյուտի (արտոնագրի) և 5 մենագրության՝ հոծ միջավայրերի, բնական երևույթների (այդ թվում երկրաբանական և աստղագիտական), նավթի և գազի արդյունահանման, կենսաբանական ու բժշկական մեխանիկայի, նոր նյութերի սինթեզի, սպորտի բնագավառներում: Եղել է մոտ 40 թեկնածուական և 10 դոկտորական ատենախոսությունների գիտական ղեկավար:

Ընտրվել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից–անդամ (1987թ.), Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս (2000թ.), Տիեզերագնացության միջազգային ակադեմիայի թղթակից–անդամ (1972), ապա անդամ (1976թ.): Անդամ է Ռուսաստանի հրթիռային և հրետանային գիտությունների ակադեմիայի (1993թ.), Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի (1993թ.), Ուկրաինայի ճարտարագիտական ակադեմիայի (1995թ.), Ինֆորմատիկացիայի միջազգային ակադեմիայի (1995թ.), Աշխարհի ժողովուրդների հոգեկան միասնության ակադեմիայի (1999թ.), Ռուսաստանի ճարտարագիտական ակադեմիայի (2005թ.): «Կիրառական մաթեմատիկա և մեխանիկա» և «Կիրառական մաթեմատիկա և տեխնիկական ֆիզիկա» գիտական հանդեսների խմբագրական կազմի անդամ է: Անդամ է Ռուսաստանի տեսական և կիրառական մեխանիկայի ազգային հանձնախմբի և Կիրառական մաթեմատիկայի և մեխանիկայի միջազգային միության: Եղել է Խորհրդային Միության օլիմպիական կոմիտեի պատվավոր անդամ, այժմ Ռուսաստանի Սահնակի մարզական միության պատվավոր նախագահն է:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի անդամ է (սկսած 2000թ–ից): Հիմնադիր–նախագահն է Ռուսաստանի հայկական համայնքների միության: Նախագահն է «Մոսկվայի հայերի շրջանային ազգային–մշակութային ինքնավարություն» կազմակերպության: Հայերի համաշխարհային ասամբլեայի հիմնադիր անդամներից է և այդ կազմակերպության փոխնախագահը գիտության գծով: Եվրոպայի հայկական համայնքների ֆորումի համահիմնադիր–անդամ է: Ռուսաստանի հայերի միության և Միջազգային հայկական կոնգրեսի խորհրդի անդամ է: Ընտրվել է Հայաստանի Հանրապետության Առաջին գումարման Ազգային ժողովի պատգամավոր (1991թ.): Մոսկվայի կառավարության ազգամիջյան հարաբերությունների խորհրդի մշտական անդամ է: Ռուսաստանի ազգային միավորումների կոնգրեսի հիմնադիրներից է և նրա նախագահության անդամ:

Պարգևատրվել է «Չինաստանի և Խորհրդային Միության բարեկամություն» մեդալով (Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, 1960թ.), Լավրենտևի անվան մրցանակով և ոսկե մեդալով (ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի կողմից, 1986թ.), Չալիզինի անվան մրցանակով (ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի կողմից, 1970թ.), Լոմոնոսովի անվան մրցանակով (Մոսկվայի պետական համալսարանի կողմից, 1967թ.), ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի մրցանակով (1985թ.), Ուկրաինայի պետական մրցանակով (1985թ.), Ֆեդորովայի անվան մրցանակով (2004թ.), «Գիտության և արվեստների ասպետ» կոչմամբ և ոսկե մեդալով (Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի կողմից, 2000թ.), «Արծաթե խաչով» (Ռուսաստանի հայերի միության կողմից, 2002թ.), Մոսկվայի ազգային քաղաքականության և միջշրջանային կապերի կոմիտեի «Ոսկե շքանշանով» և «Մոսկվա՝ 850–ամյակ» մեդալով (Մոսկվայի կառավարության կողմից):

2005թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյունների տվյալների հիման վրա



ԳՐԻԳՈՐՅԱՆ Սուսաննա

GREGORIAN Susanna

Ջութակահար–մենակատար: Բյուլն, Գերմանիա: Միջազգային մրցույթների դափնեկիր: Ծնվել է 1968թ–ի հունվարի 1–ին Երևանում: Սամվել և Մարինե Գրիգորյանների դուստրն է:

Ուսանել է Մոսկվայի Չայկովսկու անվան երաժշտանոցում (Մոսկվա, 1986–91թթ.)՝ այն ավարտելով «Գերագնացության վկայականով»: Ուսումը շարունակել է նույն հաստատության ասպիրանտուրայում (1991–93թթ.): Կատարելագործվել է Բյուլնի երաժշտանոցում (Գերմանիա, 1993–98թթ.): Վարպետության կարգի վկայագրերի է արժանացել Լոզանի երաժշտանոցի (Շվեյցարիա, 1994 և 1997թ.), Բադեն–Բադենի Կարլ Ֆրեշ ակադեմիայի (Գերմանիա, 1995 և 1997թ.), Գաստայգի միջազգային երաժշտական ակադեմիայի (Մյունխեն, 1995թ.), Երաժշտության և դերասանական արվեստի եվրոպական ակադեմիայի (Մոնտեպուսիանո, Իտալիա, 2003թ.), Պրահայի Մոցարտի անվան ակադեմիայի (Չեխիա, 1993թ.) կողմից:

Իբրև առաջին ջութակ համերգներով հանդես է եկել Ազգերի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբում (1992–2000թթ.): Բազմիցս հրավիրվել է Լոնդոնի, «Բի–Բի–Սի»–ի, «Քոլմենտ Գարդեն Ռոյալ Օպերա Հաուզի» և այլ հանրահայտ սիմֆոնիկ նվագախմբերի կողմից: Համերգային շրջագայություններ է ունեցել Ճապոնիայում, Ավստրալիայում, Կանադայում, Իռլանդիայում, Իսպանիայում, Ֆրանսիայում, Նոր Զելանդիայում, Ֆինլանդիայում, ԱՄՆ–ում, Ռուսաստանում: Նրա կատարումները ձայնագրվել են և հեռարձակվել շվեյցարական «Ռոմանդ» ռադիոկայանի,

Արևմտագերմանական ռադիոյի, «Ռադիո Մոսկվա» և «Բի–Բի–Սի» ռադիոկայանների կողմից:

Հիշարժան են նրա՝ Մոցարտի 3–րդ և 5–րդ ջութակի կոնցերտների, Ա. Շնիտկեի «Մոց–Արտ» ստեղծագործության կատարումները Սոֆիայի մենակատարների և Ազգերի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբերի մասնակցությամբ (խտասկավառակ, 2002թ.), ինչպես նաև Ա. Խաչատրյանի, Է. Միրզոյանի, Կոմիտասի, Է. Բաղդասարյանի ստեղծագործությունների կատարումները՝ գրված ջութակի և դաշնամուրի համար (դաշնամուր՝ Շ. Քոչարյան, խտասկավառակ, 2004թ.)

Արժանացել է Բադեն–Բադենի Կարլ Ֆրեշ ակադեմիայի Մոցարտի անվան մրցանակի (Գերմանիա, 1997թ.), Քրիստիան Ֆերայի և Պիեր Բարբիզեի հիշատակին նվիրված Մարսելի միջազգային մրցույթի առաջին մրցանակի (Ֆրանսիա, 1997թ.), «Վիտտորի–մրցույթի» (ջութակի կատարումներ նվագախմբի մասնակցությամբ) երրորդ մրցանակի (Իտալիա, 1999թ.):

2005թ. Գայկական կենսագրական կենտրոնի «Գարգաթերի» տվյալների հիման վրա, խմբագրված հատորի հեղինակի կողմից



ԳՐԻԳՈՐՅԱՆ Վարդան

GREGORIAN Vartan

Պատմաբան, հասարակագետ, վարչական և հասարակական գործիչ: Փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր: Նյու Յորքի Կարնեգի հաստատության նախագահ: Արվեստների և գիտությունների ամերիկյան ակադեմիայի անդամ: Նյու Յորք, ԱՄՆ: Ծնվել է Թավրիզում (Իրան) 1934թ. ապրիլի 8–ին: Սամվել Գրիգորյանի և Շուշանիկ

Միրզայանի որդին է: Ամուսնացած է Կլար Ռուսսեյի հետ (1960), երեխաները՝ Վահե, Բաֆֆի, Դարեն:

Նախնական կրթությունը ստացել է Իրանում, այնուհետև ուսումը շարունակել է Լիբանանում՝ ավարտելով հայկական վարժարան (1955թ.): Գալով Ամերիկայի Միացյալ Նահանգներ (1956թ.)՝ ուսանել է Ստանֆորդի համալսարանում, որտեղ 1958թ-ին նրան շնորհվել է գիտության պսակավորի, իսկ 1964-ին՝ փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան պատմության և հասարակագիտության ասպարեզում:

Իբրև օգնական-պրոֆեսոր, իսկ այնուհետև իբրև պրոֆեսոր Եվրոպայի և Միջին Արևելքի երկրների պատմություն է դասավանդել Ման Ֆրանցիսկոյի պետական բարձրագույն վարժարանում (1962-68թթ.), ինչպես նաև Կալիֆոռնիայի (Լոս Անջելոս, 1968թ.) և Տեխասի (Օստին, 1968-72թթ.) համալսարաններում: 1972-80թթ. Հայաստանի և Կովկասի պատմություն է դասավանդել Պենսիլվանիայի համալսարանում (Ֆիլադելֆիայի նահանգ): Նույն համալսարանում հիմնադրել և ղեկավարել է Գիտության և արվեստների մասնաճյուղը (1974-78թթ), պաշտոնավարել է իբրև համալսարանի փոխնախագահ և գլխավոր տեսուչ (1978-81թթ.): Եղել է Նյու Յորքի հանրային գրադարանի նախագահը (1981-89թթ.), միաժամանակ դասավանդել է Նյու Յորքի սոցիալական հետազոտությունների բարձրագույն դպրոցում և Նյու Յորքի համալսարանում (1984-89թթ.): 1989թ. ընտրվել է Բրաունի համալսարանի նախագահ (Պրովիդենս): 1997թ-ից Նյու Յորքի Կարնեգի հաստատության նախագահն է:

Հեղինակ է «Ժամանակակից Աֆղանստանի առաջացումը (1880-1946թթ.)» (1969թ), «Ճանապարհ դեպի տուն, իմ կյանքը և տարիները» (ինքնակենսագրական, 2003թ.), «Իսլամ. խճանկար՝ ոչ միաձույլ» (2003թ.) գրքերի:

«Աարնոն Դայմոնդ» հիմնարկության (1990-97թթ.), «Բրուկլինգս» ինստիտուտների (1994թ-ից սկսած), Կրթության միջազգային ինստիտուտի (սկսած 1989

թ-ից), Մարդկային իրավունքների միջազգային լիգայի (1984-97թթ.), Չարգացման հետազոտությունների ինստիտուտի (1987թ-ից սկսած), Ջ. Պոլ Գետտիի բարեգործական հաստատության (սկսած 1988թ-ից) և այլ հաստատությունների տնօրենների խորհուրդների անդամ է: Նախագահն է Բարձրագույն ուսումնական հաստատությունների և համալսարանական կենտրոնների խորհրդի (Նյու Յորք, 1894-90թթ.): Ժամանակակից արվեստի թանգարանի հոգաբարձուների խորհրդի նախագահն է (Նյու Յորք, սկսած 1994թ-ից):

Անդամ է Արվեստների և գիտությունների ամերիկյան ակադեմիայի, Ամերիկյան փիլիսոփայական ընկերության, Ամերիկյան հնագիտական ընկերության, Ամերիկյան պատմաբանների միության, Գրադարանային հաստատությունների միջազգային միության, Սլավոնական հետազոտությունների զարգացման ընկերության, Միջինարևելյան հետազոտությունների միության, «Բրիտանիկա» հանրագիտարանի խորհրդի և այլն:

Արժանացել է ավելի քան հիսուն պատվավոր կոչման ու 60 պարգևի՝ միջազգային, պետական ու հասարակական կազմակերպությունների կողմից: Նրա ստացած պարգևների թվում են ԱՄՆ-ի «Ազատություն» նախագահական մեդալը (ԱՄՆ-ի նախագահ Ջ. Բուշի կողմից, 2004թ.), Ֆրանսիայի «Արվեստներին և գրականությանը ծառայության համար» շքանշանը (1986թ.), Իտալիայի «Հանրապետության պատվո ասպետի» շքանշանը և Արտաքին գործերի նախարարության մշակութային արժաթե շքանշանը (1977թ.), Պորտուգալիայի «Հենրիխի» կառավարական պատվո մեծ շքանշանը (1995թ.), Սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի ոսկե շքանշանը (1985թ.), Ավստրիայի «Պատվո ոսկե շքանշանը» (Վիեննա, 1974), Հասարակական գիտությունների ազգային շքանշանը (1997թ., ԱՄՆ-ի նախագահ Բիլնտոնի կողմից), Գիտությունների և արվեստների ամերիկյան ակադեմիայի «Ոսկե շքանշանը»՝ արվեստներին մատուցած ծառայությունների համար (1989թ.) և այլն:

Գործուն մասնակցություն է ունեցել հայ հասարակական կյանքին: Մասնակցել է Հայաստանում կազմակերպված «Հայրենիք-սփյուռք» երկրորդ համաժողովին (Երևան, 2002թ.): Հայաստանի փիլիսոփայական ընկերության պատվավոր անդամ է (Երևան, 2002թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



**ԳՈՒՅՈՒՄՋՅԱՆ Տիգրան
ԳՈՒՅՈՒՄՋԵԱՆ Տիգրան**

KOUYMJIAN Dickran

Հայագետ, արևելագետ: Փիլիսոփայության դոկտոր հայագիտության ասպարեզում, Կալիֆոռնիայի համալսարանի հայագիտական ուսումնասիրությունների ծրագրի տնօրեն, պրոֆեսոր: Ֆրեզնո, ԱՄՆ: Ծնվել է 1934թ-ի հուլիսի 6-ին Տուլսեայում (Ռուսինիա): Թորոս Գույումջյանի և Ջաբել Գալուստյանի որդին է: Ամուսնացած է Անժել Կապոյանի հետ:

Ուսանել է Վիսկոնսինի համալսարանում՝ ստանալով գիտության պսակավորի (բակալավրի) գիտական աստիճան եվրոպական մշակույթի պատմության ասպարեզում (Մեդիսոն, 1957թ.): Բեյրութի ամերիկյան համալսարանում նրան շնորհվել է արվեստների մագիստրոսի գիտական աստիճան արաբական մշակույթի ուսումնասիրության ասպարեզում (Լիբանան, 1957-61թթ.): Այնուհետև Կոլումբիայի համալսարանի Մերձավոր և Միջին Արևելքի երկրների լեզուների և գրականության մասնաճյուղում արժանանացել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճանի հայագիտության ասպարեզում (Նյու Յորք, 1969թ.):

Պաշտոնավարել է Բեյրութի ամերիկյան համալսարանում իբրև Եվրոպայի պատմության և արևմտյան քաղաքակրթության դասավանդման հրահանգիչ (Լիբանան, 1959-61թթ.): Արևմտյան և արևելյան քաղաքակրթություն է դասավանդել Կոլումբիայի համալսարանի անգլիական բաժնում (Նյու Յորք, 1961-64թթ.): Աշխատել է իբրև Ամերիկյան հեղինակների միության գրական գործակալության տնօրեն (Նյու Յորք, 1965-67թթ.): Եղել է մերձավորարևելյան պատմության և քաղաքակրթության օգնական-պրոֆեսոր, այնուհետև Արաբական հետազոտությունների կենտրոնի տնօրենի տեղակալ Կահիրեի ամերիկյան համալսարանում (Եգիպտոս, 1967-71թթ.): Բեյրութի Հայկազյան քոլեջում ղեկավարել է հայագիտական բաժինը և դասավանդել հայոց պատմություն (Լիբանան, 1971-72թթ.): Բեյրութի ամերիկյան համալսարանի Պատմության և մշակույթի ուսումնասիրության բաժնում դասավանդել է հայոց պատմություն, ինչպես նաև մերձավորարևելյան երկրների մշակույթի պատմություն (1971-76թթ.)՝ միաժամանակ կատարելով արվեստի պատմության բակալորիական ուսումնական ծրագրերի համակարգողի պարտականությունները (Լիբանան, 1974-75թթ.): Իբրև մերձավորարևելյան երկրների պատմության և արվեստի պրոֆեսոր դասավանդել է Փարիզի ամերիկյան համալսարանում (Ֆրանսիա, 1976-78թթ.): Եղել է Յունեսկո-ի Պատմական հուշարձանների և արվեստի կոթողների պահպանության բաժնի խորհրդական, ինչպես նաև Լիբիայի Արաբական Հանրապետության հնագիտական արժեքների պահպանության պետական բաժանմունքի խորհրդական (Փարիզ, 1976թ.): Հիմնադրել է «Հայ շարժում» ուսանողական թերթը (Ֆրեզնո, 1979թ.): Աշխատակցել է նաև Ժամանակակից հայկական հետազոտությունների և վավերագրերի «Չորյան» հաստատությանը (Քեմբրիջ, 1985թ.): Դասախոսություններով հանդես է եկել Երևանի պետական համալսարանի օտար լեզուների և գրականության ամբիոնում (Հայաստան, 1987թ.): Փարիզի համալսարանի Արևելյան լեզուների և քաղա-

քակրթության ազգային ինստիտուտում ղեկավարել է հայկական բաժինը և հայոց լեզվի ամբիոնը (Ֆրանսիա, 1988-91թթ.): Կալիֆոռնիայի համալսարանում դասավանդել է իբրև Վիլյամ Սարոյանի անվան պրոֆեսոր հայագիտության ասպարեզում (1996-97թթ.): 1977թ-ից սկսած Կալիֆոռնիայի պետական համալսարանում պաշտոնավարում է իբրև Հայագիտական կենտրոնի տնօրեն, հայագիտության, նաև արվեստների և քաղաքակրթությունների ուսումնական ծրագրերի համակարգող: Հայկ և Իզաբել Բերբերյանների անվան պրոֆեսոր է (Ֆրեզնո, ԱՄՆ):

Հեղինակ է ավելի քան 120 գիտական հոդվածի և մենագրության, 80-ից ավելի գիտական զեկուցման՝ ներկայացված միջազգային գիտաժողովներում: Աշխատությունները վերաբերում են հայագիտությանը, բյուզանդագիտությանը, արևելագիտությանը, արևելյան և արևմտյան քաղաքակրթությունների պատմության և արվեստների ուսումնասիրությանը, Հայոց ցեղասպանությանը, Վիլյամ Սարոյանի գրական ժառանգության ուսումնասիրությանը: Հատկապես հիշարժան են «Հայկական հին ձեռագրերի արվեստ» (համահեղինակությամբ՝ Միքայել Ստոնի և Հեննինգ Լեհմանի) աշխատությունը՝ հրատարակված Արիոս համալսարանի հրատարակչության կողմից (Դանիա, 2002թ.), «Հայկական արվեստ» («Գալուստ Գյուլբենկյան» հաստատություն, 1992թ.), «Հայկական արվեստի ցանկեր» (հայկական ճարտարապետական հուշարձանների և հին ձեռագրերի համակարգչային տեղեկատու) աշխատությունները: Կազմակերպիչն է Սասունցի Դավիթ (1979թ.), Մովսես Խորենացի (1980թ.), Վիլյամ Սարոյան (1981, 1996, 1999թթ.), Հայկական ճարտարապետություն (1991թ.), Ադամայի կոտորածը 1909թ-ին (1999թ.) գիտաժողովների: Ընդգրկվել է «Հայկական հանդեսի» (Բոստոն, 1977թ.), «Հայագիտական հանդեսի» (Փարիզ, 1978թ.), «Արարատ» գրական հանդեսի (Նյու Յորք, 1978թ.), «Հայագիտական ամսագրի» (Զեմբրիջ, 1986թ.), «Հայկական ճարտարապետության վավերագրեր» հանդեսի (Միլան, 1986-96թթ.) և

«Հայագիտական ընկերության ամսագրի» (Միչիգանի նահանգ, 1992թ.) խմբագրական կազմում: Եղել է Հայագիտական ընկերության հիմնադիր-անդամ (1974թ-ից)՝ ընդգրկվելով այդ կազմակերպության վարչական խորհրդի կազմում (1974-75, 1980-81, 1984-86, 1992-95, 1998-2000թթ.), նաև նախագահ (1984-86 և 1992-94թթ.): Ընտրվել է Հայագիտության միջազգային ընկերության ղեկավար հանձնախմբի անդամ (1990-93թթ., հիմնադիր անդամ է 1973թ-ից): Համահիմնադիրն է Միջինարևելյան միջնադարը ուսումնասիրողների (1989թ.) և Միջինարևելյան հետազոտությունների (1989թ.) ընկերությունների: Անդամակցել է Ամերիկյան պատմական ընկերությանը (1971-86թթ.), Ամերիկյան դրամագիտական ընկերությանը (սկսած 1965թ-ից), Ամերիկյան արևելյան ընկերությանը (1966-90թթ.), Հայկական դրամագիտական ընկերությանը (սկսած 1973թ-ից), Իրանական արվեստի և հնագիտության միջազգային ընկերությանը (1972-79թթ.), Միջնադարի ուսումնասիրության ամերիկյան ակադեմիային (1969-76թթ.), «Ֆի կապա ֆի» ընկերությանը (սկսած 1995-ից), Արևելյան դրամագիտական ընկերությանը (1975-78թթ.), Ասիական ընկերությանը (սկսած 1978-ից) և «Հայագիտական հանդեսի» ընկերությանը (Փարիզ, սկսած 1978-ից):

Արժանացել է Կարնեգի հաստատության հասարակագիտական մրցանակի՝ Կոլումբիայի համալսարանում արևելյան քաղաքակրթության ասպարեզում կատարած ուսումնասիրությունների համար (Նյու Յորք, 1964թ.), Կահիրեի ամերիկյան համալսարանի ակնառու պրոֆեսորի կոչման (Եգիպտոս, 1970թ.), Հակոբ Գևորգյանի անվան մերձավորարևելյան արվեստի և քաղաքակրթության պատվավոր դասախոսի կոչման՝ Նյու Յորքի համալսարանում (1979թ.), Ազգային նվիրաբերության հիմնադրամի մրցանակի՝ Վիլյամ Սարոյանի արխիվը Փարիզից Ֆրեզնո տեղափոխելու համար (Կալիֆոռնիա, 1981-82թթ.), Հետազոտական շնորհի՝ հայկական արվեստի ստեղծագործությունների համակարգչային դասակարգման համար (Ֆրեզնո,

1992թ.), Բերտա և Ջոն Կարապետյանների բարեգործական հիմնադրամի շնորհների (1993-99թթ.), Ազգային նվիրաբերության հիմնադրամի շնորհի՝ հայ-հունական պայրուսների ուսումնասիրության համար (1995թ.), Հայագիտական հետազոտությունների ընկերության պատվավոր անդամի կոչման (1995թ.), Կաթողիկոսական կոնդակների՝ Գարեգին Ա և Արամ Ա կաթողիկոսների կողմից (1995թ.), «Ս. Սահակ, Ս. Մեսրոպ» շքանշանի՝ շնորհված Գարեգին Ա կաթողիկոսի կողմից (Ս. Էջմիածին, 1996թ.), հայագիտությանը մատուցած ծառայությունների համար, Ֆրեզնոյի «Ֆի կապա ֆի» հաստատության սահմանած «Ամերիկայի ակնառու գիտնականի» պատվավոր մրցանակի (1998թ.), Կենտրոնական Վալիի հայկական ազգային հանձնախմբի «Տարվա մարդը» պատվավոր կոչման (2000թ.), Հայ ուսանողական միության Արթուր Դադյան մրցանակի (2003թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ԳՈՒՐԶԱԴԻԱՆ Գրիգոր

GURZADIAN Grigor

Աստղագետ: Տիեզերական աստղագիտության հիմնադիրներից մեկը: Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի անդամ: Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է 1922թ. հոկտեմբերի 15-ին Բաղդատում: Որդին՝ Վահագն Գուրզադյանը մույնպես աստղագետ է:

Ուսանել է Երևանի պետական պոլիտեխնիկական ինստիտուտում՝ այն ավարտելով 1944թ-ին: Սովորել է Հայկա-

կան ԽՍՀ գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրայում՝ գիտական հետազոտություններ իրականացնելով ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի կողմից Բյուրականում ստեղծվող աստղադիտարանում, ուր պաշտպանել է քեկնածուական (1948թ.), ապա դոկտորական ատենախոսություն (1955թ.)՝ ստանալով ֆիզիկամաթեմատիկական գիտությունների քեկնածուի և դոկտորի գիտական աստիճաններ, պրոֆեսորի կոչում (1955թ.):

Եղել է Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի Բյուրականի աստղադիտարանի բաժնի վարիչ (1947-69թթ.), այնուհետև «Աստրո» հատուկ նախագծային գրասենյակի ղեկավար (1969-77թթ.): Հիմնել և ղեկավարել է Տիեզերական աստղագիտության լաբորատորիան, ապա ինստիտուտը (Գառնի, 1977-2002թթ.): «Տեսական աստղագիտություն» է դասավանդել Երևանի պետական համալսարանում (1947-78թթ.) և «Ճշգրիտ մեխանիկա» Երևանի պետական պոլիտեխնիկական ինստիտուտում (1978-92թթ.): «Գալակտիկա» փակ բաժնետիրական ընկերության նախագահն է (2006թ-ից սկսած):

Հեղինակ կամ համահեղինակ է մոտ 200 գիտական հոդվածի, մենագրությունների, հեղինակային իրավունքի վկայագրերի: Հիշարժան են նրա հեղինակած «Ռադիո-աստղագիտություն» (1956թ.), «Մոլորակային միգամածություններ» («Նաուկա», 1962թ. և «Գորդոն ընդ Բրիչ», 1970թ.), «Բռնկվող աստղեր» («Նաուկա», 1973 և «Պերգանոն», 1980թ.), «Աստղային քրոմոսֆերաներ» («Նաուկա», 1984թ.), «Մոլորակային միգամածությունների ֆիզիկական և դինամիկական» («Նաուկա», 1988թ. և «Սպրինգ», 1997թ.), «Միջնոլորակային թռիչքների տեսությունը» («Գորդոն ընդ Բրիչ», 1996թ.), «Տիեզերքի դինամիկական» («Ֆրանսիս և Թեյլոր», 2002թ.) աշխատությունները: Տիեզերական աստղագիտության հիմնադիրներից է: Նախագծել և ստեղծել է առաջին տիեզերական աստղադիտարանները՝ «Օրիոն 1» (1971թ.) և «Օրիոն 2» (1973թ.): «Սոլուզ» տիեզերանավի վրա տեղադրված աստղադիտակներով ստացել է հազարավոր նորահայտ

աստղերի սպեկտրներ, մոլորակային մի-
գամաձուլումների առաջին ուլտրամա-
նուշակագույն սպեկտրոգրաման, առաջին
երկֆոտոն առաքման սպեկտրը միգամա-
ձուլումներից և այլն: Գառնիում՝ Տիեզե-
րական աստղագիտության ինստիտու-
տում հիմնադրել է «Տիեզերագնացության
քանգարան» (2001թ.):

Հայաստանի Հանրապետության գի-
տությունների ազգային ակադեմիայի ան-
դամ է (սկսած 1986թ-ից, քոթակից-ան-
դամ՝ 1965-86թթ.): Միջազգային աստղա-
գիտական միության անդամ է:

Հայտնի է նաև որպես նկարիչ, Հայաս-

տանի նկարիչների միության անդամ է: Հե-
ղինակ է տիեզերքի, կյանքի և արվեստի
վերաբերյալ փիլիսոփայական խորհրդա-
ծությունների բազմաթիվ գրքերի (մոտ 20),
հոդվածների, ակնարկների («Մի սիրո
պատմություն», «Տիեզերքը ափի մեջ»,
«Մի կում ջուր», «Կոսմիկական կատաստ-
րոֆա» և այլն):

Արժանացել է Հայաստանի գիտության
վաստակավոր գործչի կոչման (1975թ.):
Պարգևատրվել է ԽՍՀՄ «Պատվո նշան»
շքանշանով:

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների
տվյալների հիման վրա



ԴԱԲԱԴ Սիիրան

DABAG Mihran

Պատմաբան, հասարակագետ, քաղա-
քագետ: Փիլիսոփայության դոկտոր, պրո-
ֆեսոր: Բոխումի համալսարանի Սփյուռքի
և ցեղասպանության ուսումնասիրություն-
ների ինստիտուտի տնօրեն: Բոխում, Գեր-
մանիա: Ծնվել է 1944թ-ին Դիարբեքիրում
(Թուրքիա):

Ուսանել է Բոննի և Բոխումի համալսա-
րաններում՝ մասնագիտանալով պատմու-
թյան, հասարակագիտության և քաղաքա-
կան գիտությունների ասպարեզում:

Հիմնադիրն ու տնօրենն է Բոխումի հա-
մալսարանի Սփյուռքի և ցեղասպանու-
թյան ուսումնասիրությունների ինստի-

տուտի: «Ցեղասպանության ուսումնասի-
րություններ» ամսագրի գլխավոր խմբա-
գիրն է:

Հեղինակ է բազմաթիվ հոդվածների՝
Հայոց ցեղասպանության, այլ ցեղասպա-
նությունների, գաղութայնացման, համաշ-
խարհայնացման և քաղաքագիտության
այլ հիմնահարցերի գաղափարաբանա-
կան-փիլիսոփայական համակողմանի
վերլուծության վերաբերյալ, որոնք հրա-
տարակված են գիտական հանդեսներում
և գերմանական պարբերական մամուլում:
Համահեղինակ է մի շարք գրքերի, այդ
թվում «Օտարի ինքնությունը» (Կ.Պլատի
հետ, Բոխում, 1993թ.), «20-րդ դարի կոլեկ-
տիվ ուժի կառուցվածքը» (Կ.Պլատի հետ,
«Ցեղասպանությունը և ժամանակակից
տենդենցները» մատենաշար, հ.1, 1998թ.),
«Գաղութայնացում՝ գաղութային քաղա-
քականություն և ցեղասպանություն» (Հ.
Գրունդերի և Ու. Կետելտենի հետ, «Ցե-
ղասպանությունը և ժամանակակից տեն-
դենցները» մատենաշար, հ.2, 2004թ.) «Աշ-
խարհի հավանական կատարելագործու-
մը» (Կ.Պլատի հետ, Մյունխեն, 2006թ.) և
այլն:

Պարգևատրվել է Ֆրանց Վերֆելի ան-
վան մրցանակով՝ մարդկային իրավունք-
ների պաշտպանության համար (2003թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների
տվյալների հիման վրա



**ԴԱՄԱԴՅԱՆ Ռայմոնդ
ՏԱՄԱՏԵԱՆ Ռեյմոնդ**

DAMADIAN Raymond

Կենսաֆիզիկոս, գյուտարար (բժշկու-
թյան մեջ կիրառվող մագնիսական արձա-
գանքման պատկերման սարքի հեղինակ),
«Ֆոնար» կորպորացիայի հիմնադիր-նա-
խագահ: Բժշկագիտության դոկտոր: Մել-
վիլ, Նյու Յորք: Ծնվել է 1936թ. մարտի
16-ին Ֆորեստ Հիլսում (Նյու Յորքի նա-
հանգ, ԱՄՆ): Մեծ եղեռնից փրկված և
1915թ. ԱՄՆ-ում ապաստանած Վահան
Գևորգի Դամադյանի (Տամատյանի,
ծնված Կեսարիայում) որդին է: Ամուսնա-
ցել է Դոննա Տերրիի հետ, ունի երկու որդի
և մեկ դուստր:

Ուսանել է Վիսկոնսինի համալսարա-
նում՝ ստանալով մագիստրոսի գիտական
աստիճան մաթեմատիկայի բնագավառում
(1956թ.): Նյու Յորքի Ալբերտ Էյնշտեյնի
անվան բժշկական բարձրագույն քոլեջում
ստացել է բժշկագիտության դոկտորի կո-
չում (1960թ.): Հետդոկտորական գիտական
հետազոտությունները շարունակել է նախ
նեֆրոլոգիայի բնագավառում, Վիսկոնսի-
նի համալսարանի Բժշկագիտական
բարձրագույն դպրոցում, ապա կենսաֆի-
զիկայի բնագավառում, Հարվարդի համալ-
սարանի Բժշկագիտական բարձրագույն
դպրոցում (1960-65թթ.):

Իբրև սպա ծառայել է ԱՄՆ-ի ռազմա-

դային ուժերում (1965-67թթ.): Պաշտոնա-
վարել է Նյու Յորքի պետական համալսա-
րանի Դաուստեյտի բժշկական կենտրո-
նում իբրև կենսաֆիզիկոս (1967-78թթ.):
Հիմնադրել է «Ֆոնար» ընկերությունը, որն
արտադրում է բժշկական ախտորոշման
համար լայն կիրառում ստացած մագնի-
սական արձագանքման պատկերման
սարքեր (Մելվիլ, Նյու Յորք, սկսած՝
1978թ-ից): Այդ հիմնարկության գլխավոր
գործադիր տնօրենն է և բաժնետիրական
ընկերության նախագահը:

Հեղինակ է մեծ թվով գիտական հոդվա-
ծների և 40 արտոնագրված գյուտի: Հատ-
կապես հիշարժան են նրա «Ուռուցքների
հայտնաբերումը մագնիսական արձա-
գանքման միջոցով» հոդվածը, տպագրված
«Սայնս» («Գիտություն») ամսագրում
1971թ-ին, որտեղ հաղորդվում է առողջ և
ախտահարված հյուսվածքների մագնիսա-
կան արձագանքման ազդանշանների
տարբերության մասին, ԱՄՆ-ում արտո-
նագրված՝ համար 3.789.832 գյուտը, որը
վերաբերում է միջուկային մագնիսական
արձագանքման կիրառությանը քաղցկեղի
հայտնաբերման համար (1974թ.): Ստեղծել
է մագնիսական արձագանքման պատկեր-
ման առաջին սարքը (1977թ.), որի զանգվա-
ծային արտադրությունն սկսվել է
1980թ-ին:

Անդամ է Կենսաֆիզիկայի ընկերության
(ԱՄՆ), Գիտության առաջընթացի ամե-
րիկյան ընկերության, Բժշկության մեջ
մագնիսական արձագանքի կիրառման
միջազգային ընկերության, Բժշկական նո-
րարարության և տեխնոլոգիայի ընկերու-
թյան, Աստվածաշնչի ուսումնասիրության
ընկերության:

Արժանացել է Ֆորդի հիմնադրամի դրա-
մաշնորհի (15 տարեկան հասակում):
Պարգևատրվել է Տեխնոլոգիայի ազգային
մեդալով (ԱՄՆ, 1988), Կենսագ մվածումնե-
րի մրցանակով՝ առաջին մագնիսական
արձագանքման պատկերման սարքի
ստեղծման համար, «Լեմելտոն-ՄԻՏ»-ի
կողմից, 2001թ.), Ֆրանկլինի անվան ինս-
տիտուտի «Գործարարության ասպարե-
զում առաջատարության համար» մրցա-
նակով (Ֆիլադելֆիա, 2004թ.), «Տարվա

գյուտարարը» մրցանակով (Մտավոր սեփականության կրթական հաստատության կողմից, 2007թ.): Հրավերի է արժանացել Գյուտարարների ազգային պատվո սրահի կողմից և հռչակվել նրա անդամ (1989թ.): «Վարդանանց ասպետների միությունը» (Նյու Յորք) նրան շնորհել է «Տարվա մարդը» մրցանակը (2003թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ԴԱՄԼԱՄՅԱՆ Ժան Ժակ

DAMLAMIAN Jean-Jacques

Հեռահաղորդակցության ճարտարագիտության ասպարեզի գիտնական: «Ֆրանս տելեկոմի» գլխավոր գործադիր տնօրենի հատուկ խորհրդական: Փարիզ, Ֆրանսիա: Ծնվել է 1942թ. մայիսի 29-ին Փարիզում: Ամուսնացած է, ունի մեկ դուստր:

Ուսանել է Պոլիտեխնիկական բարձրագույն դպրոցում (Փարիզ, 1961-63թթ.), ապա Հեռահաղորդակցության ազգային բարձրագույն դպրոցում (1964-66թթ.):

Չանազան ղեկավար պաշտոններ է զբաղեցրել «Ֆրանս տելեկոմի» տարբեր բաժիններում՝ գիտահետազոտական լաբորատորիայում, տեղական և հեռավոր ցանցերի կառավարման և արտասահմանյան ցանցերի բաժիններում, գլխավոր գործադիր տնօրենի աշխատակազմում իբրև անձնական օգնական (1966-88թթ.): Նույն ընկերությունում եղել է առևտրի և իրացման գծով գլխավոր փոխնախագահ (1988-91թթ.), այնուհետև միջազգային և արդյունաբերական գործառույթների խմբի փոխնախագահ (1991-95թթ.), ապա նաև զարգացման մասնաճյուղի փոխնախագահ (1995-2003թթ.): Նշանակվել է

«Ֆրանս տելեկոմի» գլխավոր փոխնախագահ արտադրական տեխնոլոգիաների և նորարարության գծով՝ գիտական ու հետազոտական աշխատանքների և նորարարության ղեկավարման իրավասությամբ (2003-2004թթ.): Ներկայումս «Ֆրանս տելեկոմի» գլխավոր գործադիր տնօրենի հատուկ խորհրդականն է (սկսած 2004թ-ից):

Հիմնել է «Ֆրանս տելեկոմի» բջջային հեռահաղորդակցության բաժանմունքը և իրականացրել «Ժի Էմ Էս-Իներիս» (բջջային հեռահաղորդակցության համաշխարհային համակարգ) կոչվող ծրագիրը (1989թ.): Նրա ջանքերով է «Ֆրանս տելեկոմում» ստեղծվել նաև համացանցի ծառայության համակարգը (ներառյալ մեծ արագության համացանցային ծառայությունը, այսպես կոչված «բաժանորդների ասիմետրիկ թվային գիծը» - *Asymmetric Digital Subscriber Line*), որը հետագայում հիմք է դարձել «Վանադու» ֆրանսիական համացանցային ծառայության ստեղծման համար: Ղեկավարել է «Ֆրանս տելեկոմի» ենթակայության հեռահաղորդակցության նոր ցանցերի ստեղծումը արտասահմանում՝ «Տելեկոմը» Արգենտինայում, «Տելմեքսը» Մեքսիկայում և այլն:

Էլեկտրական և էլեկտրոնային ճարտարագետների ինստիտուտի անդամ է: «Բուլ» և «Պալմ» ընկերությունների տնօրենների խորհրդի անդամ է: «Եվտելսատ» համաեվրոպական արբանյակային կապի միացյալ վարչական խորհրդի նախագահն է (սկսած 2001թ-ից): Համացանցերի ներկայագուցիչների և անդամների միավորման (միջազգային կազմակերպություն) նախագահի հատուկ խորհրդականն է (սկսած 2005թ-ից): Ոչ-գործադիր տնօրենն է «Ա Նովո» (թվային տեխնոլոգիաների կիրառումը սպասարկող եվրոպական ծառայություն) կազմակերպության (սկսած 2007թ-ից):

Պարգևատրվել է «Պատվո լեգիոնի», «Արժանիքների» ազգային և «Ակադեմիական արմավ» (2001թ.) ֆրանսիական պետական շքանշաններով:

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա:



ԴԱՐԶԻ Արա

DARZI Ara

Վիրաբույժ: Պրոֆեսոր: Սրբ (իբրև Բրիտանական Կայսրության ասպետ կրում է "Sir" տիտղոսը): Միացյալ Թագավորության առողջապահության ղեկարտամենտի նախարար: Լոնդոն, Միացյալ Թագավորություն: Ծնվել է 1960թ. մայիսի 7-ին Բաղդատում: Մանկությունն անցել է Իռլանդիայում: Վարկես (Վարդգես) և Դիկի (Տիգրանուհի) Դարգիների (Թերզյանների) որդին է: Ամուսնացել է Վենդի Դարգիի հետ (Դուբլին), որդին՝ Ֆրեդի, դուստրը՝ Նինա:

Ուսանել է Իռլանդիայի վիրաբուժության թագավորական քոլեջում՝ ստանալով վիրաբույժի մասնագիտություն (Դուբլին, 1984թ.): Նույն հաստատությունում զբաղվել է գիտական-հետազոտական աշխատանքով (1984-92թթ.): Դուբլինի համալսարանի Տրինիտի վիրաբուժական քոլեջում արժանացել է բժշկագիտության դոկտորի գիտական աստիճանի (Դուբլին, 1992թ.): Հետազոտական աշխատանքի դրամաշնորհներ է ստացել Անգլիայի վիրաբուժության թագավորական քոլեջի (1995թ.), Ամերիկայի վիրաբույժների քոլեջի (1998թ.), Բժշկական գիտությունների ակադեմիայի (2003թ.), Բժիշկների և վիրաբույժների Գլազգոյի քոլեջի (2003թ.), Լոնդոն քաղաքի քաղաքապետարանի (2004թ.), Էդինբուրգի վիրաբուժության թագավորական քոլեջի (2005թ.) կողմից:

Աշխատել է «Ռիչմոնդ» հիվանդանոցում (1984-85թթ.), այնուհետև «Բոնոն» հիվանդանոցում (1985-86 և 1988-89թթ.): Կլինիկական հետազոտություններ է իրականացրել Տրինիտի քոլեջում (1986-88թթ.): Պաշտոնավարել է «Սուրբ Մարիամ» հի-

վանդանոցում իբրև ավագ (1990-91թթ.), ապա գլխավոր վիրաբույժ և ավագ դասախոս (1994-98թթ.): Եղել է «Միդլսեքս» հիվանդանոցի խորհրդատու-վիրաբույժ և ավագ դասախոս (1993-94թթ.): 1996թ-ից Լոնդոնի թագավորական քոլեջի պատվավոր պրոֆեսոր է: «Մեծ Օրմոնդ փողոցի թուլակազմ երեխաների հիվանդանոցի» պատվավոր խորհրդատու-վիրաբույժ է: Ղեկավարում է Լոնդոնի թագավորական քոլեջի բժշկական ֆակուլտետի վիրաբուժական անզգայացման բաժանմունքը: Նույն հաստատության վիրաբուժական օնկոլոգիայի և տեխնիկայի բաժանմունքի ղեկավարն է և վերջինիս պատվավոր պրոֆեսորը: Լոնդոնի «Սուրբ Մարիամ» հիվանդանոցի խորհրդատու-վիրաբույժ է կոլոպրոկտոլոգիայի և նվազագույն վիրահատական միջամտության գծով: Պատվավոր խորհրդատուն է «Սուրբ Մարկ» և «Համերսմիթի խնամակալություն» հիվանդանոցների:

2007թ-ին Միացյալ Թագավորության վարչապետ Բրաունի կողմից նշանակվել է Առողջապահության ղեկարտամենտի նախարար:

Հեղինակ կամ համահեղինակ է մեծ թվով գյուտերի և գիտական աշխատությունների՝ վիրաբուժության, համակարգչային բժշկական պատկերի ստացման, կենսաբանական-բժշկական ճարտարագիտության, կլինիկական անվտանգության, ռոբոտային տեխնիկայի, մարդ-մեքենա փոխգործակցության, մեծացված պատկերների ստացման և կենսաբանական-բժշկական խթանման ուսումնասիրությունների բնագավառներում: Բժշկության մեջ նվազագույն վիրահատական միջամտության նորամուտության առաջին մտահղացողներից ու իրականացողներից մեկն է:

Մարտոկական օրգանների վիրաբուժության միջազգային միության փոխնախագահն է: Եղել է Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի Էնդոսկոպիկ վիրաբուժության ընկերության խորհրդի ընտրված անդամ և կրթական գծով նրա պաշտոնատարը (1994-2000թթ.): Ստամբուսաղիքային վիրաբուժության և նվազագույն վիրահատական միջամտության վերաբերյալ դասա-

խոսել է Անգլիայի վիրաբույժների թագավորական քոլեջում (1995–2001թթ.): Նույն հաստատության Ռավենի կրթական բաժանմունքի խորհրդի անդամ է (սկսած 1998թ–ից): Եղել է նաև Նվազագույն վիրահատական միջամտության բժշկական ընկերության խորհրդի անդամ և քարտուղար (1998–99թթ.): Վիրաբուժական հետազոտությունների ընկերության ղեկավար խորհրդի անդամ է (սկսած 1998թ–ից): Անդամակցել է Կոլոպրոկտոլոգիայի բրիտանական և իռլանդական ընկերությանը (1997–99թթ.): Եղել է Բժշկության թագավորական ընկերության վիրաբուժական բաժնի խորհրդի անդամ (1995–99թթ.): «Նուֆֆիլդի խնամակալության» հետազոտական և զարգացման խորհրդակցական խմբի անդամ է սկսած 1999թ–ից: Բժշկության թագավորական ընկերությանը կից Վիրաբուժական կրթության խորհրդակցական հատուկ հանձնախմբի անդամ է (սկսած 1999թ–ից): Եղել է Էնդոսկոպիական վիրաբույժների եվրոպական միության կրթական հանձնախմբի (1999–2004թթ.), Բժշկության թագավորական քոլեջի «Ճարտարագիտական և բնագիտական հետազոտությունների խորհրդի» (1999–2003թթ.), ապա նաև նույն հաստատության ղեկավար խորհրդի (2004–2005թթ.), Կենսաբանական–բժշկական ճարտարագիտության ինստիտուտի «Բժշկական հետազոտությունների խորհրդի» (սկսած 2005թ–ից), «ԲՈՒՊԱ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (2001–2005թթ.) անդամ: Բժշկական սարքավորումների գործակալության գլխավոր փորձագետն է: Տեխասի համալսարանի Անդերսոնի անվան քաղցկեղի կենտրոնի խորհրդակցական խորհրդի անդամ է: Հոնգ Կոնգի համալսարանի (Չինաստան) Նվազագույն վիրահատական միջամտության կենտրոնի պատվավոր խորհրդական է:

Արժանացել է Բրիտանական Թագավորության ասպետի կոչման և կրում է Սըր (“Sir”) տիտղոսը (2002թ.): Պարգևատրվել է Համդանի անվան բժշկական բարձրակարգ հետազոտության համար տրվող մրցանակով (2004թ.), «Թագուհու տարեդարձի առթիվ» մրցանակով՝ բարձրագույն

կրթության ասպարեզում (2001թ.): Ստացել է Անգլիայի վիրաբուժության թագավորական քոլեջի Հունտերի անվան պրոֆեսորի կոչում (1997–98թթ.), նաև Ջեյմսի անվան ճանփորդական շնորհ (1998թ.):

2006թ. Գալիական կենսագրական կենտրոնի «Գարգաբերթի» տվյալների հիման վրա, խմբագրված հատորի հեղինակի կողմից



ԴԵՅԻՐՄԵՆՏՅԱՆ Ժակ, Արա

DEYIRMENDJIAN Jacques, Ara

Վարչական գործիչ: «Դեյներգիս» ընկերության նախագահ: «Գազ դը Ֆրանս ինտերնացիոնալի» նախկին նախագահ և գլխավոր գործադիր տնօրեն: Փարիզ, Ֆրանսիա: Ծնվել է 1944թ–ին: Ամուսնացած է, ունի 3 երեխա:

Ուսանել է Փարիզի պոլիտեխնիկական դպրոցում, այնուհետև Վիճակագրության և վարչական տնտեսագիտության ազգային դպրոցում (1968–69թթ.):

Աշխատանքի է անցել «Գազ դը Ֆրանսում» (սկսած 1967թ–ից): Եղել է այդ հիմնարկության Արտադրության և տեղափոխման ծառայության ղեկավար (1979–85թթ.), այնուհետև փոխտնօրեն (1985–89թթ.): Ծարունակելով աշխատել նույն հիմնարկությունում՝ տեղափոխվել է Միջազգային բաժին (սկսած՝ 1989թ–ից), որտեղ պաշտոնավարել է իբրև ավագ գործադիր հանձնակատար (1996–2000թթ.), ապա փոխնախագահ և գործադիր փոխնախագահ՝ ստանձնելով միջազգային կապերի և արտադրական համագործակցության ղեկավարման պատասխանատվությունը (2000 և 2001թթ.): Նշանակվել է «Նավթի ֆրանսիական ինստիտուտի» տնօրեն (2003թ.): Եղել է «Գազ դը Ֆրանս ինտերնացիոնալի» նախագահը և գլխավոր գործադիր

տնօրենը (սկսած 2004–2005թթ.): Ներկայումս «Դեյներգիս» ընկերության նախագահն է (սկսած 2005թ–ից):

Գերմանիայի «Գազագ» և Սլովակիայի «ՍՊՊ» ընկերությունների վարչական խորհուրդների անդամ է: «Ֆինգազ» շվեյցարական ընկերության խորհրդի նախագահն է: Դեկավարում է գազի արդյունաբերության և առևտրի բազմաթիվ միջազգային կազմակերպություններ, մասնավորապես Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնախմբի «Գազ սեկտոր» (Ժնև, 2005թ.) միջազգային միավորման տնօրենների խորհուրդը:

Գործուն մասնակցություն ունի Ֆրանսիայի հայ համայնքի կյանքին: Նրա ջանքերով համագործակցություն է սկսվել Հայաստանի և Ֆրանսիայի գազի ոլորտի ձեռնարկությունների միջև:

Ֆրանսիայի նախագահի կողմից պարգևատրվել է «Պատվո լեգիոնի» շքանշանով (Փարիզ, 1997թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ԴԵՎԵՏՅԱՆ Պատրիկ

DEVEDJIAN Patrick

Քաղաքական գործիչ, իրավաբան: Ֆրանսիայի Խորհրդարանի պատգամավոր: «Միություն հանուն ժողովրդական շարժման» կուսակցության գլխավոր քարտուղար: Ֆրանսիայի Հանրապետության նախկին պատվիրակ–նախարար (Արդյունաբերության, ինչպես նաև Տեղական կառավարման նախարարությունների): Օ–դը–Սեն նահանգի Գլխավոր խորհրդի նախագահ: Փարիզ, Ֆրանսիա: Ծնվել է

Ֆոնտենբլյուս (Ֆրանսիա) 1944թ. օգոստոսի 26–ին: Ռոլան Դևեջյանի և Մոնիք Վալուայի որդին է: Ամուսնացել է Սոֆի Վանքրեններխի հետ, երեխաները՝ Թոմա, Ֆրանսուա, Արթուր, Բազիլ:

Սկզբնական կրթությունը ստացել է Սևրի Սամվել–Մուրադ հայկական վարժարանում, այնուհետև հաճախել է Փարիզի Կոնդորսեի լիցեյը: Ուսանել է Փարիզի երկրորդ համալսարանի իրավաբանական բաժնում, նաև Փարիզի քաղաքական ուսումնասիրությունների ինստիտուտում:

Համահիմնադիրն է (Ռեյմոն Արոնի հետ) «Կոնտրոլիտեն» («Հակառակ տեսակետ») ազատական հանդեսի (1969թ.): Իրավաբանական գործունեությունը սկսել է իբրև փաստաբան 1970թ–ին Փարիզում: «Համաժողով հանուն հանրապետության» կուսակցության հիմնադիրներից մեկն է (1970թ.): Եղել է Անտոնի քաղաքի (Ֆրանսիայի Օ–դը–Սեն նահանգ) քաղաքապետ (սկսած 1983թ–ից, վերընտրվել է 4 անգամ՝ 1983, 1989, 1995, 2001թթ.), այնուհետև քաղաքապետի տեղակալ ֆինանսների գծով (2002–06թթ.): Ֆրանսիայի Խորհրդարանի անդամ է՝ ընտրված Օ–դը–Սեն նահանգից (սկսած 1986թ–ից, վերընտրվել է 1988, 1993, 1997 և 2002թթ., անդամ է Արտաքին գործերի հանձնախմբի և «Բյուրոյի» խմբի, 2005թ.): Եղել է Տեղական կառավարման (2002–2004թթ.) և Արդյունաբերության (2004–2005թթ.) նախարարությունների պատվիրակ–նախարար: Ընտրվել է Օ–դը–Սեն նահանգի Գլխավոր խորհրդի պատգամավոր (1986–2002թթ.), պաշտոնավարել է իբրև գլխավոր խորհրդական (սկսած 2004–07թթ.): Օ–դը–Սեն նահանգի Գլխավոր խորհրդի նախագահն է (սկսած 2007թ–ից):

Եղել է «Համաժողով հանուն հանրապետության» կուսակցության ազգային քարտուղար (1986–88, 1998–99թթ.) և լրատվության խոսնակ (1999–2001թթ.), այդ կուսակցության Օ–դը–Սեն նահանգի միավորման քարտուղար (2000–02թթ.): «Միություն հանուն ժողովրդական շարժման» կուսակցության Քաղաքական բյուրոյի անդամ է (սկսած 2000թ–ից): Եղել է նաև Օ–դը–Բիլի բնակավայրերի համայնքնե-

րի նախագահը (2003–05թթ.): Անդամ է «Եվրոպական շարժում – Ֆրանսիա» (սկսած 1990թ–ից, փոխնախագահ՝ մինչև 2002թ.) և «Եռակողմ հանձնախումբ» (1993 և 2006թթ. Բիլդերբերգյան ժողովներ) կուսակցական–քաղաքական համանվիրույթական կազմակերպությունների: «Միություն հանուն ժողովրդական շարժման» կուսակցության գլխավոր քարտուղարն է (սկսած 2007թ–ից):

Հեղինակ է բազմաթիվ իրավագիտական հոդվածների, օրենսդրական առաջարկությունների, ելույթների և 4 գրքի՝ «Դատավորների ժամանակը» («Ֆլամա-

րիոն» հրատ., 1996թ.), «Աջակողմյան մտածելակերպ» («Պլոն» հրատ., 1999թ.), «Իմն է խոստման նախարարությունը» («Արշիպել» հրատ., 2006թ.), «Ապակենտրոնացում՝ Պենելոպեի գորգը» («Պրենտան» հրատ., 2006թ.):

Գործուն մասնակցություն է ունեցել 1915թ. Հայոց ցեղասպանության ճանաչմանը Ֆրանսիայի Խորհրդարանում և թուրքական ժխտողականության դեմ ֆրանսահայ համայնքի պայքարին:

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա

Զ



ԶԱԶԱՐՅԱՆ Գագիկ

ZAKARIAN Gagik

Գործարար, բարեգործ: Մոսկվայի «Յունիաստրում» բանկի նախագահ, հայկական «Յունիբանկ» ղեկավար խորհրդի նախագահ: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է 1965թ. ապրիլի 9–ին Երևանում: Տիգրան և Սուսաննա Չաքարյանների որդին է: Ունի մեկ որդի՝ Կարեն:

Ուսանել է Մոսկվայի օդանավաչինական ինստիտուտում (1982–88թթ.): Կրթությունը շարունակել է նույն հաստատության ասպիրանտուրայում (1988–90թթ.): Ռուսաստանի Դաշնության արտաքին առևտրի նախարարությանը կից Մոսկվայի միջազգային ֆինանսաբանկային դպրոցում կատարելագործվել է արժեթղթերի առևտրի ոլորտում (2003–2004թթ.):

«Ինտեր–Ինջինիերինգ» ընկերությու-

նում պաշտոնավարել է իբրև գլխավոր փոխտնօրեն (1990–97թթ.): Եղել է «Յունիաստրում հոլդինգ» ընկերության փոխնախագահը (1993–97թթ.), այնուհետև «Ինվեստ–Յունիոնի» գլխավոր փոխտնօրենը (1998–2000թթ.): Հայկական «Յունիբանկի» ղեկավար խորհրդի նախագահն է (Երևան, սկսած 2001թ–ից): Ներկայումս իբրև գլխավոր նախագահ ղեկավարում է «Յունիաստրում» բանկը (սկսած 1994թ–ից): «Յունիաստրում» բանկի տնօրենների խորհրդի նախագահն է և միջազգային դրամական փոխանցումների բանկային համակարգի հիմնադիրը: Նրա ղեկավարությամբ «Յունիաստրում» բանկը ծառայությունների լայն ցանց է ստեղծել ամբողջ Ռուսաստանում (մոտ 100 գործակալություն՝ 45 նահանգում): «Յունիաստրում» բանկը նաև բազմաթիվ բարեգործական ծրագրեր է իրականացնում սոցիալական, կրթական, գիտական, հրատարակչական, մշակութային և այլ ոլորտներում: «Յունիաստրում» բանկը Ռուսաստանում գիտական նորագույն ուղղությունների՝ նանոտեխնոլոգիական մշակումների (2006թ.), ինչպես նաև տիեզերական տեխնիկայի մի շարք հետազոտությունների զարգացման, «Հրթիռային–տիեզերական դարաշրջան» հիշարժան տարեթվեր» գիտական հրա-

պարակումների շարքի (սկսած 2001թ–ից), «Ռոմանսիադա» երիտասարդ երգիչների մրցույթի (2005թ.), Մոսկվայում և նրա շրջաններում սոցիալական նշանակության կառույցների և բազմաթիվ այլ բարեգործական ձեռնարկների պաշտոնական հովանավորն է:

Հեղինակ է մոտ 400 հոդվածի, բազմաթիվ հարցազրույցների ռուսաստանյան և միջազգային մասնագիտական հանդեսներում, պարբերական մամուլում:

Անդամ է Ռուսաստանի Դաշնության «Դաշնային բանկերի միջշրջանային դաշնության» խորհրդի, Ռուսաստանյան բանկերի միության խորհրդի, «Ազգային բանկային հանդես» ամսագրի վերահսկող խորհրդի: Ռուսաստանի հայերի միության վարչական խորհրդի անդամ է:

Պարգևատրվել է «Բանկերի ազգային մրցանակով»՝ բանկի արդյունավետ կառավարման համար (2007թ.), «2006թ–ի անհատականություն» ազգային մրցանակով՝ «ռուսական բիզնեսի սոցիալական պատասխանատվության գիտակցման համար» («Ռոսբիզնես–կոնսուլտինգ» ընկերությունների խմբի կողմից), «2005թ. լավագույն բանկիր» մրցանակով՝ Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի հանձնախմբի կողմից, Ռուսաստանի բանկերի միության «Պատվո մեդալով» և այլն:

2008թ. Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաթերթի» տվյալների հիման վրա



ԶԵՄԱՆՅԱՆ Արմեն

ZEMANIAN Armen

Մաթեմատիկոս: Ճարտարագիտության ակադեմիայի պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային

ակադեմիայի արտասահմանյան անդամ: Մասաչուսեթս, ԱՄՆ: Ծնվել է 1925թ–ի ապրիլի 16–ին Բրիջվորթերում (Մասաչուսեթս, ԱՄՆ):

Ավարտել է Նյու Յորքի քոլեջը (ճարտարագիտության պսակավոր, 1947թ.), Նյու Յորքի պետական համալսարանը (ճարտարագիտության մագիստրոս, Ստոնի Բրուկ, 1949թ.): Ստոնի Բրուկի Նյու Յորքի պետական համալսարանում ստացել է դոկտորի գիտական աստիճան ճարտարագիտության բնագավառում (1953թ.):

Եղել է Նյու Յորքի պետական համալսարանի (Ստոնի Բրուկ) պրոֆեսորի օգնական, ապա փոխպրոֆեսոր (1952–62թթ.), պրոֆեսոր (1962–83թթ.), առաջատար պրոֆեսոր (1983–98թթ.), ակադեմիկոս պրոֆեսոր (սկսած 1998թ–ից): Դասավանդել է էլեկտրական շրթանների վերլուծություն, գծային համակարգեր, համակարգերի տեսության հիմունքների վերլուծություն, էլեկտրական համակարգերի մշակում և այլ առարկաներ:

Հեղինակ է 170–ից ավելի գիտական հոդվածի և 6 գրքի, այդ թվում «Իրագործելիության տեսությունը շարունակական գծային համակարգերում» (1975թ.), «Կիրխոֆի օրենքը ոչ–գծային տրանս–վերջավոր համակարգերում» (1993թ.) «Գերիական օպերացիոն կետեր ոչ–գծային տրանս–վերջավոր համակարգերի մշակման համար» (2004թ.) աշխատությունների:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ է (սկսած 1990թ–ից): Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի և Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ է (1996թ.): Դուբնայի միջազգային համալսարանի պատվավոր պրոֆեսոր է (1996թ.):

Պարգևատրվել է Էլեկտրոնիկայի և էլեկտրական ճարտարագիտության ինստիտուտի պատվավոր անդամի մրցանակով և ոսկե մեդալով (ԱՄՆ, 1996թ.), Ամերիկայի Հայ ուսանողական ընկերության Տիգրան Կաբակչյանի անվան գիտության մրցանակով (1982թ.), Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի Կապիցայի անվան մեդալով (1996թ.): «Տաու, բե-

տա, ֆի, էտա, կապպա, նյու, սիգմա, քսի» պատվո ընկերությունների անդամ է: Կենսագրական ընդգրկված է «Ով ով է աշխարհում» («Մարկիս», ԱՄՆ) և 17 անուն այլ կենսագրական հատորներում:

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արջուրների տվյալների հիման վրա



ԶԵՅՆՊԵՐԺՅԱՆ ՊԵՐԺ

ZEITUNTSYAN Perdj

Արձակագիր, թատերագիր, թարգմանիչ, հրապարակախոս: Հայաստանի Հանրապետության մշակույթի նախկին նախարար: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է Ալեքսանդրիայում (Եգիպտոս) 1938թ. հուլիսի 8-ին (հայրանունը՝ Արմենակ): 1947թ-ին ներգաղթել է Հայաստան:

Ավարտել է Պյատիգորսկ քաղաքի Օտար լեզուների մանկավարժական ինստիտուտի անգլերեն լեզվի ֆակուլտետը (1964թ.), սովորել է Մոսկվայի բարձրագույն սցենարական դասընթացներում:

Եղել է «Հայֆիլմ» կինոստուդիայի խմբագրական կոլեգիայի գլխավոր խմբագիրը: Հայաստանի գրողների միությունում պաշտոնավարել է իբրև վարչության քարտուղար (1975թ.): Աշխատել է իբրև «Պիոներ» մանկապատանեկան ամսագրի գլխավոր խմբագիր: Եղել է նորանկախ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարարության առաջին նախարարը (1991-92թթ.):

Հեղինակ է վեպերի, պատմվածքների, պիեսների, թարգմանությունների, կինոսցենարների, հրապարակախոսական հոդվածների: Առաջին գիրքը՝ «Նրա առաջին ընկերը», տպագրվել է 1956թ-ին: Հիշարժան են նրա «Մեր թաղի ձայները» (1959թ.), «Կլոդ Ռոբերտ Իգերլի» (1968թ.),

«Փարիզի համար» (1965թ.), «Արշակ Երկրորդ» (1977թ.), «Ամենատխուր մարդը» (1981թ.), «Ընտիր երկեր» (2 հատորով, 1987թ.), «Վերջին արևազայր» (1989թ.), «Մի նայիր հայելուն» (2004թ.) գրքերը: Հեղինակ է 12 պիեսի, որոնք հիմնականում բեմադրվել են Երևանի թատրոններում, այդ թվում «Կանգ առ, երկրագունդ» (2005թ.), «Մահապատիժ հայկական ձևով» (2004թ.), «Ոտքի, դատարանն է գալիս», «Խոր Վիրապ» (1999թ.), «Աստվածների կանչը» (1981թ.), «Ավերված քաղաքի առասպելը» (1975թ.), «Ամենատխուր մարդը» (1974թ.), ինչպես նաև «Երևանյան օրերի խրոնիկա» ֆիլմի սցենարի (1973թ.): Թարգմանիչն է Էռնեստ Հեմինգուեյի «Հրածեշտ զենքին» և «Քիլիմանջարոյի ձյուները», Էրսքին Քոլդուելլի «Տաք գետը», Գրեհեմ Գրինի «Խաղաղ ամերիկացին» ստեղծագործությունների: Երկերը թարգմանվել են 11 լեզվով, այդ թվում ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, արաբերեն, չեխերեն և այլն:

Հռոմի արվեստների և հասարակական գիտությունների «Տիբերիան» ակադեմիայի պատվավոր անդամ է: Հայաստանի գրողների միության անդամ է (սկսած 1957թ-ից), եղել է նախկին Խորհրդային Միության գրողների միության անդամ:

Հայկական ԽՍՀ և Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների դափնեկիր է (1981թ. 1999թ.): Պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության «Մուրթ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով (2008թ.) և «Մովսես Խորենացի» մեդալով (1998թ.), Հայ առաքելական եկեղեցու «Մուրթ Սահակ, Մուրթ Մեսրոպ» շքանշանով (2007թ.): Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործիչ է (1988թ.): Արժանացել է Թեբեյան մշակութային միության «Հայկաշեն Ուզունյան» գրական մրցանակի (2005թ.), Հայաստանի գրողների միության Լևոն Ծանթի անվան մրցանակի (2004թ.), Գ. Մունդուկյանի անվան գրական մրցանակի, Լրագրողների միության «Ոսկե գրիչ» մրցանակի, «Արարատ» գրական մրցանակի (Մարտել, 2006թ.): Երևանի պատվավոր քաղաքացի է (2005թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արջուրների տվյալների հիման վրա



ԶԵԻՔԻՅԱՆ ՊՈՂՈՍ ԼԵՆՆ
ԶԵԻՔԻՆՆ ԴՈՂՈՍ ԼԵՆՆ

ZEKIYAN Boghos Levon

Հայագետ, աստվածաբան, լեզվաբան, մանկավարժ: Փիլիսոփայության դոկտոր, Վենետիկի Կա Ֆոսկարի համալսարանի պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ: Վենետիկ, Իտալիա: Ծնվել է Կ.Պոլսում 1943թ-ին:

Ուսանել է Միսիթարյան միաբանության Մուրթ Ղազար կղզու Դպրեվանքում (Վենետիկ, 1955-59թթ.), այնուհետև կրթությունը շարունակել է Հռոմի Գրիգորյան հովվապետական համալսարանում՝ արժանանալով փիլիսոփայության (1962թ.), ապա նաև աստվածաբանության մագիստրոսի (1966թ.) գիտական կոչումների: Նույն համալսարանում մասնագիտացել է արևելյան աստվածաբանության և կրոնի դասընթացներում (1966-68թթ.): Ստամբուլի պետական համալսարանում նրան շնորհվել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան (Կ.Պոլիս, 1973թ.):

Դասավանդել է Կ.Պոլսի Միսիթարյան և Կեղրոնակսան (1971-74թթ.), ինչպես նաև Իտալական վարժարաններում (1971-74թթ.), այնուհետև Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում (1974-85թթ.): Սկսած 1976թ-ից դասախոսում է Վենետիկի համալսարանի հայոց լեզվի և գրականության, իսկ 1988թ-ից Արևելյան հետազոտությունների հովվապետական ինստիտուտի (Հռոմ) «Հայկական եկեղեցական հաստատությունների ուսումնասիրության» ամբիոններում: Իբրև հրավիրված դասախոս դասավանդում է Վենետիկի Սան Բեռնարդինոյի տիեզերական ինստի-

տուտում (սկսած 1996թ-ից): Դասախոսություններով հանդես է եկել նաև ԱՄՆ-ի Կալիֆոռնիայի նահանգի Լա Վեռնի համալսարանի Ամերիկայի հայկական միջազգային բարձրագույն վարժարանում (1988-89 և 1991-92թթ. ուսումնական տարեշրջաններում): 1974-81թթ-ին պաշտոնավարել է իբրև Վենետիկի Մուրթ Ղազար կղզու Միսիթարյան միաբանության Հայկական ակադեմիայի ատենապետ: Տեսուչի պաշտոն է զբաղեցրել Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում (1982-85թթ.): Աշխատակցել է Հայ մշակույթի և վավերագրերի ուսումնասիրության կենտրոնին (Միլան, 1976-90թթ.):

Եղել է «Հայ ընտանիք» պարբերականի խմբագիրը (1974-82թթ.): 1974-79թթ-ին եղել է խմբագրի տեղակալ, իսկ 1980-85թթ-ին գլխավոր խմբագիրը «Բազմավեպ» հայագիտական հանդեսի, որի 22 հատորներում զետեղված են Հայ արվեստի առաջին (1974թ.) և 5-րդ (1992թ.) միջազգային գիտաժողովների զեկուցումները: Հիմնադիրն ու տնօրենն է Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում հայոց լեզվի և մշակույթի ամառային դասընթացների (1984-86թթ), որոնք 1986թ-ից սկսած շարունակվում են Վենետիկի համալսարանում՝ առ այսօր: Նախաձեռնողն ու գլխավոր կազմակերպիչն է Հայ արվեստի 5-րդ միջազգային գիտաժողովի (1988թ.), հայ-իտալական մշակութային առնչությունների ուսումնասիրությանը նվիրված մի շարք գիտաժողովների (1982-86թթ.): Գիտական կազմակերպիչն է «Հայերն Իտալիայում» ցուցահանդեսի (1990թ.): Համահիմնադիրն ու նախագահն է «Պո-Արաքս» մշակութային միության: Համահիմնադիրն ու փոխնախագահն է «Իտալիա-Հայաստան» միության (1991-97թթ.), իսկ 1997թ-ից՝ նույն կազմակերպության ղեկավար խորհրդի անդամ է: Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային ընկերության հանձնախմբի անդամ է (1982-89թթ. և սկսած 1997թ-ից) և նրա «Հայագիտական ուսումնասիրություններ-2000» և «Հայագիտական ուսումնասիրություններ-2004» հանձնախմբերի նախագահը:

Հեղինակ է 13 մենագրության, 141 գի-

տական հողվածի և 33 հանրագիտարանային բառահողվածի: Մասնակցել է 203 միջազգային գիտաժողովի, որից 187-ում հանդես է եկել զեկուցումներով: Աշխարհի տարբեր երկրներում ունեցել է մոտ 260 դասախոսություն, կազմակերպել է 25 դասընթաց: Հիմնական աշխատությունները վերաբերում են հայագիտության, հայ մշակույթի պատմության, կրոնի և փիլիսոփայության հարցերին: Հիշարժան են նրա «Հայ թատրոնի առաջին քայլերը և Հայ Վերածնունդի շարժումը» (1975թ.), «Համափութենական տրամախոսություն մը ԺԲ դարում» (1978թ.), «Օգոստինեան ներգոյապաշտութիւնը» (1980թ., իտալերեն), «Տրամասնութիւնը Արժէքի եւ պատահականութեան միջեւ. Մշակութային երեւութաբանութիւնից դէպի արժեքանական հիմնաւորում» (1998թ., իտալերեն), «Հայ հոգեւորականութիւնը. Ս. Գրիգոր Նարեկացու Մարեան Ողբերգութեանը» (1999թ., իտալերեն), «Հայաստան եւ Հայերը. Հերձատած «Ոստան» եւ հոգեւոր հայրենիք. Վերապրումի մարտահրաւրը»

(2000թ., իտալերեն), «Ինքնութեան Խճանկար» (Բեյրութ, 2001թ.), «Հայապատում» (Լոս Անջելոս-Երևան, 2002թ.) աշխատությունները:

Գիտության, գրականության և արվեստների Վեներտիկի ինստիտուտի թղթակից-անդամ է (1992թ-ից սկսած): Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ է (Երևան, 1994թ-ից): Պարգևատրվել է Երևանի պետական համալսարանի «Ոսկե մեդալով» (2000թ.): Երևանի պետական (2000թ.) և «Հայրուսակ» (Երևան, 2002թ.) համալսարանների պատվավոր դոկտոր է: «Հրայր Աճառյան» համալսարանի պատվավոր պրոֆեսոր է (Երևան, 1994թ.): Կենսագրականն ընդգրկված է «Ով ով է աշխարհում» ամերիկյան «Մարկիս» հաստատության 19-րդ և հետագա հրատարակություններում, բազմաթիվ այլ միջազգային կենսագրական հատորներում:

2006թ. 7այկական կենսագրական կենտրոնի «7արցաբերթի» տվյալների հիման վրա: Խմբագրված է պրոֆ. Չեքիանի կողմից

Է



ԷԳՈՅԱՆ Ատոս

EGOYAN Atom

Կինոբեմադրիչ: Արվեստների թագավորական ակադեմիայի անդամ (Կանադա): Շարժանկարային արվեստների և գիտությունների ակադեմիայի (ԱՄՆ) մրցանակների («Օսկար»), Կաննի կինոյի փառա-

տոների մրցանակների, «Ժենի» կանադական միջազգային մրցանակների և կինոյի այլ փառատոների մրցանակների դափնեկիր: Տոբոնտո, Կանադա: Ծնվել է 1960թ. հուլիսի 19-ին Կահիրեում (Եգիպտոս): Ժողեֆ Եղոյանի և Շուշան Դելեթյանի որդին է: Ամուսնացել է Արսինե Խանջյանի հետ, որդին՝ Արշիլ:

Գերազանցության վկայագրով ավարտել է Տորոնտոյի համալսարանի միջազգային հարաբերությունների բաժինը (1982թ.):

Հիմնադիրն ու տնօրենն է «Էգո-կինոարվեստ» հիմնարկության (Տորոնտո, սկսած 1982թ-ից):

Բեմադրիչը, հեղինակը, հաճախ նաև գլխավոր դերակատարներից մեկը, խմբա-

գիրն ու գլխավոր տնօրենն է մոտ երկու տասնյակ լիամետրաժ ֆիլմերի: Հատկապես հիշարժան են նրա «Մերձավոր ազգականը» (1984թ., արժանացել է 1984թ. Մանհեյմի ֆիլմերի միջազգային շաբաթի «Ոսկե դուկատ» մրցանակի, «Ժենի» (Genie) կանադական մրցանակի՝ «Լավագույն տնօրեն» անվանակարգում, Տորոնտոյի ֆիլմերի միջազգային փառատոնում), «Ընտանեկան դիտում» (1987թ., արժանացել է «Զննադատների մրցանակի», նախ 1987թ-ի Տորոնտոյի, այնուհետև 1988թ-ի Լոկարնոյի ֆիլմերի միջազգային փառատոներում, 1988թ-ին Ուպսալայի (Շվեդիա) կինոփառատոնի «Լավագույն լիամետրաժ ֆիլմ» մրցանակի, «Ժենի» մրցանակների՝ 8 անվանակարգում), «Դերակատարման բաժիններ» (1989թ., արժանացել է 1989թ. Կաննի ֆիլմերի միջազգային փառատոնի «Տասնհինգը բեմադրիչներից» մրցանակի, Վալադոլիդի (Իսպանիա) փառատոնի ժյուրիի հատուկ մրցանակի 1989թ., Վանկուվերի 1989թ. միջազգային կինոփառատոնի «Լավագույն բնաբանի համար» մրցանակի, «Ժենի» մրցանակների՝ 6 անվանակարգում), «Ապահովագրական գործակալը» (1991թ., արժանացել է Մոսկվայի 1991թ. միջազգային կինոփառատոնի ժյուրիի հատուկ մրցանակի, 1991թ. Կաննի ֆիլմերի միջազգային փառատոնի «Տասնհինգը բեմադրիչներից» մրցանակի, Տորոնտոյի 1991թ. «Փառատոների փառատոնի»՝ «Կանադական լավագույն ֆիլմ» մրցանակի, Վանկուվերի 1991թ. միջազգային կինոփառատոնի «Ոսկե հասկ» մրցանակի), «Օրացույց» (1993թ., Բեռլինի 1993թ. միջազգային կինոփառատոնում արժանացել է Կինոարվեստի միջազգային միության մրցանակի, Ժյուրիի մրցանակի՝ Տարմինայի կինոփառատոնում, կինոքննադատների կողմից ճանաչվել է 1993թ. ամերիկյան 10 լավագույն ֆիլմերից մեկը), «Էկզոտիկա» (1994թ., արժանացել է Ֆրանսիայի և Բելգիայի կինոքննադատների ընկերությունների «Լավագույն արտասահմանյան ֆիլմ» մրցանակի, 1994թ. Կաննի ֆիլմերի միջազգային փառատոնի «Զննադատներ-

րի միջազգային մրցանակի», Տորոնտոյի ֆիլմերի միջազգային փառատոնի «Լավագույն կանադական ֆիլմ» մրցանակի, Տարմինայի կինոփառատոնի «Արժաքե հասկ» մրցանակի), «Ապագայի ուրախությունը» (1997թ. արժանացել է երկու «Օսկարի»՝ Ակադեմիական մրցանակի, Շարժանկարային արվեստների և գիտությունների ակադեմիայի (ԱՄՆ) կողմից, 1997թ. Կաննի ֆիլմերի միջազգային փառատոնի «Գրան պրի» մրցանակի, «Զննադատների» և «Համաշխարհային» մրցանակների, Անկախ խրախուսական մրցանակի արտասահմանյան ֆիլմի համար, 1998թ. Վալադոլիդի կինոփառատոնի «Ոսկե հասկ» մրցանակի, 1997թ. Տորոնտոյի ֆիլմերի միջազգային փառատոնի «Տորոնտո քաղաքի մրցանակի», «Ժենի» մրցանակի՝ 8 անվանակարգում), «Արարատ» (2002թ., մասնակցությամբ՝ Շ. Ազնավուրի, Է. Պողոսյանի, Ա. Խանջյանի, Ս. Աբգարյանի, ցուցադրության է ներկայացվել Կաննի 2002թ. ֆիլմերի միջազգային փառատոնում՝ մրցույթային ծրագրից դուրս, արժանացել է «Ժենի» մրցանակների, 2002թ., Երևանի միջազգային կինոփառատոնի «Ոսկե ծիրան» մրցանակի, 2004թ.), «Որտե՞ղ է թաքնված ճշմարտությունը» (արժանացել է Կաննի ֆիլմերի միջազգային փառատոնի «Ոսկե արմավ» մրցանակի, 2005թ.): Տորոնտոյի օպերային թատրոնում (Կանադական օպերային ընկերություն) բեմադրել է Ռիչարդ Շտրաուսի «Սալոմե» օպերան (1996թ.), ապա «Տափեստրի մյուզիք» թատրոնում Ռոդնի Շարմանի «Էլսվերլես» երաժշտական ներկայացումը (1998թ.): Հեղինակ է երկու գրքի՝ «Դերակատարման բաժիններ» (Տորոնտո, 1993թ.) «Էկզոտիկա» (Տորոնտո, 1995թ.):

Անդամ է Կանադայի արվեստների թագավորական ակադեմիայի (սկսած 1995թ-ից): Եղել է Կաննի ֆիլմերի միջազգային փառատոնի մրցույթային ժյուրիի անդամ (1996թ.): Ղեկավարել է Բեռլինի 2003թ. միջազգային կինոփառատոնի մրցույթային հանձնախումբը: Եղել է Վեներտիկի միջազգային կինոփառատոնի լիամետրաժ ֆիլմերի ժյուրիի նախագահը (2003թ.) և

Երևանի «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի համանախագահը (2005թ.):

Պարզևատրվել է «Կանադայի շքանշանով» (գեներալ-նահանգապետ Ռոնեո Լենբլանի կողմից, 1999թ.), Տորոնտոյի արվեստների մրցանակով (1995թ.), Հանրաճանաչության կանադական մրցանակով (Հայկական համայնքային կենտրոն, 1998թ.), «Արվեստների և գրականության ասպետի» կոչմամբ ու շքանշանով (Ֆրանսիական կառավարության կողմից, 1997թ.), Կոլումբիայի համալսարանի հայկական կենտրոնի «Անահիտ» գրական մրցանակով (1999թ.), Հայաստանի Հանրապետության «Մովսես Խորենացի» մեդալով (2003թ.): Տորոնտոյի, Վիկտորիայի, Բրոքի, Բվինսի և այլ համալսարանների պատվավոր դոկտոր է:

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ԷԼԻԲԵԿՅԱՆ Ռոբերտ

ELIBEKIAN Robert

Գեղանկարիչ, բեմանկարիչ: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է 1941 ապրիլի 21-ին Թբիլիսիում (Վրաստան), Թբիլիսիի հայկական թատրոնի տնօրեն և նկարիչ Վաղարշակ Էլիբեկյանի ընտանիքում, նկարիչ էր նաև նրա մայրը, նկարիչներ են՝ որդին՝ Արեգը, և եղբայրը՝ Հենրիկ Էլիբեկյանը: Երևանում բնակվում է 1956թ-ից:

Ավարտել է Երևանի գեղարվեստաբարձական ինստիտուտի նկարչական ֆակուլտետը (1969թ.):

Մասնակցել է նախկին Խորհրդային Միության և արտերկրի բազմաթիվ խմբա-

յին և անհատական ցուցահանդեսների (սկսած 1960-ական թվականներից): Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Երևանում (առաջինը՝ 1966թ-ին), Մոսկվայում, Վիլնյուսում, Բեյրութում, Փարիզում և այլն: Նրա ստեղծագործությունները մշտապես ցուցադրվում են Հայաստանի պետական պատկերասրահում, Երևանի ժամանակակից արվեստի թանգարանում, Վրաստանի պետական պատկերասրահում, Մոսկվայի արևելյան արվեստի և Տրետյակովյան թանգարաններում, Սանկտ Պետերբուրգի ազգային պատկերասրահում, Նովոսիբիրսկի, Օմսկի, Օրենբուրգի պատկերասրահներում, Դետրոյտի «Ալեք Մանուկյան» սրահում, Մոնրեալի «Սոլեյ» պատկերասրահում, Նյու Ջերսիի «Ջիմերլի» սրահում, «Սպիտակ տան» (Վաշինգտոն), «Ելիսեյան պալատի» (Փարիզ), «Համարկանեի արվեստի սրահի» (Տորոնտո) հավաքածուներում: Նրա նկարաշարերը կյանքը ներկայացնում են իր թատերականացված, երևակայական, կանացի խորհրդավոր և ինքնատիպ պատկերների բանաստեղծական ընկալման մեջ: Հիշարժան են նրա բեմանկարչական աշխատանքները, այդ թվում Սպենդիարյանի անվան օպերային թատրոնում «Գույների սիմֆոնիա», «Անտունի», «Գայանե», «Դոն Զիշոտ» «Տրավիատա» բալետային և օպերային ներկայացումների համար, Մունդուկյանի անվան թատրոնում Գ. Մունդուկյանի «Խաթաբալա» ներկայացման համար, բազմաթիվ թատերական զգեստների ձևավորումները տարբեր ներկայացումների համար, իբրև բեմադրող-նկարիչ «Արմենֆիլմ» կինոստուդիայում իրականացրած աշխատանքները մի շարք ֆիլմերի համար (սկսած 1970թ-ից) և այլն:

Հայաստանի նկարիչների միության անդամ է (1970թ.):

Արժանացել է Հայկական ԽՍՀ պետական մրցանակի (1981թ.): Պարզևատրվել է Հայաստանի Հանրապետության «Մովսես Խորենացի» մեդալով՝ հայկական արվեստի զարգացմանը բերած նպաստի համար (2001թ.), Հայաստանի Հանրապետության

նախագահի մրցանակով՝ արվեստի ասպարեզում ունեցած ծառայությունների համար (2004թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ԵՐՆԵԿՅԱՆ Էդուարդո

EURNEKIAN Eduardo

Գործարար, բարերար: «Աերոպորտոս 2000» բաժնետիրական ընկերության նախագահ և գլխավոր սեփականատեր: Բուենոս Այրես, Արգենտինա: Ծնվել է 1933 թ-ին Բուենոս Այրեսում: Ամուսնացած չէ:

Ղեկավարել է իր ծնողների հիմնադրած գործվածքեղենի արդյունաբերական ձեռնարկությունները (մինչև 1980-ական թվականները): Գնել է ամերիկյան «Կաբելվիզիոն» ընկերության բաժնետոմսերը (1994թ-ին տիրապետել է այդ ընկերության բաժնետոմսերի 51 տոկոսին), երկու հեռուստատեսային ալիք, ռադիոկայան և այլն: Հետագայում նրա գործունեության հիմնական ոլորտը դարձել է օդանավակայանների սպասարկությունը: Ներկայումս «Աերոպորտոս 2000» բաժնետիրական ընկերության նախագահն է և գլխավոր սե-

փականատերը: Այս ընկերությունը Արգենտինայում տնօրինում է 33 վարձակալված օդանավակայան, որից՝ 8-ը միջազգային նշանակության: Ընկերությունն ունի օդանավակայաններ նաև Ուրուգվայում, Կոլումբիայում, Էկվադորում և այլ երկրներում: Նրա ղեկավարությամբ է հիմնովին վերանորոգվել Բուենոս Այրեսի միջազգային օդանավակայանը: Խոշոր ֆինանսական ներդրումներ է կատարել Արգենտինայի գրոսաշրջության և գյուղատնտեսության ոլորտներում՝ այդ նպատակով գնելով 200 000 հեկտար հողատարածք Արգենտինայի հյուսիսում:

«Աերոպորտոս 2000» ընկերությունը 50 տարի ժամկետով վարձակալել է Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանը (2001թ.): Հայաստանում ներդրումներ է կատարել նաև էլեկտրակայանների կառուցման (մոտ 40 մլն դոլար) և բանկային գործունեության (դառնալով «Կոնվերսանկի» սեփականատերը, 2007թ.) ոլորտներում:

«Կոմիտատո Լեոնարդո» իտալական ընկերության պատվավոր անդամ է: Յուենակո-ի մի քանի հանձնախմբերի Արգենտինայի ներկայացուցիչն է: «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է (2005թ.): «Սնունդ Հայաստանի երեխաներին» հիմնադրամի պատվավոր անդամ է:

Պարզևատրվել է Հայաստանի Հանրապետության «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով (հայրենիքին մատուցած ծառայությունների համար, 2006թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ԹԵՐԶԻԱՆ Երվանդ

TERZIAN Yervant

Աստղագետ: Կոռնելի համալսարանի Դեյվիթ Դունկանի անվան ֆիզիկայի պրոֆեսոր: Իթակա, Նյու Յորք, ԱՄՆ: Ծնվել է 1939թ. փետրվարի 9-ին Ալեքսանդրիայում (Եգիպտոս): Հայրանունը՝ Պետրոս: Ունի մեկ որդի՝ Սևան, և մեկ դուստր՝ Թամար:

Ուսանել է Կահիրեի ամերիկյան համալսարանում՝ ստանալով գիտության մագիստրոսի աստիճան ֆիզիկայի և մաթեմատիկայի բնագավառում (Եգիպտոս, 1960թ.): Տեղափոխվելով Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ աստղագիտություն է ուսանել Ինդիանայի համալսարանում, այն ավարտել է 1963թ-ին: Նույն համալսարանում արժանացել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճանի աստղագիտության բնագավառում (1965թ.): Գիտությունների պատվավոր դոկտորի կոչման է արժանացրել Ինդիանայի համալսարանում (1989թ.), Երևանի պետական համալսարանում (Հայաստան, 1994թ.), Տեսալուսնիկի համալսարանում (Հունաստան, 1997թ.), Միացյալ Քոլեջում (Նյու Յորք, 1999թ.):

Իբրև գիտաշխատող գիտական հետազոտություններ է կատարել Կոռնելի համալսարանի Արեսիբոյի աստղադիտարանում (Պուերտո Ռիկո, 1965-67թթ.): Եղել է նույն համալսարանի աստղագիտության օգնական-պրոֆեսոր (1967-72թթ.), ապա Ռադիոֆիզիկայի և տիեզերական հետա-

զոտությունների կենտրոնի փոխտնօրեն (1968-74թթ.): Աստղագիտության պաշտոնակից պրոֆեսորի պաշտոն է զբաղեցրել 1972-77թթ.: Աստղագիտության բնագավառում դասախոսություններով հանդես է եկել Մոնրեալի համալսարանում (Կանադա, 1973-74թթ.), Տեսալուսնիկի համալսարանում (Հունաստան, 1974թ.), Կոռնելի համալսարանի ավարտական ֆակուլտետում (1974-79թթ.): 1977թ-ին նշանակվել է Կոռնելի համալսարանի պրոֆեսոր աստղագիտության բնագավառում: Ղեկավարել է նույն համալսարանի աստղագիտության բաժինը (1979-99թթ.): Եղել է Ռադիոֆիզիկայի և տիեզերական հետազոտությունների կենտրոնի գործադիր տնօրեն (Կոռնելի համալսարան, 1979-80 և 1992-93թթ.): Դասավանդել է Կոռնելի համալսարանի գիտության ու տեխնոլոգիայի պատմության և փիլիսոփայության (1986թ.), ինչպես նաև գիտական և տեխնոլոգիական ուսումնասիրությունների ավարտական դասընթացներում (սկսած 1991թ.): Ջբաղեցրել է Նյու Յորքի նահանգի բուլեջների և համալսարանների ավարտական ուսումնական և գիտական ծրագրերի կենտրոնի տնօրենի պաշտոնը (1988-99թթ.): Ստանալով Ջեյմս Վիկսի անվան ֆիզիկայի պրոֆեսորի կոչում՝ շարունակել է դասավանդել Կոռնելի համալսարանում (1990-99թթ.): Իբրև հրավիրյալ պրոֆեսոր դասավանդել է Սան Դիեգոյի համալսարանում (1999-2000թթ.): Եղել է Ամերիկյան աստղագիտական ընկերության Շապլեյի անվան դասախոս (1974-2001թթ.): Ներկայումս տնօրենն է Օդագնացության և տիեզերագնացության ազգային վարչության Նյու Յորքի նահանգի աստղագիտական ծրագրերի դրամաշնորհների հանձնախմբի (սկսած 1996թ-ի): 1999թ-ից սկսած կրում է Կոռնելի համալսարանի Դեյվիթ Դունկանի անվան ֆիզիկայի պրոֆեսորի պատվավոր կոչումը:

Հեղինակ կամ համահեղինակ է 220 գիտական հոդվածի՝ աստղագիտության, մասնավորապես, միջաստղային միջավայրերի, համաստեղությունների և ռադիոաստղագիտության բնագավառներում: Խմբագրել է 6 գիտական մենագրություն: Եղել է «Աստղաֆիզիկայի հանդեսի» գիտական խմբագիրը (1989-99թթ.), նաև «Աստղագիտության և աստղաֆիզիկայի հանրագիտարանի» խմբագրական կազմի անդամ (1982-92թթ.):

ԱՄՆ-ի գիտությունների ազգային ակադեմիայի անդամ է, եղել է այդ հաստատության ռադիոաստղագիտության (1989-76թթ) և ռադիոհաճախականությունների (1974-76թթ.) հանձնախմբերի անդամ: Եղել է Սթոնոլորտի և իոնոսֆերայի ազգային կենտրոնի Արեսիբոյի գիտական խորհրդակցական հանձնախմբի (1976-79թթ.) և Ռեակտիվ շարժիչների լաբորատորիայի ռադիոաստղագիտական խորհրդակցական հանձնախմբի (1973-93թթ.) անդամ: Աստղագետների միջազգային միության անդամ է, եղել է այդ միության տարբեր միջազգային գիտաժողովների կազմակերպման հանձնախմբերի անդամ, մասնավորապես «Թափառող միգամածությունների ուսումնասիրման» միջազգային գիտաժողովների (1981-82, 1985-87, 1991-92, 1995-96թթ.), նաև Լուսնային աստղագիտության աշխատանքային խմբի անդամ (1993-99թթ.): Անդամ է Ազգային գիտական հիմնադրամի նախագահական կրթաթոշակների հանձնախմբի (սկսած 1992թ.): Անդամակցել է Օդագնացության և տիեզերագնացության ազգային վարչության ինֆրակարմիր մարզի աստղադիտակի հանձնախմբին (1994-97թթ.): Ամերիկյան աստղագետների միության անդամ է, Հ.Ն. Ռուսսելի անվան մրցանակներ շնորհող հանձնախմբի անդամ՝ 1997-2000թթ.: Աշխարհի ամենամեծ՝ «Քառակուսային կիլոմետրական աստղադիտակի» ուղղորդման և սարքերով ապահովման միջազգային հանձնախմբի անդամ է 2001թ-ից և ներկայումս վերջինիս հիման վրա ստեղծված միջազգային համատիրության նախագահը (սկսած 2002թ-ից): Հունական աստղագիտական ընկերության անդամ է:

Ղեկավարել է Միացյալ Նահանգների ազգային գիտական հիմնադրամի պատվիրակությունը Սաուդյան Արաբիայում կայացած Աստղագետների միջազգային խորհրդակցությունում (1977թ.): Եղել է Նյու Յորքի աստղագիտական ընկերության (1969-78թթ.) և Յորքի աստղագիտական միության (1974-78թթ.) փոխնախագահը: Նախագահն է եղել Աստղագետների միջազգային միության Միջաստղային միգամածությունների գիտաժողովի (1976-77թթ.), Օդագնացության և տիեզերագնացության ազգային վարչության Միգամածությունների ուլտրամանուշակագույն մարզի հետազոտման վերլուծական հանձնախմբի (1982, 1984, 1987, 1990-93թթ.), Աստղագետների միջազգային միության Միջաստղային միջավայրերի հետազոտման միջազգային գիտաժողովի (1982), Աստղագետների միջազգային միության Միգամածությունների ուսումնասիրման աշխատանքային խմբի (1985-94թթ.), Օդագնացության և տիեզերագնացության ազգային վարչության Միջաստղային մատերիայի ուսումնասիրության հանձնախմբի (1989թ.) և նույն հաստատության Վճռորոշ նախագծերի խմբի (1993թ.), ինչպես նաև Աստղադիտակների տեղադրման հանձնախմբերի (1997-2001թթ.), Ամերիկյան աստղագիտների միության Ամբողջական վերլուծությունների հանձնախմբի (1994-95թթ.), 21-րդ դարի Հունական աստղագիտության հանձնախմբի (1998թ.), Հունաստանի տնտեսական զարգացման նախարարության գիտական հիմնարկների հանձնախմբի (Աթենք, 2005թ.): Իբրև համանախագահ ղեկավարել է Ալտիվ գալակտիկաների միջուկների միջազգային գիտաժողովը (1997-98թթ.): Կոռնելի համալսարանում նախագահել է Նշանակումների և ընտրությունների (1983-84թթ. և 1998-2000թթ.), Գիտահետազոտական քաղաքականության (1982-83թթ.), Գոլդվորթեր կրթաթոշակի (1995-99թթ.), Համալսարանական դասախոսությունների (սկսած 2004թ.) հանձնախմբերում:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ար-

տասանամյան անդամ է (սկսած 1990թ.): Համանախագահն է Հայաստանի աստղագետների միության (սկսած 2001թ.): Արժանացել է Երևանի պետական համալսարանի «Պատվավոր դոկտորի» կոչման (1994թ.): Հիմնադիրն է «Երվանդ Թերզյան, Կոռնելի համալսարանի կրթաթոշակ» հիմնադրամի (1999թ.): Նախագահն է Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի գիտական խորհրդի (Նյու Յորք, սկսած 2000թ-ից):

Արժանացել է Քլարկի անվան մրցանակի՝ գերազանց դասավանդման համար (Կոռնելի համալսարան, 1984թ.), «Միզմա Բսի» հետազոտական ընկերության Կոռնելի բաժնի նախագահի պատվավոր կոչման (1977-78թթ.), Հյուսիսային Ամերիկայի հայ ուսանողական ընկերության (հիմնված 1911թ.) Տիգրան Կաբակչյանի անվան մրցանակի (Բոստոն, 1985թ.), Գիտության զարգացման ամերիկյան ընկերության մրցանակի (2000թ.), Կահիրեի ամերիկյան համալսարանի պատվավոր շրջանավարտի կոչման (2005թ.): Ներկայացվել է Իթալայի (Նյու Յորք) գիտության կենտրոնի «Մեծարման սրահում» (2002թ.):

2005թ., Գայկական կենսագրական կենտրոնի «Գարգաթերի» տվյալների հիման վրա



ԹՈՍՈՒՆՅԱՆ Գարեգին

TOSUNYAN Garegin

Բանկային գործունեության ոլորտի իրավագետ: Ռուսաստանի բանկերի միության նախագահ: Իրավաբանական գիտությունների դոկտոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր: Մոսկվա, Ռուսաստանի Դաշ-

նություն: Ծնվել է 1955թ-ի մարտի 14-ին Երևանում (հայրանունը՝ Աշոտ): Ամուսնացած է, երկու երեխայի հայր է:

Ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը (1976թ.), Համամիութենական իրավաբանական հեռակա ինստիտուտի իրավաբանական ֆակուլտետը (1989թ.), Ռուսաստանի կառավարության Ազգային էկոնոմիկայի ակադեմիայի տնտեսագիտության ֆակուլտետը (1992թ.): Ստացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի (1985թ.), իրավաբանական գիտությունների թեկնածուի (1992թ.) և դոկտորի (1995թ.) գիտական աստիճաններ և պրոֆեսորի կոչում:

Իբրև գիտաշխատող աշխատել է Համամիութենական էլեկտրատեխնիկական ինստիտուտում (1977-88թթ.): Եղել է Մոսկվայի գիտության և տեխնոլոգիայի կոմիտեի աշխատակից (1988-90թթ.): Հիմնադրել է «Տեխնոբանկը» (1990թ.) և «Միջբանկային ֆինանսական տուն» միությունը (1992թ.), որին կից ստեղծել է գիտահետազոտական կենտրոն (1994թ.): Առաջին անգամ դասավանդել է «Բանկային իրավագիտություն» առարկան Ռուսաստանի կառավարության Ազգային էկոնոմիկայի ակադեմիայում (սկսած 1996թ-ից): Եղել է Մոսկվայի քաղաքապետի խորհրդատու ֆինանսական հարցերի գծով (1997թ.), Ռուսաստանի կառավարության վարչապետի խորհրդատու (1999թ.), այնուհետև Պետական Դումայի վարկային գործառույթների և ֆինանսական շուկայի հանձնախմբի փորձագիտական խորհրդի փոխնախագահ (1998-99թ.): Իբրև նախագահ ղեկավարել է Կենտրոնական Ռուսաստանի բանկերի միությունը (2001թ.): Ընտրվել է Ռուսաստանի բանկերի միության փոխնախագահ (1991-94թթ.), ապա առաջին փոխնախագահ (1994-2002թթ.): Սկսած 2002թ-ից Ռուսաստանի բանկերի միության նախագահն է:

Հեղինակ է մոտ 160 գիտական հոդվածի և 37 մենագրության: Հիշարժան են նրա «Ռուսաստանի Դաշնության բանկային օրենսդրությունը, ընդհանուր և հատուկ բաժիններ» դասագիրքը, 4 հատորով (1998-

2002թթ.), «Բանկերը և բանկային իրավագիտությունը Ռուսաստանում, փորձառություն, խնդիրներ, հեռանկարներ» (Մոսկվա, 1995թ.), «Պետական գործառույթներ ֆինանսների և վարկերի ոլորտում» (1997թ.), «Ընթացիկ օրենսդրությունը Ռուսաստանի Դաշնությունում» (Մոսկվա, 2002թ.) և բազմաթիվ այլ աշխատություններ: «Պետություն և օրենք», «Բանկային իրավունք», «Ազգային բանկի ամսագիր» հանդեսների խմբագրական կազմի անդամ է:

Նախագահն է Մոսկվայի բանկերի խորհրդի, «Ինտեր-բանկի» տնօրենների խորհրդի, Կենտրոնական Ռուսաստանի բանկերի միության, Մոսկվայում թույլատրված բանկերի խորհրդի: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Պետության և իրավունքի ինստիտուտի Ֆինանսների և բանկային իրավունքի կենտրոնի ղեկավարն է և Ռուսաստանի կառավարության Ազգային էկոնոմիկայի ակադեմիայի բանկային իրավագիտության ամբիոնի վարիչը:

Պարգևատրվել է Ռուսաստանի բիզնեսի ակադեմիայի «Դարին» ազգային մրցանակով (2006թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյունների տվյալների հիման վրա



ՌՈՐԳՈՍ արքեպիսկոպոս ԱՄՆՈՒԿՅԱՆ

TORKOM Archbishop MANOOGIAN

Ամենապատիվ Տեր Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյան, Հայ առաքելական եկեղեցու Երուսաղեմի 96-րդ հայոց պատրիարք: Ծնվել է 1919թ. փետրվարի 16-ին Բաղդատի հյուսիսում գտնվող Բաքուբաքղաքի մերձակայքի հայ գաղթականների ճամբարում:

Ուսանել է Երուսաղեմի հայոց պատրիարքության Սուրբ Հակոբի դպրեվանքում (1935-39թթ.): Ավելի ուշ ուսանել է նաև Քեմբրիջի եպիսկոպոսական աստվածաբանական բարձրագույն դպրոցում (Մասաչուսեթս, 1960-62թթ.): Չեռնադրվել է արեղա (1939թ.), վարդապետ (1946թ.), եպիսկոպոս (Էջմիածին, 1962թ.), արքեպիսկոպոս (Էջմիածին, 1968թ.):

Եղել է Երուսաղեմի պատրիարքության Հոգևոր ճեմարանի տեսուչի տեղակալ և անդամակցել է պատրիարքության պաշտոնական հրատարկությունների հրատարակչական խորհրդին (1942-46թթ.): Իբրև հոգևոր հովիվ ծառայել է հայոց եկեղեցիներում (ԱՄՆ, Հյուսիսային Ֆլիդելֆիա, Պենսիլվանիա, 1946-51թթ.): Եղել է Հայ առաքելական եկեղեցու Արևմտյան Ամերիկայի հոգևոր թեմի պատվիրակի փոխանորդ (Նյու Յորք, 1951-54թթ.): Նշանակվել է Երուսաղեմի հոգևոր ճեմարանի տեսուչ և պատրիարքության քարտուղար (1955-60թթ.): Առաջնորդել է Հայ առաքելական եկեղեցու Արևմտյան Ամերիկայի հոգևոր թեմը (Լոս Անջելոս, 1962-66թթ.), այնուհետև Արևելյան Ամերիկայի հոգևոր թեմը (1966-90թթ.):

1990 թվականից Երուսաղեմի 96-րդ հայոց պատրիարքն է: Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսի մահվանից հետո, մինչև նոր կաթողիկոսի ընտրությունը, եղել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կաթողիկոսական տեղապահ (1994-95թթ.):

Հեղինակ է 20 գրքի: Նրա աշխատությունները նվիրված են հայոց հոգևոր երաժշտության և ժամերգության (հիշարժան է նրա «Կոմիտասի հանճարը» աշխատությունը, Նյու Յորք 1987թ.), Հայոց մեծ եղեռնի պատմության, Երուսաղեմի սրբավայրերի, հայ հոգևոր գրականության ուսումնասիրությանը: Անգլերենից հայերեն է թարգմանել Վիլյամ Շեքսպիրի 154 սոնետները: Շեն Մահ գրական կեղծանվամբ հրատարակել է բանաստեղծական ժողովածուներ: Գործուն մասնակցություն է ունեցել Նյու Յորքի Սուրբ Վարդան տաճարի շինարարության կազմակերպմանը (օծված 1968թ.): Ղեկավարել է 1988թ-ի Սպիտակի և Լենինականի երկրաշարժի

աղետյալներին ամերիկահայ գաղութի օգնության կազմակերպումը:

Հայ առաքելական եկեղեցու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի փոխնախագահն է: Եղել է ԱՄՆ-ի «Քրիստոնեական եկեղեցիների ազգային խորհրդի» անդամ և «Կրոնը Ամերիկայի կյանքում» կազմակերպության խորհրդի նախագահ, «Վստահության կոչ» հաստատության ղեկավար խորհրդի անդամ:

Նյու Յորքի ընդհանուր աստվածաբանական ճեմարանի պատվավոր դոկտոր է: Պարգևատրվել է ԱՄՆ-ի «Ազատության արձանի» շքանշանով (1986թ.), «Էլիս Այլենդ» շքանշանով (1986թ.), «Կրոնը Ամերիկայի կյանքում» կազմակերպության «Տարվա մարդը» պատվավոր կոչմամբ (1990թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



**ԹՈՐՈՍՅԱՆ Լևոն
ԹՈՐՈՍԵԱՆ Լեոն**

TOROSSIAN Levon

Ֆիզիկոս, բառարանագիր, հրապարակախոս, թարգմանիչ: Վիեննա, Ավստրիա: Ծնվել է Բեյրութում (Լիբանան) 1935թ. ապրիլի 14-ին: Հակոբ Թորոսյանի և Մաքրուհի Նազարյանի որդին է: Ամուսնացած է Վալտրոդ Բրիգասկու (Waltraud Brigasky) հետ (Վիեննա, 1971թ.):

Սովորել է Բեյրութի ամերիկյան համալսարանում՝ ստանալով գիտության բակալավրի գիտական աստիճան ֆիզիկայի բնագավառում (Բեյրութ, 1958թ.):

Պաշտոնավարել է իբրև բարձրագույն ուսումնական հաստատություններում ֆիզիկայի դասավանդման հրահանգիչ (Բեյ-

րութ, Լիբանան, 1958-74թթ.), այնուհետև իբրև միջազգային պետական պաշտոնյա աշխատել է Միջուկային էներգիայի միջազգային գործակալությունում (Վիեննա, Ավստրիա, 1979-96թթ.):

Համահեղինակ է (6 այլ անձանց հետ) ֆիզիկայի մի շարք դասագրքերի, որոնք գրվել են Լիբանանի միջնակարգ դպրոցների ավարտական դասարանների համար, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով և գործածության մեջ են եղել մինչև 1999թ. դասավանդման ծրագրերի փոփոխությունը (Լիբանան, 1968-71թթ.):

Հեղինակն է «Օպարները հայերու մասին» քննադատական-վերլուծական ուսումնասիրության, որը նվիրված է «Բրիտանիկա», «Լարոս» և «Բրոկհաուզ» հանրագիտարաններում զետեղված հայերին առնչվող հոդվածներին (1985թ.): Հեղինակն է նաև «Գերմաներեն-հայերեն» (14000 բառահոդված, առաջին հրատարակություն, 1987թ.) և «Հայերեն-գերմաներեն» (15000 բառահոդված, առաջին հրատարակություն, 1988թ.) բառարանների, որոնք ունեցել են հետագա հրատարակություններ՝ կազմված առաջին հրատարակության բառարանների համադրությամբ (երկրորդ հրատարակություն՝ 40000 բառահոդված, 1994թ-ին, և երրորդ հրատարակություն, որը միայն գերմաներեն-հայերեն բաժնում պարունակում է մոտ 38000 բառահոդված, 2003թ-ին): Ֆրանսերեն է թարգմանել հայ մեծանուն երգիծաբան Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» երգիծավեպը (1993թ.): Հրատարակել է J'apprends l'armenien (ֆր., «Սովորում եմ հայերեն», Շիրակ հրատ., Բեյրութ, 1994թ.), «Գերմաներեն լեզուն» (Շիրակ հրատ., Բեյրութ, 1995թ.), «Նամակ կը գրես» (Շիրակ հրատ., Բեյրութ, 1996թ.) ձեռնակները: Գործուն մասնակցություն է ունեցել Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական (տերմինաբանական) խորհրդի (Մարսել, Ֆրանսիա) հրատարակած «Ուղեցույց» չորս հատորի ստեղծմանը (1993-2002թթ.): Տարբեր պարբերականներում հանդես է եկել կինոքննադատական հոդվածներով՝ հայերեն, անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով (1968-2003թթ.): Պարբերաբար հրապարակախո-

սական հոդվածներ է տպագրել սփյուռքահայ մամուլում, համազգային և համայնքային կյանքի խնդիրների վերաբերյալ:

Եղել է Հայկական բարեգործական ընդհանուր միության Վիեննայի մասնաճյուղի հանձնախմբի քարտուղարը (1980-92թթ.): Միջուկային էներգիայի միջազգային գործակալությունում աշխատած ժամանակաշրջանում անդամակցել է մասնագիտական բնույթի մի շարք կազմակերպությունների ու միությունների (Վիեննա, 1980-97թթ.):

Պարգևատրվել է «Հայկաշեն Ուզունյան» մրցանակով՝ «Գերմաներեն-հայերեն» բառարանի առաջին հրատարակության առթիվ (ՀԲԸՄ, 1987թ.): Գնահատանքի է արժանացել Վիեննայի հայոց եկեղեցու հոգևոր առաջնորդ Ս. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի կողմից՝ ծննդյան 60-ամյակի կապակցությամբ (1995թ.):

2004թ. Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաթերթի» տվյալների հիման վրա



ԹՈՐՈՍՅԱՆ Ջիմ

TOROSSIAN Jim

Ճարտարապետ: Հայաստանի և ԽՍՀՄ ժողովրդական ճարտարապետ: Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի անդամ: Ճարտարապետության միջազգային ակադեմիայի անդամ, պրոֆեսոր: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է 1926թ. ապրիլի 18-ին Երևանում (հայրանունը՝ Պետրոս): Ամուսնացել է Մարգո Մուրադյանի հետ:

Ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը (1949թ.): Ուսանել է ԽՍՀՄ ճարտարապետական ակադեմիայի ասպիրանտուրայում: Նույն ակադեմիայում

ստացել է ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճան (Մոսկվա, 1954թ.) Ճարտարապետության պրոֆեսոր է (Ճարտարապետության միջազգային ակադեմիա, սկսած 1979թ-ից):

Ղեկավարել է «Երևաննախագիծ» նախագծային ինստիտուտի արվեստանոցը (սկսած 1958թ-ից): Եղել է Երևանի գլխավոր ճարտարապետ (1971-81թթ.): Ղեկավարել է Հայաստանի ճարտարապետական պլանավորման գլխավոր վարչությունը:

Նրա լավագույն գործերի թվում են Օշականում «Հայ գրերի գյուտի 1600-ամյակին» նվիրված (1962թ.), Երևանում քանդակագործ Արա Շիրազի կերտած՝ Ալ. Մյասնիկյանի (1982թ.), Աշտարակի շրջանում Վանի ինքնապաշտպանության (1980թ.) հուշարձանների համալիրների, Մոսկվայում՝ Ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսում Հայաստանի տաղավարի, Նորքի «Ընդունելությունների տան», Սպիտակ քաղաքի կենտրոնական հրապարակի, Երևանում «Հայաստան» (հայտնի է որպես «Կասկադ») համալիրի, «Հայկական զարգացման բանկի» և Երևանի քաղաքապետարանի շենքերի (2005թ.), բազմաթիվ շատրվանների, հասարակական նշանակության շինությունների նախագծերը:

Հայաստանի ճարտարապետների միության անդամ է (սկսած 1957թ.) և եղել է այդ միության վարչության փոխնախագահ (1962-64թթ.): Եղել է ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի անդամ (1983-91թթ.): Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի արտասահմանյան անդամ է (սկսած 1991թ-ից): Ճարտարապետների միջազգային ակադեմիայի պրոֆեսոր է: Ճարտարապետների միջազգային ակադեմիայի Մոսկվայի բաժնի ակադեմիկոս է (1992թ-ից): Ռուսաստանի ճարտարապետության և շինարարության ակադեմիայի արտասահմանյան անդամ է: Անդամ է Բուլղարիայի և Վրաստանի ճարտարապետների միությունների:

Արժանացել է Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության պատվոգրերի (1960 և 1962թթ.), Հայկական ԽՍՀ վաստակավոր ճարտարապետի կոչ-

ման (1966թ.), ԽՍՀՄ պետական մրցանակի՝ Լենինականում դրված Ավ. Իսակահակյանի արձանի համար (1977թ.), «Տարվա լավագույն ստեղծագործությունը» համաժողովրդական մրցանակի (1982թ.) Հայաստանի պետական մրցանակի՝ Երևանի «Լենինի հրապարակ» (ներկայումս՝ «Հանրապետության հրապարակ») մետրոյի կայարանի համար (1983թ.), ԽՍՀՄ «Աշխատանքային կարմիր դրոշի» և «Պատվո նշան» շքանշանների, ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի ոսկե մեդալի՝ Մարտիրոս Սարյանի մահարձանի համար (1983թ.), ԽՍՀՄ ժողովրդական ճարտարապետի կոչման (1988թ.): Երևանի պատվավոր քաղաքացի է (2003թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման



**ԹՈՒՂԱՏՅԱՆ Արի
ԹՈՒՂԱՏԵԱՆ Արի**

TOUGLADJIAN Ari

Ֆիզիկոս, խմբագիր, հասարակական գործիչ: Գիտությունների դոկտոր: Լիոն—Վիլնորբան, Ֆրանսիա: Ծնվել է Բեյրութում (Լիբանան), 1936թ. փետրվարի 18-ին: Բնիկ տիգրանակերտցի Արամ Թուրքիանյանի և խարբերդցի Աստղիկ Պուրիզանյանի որդին է: Ամուսնացած է Պոլետ Ջյուրբջյանի (Փոլեթ Քիրքճեան) հետ (Մարտի, 1966թ.), երեխաները՝ Աստղիկ, Բենիամին, Միլվիա:

Նախնական կրթությունը ստացել է Բեյրութի Ազգային Սահակյան վարժարանում, այնուհետև սովորել է Ֆրանսիական երկրորդական վարժարանում: Ուսանել է Բարձրագույն ճարտարագիտական դպրո-

ցում՝ ստանալով քաղաքացիական ճարտարագետի վկայական (Բեյրութ, 1958թ.), ինչպես նաև Բեյրութի մաթեմատիկական և ֆիզիկական հետազոտությունների կենտրոնում՝ արժանանալով գիտության պատվավորի կոչման (1959թ.): Շարունակելով իր կրթությունը Լիոնի համալսարանում՝ ստացել է համալսարանական վկայական (1962թ.), իսկ 1969-ին նույն համալսարանում նրան շնորհվել է գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Պաշտոնավարել է Բեյրութի երկաթուղային ծառայությունում (Բեյրութ, Լիբանան, 1958-61թթ.): Իբրև գիտաշխատող աշխատել է Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնում (Լիոն, Ֆրանսիա, 1963-2001թթ.)՝ 1972-ից սկսած զբաղեցնելով նույն հաստատության գիտական հետազոտությունների հանձնակատարի պաշտոնը Լիոնի համալսարանում:

Համահեղինակ է ավելի քան 70 գիտական հրատարակության: Հատկապես հիշարժան է նրա «Երկատոմ մոլեկուլներ: Սպեկտրոսկոպիական տվյալներ» հ.II (1975թ.) և հ.III (1978թ.) գիտական աշխատությունը:

Եղել է «Բանբեր» ամսագրի խմբագիրը (Մարտի, 1973-2005թթ.): Խմբագրել է Մոնտե-Կառլոյի ռադիոկայանի հայերեն գիտակրոնական հաղորդումները (սկսած 1979-ից): Ֆրանսերեն է թարգմանել գերմանացի գիտնական Բեռնարդ Ֆիլբերտի «Միջուկային պատերազմ և աստվածաշնչային մարգարեություն» գիրքը (Լոզան, Շվեյցարիա, 1973թ.):

Նախաձեռնել է լուսատիպ մեքենաների պատահանների վրա հայերեն տառերի ցուցադրության աշխատանքները (1980թ.), իսկ 1984-ից սկսած երրորդ սերնդի «Մակինտոժ» համակարգիչներում հայերեն տառերի և ծրագրերի գործածությունը: «Մակինտոժ» համակարգիչների գործածության վերաբերյալ դասախոսություններով հանդես է եկել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանի և Երևանի մատենադարանի աշխատակիցների առջև (սկսած 1988-ից):

Համահրատարակիչն է Արևմտահայ

աշխարհաբարի եզրաբանական խորհրդի «Ուղեցոյց»-ի առաջին (Մարտի, 1993թ.) և երկրորդ (Մարտի, 1995թ.) հատորների, «150-ամյակի Նոր Կտակարան» (Բեյրութ, 1995թ.), «1700-ամյակի Աստվածաշունչ» (Բեյրութ, 2001թ.) հրատարակությունների, «Համակարգչային Աստվածաշունչ և բազմալեզու համաբարբառ» (Ալգաս, 2002թ.) սեղմակավառակի: Ընդգրկվել է «Գիտություն և տեխնիկա» հանդեսի խմբագրական կազմում (Երևան, 1992թ.):


Համահիմնադիրն է «Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ» (Մարտի, 1989թ.), «Լիոն-Երևան ընկերություն» (Լիոն, 1992թ.), «Չարագցման հայ-ֆրանսիական ընկերություն» (Մարտի, 1994թ.), «Հույս Հայաստանի համար» (Լիոն, 1994թ.), «Հաշմանդամների հայ-ֆրանսիական լիոնյան ընկերություն» (Լիոն, 1998թ.) հասարակական կազմակերպությունների:

Գործուն մասնակցություն է ունեցել Հայ գիտնականների և ճարտարագետների երկրորդ համաշխարհային համագումարի (Փարիզ, 1993թ.), «Պետություն և հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններ» գիտաժողովի (Երևան, 1998թ.) կազմակերպմանը: Մասնակցել է Հայ գիտնականների և ճարտարագետների առաջին համաշխարհային համագումարին (Լոս Անջելոս, 1989թ.) և Հայ էներգետիկների առաջին համագումարին (Երևան, 1992թ.):

«Արարատ» գիտությունների միջազգային ակադեմիայի ընդհանուր քարտուղարն է (Փարիզ, 1986-ից սկսած): Ղեկավարն է Երևանի պետական և Լիոնի Կլոդ Բեռնարի անվան (Լիոնի առաջին) համալսարանների համագործակցության ծրագրերի (Լիոն, 1992թ.): «Արարչագործության հետազոտությունների ընկերության» անդամ է (ԱՄՆ, 1980թ.):

Պարգևատրվել է «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերության» հուշագրով (Նյու Ջերսի, ԱՄՆ, 2002թ.):

2004թ., Գայկական կենսագրական կենտրոնի «Գարգաբերի» տվյալների հիման վրա



**ԹՈՒՂԱՏՅԱՆ Բարսեղ
ԹՈՒՂԱՏԵԱՆ Բարսեղ
(ԹՈՒՂԱՏԻ)**

*TOUGLADJIAN Parsegh
TUGLACI Pars*

Լեզվաբան, բառարանագիր, արևելագետ, պատմաբան: Պատվավոր դոկտոր, պատվավոր պրոֆեսոր: Ստամբուլ, Թուրքիա: Ծնվել է 1933թ. ապրիլի 1-ին Ստամբուլում (Թուրքիա):

Ավարտել է Կիպրոսի Մելքոնյան վարժարանը (1951թ.). ապա Միչիգանի համալսարանի անգլիական գրականության բաժինը (1955թ.):

Դասավանդել է Անկարայի ռազմական-բժշկական ակադեմիայում (1955-58թթ.), Ստամբուլի բարձրագույն ուսումնական հաստատություններում (1958-61թթ.): Թուրքիայի Հանրապետության նախագահ Ֆահրի Կորուբյուրքի հետ հանդիպումից հետո (1974թ.) ստացել է նրա աջակցությունը և ձեռնամուխ է եղել օսմանյան արխիվների ուսումնասիրությանը՝ հրատարակության նախապատրաստելով «Թուրքական մեծ հանրագիտարանի» 25 հատոր:

Հեղինակ է մոտ 40 գրքի: Հրատարակել է "Okyanus" («Օվկիանոս») ժամանակակից թուրքերենի սովորածավալ եռահատոր բառարանը (1971-74թթ.), «Թուրքերեն-անգլերեն մեծ բառարանը» (1966թ.), «Թուրքերեն-ֆրանսերեն մեծ բառարանը» (1968թ.), բազմաթիվ երկլեզու մասնագիտական բառարաններ և պատմագիտական աշխատություններ Օսմանյան կայսրության պատմության վերաբերյալ: Հիշարժան են նրա «Արևմտահայերը պատմության մեջ» (թուրքերեն, 3 հատորով, որն

ընդգրկում է նաև նշանավոր հայերի համառոտ կենսագրականները, 2004թ.), «Բայան ընտանիքի դերը օսմանյան ճարտարապետության մեջ» (Ստամբուլ, 1990թ.), «Ստամբուլի հայկական եկեղեցիները» (1991թ.), «Դադյան ընտանիքի դերը Օսմանյան պետության հասարակական, տնտեսական և քաղաքական կյանքում» (1993թ.) և այլն, որոնց մի մասը թարգմանված է անգլերեն, ֆրանսերեն լեզուներով:

Արժանացել է Էլիզաբեթ թագուհու մրցանակի (1966թ.), Փարիզի Հասարակական գիտությունների միջազգային ակադեմիայի (Միջազգային հարաբերությունների ինստիտուտ) պատվավոր պրոֆեսորի և ցմահ անդամի կոչման, Ամերիկայի միջազգային մատենագիտական ինստիտուտի պատվավոր պրոֆեսորի կոչման, Քեմբրիջի միջազգային կենսագրական ընկերության պատվավոր անդամի կոչման, Բուենոս Այրեսի դիվանագիտական ակադեմիայի անդամության, ԱՄՆ-ի կենսագրական ինստիտուտի հետազոտական միության անդամի կոչման, Գիտության, մշակույթի և արվեստների միջազգային համագումարի «Միջազգային պատվո շքանշանի» (Օքսֆորդի համալսարան, Լոնդոն, 2008թ.) և այլն:

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա

Ժ



ԺԱՆՍԵՄ Ժան (ՍԵՄԵՐԾՅԱՆ Հովհաննես)

JANSEM Jean (SEMERDJIAN Hovanes)

Գեղանկարիչ: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի անդամ: Փարիզ, Ֆրանսիայի Հանրապետություն: Ծնվել է Բուրսայում (Թուրքիա) 1920թ. մարտի 9-ին (հայրամուռը՝ Միրիջան):

Հաճախել է Մոնպառնասի և Մարեսի (Փարիզ) արվեստների երեկոյան դպրոցները (1934-36թթ.): Ուսանել է Փարիզի զարդարվեստի բարձրագույն դպրոցում (1936-38թթ.), այնուհետև Արվեստների ազգային բարձրագույն դպրոցում (Փարիզ, 1938թ.):

րիզ, 1938թ.): Կատարելագործվել է հաճախելով Սաբատիեի արվեստանոցը (1936-67թթ.):

Մասնակցել է մոտ 100 նկարչական ցուցահանդեսի և մշտական ցուցադրության (սկսած 1946թ-ից), այդ թվում «Սալոն դեզ Էնդեպանդան», «Սալոն դե Տուիլերի», «Սալոն դ'Ար Սաքր», «Սալոն դը Լ'Էրոլ դե Փարի», «Սալոն դը Կոմպարեզոն» սրահների ցուցադրություններին: Անհատական նկարչական ցուցահանդեսներ է ունեցել Փարիզում (սկսած 1935թ-ից), Լոնդոնում (սկսած 1966թ-ից), Տոկիոյում (սկսած 1971թ-ից), Նյու Յորքում (սկսած 1965թ-ից), Երևանում (սկսած 1973թ-ից) և աշխարհի բազմաթիվ այլ քաղաքներում: Նրա ստեղծած նկարները, ի թիվս աշխարհի բազմաթիվ նշանավոր թանգարանների, գտնվում են Փարիզ քաղաքի և Ֆրանսիայի պետական հավաքածուներում ու թանգարաններում, Ճապոնիայի երկու թանգարանում՝ Ազումիոնոյի և Գիսկայի, որոնք ամբողջությամբ նվիրված են նրա աշխատանքների ցուցադրությանը: Երևանի ցեղասպանության թանգարան-ինստիտուտի սրահներից մեկը ներկայացնում է նրա «Ցեղասպանություն» նկարաշարը:

Նրա նկարներում կարելի է տեսնել հույն ձկնորսներին և երեխաներին, տներն ու երեխաներին Իսպանիայում, սգո թափորը, ցլամարտը, իտալական շուկան, Վենետիկը, դիմակահանդեսները, տոնավաճառները գյուղում, բնապատկերներ և այլն: Նրա նկարաշարերից հիշարժան են նաև Հայոց ցեղասպանությանը նվիրված գործերը, Մերվանտեսի, Բողլերի, Վիլոնի, Գարսիա Լորկայի և այլոց գրական ստեղծագործությունների դրվագները:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի անդամ է (սկսած 2002թ-ից) և նույն ակադեմիայի պատվավոր դոկտոր (2001թ.): Փարիզի «Սալոն դ'Օթոնի» («Աշնանային սրահ») կազմակերպչական հանձնախմբի անդամ է և եղել է «Երիտասարդ նկարիչներ» հանձնախմբի նախագահը:

Արժանացել է «Պոպուլիստ» (1951թ.), «Անտրալ» (1953թ.), «Կոմպարեզոն» (Մեքսիկա, 1958թ.), «Ազգային դրամաշնորհ» (1954թ.), «Վոբուրիցի անվան» (1958թ.) «Մեխիկոյի թանգարանի» և բազմաթիվ այլ մրցանակների: Պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով (Երևան 2002թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ԺԵՐԱՆՅԱՆ Ռիշար, Խաչատուր

JERANIAN Richard

Գեղանկարիչ: Փարիզ, Ֆրանսիա: Ծնվել է 1921թ. հուլիսի 17-ին Սեբաստիայում (Արևմտյան Հայաստան): Անդրանիկ Օերանյանի և Ֆլոր Զարադյանի որդին է:

Ուսանել է Մարսելի Գեղարվեստի

բարձրագույն դպրոցում, ապա Փարիզի Ժուլիան, իսկ այնուհետև Գրանդ Շոմիեր ակադեմիաներում:

Ծառայել է Ֆրանսիայի ռազմաօդային ուժերում (1944-46թթ.): Անհատական և խմբային ցուցահանդեսներ է ունեցել սկսած 1953թ-ից (մոտ 60), այդ թվում Փարիզի «Աշնանային ցուցասրահում», «Անկախ նկարիչների ցուցասրահում», «Ֆրանսիական նկարիչների ցուցասրահում», «Լատինական ցուցասրահում», «Հենո» ցուցասրահում (2007թ.), Բեյրութի «Արկադ» (1958թ.) և «Կասիա» (1967թ.) պատկերասրահներում, Վաշինգտոնի «Ջեյսոն» պատկերասրահում (1965թ.), Ժնևի «Գանգոնի» (1963թ.) և «Միջազգային» (1973թ.) պատկերասրահներում, Մյունխենի «Շումախերգալերի» ցուցասրահում (1967թ.), Նյու Յորքի «Ռանդալ» պատկերասրահում (1974թ.), Նովոսիբիրսկի «Ակադեմգորդոկի» պատկերասրահում (1980թ.), Կարակասի «Գալերիա վալոր արտ» ցուցասրահում (1981թ.), մի քանի ցուցահանդեսներ Հայաստանում՝ Երևանում և Լենինականում (սկսած 1964թ-ից, վերջինը՝ 2005թ-ին, Երևանում): Նրա ստեղծագործությունների մի մասը մշտապես ցուցադրվում է աշխարհի տարբեր թանգարաններում, ներառյալ Դալլասի թանգարանը (ԱՄՆ), Մոսկվայի Պուշկինի անվան թանգարանը, Հայաստանի պետական պատկերասրահը, Փարիզի ժամանակակից արվեստի թանգարանը և Ֆրանսիայի ազգային գրադարանի ցուցադրությունը, Նովոսիբիրսկի թանգարանը, Գրիմի Այվազովսկու թանգարանը, Սանկտ Պետերբուրգի, Բեյրութի, Աթենքի, Թեհրանի և բազմաթիվ այլ քաղաքների թանգարանները:

Նրա կտավների ու գրաֆիկական գործերի շարքում հիշարժան են բազմաթիվ բնանկարները («Կոլորադոյի բնապատկեր (1969թ.)», «Գառնիի բնապատկեր (1972թ.)», նատյուրմորտները («Կապույտ նատյուրմորտ (1967թ.)», «Ամառային նատյուրմորտ (1993թ.)», «Չկներով նատյուրմորտ (1992թ.)» և այլն), քաղաքային տեսարանները («Աստվածամոր տաճարը և Փարիզի կամուրջները (1963թ.)», «Վենե-

տիկի մեծ ջրանցքը (1976թ.)», «Կամուրջը Բրետոնում», հայկական եկեղեցիների պատկերները («Մուրթ Խաչ, Ախթամար (2003թ.)» «Տաթևի վանքը (2001թ.)»), երաժշտական թեմաներով գործերը («Նվիրում Մոցարտին (1972թ.)», «Դեբյուսիի ծովը», «Կոմիտասի Պատարագը (1998թ.)»), առասպելաբանական և կրոնական թեմաներով գործերը («Սիզիփոսի առասպելի կերպավորումը (1999թ.)», «Հիսուսի մուտքը Անի (1981թ.)»), սյուրռեալիստական ստեղծագործությունները («Ժամանակ, քաղաքակրթություն (2005թ.)», «Ժամանակը և պատմությունը (2001թ.)»):

Նրա ստեղծագործությունների մեկնաբանմանը նվիրված են մի շարք մենագրություններ «Ժերանյան» խորագրով՝ Յ. Աճեմյանի (Բեյրութ, 1968թ.), Է. Էրոյա-

նի (Նյու Յորք, 1970թ.), Գ. Մուրգի (Փարիզ, 1983թ.), Զ. Ժերմակի (Փարիզ, 2003թ.): Հիշարժան է նրա ստեղծագործությունների վերջին արժանը «Ռիչարդ Ժերանյան, 60 տարվա զարգացող նկարչություն» վերնագրով («Ար» հրատարակչություն, Փարիզ, 2005թ.):

Արժանացել է Դոլիի «Մեծ մրցանակի» (1952թ.), Հոնֆլորի «Բնապատկերի մրցանակի» (1953թ.), Փարիզ քաղաքի արժաքնման (1955թ.), «Արվեստների և գրականության» շքանշանի (Ֆրանսիա, 1959թ.), Եվրոպական նկարչության առաջին մրցանակի (Մոնակո, 1966թ.), Մարտիրոս Մարյանի անվան մրցանակի (Երևան, 1988թ.) և այլն:

2007թ. Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաթերթի» տվյալների հիման վրա

h



ԻԳՆԱՏԻՈՒՄ ՊՈԼ ՌՈՔԵՐՏ (ԻԳՆԱՏՈՍՅԱՆ ՊՈԳՈՍ)

IGNATIUS Paul Robert (IGNATOSSIAN Poghos)

Պետական, վարչական և ռազմական գործիչ: ԱՄՆ-ի ռազմածովային ուժերի նախարար (1967-69թթ.), ԱՄՆ-ի պաշտպանության փոխնախարար (1964-67թթ.): Վաշինգտոն, ԱՄՆ: Ծնվել է 1920թ. նոյեմբերի 11-ին Լոս Անջելեսում, Խարբերդից (Արևմտյան Հայաստան) գաղթած հայ ընտանիքում:

Ավարտել է Կալիֆոռնիայի հարավային համալսարանը (պսակավորի աստիճանով՝ ստանալով գերազանցության վկայական, 1942թ.): Ուսանել է Հարվարդի համալսարանում՝ ստանալով մագիստրոսի աստիճան տնտեսական ղեկավարման ոլորտում (1947թ.):

Մասնակցել է Երկրորդ համաշխարհային պատերազմին՝ ծառայելով իբրև նավատորմի սպա հաժանավի վրա (Խաղաղ օվկիանոս, Ֆիլիպիններ), ապա Վաշինգտոնում՝ բանակի մատակարարումների վարչությունում (1942-46թթ.): Հարվարդում աշխատել է իբրև տնտեսական հետազոտության օգնական և հրահանգիչ (1947-50թթ.): Հիմնադիրներից մեկն է Բոստոնի «Հարբրիջ հաուզ» խորհրդատվական և հետազոտական հիմնարկի, որտեղ պաշտոնավարել է իբրև փոխնախագահ և տնօրեն: Եղել է ԱՄՆ-ի բանակի քարտուղարության (նախարարության) քարտուղարի (փոխնախարարի) օգնական (կառույցների, թիկունքի և մատակարարում-

ների գծով, 1961-63թթ.), ապա փոխարտուղար (1964-65թթ.), այնուհետև ԱՄՆ-ի պաշտպանության նախարարության փոխնախարար (1965-67թթ.): Նշանակվել է ԱՄՆ-ի ռազմածովային ուժերի նախարար (ԱՄՆ-ի առաջին հայազգի բարձրագույն պաշտոնյան, 1967-69թթ.): Եղել է «Վաշինգտոն փոստ» օրաթերթի գլխավոր տնօրենը և նույնամուն ընկերության առաջին փոխնախագահը (1969-71թթ.): Իբրև նախագահ և միավորման գլխավոր տնօրեն ղեկավարել է Օդանավային փոխադրումների ընկերությունը (1972-86թթ.): Պաշտոնավարել է իբրև Թիկունքի մատակարարումների առևտրական ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի նախագահ (1986-93թթ.):

Ջորջ Մարշալի անվան հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է: Վաշինգտոնի Նահանգային խորհրդի անդամ է: Աշխատակցում է Վաշինգտոնի արտաքին հարաբերությունների ինստիտուտին:

Հեղինակ է բազմաթիվ հոդվածների և գրքերի: Հիշարժան են նրա «Ղեկի մոտ՝ իմ կյանքը նավատորմում, կառավարությունում և գործարար աշխարհում» (որտեղ անդրադարձել է նաև իր հայկական արմատների նշանակությանը կյանքի ընթացքում, 2006թ.) և «Մասամբ գիտեմ: Պատմվածքներ իմ հասունացման մասին» (2000թ.) հուշագրությունները:

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ԻՍՏԵՓԱՆՅԱՆ ՌՈՔԵՐՏ

ISTEPANIAN Robert

Տեղեկատվական հաղորդակցության բնագավառի մասնագետ: Լոնդոնի Կինգս-

տոն համալսարանի Համակարգիչների և տեղեկատվական համակարգերի բարձրագույն դպրոցի Տեղաշարժվող տեղեկատվական համակարգերի և տեխնոլոգիաների մշակման հետազոտական կենտրոնի տնօրեն: Փիլիսոփայության դոկտոր էլեկտրոնիկայի բնագավառում, պրոֆեսոր: Պորտսմութ, Համալսարան, Միացյալ Թագավորություն: Ծնվել է 1957թ. սեպտեմբերի 7-ին Բաղդատում (Իրաք): Ծուրկի Իստեպանյանի և Մարի Փանոսյանի որդին է: Ամուսնացել է Հելեն Գրիգորի հետ (1990թ.), ունի երկու դուստր՝ Կարոլին և Սառա:

Ուսանել է Բաղդատի համալսարանի էլեկտրոնիկայի ֆակուլտետում՝ ստանալով գիտության պսակավորի (1980թ.) և գիտության մագիստրոսի (1984թ.) կոչումներ: Լորուգբորուգի համալսարանում (Միացյալ Թագավորություն) ստացել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան էլեկտրական ճարտարագիտության և էլեկտրոնիկայի բնագավառում: Հետդոկտորական գիտական հետազոտություններ է իրականացրել Լորուգբորուգի համալսարանում (1994-95թթ.):

Գիտական հետազոտությունների ոլորտում տարբեր պաշտոններ է զբաղեցրել Լորուգբորուգի համալսարանի էլեկտրական ճարտարագիտության և էլեկտրոնիկայի ֆակուլտետում (1984-94թթ.): Եղել է Պորտսմութի համալսարանի ավագ դասախոս (1996-99թթ.): Իբրև պաշտոնակից-պրոֆեսոր դասավանդել է Արևմտյան Օնտարիոյի և Տորոնտոյի Ռայթսոնի համալսարաններում (Կանադա, 1999-2000թթ.): Տեղաշարժվող տեղեկատվական համակարգերի ճարտարագիտության և էլեկտրոնային բժշկական համակարգերի գիտահետազոտական խմբերի ղեկավար և ավագ դասախոս է եղել Լորուգբորուգի համալսարանի էլեկտրոնիկայի և համակարգչային ճարտարագիտության ֆակուլտետում և Պորտսմութի համալսարանում (2000-2003թթ.): Ներկայումս Լոնդոնի Կինգստոն համալսարանի տեղեկատվական հաղորդակցության պրոֆեսոր է, Համակարգիչների և տեղեկատվական համակարգերի բարձրագույն դպրոցի Տեղա-

շարժվող տեղեկատվական համակարգերի և տեխնոլոգիաների մշակման հետազոտական կենտրոնի տնօրենը (սկսած 2003թ-ից): Լոնդոնի համալսարանի Մուրբ Գևորգի անվան բժշկակագիտության բարձրագույն դպրոցի այցելու պրոֆեսոր է:

Հեղինակ կամ համահեղինակ է մոտ 200 գիտական հրապարակման՝ հեռահար բժշկական համակարգերի, կենսաբանական ազդանշանների հեռահաղորդակցության, կենսաբժշկության և հարակից այլ ասպարեզներում, 3 գրքի՝ «Տեղաշարժվող առողջապահական համակարգերի առաջացումը» («Կլուվեր ակադեմիկ», 2005թ.), «Անդրջրային ձայնային թվայնացված ազդանշանի ստացումը և տեղեկատվական հաղորդակցությանը» («Կլուվեր ակադեմիկ», 2002թ.), «Թվայնացված վերահսկման իրականացումը և նրա դյուրաբեկությունը, ժամանակակից հեռակարները» («Սպրինգեր Վերլագ», 2001թ.): Էլեկտրական և էլեկտրոնային ճարտարագիտության ինստիտուտի (ԷԷՃԻ, ԱՄՆ) «Կենսաբանական բժշկության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների ուսումնասիրություններ» գիտական հանդեսի խմբագրական կազմի անդամ է և հիմնադիրն ու խմբագիրն է «Աշխատություններ կենսաբանական բժշկության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների, հեռաբժշկության և էլեկտրոնային առողջապահական համակարգերի մասին» հատուկ գիտական հրապարակումների (սկսած 1997թ-ից): Համախմբագիրն է «Առողջապահական տեղեկատվական տեխնոլոգիաների ամսագիր» և «Տեղաշարժվող մուլտիմեդիայի ամսագիր» գիտական հանդեսների:


Էլեկտրական և էլեկտրոնային ճարտարագիտության ինստիտուտի ավագ անդամ

է (ԱՄՆ, սկսած 1996թ-ից): Անդամ է Էլեկտրական ճարտարագիտության ինստիտուտի (Միացյալ Թագավորություն, սկսած 1995թ-ից): Էլեկտրական և էլեկտրոնային ճարտարագիտության ինստիտուտի Միացյալ Թագավորություն և Իռլանդիայի մասնաճյուղի «Ճարտարագիտությունը բժշկության մեջ» և «Կենսաբանական ընկերություն» գիտական միությունների նախագահն է (սկսած 2002թ-ից): Անդամ է Էլեկտրական և էլեկտրոնային ճարտարագիտության ինստիտուտի «Ղեկավարող համակարգերի» (սկսած 1994թ-ից), «Հաղորդակցության», «Բժշկության և հեռաբժշկության» թագավորական գիտական ընկերությունների (սկսած 1997թ-ից): Եղել է նաև Արվեստների, արտադրության և առևտրի խրախուսման թագավորական միության (1999-2000թթ.), Չափումների և հսկողության ինստիտուտի (Կանադա, 1996-99թթ.), Հեռաառողջապահության կանադական ընկերության (1999-2000թթ.) անդամ:

Գործուն մասնակցություն ունի Միացյալ Թագավորություն հայկական համայնքի հասարակական և մշակութային կյանքին:

Պարգևատրվել է «Հիվիսայդ պրեմիում» մրցանակով (Ճարտարագիտության և տեխնոլոգիաների հաստատություն, Միացյալ Թագավորություն, 1999թ.): Ստացել է Միացյալ Թագավորության էլեկտրական ճարտարագիտության ինստիտուտի և գիտական այլ հաստատությունների մրցանակներ, Եվրոպական Միության, Բրիտանական Խորհրդի և Միացյալ Թագավորության ընկերությունների բազմաթիվ դրամաշնորհներ:

2007թ. Հայկական կենսաբանական կենտրոնի «Հարցաթերթի» տվյալների հիման վրա



ԼՈՒԿԱՍ Կարո

LUCAS Caro

Թեհրանի համալսարանի պրոֆեսոր: Փիլիսոփայության դոկտոր ճարտարագիտության բնագավառում: Թեհրան, Իրանի Իսլամական Հանրապետություն: Ծնվել է 1949թ-ին Սպահանում (Իրան): Ամուսնացել է Էմիլիա Ներսիսյանցի հետ, որոշին՝ Արմեն:

Ուսանել է Թեհրանի համալսարանի էլեկտրական ճարտարագիտության ֆակուլտետում՝ ստանալով գիտության մագիստրոսի գիտական աստիճան ճարտարագիտության բնագավառում (1973թ.): Բերկլիի Կալիֆոռնիայի համալսարանի էլեկտրական ճարտարագիտության և համակարգիչների բաժնում արժանացել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճանի ճարտարագիտության բնագավառում (1976թ.):

Լուս Անջելոսի Կալիֆոռնիայի համալսարանի համակարգչային գիտությունների ֆակուլտետում եղել է օգնական-հետազոտող (1973-75թթ.), ապա օգնական-պրոֆեսոր (1975-76թթ.): Թեհրանի համալսարանի էլեկտրական և համակարգչային ճարտարագիտության ֆակուլտետում եղել է օգնական-պրոֆեսոր (1976-86թթ.), պաշտոնակից-պրոֆեսոր (1986-94թթ.), ապա պրոֆեսոր (սկսած 1994թ-ից): Հիմնադրել է Թեհրանի համալսարանի Ինացական գիտությունների դպրոցը (նախկին Բանական համակարգերի ֆակուլտետ, 1994թ.)

Տեսական ֆիզիկայի և մաթեմատիկայի ինստիտուտում և իբրև տնօրեն ղեկավարել է այն (1994-98թթ.): Գալոյունիսի համալսարանի էլեկտրական և մեխանիկական ճարտարագիտության ֆակուլտետներում դասավանդել է իբրև օգնական-պրոֆեսոր (Բենդագի, Լիբիա, 1984-85թթ.): Իբրև հրավիրված պրոֆեսոր դասախոսել է Տորոնտոյի համալսարանի Արդյունաբերական ճարտարագիտության ֆակուլտետում (Կանադա, 1989 և 1990թթ.). Չինաստանի գիտությունների ակադեմիայի Կիրառական մաթեմատիկայի ինստիտուտում (1991թ.), Հարբինի էլեկտրական տեխնոլոգիայի ինստիտուտում (Չինաստան 1992թ.), Երևանի ֆիզիկայի ինստիտուտում (1997թ.): Գիտահետազոտական աշխատանքներ է իրականացրել Տրիեստի գեներալական կենսատեխնոլոգիայի կենտրոնում (Իտալիա, 1992թ.): Իբրև տնօրեն ղեկավարում է Թեհրանի համալսարանի Կառավարման և բանական համակարգերի մշակման կենտրոնը (սկսած 2001թ-ից):

Հեղինակ կամ համահեղինակ է մոտ 1000 հրապարակման՝ հողվածների, զեկույցների, դասախոսությունների և այլն: Համախմբագիրն է 7 գրքի, այդ թվում «Բանական և ինացական համակարգեր» եռհատորյակի (1996թ.): Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է կենսաբանական համակարգման, համակարգչային բանականության, բանական կառավարման, նեյրոնային գործողության մշակման, բազմազործոն համակարգերի, ֆինանսական մոդելավորման և բազմաթիվ այլ բնագավառներ: Եղել է «Թեհրանի համալսարանի ճարտարագիտական ֆակուլտետի հուշագրություններ» գիտական պարբերականի հրատարակիչը (1979-91թթ.), «Բանական և ֆուզի համակարգերի ամսագրի» համախմբագիրը (1992-99թթ.), բազմաթիվ գիտական հան-

դեսներին խմբագրական կազմերի անդամ: Իբրև նախագահ դեկավարել է Էլեկտրական և էլեկտրոնային ճարտարագիտության ինստիտուտի Իրանի բաժանմունքը (1990-92թթ.): Եղել է Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթի և կրթության փոխնախարարի խորհրդական (1995-98թթ.): Մի շարք հաստատությունների և կազմակերպությունների, այդ թվում Մելլատ բանկի, Իրանական երկաթուղու, Էներգետիկայի նախարարության, գիտական գլխավոր խորհրդատուն է: Անդամ է «Կենսաֆիզիկայի համահայկական ընկերության»:

Արժանացել է Իրանական գիտության և մշակույթի պատվո սրահի անդամության (2006թ.), «17-րդ Խորագմի» առաջին կարգի միջազգային մրցանակի (Գիտության և տեխնոլոգիայի իրանական կազմակերպություն, 2004թ.), Նշանակալից գիտական հետազոտության համար մրցանակի (Գիտության և տեխնոլոգիայի ասպարեզում իսլամական համագործակցության հանձնախմբի կողմից, 2004թ.), Ավտոմատացման միջազգային կոնգրեսի «Նշա-

նակալից ձեռքբերման մրցանակի» (2004թ.), «Ոսկե խորհրդանշանի»՝ Իրանում էլեկտրականության և էլեկտրոնային ճարտարագիտության մեջ կարևոր գիտական հետազոտության համար (2004թ.), Նասրեդին Թուրսի համալսարանի «Բանական համակարգերի գիտաժողովի» պատվավոր գնահատականի (2002թ.), Հայաստանի ճարտարագետների և ճարտարապետների միության շքանշանի (1999թ.), Թեհրանի համալսարանի ճարտարագիտական ֆակուլտետի օրինակելի պրոֆեսորի պատվավոր կոչման (ֆակուլտետի հիմնադրման 70-րդ տարեդարձի առթիվ, 2004թ.), Իրանի մշակույթի և բարձրագույն կրթության նախարարության (1993թ.) և Թեհրանի համալսարանի (1995թ.) օրինակելի պրոֆեսորի պատվավոր կոչման, Օրինակելի հետազոտողի կոչման (Էներգետիկայի նախարարություն, 1991 և 2005թթ. և Թեհրանի համալսարան, 1991թ.):

2008թ. Չայկական կենսագրական կենտրոնի «Չարգաթերթի» տվյալների հիման վրա:

Խ



ԽԱՆՋՅԱՆ Արսինե ԽԱՆՃԵԱՆ Արսինե

KHANJIAN Arsine

Կինոյի և թատրոնի դերասանուհի, բեմադրիչ: Տրոնտո, Կանադա: Ծնվել է 1958-ի սեպտեմբերի 6-ին Բեյրութում (Լի-

բանոն): Կանադայում բնակվում է 17 տարեկանից: Ամուսնացած է կինոբեմադրիչ Ատոմ Էգոյանի հետ, ունի մեկ որդի՝ Արշիլ: Ուսանել է Կոնկորդիա համալսարանում՝ ստանալով պսակավորի աստիճան ֆրանսերեն և իսպաներեն լեզուների բաժնում, այնուհետև Տրոնտոյի համալսարանում ստացել է մագիստրոսի կոչում քաղաքագիտության ասպարեզում (1985թ.): Եղել է Օնտարիոյի արվեստի և հաղորդակցության վարչության խորհրդատու երկլեզու համայնքների մշակութային ժառանգության պահպանման գծով (1986-89թթ.): Ղեկավարել է Օնտարիոյի արվեստի խորհրդի Կինոյի, տեսաժապավենների և լուսանկարչության գործակալությունը

(1989-94թթ.): Գործուն մասնակցություն ունի հասարակական մի շարք կազմակերպությունների և միությունների («Power Plant» ժամանակակից արվեստի կանադական պատկերասրահի, «Չորյան» ինստիտուտի, Երիտասարդ դերասանների խրախուսման ընկերության) աշխատանքներին, ինչպես նաև հայկական համայնքի կյանքին:

Նկարահանվել է Ա. Էգոյանի բազմաթիվ ֆիլմերում (սկսած 1984թ-ից՝ «Հարագատը» ֆիլմում): Համաբեմադրիչն է (Ա. Էգոյանի հետ) «Օրացույց» ֆիլմի (1993թ.): Ի թիվս բազմաթիվ գլխավոր դերերի, հիշարժան են Անիի (Ա. Էգոյանի «Արարատ», 2002թ.), մոր (Կատրին Բրեյայի «Քրոջս համար», 2001թ.), Արմինեի (Տավյանի եղբայրների «Արտույտների ագարակը», 2007թ.), Սաբահի (Ռուբա Նադդայի «Սաբահ», 2005թ.) նրա դերակատարումները: Հանդես է եկել աշխարհի տարբեր թատրոնների բեմերում՝ Փարիզի «Տեսոր դը Բոքինիում» (Բրայեն Ֆրիելի «Պարզ Լուցնագաղի տոնին» ներկայացման մեջ), «Տեսոր դը Վիդիում» (Շվեյցարիա, նույն ներկայացման մեջ), Տրոնտոյի «Տեսոր Փասս-Մուրեյում» (Ռիչարդ Կալինոսկու «Շունը լուսնի վրա» ներկայացման մեջ), նաև Գյոթեի «Ստելլայում» (Շվեյցարիա), միջազգային թատերական փառատոներում՝ Ճապոնիայում և Գերմանիայում: Մասնակցել է բազմաթիվ հեռուստասերիալների («Ավելի շատ արցունքներ», «Խենթ սիրտ» և այլն), որոնք լայն ճանաչում են բերել նրան: Եղել է Երևանի «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի ժյուրիի անդամ (2006թ.):

Արժանացել է Կանադական կինոարվեստի և հեռուստատեսության ակադեմիայի «Ժենի» մրցանակի՝ «Լավագույն դերասանուհի» անվանակարգում (Էգոյանի «Արարատ» ֆիլմում խաղացած դերի համար, 2003թ.), նույն մրցանակին՝ Նադդայի «Սաբահ» ֆիլմում Սաբահի դերի համար (2005թ.), «Լավագույն դերասանու մրցանակի»՝ Դուրբանի հարավաֆրիկյան միջազգային կինոփառատոնում («Արարատ» ֆիլմում մասնակցության համար, 2002թ.), Կանադական կինոարվեստի և հեռուստատեսության ակադեմիայի «Ժենինի» մրցա-

նակի «Լավագույն թատերական դերասանուհի» անվանակարգում՝ «Խենթ սիրտ» հեռուստասերիալում իր դերակատարման համար (1999թ.), «Կինոյի և հեռուստատեսության ամբողջ էկրանը» միջազգային փառատոնի «Լավագույն դերասանուհու» մրցանակի (Շվեյցարիա) և այլն:

Պարգևատրվել է «Թագուհու գահակալության ոսկե հորելյանի» 50-ամյակի առթիվ՝ մեդալով (2002թ.), Հայ առաքելական եկեղեցու Ամերիկայի արևմտյան թեմի «Չաբել թագուհու» մրցանակով (2003թ.), «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա-ի կողմից (2003):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ԽԱԿՉԱՏՈՒՅԱՆ Չավեն

KHACHATURIAN Zaven

Նյարդաբանության ոլորտի գիտնական: Փիլիսոփայության դոկտոր հոգեբուժության և նյարդակենսաբանության բնագավառում, պրոֆեսոր: Պոտոմակ, Մերիլենդի նահանգ, ԱՄՆ: Ծնվել է Հայկաում (Միրիա) 1937թ. ապրիլի 15-ին: Սեդրակ Խաչատուրյանի և Ռահել Մաթոսյանի որդին է: Ամուսնացել է Ալիս Ասատուրյան-Գոյլբենկյանի հետ, որդիները՝ Արա և Մասուն:

Ուսանել է Ելի համալսարանում՝ ստանալով գիտությունների պսակավորի գիտական աստիճան հոգեբուժության և քիմիայի բնագավառներում (1961թ.): Փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան է ստացել հոգեբուժության և նյարդակենսաբանության բնագավառում՝ Քեյսի արևմտյան համալսարանում (1967թ.):

Կենսաբանական ճարտարագիտության և էլեկտրաֆիզիոլոգիայի բնագավառում հետդոկտորական գիտական հետազոտություններ է իրականացրել Կոլումբիայի համալսարանի Բժշկության և վիրաբուժության քոլեջում (1967–69թթ.): Մասնագիտական գիտելիքները կատարելագործել է նաև Պիտսբուրգի համալսարանի Առողջապահական դպրոցում (1975–77թթ.), Առողջապահության ազգային ինստիտուտում (1977–78թթ.), Ներկայացուցիչների պալատում՝ կոնգրեսական դրամաշնորհով (1978թ.):

Եղել է Պիտսբուրգի համալսարանի Բժշկական բարձրագույն դպրոցի հոգեբուժության բաժնի պրոֆեսորի օգնական (1969–77թթ.): Ջբաղեցրել է նույն համալսարանի նյարդաֆիզիոլոգիայի զարգացման լաբորատորիայի տնօրենի պաշտոնը (1969–77թթ.): Առողջապահության ազգային ինստիտուտում եղել է դրամաշնորհի պաշտոնակից-անդամ (1977–78թթ.): Ծերացման երևույթի ազգային ինստիտուտում պաշտոնավարել է իբրև ղեկավար կենսաբանական ֆիզիոլոգիայի գծով, ապա նաև իբրև ծրագրի տնօրեն ծերացման նյարդաֆիզիոլոգիայի հետազոտությունների գծով (1978–80թթ.): Աշխատել է ԱՄՆ-ի առողջապահության և հասարակական սպասարկման պետական ղեկավար տաննում իբրև առողջապահական քաղաքականության համակարգող (1979–80թթ.): Եղել է Ծերացման երևույթի ազգային ինստիտուտի հատուկ օգնական-աշխատակից և ծրագրի տնօրեն (1980–81թթ.), այնուհետև ծերացման ֆիզիոլոգիայի բաժնի ղեկավար (1980–86թթ.): Առողջապահական ծառայությունների կառավարման պրոֆեսորի պաշտոնում դասավանդել է Պիտսբուրգի համալսարանի Առողջապահության բարձրագույն դպրոցում (1986–87թթ.): Իբրև տնօրենի պաշտոնակատար ղեկավարել է Պիտսբուրգի համալսարանի Կենսաբանական տեխնոլոգիայի կենտրոնը (1986–87թթ.): Ջբաղեցրել է նույն համալսարանի Առողջապահական կենտրոնի փոխնախագահի պաշտոնը (1987–95թթ.): Առողջապահության ազգային ինստիտուտում եղել է փոխտնօրեն, ապա տնօրեն

(1985–95թթ.): Նշանակվել է Ալգեյմերյան ընկերության Ռոնալդ և Նանսի Ռեյզանների անվան գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն (1995–99թթ.) և նույնամուն ընկերության ավագ գիտական ղեկավար (1995–2006թթ.): Ներկայումս Լու Ռուվոյի անվան Ալգեյմերյան ինստիտուտի ավագ գիտական խորհրդական է: Ջոն Հոպկինս համալսարանի Բժշկական բարձրագույն դպրոցի հոգեբուժության և նկարագրական գիտությունների ֆակուլտետի նյարդահոգեբուժության բաժնի հոգեբուժության և նյարդաբանական գիտությունների պրոֆեսոր է: Պատասխանատուն է իր հիմնադրած «Խաչատուրյան և գործընկերներ» հիմնարկության, որը Ալգեյմերյանի հիվանդության և ծերացման երևույթի միջազգային խորհրդատվական խումբ է (սկսած 1995թ-ից):

Հեղինակ է կամ համահեղինակ 25 գրաքննված հոդվածի, 21 գրքի առանձին գլուխների, 5 խմբագրական հոդվածի, 21 մենագրության, կառավարական զեկույցների, կոնգրեսական ցուցմունքների և այլն, որոնք մասնավորապես նվիրված են Ալգեյմերյանի հիվանդության, ծերացման նյարդակենսաբանության, լսողության, հիշողության, կալցիումի հոմեոստատիսի, առողջապահական հետազոտությունների կառավարման, առողջապահական ծառայությունների մոդելների, առողջապահական քաղաքականության ոլորտի ուսումնասիրություններին: Ալգեյմերյան ընկերության «Ալգեյմերյանի հիվանդություն» ամսագրի գլխավոր խմբագիրն է: Խմբագրական կազմի անդամ է «Ծերացման նյարդակենսաբանություն» հանդեսի: Առողջապահության ազգային ինստիտուտում բազմաթիվ միջազգային գիտաժողովների և հետազոտական աշխատանքները ծրագրող աշխատանքային խմբերի կազմակերպիչն է: Խորհրդատուն է Սպիտակ տան, Գիտությունների ազգային ակադեմիայի (ԱՄՆ), Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԺՆԱ) գիտական-հետազոտական հանձնախմբերի՝ նյարդակենսաբանության, ծերացման երևույթների և Ալգեյմերյանի հիվանդությունն ախտորոշման գծով:

Ալգեյմերյան ընկերության փոխնախագահն է և մայրաքաղաքային տարածքի ավագ գիտական խորհրդատուն: Անդամ է ԱՄՆ-ի սենդամբերքի և ղեղանյութերի վարչության կենտրոնական նյարդային համակարգին առնչվող հարցերի հանձնախմբի, «Դահլեմի կոնֆերանսի» (Գերմանիա, 1988թ.), «Դանա դաշնություն բրենյան նախաձեռնության համար» ընկերության (սկսած 1996թ-ից), Նյարդաբանական գիտությունների ընկերության (սկսած 1970թ-ից), Գիտության առաջընթացի ամերիկյան ընկերության (սկսած 1960թ-ից), Ալգեյմերյանի հիվանդության Ջոն Դուգլասի անվան ֆրանսիական ընկերության (սկսած 1986թ-ից), Օհայո (1985թ.), Կալիֆոռնիա (1986թ.) և Լրջիմիա (2002թ.) նահանգների նահանգապետների կողմից նշանակված՝ Ալգեյմերյանի հիվանդություն ղեմ պայքարի պետական հանձնախմբերի և այլ գիտական ու առողջապահական կազմակերպությունների: Պատվավոր անդամ է Ամերիկյան վետերանների վարչության, Առողջապահության ազգային ինստիտուտի, Գիտական հետազոտությունների հիմնադրամի: Աշխարհի տարբեր երկրներում Ալգեյմերյանի հիվանդություն և ծերացման մասին դասախոսություններով հանդես է եկել լայն հանրության առջև (սկսած 1978թ-ից):

Հիմնադիրն է և նախկին նախագահը Պիտսբուրգի հայ-ամերիկյան ակումբի (1970–77թթ.): Հիմնադիրն ու նախկին նախագահն է եղել Պիտսբուրգի համալսարանի Հայերենակիցների միության հայագրի ուսանողների հանձնախմբի (1974–77թթ.): Հիմնադիրն է Վաշինգտոնի հայ-ամերիկյան մշակութային միության (1978թ.):

Արժանացել է Տնօրենների մրցանակի (Առողջապահության ազգային ինստիտուտի, 1983թ.), Արտակարգ ծառայությունների համար մրցանակի (Առողջապահության և հանրային ծառայության պետական վարչության քարտուղարության կողմից, 1988թ.), «Մենք հիշում ենք» մրցանակի (Դուկի համալսարանի, 1988), «Տարվա գիտնականը» մրցանակի (Նորությունների ծառայության, 1992թ.), Նախագահա-

կան մրցանակի (Ալգեյմերյան ընկերության, 1993թ.), Հասարակական ծառայության համար մրցանակի (Նանսի Ռեյզանի հետ, «Ռիտա Հայվորդ Գալայի», Նյու Յորք, 1996թ.): «Չավեն Խաչատուրյան» մրցանակը հիմնված է Ալգեյմերյան ընկերության կողմից (2004թ.) պարգևատրելու համար այն անձանց, ովքեր արտակարգ հաջողություններ կարձանագրեն Ալգեյմերյանի հիվանդությունների վերաբերյալ գիտության առաջընթացում:

2005թ. Դայվական կենսագրական կենդրոնի «Դարաբերքի» տվյալների հիման վրա



ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ Կարեն

KHACHATURIAN Karen

Երգահան: Ռուսաստանի Դաշնության արվեստի վաստակավոր գործիչ, ժողովրդական արտիստ: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է Մոսկվայում, 1920թ. սեպտեմբերի 13-ին: Սուրեն Խաչատուրյանի և Սառա Դունաևայի որդին է: Ամուսնացել է Անտոնինա Յակովլեննայի հետ, որդին՝ Դիմիտրի և դուստրը՝ Նատալիա:

Ուսանել է Մոսկվայի պետական երաժշտանոցին կից ուսումնարանում (1938–41թթ.): 1941թ. ընդունվել է Մոսկվայի պետական երաժշտանոց, սակայն պատերազմը ընդհատել է նրա ուսումը: 1941–45թթ. աշխատել է ԽՍՀՄ ներքին գործերի կոմիսարիատի երգի և պարի համույթում: 1945–49թթ. շարունակել է իր ուսումը Մոսկվայի պետական երաժշտանոցում, ապա նույն հաստատության ասպիրանտուրայում (աշակերտել է Շերալիմին, Շոստակովիչին, Մյասնիցսկուն, 1949–50թթ.): Դասավանդում է Մոսկվայի

պետական երաժշտանոցում (սկսած 1981թ-ից, պրոֆեսոր է՝ 1986թ-ից):

Հեղինակ է 4 սիմֆոնիայի (հանրահայտ է նրա «2-րդ սիմֆոնիան»), 2 բալետի («Չիպոլինո» և «Սպիտակ ձյուն»), «Դաշնամուրի և թավջութակի սոնատի» (հնչել է Մ. Ռոստրոպովիչի կատարմամբ), «Ջութակի և թավջութակի սոնատի» (իրենց համերգային ծրագրերում կատարել են Դ. Օյստրախը, Յ. Հեյֆեցը, Լ. Կոզանը), ավելի քան 40 ֆիլմի և 20 թատերական ներկայացման երաժշտության: Ջանգիբարի և Մոմալիի Հանրապետությունների պետական հիմնների հեղինակն է:

Եղել է ԽՍՀՄ կոմպոզիտորների միության վարչության անդամ (սկսած 1957թ-ից), «Խորհրդային կոմպոզիտոր» և «Երաժշտություն» հրատարակչությունների խմբագրական կազմի նախագահ, «Խորհրդային երաժշտություն» հանդեսի խմբագրական կազմի անդամ, արտասահմանյան մի շարք երկրների հետ մշակութային կապերի հանձնախմբերի անդամ:

Հայկական ժողովրդական երաժշտության ազդեցությունն է կրում նրա «Երիտասարդական նախերգանք» ստեղծագործությունը, որը գրելուց առաջ նա այցելել է Հայաստան, գրի է առել հայկական ժողովրդական երգեր և պարերանակներ (1950թ., առաջին անգամ կատարվել է Մոսկվայում, Կոմպոզիտորների միության 5-րդ համագումարում՝ 1951թ-ին): Ղեկավարել է «Արամ Խաչատրյանի անվան ջութակահարների միջազգային մրցույթի» ժյուրին (Երևան, 2005թ.):

Ռուսաստանի Դաշնության արվեստի վաստակավոր գործիչ է և ժողովրդական արտիստ (1981թ-ից): Դափնեկիր է Միջազգային երիտասարդական փառատոնի (Պրահա, 1947թ.), ԽՍՀՄ պետական մրցանակի (1976թ.), Մոսկվայի քաղաքապետարանի փառատոնի (1999թ.), Շոտակովիչի անվան մրցանակի (Մոսկվա, 2000թ.): Պարգևատրվել է Ռուսաստանի Դաշնության «Բարեկամություն» (1995թ.), և «Պատվո նշան» (2000թ.) շքանշաններով:

2004թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ԽԱՉԻԿՅԱՆ Լևոն

KHACHIGIAN Levon

Մոլեկուլային կենսաբան: Գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Ռ-այդ, Ավստրալիա: Ծնվել է Բեյրութում 1963թ-ին (հայրանունը՝ Միքայել): Ավստրալիա (Միդնեյ) է եկել 18 ամսական հասակում՝ 1965թ-ին: Ամուսնացած է, երկու երեխայի հայր է:

Ուսանել է Ավստրալիայի Հարավային Ուելսի համալսարանում՝ ստանալով արվեստների պսակավորի աստիճան կենսաքիմիայի և միկրոկենսաբանության բնագավառում (1986թ.):

Նույն հաստատությունում ստացել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան բժշկական կենսաքիմիայի բնագավառում (1993թ.): Հետդոկտորական գիտական հետազոտություններ է իրականացրել Հարվարդի համալսարանի Բժշկագիտության բարձրագույն դպրոցում (1993-96թթ.): Ավստրալիայի Հարավային Ուելսի համալսարանի բժշկության ֆակուլտետում արժանացել է գիտության դոկտորի գիտական աստիճանի մոլեկուլային կենսաբանության բնագավառում (2004թ.):

Գիտական հետազոտություններ իրականացնելու համար Ավստրալիայի ազգային առողջապահության և բժշկական հետազոտությունների խորհրդի կողմից ստացել է Մարտինի անվան դրամաշնորհ (1993թ.), Դուգլաս Վրայթի անվան դրամաշնորհ (1997թ.), գլխավոր հետազոտողի դրամաշնորհ (1999թ.), ավագ-գլխավոր հետազոտողի դրամաշնորհ (2005թ.): Հարավային Ուելսի համալսարանի Անոթային հետազոտությունների կենտրոնի Ազդանշանների և պատճենման լաբորատորիայի ղեկավարն է և ախտաբանության փոխպրոֆեսոր:

Հեղինակ է մոտ 80 գիտական հոդվածի,

գրքերի, գյուտերի (արտոնագրերի), գիտական հայնագործության՝ քաղցկեղածին բջիջների կենսաբանության բնագավառում, գենետիկայի, սրտանոթային հիվանդությունների, քաղցկեղի տարածման մեխանիզմի և նրա արգելակման, դեգոքսի նուկլեյնաթթուների հիման վրա ստեղծվող դեղանյութերի, ախտաբանության և հարակից այլ բնագավառներում: Հիշարժան են նրա «Միներտիկ նուկլեյնաթթուները որպես գեների դրսևորման արգելակիչներ՝ մեխանիզմը, պատկերը, մոդելը և բուժումը» («Թեյլոր ընդ Ֆրանսիս» 2005թ.) և «Բարձր ռիսկայնության աթերոսկլերոզային գոյացություններ՝ մեխանիզմը, դրսևորումը և ենթադրյալ բուժումը» («Թեյլոր ընդ Ֆրանսիս» 2004թ.) աշխատությունները:

Արժանացել է Էլիզաբեթ թագուհու հոբելյանի առթիվ Ավստրալիայի երիտասարդներին շնորհվող մրցանակի (1988թ.), «Ռոտարի» հաստատության միջազգային մրցանակի (1993թ.), Վիլյամ Ֆուլբրայտի անվան մրցանակի (1993թ.), Ջեյմս Մմիլլի անվան գիտական հետազոտության մրցանակի (2001թ.), Էպպենդորֆի անվան երիտասարդ գիտնականի մրցանակի (2001թ.), «ԱՄԳԵՆ» բժշկական հետազոտական մրցանակի (2001թ.), Ավստրալիայի գիտությունների ակադեմիայի Գոթշալկի անվան մեդալի (2003թ.), «Ռ-Տ» սրահի մրցանակի (Ավստրալիայի և Նոր Զելանդիայի սրտաբանների միության կողմից, 2003թ.), Ավստրալիայի առողջապահության նախարարության գերազանց առողջապահական և բժշկական հետազոտության համար մրցանակի (2003թ.), «Ալլին Մարի Ֆիլիպս» հետազոտական մրցանակի (2002թ.), «Էվրիկա» գիտական մրցանակի (2003թ.), Ավստրալիայի գիտական մրցանակի (2004թ.), Գլաքսո-Սմիթ-Կլայնի անվան լավագույն հետազոտության մրցանակի (1997 և 2006թթ.), Վեյքֆիլդի մեդալի (2006թ.): Ալ-Խորազմիի անվան գիտության և տեխնոլոգիայի միջազգային մրցանակի՝ գենետիկական թիրախների վերաբերյալ կատարած աշխատանքների համար (Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մ. Խաթամիի կողմից, 2005թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ԽԱՉԻԿՅԱՆ Քենետ
ԽԱՉԻԿԵԱՆ Քեն

KHACHIGIAN Kenneth

Իրավաբան, քաղաքագետ: Սպիտակ տան նախագահական նախկին խորհրդատու և ճառագիր: Իրավագիտության դոկտոր: Սան Կլեմենտ, Կալիֆոռնիա, ԱՄՆ: Ծնվել է 1944թ-ի սեպտեմբերի 14-ին Վիզալիայում (Կալիֆոռնիայի նահանգ, ԱՄՆ), ծննդյան անունը՝ Ղազար: Հովհաննես Խաչիկյանի և Էլիզաբեթ (Եղիսաբեթ) Կիզիլյանի որդին է: Ամուսնացել է Մերեդիթ Խաչիկյանի հետ, ունի երկու դուստր՝ Մելիսա և Քրիստինա:

Ավարտել է Սանտա Բարբարայի Կալիֆոռնիայի համալսարանը (արվեստների պսակավորի աստիճանով, 1966թ.) և Կոլումբիայի համալսարանը (իրավագիտության դոկտորի աստիճանով, Նյու Յորք, 1969թ.):

Իրավաբանական գործունեությանը զբաղվում է սկսած 1969թ-ից: Մասնակցել է ԱՄՆ-ի նախագահի թեկնածու Ռիչարդ Նիքսոնի ընտրարշավին (1967թ.): Վերջինիս նախագահ ընտրվելուց հետո եղել է Սպիտակ տան Ազգային նպատակների հետազոտական աշխատակազմի աշխատակից (Վաշինգտոն 1970թ.), ապա հաղորդակցության գծով նախագահի խորհրդականի օգնական (1970-71թթ.), այնուհետև նախագահի հատուկ խորհրդական Պատրիկ Բուչանանի օգնականը (1971-72) և գլխավոր ճառագիր (1973-74թթ.): Նշանակվել է ԱՄՆ-ի նախագահի խմբագիր-խորհրդատու (1975-79թթ.): Իբրև ճառագիր մասնակցել է Ռոնալդ Ռեյգանի ընտրարշավին (1980թ.), իսկ վերջինիս ԱՄՆ-ի նախագահ ընտրվելուց հետո նշանակվել է Սպիտակ տան հատուկ խորհրդական և գլխավոր ճա-

ռագիր (1981–88թ.): Եղել է Կալիֆոռնիայի նահանգապետ Դոկմենչյանի, ապա Վիլսոնի խորհրդականը ռազմավարական հարցերի գծով: Եղել է նախագահի թեկնածու Ջորջ Բուշի գլխավոր խորհրդականը նրա ընտրարշավի ընթացքում (1988թ.): Իբրև գլխավոր խորհրդատու մասնակցել է ԱՄՆ–ի նախագահի թեկնածու Ռոբերտ Դոուլի (1996թ.) և սենատոր Ջոն Մակ–Բեյնի (2000թ.) ընտրարշավներին: «Բրաունշտեյն, Հայատտ, Ֆարբեր, Շրեք» իրավաբանական մասնավոր հիմնարկի, որը միավորվել է «Հատչ և ծնողներ» հաստատության հետ, ավագ աշխատակից է, ուր և շարունակում է իր իրավաբանական գործունեությունը:

Հեղինակ է մեծ թվով հոդվածների, խմբագրականների, զեկույցների՝ քաղաքականության, պետական կառավարման, միջազգային առևտրի, հատկապես ծովային առևտրի, և բազմաթիվ այլ պետական նշանակության խնդիրների վերաբերյալ՝ տպագրված ամերիկյան մամուլում, մասնավորապես «Լոս Անջելոս թայմսում» (1997–99թթ.):

«Հուվեր» հաստատության վերահսկիչ խորհրդի և Իրավագիտության ազգային ինստիտուտի խորհրդի նախագահն է: Անդամ է Կալիֆոռնիա նահանգի շրջակա միջավայրի և տնտեսության հավասարակշռվածության խորհրդի, Ռիչարդ Նիքսոնի անվան գրադարանի ղեկավար խորհրդի, բազմաթիվ հիմնադրամների: Իբրև քաղաքական ռազմավարության մասնագետ աշխատակցում է ԱՄՆ–ի առևտրական պալատին:

Հայաստանի պատանեկան նվաճումների ընկերության ղեկավար խորհրդի անդամ է: Իր տիկնոջ հետ գործում մասնակցություն է ունեցել Հայաստանում մի շարք բարեսիրական ձեռնարկների իրականացմանը:

Արժանացել է Սանտա Բարբարայի Կալիֆոռնիայի համալսարանի շրջանավարտների նշանակալից նվաճումների մրցանակի (1998թ.), Հայ ակնարուժական ընկերակցության «Յմահ և պատվավոր անդամի» կոչման (2005թ.):

2007թ. Դայկական կենսագրական կենտրոնի «Դարաքերթի» տվյալների հիման վրա



**ԽՏՇՅԱՆ Չավեն
ԽՏՇՇԵԱՆ Չաւեն**

*HADICHIAN Zaven
KHEDESHIAN Zaven*

Քանդակագործ: Քանդակագործության պրոֆեսոր (առաջինը՝ Լիբանանում): Բեյրութ, Լիբանան: Ծնվել է 1932թ–ին փետրվարի 18–ին, Բեյրութում:

Ուսանել է Բեյրութի Ազգային Սահակյան վարժարանում, ապա Գեղարվեստի լիբանանյան ակադեմիայում (Բեյրութ, 1949–52թթ.) և Գեղարվեստի ազգային բարձրագույն դպրոցում (Փարիզ, 1952–58թթ.), այնուհետև կատարելագործվել է Փարիզի նշանավոր արվեստագետների արվեստանոցներում (Յենս, Ժիմոն, Ժամիո, 1954–58թթ.):

Իբրև քանդակագործության պրոֆեսոր (առաջին քանդակագործության պրոֆեսորը Լիբանանում) դասավանդել է Գեղարվեստի լիբանանյան ակադեմիայում (1960–82թթ.), Լիբանանի համալսարանի Գեղարվեստի ազգային ինստիտուտում (1966–87թթ.), Կասիկի Սուրբ Հոգու համալսարանի Գեղարվեստի ինստիտուտում (1980–82թթ.): Արվեստի ասպարեզի լիբանանյան բարձրագույն ուսումնական հաստատություններում քանդակագործության դասավանդման նոր ուսումնական ծրագրերի հեղինակն է:

Նրա ստեղծագործությունները ցուցադրվել են բազմաթիվ անհատական և խմբային ցուցահանդեսներում, այդ թվում Օտարերկրյա արվեստագետների ցուցահանդեսում՝ Փարիզի «Փոքր պալատում»

(1954թ.), «Ալեքո Սաար» պատկերասրահում (Բեյրութ, 1963թ.), Կասիկի Սուրբ Հոգու համալսարանի Գեղարվեստի ինստիտուտում (Լիբանան, 1982թ.), «Լա թուալ» («Կտավ») պատկերասրահում (Լիբանան, Ռիմալ, 1987թ.), «Էմմագոս» պատկերասրահում (Բեյրութ, 1995թ.), Կասիկի մշակույթի կենտրոնում (2002թ.), ինչպես նաև Ալեքսանդրիայի 18–րդ բիենալիեում (Եգիպտոս, 1993–94թթ.), «Աշնանային սրահի» և «Գարնանային սրահի» (1956–86թթ.) ցուցադրություններում և բազմաթիվ այլ ցուցահանդեսներում:

Նրա կերտած լավագույն կոթողների թվում են Մեծ եղեռնի զոհերի հիշատակի հուշարձանը՝ 13 մետր բարձրությամբ, տեղադրված Բիքֆայայում (Մեծ եղեռնի 50–ամյակի առթիվ, Լիբանան, 1968թ.), «Սուրբ Շարպել» հուշարձանը Անայայում (Լիբանան, 1968թ.), Ջբրան Խալիլ Ջբրանի հուշարձանը (Բեյրութի կենտրոնում), Գարեգին Նժդեհի հուշարձանը Բոստոնում (ԱՄՆ), կաթողիկոս Չարեհ Ա–ի (Հալեպ, Սիրիա) և Միմոն Վրացյանի կիսանդրիները, արձանները բազմաթիվ քաղաքներում:

Նրա ստացած մրցանակների թվում են Գեղարվեստի մրցանակաբաշխության առաջին կարգի մրցանակները (Փարիզ, 1954թ. և 1955թ.), «Ստրան» գեղարվեստի կենտրոնի և «Արևելքի» («Թուֆենկջյանի»), 1965թ.) ցուցահանդեսների երկրորդ կարգի մրցանակները, Բեյրութի Նիկոլա Մուրսեի անվան ժամանակակից արվեստի թանգարանի առաջին կարգի մրցանակը (1973թ.) և այլն: Լիբանանի կրթության ազգային նախարարության դափնեկիր է: Նրա անունն ընդգրկված է ֆրանսիական «Լարուս» հրատարակչության «Ժամանակակից աշխարհի արվեստը» հանրագիտական հատորում (1974թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



**ԽՐԱԽՈՒՆԻ Չարեհ
ՃԻՄԲՄԻՇԵԱՆ Արթին**

*KHRAKHOUNI Zareh
CUMBUSYAN Artin
(JUMBUSHYAN Artin)*

Բանաստեղծ, գրող, հրապարակախոս, թարգմանիչ: Կ.Պոլիս, Թուրքիա: Ծնվել է Կ.Պոլիսում 1929թ. հոկտեմբերի 16–ին: Ամուսնացած է, երկու երեխայի հայր է:

Ավարտել է Կ. Պոլսի Մխիթարյան վարժարանը (1945թ.): Ուսանել է Ստամբուլի համալսարանի իրավաբանական, ապա գրականության ֆակուլտետում՝ ստանալով փիլիսոփայության, հոգեբանության և սոցիոլոգիայի մագիստրոսի աստիճան (1951թ.): Ուսումը կատարելագործել է Փարիզի համալսարաններում՝ գրականության և պատմության ասպարեզում:

Հիմնադիրն է (մի խումբ երիտասարդ գրողների և բանաստեղծների հետ) Կ. Պոլսի «Սան» պարբերականի: Համահիմնադիրն ու խմբագիրն է եղել «Մարմարա» օրաթերթի գրական–գեղարվեստական հավելվածի: Դասավանդել է Կ. Պոլսի հայկական դպրոցներում: Եղել է հրավիրված դասախոս հայկական սփյուռքի տարբեր համայնքներում՝ ԱՄՆ–ում, Ֆրանսիայում, Կանադայում, Լիբանանում, ինչպես նաև այցելել է Հայաստան:

Հեղինակ է մոտ 30 գրքի, այդ թվում 16 բանաստեղծական հատորի և 8 հատորի՝ օտար լեզուներով (թարգմանված անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն, վրացերեն և այլն), մի քանի դասագրքերի, հայ գրողների կենսագրականների վերաբերյալ գրքույկների, բազմաթիվ հրապարակախոսական հոդվածների, թարգմանությունների (Գրիմ եղբայրներ, Անդրեյեն, Թումանյան): Հետևորդն ու տեսա-

բանն է արդի հայ գրականության մեջ օրյեկտիվ սիմվոլիզմի ուղղության: Հիշարժան են նրա «Քար կաթիլներ» (1964թ.), «Ես և ուրիշներ» (1964թ.), «Լուսնապարտեզ» (1968թ.), «Ամպ և ավազ ափիս մեջ» (1982թ.), «Հայաստանի քարը» (1997թ.), «Դարապատում» (2001թ.), «Մեսրոպապոս» (2005թ.) և այլ բանաստեղծական ժողովածուները:

Արժանացել է «Անահիտ» գրական մրցանակի («Ես և ուրիշներ» հատորի համար, Բեյրութ, 1964թ.), Ալեք Մանուկյանի անվան մրցանակի (Դեմոքրատ, 1973 և

1984թթ.), Ֆրանսահայ գրողների «Էլիզ Գավուկչյան-Այվազյան» գրական մրցանակի (Փարիզ, 1984թ.), «Հայկաշեն Ուզունյան» գրական մրցանակի (հրապարակախոսական հոդվածների համար, 1991թ.), «Սուրբ Սահակ և Սուրբ Մեսրոպ» շքանշանի (Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից), Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի Ա կարգի շքանշանի (2001թ.), Հայաստանի Հանրապետության «Մովսես Խորենացի» մեդալի (2002թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա

Կ



ԿԱՆԴԻՐ (ԿԱՆԴԻՐՅԱՆ) Անտոնիո

KANDIR (KANDIRIAN) Antonio

Քաղաքական գործիչ, տնտեսագետ: Փիլիսոփայության դոկտոր տնտեսագիտության ասպարեզում, պրոֆեսոր: Բրազիլիայի պետական բյուջեի և պլանավորման նախկին նախարար: Սան Պաուլո, Բրազիլիա: Ծնվել է 1953թ. մայիսի 2-ին Սան Պաուլոյում (հայրանունը՝ Ավազ):

Ավարտել է Սան Պաուլոյի համալսարանի ճարտարագիտական բարձրագույն դպրոցի մեխանիկական ճարտարագիտության ֆակուլտետը՝ ստանալով մագիստրոսի աստիճան (1975թ.): Ուսանել է նաև Նոտր Դամի համալսարանի Կելլոգի տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտում (ԱՄՆ, 1987թ.): Ստացել է

փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան տնտեսագիտության ասպարեզում (1988թ.):

Աշխատել է իբրև Բրազիլական նախագահական վարչության Տնտեսական և հասարակական պլանավորման ինստիտուտի աշխատակից (1976-78թթ.): Թոթակցել է զանազան լրագրերի: Եղել է տնտեսագիտական հետազոտությունները համակարգող «Իտաու» հաստատության (1981-83թթ.), ապա Բրազիլիայի տնտեսական հիմնահարցերի վերլուծության և պլանավորման «ՍԵԲՐԱԲ» կենտրոնի գիտաշխատող (1983-90թթ.): Իբրև պրոֆեսոր դասավանդել է Կամպինասի համալսարանի Տնտեսագիտության ինստիտուտում (1985-93թթ.) և Սան Պաուլոյի համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում (1984-85թթ.): Եղել է Կիրառական տնտեսագիտության հետազոտական ինստիտուտի նախագահ (1990-91թթ.): Պաշտոնավարել է իբրև Էկոնոմիկայի, ֆինանսների և պլանավորման նախարարության հատուկ քարտուղար (1990-91թթ.): Ղեկավարել է «Կանդիր միավորում» ընկերությունը (1991-94թթ.): Ընտրվել է Բրազիլական խորհրդարանի պատգամավոր

(1995-99թթ.): Իբրև Բրազիլիայի բաժանմունքի տնօրեն ղեկավարել է Միջամերիկյան զարգացման բանկը (1996-98թթ.): Եղել է Բրազիլիայի ապագայնացման պետական խորհրդի նախագահ (1996-98թթ.): 1996թ-ին նշանակվել է Բրազիլիայի պետական բյուջեի և պլանավորման նախարար (1996-98թթ.): Հիշարժան է նրա նախաձեռնությամբ Բրազիլիայի Խորհրդարանի ընդունած օրենքը ներմուծման հարկի կրճատման մասին («Կանդիրի օրենք»): Բազմիցս վերընտրվել է իբրև Բրազիլիայի Ազգային կոնգրեսի պատգամավոր (մինչև 2002թ.):

Ներկայումս որպես տնտեսագիտություն պրոֆեսոր դասավանդում է Բրազիլիայի մի քանի համալսարաններում (սկսած 1981թ-ից): «Ավիպալ» և «Գրանոլեո» ընկերությունների տնօրենների խորհրդի անդամ է: Բրազիլիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ է:

Հեղինակ է բազմաթիվ հոդվածների և մի շարք գրքերի, որոնցից հատկապես հիշարժան են «Իրական Բրազիլիան» (Սան Պաուլո, «Կլիք» հրատ., 1994թ.), «Արժեզրկման դիմամիկան» (հրատարակված է անգլերեն և իսպաներեն լեզուներով, «Նոտր Դամ համալսարանի հրատարակչություն», անգլերեն, 1991թ.), «21-րդ դարի Բրազիլիան, որոշելու ժամանակը» («Ատլաս», 1994թ.): Թոթակցում է բրազիլական մի շարք քերթերի և անսագրերի՝ «Էստադո դե Սան Պաուլո», «Ֆոլիա դե Սան Պաուլո», «Վալոր Էկոնոմիկո», «Գազետա Մերկոնտիլ» և այլն (սկսած 1981թ-ից):

Հիմնադիրն է «Բրազիլիա-Հայաստան» խորհրդարանական խմբի (2000թ.): Գործուն մասնակցություն ունի բրազիլահայ համայնքի կյանքին: Որպես Բրազիլիայի Դաշնակցային Հանրապետության ներկայացուցիչ 1991թ-ին Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ին է հանձնել Բրազիլիայի բարձրագույն պարգևը՝ «Կրուզեյրո» շքանշանը (1991թ):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ԿԱՍՅԱՆ Աննա

KASYAN Anna

Օպերային երգչուհի (սոպրանո): Միջազգային մրցույթների դափնեկիր: Թբիլիսի, Վրաստանի Հանրապետություն: Ծնվել է 1981թ. հոկտեմբերի 7-ին Թբիլիսիում (Վրաստան):

Ուսանել է Թբիլիսիի պետական երաժշտանոցում (1999-2003թթ.), այնուհետև Երաժշտական մանկավարժական բարձրագույն դպրոցում (Փարիզ), ապա Երաժշտության և պարի բարձրագույն երաժշտանոցում (ստացել է քննարկական արվեստների և պարի բարձրագույն կրթության վկայական)՝ հաճախելով Տ. Կրոսի, Ժ-Պ. Լաֆոնի, Վ. Կորտեզի, Մ. Պիկելանի և այլոց «Վարպետության դասընթացներին» (2003-06թթ.):

Նրա բեմական երգացանկն ընդգրկում է Ջիլդայի (Վերդիի «Ռիգոլետտո»), Կարոլինայի (Միսառոզայի «Գաղտնի ամուսնություն»), Նորինայի (Դոնիցետտի «Դոն Պասկալ»), Կելոպատրայի (Հենդելի «Հուլիոս Կեսար»), Սյուզաննայի (Մոցարտի «Ֆիգարոյի ամուսնությունը»), Ջուլիետի (Գունոյի «Ռոմեո և Ջուլիետ»), Ջերլինայի (Մոցարտի «Դոն Ժուան») և այլ դերերգեր: Ելույթներ է ունեցել աշխարհի բազմաթիվ քաղաքներում, այդ թվում Փարիզում (Յունեսկո-ի դաիլիճում), Մոնտպելիեում (Օպերային թատրոնում), Թուրոնում (Օպերային թատրոնում), Սան Ռեմոյում, Սանկտ Պետերբուրգում, շրջագայել է Կանադայում, Իտալիայում, Գերմանիայում՝ կատարելով Ռախմանինովի, Հենդելի, Մոցարտի, Սկարլատտիի, Ափրիկյանի և այլ երգահանների ստեղծագործություններ:

Միջազգային բազմաթիվ մրցույթների դափնեկիր է, այդ թվում Ադամիի աշնանային միջազգային մրցույթի առաջին մրցա-

նակի (Փարիզ, 2005թ.), Պրետորիայի երգի միջազգային մրցույթի առաջին մրցանակի (Հարավաֆրիկյան Հանրապետություն, 2005թ.), Պիկարդիի եվրոպական երաժշտության 12-րդ մրցույթի (2005թ.), Մարմանդի-ի միջազգային մրցույթի առաջին մրցանակի (Ֆրանսիա, 2005թ.), Մյունխենի միջազգային մրցույթի «Օպերային լավագույն երգչուհու» երկրորդ մրցանակի (2006թ.), Պանալոնայի միջազգային մրցույթի առաջին մրցանակի (Իսպանիա, 2006թ.), Ժնևի միջազգային երաժշտական մրցույթի մրցանակի (Շվեյցարիա, 2007թ.), Ունիզայի երգեցողության միջազգային մրցույթի հատուկ մրցանակի (Հարավաֆրիկյան Հանրապետություն, 2006թ.), Էլիզաբեթ թագուհու անվան մրցույթի մրցանակի (Բելգիա, 2008թ.):

2008թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ԿԻՐԿՈՐՅԱՆ Կիրկ

KIRKORIAN Kirk
KERKORIAN Kerkor

Գործարար, բարերար: «Տրասինդա» կորպորացիայի նախագահ և գլխավոր գործադիր տնօրեն: Հայաստանի Հանրապետության ազգային հերոս: Բևերլի Հիլս (ԱՄՆ): Ծնվել է Ֆրեզնոյում 1917թ. հունիսի 6-ին: Անարոն և Լիլի Գրիգորյանների որդին է: Ամուսնացել է Հիլդա Շմիդտի (1942թ.), Մարի Հարդիի (1954) և Լիզա Բոնդերի (1999թ., 30 օր) հետ, դուստրերը՝ Տրեյսի, Լինդա, Կիրա:

Ուսանել է Մորտոնի ռազմաօդային ակադեմիայում (ավարտել է լեյտենանտի աստիճանով, 1942թ.): Եղել է օդաչուների հրահանգիչ, մասնակցել է Երկրորդ հա-

մաշխարհային պատերազմին իբրև Բրիտանական թագավորական ռազմաօդային ուժերի օդաչու (թռիչքներ է կատարել Ատլանտյան օվիանոսի վրայով, 1944-45թթ.):

Իբրև գործարար իր գործունեությունը սկսել է Լոս Անջելոսի օդանավային ծառայություններում (1945-65թթ.): Հիմնել է Տրանսատլանտյան օդանավային ընկերությունը (ոչ-չվացուցակային թռիչքներ, 1948թ.): Ներդրումներ է կատարել Լաս Վեգասում (սկսած 60-ական թթ-ից): Հիմնել է Լաս Վեգասի «Ինտերնեյշնալ» (1967թ.), «Ֆլամինգո» (1968թ.), «Լաս Վեգաս Հիլտոն» (նախկինում՝ «Ինտերնեյշնալ», 1969թ.), «Էմ Ջի Էմ գրանդ» (1973թ.), «Էմ Ջի Էմ գրանդ զարդեն» (1993թ.) շքեղ հյուրանոցները: Խոշոր ներդրումներ է կատարել կինոարտադրության ասպարեզում՝ գնելով «Մետրո Գոլդվին Մեյեր» ընկերության (1968թ.), ապա նաև «Յունայտիդ արտիստս», «Կոլումբիա փիքչրս» և «Ֆոքս 20-սենչերի» ընկերությունների արժեթղթերը: «Ջեներալ մոտորս» և «Կրայսլեր» ինքնաշարժային արդյունաբերության ընկերությունների արժեթղթերի հիմնական սեփականատերերից մեկն է («Ջեներալ մոտորս»՝ 9.9%, «Կրայսլեր»՝ 7%, 2006թ. տվյալներով) և դրանց տնօրենների խորհրդի անդամ: Նախագահը և գլխավոր տնօրենն է իր հիմնադրած «Տրասինդա» կորպորացիայի: Սեփականատերն է «Մանդալեյ Բեյ», «Բեյլաջիո», «Էմ Ջի Էմ Գրանդ», «Էմ Ջի Էմ Միրած», «Նյու Յորք-Նյու Յորք», «Բիլոկսի» (Միսիսիպի), «Բորդվուկ» (Լաս Վեգաս) համալիր զվարճության վայրերի, բարձրակարգ հյուրանոցների, խաղատների, խանութների, ձեռնարկությունների և այլն:

«Լինսի» բարեգործական հաստատության հիմնադիրն է: Հիմնված լինելով 1988թ. Հայաստանի երկրաշարժից հետո, այն հսկայական մարդասիրական օգնություն է տրամադրել աղետի գոտու տուժածներին, կատարել է լայնածավալ բնակարանային և ճանապարհային շինարարական աշխատանքներ: Միջոցներ է տրամադրել Երևան քաղաքի բարեկարգման, մշակութային հիմնարկների՝ թանգարանների, թատրոնների վերանորոգման համար: Օգնել է Արցախի տնտեսական

զարգացմանը: «Լինսի» բարեգործական հաստատությանը մեծ ներդրումներ է կատարել նաև ԱՄՆ-ում:

Պարգևներ, մրցանակներ և պատվավոր կոչումներ չի ընդունում: Այսուհանդերձ, Հայաստանի Հանրապետության ազգային հերոս է, պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության բարձրագույն՝ «Հայրենիքի շքանշանով» (2004թ.): «Ֆրիտյոֆ Նանսեն» հաստատությունը նրան շնորհել է նույնանուն շքանշան մարդասիրական ու բարեգործական լայնածավալ գործունեության համար (Երևան, 2005թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ԿՈՆԴԱԶՅԱՆ Կերեն (Կարեն)

KONDAZIAN Karen

Թատրոնի և կինոյի դերասանուհի, գրող, լրագրող արվեստի ոլորտում: Լոս Անջելոս, Կալիֆոռնիա, ԱՄՆ: Ծնվել է 1950թ. հունվարի 27-ին Բոստոնում (ԱՄՆ): Եղվարդ Կոնդազյանի և Լիլիան Մոսեսյանի դուստրն է:

Ավարտել է Սան Ֆրանցիսկոյի պետական քոլեջը արվեստի պակավորի աստիճանով (1963թ.): Ուսումը շարունակել է Վիեննայի համալսարանում, այնուհետև Լոնդոնի երաժշտության և թատերական արվեստի ակադեմիայում, նաև հաճախել է Լի Ստրասբերգի, Ջոզե Բլիմտերոյի և Միլտոն Կացելասի թատերական ստուդիաները:

Բեմական առաջին ելույթը եղել է Միքայել Կակոսիաննիսի «Տրոյացի կինը» ներկայացման մեջ՝ Նյու Յորքի «Հրապարակի թատրոնում» (1964թթ.): Գլխավոր դերերով հանդես է եկել բազմաթիվ ներկայացումներում, այդ թվում Վ. Շեքսպիրի «Համլետում» («Մարկ Թեյպերի ֆորում»

թատրոն, Լոս Անջելոս) և «Ռիչարդ Երրորդում» (Ամանսոնի թատրոն, Լոս Անջելոս), Օ՛Մորիսոնի «Կապույտ տան տիկինը» ներկայացման մեջ (Հարավային ծովախորշի թատրոնում, Լոս Անջելոս, 1980թ.), Էդվարդ Ալբրի «Ո՞վ է վախենում Վիրջինիա Վուլֆից» ներկայացման մեջ (Բերկլիի թատրոն, 1990թ.), Մակ Նալիի «Վարպետության դաս» ներկայացման մեջ Մարիա Կալասի դերով (Ֆոնտենի թատրոն, Ոդիսեսի թատրոն, 2003թ.) և այլն: Նկարահանվել է մի շարք ֆիլմերում՝ «Այո, Ջիորջիո» (Ֆրանչեսկա Ջորդանոյի դերում, Լուչիանո Պավարոտտի մասնակցությամբ, «Մետրո Գոլդվին Մեյերի» և «Յունայտիդ արտիստի» արտադրություն, 1982թ.), «Կորբա» (բուժքրոջ դերում, 1986թ.), «Մեծ գողություն, փոքր գողություն» (տիկին Հակոբյանի դերում, 1995թ.), «Կալիֆոռնիական առասպել» (Մոնյայի դերում, 1999թ.), «Քաղաքի սահմաններից դուրս» (մոր դերում, 2000թ.): Մասնակցել է բազմաթիվ հեռուստատեսային շոու ծրագրերի ստեղծմանը:

Համահեղինակն է «Դերասանի հանրագիտարան վճիռ կայացնող տնօրենների համար» գրքի (համահեղինակներ՝ Էդի Շապիրո, Ռիչարդ Դրեյֆուս, 2000թ.): Թղթակցում է ամերիկյան թատերարվեստի մի քանի պարբերականների (*Back Stage West, Drama-Logue*):

Անդամ է Հեռուստատեսային արվեստների և գիտությունների ակադեմիայի (ԱՄՆ, անդամակցում է «Էմմի») մրցանակներ շնորհող հանձնախմբին), Հոլիվուդի կանանց մամուլի ակումբի, Ամերիկայի հայկական թատերական արվեստների միության: «Դերասանի ստուդիայի» (Նյու Յորք) ցմահ անդամ է:

Արժանացել է Լոս Անջելոսի քննադատների ակումբի «Լավագույն դերասանուհու» մրցանակի՝ «Ռոուզ Տատու» ներկայացման մեջ մասնակցության համար (1978թ.), Սան Ֆրանցիսկոյի քննադատների ակումբի «Լավագույն դերասանուհու» մրցանակի՝ «Ո՞վ է վախենում Վիրջինիա Վուլֆից» ներկայացման մեջ մասնակցության համար (1991թ.), «Հանդիսատեսի կողմից մեծարժան մրցանակի» (երկու անգամ՝ 1999 և 2007թթ-ին, «Լավագույն դե-

րասանուհի» անվանակարգում, երկրորդը՝ «Վարպետության դաս» ներկայացման մեջ Մարիա Կալասի դերի համար), բազմաթիվ այլ մրցանակների ու պարգևների:

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ԿՈՍՏԻԿՅԱՆ Գրեգ

COSTIKYAN Greg

Գրող, էլեկտրոնային խաղերի հեղինակ և նկարիչ: «Մանիֆեստո գեյմ» ընկերության հիմնադիր և գլխավոր տնօրեն: Նյու Յորք, ԱՄՆ: Ծնվել է 1959թ-ին Նյու Յորքում: Ամուսնացած է, ունի երկու դուստր՝ Վիկի և Բեստի:

Ավարտել է Բրաունի համալսարանը (1982թ.):

Առաջին խաղերն ստեղծել է 14 տարեկանում՝ դրանք ներկայացնելով «Միմուլեյշն պուրլիկեյշն» ընկերությանը: 16 տարեկանում մասնակցում է խաղերի ստեղծման հետազոտական աշխատանքներին և տպագրում իր առաջին խաղը՝ «Ալամեյնի մարտը» անվանումով: Աշխատել է «Վեստ Էնդ գեյմս» ընկերությունում, մասնակցել է ընկերության մոտ 50 նախագծի իրականացմանը՝ զբաղեցնելով խաղեր ստեղծողների հետազոտական խմբի տնօրենի պաշտոնը (1985–87թթ.): 1987թ-ին իրականացրել է «Խելացնոր բավիդ (լաբիրինթոս) հնարամիտների համար» առաջին համակարգչային խաղի ստեղծումը համացանցում, որը կարճ ժամանակ անց ունեցել է մոտ մեկ միլիոն մասնակից: Այնուհետև աշխատել է «Քրոսովր տեքնոլոջիս» ընկերությունում (1993–97թթ.): Իբրև փորձագետ-խորհրդատու աշխատել է մի շարք ընկերություններում՝ «Վիակոն», «Մատտելե», «Ֆրանս Տելեկոմ», «Ռոլան Բեր-

գեր» և այլն (1997–2001թթ.): Համահիմնադիրն է և գլխավոր գործադիր տնօրենը «Անալագգեդ գեյմս» ընկերության (2000թ-ից): Համագործակցել է նաև «Ինտել», «Այ Բի Էմ», «Տենիս Գրուպ», «Նոկիա» և այլ խոշոր ընկերությունների հետ (2001–2004թթ.): Որպես ստեղծագործական լաբորատորիայի տնօրեն պաշտոնավարել է «Նոկիայի» հետազոտական կենտրոնում (2004–2005թթ.): Հիմնադիրն է և գլխավոր տնօրենը «Մանիֆեստո գեյմ» ընկերության (սկսած 2006թ-ից):

Ստեղծել է մոտ 30 խաղ, այդ թվում սեղանի խաղեր, համակարգչային խաղեր, էլեկտրոնային խաղեր, խաղեր բջջային հեռախոսների համար և այլն: Նրա ստեղծած խաղերի շարքում հատկապես հիշարժան են «Պարանոյա», «Աստղային պատերազմ», «Վերահայտնաբերված Ամերիկա», «Դիմակների առջևում», «Բռնարար» և բազմաթիվ այլ խաղեր: Դասախոսություններով հանդես է եկել Հելսինկիի արվեստների և նկարչության, Նյու Յորքի պետական, Կոպենհագենի տեղեկատվական տեխնոլոգիաների համալսարաններում, Խաղեր ստեղծողների և Թվագրված խաղերի հետազոտական միությունների գիտաժողովներում: Հեղինակ է գիտաբեռնակայական 4 վեպի՝ «Մեկ ուրիշ օր, ուրիշ բանտ» (1991թ.), «Թուրը» (1993թ.), «Մի որոնում, տիրանալ Դրակոնը» (1995թ.), «Առաջին շփումը» (1999թ.), ինչպես նաև բազմաթիվ պատմվածքների: Նրա «Ես ասելիք չունեմ և ես պետք է նկարեմ» հրապարակումը ծառայում է որպես խաղերի ստեղծման դասընթացի բաղկացուցիչ մաս:

Անդամ է Խաղեր ստեղծող միջազգային ընկերության և նրա Նյու Յորքի բաժանմունքի ղեկավար խորհրդի (2000թ.):

Հինգ անգամ արժանացել է «Օրիջինս» մրցանակի (Խաղերի ցուցադրության միջազգային ընկերության կողմից, Օհայո), նաև Արկածային խաղերի արվեստի և նկարչական ձևավորման ակադեմիայի սրահի պատվավոր անդամի կոչման, Մավերիկի մրցանակի (Խաղեր ստեղծող միջազգային ընկերության կողմից, Սան Ֆրանցիսկո, 2007թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ՀԱԿՈՒԲՅԱՆ Իոսիֆ (ԱԿՈՒԲՅԱՆ Իոսիֆ)

AKOPYAN Isosif

Գլխավոր նախագծող և գյուտարար: Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Մոսկվայի «Ազատ» գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր նախագծող և Ռադիոէլեկտրոնային արդյունաբերական ձեռնարկությունների գլխավոր տնօրենների խորհրդի նախագահ: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է Սարատովում (Ռուսաստան) 1931թ. օգոստոսի 28-ին (հայրանունը՝ Գրիգոր): Ամուսնացած է, ունի մեկ դուստր:

Ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը (1954թ.): Նույն հաստատությունում ստացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (1960թ.): Տեխնիկական գիտությունների դոկտոր է (1960թ.) և պրոֆեսոր (1990թ.):

Եղել է Մոսկվայի մարզի Ժուկովսկի քաղաքի Հատուկ նախագծային գրասենյակի ավագ ճարտարագետ, ապա գլխավոր ճարտարագետ, այնուհետև գլխավոր հետազոտող (1958–60թթ.): Նույն հաստատությունում պաշտոնավարել է իբրև բաժնի վարիչ և ռադիոլուկացիոն ինքնաուղորդվող գլխիկների գլխավոր նախագծող (1972–85թթ.): Աշխատել է իբրև «Ֆազոտրոն» գիտաարտադրական միավորման

գլխավոր նախագծողի տեղակալ (1985–86թթ.): Իբրև գլխավոր նախագծող ղեկավարել է Մոսկվայի նորաբաց «Ազատ» գիտահետազոտական ինստիտուտը (սկսած 1986թ-ից): Ներկայումս «Ազատ» գիտահետազոտական ինստիտուտի և համանուն միավորման գլխավոր նախագծողի տեղակալն է և Ռուսաստանի Դաշնության Արդյունաբերության դաշնային գործակալության Ռադիոէլեկտրոնային ձեռնարկությունների գլխավոր տնօրենների խորհրդի նախագահը:

Հեղինակ է 160 գիտական աշխատության, մոտ 60 արտոնագրի: Նրա ղեկավարած նախագծերով են ստեղծվել հրթիռների (այդ թվում «Օդ-օդ», «Երկիր-օդ» և այլն), ռազմական ու քաղաքացիական ինքնաթիռների, հրետանու և թռչող սարքերի մոտ 20 տեսակի նոր ուղղորդող համակարգեր, ռադարներ, հակաօդային պաշտպանական համակարգի սարքեր և այլն:

Ռուսաստանի հրթիռային և հրետանային գիտությունների ակադեմիայի անդամ է (2000թ., թղթակից-անդամ՝ 1999թ-ից): Անդամ է Տեղեկատվական գիտությունների միջազգային ակադեմիայի (1996թ.): Էլեկտրատեխնիկական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ է (1995թ.):

Պարգևատրվել է ԽՍՀՄ պատվավոր ռադիոօպերատորի կոչմամբ (1966թ.), «Պատվո նշան» շքանշանով (1966թ.), «Աշխատանքային հերոսության համար» մեդալով (1970թ.), Լենինյան մրցանակով (1972թ.), «Հոկտեմբերյան հեղափոխության» շքանշանով (1971թ.), ԽՍՀՄ պետական մրցանակով (1980թ.), «Լենինի» շքանշանով (1984թ.), ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Ռասայիտիմի անվան մեդալով (1990թ.), «Բարեկամություն» շքանշանով (1996թ.), «Ռուսական նավատորմի 300 տարին» շքանշանով (1996թ.), «Հայրենիքին մատուցած ծառայություն-

ների համար» 3-րդ (2001թ.) և 4-րդ (1996թ.) կարգերի շքանշաններով, «Մոսկվայի 850-ամյա հոբելյանը» մեդալով (1997թ.), Ռուսաստանի Դաշնության պետական մրցանակով (1988թ.), «Սպառազինության և ռազմական հանդերձանքի զարգացման համար» մեդալով (2000թ.), «Ռուսաստանի լավագույն գործարար» կոչմամբ (2000 և 2003թթ.), Պետրոս Մեծի անվան ազգային մրցանակով (2003թ.), Ժուկովի անվան մեդալով (2003թ.), Բելգիայի «Պատվո սպայի» շքանշանով (2003թ.), Մոսկվայի նահանգապետի «Շնորհակալագրով» (2004թ.), Կալմիկովի անվան մրցանակով (2004թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՀԱԿՈԲՅԱՆ Հակոբ

HAKOBIAN Hakob

Գեղանկարիչ: Հայաստանի ժողովրդական նկարիչ: Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի արտասահմանյան պատվավոր անդամ: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է 1923թ. մայիսի 23-ին Ալեքսանդրիայում (Եգիպտոս): Հայաստանում բնակություն է հաստատել 1963թ-ին:

Ավարտել է Կիպրոսի Մելքոնյան վարժարանը (Նիկոզիա, 1943թ.): Ուսանել է Գեղարվեստի ակադեմիայում (Կահիրե, 1944-47թթ.): Փարիզում ուսանել է Գրանդ Շոմիեր ակադեմիայում (1952-54թթ.):

Աշխատել է իբրև նկարիչ-ձևավորող (Կահիրե, 1947-52թթ.): Հայաստանում բնակություն հաստատելուց հետո եղել է Լենինականի (այժմ՝ Գյումրու) տեքստիլ

գործարանի ձևավորող նկարիչ (1963-65թ.): Հայաստանում առաջին անհատական ցուցահանդեսը կազմակերպել է Երևանում (1965թ.): Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Մոսկվայում (1990թ.), Փարիզում, Նյու Յորքում, Լոնդոնում և այլ քաղաքներում, վերջերս՝ Լոս Անջելոսում (2006թ.):

Հեղինակ է բազմաթիվ նկարաշարերի, այդ թվում հայկական բնապատկերների (Արենի, Աղավնաձոր, Գետափ, Մալիշկա գյուղեր, խաղողի այգիներ), քաղաքային պատկերների (փողոցներ Լենինականում, ջրանցքներ), մեկ անձից բաղկացած կոմպոզիցիաների («փոքր մարդիկ»՝ դերձակ, ծառայող), մատյուրմորտների (արհեստանոցում, խոհանոցում): Նրա լավագույն գործերի թվին են պատկանում «Անկյուն խոհանոցում» (1960թ.), «Ծառեր» (1970թ.), «Գարուն» (1970թ.), «Ջրանցքի մոտ», «Հոփսիմեի վանքի այգին» (1976թ.), «Նկարչի արվեստանոցում» (1980թ.), «Իմ հողը» (1977թ.), «Արարատ» (1980), «Նատյուրմորտ մանեքենով» (1981թ.), «Բնապատկեր» (1987թ.) և բազմաթիվ այլ աշխատանքներ:

Նրա ստեղծագործությունների մի մասն ամփոփված է «Գրաֆիկա և ջրաներկ, Հակոբ Հակոբյան» (Աթենք, 1981թ.) և «Հակոբ Հակոբյան» (Երևան, 1981թ.) ալբոմներում:

Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի արտասահմանյան պատվավոր անդամ է:

Արժանացել է Անդրկովկասյան առաջին բիենալեի ոսկե մեդալի «Գարուն» ստեղծագործության համար (Թբիլիսի, 1971թ.): Հայկական ԽՍՀ (1977թ.) և ԽՍՀՄ պետական մրցանակների դափնեկիր է (1987թ.): Հայաստանի ժողովրդական նկարիչ է (1977թ.): Պարգևատրվել է Հայ առաքելական եկեղեցու «Սուրբ Սահակ, Սուրբ Մեսրոպ» շքանշանով (2003թ.): Երևանի պատվավոր քաղաքացի է (2001թ.):

2005թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՀԱԿՈԲՅԱՆ Վիլեն

HAKOBIAN Vilen

Բժշկագետ: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի անդամ և Բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է 1938-ի մայիսի 1-ին, Հայկական ԽՍՀ Թալինի շրջանի Գառնահովիտ գյուղում (հայրանունը՝ Պարույր):

Ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը (1960թ.): Ստացել է բժշկական գիտությունների թեկնածուի (1967թ.), ապա դոկտորի (1977թ.) գիտական աստիճաններ և պրոֆեսորի կոչում (1980թ.):

Իբրև գյուղական բժշկական տեղամասի վարիչ աշխատել է Արթիկի շրջանում (1960-62թթ.): Տեղափոխվելով Երևանի պետական բժշկական ինստիտուտ (ներկայումս՝ Մխիթար Հեքացու անվան բժշկական համալսարան)՝ զանազան պաշտոններ է զբաղեցրել, այդ թվում եղել է բուժական ֆակուլտետի դեկանի տեղակալ (1971-72թթ.), արտասահմանցի ուսանողների դեկան (1972-79թթ.), բուժական ֆակուլտետի դեկան (1979-83թթ.), ուսումնական գծով պրոռեկտոր (1986-87թթ.), ինստիտուտի ռեկտոր (1987-2006թթ.), ֆարմակոլոգիայի մեթոդական կենտրոնի վարիչ (1994-2006թ.): Նույն հաստատությունում հիմնադրել է ռազմաբժշկական ֆակուլտետը (1994թ.): Ներկայումս Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարն է (2006թ-ից):

Հեղինակ է 270 գիտական աշխատության, այդ թվում 6 մենագրության, 11 ուսումնական մեթոդական ձեռնարկի, ֆարմակոլոգիայի 3 դասագրքի բժշկական բուհերի ուսանողների համար: Ստացել է 14 հեղինակային արտոնագիր: Գիտական հետազոտությունները վերաբերում են կենտրոնական նյարդային համակարգի արյան շրջանառության ուսումնասիրության հարցերին, սակավաշարժության և ֆիզիկական ակտիվության պայմաններում ուղեղային արյան շրջանառության կարգավորման մեխանիզմներին, ուղեղային արյան շրջանառության ինքնակարգավորման նյարդաքիմիական տեսությունը, նյարդաակտիվ ամինաթթուների կարգավորիչ դերի ուսումնասիրությանը ուղեղային արյան շրջանառության գործում: Խմբագրել է «Հայաստանի բժշկագիտություն» գիտական հանդեսը (1989-2008թթ.): Եղել է խմբագրական կազմի անդամ Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի «Փորձարարական և կլինիկական ֆարմակոլոգիա» հանդեսի, Իրանի Իսլամական Հանրապետության «Բժշկական միջազգային ամսագրի», այլ գիտական հանդեսների, մասնակցել է բժշկական խմբագրությունների միջազգային ընկերության «Հույս» նախագծի մշակմանը (Վիրջինիա, ԱՄՆ, 1996թ.):

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի անդամ է (1994թ., թղթակից-անդամ՝ 1990թ-ից, նախագահության անդամ՝ սկսած 2000թ-ից): Անոթաբանների միջազգային քոլեջի գիտական խորհրդի պատվավոր անդամ է (Նյու Յորք, 1994թ.): Անդամ է Դեղագետների միջազգային դաշնության (Հագյու, Նիդեռլանդներ, 1996թ.), Ֆարմակոլոգիայի միջազգային գիտական ընկերության (Բրյուսել, 1998թ.), Ուղեղային արյունահոսքի և նյութափոխանակության միջազգային ընկերության (Բեռլին, 2003թ.), Լեհաստանի բժշկական գիտությունների ազգային (Վարշավա, 1997թ.) և 7 այլ միջազգային ակադեմիաների: Առողջապահության համաշխարհային կազմակերպության բժշկական կրթության փոր-

ծագիտական խմբի անկախ փորձագետ է (Բրյուսել, 2001):

Պարզևատրվել է Ալբերտ Եվեյցերի ոսկե մեդալով, Վերնադսկու անվան «Ոսկե աստղով», Ֆ. Նանսենի անվան ոսկե հուշամեդալով, Ռուսաստանի Դաշնության բժշկատեխնիկական գիտությունների ակադեմիայի 10-ամյակի ոսկե մեդալով, Հայաստանի Հանրապետության «Մխիթար Հերացի» մեդալով և «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, Հայ առաքելական եկեղեցու «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» (Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի կողմից), «Դրաստամատ Կանայանի» մեդալով, «Ամենափրկիչ Քրիստոսի տաճարի» Մոսկվայի կաթողիկոսության երախտավորագրով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Մայրական երախտագիտություն» մեդալով, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունների պատվոգրերով: Արժանացել է Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակին: Երևանի պատվավոր քաղաքացի է (2000թ.):

2008թ. Բաց տպագրական և հանրամատչելի տեղեկատվական արդյունքների տվյալների հիման վրա:



ՀԱՎՈՐՁԱՆՅԱՆ Հայկազ

HAKOBDJANYAN Haykaz

Արձակագիր, գրականագետ: Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Գյումրի, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է Գյումրիում 1948թ. հուլիսի 24-ին: Արտավազը Հակոբջանյանի և Վարսիկ Ապրելյանի որդին է: Ամուսնացել

է Ռուզաննա Թևանյանի հետ (Գյումրի, 1975թ.), զավակները՝ Վահան և Արտավազը:

Ուսանել է Լենինականի Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում (1965-70թ.): «Օն. Ջիֆթե-Սարաֆի կյանքը և գործը» գիտական ատենախոսության համար ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ, 1983թ.): «Արևմտահայ գավառագիր արձակի պատմությունն ու տեսությունը» թեմայով ատենախոսության համար արժանացել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի (1998թ.):

Հայոց լեզու և գրականություն է դասավանդել դպրոցներում (սկսած 1971թ.): Եղել է միջնակարգ դպրոցների տնօրեն (1985-2000թթ.): Մ. Նալբանդյանի անվ. մանկավարժական ինստիտուտի պրոֆեսոր է, հայ գրականության ամբիոնի վարիչը (սկսած 2000թ-ից):

Հեղինակ է մոտ 80 աշխատության, վեպերի, վիպակների, պատմվածքների: Հիշարժան են նրա «Գրական դեմքեր» (Երևան, ԳԱ հրատ., 1988թ.), «Ամանոսի լեռների առասպելը» (Երևան, «Հայաստան» հր., 1990թ.), «Պաղվալի Վաղոն» (Լիբանան, 1996թ.), «Սպիտակ եղևվեյսներ (Ռ. Սևակ)» (Երևան, «Նաիրի» հր., 1997թ.), «Խանասուր» (Երևան, «Չանգալ-97» հր., 1998թ.), «Երուխան (կյանքը և գործը)» (Գյումրի, «Դպիր» հր., 2004թ.), «Առկայծ ճրագ (Դ. Վարուժան)» (Գյումրի, «Դպիր» հր., 2004թ.), «Ով մարդկային արդարություն (Սիամանթո)» (Երևան, ՀԳՄ հր., 2005թ.) գրքերը:

Հայաստանի գրողների միության անդամ է (սկսած 1998թ-ից):

2005թ., Դայկական կենսագրական կենտրոնի «Դարցաբերթի» տվյալների հիման վրա



ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Սերգեյ

HAMBARTSUMIAN Sergei (AMBARTSUMIAN)

Մեխանիկայի բնագավառի մասնագետ: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի անդամ: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ: Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Ծնվել է 1922թ. մարտի 19-ին Ալեքսանդրապոլում (Գյումրի, Հայաստան): Հայրանունը՝ Ալեքսանդր:

Ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը (1942թ.): Արժանացել է տեխնիկական գիտությունների թեկնածուի (1946թ.), ապա տեխնիկական գիտությունների դոկտորի (1952թ.) գիտական աստիճանների և պրոֆեսորի կոչման (1953թ.):

Պաշտոնավարել է իբրև Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի Մեխանիկայի և մաթեմատիկայի ինստիտուտի (1971-ից՝ մեխանիկայի ինստիտուտ) տնօրեն (1959-77թթ.): Եղել է Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահության անդամ (սկսած 1971-ից), Ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար (1971-74թթ.), փոխնախագահ (1974-77թթ.), նախագահության խորհրդատու (1991թ-ից): Իբրև ռեկտոր ղեկավարել է Երևանի պետական համալսարանը (1977-91թթ.): 20 տարի շարունակ բազմիցս ընտրվել է ժողովրդական պատգամավոր՝ լինելով նաև Խորհրդային Միության Գերագույն Խորհրդի նախագահության անդամ և Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահ (1975-80թթ.):

Նրա գիտական աշխատանքները վե-

րաբերում են հոծ միջավայրի մեխանիկայի, թաղանթների և սալերի տեսության, տարամոդուլ առածականության տեսության, բարակ մարմինների էլեկտրամագնիսաառածականության, միկրոպլոյար առածականության տեսության ուսումնասիրությանը: Նրա հեղինակած գրքերը ծառայում են որպես դասագրքեր և թարգմանաբար հրատարակվել են ԱՄՆ-ում, Ճապոնիայում և այլ երկրներում: Հեղինակ է նաև «Երեք տարի սիրո և մահվան սահմանագծում (պատգամավորի գրառումներ)» հուշագրության (ռուսերեն, Երևան, 2005թ.):

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս է (1965թ., թղթակից անդամ՝ 1956-65թթ.): Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ է: Տիեզերագնացության միջազգային ակադեմիայի և Հայաստանի ճարտարագիտական ակադեմիաների ակադեմիկոս է: Միջազգային ճարտարագիտական ակադեմիայի պատվավոր ակադեմիկոս է: Մեխանիկայի և մաթեմատիկայի փոխազդեցության միջազգային միության անդամ է: Հայաստանի փոխտնօրենական ակադեմիայի պատվավոր անդամ է: Գիտության, կրթության, արդյունաբերության և արվեստի միջազգային ակադեմիայի անդամ է: Պենսիլվանիայի ինֆորմատիկայի և գործարարության ինստիտուտի և Երևանի պետական ճարտարապետաշինարարական համալսարանի պատվավոր պրոֆեսոր է: ԱՄՆ-ի մեխանիկական ճարտարագետների ընկերության անդամ է: Բրատիսլավայի համալսարանի պատվավոր դոկտոր է: Ռուսաստանի կիրառական և տեսական մեխանիկայի ազգային կոմիտեի անդամ է: Սլովակիայի գիտությունների ակադեմիայի Մեխանիկների ընկերության պատվավոր անդամ է: Անդամ է բազմաթիվ այլ մասնագիտական ընկերությունների:

Պարզևատրվել է «Լենինի», «Հոկտեմբերյան հեղափոխության», «Աշխատանքային կարմիր դրոշի», «Պատվո նշան», «Ս.Սահակ և Ս.Մեսրոպ», Յան Կոմենսկու անվան շքանշաններով, Ա. Ի. Վավիլովի անվան, «Խաղաղության մարտիկ», «Բա-

րեկամություն», Երևանի պետական համալսարանի, Մոնտպելիեի համալսարանի, Միջազգային ճարտարագիտական ակադեմիայի «Մեծ արծաթ» և «Մեծ ոսկե» մեդալներով:

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



<ԱՍԱՍՅԱՆ Մանվել

HASSASSIAN Manuel

Քաղաքագետ, դիվանագետ, քաղաքական գործիչ: Դեսպան, Միացյալ Թագավորությունում Պաղեստինի դիվանագիտական պատվիրակության ղեկավար: Փիլիսոփայության դոկտոր քաղաքական գիտությունների ասպարեզում: Քաղաքական գիտությունների և միջազգային հարաբերությունների պրոֆեսոր (Բեթլեհեմի համալսարան): Ծնվել է Երուսաղեմում 1953թ. դեկտեմբերի 28-ին: Ամուսնացած է Սամիրա Հասասյանի հետ:

Ավարտել է Բեյրութի ամերիկյան համալսարանը (արվեստների պակավորի աստիճանով քաղաքական գիտությունների ասպարեզում, 1976թ.), ապա Տոլեդոյի համալսարանը (արվեստների մագիստրոսի աստիճանով միջազգային հարաբերությունների ասպարեզում, Օհայո, ԱՄՆ, 1976թ.): Արժանացել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճանի քաղաքական գիտությունների ոլորտում (Մինսինգատի համալսարան, ԱՄՆ, 1986թ.):

Իբրև դասախոս (1981-85թթ.), ապա իբրև պրոֆեսորի օգնական (1986-91թթ.), այնուհետև իբրև պաշտոնակից պրոֆեսոր (1991-98թթ.) և պրոֆեսոր (սկսած 1999թ.) Բեթլեհեմի համալսարանում դասավանդել է

է քաղաքական գիտություններ և միջազգային հարաբերություններ առարկաները: Եղել է նաև այդ համալսարանի ուսանողության հարցերի ղեկան (1983-91թթ.), արվեստների ֆակուլտետի ղեկան և հասարակագիտական բաժանմունքի վարիչ (1992-96թթ.), գործադիր փոխնախագահ (1996-2005թթ.): Պաղեստինի նախագահ Մահմուդ Աբբասի կողմից նշանակվել է Միացյալ Թագավորությունում Պաղեստինի դիվանագիտական պատվիրակության ղեկավար և ղեսպան (սկսած 2005թ-ից):

Հեղինակ է ավելի քան 100 աշխատության՝ հոդվածների, գրքերի գլուխների, մենագրությունների և այլն, մերձավորարևելյան քաղաքական հիմնախնդիրների, խաղաղության հիմնահարցերի, ժողովրդավարության և ընտրական համակարգերի, պաղեստինյան քաղաքացիական հասարակության ձևավորման և գաղթականության հարցերի, ինչպես նաև Հայ դատի միջազգային քաղաքական խնդիրների վերաբերյալ: Հիշարժան են նրա «Պաղեստին՝ երկպառակությունը ազգային շարժման մեջ մանդատային կառավարման ժամանակաշրջանում» (Երուսաղեմ, «Պասսիա», 1990թ.), «Քաղաքական ընդդիմությունը պաղեստինյան ազգային շարժման մեջ 1919-1939թթ.» (Երուսաղեմ, «Ալ-Բայադեր», 1987թ.), «Հայերի ինքնորոշման ջանքերը» (1987թ.), «Հայկական հարցի պատմական զարգացումը և հակամարտությունը Լեռնային Ղարաբաղի՝ Արցախի շուրջը» («Պասսիա», 1988թ.) աշխատությունները: Համախմբագիրն է «Քաղաքացիությունը Մերձավոր Արևելքում» («Սիրակուս յունիվերսիտի պրես», 2000թ.) գրքի: Եղել է «Բեթլեհեմի համալսարանի ամսագիր» հանդեսի գլխավոր խմբագիր (1992-93թթ.): Մի շարք ամսագրերի և պարբերականների խմբագրական կազմերի անդամ է՝ «Պոլիտիկո, Հարավային Աֆրիկայի քաղաքական հետազոտությունների ամսագիր» (Միացյալ Թագավորություն), «Պաղեստինի-Իսրայելի ամսագիր» (Երուսաղեմ), «Ընդհանուր տեսակետի որոնման ամսագիր» (ԱՄՆ): Իբրև հրավիրված գիտնական դասախոսել է

Դուբլինի համալսարանական քոլեջում (1987թ.), Վերմոնտի (1991-2000թթ.), Մերիլենդի (1994թ.), Վիլանովայի (1996թ.), Ռեյմի (1996-97թթ.) և այլ համալսարաններում:

Քաղաքական գիտությունների արաբական ընկերության անդամ է (սկսած 1986թ-ից, եղել է գործադիր անդամ՝ 1987-88թթ.): Եղել է Պաղեստինի կարգավիճակի և գաղթականների վերաբերյալ բանակցող խմբի խորհրդական (1997-99թթ.), ինչպես նաև Երուսաղեմի «Արևելյան տան» կարգավորող հանձնախմբի անդամ և խորհրդական (1997-2002թթ., եղել է նաև «Արևելյան տան» բանակցային գործերի բաժանմունքի Երուսաղեմի պատվիրակության ղեկավար): Պաղեստինի ազատագրության կազմակերպության կողմից մասնակցել է դիվանագիտական հանդիպումների նախապատրաստական աշխատանքներին (1997-2002թթ.): Եղել է Պաղեստինի պլանավորման և միջազգային համագործակցության նախարարության (1997-98թթ.), Ջարգացման և վերակառուցման տնտեսական խորհրդի գրասաշրջիկության հարցերի հանձնախմբի (1997-98թթ.), Բարձրագույն նախարարական հանձնախմբի կրոնական հարցերի հանձնախմբի (1988-2001թթ.) խորհրդական: Իբրև նախագահ ղեկավարել է Պաղեստինի կրթության նախարարության ղեկավարների հանձնաժողովը (1998-2003թթ.): Պաղեստինյան-եվրոպական-ամերիկյան կրթական համատեղ ծրագրի նախագահն է (սկսած 2000թ-ից, Յունեսկո, Փարիզ): Ռամալլահի «Համայնապատկեր» կենտրոնի հոգաբարձուների խորհրդի անդամ է: Անդամ է Միջին Արևելքի հետազոտությունների ընկերության, Արաբական երկրների ամերիկյան համալսարանների շրջանավարտների միության, Մարդկային իրավունքների արաբական ընկերության, Կոպենհագենում գործող Խաղաղության դաշինքի (սկսած 1997թ-ից), Ռազմավարական և միջազգային ուսումնասիրությունների կենտրոնի միջազգային խորհրդակցական խմբի (Վաշինգտոն), Ժողովրդավարության և աշխատավորների իրավունքների կենտրոնի (Ռամալլահ):

Ռեյմի համալսարանի (Ֆրանսիա) պատվավոր դոկտոր է (1996թ.): Արժանացել է Գլենջմանի անվան մրցանակի (Մերիլենդի համալսարանի Միջազգային զարգացման և հակամարտությունների կարգավորման կենտրոնի կողմից, 1998-99թթ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



**<ԱՏՏԵՃՅԱՆ Ռոբեր
<ԱՏՏԵՃԵԱՆ Ռուպեր**

HADDEDJIAN Rober

Խմբագիր, գրող, հրապարակախոս, թատերագիր: Կ. Պոլսում լույս տեսնող «Մարմարա» օրաթերթի խմբագրապետ: Կ. Պոլիս (Ստամբուլ), Թուրքիա: Ծնվել է 1926թ. Կ.Պոլսի Բաբրգյուղ թաղամասում: Ավետիս և Սիրանուշ Հատտեճյանների որդին է: Ամուսնացել է Սյուզան Դամիկյանի հետ: Որդիները՝ Արի և Հայկ:

Մովորել է Կ.Պոլսի Վիեննական Մխիթարյան վարժարանում (ավարտել է 1944թ-ին): Այնուհետև ուսանել է Ստամբուլի համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում, ապա, մեկ տարի անց, տեղափոխվել է գրականության ֆակուլտետ՝ հետևելով փիլիսոփայության և հոգեբանության ճյուղին, որն ավարտել է 1950թ-ին:

Զինվորական ծառայությունից հետո պաշտոնավարել է իբրև տեքստիլ արդյունաբերության գործարանի ներկայագուցիչ: Միաժամանակ զբաղվել է գրական և հասարակական գործունեությամբ: 1967թ-ից ստանձնել է «Մարմարա» օրաթերթի խմբագրապետի պաշտոնը:

Հեղինակ է 60 գրքի: Հայերեն առաջին պատմվածքը՝ «Բառասխալ», տպագրվել է «Անի» ամսագրում (1946թ.): Այնուհետև իր արձակ բանաստեղծություններն ու պատմվածքները տպագրել է «Սան», «Ճառագայթ», «Մարմարա» պարբերականների էջերում: «Մարմարայի» էջերում, 1981թ-ից սկսած՝ առ այսօր, տպագրում է իր «Յուշատետր» հոդվածաշարը, որի ընդհանուր ծավալը կազմում է մոտ 50 հատոր (առանձին գրքերով հրատարակված է մոտ 25 հատոր): Առանձնակի հիշատակության են արժանի նրա «Առաստաղ» (1983թ.) և «Առաստաղին Միս Կողմը» (1999) վեպերը, «Յիշելով մեր սիրեցեալ Շնորհք Պատրիարքը» (1987թ.) կենսագրական հատորը, «Հայկական Առածներ» (1995թ.), «Յուշատետր Ընտրանի» երկերի ժողովածուն (1996թ.), «Կեանքի մը երեք Կիրակիները» (1960թ.), «Կիրակնօրեայ հաշուեփակ», «Վաստակ» (1976թ.), «Արդեօք Մահը ա՞յս է» (1996թ.) թատերախաղերը, «Յակոբ Պարոնեանի մտերմութեան մէջ», «Հազար տարի Սուրբ Գրիգոր Նարեկացիի հետ», «Պտոյտ մը Հայ Բանաստեղծութեան Պարտեզին մէջ» (2000թ.), «Իսթանպուլահայ նոր բանաստեղծութեան վեպը՝ Կարպիս Ծանծիկեան, Հայկազուն Գալուստեան եւ միւսները» (2004թ.) գրականագիտական աշխատությունները և այլն: «Մարմարայի» հրատարակչատունը իրականացրել է բազմաթիվ հեղինակների ստեղծագործությունների մոտ 300 հատորի հրատարակություն:

Հայաստանի գրողների (2001թ.), ինչպես նաև լրագրողների (2001թ.) միությունների անդամ է: Գործուն մասնակցություն է ունեցել պոլսահայ համայնքի գրական և հասարակական կյանքին:

Արժանացել է «Ալեք Մանուկյան» գրական մրցանակի (բազմակի), «Թեքեյան» մշակութային միության «Հայ մամուլի մրցանակի» (1986թ.), ՀԲԸՄ «Ռիտա և Վարդգես Պալյան» գրական մրցանակի (1986թ.) «Սուրբ Սահակ, Սուրբ Մեսրոպ» շքանշանի (Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից, 1986թ.), Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի Ա կարգի շքանշանի և «Օրհնութեան Կոնդակի» (2001թ.):

Պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության «Մովսես Խորենացի» մեդալով և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության «Ոսկե մեդալով» (2002թ.):

2005թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ալեքսանդր

HARUTIUNIAN Alexander
ARUTYUNIAN Alexander

Կոմպոզիտոր: Նախկին Խորհրդային Միության և Հայաստանի ժողովրդական արտիստ: Պրոֆեսոր: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է 1920թ. սեպտեմբերի 23-ին Երևանում (հայրանունը՝ Գրիգոր): Ամուսնացել է Իրինա Հարությունյանի հետ:

Ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական երաժշտանոցը (աշակերտել է պրոֆեսորներ Բարիսուղարյանին և Տալյանին, 1941թ.), Կատարելագործվել է Մոսկվայի հայկական մշակույթի տան երաժշտական ստուդիայում (աշակերտել է Լիտինսկուն, Ռոզար – Լևիցկուն և Վեպրիկին, 1946–48թթ.):

Եղել է Հայֆիլիարմոնիայի գեղարվեստական ղեկավարը (1954–90թթ.): Դասավանդել է Երևանի Կոմիտասի անվան պետական երաժշտանոցում (սկսած 1965թ-ից)՝ ստանալով այդ հաստատության կոմպոզիցիայի պրոֆեսորի կոչում (1977թ.):

Նրա բազմաժանր երաժշտական ժառանգությունն ընդգրկում է բազմաթիվ սիմֆոնիկ, սիմֆոնիկ-վոկալ, սիմֆոնիկ-երգչախմբային, լարային, փողային, դաշնա-

մուրային ստեղծագործություններ, երգեր, կինոյի և թատերական ներկայացումների համար գրված երաժշտություն և այլն: Ի թիվս այլոց, նրա լավագույն ստեղծագործությունների թվում են «Հայկական ռաբստոլիան» երկու դաշնամուրի համար (համահեղինակ՝ Ա. Բաբաջանյան, 1950թ.), «Հայաստանի պարերը» («Պարային սյուիտ», 1952թ.), «Կոնցերտը» փողի և սիմֆոնիկ նվագախմբի համար (1950թ.), «Միմֆոնիան» (1957, վերամշակված 1980թ-ին), «Միմֆոնիետան» լարային նվագախմբի համար (1966թ.), «Պոեմը» ջութակի և դաշնամուրի համար (1985թ.) «Կոնցերտոն» ջութակի և լարային նվագախմբի համար (1988թ.) «Կոնցերտոն» գալարափողի և սիմֆոնիկ նվագախմբի համար (1993թ.) «Մուլտը» եռյակի համար (1992թ.) և այլն: Հեղինակն է «Սայաթ Նովա» օպերայի, որը բեմադրվել է Երևանի Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում (1969թ.): Ավելի քան 6 տասնամյակ նրա ստեղծագործությունները հնչում են աշխարհի բազմաթիվ համերգասրահներում, 20-րդ դարի անվանի կոմպոզիտորների գործերի շարքում:

Եղել է Փողային կվինտետների միջազգային մրցույթի ժյուրիի նախագահ (Նաբրոն, Ֆրանսիա, 1990թ.): Նախագահել է Գալարափողի միջազգային մրցույթի ժյուրիում (Մոսկվա, 1997թ.): Եղել է Փողային երաժշտության միջազգային մրցույթի ժյուրիի անդամ (Մոսկվա, 1957թ.): Անդամակցել է Վենյավսկու անվան ջութակահարների միջազգային մրցույթի պարտադիր ծրագրում լավագույն կոմպոզիտորի ստեղծագործության կատարումը գնահատող ժյուրիին (Պոզնան, Լեհաստան, 1967թ.):

Արժանացել է Խորհրդային Միության պետական մրցանակի դափնեկրի կոչման («Կանտատ հայրենիքի մասին» ստեղծագործության համար, 1947թ.), Խորհրդային Միության «Կարմիր դրոշի» շքանշանի (1962թ.), Հայաստանի ժողովրդական արտիստի կոչման (1964թ.), Խորհրդային Միության ժողովրդական արտիստի կոչման (1970թ.), Ալեքսանդրովի անվան մեդալի

(1976թ.), Հայաստանի Հանրապետության «Մովսես Խորենացի» մեդալի և «Մեսրոպ Մաշտոց» շքանշանի (2001թ.), Հայ առաքելական եկեղեցու «Սուրբ Սահակ, Սուրբ Մեսրոպ» շքանշանի (2004թ.), Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ոսկե մեդալի (2005թ.): Երևանի պատվավոր քաղաքացի է (1987թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ՀԵՐՈՒՆԻ Պարիս

HERUNI Paris

Ռադիոֆիզիկոս: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի անդամ: Հայաստանի Ռադիոֆիզիկական հետազոտությունների գիտահետազոտական ինստիտուտի հիմնադիր: Գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է 1933թ. դեկտեմբերի 17-ին Երևանում (հայրանունը՝ Միսակ):

Ավարտել է Մոսկվայի էներգետիկայի ինստիտուտը (1957թ.): Տեխնիկական գիտությունների դոկտոր է (Մոսկվա, 1972թ.), պրոֆեսոր (1983թ.):

Դասավանդել է Երևանի պետական համալսարանում (1960–62թթ.): Եղել է ռադիոֆիզիկայի ճարտարագետ, ապա գիտաշխատող, այնուհետև հիմնադիրն ու ղեկավարը Բյուրականի աստղադիտարանի ռադիոֆիզիկական չափումների նախագծային բյուրոյի (1957–60թթ.): Աշխատել է իբրև Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի գիտահետազոտական համամիութենական (ԽՍՀՄ) ինստիտուտի փոխտնօրեն և բաժնի վարիչ (1960–68թթ.): Հիմնադրել և

ղեկավարել է Ռադիոֆիզիկական չափումների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի հայկական մասնաճյուղը (1971-91թթ.): Հայաստանում Ռադիոֆիզիկական հետազոտությունների գիտահետազոտական ինստիտուտի հիմնադիրն ու գլխավոր տնօրենն է (սկսած 1991թ-ից): Հիմնադիրն ու ղեկավարն է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի «Ալեհավաք համակարգեր» ամբիոնի (սկսած 1983թ-ից):

Հեղինակ է 350 գիտական հոդվածի, երկու մենագրության, 21 արտոնագրի: Գիտական աշխատանքները վերաբերում են լայն կրկնակի հայելիներով (ամրացված մեծ սֆերիկ հայելու հետ) ալեհավաքների տեսությանն ու հաշվարկներին, անցքերում էլեկտրամագնիսական դաշտերի դիֆրակցիայի հավասարումների արտածմանը, ռադիոհոլոգրաֆիային, «Մեծ պայթյունի» տեսության զարգացմանը, ալեհավաքների և չափագիտության խնդիրներին, ալեհավաքների ռադիոֆիզիկայի և ռադիոտեխնիկայի բնագավառի հարցերին: Հղացել, մախագծել, կառուցել և չափումներ է կատարել աշխարհում առաջին ռադիո-օպտիկական 54 մետր տրամագծով աստղադիտակով (ROT 54/2.6), որը հայտնի է իբրև «Հերոնու հայելային ռադիոհեռադիտակ»: «Արև» գիտական ծրագրի հեղինակն է (արեգակնային էներգիայի օգտագործման բնագավառում):

Անդամ է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (սկսած 1996թ-ից, թղթակից-անդամ՝ 1982թ-ից), Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի (1999թ.), Հայաստանի տեխնոլոգիական ակադեմիայի (2001թ.), Բնապահպանական և կենսապահպանական միջազգային ակադեմիայի (2001թ.), Էլեկտրաճարտարագետների և ռադիոճարտարագետների միջազգային ինստիտուտի, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի «Ռադիոաստղագիտություն» գիտական խորհրդի: Հայաստանի նկարիչների միության պատվավոր անդամ է: Կազմակերպիչն է եղել 3 տարին մեկ անգամ պարբերականությամբ Հայաստանում տեղի ունեցած «Ալեհավաքային չափում-

ներ» համամիութենական գիտաժողովների (1978-90թթ.): Ալեհավաքային չափումների պետական չափօրինակների կենտրոնի հիմնադիրն է, որը հայտնի է «Արագածի գիտական կենտրոն» անվանումով (1975): Ռադիոֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում ստեղծել է Հետազոտող ուսանողների դպրոց (1983թ.):

Պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով (1983թ.), Համամիութենական արդյունաբերական ցուցահանդեսի «Ոսկե մեդալով» (Մոսկվա, 1980թ.), «Արծաթե մեդալով»՝ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի կողմից (1984թ.), Գիտության ոլորտում Հայաստանի պետական մրցանակի դափնեկրի կոչմամբ (1985թ.), Գիտության ասպարեզում ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկրի կոչմամբ (1986թ.), Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Լոնոնոսովի անվան ոսկե մեդալով (2002), Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ոսկե մեդալով (2003), Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ոսկե մեդալով (2003թ.), «Գիտնականի աստղ» շքանշանով (Ս.Պետերբուրգ, 2003թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արջուրների տվյալների հիման վրա



ՆՈՎԱՆՆԻՍՅԱՆ Ռիչարդ, Տիգրան

HOVANNISIAN Richard

Պատմաբան: Գիտությունների դոկտոր, Լոս Անջելոսի Կալիֆոռնիայի համալսարանի հայոց և մերձավորարևելյան պատմության պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ:

Լոս Անջելոս, Կալիֆոռնիա (ԱՄՆ): Ծնվել է 1932թ. դեկտեմբերի 11-ին Տուլարում, Կալիֆոռնիա նահանգում (հայրանունը՝ Գասպար):

Ուսանել է Կալիֆոռնիայի համալսարանում (Բերկլի)՝ ստանալով արվեստների պակավորի (1954թ.), ապա արվեստների մագիստրոսի կոչումներ: Փիլիսոփայության դոկտոր է պատմության ասպարեզում (1966թ.):

Եղել է Լոս Անջելոսի Կալիֆոռնիայի համալսարանի դասախոս (1962-69թթ.), ապա պրոֆեսոր (սկսած 1969թ-ից): Կազմել է Հայաստանի և Կովկասի պատմության դասավանդման ծրագրերը (սկսած 1962թ-ից): Ղեկավարել է Ժամանակակից հայոց պատմության ամբիոնը (սկսած 1967թ-ից): Եղել է Գուգենհայմի անվան Մերձավոր Արևելքի պատմության կենտրոնի փոխտնօրենը (1978-95թթ.):

Հեղինակ է 50-ից ավելի հոդվածի, մոտ 30 գրքի և մենագրության՝ Հայաստանի, Կովկասի, Մերձավոր Արևելքի երկրների պատմության ուսումնասիրության ասպարեզում: Հիշարժան են նրա «Հայաստանն անկախության ճանապարհին» (1976թ.), «Հայաստանի Հանրապետությունը» (4 հատոր, 1971-96թթ.), «Հայկական դիմագիծը պատմության և գրականության մեջ» (1981թ.), «Հայոց ցեղասպանությունը՝ պատմություն, քաղաքականություն, բարոյականություն» (1992թ.), «Հիշողություն և մերժում, Հայոց ցեղասպանության դեպքը» (1998թ.), «Հայաստանը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (3 գլուխ, 1997թ.), «Լուսավորություն և սփյուռք, հայերի և հրեաների դեպքը» (խմբագիր, 1999թ.), «Հայաստանը դարասկզբին» (2000թ.), «Հայկական Բաղեշը և Տարոնը» (2001թ.), «Նայելով հետ՝ շարժվելով առաջ, Հայոց ցեղասպանության առերեսումը» (2003թ.), «Հայկական Կարինը» (2003թ.), «Հայկական Մերաստիան և Փոքր Հայքը» (2004թ.):

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ է (1990թ.): Իբրև Կալիֆոռնիա նահանգի ներկայացուցիչ եղել է ԱՄՆ-ի բարձրագույն կրթության արևելյան ինստիտուտի հանձնախմբի անդամ

(1974-94թթ.) և Հայագիտական ուսումնասիրությունների միության հիմադիրն ու նախագահը (1974, 1977, 1991-92թթ.):

Գիտական և հասարակական 9 կազմակերպության խորհուրդների ղեկավար է, այդ թվում «Ինքներս պատմությանը դեմ առ դեմ» հաստատության, «Հոլոքոստի և ցեղասպանության միջազգային ինստիտուտի», «Հայկական ազգային ինստիտուտի» (Վաշինգտոն, 1997-2002թթ.), «Միջազգային տագնապ» կազմակերպության և այլն: Խմբագրական կազմի անդամ է «Հայկական հանդես», «Արարատ», «Մարդկային իրավունքների հանդես», «Հայագիտական ուսումնասիրությունների հանդես» և այլ պարբերական հրատարակությունների:

Արժանացել է Գուգենհայմի անվան մրցանակի (1972թ.), «Մեսրոպ Մաշտոց» շքանշանի (Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Գարեգին Բ-ի կողմից, 1982թ.), «Մովսես Խորենացի» մեդալի (Հայաստանի Հանրապետության, 1998թ.), «Կիլիկյան ասպետի» կոչման (Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսի կողմից), «Սուրբ Սահակ, Սուրբ Մեսրոպ» շքանշանի (Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից, 2002թ.), պատվավոր դոկտորի կոչման՝ Երևանի (1994թ.) և Արցախի (1997թ.) պետական համալսարաններում:

2004թ. Բաց տպագրության տեղեկատվական արջուրների տվյալների հիման վրա



ՆՈՎԱՆՆԻՍՅԱՆ Սևադա

HOVHANNISSIAN Seveda

Երկրաֆիզիկոս: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից-անդամ: Ֆիզիկա-

մաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Գյումրի, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է 1948թ. հուլիսի 31-ին Լենինական քաղաքում (Հայկական ԽՍՀ): Մկրտիչ Հովհաննիսյանի և Բերսաբե Մարոյանի որդին է: Ամուսնացել է Անժելա Մալխասյանի հետ (1950թ.), դուստրերը՝ Հասմիկ և Գայանե:

Միջնակարգ դպրոցն արժաբե մեղալով ավարտելուց հետո (1955թ.) ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի տեխնիկական կիբեռնետիկայի ֆակուլտետը՝ «Էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ» մասնագիտությամբ, որն ավարտել է 1971թ. գերազանցությամբ: Ընդունվել է Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրան և գործուղվել Ուկրաինական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի Երկրաֆիզիկայի ինստիտուտ (1974թ.): ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Երկրաֆիզիկայի ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Կայուն իտերացիոն պրոցեսները և նրանց կիրառումը գրավիմետրական խնդիրներում», և ստացել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (Մոսկվա, 1977թ.): Ուկրաինական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի Երկրաֆիզիկայի ինստիտուտում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Գրավիմետրական եռաչափ խնդիրների տեսության և

լուծման թվային մեթոդները» թեմայով և արժանացել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի (1988թ.): 1971թ-ից աշխատանքի է անցել Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա.Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտում նախ որպես ինժեներ, ապա Հաշվողական կենտրոնի վարիչ (1979թ), այնուհետև լաբորատորիայի վարիչ և հաստատության տնօրեն (սկսած 1988թ-ից):

Հեղինակ է մեծ թվով գիտական հրատարակումների, մասնավորապես գրավիմետրական եռաչափ խնդիրների տեսության և լուծման թվային մեթոդների ասպարեզում:

Ընտրվել է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից-անդամ (2006թ.): Հայաստանի երկրաբանական ընկերության անդամ է:

Պարգևատրվել է Վ. Համբարձումյանի անվ. մրցանակով՝ սահմանված Ամերիկայի հայ ճարտարագետների միության կողմից (1996թ.): Արժանացել է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության «Վաստակագրի» (2001թ.):

2006թ. Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաթերթի» և բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՂԱՐԱԲԵԿՅԱՆ Արամ

GHARABEKIAN Aram

Հայաստանի պետական կամերային նվագախմբի գլխավոր դիրիժոր և գեղարվեստական ղեկավար: Երևանի Կոմիտասի անվան պետական երաժշտանոցի պրոֆեսոր: Ծնվել է 1955թ-ին Իրանում:

Ուսանել է Բոստոնի Նյու Ինգլանդի երաժշտանոցում՝ ստանալով մագիստրոսի աստիճան կոմպոզիցիա մասնագիտությամբ: Կատարելագործվել է երաժշտության տեսության ուսումնասիրության մեջ Մեյնցի համալսարանում (Գերմանիա), ապա դիրիժորական արվեստի ասպարեզում՝ Իտալիայում (Ֆ. Ֆերրարայի մոտ) և Գերմանիայում (Ս. Չելիբիդաեի մոտ), այնուհետև Մասաչուսեթսի Տանգվուդի երաժշտական կենտրոնում՝ կոմպոզիցիայի և դիրիժորություն ասպարեզում (Ջ. Դրուլմանի և Լ. Բերնշտեյնի մոտ):

Հիմնադիրն ու գեղարվեստական ղեկավարն է «Բոստոն Սինֆո-Նովա» սիմֆոնիկ նվագախմբի (1983-91թթ.), որի հետ ելույթներ է ունեցել ամերիկյան բազմաթիվ նշանավոր համերգասրահներում, այդ թվում «Կարնեգի» սրահում, «Դորոթի Չանդլեր» տաղավարում, Բոստոնի սիմֆոնիկ նվագախմբի և «Ջորդան» համերգասրահներում: 1997 թվականից Հայաստանի պետական կամերային նվագախմբի գլխավոր դիրիժորն է և նրա գեղարվեստական ղեկավարը: Նրա ղեկավարությամբ նվագախումբը համերգային շրջագայությունների է մեկնել ԱՄՆ, Կանադա, Գերմանիա, Շվեյցարիա, Անգլիա, Ռուսաստան, Ուկ-

րաինա, Կիպրոս, Հունաստան, Միացյալ Արաբական Էմիրություններ և այլն: Իբրև հրավիրված դիրիժոր ղեկավարել է Չագրեբի ֆիլհարմոնիկ նվագախումբը, Մյունխենի «Սինֆոնիետան» (Գերմանիայում և Իտալիայում), Ուկրաինայի ազգային սիմֆոնիկ նվագախումբը (Կիև), Արևելյան Ուկրաինայի ֆիլհարմոնիկ նվագախումբը (Լվով), Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը, Ֆրեզնոյի ֆիլհարմոնիկ նվագախումբը (Կալիֆոռնիա), Շրևպորտի սիմֆոնիկ նվագախումբը (Լուիզիանա), 6 տարբեր երկրների 300 երաժիշտներից բաղկացած նվագախումբը և երգչախումբը՝ Բեթհովենի «9-րդ սիմֆոնիայի» կատարմամբ 2000թ., Նոր տարվա տոնակատարության կապակցությամբ Հանգոյում (Չինաստան): Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգացանկն, ի թիվս դասական ստեղծագործությունների, ընդգրկում է նաև հայ և օտար երգահանների մոտ 40 նոր գործ (սկսած 1997թ-ից): Նվագախմբի կազմում հաճախ ընդգրկվում են նաև ազգային երաժշտական գործիքներ (շվի, դուդուկ, քամանչա և այլն) նվագող երաժիշտներ: Նրա ղեկավարած համերգային կատարումների ձայնագրությունները պարբերաբար հեռարձակվել են Հայաստանի հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ, ինչպես նաև Ուկրաինայի և Խորվաթիայի հեռուստատեսությունների ալիքներով, Բոստոնի WBZ-հեռուստաալիքով, WBUR, WGBH FM կայաններով, Նյու Յորքի WNYC FM, Վաշինգտոնի և Մյունխենի «Բայերիշեր Ռունդֆունկ» ռադիոկայաններով, «Սի Էն Էն - հատուկ» և Ռուսաստանի «Կուլտուրա» հեռուստաալիքներով: Նրա ղեկավարությամբ հնչած Պրոկոֆևի «Ռոմեո և Ջուլիետի» ձայնագրությունը Ուկրաինական ռադիոյի և հեռուստատեսության սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ լայն տարածում է ունեցել ռուսական «Աուդիոֆիլ» սկավա-

ռակների ընկերության կողմից (1996թ.):

Արժանացել է Լյուսիեն Վուլսինի անվան կատարողական մրցանակի՝ ամերիկյան ռադիոյով հնչած լավագույն կատարման համար (1989թ.), Ամերիկյան երգահանների միության «Համարձակ ծրագրերի համար» մրցանակի (1988թ.), Հարվարդի երաժշտական միության «Լավագույն կատարման համար» մրցանակի և «Բոստոն Գլոբի» .1985թ. և 1989-91թթ. «Լավագույն կատարում» ճանաչմանը, ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների տան «Գնահատանքին»՝ արվեստներին բերած ծառայության համար (1999թ.), Հայաստանի Հանրապետության «Մովսես Խորենացի» մեդալի (2007թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ՂՈՒԿԱՍՅԱՆ Արկադի

GHUKASSIAN Arkady

Քաղաքական գործիչ, լրագրող: Լեոնային Ղարաբաղի Հանրապետության նախկին նախագահ (1997-2007թթ): Ստեփանակերտ, Լեոնային Ղարաբաղի Հանրապետություն: Ծնվել է 1957թ. հունիսի 22-ին Ստեփանակերտում (հայրանունը՝ Արշավիր): Ամուսնացած է, ունի երկու զավակ:

Ավարտել է Երևանի պետական համալսարանի ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետը (1979թ.):

Եղել է «Մովսեսական Ղարաբաղ» («Մովսեսի Կարաբախ») թերթի թղթակից (1980-81թթ.), այնուհետև գլխավոր խմբագրի տեղակալ (սկսած 1981թ-ից): Գործուն մասնակցություն է ունեցել Ղարաբաղյան շարժմանը (սկսած 1988թ-ից): Բաքվի հայկական ջարդերի կազմակերպիչներին և իրականացնողներին դատա-

պարտող հողվածների համար 1990թ. ձերբակալվել է և մեկ ամիս բանտարկվել Խորհրդային Միության իշխանությունների կողմից: Ընտրվել է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության առաջին գումարման խորհրդարանի պատգամավոր և շուտով նշանակվել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության պետական կոմիտեի նախագահի քաղաքական հարցերով խորհրդական և Միսկի խմբի հովանու ներքո Ադրբեջանի հետ հակամարտության կարգավորման բանակցություններում Լեոնային Ղարաբաղի պատվիրակության ղեկավար (1992-97թթ.): Եղել է Լեոնային Ղարաբաղի արտաքին գործերի առաջին նախարարը և Անվտանգության խորհրդի անդամ (1993-97թթ.):

1997թ. սեպտեմբերին անցկացված Լեոնային Ղարաբաղի Հանրապետության արտահերթ նախագահական ընտրությունների արդյունքում ընտրվել է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ: Վերընտրվել է 2002թ-ին և պաշտոնավարել մինչև 2007թ.՝ լինելով նաև Լեոնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերի գլխավոր հրամանատարը և Անվտանգության խորհրդի նախագահը:

Լրագրողական ամբողջ գործունեության ընթացքում իր հողվածներով եղել է Արցախի ազատագրական պայքարի ոգեշնչողը: Պատերազմի առաջին օրերից եղել է ճակատային գծում և տպագրել ճշմարիտ տեղեկատվություն ռազմական գործողությունների մասին:

Լեոնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հիմնախնդրի վերաբերյալ զեկուցումներով հանդես է եկել Ֆրանսիայի միջազգային հարաբերությունների ինստիտուտում, Ջորջ Վաշինգտոնի համալսարանում, Լոս Անջելոսի միջազգային հարցերի խորհրդում:

Անդամ է Բնության և հասարակության մասին գիտությունների ակադեմիայի, Ազգային անվտանգության հիմնախնդիրների մասին գիտությունների ակադեմիայի: Ժողովուրդների հոգևոր միասնության ակադեմիայի պատվավոր անդամ է: Երևանի պատվավոր քաղաքացի է (2001թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա

Ճ



**ՃԵՐԵՃՅԱՆ Էդվարդ
ՃԵՐԵՃՅԱՆ Էդվարդ**

DJEREJIAN Edward Peter

Գիվանագետ, քաղաքագետ: ԱՄՆ-ի դեսպան, հասարակագիտության պատվավոր դոկտոր: Բեռտեսդա, Մերիլենդի նահանգ: Ծնվել է 1936թ. մարտի 6-ին Նյու Յորքում: Ամուսնացած է Ֆրանսուազ Հելտերսի հետ, որդին՝ Գրեգորի, դուստրը՝ Ֆրանչեսկա:

Ուսանել է Ջորջթաունի համալսարանի Օտարերկրյա դիվանագիտական ծառայության դպրոցում՝ ստանալով գիտության բակալավրի աստիճան (1960թ.):

Ծառայել է ամերիկյան բանակում իբրև սպա (Կորեա, 1961-62թթ.): ԱՄՆ-ի արտաքին գործերի գերատեսչության կողմից դիվանագիտական ծառայության է նշանակվել Մոսկվայում և Ամմանում (1962-66թթ.), Բեյրութում (Լիբանան, 1966-69թթ.), ապա Կասաբլանկայում (Մարոկկո, 1969-72թթ.): Եղել է ԱՄՆ-ի գլխավոր հյուպատոսը Բորնյում (Ֆրանսիա, 1975-77): Ղեկավարել է Մոսկվայում ԱՄՆ-ի դեսպանության քաղաքական բաժինը (1979-81թթ.): Հորդանանի Թագավորությունում ղեկավարել է ԱՄՆ-ի դիվանագիտական առաքելությունը (1981-84թթ.): Նշանակվել է ԱՄՆ-ի նախագահի հատուկ օգնական և արտաքին գործերի Սպիտակ տան մամուլի քարտուղար (Վաշինգտոն, 1984-86թթ.): Պաշտոնավարել է իբրև ԱՄՆ-ի արտաքին գործերի գերատեսչության փոխքարտուղար Մերձավոր Արևելքի և Հարավային Ասիա-

յի երկրների գծով (1986-88թթ.): Իբրև ԱՄՆ-ի դեսպան ծառայել է Սիրիայի Արաբական Հանրապետությունում (1988-91թթ.) և Իսրայելում (1991-93թթ.): Հիմնադիրն ու տնօրենն է Ռայսի համալսարանի Ջեյմս Բեյլերի անվան քաղաքագիտության երրորդ ինստիտուտի (սկսած 1994թ-ից): Ղեկավարում է այդ հաստատության Ջեյմիս և Ռոբերտ Մակ-Նաիրի անվան հասարակական քաղաքականության և Հերմենա Հանկոկ Կելլիի անվան ավագ գիտաշխատողների համալսարանական ամբիոնները:

Նախագահն է Արաբական երկրների և մուսուլմանական աշխարհի հետ ժողովրդական դիվանագիտության կոնգրեսական խմբակցության (սկսած 2003թ.): ԱՄՆ-ի Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնախմբի խորհրդի անդամ է և Կոնգրեսին հաշվետու՝ Իրաքի հիմնախնդիրների ուսումնասիրության խմբի գլխավոր խորհրդականը (սկսած 2006թ-ից): Ղեկավարում է բազմաթիվ այլ պետական ու հասարակական կազմակերպություններ:

Հեղինակն է «Վտանգ և պատեհություն: Ամերիկյան դեսպանի ճանապարհորդությունը Միջին Արևելքում» («Սայմոն և Շուստեր Տրեշոլդ» հր., 2008թ.) գրքի:

Պարգևատրվել է «ԱՄՆ-ի նախագահին արժանի ծառայությունների համար» մրցանակով (1988թ.), ԱՄՆ-ի արտաքին գործերի գերատեսչության «Պատվավոր մրցանակով» (1993թ.), «Էլիս Այլանդ» պատվո մեդալով (1993թ.), «Արժանի ծառայությունների համար» նախագահական մրցանակով (1994թ.), Անարգանքի դեմ բարոյական պայքարի լիգայի մրցանակով (1994թ.): Ստացել է հասարակագիտության պատվավոր դոկտորի կոչում (1992թ.):

2005թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա

Մ



ՄԱՆԱՍԿՅԱՆ Ադոլֆ

MANTASHYAN Adolph

Քիմիական ֆիզիկայի բնագավառի գիտնական: Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է 1932թ-ի օգոստոսի 16-ին: Հայրապետ և Հասմիկ Մանթաշյանների որդին է: Ամուսնացել է Դոլորես Գրիգորյանի հետ (Երևան, 1966թ.), զավակները՝ Կորյուն, Տիգրան:

Ուսանել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում (ներկայումս՝ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան)՝ գերազանցությամբ ավարտելով այն և ստանալով ինժեներ-տեխնոլոգի որակավորում «Միլիկատների տեխնոլոգիա» մասնագիտությամբ (Երևան, 1956թ.): Այնուհետև կրթությունը շարունակել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրայում՝ ստանալով քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (Մոսկվա, 1962թ.): Նույն հաստատությունում նրան շնորհվել է քիմիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան (Մոսկվա, 1974թ.) և պրոֆեսորի կոչում քիմիական ֆիզիկայի բնագավառում (Մոսկվա, 1976թ.):

Պաշտոնավարել է իբրև Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի Քիմիական ֆիզիկայի լաբորատորիայի գլխա-

վոր ճարտարագետ՝ կատարելով տնօրենի տեղակալի (1961-63թթ.) և գիտնական քարտուղարի (1963-1972թթ.), այնուհետև «Այրման», ապա «Ածխաջրածինների օքսիդացման» բաժնի վարիչի (1972-73թթ.) պարտականությունները: Ստացել է ավագ գիտական աշխատակցի կոչում ֆիզիկական քիմիա մասնագիտությամբ (1967թ.): 1973թ-ից ղեկավարել է Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի Քիմիական ֆիզիկայի լաբորատորիայի (1975թ-ից՝ ինստիտուտի) «Ածխաջրածինների օքսիդացման» լաբորատորիան: Եղել է Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի տնօրենի տեղակալ գիտության գծով (1975-77թթ.): Իբրև դոցենտ դասավանդել է Երևանի պետական համալսարանի Քիմիական ֆակուլտետի «Տեսական քիմիայի» ամբիոնում (1963-76 թթ): Եղել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Քիմիա-տեխնոլոգիական ֆակուլտետի «Ընդհանուր և անօրգանական քիմիայի» ամբիոնի վարիչ (1980-94թթ.) և գիտական խորհրդի անդամ (1981-94թթ): Պաշտոնավարել է իբրև Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն (սկսած 1987-2006թթ.):

Հեղինակ կամ համահեղինակ է ավելի քան 270 գիտական հոդվածի՝ մեծ մասամբ տպագրված նախկին Խորհրդային Միության, Ռուսաստանի Դաշնության և միջազգային մասնագիտական հանդեսներում, 30 գյուտի և արտոնագրի, մենագրությունների, որոնցից հատկապես հիշարժան է «Տարրական առաջխաղացումները դանդաղ գազաֆազ ռեակցիաներում» աշխատությունը (համահեղինակությամբ՝ Ա. Նալբանդյանի, Երևան, 1975թ.): Աշխատությունները վերաբերում են քիմիական ֆիզիկայի բնագավառին, մասնավորապես ազատ ռադիկալների և ատոմների մասնակցությամբ ընթացող բարդ բնույթի քիմիական ռեակցիաների ուսումնասիրու-

թյանը, շփայական և ալյասերված-ճյուղավորված շփայական քիմիական ռեակցիաների տեսությանը, գազաֆազ այրման և պայթյունի երևույթներին, բարդ քիմիական ռեակցիաների կինետիկային ու մեխանիզմին, ազատ ռադիկալների քիմիային:

Անդամ է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (սկսած 1994թ-ից, բողոքից-անդամ՝ 1990թ-ից): Ընտրվել է նույն հաստատության Բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալ և բյուրոյի անդամ (1994թ-ից), այնուհետև ակադեմիայի նախագահության անդամ (2001թ-ից սկսած): Անդամ է Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի (1994թ.), Միջազգային ճարտարագիտական ակադեմիայի (1995թ.), Նյու-Յորքի գիտությունների ակադեմիայի (1995թ.), Ազգային անվտանգության հիմնախնդիրների միջազգային ակադեմիայի (1999թ.): Ընդգրկվել է «Քիմիական ֆիզիկա» (Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի, 1987-95թթ.), «Հայկական քիմիական ամսագիր» (1970-97թթ.), «*Chemical Physics Reports*» միջազգային (1995թ-ից), «*Eurasian Chemico-Technological Journal*» (Բարձրագույն կրթության և գիտությունների եվրասիական միջազգային ակադեմիայի) միջազգային եռամսյա (1999թ-ից), «Այրում և պլազմաքիմիա» (Ալ-Ֆարաբի անվան Ղազախստանի ազգային համալսարանի Այրման պրոբլեմների ինստիտուտի, 2003թ-ից) գիտական հանդեսների խմբագրական կազմում: Ռուսաստանի Դաշնության Դ.Ի. Մենդելեևի անվան Քիմիական ընկերության ֆիզիկական և կոլոիդային քիմիայի գծով գիտական խորհրդի (1980թ-ից), «Այրման միջազգային ինստիտուտի» ռուսաստանյան բաժանմունքի գիտական խորհրդի (1987թ-ից), Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի միացյալ գիտական խորհրդի (1988 թ-ից) և «Այրման և պայթյունի» գիտական խորհրդի անդամ է: Եղել է նաև «Քար և սիլիկաներ» գիտաարտադրական միավորման գիտական խորհրդի անդամ (1987-92թթ.), «Նա-

իրիտ» գիտաարտադրական փակ բաժնետիրական ընկերության խորհրդի անդամ (1994-99թթ.) և պետական բաժնեմասի լիազոր ներկայացուցիչների կազմի անդամ (1999-2000թթ): «Հայկական հանրագիտարանի» գիտախորհրդատվական հանձնախմբի անդամ է (2001թ-ից): Եղել է Ջորջ Սորոսի «Միջազգային գիտական հիմնադրամի» հոգաբարձուների խորհրդի փորձագիտական հանձնաժողովի անդամ (1993թ.): «Հայկական բանակ» (Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության) ռազմագիտական հանդեսի գիտական խորհրդատուն է (2001թ-ից): Եղել է նաև Արևմտյան Եվրոպայի և նախկին ԽՍՀՄ հանրապետությունների համագործակցության միջազգային ընկերության (INTAS) փորձագետ (1999թ., 2000թ., 2003թ.), Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետի մագիստրատուրայի ավարտական մասնագիտությունների պետական քննական հանձնաժողովի նախագահ (2001-2003թթ.):

Արժանացել է Հայկական ԽՍՀ պետական մրցանակի դափնեկրի կոչման գիտության և տեխնիկայի ասպարեզում՝ 1966-74թթ. կատարած գիտական աշխատանքների համար (1976թ.), Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործչի կոչման (Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից, 2003թ.), Հորելյանական շքանշանի՝ «Աշխատանքային արիության համար» (ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության կողմից, 1970թ.), «Աշխատանքային մրցույթի հաղթող» շքանշանի (շնորհվել է Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահության կողմից, 1975թ.), «Աշխատանքի վետերան» շքանշանի՝ երկարամյա բարեխիղճ աշխատանքի համար (ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության կողմից, 1987թ.), «Տարվա մարդ» պատվավոր կոչման (Ամերիկյան կենսագրական ինստիտուտի կողմից, ԱՄՆ, 1998 թ.):

2004թ. Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաթերթի» տվյալների հիման վրա



ՄԱՆՃՅԱՆ Փանոս

MANJIAN Panos

Չորահրամանատար: Լիբանանի բանակի բրիգադային զեներալ (ըստ ԱՄՆ-ի հրամանատարական զինվորական աստիճանների՝ մեկ աստղ ունեցող զեներալ): Բեյրութ, Լիբանան: Ծնվել է 1952թ-ին Այն-ճարում (Լիբանան), մուսալեոցի ծնողների զավակ է (հայրանունը՝ Անդրանիկ):

Մովորել է Այնճարի «Յառաջ» հայկական դպրոցում: Ավարտել է Լիբանանյան ռազմական դպրոցը Բեյրութում (1975թ.): Ուսանել է Գլխավոր շտաբի հրամանատարական սպայական դասընթացներում (ԱՄՆ, 1995-96թթ.):

Ծառայել է Կենտուկի նահանգի Նոքսի սանրոցում (ԱՄՆ)՝ հաջորդաբար ստանալով լեյտենանտի, կապիտանի, մայորի և լեյտենանտ-գնդապետի զինվորական կոչումները (1979-95թթ.): Եղել է մեքենայացված հետևակային բրիգադի շտաբի պետը Լիվենվորդում (Կանզաս, ԱՄՆ, 1995թ.): Ստացել է գնդապետի զինվորական աստիճան (1996թ.): Նշանակվել է Լիբանանի բանակի մեքենայացված բրիգադի հրամանատարի օգնական (1998թ.), այնուհետև լիբանանյան 10-րդ զրահատանկային բրիգադի հրամանատար (2001թ.): Նրան շնորհվել է Լիբանանի բանակի բրիգադային զեներալի զինվորական կոչում (2001թ.): Լիբանանի բանակի պլանավորման վարչության փոխնախագահն է:

Գործուն մասնակցություն ունի լիբանանահայ համայնքի հասարակական կյանքին: Լիբանանյան զինվորական պատվիրակության կազմում այցելել է Հայաստան (2001թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյունների տվյալների հիման վրա



ՄԱՆՍՈՒՐՅԱՆ Տիգրան


MANSSURIAN Tigran

Կոմպոզիտոր, մանկավարժ: Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստ, պրոֆեսոր: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է 1939թ. հունվարի 27-ին Բեյրութում (Լիբանան): Աննա և Եղիա Մանսուրյանների որդին է: 1947թ-ին ընտանիքով ներգաղթել է Հայաստան (Արթիկի շրջանի Պեմզաշեն գյուղ): Ամուսնացել է Նորա Ահարոնյանի հետ (Երևան, 1961թ.), երեխաները՝ Եղիա (1962թ.) և Նվարդ (1970թ.):

Մովորել է Բեյրութի ֆրանսիական կաթողիկե վարդապետների դպրոցում (մինչև 1947թ.): Ավարտել է Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանը (1960թ.), ապա Երևանի Կոմիտասի անվան պետական երաժշտանոցը (1965թ.): Կրթությունը կատարելագործել է Երևանի Կոմիտասի անվան պետական երաժշտանոցի ասպիրանտուրայում (ավարտել է 1967թ-ին):

Եղել է Երևանի Կոմիտասի անվան պետական երաժշտանոցի դասախոս, պրոֆեսոր, ապա նույն հաստատության ռեկտոր (1992-95թթ.):

Հեղինակ է նվագախմբային մի շարք ստեղծագործությունների, այդ թվում «Կոնցերտո» (երգեհոն, 1964թ.), «Պարտիտուր» (1965թ.), «Պրելյուդներ» (1975թ.), «Դիմիտրի Շոստակովիչի հիշատակին» (1976թ.), «Կոնցերտո հ. 2» (լարային նվագախմբի համար, 1978թ.), «Կոնցերտո հ. 3» (նվագախմբի համար, 1983թ.), «Պոստլուդիո կոնցերտո» (1993թ.), «Աշնանային



ՄԱՇԻԿՅԱՆ Մաթևոս (Մեթյու)

MASHIKIAN Matthew

Քոնցերտիքուտի համալսարանի վաստակավոր պրոֆեսոր և փիլիսոփայության դոկտոր էլեկտրական ճարտարագիտության բնագավառում: Ստորս, Քոնցերտիքուտ (ԱՄՆ): Ծնվել է Բեյրութում (Լիբանան) 1933թ-ին:

Ավարտել է Բեյրութի ամերիկյան համալսարանը պսակավորի աստիճանով (1955թ.), այնուհետև ուսանել է Վեյնի պետական համալսարանում (Դետրոյտ, Միչիգան)՝ ստանալով մագիստրոսի աստիճան էլեկտրական ճարտարագիտության բնագավառում (1967թ.): Նույն բնագավառում Դետրոյտի համալսարանում արժանացել է փիլիսոփայության դոկտորի գիտական կոչման (1976թ.):

Որպես ճարտարագետ աշխատել է «ԱՄԵԱ» ընկերությունում (այժմ՝ «ԱՄԵԱ և Բրաուն Բովերի ընկերություն», 1958-62թթ.): «Էդիսոն» ընկերության Դետրոյտի մասնաճյուղի ճարտարագիտական հետազոտությունների բաժանմունքում պաշտոնավարել է իբրև գլխավոր ճարտարագետ (1963-79թթ.), ապա իբրև անկախ խորհրդական (1979-83թթ.): Դասավանդել է Քոնցերտիքուտի համալսարանում իբրև էլեկտրական ճարտարագիտության վաստակավոր պրոֆեսոր՝ միաժամանակ դեկավարելով էլեկտրամեկուսիչների հետազոտական կենտրոնը (1983-97թթ.): Հիմնադիրն ու գլխավոր տնօրենն է «Մաշիկյան և ընկերներ» բաժնետիրական ընկերության (սկսած 1979թ-ից): Նախագահն ու գլխավոր տնօրենն է «Ինստրումենտ մանուֆակչրի քոմպանի» (էլեկտրական սարքաշինական արդյունաբերության) ընկերության (Ստորս, սկսած 1995թ-ից):

Ֆանտազիաներ» (2004թ.), «Կոնցերտ հ. 2» (ջութակի և լարային նվագախմբի համար, 2006թ.), ինչպես նաև կամերային գործերի՝ սոնատներ (գրված՝ 1962-65թթ.), «Հինգ բազատելներ» (1985թ.), «Լարային քառյակի համար», հ. 1 (1983-84թթ.), հ. 2 (1984թ.), հ. 3 (1993թ.) կոնցերտներ, «Նվիրում Աննա Ախմատովային» (1997թ.), «Լամենտո» (ջութակ, 2002թ.), «Երեք միջնադարյան տաղ» (1998-2004թթ.), դաշնամուրային գործերի՝ «Սոնատ No 1» (1967թ.), «Կարոտ» (1976թ.), «Սոնատինա No. 1» (1963թ.) և No. 2 (1987թ.) և բազմաթիվ այլ երաժշտական ստեղծագործությունների: Հիշարժան են նաև նրա ստեղծած երգաշարերը՝ «Երեք պոեմ» (Կոստան Զարյանի խոսքերով, 1969թ.), «Գարնանային երգեր» (Հ. Թումանյանի խոսքերով, 1996թ.), «Արվեստ քերթողության» (Եղիշեն Զարենցի խոսքերով, 1996-2000թթ.): Հեղինակ է «Սառցե թագուհին» բալետի (բեմականացումը՝ Վիլեն Գալստյանի, ըստ Հանս Քրիստիան Անդերսենի, 1989թ.): Մոտ 40 ֆիլմի երաժշտության հեղինակ է, այդ թվում «Նռան գույնը» (1969թ.), «Կտոր մը երկինք» (1980թ.), «Հին օրերի երգը» (1986թ.), «Մեր մանկության տանգոն» (1984թ.), «Մատենադարան» (փաստագրական, 1-6 մասեր, 1983-85թթ.) և այլն:

Եղել է Արամ Խաչատրյանի անվան ջութակահարների միջազգային մրցույթի ժյուրիի նախագահը (Երևան, 2006թ.):

Արժանացել է Հայաստանի ժողովրդական արտիստի պատվավոր կոչման (1984թ.): Պարգևատրվել է «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, «Սբ. Սահակ, Սբ. Մեսրոպ» շքանշանով: Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների կրկնակի դափնեկիր է: Արամ Խաչատրյանի և Վահան Թեքեյանի անվան մրցանակների դափնեկիր է: Երևան քաղաքի պատվավոր քաղաքացի է:

2006թ. Գալստյան կենսագրական կենտրոնի «Գարգաթերի» տվյալների հիման վրա

Հեղինակ կամ համահեղինակ է 120 գիտական հոդվածի, 13 գյուտի՝ էլեկտրական մեկուսիչների, շանթարգելների, բարձր լարման շափումների, ուժային էլեկտրալարերի արտադրության տեխնոլոգիայի, էլեկտրական փոխադրամիջոցների և էլեկտրական ճարտարագիտության այլ ոլորտներում: Այլիքի տարածման բնութագրերի հիման վրա էլեկտրալարերի փորձարկման գյուտի հեղինակն է:

Ընտրվել է էլեկտրականության և էլեկտրոնային ճարտարագիտության ընկերության ցմահ անդամ (1993թ.), այդ ընկերության «Մեկուսիչների» և «Կրթական» հանձնախմբերի նախագահն է: Էներգետիկների միության «Մեկուսիչների» հանձնախմբի փոխնախագահն է:

Քոնսերվատիվ գիտությունների և ճարտարագիտության ակադեմիայի անդամ է (սկսած 1995թ-ից): Անդամ է Դիէլեկտրիկների և մեկուսիչների ընկերության: Նրա անունը գրանցված է իբրև Միչիգանի նահանգի բարձրակարգ արհեստավարժ ճարտարագետ:

Պարգևատրվել է էլեկտրականության և էլեկտրոնային ճարտարագիտության ինստիտուտի Էներգետիկների միության «Նշանակալից անձնական ծառայությունների համար» մրցանակով (2006թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՍԱՐԳՍՅԱՆ Ռոբերտ

MARKARIAN Robert

Դիվանագետ: Գեներալ-մայոր, արտակարգ և լիազոր դեսպան, պատմական գիտությունների թեկնածու: Մոսկվա, Ռու-

սաստանի Դաշնության: Ծնվել է Լեոնային Դարաբաղում 1949թ. ապրիլի 20-ին (հայրանունը՝ Վարդան):

Ավարտել է Մոսկվայի պետական համալսարանին կից Ասիայի և Աֆրիկայի երկրների ինստիտուտը (1978թ.): Ստացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Եղել է Խաղաղության պահպանության խորհրդային կոմիտեի ավագ խորհրդական (1978-80թթ.): Պաշտոնավարել է Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում նախ իբրև կրտսեր, ապա ավագ գիտական աշխատակից (1980-85թթ.): Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի Միջազգային տնտեսագիտության ինստիտուտում զբաղեցրել է ավագ գիտական աշխատակցի պաշտոն (1985-89թթ.): Եղել է Միութենական խորհրդի նախագահի օգնականը Խորհրդային Միության Գերագույն Խորհրդում (1989-90թթ.), ապա Նախագահական խորհրդի անդամի օգնական (1991թ.): Տարբեր բարձր պաշտոններ է զբաղեցրել Ռուսաստանի Դաշնության պետական անվտանգության մարմիններում (1991-96թթ.): Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունում աշխատել է իբրև նախարարության քարտուղարության տնօրեն (1996-98թթ.): Ստանալով առաջին աստիճանի արտակարգ և լիազոր դեսպանի դիվանագիտական աստիճան՝ պաշտոնավարել է իբրև Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Սիրիայի Արաբական Հանրապետությունում (1998-2006թթ.): Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարության հատուկ հանձնարարությունների գծով դեսպան է:

Պարգևատրվել է Ռուսաստանի Դաշնության «Բարեկամություն» շքանշանով:

2004թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՍԱՐՏԻՆ Անդրեա

MARTIN Andrea

Թատրոնի և կինոյի դերասանուհի, թատերագիր: «Էմմի», «Տոնի» և այլ մրցանակների դափնեկիր: Նյու Յորք, ԱՄՆ: Ծնվել է 1947թ. հունվարի 15-ին Պորտլենդում (Մեյն, ԱՄՆ): Տոնական ազգանունը Փափազյան է (Մարտին ազգանունը նրա հայրը վերցրել է ԱՄՆ գաղթելուց հետո, երբ գնել է «Մարտին» մակնիշի մի բեռնատար, հետագայում այն դարձել է իր ազգանունը): Ամուսնալուծված է, ունի երկու որդի:

Ուսանել է Բոստոնի Էմերսոն քոլեջում՝ ստանալով մագիստրոսի աստիճան թատերական արվեստի ասպարեզում:

Որպես թատերագիր և դերասանուհի աշխատել է «Սեքոնդ Սիտի» հեռուստատեսային խմբում՝ Տորոնտոյում (1976-81թթ.), ապա Էդմոնտոնում («Են Բի Սի» հեռուստաընկերություն, 1981-83թթ.)՝ մասնակցելով հեռուստատեսային շուրջ ծրագրերի ստեղծմանը և բեմականացմանը: Հեղինակն ու դերակատարն է մեկ անձի շուրջ-մերկայացումների՝ «Դարձյալ Անդրեա Մարտինի հետ» (1989թ.), «Մերկ, մերկ, ամբողջովին մերկ» (բեմադրվել է Լոս Անջելոսի և Նյու Յորքի (Օֆ-Բրոդվեյ) թատրոններում 1996թ-ին): Իբրև դերասանուհի բազմաթիվ գլխավոր դերեր է խաղացել ամերիկյան և կանադական թատրոններում: Հիշարժան են նրա կերտած կերպարները՝ տիկին Զվիկլի՝ Վիլյամ Շեքսպիրի «Վինձորի զվարճասեր կանայք» (Նյու Յորքի շեքսպիրյան փառատոն, Կենտրոնական պուրակ, 1996թ.), Ալիս Միլլեր՝ «Իմ հաջողության տարին» (երաժշտական կատակերգություն, Վիվիեն Բոնոնի թատրոն, Բրոդվեյ, Նյու Յորք,


1992թ.), ծեր տիկին՝ Հել Պրինսի «Անկեղծը» (Ջորջ Գերշվինի թատրոն, Բրոդվեյ), մորաքույր Էլլեր՝ «Օկլահոմա» (Ջորջ Գերշվինի թատրոն, 2002թ.), տիկին Բլյուխեր՝ Մել Բրուկսի «Երիտասարդ Ֆրանկենշտեյներ» (Հիլտոնի թատրոն, Բրոդվեյ, 2007թ.) ներկայացումներում:

Նկարահանվել է բազմաթիվ ֆիլմերում, այդ թվում «Մարդակեր աղջիկը» (1973թ.), «Ռդերգական Ծննդյան տոներ» (1974թ.), «Դրախտային ակունք» (1986թ.), «Ազդեցիկ մարդիկ» (ըստ ֆրանսերեն տարբերակի վերնագրի, 1997թ.), «Ջինի Նեյտրոն՝ հանճարեղ տղան» (2001թ.), «Բեմադրիչներ» (2005թ.) և այլն: Նրան լայն ճանաչում են բերել հեռուստատեսային սերիալներում և զվարճալի ծրագրերում կատարած դերերը («Տրեյսի Ուլմանի շուր», «Իմ մեծ հունական հարսանիքը», «Ջորդան հետաքննությունը» (ըստ ռուսերեն տարբերակի վերնագրի):

Արժանացել է 10 «Էմմի» մրցանակի (հեռուստատեսային արվեստների և գիտությունների ազգային և միջազգային ակադեմիաների համատեղ մրցանակ, ԱՄՆ), այդ թվում, երկուսը՝ «Վարյետեի կամ երաժշտական ծրագրի ստեղծման համար» («Մերկ, մերկ, ամբողջովին մերկ» ստեղծագործության համար՝ իբրև հեղինակ և դերակատար, 1982թ. և 1983թ.), Կատալոնյան միջազգային կինոփառատոնի (Իսպանիա) «Լավագույն դերասանուհու» մրցանակի՝ «Մարդակեր աղջիկը» ֆիլմում խաղացած դերի համար (1973թ.), «Ջունո» մրցանակի (Չայնագրման արվեստների և գիտությունների կանադական ակադեմիայի երաժշտական մրցանակ, 1985թ.), «Ժեմինի» մրցանակի՝ «Գրեյի տարեկան մրցանակ» անվանակարգում (Կանադայի կինոյի և հեռուստատեսության ակադեմիայի, 1995թ.), Ամերիկյան կինոյի և հեռուստատեսության դերասանների մասնագիտական ընկերության «Լավագույն դերասանուհու մրցանակի»՝ «Իմ մեծ հունական հարսանիքը» կինոնկար-մերկայացման մեջ խաղացած դերի համար (2002թ.), «Թատերական համաշխարհային մրցանակի» (Նյու Յորքի թատերական քննադատների հանձնախմբի կողմից)՝ «Իմ հա-

ջողակ տարին» երաժշտական կատակերգություն մեջ խաղացած դերի համար (1993թ.), «Տոնի» մրցանակների (Ամերիկյան թատերական մրցանակ, որը տրվում է «Ամերիկյան թատերական կուլիսներ» և «Բրոդվեյյան լիգա» միությունների կողմից) «Լավագույն դերասանուհի» անվանակարգում (2002 և 2005թ.), «Բրոդվեյ-քոմի» հանդիսատեսի մրցանակի՝ դերակատարի լավագույն փոխարինողի համար (2005թ.), Բրոդվեյյան մյուզիքլի լավագույն դերասանուհու մրցանակի (2008թ.), Ամերիկյան կատակերգության մրցանակների (եռակի) և բազմաթիվ այլ մրցանակների:

2008թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Ռադիկ

MARTIROSSIAN Radik

Ռադիոֆիզիկոս: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ: Գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է Մատաղիս գյուղում (Լեռնային Ղարաբաղ) 1936թ. հունվարի 5-ին: Ամուսնացել է Ռեմա Գասպարովայի հետ:

Ռուսներ է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում՝ այն ավարտելով 1958թ-ին: Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի բնագավառում նրան շնորհվել է նախ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի (1964թ.), ապա դոկտորի գիտական աստիճան (ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտ, 1982թ.) և պրոֆեսորի կոչում (Երևանի պետական համալսարան, 1982թ.): Ընտրվել է

Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի (ներկայումս՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա) թղթակից-անդամ (1986թ.), իսկական անդամ (1990թ.), նախագահության անդամ (1993թ.):

Եղել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի դոցենտ (1966-82թթ.), պրոֆեսոր (սկսած 1982թ-ից) և «Գերբարձր հաճախականությունների ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության» ամբիոնի վարիչ: Պաշտոնավարել է իբրև Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրենի տեղակալ (1971-80թթ.), ապա տնօրեն (սկսած 1980թ-ից): Եղել է Երևանի պետական համալսարանի ռեկտոր (1993-2006թթ.): Ընտրվել է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ (2006թ.):

Հեղինակ է ավելի քան 200 գիտական հոդվածի՝ քվանտային ռադիոֆիզիկայի, գերհաղորդականության կիրառական խնդիրների, տիեզերական հետազոտությունների, ռադիոաստղագիտություն, ռադիոֆիզիկական մեթոդներով երկրի բնական պաշարների ուսումնասիրության բնագավառներում, մենագրությունների (հրատարակված ԱՄՆ-ում և Շվեդիայում): Հիշարժան են նրա «Գերբարձր հաճախությունների քվանտային ուժեղացուցիչներ» (Երևանի պետական համալսարանի հրատ., 1984թ.) դասագիրքը, «Եղանակներ և նյութեր հեռագրանցման համար՝ ինֆրակարմիր լուսային դետեկտորներ, ռադիոնետեր և սարքեր» («Կլուվեր ակադեմիկ» հրատարակ., 2003թ.) աշխատությունը: «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի տեղեկագիր, տեխնիկական գիտություններ» գիտական հանդեսի գլխավոր խմբագիրն է:

Ուկրաինայի և Հայկական ԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր է: Պարգևատրվել է «Մեսրոպ Մաշտոց», «Պատվո նշան», «Ժողովուրդների բարեկամություն» շքանշաններով, Գագարինի անվան ոսկե մեդալով, Հայաստանի, նախկին ԽՍՀՄ և այլ երկրների շքանշաններով:

րով, մեդալներով ու մրցանակներով: Բազմաթիվ համալսարանների պատվավոր դոկտոր է:

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՄԵԼԻԻՋՅԱՆ Գենադի

MELIKIAN Gennady

Տնտեսագետ: Ռուսաստանի Դաշնության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (1992-97թթ.): Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի փոխնախագահ: Տնտեսագիտական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է Կրասնոտկինում (Կրասնոդարի երկրամաս, Ռուսաստան) 1947թ. նոյեմբերի 27-ին (հայրանունը՝ Գեորգի): Ամուսնացած է, ունի որդի և դուստր:

Ռուսներ է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում (ավարտել է 1974թ-ին), ապա նույն հաստատության ասպիրանտուրայում (1974-77թթ.): Ստացել է տնտեսագիտական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (1979թ.): Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի տնտեսագիտության պրոֆեսոր է:

Իբրև առաջատար գիտաշխատող և բաժնի վարիչ աշխատել է ԽՍՀՄ աշխատանքի և սոցիալական հարցերի պետական հանձնախմբի նույնանուն բաժնում (1977-83թթ.), ապա պաշտոնավարել է իբրև այդ պետական հանձնախմբի նախագահի օգնական (1983-86թթ.): Եղել է ԽՍՀՄ Նախարարների խորհրդի փոխնախագահի օգնական (1986-89թթ.): Իբրև

փոխնախագահ աշխատել է ԽՍՀՄ տնտեսական բարենորոգումների պետական հանձնախմբում (1989-91թթ.): Եղել է Տնտեսական և սոցիալական զարգացման միջազգային հիմնադրամի փոխնախագահ (1991-92թթ.): Նշանակվել է Ռուսաստանի Դաշնության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (1992-97թթ.): Ջրաղեցրել է Ռուսաստանի Դաշնության բաժնետիրական խնայողական բանկի կառավարչի տեղակալի պաշտոնը (1997-2003թթ.): Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկում աշխատել է իբրև նախագահի տեղակալ (2003-2007թթ.): Նշանակվել է Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի փոխնախագահ (սկսած 2007թ-ից):

Սոցիալական գիտությունների ակադեմիայի անդամ է: «Միասնություն և համաձայնություն» կուսակցության հիմնադիրներից մեկն է (1993թ.): Ընտրվել է Ռուսաստանի Դաշնության Պետական դրամայի պատգամավոր (1993թ.): Ռուսաստանի բանկերի տնօրենների խորհրդի անդամ է:

Արժանացել է Ռուսաստանի Դաշնության վաստակավոր տնտեսագետի կոչման (2001թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՄԵՀՐԱԲՅԱՆ Ռոբերտ

MEHRABIAN Robert

Առաջավոր տեխնոլոգիաների և նյութագիտության մասնագետ: Գիտության դոկտոր, պրոֆեսոր: Լոս Անջելոս, Կալիֆոռնիա, ԱՄՆ: Ծնվել է Թեհրանում (Իրան) 1941թ. հուլիսի 31-ին:

Ռուսներ է Մասատչուսետսի տեխնոլո-

գիական ինստիտուտում՝ ստանալով պսակավորի (1964թ.), այնուհետև փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճաններ նյութագիտության և ճարտարագիտության ասպարեզում (1968թ.):

Իբրև մետալուրգիայի և մեխանիկական ճարտարագիտության պրոֆեսոր դասավանդել է Իլինոյսի համալսարանում (1975–79թթ.): Ղեկավարել է Կալիֆոռնիայի համալսարանի ճարտարագիտության բաժինը (Մանտա Բարբարա, մինչև 1990թ.): Եղել է Կարնեգի Մելոն համալսարանի նախագահը (1990–97թթ.): Պաշտոնավարել է իբրև Չափօրինակների և տեխնոլոգիայի ազգային ինստիտուտի առևտրական բաժանմունքի նյութագիտության կենտրոնի տնօրեն: Չբաղեցրել է նախ ավագ փոխնախագահի (1997թ.), ապա գործադիր փոխնախագահի (1998թ.), այնուհետև նախագահի, գլխավոր գործադիր տնօրենի և տիեզերագնացության և էլեկտրոնիկայի հատվածի արդյունաբերող ու սպառող ընկերությունների գործադիր տնօրենի (1999թ.) պաշտոնները «Օլեգենի Տելեդայն» միավորման մեջ: Նախագահն ու գլխավոր գործադիր տնօրենն է «Տելեդայն տեքնոլոգիա ինկորպորեյտ» ընկերությունների միավորման (սկսած 2000թ–ից): «Մելոն» ֆինանսական ընկերության (սկսած 1994թ–ից) և «Պի Պի Ջի Ինդաստրիա» միավորման տնօրենների խորհրդի անդամ է:


Հեղինակ է ավելի քան 150 գիտական հոդվածի, մոտ 50 արտոնագրված գյուտի, 6 գրքի՝ ճարտարագիտության և նյութագիտության բնագավառում:

Անդամ է ԱՄՆ–ի ճարտարագիտության ազգային ակադեմիայի, Մետաղների ու սուլֆուրիդների ամերիկյան միջազգային ընկերության (պատվավոր և ցմահ անդամ): Գլխավոր խորհրդատուն է մոտ 500 ամերիկյան և միջազգային ընկերությունների (այդ թվում «Լիկոս», «Նասդակ») առաջատար տեխնոլոգիաների և էլեկտրոնային արդյունաբերության ոլորտում:

Պարգևատրվել է «Հենրի Մարիոն Հոուլ» մեդալով (Մետաղագետների ամերիկյան ընկերության կողմից), Պատվավոր մրցանակով՝ Հանքանյութերի, մետաղների

րի և նյութերի հետազոտության ընկերության կողմից: Կարնեգի Մելոն համալսարանի և Չատամ քոլեջի պատվավոր դոկտոր է:

2005թ. Բաց տպագրության տեղեկատվական արդյունքների տվյալների հիման վրա



ՄԵՍՐՈՊ արքեպիսկոպոս ՍՈՒՐԱՖՅԱՆ

MESROB Archibishop MUTAFYAN

Ամենապատիվ Տեր Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյան, Կ. Պոլսի 84–րդ հայոց պատրիարք: Կ. Պոլիս, Թուրքիա: Ծնվել է 1956թ. հունիսի 16–ին Կ. Պոլսում (Թուրքիա):

Երկրորդական կրթությունը ստացել է Գերմանիայի Շտուտգարդ քաղաքի մոտ գտնվող Կորնվեյնշտեմ ավանի Ամերիկյան քոլեջում: Մեմֆիսի համալսարանում (ԱՄՆ–ի Տեննեսի նահանգ) ուսանել է փիլիսոփայություն և սոցիոլոգիա (1974–79թթ.): Նույն հաստատությունում ստացել է նաև աստվածաբանության վկայական (1979թ.): Կրթությունը կատարելագործել է Երուսաղեմում՝ Եբրայական համալսարանում, մասնագիտանալով հայագիտական ուսումնասիրությունների ասպարեզում (1979–81թթ.): Հռոմի Սուրբ Թոմաս Ալփինասի համալսարանում հետևել է աստվածաբանական դասընթացներին (1988–89թթ.):

Չեռնադրվել է կուսակրոն քահանա և ծառայել իբրև Մարմարա ծովում գտնվող Կինալի կղզու հայոց եկեղեցու հոգևոր հովիվ (1979թ.): Վարդապետ է ձեռնադրվել 1983թ–ին, գերագույն վարդապետ՝ 1986թ–ին: Ստանձնել է Կ.Պոլսի Հայոց պատ-

րիարքության ընդհանուր քարտուղարի և միջեկեղեցական հարաբերությունների համակարգողի պաշտոնները (1982–87թթ.): Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ստացել է եպիսկոպոսական աստիճան (1993թ.) և եղել է Մարմարայի Իշխանական Կղզիների հոգևոր թեմի առաջնորդ: 1998թ–ին ընտրվել է Կ. Պոլսի 84–րդ հայոց պատրիարք՝ իբրև Ամենապատիվ Տեր Մեսրոպ Բ Մութաֆյան:

Հայ առաքելական եկեղեցու Գերագույն հոգևոր խորհրդի անդամ է և փոխնախագահներից մեկը: Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի հոգևոր խորհրդի նախագահն է:

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արդյունքների տվյալների հիման վրա



ՄԵՐՇԱՆՈՎ Ալեքսանդր

MERZHANOV Alexander

Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս: Քիմիական ֆիզիկայի բնագավառի մասնագետ: Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Չերնոգոլովկա, Մոսկվայի մարզ, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է 1931թ–ի մայիսի 27–ին Գոմի Ռուստովում (Ռուսաստան): Գրիգոր և Թամարա Մերժանովների որդին է: Ամուսնացել է Իննա Բորովինսկայայի հետ (1978թ.), որդին՝ Վլադիմիր, դուստրերը՝ Կարինա և Թամարա:

Ավարտել է Գոմի Ռուստովի պետական համալսարանը (1954թ.): Արժանացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի (1959թ.), ապա դոկտորի գիտական կոչումների (1967թ.):

Եղել է Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի Քիմիական ֆիզի-

կայի ինստիտուտի գիտաշխատող (1954–59թթ.), ապա լաբորատորիայի վարիչ (Չերնոգոլովկա, 1960–78թթ.), այնուհետև բաժանմունքի վարիչ (Չերնոգոլովկա, 1978–76թթ.): Հիմնադրել է Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի Կառուցվածքային մակրոկինետիկայի և նյութագիտության ինստիտուտը Չերնոգոլովկայում (1987թ.)՝ լինելով նրա առաջին տնօրենը (1986–2004թթ.): Ներկայումս այդ հաստատության գլխավոր գիտական խորհրդատուն է (սկսած 2004թ–ից):

Հեղինակ է մոտ 800 գիտական հոդվածի և 120 արտոնագրի՝ ընդհանուր և կառուցվածքային մակրոկինետիկայի և տեխնոլոգիայի, ինքնատարածվող բարձր ջերմաստիճանային սինթեզի, այրման երևույթների և այլ բնագավառներում: Հայտնագործել է ինքնատարածվող բարձր ջերմաստիճանային սինթեզի երևույթը (1967թ.): Հիմնադիրն է Կուլբիշևի ճարտարագիտական ինստիտուտի Քիմիական ֆիզիկայի ամբիոնի (1972թ.), «Թերմոսինթեզ» կոնսորցիումի, գիտաարտադրական միավորումների (նախկին Խորհրդային Միության տարածքում, մասնավորապես՝ Հայաստանում): Հիմնադիրն ու գլխավոր խմբագիրն է «Ինքնատարածվող բարձր ջերմաստիճանային սինթեզի միջազգային ամսագիր» գիտական հանդեսի («Ալերտոն պրես», Նյու Յորք, սկսած 1992թ–ից):

Անդամ է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի (սկսած 1997թ–ից, թղթակից–անդամ՝ 1990թ–ից): Խորհրդային Միության (ներկայումս՝ Ռուսաստանի Դաշնության) գիտության և տեխնոլոգիայի պետական կոմիտեի (նախարարության) Ինքնատարածվող բարձր ջերմաստիճանային սինթեզի տեսության և կիրառության (1979թ.) գիտական խորհրդի նախագահն է: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Այրման և պայթյունի (սկսած 1999թ–ից) գիտական խորհրդի նախագահն է, Ֆիզիկական քիմիայի և անօրգանական նյութերի բաժանմունքի բյուրոյի անդամ: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան պատվավոր

անդամ է (2006թ.): Ռուսաստանի Դաշնություն բնական գիտությունների ակադեմիայի անդամ է (1990թ.): Եղել է Կերամիկայի միջազգային ակադեմիայի նախագահը (2002–06թթ.): Ինքնատարածվող բարձր ջերմաստիճանային սինթեզի միջազգային ընկերության նախագահն է (2002թ.), Գիտությունների և արվեստների եվրոպական ակադեմիայի իսկական անդամ է (Սալսբուրգ, 1997թ.): Նյութերի հետազոտության միության պատվավոր անդամ է (Հնդկաստան, 1997թ.): Վուհանի տեխնոլոգիական համալսարանի (Չինաստան, 1993թ.), Սամարայի պետական համալսարանի (Ռուսաստան, 1993) և Հարբինի տեխնոլոգիական ինստիտուտի (Չինաստան, 1995թ.) պատվավոր դոկտոր է:

Արժանացել է «Պինդ մարմնում բոցի երևույթի հայտնագործողի» կոչման (Ռուսաստան, 1967), Հայկական ԽՍՀ պետական մրցանակի (1980թ.), Սմոլենսկու մեդալի (Լեհաստանի գիտությունների ակադեմիայի, 1989թ.), Պրոմեթևսի մեդալի (Այրման և սինթեզի ճապոնական ընկերության, 1990թ.), Չելդովիչի անվան ոսկե մեդալի (1990թ.), «Թերմո Կինգ Եվրո» մրցանակի (Դուբլին, 1993թ.), Ռուսաստանի Դաշնության պետական մրցանակի (1996թ.), Բնության և հասարակության միջազգային ակադեմիայի Պետրոս Մեծի անվան մեդալի (1997թ.), Պատվո մեդալի՝ ինքնատարածվող բարձր ջերմաստիճանային սինթեզի հայտնագործման և հետազոտական աշխատանքում նոր ճյուղի մեջ նշանակալից ներդրման համար, Ինքնատարածվող բարձր ջերմաստիճանային սինթեզի 4-րդ միջազգային գիտաժողովի կողմից (Տոլեդո, Իսպանիա, 1997թ.), Տատիշևի անվան պատվավոր մրցանակի՝ հայրենիքին բերած ծառայությունների համար (Ռուսաստանի գիտությունների ակադեմիա, 1999թ.), Ռուսական գիտությանը և տեխնիկային մատուցած ծառայությունների համար՝ Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի պատվավոր մրցանակի (2001թ.), Չերնոգոլովկայի պատվավոր քաղաքացու կոչման (2001թ.), Ոսկե մեդալի՝ գիտական համա-

գործակցության համար (Բարեգործական գիտական հաստատության կողմից, Ռուսաստան, 2001թ.), Կերամիկայի համաշխարհային ակադեմիայի «Կերամիկական մրցանակի» (2008թ.):

2008թ. Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաթերթի» տվյալների հիման վրա



ՄԻԿՈՅԱՆ Ստեփան

MIKOYAN Stepan

Փորձարկող օդաչու: Խորհրդային Միության հերոս, ռազմաօդային ուժերի գեներալ-լեյտենանտ: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է Թիֆլիսում (Թբիլիսի, Վրաստան), 1922թ. հուլիսի 12-ին: Անաստաս Միկոյանի (Խորհրդային Միության Գերագույն Խորհրդի նախագահության երկարամյա նախագահ և Կոմունիստական կուսակցության քաղբյուրոյի անդամ) և Աշխեն Թումանյանի որդին է: Ամուսնացել է Էլեոնորա Միկոյան-Լոգովիկայայի հետ (1945թ), որդիները՝ Վլադիմիր, Ալեքսանդր, և դուստրը՝ Աշխեն:

Սովորել է Խորհրդային Միության զինված ուժերի Կաչայի օդաչուական դպրոցում (1941թ.): Իբրև օդաչու Ռազմական կործանիչների 11-րդ գնդում, հետագայում 32-րդ գվարդիական գնդում (Հյուսիսարևմտյան ճակատ), մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին (1941–45թթ.), կռվել է Մոսկվայի և Ստալինգրադի պաշտպանության համար մղված մարտերում: Պատերազմի ավարտին ստացել է կապիտանի զինվորական աստիճան: Պատերազմից հետո ուսումը շարունակել է Ռազմական ավիացիայի ճարտարագի-

տակւան ակադեմիայում (1946–51թթ.)՝ ստանալով ճարտարագետ-մեխանիկի որակավորում:

Իբրև փորձարկող օդաչու (1951–59թթ.), ապա որպես փորձարկող-օդաչուական բաժնի ղեկավար (1959–65), այնուհետև նաև իբրև ինստիտուտի պետի տեղակալ (1965–78թթ.), աշխատել է Խորհրդային բանակի Ռազմաօդային ուժերի գիտական փորձարարական ինստիտուտում: Պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (1979թ.): «Մոլնիա» գիտական և արտադրական միավորման գլխավոր նախագծողի տեղակալն է փորձարկումների գծով (սկսած 1978թ-ից):

Փորձարկել է 102 տեսակի ռազմական կործանիչներ, տարբեր տեսակի այլ ինքնաթիռներ (3500 թռիչքային ժամ), ներառյալ ՄԻԳ-երը և դրանց հաջորդած տեսակները: Գործուն մասնակցություն է ունեցել «Բուրան» տիեզերական համալիրի և «Բոր-4» մոդելների նախագծման և փորձարկման աշխատանքներին:

Հեղինակն է «Փորձարկող-օդաչուի հիշողություններ և կրեմլյան վերնախափ մասին» հուշագրության (հրատ. ԱՄՆ-ում 1999թ-ին): Փորձարկող-օդաչուների միության պատվավոր անդամ է (Կալիֆոռնիա, ԱՄՆ, 1964թ.):

Ռուսաստանի Դաշնության ռազմաօդային ուժերի գեներալ-լեյտենանտ է (1980թ.):

Արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման (1975թ-ին): 1964թ-ին նրան շնորհվել է պատվավոր փորձարկող-օդաչուի կոչում: Պարգևատրվել է «Լենինի» (1972թ.), «Կարմիր դրոշի» (1942թ.), «Հայրենական պատերազմի» առաջին աստիճանի, չորս «Կարմիր աստղի» և 20 այլ շքանշաններով:

2005թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՄԻՐԱՆՅԱՆ Անդրանիկ

MIGRANIAN Andranik

Քաղաքագետ, հասարակական գործիչ: Քաղաքական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս (Նյու Յորք, ԱՄՆ), պրոֆեսոր: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է 1949թ. փետրվարի 10-ին Երևանում: Մովսես և Էսթեր Միրանյանների որդին է: Ամուսնացել է Կարինե Վարդանովայի հետ, դուստրը՝ Ջարուհի:

Ավարտել է Մոսկվայի միջազգային հարաբերությունների ինստիտուտը (1972թ.): Ստացել է քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (1975թ.):

Եղել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Միջազգային բանվորական շարժման ինստիտուտի ասպիրանտ (1972–75թթ.): Իբրև դոցենտ դասավանդել է Մոսկվայի ավտոմոբիլային-տրանսպորտային ինստիտուտում (1976–85թթ.): Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի Համաշխարհային տնտեսության և միջազգային հարաբերությունների ինստիտուտում գբաղեցրել է ավագ գիտաշխատողի պաշտոն (1985–88թթ.): Եղել է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Միջազգային տնտեսության և քաղաքական հետազոտությունների ինստիտուտի առաջատար գիտաշխատող (սկսած 1988թ-ից), ղեկավարել է այդ հաստատության Մոցիալ-քաղաքական հիմնահարցերի կենտրոնը (1992–93թթ.): Դասախոսություններով հանդես է եկել Սան Դիեգոյում (Կալիֆոռնիայի համալսարան, 1990–91թթ.): Պաշտոնավարել է իբրև Ռուսաստանի Դաշնության Գերագույն Խորհրդի միջազգային հարաբերությունների հանձնախմբի ավագ խորհրդական (1992–93թթ.): Աշխատել է Ռուսաստանի

Դաշնության նախագահի Նախագահական խորհրդում (1993–2000թթ.)՝ լինելով Անկախ պետությունների համագործակցության (նախկին Խորհրդային Միության հանրապետությունների) հետ հարաբերությունների կոմիտեի և Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի հայրենակիցների հետ հարաբերությունների ավագ փորձագետ (1994թ.): Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարության Միջազգային հարաբերությունների ինստիտուտի քաղաքագիտության պրոֆեսոր է (սկսած 1995թ-ից): Անկախ պետությունների համագործակցության ինստիտուտի գիտական խորհրդի նախագահն է (սկսած 1996թ-ից): Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի հասարակական պալատի անդամ է և Համաշխարհայնացման և ազգային ռազմավարության զարգացման հանձնախմբի նախագահը: Արտաքին և պաշտպանական քաղաքականության խորհրդի (հասարակական կազմակերպություն) անդամ է:

Հեղինակ կամ համահեղինակ է մեծ թվով հոդվածների, երեք գրքի՝ «Ժողովրդավարություն և բարոյականություն: Անհատ, հասարակություն, պետություն» (1989թ.), «Ռուսաստանն ինքնության որոնման մեջ» (1997թ.), «Ռուսաստան՝ քառսից դեպի կարգավորվածություն» (2001թ.): «Մոյս գազեպա» («Իմ լրագիրը») շաբաթաթերթի «Նովիյ վզզլադ» («Նոր հայացք») հավելվածի գլխավոր խմբագիրն է: Քաղաքական հարցերով հեռուստատեսային բազմաթիվ ծրագրերի փորձագետ է:

Անդամ է Ռուսաստանի միջազգային ուսումնասիրությունների ընկերության, Արտաքին և պաշտպանական քաղաքականության խորհրդի (հասարակական կազմակերպություն), Քաղաքական գիտությունների ակադեմիայի (Նյու Յորք, ԱՄՆ): Եղել է Տնտեսական և սոցիալական զարգացման «Ռեֆորմ» («Բարեփոխում») միջազգային ընկերության փոխնախագահը (1994–2004թթ.): «Սոցիալիստ» («Համաձայնություն») հաստատության փոխնախագահն է (սկսած 2004թ-ից):

Գործուն մասնակցություն է ունեցել

Ռուսաստանի հայերի միության և Համաշխարհային հայկական կոնգրեսի ստեղծմանը, այդ կազմակերպությունների ղեկավար մարմինների անդամ է:

Երեք անգամ արժանացել է Ռուսաստանի Դաշնության նախագահի «Շնորհակալագրի»:

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՄԻՆԱՍՅԱՆ Կարապետ

MINASSIAN Garabed

Տնտեսագետ, մաթեմատիկոս: Գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Բուլղարիայի ազգային բանկի կառավարիչների խորհրդի անդամ՝ իբրև Բուլղարիայի Հանրապետության նախագահի ներկայացուցիչ, Բուլղարիայի Հանրապետության նախագահի տնտեսական խորհրդական 1997–2002թթ.: Սոֆիա, Բուլղարիա: Ծնվել է 1944թ-ի փետրվարի 15-ին Ռուսեում (Բուլղարիա): Արտաշես և Մաթենիկ Մինասյանների որդին է: Ամուսնացած է Աննի Մինասյանի հետ (Սոֆիա, 1971թ.), դուստրը՝ Գայանե, որդին՝ Արիս:

Ուսանել է Սոֆիայի Սուրբ Կլիմենտ Օֆրիդսկու անվան համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետում (Սոֆիա, 1967թ.): Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի Տնտեսագիտության ինստիտուտում արժանացել է գիտությունների դոկտորի գիտական աստիճանի տնտեսագիտության ասպարեզում (Սոֆիա, 1987թ.): Նույն հաստատությունում նրան շնորհվել է տնտեսագիտության պրոֆեսորի կոչում (1990թ.): Մասնագիտական կատարելագործման է գործուղվել ԽՍՀՄ գիտությունների ակադեմիա (Մոսկվա և Նովոսի-

բիսկ, 1974թ.), Մեծ Բրիտանիայի քաղաքական ակադեմիա (Լոնդոն, 1991թ.), ԱՄՆ (PIET-ծրագրով, 1993թ.) և Ավստրիա (WIIW- ծրագրով, 1999թ.):

Իբրև պրոֆեսորի պաշտոնակատար (մաթեմատիկա և վիճակագրություն, 1970–76թթ.), այնուհետև իբրև դասախոս դասավանդել է Տնտեսագիտության բարձրագույն ինստիտուտում (Սոֆիա, 1976–81թթ.): Պաշտոնավարել է Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի Տնտեսագիտության ինստիտուտում (սկսած 1972թ-ից)՝ զբաղեցնելով հետազոտողի (1972–81թթ.) և ավագ գիտական աշխատակցի (1981–90թթ.) պաշտոնները: Եղել է նույն հաստատության «Մակրոտնտեսական վերլուծության և կանխորոշման» բաժանմունքի ղեկավարը (1990–96թթ.): Իբրև տնօրեն ղեկավարել է Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի Տնտեսագիտության ինստիտուտը (1992–95թթ.): Իբրև պրոֆեսոր դասավանդել է Սոֆիայի Սուրբ Կլիմենտ Օֆրիդսկու անվան համալսարանի մաթեմատիկայի և տնտեսագիտության ֆակուլտետներում, Ազգային և միջազգային տնտեսության համալսարանում, Դիմիտրի Յենովի անվան տնտեսագիտական ակադեմիայում, Վառնայի Սվիշտովի անվան տնտեսագիտական համալսարանում, Ս. Կիրիլի և Մեթոդիոս Մեծի անվան Տուրնովոյի համալսարանում (սկսած 1995թ.):

Եղել է Բուլղարիայի Հանրապետության նախագահի տնտեսական հարցերի գծով խորհրդական (1997–2002թթ.): Բուլղարիայի ազգային բանկի կառավարիչների խորհրդի անդամ է և Բուլղարիայի Հանրապետության նախագահի ներկայացուցիչն այդ խորհրդում, նշանակված կառավարման երկու ժամկետների՝ 1997–2000 և 2000–2006թթ. համար: Կառավարության «Բելեն» վերակառուցման ծրագրի խորհրդակցական խմբի անդամ է (2003թ-ից սկսած):

Հեղինակ է 17 գիտական մենագրության, 100-ից ավելի գիտական հոդվածի՝ մակրոտնտեսական և արդյունաբերական քաղաքականության, ֆինանսների և բանկային գործունեության, էկոնոմետրիկայի,

տնտեսական զարգացման և այլ ոլորտներում: Հատկապես հիշարժան են նրա «Ներմուծման և արտահանման հարաբերությունների արդյունավետությունը» (Սոֆիա, 1983թ.), «Այսօրվա և վաղվա բուլղարական տնտեսությունը» (հ.1–4, Սոֆիա, 1992–94թթ.), «Բուլղարական տնտեսությունը 20-րդ դարի վերջին: Նպատակների և միջոցների համաձայնեցում» («Ֆրի ինիցիատիվ» հր., Սոֆիա, 1998թ.), «Ֆինանսական կայունացում և տնտեսական զարգացում» («Մարտին Դրինով» հր., Սոֆիա, 2002թ.), «Ֆինանսական ծրագրավորում» (2-րդ հր., «Գորեքս», Սոֆիա, 2004թ.), «Մեծ արտաքին պարտքեր, տնտեսություն, պրակտիկա, մենեջմենտ» (Սիելա, 2004թ.), «Ճանապարհ դեպի Եվրոպա: Արևմտաեվրոպական երկրների փորձը» («Մարտին Դրինով» հր., Սոֆիա, 2005թ.) և այլ մենագրությունները: Գլխավոր խմբագիրն է Բուլղարիայի ազգային բանկի հրատարակած «Քննական զեկույցներ» պարբերականի: Խմբագրական կազմի անդամ է «Տնտեսագիտական միտք» հանդեսի, 1993–96թթ-ին եղել է վերջինիս գլխավոր խմբագրի տեղակալը: Գործուն մասնակցություն է ունեցել մոտ 120 միջազգային և տեղական նշանակության գիտաժողովների աշխատանքին:

Անդամ է Էկոնոմետրիկ ընկերության (1991թ.), Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի գլխավոր ասամբլեայի (1992–95թթ.), Ամերիկյան տնտեսական ընկերության (1995թ.), Անցման տնտեսական կանխատեսման և մոդելավորման ընկերության (1995թ.), Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի (1995թ.) «ՊՀԱԸ» միջազգային դրամաշնորհային հանձնախմբի (1995թ.), «Անցման էկոնոմետրիկան» միջազգային գիտաժողովի կազմակերպչական հանձնախմբի (Վարշավա, 1995), Համեմատական տնտեսական հետազոտությունների եվրոպական ընկերության 5-րդ կոնֆերանսի կազմակերպիչ հանձնախմբի (Սոֆիա, 1998), Հարավարևելյան Եվրոպայի երկրների տնտեսական կառույցի վերափոխման, կայունացման և զարգացման միջազգային գիտաժողովի կազմակերպչական հանձնախմբի (Վո-

լու, Հունաստան, 2001), «Տնտեսական ձևափոխման դրույթը ապագա ընդարձակման ծրագրերում» գիտաժողովի գիտական հանձնախմբի (Սևիլ, 2001թ.), Նախարարների խորհրդի բարձրագույն որակակազմող հանձնախմբի (2000-2003թթ.): Եղել է Բարձրագույն որակակազմող հանձնախմբի նախագահը տնտեսագիտության գծով (1997-2000թթ.):

Պարգևատրվել է Բուլղարիայի Հանրապետության «Ստարա պլանինա» 2-րդ կարգի մեդալով (2006թ.), Բուլղարիայի ազգային բանկի ոսկե մեդալով (2006թ.), «Լոժի համալսարանի 50-ամյակ» շքանշանով (1995թ.): Կենսագրականն ընդգրկված է «Ով ով է աշխարհում» («Մարկիս», 14-րդ հր.) միջազգային կենսագրական բառարանում (ԱՄՆ, 1997թ.):

2006թ. Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաթերթի» տվյալների հիման վրա



Միրզոյան Էդվարդ

MIRZOYAN Edvard

Կոմպոզիտոր: Հայաստանի և Խորհրդային Միության ժողովրդական արտիստ: Պրոֆեսոր: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է 1920թ. մայիսի 12-ին Գորիում (Վրաստան): Հայրանունը՝ Միխայիլ:

Ուսանել է Երևանի Կոմիտասի անվան պետական երաժշտանոցում (աշակերտել է պրոֆեսոր Վ.Տալանին, 1941թ.), այնուհետև Մոսկվայի հայկական մշակույթի տան երաժշտական ստուդիայում (աշակերտել է Լիտինսկուն և Պեյկոյին, 1946-48թթ.):

Դասավանդել է երաժշտական դպրո-

ցում (1945-46թթ.), ապա Կոմիտասի անվան պետական երաժշտանոցում (սկսած 1948թ-ից): Իբրև պրոֆեսոր (1965թ.) դեկավարել է այդ հաստատության կոմպոզիցիայի ամբիոնը (1972-86թթ.): Եղել է Հայաստանի կոմպոզիտորների միության պատասխանատու քարտուղար (1950-52թթ.): Դեկավարել է ԽՍՀՄ «Մուզֆոնդի» հայկական մասնաճյուղը (1952-56թթ.): Եղել է Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ (1956-91թթ.):

Հեղինակ է բազմաթիվ սիմֆոնիկ ստեղծագործությունների, նվագախմբային, լարային, դաշնամուրային գործերի, կանտատների, սոնատների, երգախմբային գործերի, ռոմանսների, երգերի, կինոերաժշտության և այլն: Հիշարժան են նրա «Սիմֆոնիկ պարեր» (1946թ.), «Լարային կվարտետ» («Թեմա և վարիացիաներ», 1947թ.), «Նախերգանք» (1947թ.), «Ներածություն և հավերժական շարժիչ» (1958թ.), «Սիմֆոնիա» (1962թ.), «Սիմֆոնիա լարային նվագախմբի և տիմպանիի համար» (1962թ.), «Սելլո Սոնատա» (1967թ.), «Պոեմ» (դաշնամուրային, 1970թ.) և բազմաթիվ այլ ստեղծագործություններ:

Անդամ է Գիտությունների, կրթության, արդյունաբերության և արվեստների միջազգային ակադեմիայի (ԱՄՆ), Բնական գիտությունների եվրոպական ակադեմիայի (Հանովեր, Գերմանիա), Բնական և հասարակական գիտությունների միջազգային ակադեմիայի Հայաստանի մասնաճյուղի:

Արժանացել է Հայաստանի ժողովրդական արտիստի (1963թ.), Խորհրդային Միության ժողովրդական արտիստի (1981թ.), Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի (1958թ.) կոչումներին: Պարգևատրվել է Խորհրդային Միության «Լենինի» և «Պատվո նշան» շքանշաններով, Բնական գիտությունների եվրոպական ակադեմիայի «Սոֆի Տախալովա» և «Պետրոս Մեծ» մեդալներով: Երևանի պատվավոր քաղաքացի է (2001թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ Ռուբեն

MNATSAKANYAN Ruben

Աշխարհագրագետ, շրջակա միջավայրի ուսումնասիրության մասնագետ: Գիտությունների թեկնածու, պրոֆեսոր: Բուրդակաշտ, Հունգարիա (Ռուսաստանի Դաշնության քաղաքացի): Ծնվել է 1959թ. հոկտեմբերի 26-ին Մոսկվայում: Արտյոն Մնացականյանի և Սեդա Բարոյանցի որդին է: Ամուսնացել է Իրինա Մուրդիկովայի հետ (Մոսկվա, 1981թ.), դուստրերը՝ Նարինե և Ելենա:

Ուսանել է Մոսկվայի պետական համալսարանի աշխարհագրության ֆակուլտետում (1976-81թթ.), ապա նույն հաստատության ասպիրանտուրայում (1981-84թթ.): Պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (Մոսկվա, 1985թ.):

Գիտական գործունեությունը սկսել է Մոսկվայի պետական համալսարանի աշխարհագրության ֆակուլտետում (1984-91թթ.), այնուհետև գիտական աշխատանքի է մեկնել է Շոտլանդիա՝ Էդինբուրգի համալսարան, Հասարակական Էկոլոգիայի կենտրոն (Միացյալ Թագավորություն, 1991-92թթ.): Եղել է Ռուսաստանի ազգային և մշակութային ժառանգության ուսումնասիրության ինստիտուտի բաժնի վարիչ (Մոսկվա, 1992-93թթ.): 1994թ-ին աշխատել է Օդեսանի (Ֆրանսիա) Շրջակա միջավայրի ազգային ինստիտուտում: Դասավանդել է Կենտրոնական եվրոպական համալսարանի շրջակա միջավայրի պահպանության գիտության և քաղաքականու-

թյան ֆակուլտետում (Բուդապեշտ, Հունգարիա, սկսած 1994թ-ից): 2000թ-ից գրադեցնում է այդ հաստատության վարիչի պաշտոնը: Իբրև հրավիրված պրոֆեսոր «Շրջակա միջավայրի ուսումնասիրություն» է դասավանդել Նյու Յորքի Բարդ քոլեջում (ԱՄՆ, 2001-2002թթ.):

Հեղինակ կամ համահեղինակ է մոտ 40 գիտական հրատարակման, 3 գրքի: Հիշարժան են նրա «Նախկին խորհրդային հանրապետությունների շրջակա միջավայրի ժառանգությունը» (Էդինբուրգի համալսարանի հրատ., 1992թ.), «Կոմունիզմի բնապահպանական ժառանգությունը» (Փարիզ, 1994թ.), «Բնապահպանությունը Ռուսաստանում՝ Գորբաչովից մինչև Պուտին» (համահեղինակ, Մոսկվա, 2003) աշխատությունները:

Եղել է Բնապահպանական նախաձեռնությունների հովանավորման միության հիմնադիր-անդամ և փոխնախագահ (Մոսկվա, 1988-91թթ.). Միասնական պատմական տարածքում խորհրդային մշակութային ժառանգության պահպանման հաստատության խորհրդի անդամ (1989-92թթ.), Շրջակա միջավայրը ուսումնասիրող արհեստավարժների եվրոպական միության թղթակից-անդամ (1990-94թթ.): Իբրև խորհրդատու աջակցում է Համաշխարհային առողջապահական կազմակերպությանը, Շրջակա միջավայրի եվրոպական գործակալությանը, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությանը:

Արժանացել է Մեծ Բրիտանիայի, Եվրոպական Միության և Միացյալ ազգերի կազմակերպության բազմաթիվ դրամաշնորհների:

2006թ. Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաթերթի» տվյալների հիման վրա



ՄՈՍՃՅԱՆ Կարապետ
ՄՈՍՃԵԱՆ Կարապետ

MOUMDJIAN Garabet

Քաղաքագետ, պատմաբան, քարզմանիչ, մանկավարժ: Փիլիսոփայության դոկտոր քաղաքագիտության ասպարեզում: Սիերա Մադր, Կալիֆոռնիա, ԱՄՆ: Ծնվել է 1957թ. մայիսի 15-ին Ջահլեում (Լիբանան): Գրիգոր-Հակոբ Մոմճյանի և Էթենի Ղուկասյանի որդին է: Ամուսնացել է Ն. Հարրոյանի հետ (1972), երեխաները՝ Հակոբ և Բյուրակ:

Ուսանել է «Համազգային» հաստատության Հայագիտական բարձրագույն հիմնարկում՝ ստանալով արվեստների պակավորի աստիճան պատմագիտության և հայագիտության ասպարեզում (Բեյրութ, 1983թ.): Ուսումը շարունակել է Լա Վեռնի համալսարանում (արվեստների պակավոր պատմության և հայագիտության ասպարեզում, 1986թ.), ապա Լոս Անջելոսի Կալիֆոռնիայի համալսարանի պատմության բաժնում (արվեստների մագիստրոս, 1990թ.), որտեղ արժանացել է նաև փիլիսոփայության թեկնածուի գիտական աստիճանի պատմագիտության ասպարեզում (1991թ.): Տրիսիտիի հարավային համալսարանում (Դալլաս, Տեխաս) ստացել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան քաղաքագիտության ասպարեզում (2003թ.):

Եղել է Լոս Անջելոսի Կալիֆոռնիայի համալսարանի պատմության բաժնի հետազոտական աշխատանքի օգնական (1986-90թթ.), ապա Մերձավոր Արևելքի պատմության դասախոս (1990-91թթ.): Լա Վեռնի համալսարանում դասավանդել է «Հայոց պատմություն» առարկան (Կալիֆոռնիա, 1991-93թթ.): Մխիթարյան կրթա-

կան հաստատությունում դասախոսել է «Հայագիտական հետազոտությունների դասընթացներում» (Լոս Անջելոս, 1991-97թթ.): Դասավանդել է Լոս Անջելոսի Կալիֆոռնիայի համալսարանի Մերձավորարևելյան լեզուների և մշակույթի բաժնում (1991-99թթ.): Եղել է Կալիֆոռնիայի պետական համալսարանի Ժամանակակից և դասական լեզուների բաժնի դասախոս (Նորտրիջ, 2001-03թթ.): Պաշտոնավարել է իբրև «Շամլյան» հայկական դպրոցի փոխտնօրեն (Գլենդեյլ, 1996-99թթ.) և «Մեսրոպյան» միջնակարգ դպրոցի տնօրեն (Պիկո-Ռիվերա, 1999-2001թթ.): Հայ առաքելական եկեղեցու Արևելյան թեմի պատվերով ձեռնարկել է «Հայոց պատմություն» դասագրքերի ստեղծումը (1991-96թթ.): «Ֆերահյան» միջնակարգ դպրոցում եղել է հայոց պատմություն և գրականության տեսուչ (Էնրիկո, 1991-93թթ.): Իբրև դասախոս աշխատել է Գլենդեյլի հանրային քոլեջի լեզվաբանության բաժնում (1998-2003թթ.): Իբրև խորհրդատու, լեզվաբան-քարզմանիչ և բանակցությունների միջնորդ պաշտոնավարել է «Էս Էմ Քոնսուլտինգ» (2003-05թթ.), «Ջի Կեյ Էմ Քոնսուլտինգ» (սկսած 1990թ-ից, բաժնետեր և նախագահ) բաժնետիրական ընկերություններում, ԱՄՆ-ի Պետական դեպարտամենտում (սկսած 2007թ-ից), Լոս Անջելոսի ոստիկանական ծառայությունում (սկսած 2006թ-ից, պահեստային ծառայության փոխոստիկանապետ):


Հեղինակ է բազմաթիվ հոդվածների, գրքերի գլուխների, դասագրքերի՝ հայոց և միջինարևելյան պատմության, հայագիտության, հասարակական-քաղաքական հիմնախնդիրների և հարակից այլ ոլորտներում: Հիշարժան են նրա «Մեր Պատմութիւնը» դասագրքերը՝ գրված հայկական միջնակարգ ուսումնական հաստատությունների 4-9-րդ դասարանների համար (Լոս Անջելոս, 1992-2002թթ.), «Կրիլիկան ֆրանսիական կառավարման ներքո՝ հայերի ձգտումները, թուրքական դիմադրությունը և ֆրանսիական ռազմավարությունը» գլուխը «Հայկական Կրիլիկան» ժողովածուի համար (խմբագրությամբ՝ Ռ. Հովանիսյանի և Ս. Պայալյանի, Լոս Անջելոս, 2008թ.): Համահեղինակ է «Հայագիտական ուսումնասիրությունների 40-ամյակը Լոս Անջելոսի Կալիֆոռնիայի համալսարանում» վավերագրական ֆիլմի (համահեղինակ՝ Անի Գևորգյան-Հովհաննիսյան, 2002թ.): Իբրև խմբագրական կազմի անդամ աշխատակցել է «Ասպարեզ» օրաթերթին (Գլենդեյլ, 1986-90թթ., խմբագիր՝ 1990-91թթ.), «Հայրենիք» պարբերականին (Բոստոն, 1987թ.), «Ազդակ» օրաթերթին (Բեյրութ, 1979-83թթ.): Եղել է Լոս Անջելոսի «Հորիզոն» հայկական հեռուստաժողովի քաղաքական մեկնաբան և հաղորդավար (1989-93թթ.): Խմբագրել է «Jusur» հանդեսը (Լոս Անջելոսի Կալիֆոռնիայի համալսարանի միջինարևելյան հետազոտությունների տարեգիրք, 1988-90թթ.):

Անդամ է Հայագիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների ազգային ընկերության (ԱՄՆ, սկսած 1986թ-ից), Միջինարևելյան ուսումնասիրությունների ընկերության (սկսած 1986թ-ից), Եվրասիական ուսումնասիրությունների կենտրոնի (սկսած 2000թ-ից), Լոս Անջելոսի համաշխարհային գործարար խորհրդի (սկսած 1998թ-ից), Լոս Անջելոսի Կալիֆոռնիայի համալսարանի շրջանավարտների միության (սկսած 1993թ-ից): Եղել է Հայագիտական ուսումնասիրությունների միության (2002-05թթ.) և Հայ կրթական հիմնարկության (ԱՄՆ, 1998-2002թթ.) տնօրենների խորհրդի անդամ:

Արժանացել է Միջազգային ֆակուլտետային մրցանակի (Լոնդոն, 2002-03թթ.), «Ազգային դեկանների պատվո ցուցակի» մեջ հիշատակության (1984-85թթ.), Լոս Անջելոսի Կալիֆոռնիայի համալսարանի «Հետազոտության օգնականի» (1986-89թթ.), «Դասավանդման» (1992-98թթ.) և «Մանգասարյան» (1989-90թթ.) դրամաշնորհների, «Լազարյան» (Բոստոն, 1992-95թթ.), Ամերիկայի հայ ուսանողների ընկերության (Նյու Ջերսի, 1987-88թթ. և 1991-92թթ.), «Գարիկյան» (Հայ առաքելական եկեղեցու արևելյան թեմ, 1987-89թթ.), Լոս Անջելոսի հայ արհեստավարժ-

ների միության (1988-89թթ. և 1993-94թթ.), «Կումրույան» (Կալիֆոռնիա, 1987-89թթ.), «Գյուլբենկյան» (Լիսաբոն, 1985-86թթ.), Հայկական բարեգործական ընդհանուր միության (Նյու Յորք, 1987-89թթ.), Հայ միսիոներական ընկերության (Նյու Յորք, 1985-86թթ.), Հայ կրթական հիմնարկության (Լոս Անջելոս, 1996-98թթ.) և այլ կրթաթոշակների:

2008թ. Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաթերթի» տվյալների հիման վրա



ՄՍՐՅԱՆ Վլադիմիր

MSRIAN Vladimir

Թատրոնի և կինոյի դերասան: Հայաստանի ժողովրդական դերասան: Երևանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի դերասան: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է 1938 թվականի մարտի 12-ին Օրջոնիկիձեում (այժմ՝ Վլադիկավկազ), արհեստավարժ դերասանների ընտանիքում (հայրանունը՝ Իվան):

Ուսանել է Երևանի գեղարվեստաբանական ինստիտուտի դերասանական բաժնում (1958-62թթ., աշակերտել է Արմեն Գուլակյանին):

Աշխատել է Երևանի պատանի հանդիսատեսի պետական թատրոնում (1963-64թթ.), այնուհետև Երևանի Ստանիսլավսկու անվան ռուսական պետական դրամատիկական թատրոնում (1964-66թթ.): Երևանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի դերասան է (սկսած 1966թ-ից):

Հիշարժան են նրա խաղացանկի շեքս-

պիրյան դերերը՝ Կլարենս («Ռիչարդ 3-րդ»), Համլետ («Համլետ»), Հուլիոս Կեսար («Հուլիոս Կեսար»), չեխովյան կերպարները՝ Վոյնիցկի («Քեռի Վանյա»), Լոպախին («Բալենու ալգին»), ինչպես նաև Հերոստրատի (Գրիգորի Գորիսի «Մոռանալ Հերոստրատին»), Բեն Ալեքսանդրի (Վ. Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է») և բազմաթիվ այլ գլխավոր դերերը թատրոնում: Կինոյում նկարահանվել է մոտ երկու տասնյակ հայկական և արտասահմանյան ֆիլմերում, այդ թվում «Սպիտակ զգեստներ» («Բելոռուսֆիլմ», 1992թ.), «Մորիկ» («Տաջիկֆիլմ», 1989թ.), «Չթաղված հանգուցյալներ» (Օդեսայի կինոստուդիա, 1992թ.), «Ավազակների կայսրությունը» (Յաթթայի կինոստուդիա, 1994թ.), «Հերոստրատ» (ԱՄՆ-Հայաստան, 2001թ.) կինոնկարներում: Կինոյում նրա խաղացած գլխավոր դերերից հատկապես առանձնանում է Լեոնիդ Մենակերի «Նիկոլո Պազանինի» (1982թ.) հեռուստաֆիլմում (նկարահանված նախկին Խորհրդային Միության կենտրոնական հեռուստատեսության պատվերով, մասնակցությամբ՝ Արմեն Զիգարխանյանի, Պազանինիի ջութակի ստեղծագործությունների երաժշտությամբ՝ Լեոնիդ Կոզանի կատարմամբ) Պազանինիի կերպարի մարմնավորումը, որը լայն ժողովրդական ճանաչում բերեց նրան:

Եղել է «Ոսկե ծիրան» երևանյան միջազգային կինոփառատոնի ժյուրիի անդամ (2007թ.):

Արժանացել է Հայկական ԽՍՀ պետական մրցանակի (1985թ.) և Հայաստանի ժողովրդական դերասանի կոչման: Ի թիվս բազմաթիվ մրցանակների և պարգևների, արժանացել է Սոցիալական նախաձեռնությունների միջազգային հիմնադրամի «Գնահատանքի շքանշանի» (Ռուսաստան, 2007թ.): Պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության «Մովսես Խորենացի» մեդալով (1998թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՍՈՒԹԱՖՅԱՆ Կլոդ, Արմեն

MUTAFIAN Claude

Մաթեմատիկոս, պատմաբան: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ: Գիտությունների դոկտոր (պատմության ասպարեզում), պրոֆեսոր: Փարիզ, Ֆրանսիա: Ծնվել է 1942թ. հուլիսի 21-ին Կլամարում (Ֆրանսիա): Ֆրանսահայ նշանավոր գեղանկարիչ Ջարեհ Մութաֆյանի որդին է:

Ուսանել է Փարիզի «Էքոլ Նորմալ» բարձրագույն դպրոցում (մանկավարժական բարձրագույն ուսումնական հաստատություն, 1962–66թթ.): Ավարտել է Փարիզի հարավային համալսարանը մաթեմատիկա մասնագիտությամբ (1965թ.): Սորբոնի (Փարիզ) համալսարանում մասնագիտացել է բյուզանդագիտության ասպարեզում՝ ստանալով համալսարանական դասընթացների վկայական (1993թ.): Պատմական գիտությունների դոկտոր է (2002թ.):

Փարիզի 11-րդ հարավային համալսարանում եղել է դասախոսի օգնական (1964–68թթ.): Իբրև հրավիրված մասնագետ դասավանդել է Պրինստոնի (ԱՄՆ, 1968–69թթ.), Հավանայի (Կուբա, 1969–71թթ.), Մեխիկոյի ազգային ինքնավար (Մեքսիկա, 1975թ.), Երևանի պետական (1980թ.) համալսարաններում: Եղել է Փարիզի հյուսիսային համալսարանի օգնական-դասախոս (1971–85թթ.): Ներկայումս դասավանդում է Փարիզի 13-րդ Հյուսիսային համալսարանում իբրև փոխպրոֆեսոր (maître de conférences):

Մաթեմատիկայի բնագավառում հիմնական աշխատությունները վերաբերում են Գալուայի տեսությանը և գծային հան-

րահաչվի խնդիրների լուծմանը: Պատմության ասպարեզում հեղինակ է մի շարք աշխատությունների (գրված ֆրանսերենով), որոնցից հատկապես հիշարժան են «Կիլիկիան կայսրությունների խաչներուկում» (1988թ.), «Արցախ՝ Ղարաբաղի պատմությունը» (Պատրիկ Տոնապետյանի համահեղինակությամբ, 1991թ.), «Կիլիկիայի հայոց թագավորությունը 12-ից 14-րդ դարերում» (1993թ.), «Հայոց ցեղասպանության համառոտ ակնարկ» (1993թ.) «Հայաստանի պատմական և մշակութային ատլաս» (2001թ.), «Մեծ եղեռն» (խալերեն, 2001թ.):

Եղել է «ՍՕՍ-Արմենիա-Ֆրանսահայ կարմիր խաչ» ընկերության հիմնադիր անդամներից մեկը և պատասխանատուն՝ կազմակերպելով 1988թ. Սպիտակի երկրաշարժից տուժածներին ֆրանսահայ համայնքի մարդասիրական օգնության տրամադրումը (1988–89թթ.):

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ է (սկսած 1994թ-ից): Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտոր է (1995թ.):

2005թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՆԱԶԱՐԵՅԱՆ Սերգեյ

NAZARETYAN Sergey

Երկրաշարժագետ: Գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Գյումրի, Շիրակի մարզ, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է Հառիչ գյուղում (Արթիկի շրջան, Հայկական ԽՍՀ) 1948թ. մարտի 30-ին: Նորայր և Մարգարիտ Նազարեթյանների որդին է: Ամուսնացել է Մուսաննա Կարապետյանի հետ (Լեոնինական, 1975թ.), դուստրը Սիրանուշ:

Ուսանել է Երևանի պետական համալսարանում՝ ստանալով երկրաֆիզիկոսի մասնագիտական որակավորում (1971թ.): Ուսումը շարունակել է Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրայում, պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով գիտությունների թեկնածուի գիտական աս-

տիճան (Երևան, 1978թ.): Վրացական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի Երկրաբանության ինստիտուտում արժանացել է գիտությունների դոկտորի գիտական աստիճանի (Թբիլիսի, 1988թ.):

Պաշտոնավարել է իբրև Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի Գեոֆիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի ինստիտուտի գիտական քարտուղար (1978– 81թթ.): Եղել է նույն հաստատության գիտական գծով փոխտնօրենը (1982–92թթ.): Հայաստանի Հանրապետության ազգային սեյսմիկ պաշտպանության հյուսիսային բաժանմունքի տնօրենն է (սկսած 1993թ-ից):

Հեղինակ կամ համահեղինակ է ավելի քան 230 գիտական աշխատության: Հիշարժան են նրա «Խորր տեղաշարժերը Հայկական ԽՍՀ տարածքում» (Հայկ. ԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984թ.), «Հայաստանի հազվագյուտ երկրաբանական հուշարժանները» (Երևան, 2000թ.), «Սեյսմիկ պաշտպանությունը և նրա կազմակերպումը» (Էլդորադո, 2002թ.), «Կովկասյան սեյսմոտեկտոնիկական պատմական և նախապատմական Կովկասում» (Կլուվեր ակադ. հրատ., 1977թ.), «Սպիտակի երկրաշարժի վերլուծությունը» («Անալս դի գեոֆիզիկա», 1997թ.) աշխատությունները:

Հայկական ճարտարագիտական ակա-

դեմիայի (Երևան, 2000թ.), Բնական միջավայրի և կյանքի պահպանության միջազգային ակադեմիայի (Ս. Պետերբուրգ, 1997թ.), Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի (Մոսկվա, 2000թ.) ակադեմիկոս է: Անդամ է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտական հանձնախմբի, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի «Երկրաբանություն» հանդեսի խմբագրական կազմի: Ղեկավարել է Միջազգային գիտական և տեխնոլոգիական կենտրոնի «ԿոՍին» ծրագիրը (2002–2004թթ.) և «Եվրասիա» հիմնադրամի 7 դրամաշնորհային ծրագիր:

Պարգևատրվել է «Մ. Լոմոնոսով 200» ոսկե շքանշանով (Բնական միջավայրի և կյանքի պահպանության միջազգային ակադեմիայի կողմից): Ստացել է «20-րդ դարի նշանավոր մարդ» կոչումը (Ամերիկյան կենսագրական հաստատության կողմից, 1999թ.): Արժանացել է Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի «Գովեստագրի» (1986թ.), Հայաստանի Հանրապետության վարչապետի «Շնորհակալագրի» (2001թ.) և Լեռնային Ղարաբաղի կառավարության «Պատվոգրի» (2001թ.):

2004թ. Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաթերթի» տվյալների հիման վրա



ՆԵՐՍԵՍ-ՊԵՏՐՈՍ 19-րդ ԱՊՐՍՈՒՆԻ

NERSES BEDROS XIX TARMOUNI

Ամենապատիվ Ներսես-Պետրոս 19-րդ Թարմունի Մեծի Տանն Կիլիկիոյ Հայ կաթողիկե եկեղեցու կաթողիկոս-պատրիարք: Ծնվել է Կահիրեում 1940-ի հունվարի 17-ին:

Նախնական և երկրորդական կրթությունը ստացել է Կահիրեի «Ֆրերների» ճեմարանում: Ուսանել է Հռոմի Լեոնյան հայկական դպրեվանդում (1958թ.): Հաճախել է Հիսուսյան հայրերի Գրիգորյան համալսարանը Հռոմում՝ ուսանելով փիլիսոփայություն և աստվածաբանություն: Չեռնադովել է Լուսակրոն քահանա (Կահիրե, 1965թ.), եպիսկոպոս (Կահիրե, 1990թ.), արքեպիսկոպոս (1999թ.):

Ստանձնել է Կահիրեի Հայ կաթողիկե ժողովրդապետության հովվապետի պատասխանատվությունը (1965–68թթ.): Ծառայել է իբրև Հայ կաթողիկե ժողովրդապետության Հելիոպոլսի (Կահիրեի մոտ) Սրբուհի Թերեզա եկեղեցու վանահայր (1968–90թթ.): Եղել է Եգիպտոսի և Սուդանի Հայ կաթողիկե թեմի առաջնորդ (1990–92թթ.): Վարել է Եգիպտոսի Հայ կաթողիկե նվիրապետության ընդհանուր քարտուղարի պաշտոնը (1992–97թթ.): Հայ կաթողիկե եկեղեցու Եպիսկոպոսաց սյունհորոսի անդամ է (սկսած 1997թ-ից): Հայ կաթողիկե եկեղեցու Սյունհորոսը նրան ընտրել է Մեծի Տանն Կիլիկիոյ Հայ կաթողիկե եկեղեցու կաթողիկոս-պատրիարք՝ շնորհելով Ներսես-Պետրոս ԺԹ Թարմունի անունը (1999թ.): Ստացել է Հռոմի Պապ Հովհաննես Պողոս Բ-ի օրհնությունը ("Ecclesiastica Communio", 1999թ.):

Հայ կաթողիկե եկեղեցու Մշտական սյունհորոսի անդամ է (սկսած 1994թ-ից): Եղել է Պատրիարքական ատյանը կառավարող եպիսկոպոսների հատուկ խորհուրդի անդամ (1993–95թթ.): Նախագահել է Քահանայապետական կոչումների պատրիարքական հանձնախմբում (1993–95թթ.):

Նրա ջանքերի շնորհիվ վերսկսվել է «Մասիս» ամսագրի հրատարակությունը: Մեծ աջակցություն է ցուցաբերել կաթողիկե հայկական դպրոցների գործունեությանը: Նրա առաջարկով և ի նշանավորումն Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն ընդունելու 1700-ամյակի՝ Պապ Հովհաննես Պողոս Բ-ն Հռոմի Սուրբ Պետրոսի հրապարակում հայտնել է, որ 1915թ. Հայոց մեծ եղեռնի գոհ, արքեպիսկոպոս Իգնաս Մալոյանը դասվում է Սրբերի շար-

քում (2001թ.): Նրա գործուն մասնակցությամբ Հռոմի Սուրբ Պետրոսի Մայր տաճարի հյուսիսային ճակատամասում տեղադրվել է Սուրբ Գրիգոր Լուսավորչի արձանը, որն օրհնել է Պապ Հովհաննես Պողոս Բ-ն (2005թ.):

2005թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Առնոլդ

NICOGOSSIAN Arnold

Տիեզերական բժշկության և կենսաբանության մասնագետ: Օդագնացության և տիեզերագնացության ազգային վարչության (NASA, ԱՄՆ) Կենսաբանական գիտությունների բաժնի նախկին ղեկավար, ԱՄՆ-ի առողջապահական քաղաքականության միջազգային գրասենյակի տնօրեն: Վաստակավոր պրոֆեսոր, բժշկագիտության դոկտոր, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ: Վիրջինիա, ԱՄՆ: Ծնվել է 1936թ. դեկտեմբերի 12-ին Դենպրոպետրովսկում (Ուկրաինա):

Ուսանել է Ռազիի ֆրանսիական ուսումնարանի կենսաբանության բաժնում (Իրան, 1956թ.): Ուսումը շարունակել է Օհայոյի պետական համալսարանի կանխարգելիչ և օդագնացության բժշկության բաժնում՝ ստանալով մագիստրոսի գիտական աստիճան (1972թ.): Մասնագիտական գիտելիքները կատարելագործել է Մոունտ Սինայի բժշկական ծառայության Էլմհորստի հիվանդանոցում՝ ներքին և թոքային հիվանդությունների ուսումնասիրության ոլորտում: Թեհրանի համալսարանում ստացել է բժշկագիտության դոկտորի գիտական աստիճան:

Իբրև սրտաբան և թոնոլոգիկ վիրաբույժ աշխատանքի է անցել Օդագնացության և տիեզերագնացության ազգային վարչությունում (OSUՎ՝ NASA, սկսած 1972թ.): Մասնակցել է «Սոյուզ-Ապոլոն»՝ ԽՍՀՄ-ԱՄՆ, համատեղ տիեզերական թռիչքի ծրագրին իբրև անձնակազմի վիրաբույժ (1975թ.): Իբրև պրոֆեսորի պաշտոնակատար աշխատել է Բժշկական գիտությունների համալսարանի միացյալ ծառայության կանխարգելիչ բժշկության բաժնում (Վաշինգտոն, սկսած 1977թ.): Օդագնացության և տիեզերագնացության ազգային վարչության ղեկավարության կողմից նշանակվել է տիեզերական թռիչքների գլխավոր բժիշկ (Վաշինգտոն, 1992–96թթ.), Կառավարման և թռիչքների բաժանմունքի Կենսաբանական և միկրոօգոլականության գիտությունների գրասենյակի միացյալ վարիչի տեղակալ (1993–96թթ.): Այնուհետև նույն հաստատությունում գրադեցրել է Առողջապահության և անվտանգության գործակալության պաշտոնատարի (1996–2000թթ.), ապա գլխավոր բժշկի և գործակալության ղեկավարի պաշտոնները (2000–2003թթ.): 2003թ-ից սկսած ԱՄՆ-ի Առողջապահական քաղաքականության միջազգային գրասենյակի տնօրենն է և կրում է այդ հաստատության «Ականավոր պրոֆեսորի» տիտղոսը (սկսած 2002թ-ից): Տիեզերական ֆիզիոլոգիա և բժշկություն, ինչպես նաև հասարակական առողջապահություն է դասավանդում Մոսկվայի պետական համալսարանում (սկսած 1995թ-ից): Դասավանդում է նաև Մերիլենդի համալսարանի բժշկագիտական տարբեր բաժիններում (սկսած 1996թ-ից) և Ջեյմ Մադիսոնի համալսարանում (սկսած 2005թ-ից):

Հեղինակ կամ համահեղինակ է ավելի քան 50 գիտական հոդվածի, 6 մենագրության՝ տիեզերական կենսաբանության և բժշկության, արտակարգ իրավիճակների և առողջապահության կազմակերպման ասպարեզներում: Գլխավոր խմբագիրն է տիեզերական կենսաբանության և բժշկության երկու դասագրքի: Հեղինակ է բազմաթիվ նորարարությունների և գյուտերի: Կազմակերպիչն ու իրականացնողն է

ԽՍՀՄ և ԱՄՆ-ի միջև առաջին բժշկական հեռուստակամրջի՝ 1988թ-ին, Սպիտակի երկրաշարժի վիրավորներին բուժող բժիշկներին և ավերածությունների հետևանքները վերացնող մասնագետներին օգնելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ է (1998թ.): Անդամ է Կանխարգելիչ բժշկության ամերիկյան խորհրդի, Կանխարգելիչ բժշկության ամերիկյան բուլեջի, Ամերիկյան բժիշկների քոլեջի, Օդագնացության բժշկական ընկերության, Ամերիկյան աստղագիտական միության:

Ստացած պարգևների, շքանշանների և մրցանակների թվում հատկապես հիշարժան են «Ակնառու ծառայությունների համար» մեդալը (ՕՏԱՎ), «Ներդրման և գյուտերի համար» մրցանակը (ԱՄՆ), Նախագահական գովասանական նամակը՝ հասարակական ծառայության համար (ԱՄՆ), Ռուսաստանի Դաշնության տիեզերագնացների միության Գազարինի անվան (1987թ.) և Կորոլյովի անվան (1993թ.) մեդալները, «Բացառիկ ծառայության հա-

մար» մրցանակը (Ռուսաստանի Դաշնություն, 1995թ.), Ամերիկյան աստղագիտական միության «Կենսական նշանակության գիտությունների գրքի մրցանակը», «Հավասար հնարավորության դեպքում ձեռքբերումների մրցանակը» (ՕՏԱՎ, 1995թ.), Տիեզերագնացության ազգային հիմնադրամի «Ձեռքբերումների համար» մրցանակը (1995թ.), «Արժանիքների համար» մրցանակը՝ առողջապահական բաղաբականության և անհրաժեշտ փաստաթղթերի ստեղծման համար՝ (1996թ.), «Արժանիքների համար» մրցանակը (Տիեզերագնացության պետական միավորման կողմից, 1996թ.), Ելի համալսարանի Բժշկական բարձրագույն դպրոցի վիրաբուժական բաժանմունքի «Գնահատանքի վկայագիրը» (1998թ.), Կարլ Սագանի հիշատակի մեդալը (Մոլորակագիտական միություն, 2000թ.), Ռենդոլֆ Լավլեյս Երկրորդի անվան մրցանակը՝ տիեզերական կենսաբանության և բժշկության զարգացման համար (ՕՏԱՎ-ի թոնիքային վիրաբույժների կողմից, 2003թ.) և այլն:

2005թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

SHAHANTOUKHD

Գրող, խմբագիր, լրագրող: Պուրճ Համուտ, Լիբանան: Ծննդով՝ Պերթրիկան Սանդուխտ: Դուստրն է՝ Յուկեի Պեր-

թրիկանի: Գրչանունն է՝ Շահանդուխտ: Ծնվել է 1929թ-ին Բեյրութում (Լիբանան):

Ուսանել է Բեյրութի ֆրանսիական համալսարանի Արևելագիտության բաժնում՝ արժանանալով բարձրագույն կրթական վկայականի հայագիտության ասպարեզում:

Խմբագիրն է եղել «Այգ» հայերեն օրաթերթի՝ մինչև վերջինիս փակումը 1975թ-ին սկսված լիբանանյան պատերազմի պատճառով (Բեյրութ, 1960-75թթ.): 1977թ-ից սկսած ընդգրկվել է «Ազդակ» օրաթերթի խմբագրական կազմում՝ հոդվածներ գրելով ազգային, գրական և մշակութային թե-

մաներով: Գործուն մասնակցություն է ունեցել «Լիբանանի հայ օգնության խաչ», «Համագգային հայ կրթական և մշակութային միություն», ինչպես նաև հայկական եկեղեցուն կից և այլ հասարակական կազմակերպությունների աշխատանքին: Այդ կազմակերպությունների վարչությունների հրավերներով բազմաթիվ դասախոսություններ է ունեցել զանազան հավաքներում և ժողովներում, մասնակցել է նրանց պատգամավորական ժողովներին և հրատարակչական աշխատանքին: 1969թ-ին հրավիրվել է նաև Հայաստան՝ իբրև խմբագիր: 1981թ-ին հրավիրվել է Հարավային Ամերիկայի երկրներ՝ տեղի հայկական համայնքներում մշակութային ձեռնարկներ իրականացնելու նպատակով:

Հեղինակ է 25 անուն գրքի, հարյուրավոր գրականագիտական հոդվածների: Մեսրոպ Մաշտոցի կյանքին ու գործունեությանը նվիրված նրա վեպը, գրված ծննդյան 1600-ամյակի առիթով, արժանացել է Հայկական բարեգործական ընդհանուր միության մրցանակին (Բեյրութ, 1963թ.): «Պուրճ Համուտն Կու Գամ» երկհատորյակի հրատարակության առիթով արժանացել է Պուրճ Համուտ, Լիբանան, 1999թ): 2002թ-ին լույս է ընծայել «Իմ «Ճառընկիր»-ը» պատմվածքների ժողովածուն (Անթիլիաս, Լիբանան):

Պարգևատրվել է Լիբանանի Հանրապետության «Մայրիների՝ ասպետական կարգի» շքանշանով (2007թ.), «Լիբանանի հայ օգնության խաչ» միության ոսկե շքանշանով և Հայոց թեմի առաջնորդ Արամ արքեպիսկոպոս Քեշիշյանի (ներկայումս՝ Արամ Ա կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ) «Օրհնութեան Գիր»-ով (Բեյրութ, 1993թ.): 1999թ-ին հրապարակային հանդիսությամբ մեծարվել է «Համագգային հայ կրթական և մշակութային միության» կողմից՝ ստանալով Արամ Ա կաթողիկոսի «Օրհնութեան Գիր»-ը:

2007թ. Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաթերթի» տվյալների հիման վրա



ՇԱՀԳԻԼԴՅԱՆ Վահան

SHAHGILDIAN Vahan

Ռադիոէլեկտրոնիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի մասնագետ, գյուտարար: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի անդամ: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ: Ռուսաստանի Դաշնության պետական մրցանակների դափնեկիր և գիտության վաստակավոր գործիչ: Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է 1935թ. փետրվարի 28-ին: Նրա հայրը՝ խորհրդային պետական գործիչ Վահան Շահգիլդյանը, որի ծնողները 1915թ. Մեծ եղեռնի զոհեր էին, 1937թ. Խորհրդային Միությունում ստալինյան բռնությունների զոհ դարձավ, իսկ ընտանիքը ենթարկվեց հալածանքների:

Գերագնացության դիպլոմով ավարտել է Մոսկվայի կապի էլեկտրատեխնիկական ինստիտուտը (1957թ.): Սովորել է նույն հաստատության ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում՝ ստանալով տեխնիկական գիտությունների թեկնածուի, ապա դոկտորի աստիճան և պրոֆեսորի կոչում:

Աշխատել է Մոսկվայի կապի էլեկտրատեխնիկական ինստիտուտում իբրև գիտահետազոտական բաժնի ճարտարագետ-նախագծող (1957-70թթ.), ապա ռադիոհաղորդման սարքերի ամբիոնի վարիչ, միաժամանակ ղեկավարելով երկու գիտական լաբորատորիա (1970-87թթ.): Իբրև ռեկտոր (1987-2005թթ.) ղեկավարել է Մոսկվայի կապի էլեկտրատեխնիկական ինստիտուտը (1992թ ին այն վերակազմավորվեց և վերանվանվեց իբրև Մոսկվայի կապի և տեղեկատվության տեխնիկական

համալսարան): Ներկայումս Մոսկվայի կա-
պի և տեղեկատվության տեխնիկական հա-
մալսարանի հոգաբարձուների խորհրդի
նախագահն է:

Հեղինակ կամ համահեղինակ է երկու
տասնյակից ավելի գյուտերի, մեծ թվով
հոդվածների, մենագրությունների և դա-
սագրքերի բարձրագույն մասնագիտական
ուսումնական հաստատությունների հա-
մար: Սինխրոնիզացված հեռահաղորդակ-
ցության համակարգերի գիտական դպրո-
ցի հիմնադիրն է: Ռադիոհաղորդիչ սարքե-
րի վերաբերյալ երեք դասագրքի (որոնք ու-
նեցել են բազմաթիվ հրատարակություն-
ներ), ռադիոհաղորդիչ սարքերի նա-
խագծման մասին չորս ձեռնարկի, փուլա-
յին սինխրոնիզացման մասին 10 մենագրու-
թյան և ռադիոտեխնիկայի, ռադիոկապի,
տեղեկատվական համակարգերի վերա-
բերյալ գիտական այլ հրատարակումների
հեղինակն է կամ գլխավոր խմբագիրը:

Հայաստանի Հանրապետության գի-
տությունների ազգային ակադեմիայի ար-
տասահմանյան անդամ է (2005թ.): Ռու-
սաստանի գիտությունների ակադեմիայի
թղթակից-անդամ է: Էլետրական և էլեկտ-
րոնային ճարտարագիտության ինստի-
տուտի (միջազգային հաստատություն)
ընտրված անդամ է: Անդամ է Ռուսաստա-
նի ճարտարագիտական ակադեմիայի,
Տեղեկատվության միջազգային ակադեմի-
այի: Ռուսաստանի ռադիոտեխնիկայի,
էլեկտրոնիկայի և կապի Պոպովի անվան
գիտատեխնիկական ընկերության նախա-
գահն է: Ռուսաստանի գիտությունների
ակադեմիայի Տեղեկատվական-հաղոր-
դակցական ոլորտի մասնագետների
պատրաստման գիտական խորհրդի քար-
տուղարն է և նույն ակադեմիայի Նանո-
տեխնոլոգիայի և տեղեկատվական տեխ-
նոլոգիաների, ինչպես նաև Կիբերնետի-
կայի գիտական խորհրդի անդամ: Ռու-
սաստանի Դաշնության բազմաթիվ պե-
տական-գերատեսչական մարմինների
խորհուրդների անդամ է:

Նրա ստացած բազմաթիվ պարգևների
և կոչումների թվում են Ռուսաստանի Դաշ-
նության «Պատվո նշան» շքանշանը
(2002թ.), Ռուսաստանի Դաշնության գի-

տության վաստակավոր գործչի կոչումը,
Ռուսաստանի Դաշնության երկու պետա-
կան մրցանակները, Ռուսաստանի կառա-
վարության «Պատվոգիրը» (2005թ.), Մադ-
րիդի տեխնիկական համալսարանի պատ-
վավոր դոկտորի կոչումը, Հայաստանի
Հանրապետության գիտությունների ազ-
գային ակադեմիայի «Ոսկե մեծ մեդալը»,
Հայաստանի Հանրապետության գիտու-
թյունների ազգային ակադեմիայի պատ-
վավոր դոկտորի կոչումը և այլն:

2008թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների
տվյալների հիման վրա



ՇԱԿՆԱԶԱՐՈՎ Կարեն

SHAKHNAZAROV Karen

Կինոբեմադրիչ, սցենարիստ: «Մոս-
ֆիլմ» կինոարտադրության կոնցերնի
գլխավոր գործադիր տնօրեն: Ռուսաստա-
նի ժողովրդական արտիստ: Մոսկվա, Ռու-
սաստանի Դաշնություն: Ծնվել է 1952թ.
հուլիսի 9-ին Կրասնոդարում: Գրեգորի և
Աննա Շահնագարովների որդին է (Գրեգո-
րի Շահնագարովը հայազգի հայտնի քա-
ղաքագետ և քաղաքական գործիչ էր):
Անուսնացել է Դարիա Իգորովնա Մայորո-
վայի հետ, դուստրը՝ Աննա, որդիները՝
Իվան և Վասիլի:

Ավարտել է Մոսկվայի կինեմատոգրա-
ֆիայի պետական ինստիտուտը (1975թ.):

«Մոսֆիլմ» կինոստուդիայում եղել է կի-
նոբեմադրիչի օգնական (1973-75թթ.),
ապա կինոբեմադրիչ (սկսած 1976թ-ից):
Ղեկավարել է նույն հաստատության «Կու-
րիեր» ստուդիան (սկսած 1991թ-ից):
Նշանակվել է «Մոսֆիլմ» կինոկոնցերնի
գլխավոր գործադիր տնօրեն (1998թ):

Նրա լավագույն գործերից հիշարժան
են «Մենք ջազից ենք» (1983թ., արժանա-
ցել է Գրեմմիի կինոփառատոնի հատուկ
մրցանակի՝ 1984թ-ին), «Չմեռալին օրերը
Գագարյում» (1985թ.), «Կուրիեր» (1985թ.,
արժանացել է Մոսկվայի կինոփառատոնի
ոսկե և հատուկ մրցանակների՝ 1987թ-ին),
«Չերո քաղաքը» (1988թ., արժանացել է
Բելգամոյի կինոփառատոնի «Բրոնզե
վարդ» մրցանակի՝ 1990թ-ին, Չիկագոյի
կինոփառատոնի գլխավոր մրցանակի՝
1989թ-ին, Գիտական և ֆանտաստիկ ֆիլ-
մերի եվրոպական միության մրցանակի՝
1989թ-ին, Սան Մարինոյում), «Յարաս-
պանը» (1991թ., արժանացել է Կաննի կի-
նոփառատոնի «Ոսկե արմավ» մրցանա-
կի՝ 1991թ-ին և «Նիկա» մրցանակի՝ 1992
թ-ին), «Ամերիկացու աղջիկը» (1995թ.,
արժանացել է Շանհայի միջազգային կի-
նոփառատոնի ժյուրիի հատուկ մրցանա-
կի՝ 1995թ-ին) «Լիալուսնի օրը» (1998թ.,
արժանացել է Կարլովի Վարիի կինոփա-
ռատոնի «Բյուրեղյա երկրագնդի» և հա-
տուկ մրցանակի, «Նիկա» մրցանակների
երեք անվանակարգում՝ 1999թ-ին), «Թույ-
ներ կամ թունավորման համաշխարհային
պատմություն» (2001թ., արժանացել է
Կարլովի Վարիի կինոփառատոնի «Բյու-
րեղյա երկրագունդ» մրցանակի՝ 2001
թ-ին), «Մահ անունով ձիավորը» (2004թ.,
արժանացել է Մոնրեալի կինոփառատոնի
«Գրան պրի» մրցանակի՝ 2004թ-ին),
«Կայսրության անհետացումը» (2008թ.):
Կինոարտադրությանը մատուցած մեծ ծա-
ռայությունների համար արժանացել է Կա-
հիրեի միջազգային կինոփառատոնի «Ոս-
կե բուրգ» մրցանակի (2005թ.): Հեղինակն
է «20-րդ դարը կադրի մեջ և նրանից
դուրս» հեռուստատեսային հաղորդաշարի
(1994-95թթ.)

Անդամ է Ֆիլմերի եվրոպական ակադե-
միայի, Ռուսաստանի կինեմատոգրա-
ֆիստների միության: Ընտրվել է Ռուսաս-
տանի Դաշնության հանրային պալատի
անդամ:

Նրա ստացած պարգևների թվում են
Ռուսաստանի ժողովրդական արտիստի
կոչումը (2002թ.), Ռուսաստանի Դաշնու-
թյան պետական մրցանակի դափնեկրի

կոչումը (2003թ.), Ռուսաստանի արվեստի
վաստակավոր գործչի կոչումը, (1997թ.),
Լենինյան կոմերիտմիության մրցանակը
(1986թ.), Ռուսաստանի Վասիլև եղբայր-
ների անվան մրցանակը (1988թ.) և այլն:

2008թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների
տվյալների հիման վրա



ՇԵՐ

CHER

Երգչուհի, դերասանուհի, բեմադրիչ, բա-
րեգործ: Ամերիկյան կինոարվեստների և
գիտությունների ակադեմիայի մրցանակի
(«Օսկարի»), «Էմմի», «Գրեմմի», «Ոսկե
գլոբուս» (բազմակի) և այլ միջազգային
մրցանակների դափնեկիր: Կալիֆոռնիա,
ԱՄՆ: Ծնվել է 1946թ. մայիսի 20-ին Էլ
Սենտրոյում (Կալիֆոռնիա, ԱՄՆ): Ծննդով՝
Սարգսյան (*Սարգիսյան*) Շերիլին: Չոն
Սարգսյանի (*Սարգիսյան*) և Չորջիա Հոլ-
տի դուստրն է (որոնք ամուսնալուծված են
եղել նրա ծննդյան ժամանակ, և նա հորը
ճանաչել է 11 տարեկանից սկսած): Ամուս-
նացել է Սոննի Բոնոյի հետ (ամուսնալուծվել
է 1974թ-ին) և Գրեգ Օլմանի հետ (ամուսնա-
լուծվել է 1977թ-ին), դուստրը՝ Չեստիտի Բո-
նո և որդին՝ Էլայջա Բլյու Օլման:

Թողարկել է երգերի 25 հավաքածու
(ձայնասկավառակ): Առաջին ձայնասկա-
վառակը թողարկել է իր ամուսնու հետ՝
Սոննի և Շեր "I Got You Babe" անվանու-
մով (1965թ.), որին հաջորդել են այլ ալբոմ-
ներ՝ "All I Really Want To Do" (1965թ.),
"The Sonny Side of Cher" (1966թ.), "With
Love, Cher" (1968թ.), "Backstage" (1968թ.),
"3614 Jackson Highway" (1969թ.) "Foxy
Lady" (1972թ.), "Prisoner" (1980թ.): Նրան

լայն ճանաչում է բերել «Սոննիի և Շերի երգիծանքի ժամ» հեռուստատեսային շոու-ծրագիրը («Սի Բի Էս» հեռուստակայանով, 1970-74թթ., 1974թ-ին արժանացել է «Ոսկե գլոբուս» մրցանակի հեռուստատեսային ելույթների համար), որը շարունակվել է իբրև «Սոննիի և Շերի շոու» (1976-77թթ.): Երկար ընդմիջումից հետո շարունակել է թողարկել նոր հավաքածուներ՝ “I Paralyze” (1987թ.), “Belive” (1998թ., արժանացել է «Գրեմմի» մրցանակի՝ լավագույն պարային երգի համար), “Living Proof” (2001թ.) և այլն, որոնք բոլորն էլ մեծ հաջողություն են ունեցել ամբողջ աշխարհում: Միայն “Love Hurts” հավաքածուի 3 միլիոն օրինակը սպառվել է մի քանի շաբաթում (1991թ.): Նրա երգերը հիմնականում ամերիկյան պոպ և ռոք ժանրի երաժշտությանն են պատկանում: Ընդհանուր առմամբ աշխարհում վաճառվել է նրա երգերի մոտ 270 միլիոն ձայնասկավառակ:

Նկարահանվել է Նիկոլսի «Սիլվիոյ» (1983թ., արժանացել է Կաննի կինոփառատոնի «Լավագույն դերասանուհու մրցանակի»), Պ. Բոզոգանովիչի «Դիմակ» (1985թ., արժանացել է «Ոսկե գլոբուս» մրցանակի), Ջեյսոնի «Լուսնի լույսով հմայվածները» (1987թ., արժանացել է Ամերիկյան կինոարվեստների և գիտությունների ակադեմիայի մրցանակի՝ «Օսկարի», «Ոսկե գլոբուս» և ԲԱՖՏԱ մրցանակների), «Ջիմմի Դին» (1982թ., արժանացել է «Ոսկե գլոբուս» մրցանակի՝ Սիսի դերի համար), Ջեֆֆրեյի «Թեյ Մուսոլինիի հետ» (1999թ.), Միլերի «Իստվիկյան կախարդուհիներ» (1987թ.), Բենջամինի «Ջրահարս» (1990թ.) և այլ ֆիլմերում: Իբրև բեմադրիչ դրվագներ է բեմադրել «Եթե պատերը կարողանային խոսել» ֆիլմում՝ մասնակցելով նաև իբրև դերասանուհի (1996թ., արժանացել է «Ոսկե գլոբուս» մրցանակի): Հեղինակն է «Առաջին անգամ» գրքի (1998թ.), որի մեջ պատմում է իր անցած դժվարին ուղու մասին մինչև ճանաչման արժանանալը: Ֆուտբոլի

«Սուպերգավաթի» մրցումների փակման արարողությանը բազմամիլիոն հեռուստատեսային լսարանի համար երգել է ԱՄՆ-ի օրհներգը (1998թ.): 2002-2005թթ. աշխարհի բազմաթիվ քաղաքներում (մոտ 20 երկրում) հրաժեշտի համերգային շրջագայությանը ունեցել է 325 ելույթ՝ թողարկելով “Living Proof – A Farewell Tour” սկավառակը, որն արժանացել է «Էմմի» մրցանակի 2003թ-ին: Ներկայումս համերգներով հանդես է գալիս Լաս Վեգասում (2008թ-ից):

Մեծագույն միջադարձություններ է կատարել բարեգործական բազմաթիվ հաստատությունների: Անդամակցել է Գանգի և դեմքի խախտումներ ունեցող երեխաներին օգնող ընկերությանը (1985թ.): Իր ներդրումն է ունեցել 1988թ. Սպիտակի և Լենինականի երկրաշարժի տուժածներին մարդասիրական օգնություն տրամադրելու աշխատանքներում: Մասնակցել է Հայաստանին և Լեռնային Ղարաբաղին տրվող մարդասիրական օգնությանը (1993թ.): Կաննի միջազգային կինոփառատոնում կազմակերպել է դրամահավաք՝ Իմունային անբավարարության ուսումնասիրությունների ամերիկյան ընկերությանը օգնելու նպատակով (Էլիզաբեթ Թեյլորի հետ, 1998թ.): Հիմնել է «Շեր բարեգործական հիմնադրամ» հաստատությունը՝ աջակցելով հիվանդներին, հաշմանդամներին, սննդագուրկ երեխաներին և այլն:

Բացի վերոհիշյալներից, արժանացել է նաև բազմաթիվ այլ մրցանակների, այդ թվում երկու Բրիտանական ակադեմիական մրցանակի, Իտալական ակադեմիական մրցանակի, «Լեգենդ» միջազգային երաժշտական փառատոնի մրցանակի (1998թ.), Ժողովրդական ընտրության մրցանակի: Հոլիվուդի «Աստղերի արահետում» դրվել է «Սոննի և Շեր» աստղը՝ հեռուստատեսության զարգացմանը նրանց մատուցած ծառայությունների համար (1998թ.):

2008թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա

Ո



ՈՍԿԱՆՅԱՆ Վարուժան

VOSGANIAN Varujan

Քաղաքական գործիչ, տնտեսագետ, գրող: Ռումինիայի Հանրապետության տնտեսության և առևտրի նախարար: Սենատոր: Բուխարեստ, Ռումինիայի Հանրապետություն: Ծնվել է 1958թ-ին Կրայիովայում (Ռումինիա): Անուսնացած է Միխայելա Ոսկանյանի հետ, ունի մեկ դուստր՝ Արմինե:

Ավարտել է Բուխարեստի տնտեսական հետազոտությունների ակադեմիայի առևտրի ֆակուլտետը (1982թ.), Բուխարեստի համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետը (1991թ.): Տնտեսական հետազոտությունների ակադեմիայում ստացել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան տնտեսագիտության ասպարեզում (Բուխարեստ, 1991թ.): Ռումինիայի տնտեսագիտության ազգային ինստիտուտի ավագ գիտաշխատող է: Դասավանդում է Բուխարեստի տնտեսական հետազոտությունների ակադեմիայի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում:

Ազգային լիբերալ կուսակցության անդամ է: Առաջնորդել է «Աջ ուժերի միություն» կուսակցությունը, որը հետագայում միավորվել է «Ազգային լիբերալ կուսակցության» հետ: Եղել է «Ազգային լիբերալ կուսակցության» մամուլի խոսնակը և նրա ղեկավար հանձնախմբի անդամ (1996-2004թթ.):

Ընտրվել է Ռումինիայի Հանրապետության Պատգամավորների պալատի անդամ (1990-92 և 1992-96թթ.), եղել է Ազգային փոքրամասնությունների խորհրդարանական խմբի ղեկավարը (1992-95թթ.) և Ազգային փոքրամասնությունների խորհրդի անդամ (սկսած 2003թ-ից): Ռումինիայի Հանրապետության սենատոր է: Նախագահում է Բյուջետային, Ֆինանսական, Բանկային գործունեության և Շուկայական արժեթղթերի հանձնախմբերում (1996-2000թթ. և 2004-2008թթ.): Եվրոպայի Խորհրդում Ռումինիայի պատվիրակության անդամ է և Եվրոպայի Խորհրդի պարլամենտական համաժողովի Քաղաքական և Տնտեսական հանձնախմբերի անդամ (սկսած 2004թ-ից): Եղել է Ազգային ռազմավարության հանձնախմբի («Ազգային լիբերալ կուսակցության» և «Արդարություն և ճշմարտություն» միության ղաշինքի) համակարգողը՝ (2003-05թթ.):

Հեղինակ է մի շարք գրքերի և մոտ 500 տնտեսագիտական, քաղաքական և գրականագիտական հոդվածի, ինչպես նաև բանաստեղծությունների և արձակ ստեղծագործությունների: Նրա քաղաքական-հրապարակախոսական աշխատություններից հիշարժան է «Ռումինական աջերը՝ ավանդույթներ և արդիականություն» («Նեմիրա», 2001թ.) մենագրությունը, տնտեսագիտական աշխատություններից՝ «Շուկայական տնտեսությանն անցնելու հակասությունները» (Բուխարեստ, 1994թ.), «Ճակատի գծի լրագիր» (Բուխարեստ, 1994թ.), «Ֆինանսական շուկայի բարենորոգումը» («Պոլիտոմ», Իազի, 1999թ.), գրական ստեղծագործություններից՝ «Կապույտ կախարհը» (բանաստեղծություններ, «Արարատ», Բուխարեստ, 1994թ.), «Հրամանատարի արձանը» (արձակ, «Արարատ», Բուխարեստ, 1994թ.): Նրա մի շարք ստեղծագործություններ քարգմանված են անգլերեն, իսպաներեն,

ռուսերեն, ուկրաիներեն և հայերեն լեզուներով: Նրա «Թագուհու սառը նայվածքը» բանաստեղծական ժողովածուն (Բուխարեստ, 2002թ.) գնահատանքի է արժանացել՝ ներկայացվելով Ամերիկյան թարգմանական գրականության ընկերության հոբելյանի առիթով (Չիկագո, 2002թ.): Նրա տեսակետները շարադրված են նաև Դիանա Կորիսիուկի «Երկխոսություն Վարուժան Ոսկանյանի հետ» հարցազրույցում («Կլուծ-Նապոկա», 2000թ.):

Ռուսիների հայերի միության նախագահն է (սկսած 1990թ-ից): Եղել է Եվրոպական քաղաքական հետազոտությունների միջազգային փորձագիտական խորհրդի անդամ (Բրյուսել, 1992-95թթ.): Ռուսիների կանխատեսումների ազգային ինստիտուտի գիտական խորհրդի պատվավոր անդամ է: Ռուսիների սոցիոլոգիական միության հիմնադիր անդամներից է: Մասնակցել է Միավորված ազգերի կազմակերպության, Միջազգային դրամական հաստատության, Եվրոպական անվտանգության և համագործակցության կազմակերպության, Համաշխարհային բանկի, Չարգացման և վերակառուցման

Եվրոպական բանկի և այլ միջազգային կազմակերպությունների խորհրդատուներին: Ռուսիների գրողների միության անդամ է և այլ միության փոխնախագահը (սկսած 2005թ-ից): Ռուսիների կատակասերների ընկերության անդամ է:

Արժանացել է «Լավագույն արձակ ստեղծագործության համար» Ռուսիների գրողների միության 1994թ. տարեկան մրցանակի (Բուխարեստ), Նիկիտա Ստալինի անվան քնարերգության միջազգային փառատոնի հատուկ մրցանակի (2006թ.), Ռուսիայում արժեքների շուկայի զարգացմանը բերած նպաստի համար հատուկ մրցանակի («Սիբիրու Ստոկ Էքսչեյնջ», 2005թ.), «Արժեքների շուկայի մրցանակի»՝ արժեքների շուկայի զարգացման համար (2005թ.), Ռուսիայի գիտությունների ակադեմիայի մրցանակի՝ գիտության և մշակույթի զարգացմանը բերած ներդրման համար (2006թ.), Վասիլ Գոլդիսի անվան համալսարանի և Լեյբնիցի անվան համալսարանի (Միլան) պատվավոր դոկտորի կոչման (2006թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ՉԱՔՍԱԲՉՅԱՆ Արտուր

TCHAKMAKTCHIAN Arto
CHAKMAKCHIAN Arto

Քանդակագործ: Կանադայի թագավորական ակադեմիայի անդամ: Մոնրեալ, Քվեբեկ, Կանադա: Ծնվել է 1933թ. հունիսի

23-ին Հելիոպոլիսում (Եգիպտոս): Ամուսնացել է Նաիրի Պահլավունու հետ:

Ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի քանդակագործության բաժինը (1961թ.):

Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Սոֆիայի գեղարվեստի թանգարանում (Բուլղարիա, 1968թ.), Երևանի ֆիզիկայի ինստիտուտում (ականավոր գիտնական Արտեմ Ալիխանյանի հովանավորությամբ, 1970թ.), Լենինգրադի գեղարվեստի թանգարանում (1971թ.), Օքսֆորդի Բալիոլ քոլեջում (Մեծ Բրիտանիա, 1976թ.), Կալիֆոռնիայի Բերկլիի համալսարանում (1981թթ.), Նյու Ջերսիում (1982թ.), Մոնրեալի արվեստների հրապարակում (1979թ.

և 1984թ., այստեղ 1989թ-ին ցուցադրվել է նաև նրա կերտած Վիլֆրիդ Պելլետիերի կիսանդրին համանուն սրահում), Մոնրեալի Բրոնֆման կենտրոնում (1990թ.) և այլն: Մասնակցել է նաև Լուվրի թանգարանի «Հայաստանն Ուրարտուից մինչև մեր օրերը» արվեստի ցուցահանդեսին (Փարիզ, 1970թ.), Բոխումում «Հայկական քաղաքակրթություն և արվեստ» ցուցահանդեսին (Գերմանիա, 1995թ.), Փարիզում, Նանտում, Պոնտիվիում և այլն՝ «Ժամանակակից հայ արվեստ» ցուցահանդեսներին (1995թ.): Դասավանդել է Մոնրեալի համալսարանի արվեստի դպրոցում:

Նրա ստեղծած նշանակալից գործերի թվում են «Հայտիկ» (1960թ.), «Կոմիտաս» (մի քանի տարբերակներով, 1961-65թթ.), «Հիրոսիմա» (1964թ.), «Մտածողը» (1965թ.), «Ազատություն» (1965թ.), «Նարեկացի» (1969թ.), «Մորս դիմաքանդակը» (1965թ.) ստեղծագործությունները, Հարություն Կալենցի (1966թ.) և Կոստան Չարյանի դիմաքանդակները (1968թ.) «Մարդկային վիճակներ» գրաֆիկական շարքը (1970-ական թթ.), Լևսեկ Կոլակովսկու, Ալեն Մոնտեֆորի, Ժան Ֆրանսուա Լիոտարի, Շառլ Թեյլորի, Ռեյնոն Կիբանսկու, Սրբ Փիթր Մալավարի (Մեծ Բրիտանիայի արքայական ակադեմիայի պատվերով), Հանս Գեորգ Գադամերու (կիսանդրին այժմ տեղադրված է Հայդելբերգի գիտությունների ակադեմիայում) կիսանդրի դիմաքանդակները (1970-80-ական թթ.): 1969թ ին Կոմիտասի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ Երևանում, Կոմիտաս պողոտայի սկզբնամասում գտնվող զբոսայգում, սեփական ձեռքերով կանգնեցնում է Կոմիտասի գիպսե արձանը: Կարճ ժամանակ անց արձանը ոչնչացվում է իշխանության մարմինների կողմից: Դետրոյտ քաղաքի կենտրոնական հրապարակներից մեկում դրված է նրա կերտած «Կոմիտասի» (գրանիտ և բրոնզ) 6-մետրանոց արձանը (1981թ.), Տորոնտոյում՝ «Վերածնունդ» չորս մետր բարձրությամբ բրոնզաձուլյ արձանը:

«Քարտ Բլանշ» հրատարակչությունը լույս է ընծայել նրա ստեղծագործությունների «Արտո Չարմաքչյան» ընդարձակ

ալբոմը (Ժակ Պուլենի առաջաբանով և Վիեննայի գեղարվեստի ակադեմիայի պրոֆեսոր Կարպիս Քորթյանի ընդարձակ առաջաբան-ուսումնասիրությամբ, 2003թ.): Նրա «Դիմապատկերներ» ալբոմն ընդգրկում է 60-ական թվականների հայագի բազմաթիվ նշանավոր անհատների՝ Երվանդ Քոչարի, Գուրգեն Մահարու, Ավ. Իսահակյանի, Մարտիրոս Սարյանի, Վազգեն Ա կաթողիկոսի, Մինաս Ավետիսյանի, Կոստան Չարյանի, Օհան Դուրյանի, Տիգրան Մանսուրյանի և այլոց դիմանկարները մեկնաբանություն-մակագրություններով (Երևան, 2006թ.):

Ընտրվել է Կանադայի թագավորական ակադեմիայի անդամ (1991թ.):

Արժանացել է բազմաթիվ մրցույթների հաղթողի և մրցանակակրի կոչման, այդ թվում ժամանակակից կերամիկական արվեստի ցուցահանդեսի առաջին մրցանակի (Պրահա, 1962թ.), Հերոսիմայի զոհերի հիշատակին Խորհրդային Միության խաղաղության պսիպանման կոմիտեի կազմակերպած ցուցահանդեսի առաջին մրցանակի («Հերոսիմա» հուշարձանը Խորհրդային Միության կողմից նվիրվել է Հերոսիմա քաղաքի զոհերի հուշահամալիրին, 1964թ.), Հայկական ԽՍՀ պետական մրցանակի՝ ժամանակակից հայ քանդակագործության ցուցահանդեսում «Քանդակագործի մայրը» և «Արևո Բաբաչանյան» քանդակների համար (դրանք այժմ ցուցադրվում են Տրեոյակովյան պատկերասրահում, Մոսկվա, 1968թ.), Վիլֆրիդ Պելլետիերի կիսանդրու համար մրցույթի հաղթողի կոչման (1984թ.), «Թեբեյան» մշակութային միության մրցանակի՝ «Քայլող մարդը» քանդակի համար (2005թ.) և այլն: Պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության «Մովսես Խորենացի» մեդալով (2004թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ՉԵՔԻԾՅԱՆ Հովհաննես

TCHEKIDJIAN Hovannes

Գիրիժոր, երգահան: Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր: Հայաստանի Հանրապետության և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ: Երևանի Կոմիտասի անվան երաժշտանոցի պրոֆեսոր: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է 1928թ. դեկտեմբերի 28-ին Ստամբուլում (Թուրքիա): Հայրանունը՝ Հարություն:

Ուսանել է Կ. Պոլսի Մխիթարյան վարժարանում, «Սեն-Միշել» քոլեջում, Ստամբուլի երաժշտանոցում, ապա Փարիզում՝ ստանալով քիմիկոս-ճարտարագետի, ինչպես նաև դիրիժորի («Էբոլ նորմալ դե մյուզիք») մասնագիտական վկայականներ (1954թ.): Այնուհետև երաժշտական կրթությունը կատարելագործել է Ստամբուլի երաժշտանոցում: Ղեկավարել է Ստամբուլի օպերային թատրոնի երաժշտական բաժինը և Ստամբուլի պետական երգչախումբը (1958-61թթ.):

Իբրև գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր ղեկավարում է Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը (սկսած 1961թ-ից): Պաշտոնավարել է իբրև Երևանի Օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի տնօրեն և գեղարվեստական ղեկավար (1982թ.): Երևանի Կոմիտասի անվան պետական երաժշտանոցի պրոֆեսոր է (սկսած 1982թ-ից):

Նրա ղեկավարությամբ Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը, բացի Հայաստանից, մոտ 800 համերգային ելույթ է ունեցել աշխարհի բազմաթիվ բեմերում, այդ թվում Փարիզի «Պալե դե Կոնգրե», «Լա Սալ Պլիել», «Տեստր դե

Շանգ Էլիզե», Լոնդոնի Էլիզաբեթ Թագուհու անվան, Վեստմինստերյան և «Սենտրալ», Պրահայի «Սալ Սնետանա», Նյու Յորքի «Ավերի Ֆիշեր Հոլ», Բոստոնի «Սիմֆոնի Հոլ», Լոս Անջելոսի «Սքոտիշ Ռայդ Աուդիտորիում», Դետրոյտի «Օրկեստրա Հոլ» համերգասրահներում, Մոսկվայում, Սամկո Պետերբուրգում, նախկին Խորհրդային Միության հանրապետությունների մայրաքաղաքներում և այլն: Երգչախմբի համերգացանկն ընդգրկել է ավելի քան 700 երաժշտական ստեղծագործություն՝ կատարված աշխարհի 27 լեզվով, 55 սիմֆոնիկ նվագախմբի նվագակցությամբ, այդ թվում Կոմիտասի, Եկմալյանի, Կարա-Մուրզայի, Ալան Հովհաննեսի, Բախի, Հենդելի, Մոցարտի, Վերդիի, Բեթհովենի, Չայկովսկու, Վագների, Բելլինիի, Շուբերտի և այլ դասականների բազմաթիվ խմբերգեր, շարականներ, օրատորիաներ, ռեքվիեմներ, կանտատներ և այլն:

Արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի (1975թ.) և ԽՍՀՄ ժողովրդական արտիստի կոչման (1978թ.): Նրա բազմաթիվ պետական պարգևների թվում են Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության և Գիտությունների ազգային ակադեմիայի ոսկե մեդալները (2007թ.): 2007թ-ին Երևանում հանդիսավորությամբ նշվել է նրա ղեկավարած երգչախմբի հիմնադրման 70-ամյակը: Երևանի պատվավոր քաղաքացի է (2001թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ Ջորջ

CHILINGARIAN George

Նավթային և բնապահպանական ճարտարագիտության պրոֆեսոր (Հարավային

Կալիֆոռնիայի համալսարան): Փիլիսոփայության դոկտոր երկրաբանության բնագավառում: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ: Կալիֆոռնիայի նահանգի վկայագրված երկրաբան և քիմիկոս: Լոս Անջելոս, Կալիֆոռնիա, ԱՄՆ: Ծնվել է 1929թ. հուլիսի 22-ին Թբիլիսիում: Վարոս և Կլավդիա Չիլինգարյանների որդին է: Ամուսնացած է Երա Չիլինգարյանի հետ, դուստրը՝ Էլեոնորա, որդիները՝ Մոդեստո և Մարկ:

Գերազանցությամբ ավարտել է Ալբորգի բարձրագույն դպրոցը Թեհրանում (Իրան): Այնուհետև ուսանել է Հարավային Կալիֆոռնիայի համալսարանում ստանալով գիտության պսակավորի գիտական աստիճան նավթային ճարտարագիտության ասպարեզում (ԱՄՆ, 1949 թ.): Նույն հաստատությունում նրան շնորհվել է մագիստրոսի գիտական աստիճան (1950թ.), իսկ 1956թ-ին փիլիսոփայության դոկտորի աստիճան երկրաբանության ասպարեզում՝ նավթային ճարտարագիտություն մասնագիտությամբ:

Պաշտոնավարել է իբրև նավթային և քիմիական լաբորատորիայի ղեկավար Ռայտ Պատերսոնի ռազմաօդային հենակայանում (Օհայո, ԱՄՆ, 1954-56թթ.): Եղել է Էլեկտրասոսնոսիկ միավորման նախագահը (Լոս Անժելոս, 1963-66թթ.), նաև ավագ խորհրդական «Ամչոն» նավթային ընկերությունում (1964-65թթ.): 1967-70թթ-ին զբաղեցել է Հանքային պաշարների միջազգային խորհրդատուների միավորման նախագահի պաշտոնը: ՄԱԿ-ի նավթային ճարտարագիտության գծով ավագ խորհրդական է (1967-69թթ-ին և սկսած 1978թ-ից): Միաժամանակ, սկսած 1950թ-ից, դասավանդել է Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի Նավթահանրապետության բաժնում: Եղել է այդ բաժնի պրոֆեսոր (1956-91թթ.), իսկ 1965-66թթ-ին ղեկավարել է այն: 1991թ-ից սկսած քաղաքացիական և նավթային ճարտարագիտության պրոֆեսոր է Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի Քաղաքացիական ճարտարագիտության բաժնում:

Հեղինակ է ավելի քան 500 գիտական հոդվածի և 65 գրքի՝ էլեկտրակենսաբանական-երկրաշարժային ռեմեդիացիայի, կորոզիայի, երկրակեղևում գազերի և հեղուկների տեղաշարժի, նավթային հորատանցման, նստվածքների միացման, նավթի և գազի հանքերի շահագործման, կարբոնատային հանքանյութերի հետազոտման բնագավառներում:

Եղել է Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի «Պի կապա պի» (1972թ. և 1981թ.) և «Քսի» (1974թ.) հանձնախմբերի նախագահը: Տնօրենն է «Տաու բետա ֆի» (սկսած 1996թ-ից) և խորհրդատու «Պի էպսիլոն տաու» (սկսած 1996թ-ից) հանձնախմբերի: Հանքային պաշարների միջազգային ակադեմիայի պատվավոր ակադեմիկոս է (Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն): Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ է (Երևան, 1993թ.): Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի անդամ է (միակը ամերիկյան երկրաբաններից, ով արժանացել է այս ակադեմիայի անդամակցությանը իր հիմնադրումից ի վեր, Մոսկվա, 1993թ.): Անդամ է Միջազգային ճարտարագիտական ակադեմիայի (1994թ.): Նախագահն է Հայ ճարտարագետների ակադեմիայի ԱՄՆ-ի մասնաճյուղի: Իտալիայի հանքաբանական ուսումնասիրությունների ակադեմիայի պատվավոր դոկտոր է: Հիմնադիրն է և համահրատարակիչը «Էներգիայի աղբյուրների ամսագիր» գիտական հանդեսի (սկսած 1974թ-ից): Խմբագիրն է «Նստվածքաբանական երկրաբանություն» գիտական հանդեսի: Հիմնադիրն է և գլխավոր խմբագիրը «Նավթաբանություն և ճարտարագիտություն» ամսագրի (սկսած 1986թ-ից):

Արժանացել է՝ Նեապոլի մշակույթի ինստիտուտի «Պատվո վկայագրի» (Իտալիա), Հնդկաստանի կառավարության «Շնորհակալագրի» (1967թ.), Բելգիայի «Սպայական խաչի», «Բացառիկների և արհեստավարժների պատվո սրահի» անդամակցության (ԱՄՆ, 1965թ.), Ամերիկայի երկրաբանական միության և Քիմիկոսների ամերիկյան ինստիտուտի պատվավոր անդամության կոչումների, Բարձրորակ մաս-

նագիտական դասավանդման համար Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի մրցանակի (1969թ.), «Նվաճումների համար» մրցանակի («Տաու բետտա ֆի» ճարտարագիտական միության կողմից, 1960թ. և 1970թ.), «Կարևոր նշանակության ծառայությունների համար» մրցանակի (Հարավային Կալիֆոռնիայի համալսարան, 1974թ. և 1976թ.), Նավթային ճարտարագետների միության «Նվաճումների համար» մրցանակի (ճարտարագիտական կրթության ասպարագում մատուցած ծառայությունների համար, 1984թ.), Կալիֆոռնիա նահանգի պատվավոր քաղաքացու կոչման (1998թ.), «Գնահատանքի» Մաուդյան Արաբիայի պետության կողմից (2001թ.), Ռուսաստանի «Գիտության և արվեստի ասպետի ոսկե շքանշանի» (2001թ.), «Արամկո» նավթային ընկերության «Շնորհակալագրի» (2002թ.), ոսկե շքանշանների՝ Իրանի, Հոնդուրասի, Տայվանի, Տաիլանդի, Մավադորի պետությունների և կառավարությունների կողմից:

2008թ. Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաթերթի» տվյալների հիման վրա՝ Ջ. Չիլինգարյանի խմբագրությամբ



ՉԻԼԻՆԳԱՐՈՎ Արթուր

CHILINGAROV Artur

Բնեռախույզ, քաղաքական գործիչ: Խորհրդային Միության և Ռուսաստանի Դաշնության կրկնակի ազգային հերոս: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ: Ռուսաստանի Պետական դումայի պատգամավոր և փոխնախագահ: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է 1939թ.

սեպտեմբերի 25-ին Լենինգրադում (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ): Հայրանունը՝ Նիկոլայ: Ամուսնացել է Տատյանա Ալեքսանդրովնա Չիլինգարովայի հետ, ունի մեկ որդի՝ Նիկոլայ, և մեկ դուստր՝ Զեսնիա:

Ավարտել է Լենինգրադի ծովակալ Մակարովի անվան ծովային ինստիտուտի արկտիկայի ֆակուլտետը (այժմ՝ Սանկտ Պետերբուրգի ծովային պետական ակադեմիա) օվկիանոսագիտություն մասնագիտությամբ (1963թ.): Ստացել է աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Սանկտ Պետերբուրգի ծովային պետական ակադեմիայի պատվավոր պրոֆեսոր է (2002թ.):

Որպես ճարտարագետ-օվկիանոսագետ աշխատել է Արկտիկայի և Անտարկտիդայի ուսումնասիրության ինստիտուտի Տիկսկի դիտակայանում (1963-65թթ.): Եղել է նախկին Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության Բուլոնսկի երկրամասի կոմիտեի քարտուղարը (1965-69թթ.): Ղեկավարել է Անտարկտիդայի հետազոտման խորհրդային 17-րդ արշավախումբը (1971թ.), այնուհետև «Հյուսիսային բևեռ-19» արշավախումբը (1971-73թթ.), «Վլադիվաստոկ» սառցահատի վրա կազմակերպել է «Հյուսիսային բևեռ-21» հետազոտական կայանը (1973-74թթ.): Պաշտոնավարել է իբրև Ադմերմիսկի տարածքի ջրերի, օդերևույթաբանության և շրջակա միջավայրի հսկողության ղեկավար (Արկտիկայի արևմտյան հատված, 1974-79թթ.): ԽՍՀՄ (այնուհետև Ռուսաստանի Դաշնության) ջրային-օդերևույթաբանական պետական կոմիտեում զբաղեցրել է զանազան պաշտոններ (1972-92թթ.)՝ «Միխայիլ Սոմով» նավի որոնման հատուկ փրկարարական արշավախմբի ղեկավար (Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում, 1985թ.), Կենտրոնական վարչության փոխնախագահ, Կենտրոնական Արկտիկայի վարչության նախագահ: Նշանակվել է ԽՍՀՄ Նախարարների խորհրդի Անտարկտիդայի և համաշխարհային օվկիանոսի բաժնի ղեկավար (1986թ-ից), «Սիբիր» սառցահատի վրա կազմակերպված գիտական արշավախմբի ղեկավար (այն 1987թ. մայիսի 25-ին հասել է երկրագնդի հյուսիսային բևեռը), Անտարկտիդայի բևեռակայանն-

րի տեսչական խմբի ղեկավար (1988թ.) և այլն: 2004թ-ին կազմակերպել և ղեկավարել է «Ռուսաստան-Մոնակո» արշավախումբը Իշխան Ալբերտ Երկրորդի մասնակցությամբ, որը շնասահմակներով հասել է հյուսիսային բևեռ: Ղեկավարել է դեպի Անտարկտիդա ռուսական ուղղաթիռների (2007թ.) և «Հյուսիսային բևեռ - 2007թ.» արշավախմբերը: Իրականացրել է Հյուսիսային բևեռում Ռուսաստանի Դաշնության դրոշի ամրացումը օվկիանոսի հատակին՝ 4261մ խորության վրա (2007թ.): 1992թ-ից ղեկավարում է Ռուսաստանի բևեռախույզների ընկերությունը: Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի անդամ է («Միացյալ Ռուսաստան» քաղաքական դաշինքի անդամ 1992թ-ից): Եղել է Պետական դումայի փոխնախագահը (1994-2007թթ.): Պաշտոնավարության ընթացքում եղել է Դումայի բազմաթիվ պետական հանձնախմբերի նախագահ, փոխնախագահ և անդամ:

Հեղինակ է 50-ից ավելի գիտական աշխատությունների Արկտիկայի և Անտարկտիդայի ուսումնասիրության հիմնախնդիրների (մասնավորապես սառցաշերտերի վրա բեռնման-բեռնաթափման), օվկիանոսագիտության, նավագնացության, աշխարհագրության և հարակից այլ գիտական բնագավառներում: Կազմակերպչական հանձնախմբի նախագահն է «Ճանապարհորդի միջազգային հանրագիտարան» հրատարակության:

Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ է (2008թ.): Միացյալ Թագավորության (Մեծ Բրիտանիայի) աշխարհագրական արքայական ընկերության իսկական անդամ է: Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ է: Անդամ է Բևեռախույզների միջազգային ակումբի (Նյու Յորք, ԱՄՆ): Միջազգային մարդասիրական օգնության և համագործակցության ընկերության համանախագահն է:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ է (սկսած 2003 թ-ից): Անդամ է «Հայաստան-Ռուսաստան» ընկերության:

Ստացել է Խորհրդային Միության հերոսի կոչում՝ ծայրահեղ ծանր պայմաններում

փրկարարական արշավախմբերի կազմակերպման, ղեկավարման և փրկարարական աշխատանքների իրականացման ընթացքում ցուցաբերած խիզախության համար (1985թ.), իսկ 2008թ-ին Ռուսաստանի Դաշնության ազգային հերոսի կոչում՝ ծայրահեղ դժվար պայմաններում ցուցաբերած քաջության և ստորջրյա «Արկտիկա-2007» արշավախմբի աշխատանքի հաջող իրականացման համար: Պարգևատրվել է ԽՍՀՄ «Լենինի», «Աշխատանքային կարմիր դրոշի», «Պատվո նշան» շքանշաններով և Հայաստանի Հանրապետության «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով (2008թ.): Արժանացել է Խորհրդային Միության պետական մրցանակի (1981թ.), Ռուսաստանի Դաշնության վաստակավոր օդերևույթաբանի կոչման (2005թ.), բազմաթիվ այլ պարգևների և կոչումների:

2007թ. Բաց տվագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՉԻԼԻՆԳԻՐՅԱՆ Լևոն

CHILINGIRIAN Levon

Չութակահար: «Չիլինգիրյան քառյակի» հիմնադիր և սոփոեն: Լոնդոնի թագավորական երաժշտանոցի պրոֆեսոր: Լոնդոն, Միացյալ Թագավորություն: Ծնվել է 1948թ. մայիսի 28-ին Նիկոզիայում (Կիպրոս): Լոնդոնում բնակվում է 1960թ-ից:

Ավարտել է Լոնդոնի թագավորական երաժշտանոցը (1971թ.): Համագործակցել է դաշնակահար Կլիֆորդ Բենսոնի հետ:

Հիմնադիրն ու ղեկավարն է «Չիլինգիրյան քառյակի» (Լոնդոն, 1971թ.), որը համերգներով շրջագայել է աշխարհի ավելի քան 50 երկրում և պարբերաբար հանդես է գալիս Լոնդոնի Էլիզաբեթ Թագուհու ան-

վան և «Վիզմոր» սրահներում, Եվրոպայի գրեթե բոլոր մեծ համերգասրահներում, երաժշտական փառատոներում և այլուր: Բառնայկի համերգացանկն ընդգրկում է Մոցարտի, Բեթհովենի, Շոպենի, Հայդնի, Դվորժակի, Պրոկոֆևի, Դեբյուսիի, Ռավելի, Գրիգի, Տավեների, Վուլֆի, Կոմիտաս-Ասլանազյանի և այլոց դասական ստեղծագործությունները: Հիշարժան են նաև «Չիլինգիրյան քառյակի» կատարումները «Բեթհովենյան» (Լոնդոն, Մելբուռն, Սիդնեյ) և «Շոպենյան» (Փարիզ) համերգային փառատոներում: Շվեդիայի «Կամերադա Նորդիկա» սիմֆոնիկ նվագախմբի զեղարվեստական ղեկավարն է (սկսած 1997թ-ից): Իբրև պրոֆեսոր դասավանդում է Լոնդոնի թագավորական երաժշտանոցում (սկսած 1986թ-ից): Իբրև հրավիրված ջութակահար համերգներով հանդես է եկել «Բի Բի Սի»-ի սիմֆոնիկ, Լիվերպուլի ֆիլհարմոնիկ, Բուրնմուտի, Շոտլանդիայի սիմֆոնիկ, Բերգենի ֆիլհարմոնիկ, Հայաստանի ֆիլհարմոնիկ, Ռուսաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբերի հետ: Ղեկավարել է «Վարպետության դասերը» («Մաստեր կլաս») «Բի Բի Սի»-ի հեռուստակայանի երիտասարդ երաժիշտ-կատարողների համար: Խմբագրել և հրատարակել է Էդվարդ Գրիգի «Կվարտետ ֆա մաժոր» անավարտ ստեղծագործությունը:

Հայաստանում կազմակերպել է Երիտասարդ ջութակահարների մրցույթներ (2000 և 2002թթ-ին):

«Բի Բի Սի»-ի բեթհովենյան (1969թ.) և Մյունխենի «Դյուտ» (1971թ.) լարային երաժշտական փառատոների ղափնեկիր է: Արժանացել է Կոբբետի մեդալի (Թագավորական ֆիլհարմոնիկ ընկերություն, 1995թ.): Պարզևատրվել է Բրիտանական Կայսրության շքանշանով՝ երաժշտական արվեստին մատուցած ծառայությունների համար (2000թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա:



ՉՈՐԲԱՆՅԱՆ Արամ

CHOBANIAN Aram

Բժիշկ-սրտաբան: Բժշկագիտության դոկտոր, Բոստոնի համալսարանի պատվավոր նախագահ և բժշկագիտության ակնառու պրոֆեսոր: Գիտությունների և արվեստների ակադեմիայի անդամ (ԱՄՆ): Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ: Նատիք, Մասաչուսեթս, ԱՄՆ: Ծնվել է Պոտակետում (Ռոդ Այլենդի նահանգ, ԱՄՆ) 1929թ-ի օգոստոսի 10-ին: Վահան Չոբանյանի և Մարինա Արսենյանի որդին է: Ամուսնացել է Ժասմին Գուրիգյանի հետ, երեխաները՝ Կարին, Լիզա, Արամ:

Ուսանել է Բրաունի համալսարանում՝ ստանալով արվեստների պսակավորի գիտական աստիճան (1951թ.): Այնուհետև ուսումը շարունակել է Հարվարդի համալսարանի Բժշկագիտության բարձրագույն դպրոցում, որտեղ նրան շնորհվել է բժշկագիտության դոկտորի կոչում (1955թ.): Պաշտոնավարել է Բոստոնի համալսարանական հիվանդանոցի Սրտանոթային հիվանդությունների հետազոտման բաժանմունքում և նույն համալսարանի Բժշկագիտության բարձրագույն դպրոցում (1955-62թթ.) իբրև համալսարանական պրոֆեսորի օգնական (1962-65թթ.), ապա փոխպրոֆեսոր (1968-71թթ.), այնուհետև բժշկագիտության (սկսած 1971թ-ից) և ղեկավարության (1975թ-ից) պրոֆեսոր: Ստացել է Ջոն Մանդսոնի անվան բժշկագիտության ակադեմիկոս պրոֆեսորի կոչում (1993թ.):

Ղեկավարել է Արյան զարկերակային գերճնշման բաժանմունքը Բոստոնի հա-

մալսարանի ղիվանդանոցում (1967-75թթ.): Եղել է Բոստոնի քաղաքային հիվանդանոցի սրտանոթային հիվանդությունների հանձնախմբի նախագահը (1970-72թթ.), այնուհետև Առողջապահության ազգային հաստատության Արյան զարկերակային գերճնշման մասնագիտացված կենտրոնի և Բոստոնի համալսարանի Սրտանոթային հիվանդությունների ինստիտուտի տնօրենը (1975-95): Ղեկավարել է Բոստոնի համալսարանի Բժշկագիտության բարձրագույն դպրոցը (1988թ-ից), իսկ 1997թ-ից՝ Բժշկագիտության կենտրոնը: 2003թ-ին ընտրվել է Բոստոնի համալսարանի հոգաբարձուների խորհրդի նախագահ: Ներկայումս Բոստոնի համալսարանի պատվավոր նախագահն է և նույն համալսարանի Բժշկագիտության բարձրագույն դպրոցի պատվավոր ղեկան (սկսած 2005թ-ից):

Հեղինակ է երկու մենագրության և վաղի քան 260 գիտական հոդվածի՝ սրտաբանության, մասնավորապես արյան զարկերակային գերճնշման և սրտանոթների կենսաբանության բնագավառում:

Առողջապահության ազգային ինստիտուտի Առողջության պահպանման միացյալ ազգային հանձնախմբի նախագահն է (արյան մշակման, փոխներարկման և զարկերակային գերճնշման ուսումնասիրության գծով): Նույն հաստատության սրտի, թոքերի և արյան մասնագիտական խորհուրդների անդամ է: Խմբագրական հանձնախմբի նախագահն է Մասաչուսեթսի բժշկական ընկերության և Նյու Ինգլանդի բժշկական հանդեսների: Ընդգրկված է «Ռոջերս Վիլյամս» բժշկական կենտրոնի, Արյան զարկերակային գերճնշման ազգային ընկերության և այլ հաստատությունների հոգաբարձուների խորհուրդների կազմում: Տնօրենների խորհրդի անդամ է Նյու Ինգլանդի Առողջապահության ինստիտուտի, Մասաչուսեթսի աշխատանքի և Մասաչուսեթսի տեխնոլոգիական ընկերությունների:

ԱՄՆ-ի գիտությունների և արվեստների ակադեմիայի անդամ է (2007թ.): Եվրոպա-

կան գիտությունների ակադեմիայի անդամ է (Բրյուսել 2002թ.): Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ է (1994թ.): Արյան գերճնշման ամերիկյան ընկերության անդամ է (1993թ.): Անդամ է Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի: Ամերիկայի հայկական համաժողովի նախագահն է: Հայ մշակույթի բարեկամների ընկերության անդամ է և հոգաբարձու: Երևանի պետական բժշկական համալսարանի միջազգային ղեկավար խորհրդի անդամ է:

Պարզևատրվել է «Էլիս Այլենդ» ամերիկյան մեդալով, Ամերիկյան սրտաբանների ընկերության «Պատվոգրով»՝ արյան զարկերակային գերճնշման ուսումնասիրությունների ասպարեզում ունեցած նվաճումների համար, «Ժամանակակից բժշկության զարգացման համար» մրցանակով (1990թ.), Արյան զարկերակային գերճնշման ուսումնասիրությունների ամերիկյան ընկերության Ադոտի անվան մրցանակով, Արյան զարկերակային գերճնշման ուսումնասիրության ազգային կրթական ծրագրի հանձնախմբի Ֆրես մրցանակով, Կլինիկական հետազոտությունների համար «Ոսկե մեդալով», Կլինիկական կենսաքիմիայի ամերիկյան ազգային ակադեմիայի մրցանակով՝ բժշկական նշանակալից ծառայության համար, Իստման Կողակի մրցանակով, Ամերիկյան բժիշկների միության «Ոսկե մեդալով», Ռոդ Այլենդի «Պատվո սրահի» անդամակցությամբ, Ամերիկյան բժիշկների Իսրայելում ունեցած հաջողությունների համար մրցանակով, Երևանի բժշկական համալսարանի «Ոսկե մեդալով», «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» մեդալով (Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա կաթողիկոսի կողմից), Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ոսկե մեդալով», Մարդասիրական գիտությունների պատվավոր դոկտորի կոչմամբ և այլն:

2007թ. Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաթերթի» տվյալների հիման վրա



ՉՈԲԱՆՅԱՆ Վլադիմիր

CHOBANIAN Vladimir

Հրթիռային տեխնիկայի ոլորտի մասնագետ: Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Պահեստագործի գեներալ-լեյտենանտ: Ռուսաստանի Դաշնության գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ: Ծնվել է 1938թ-ի փետրվարի 10-ին Բոգդանովկայի շրջանի Խոջաբեկ հայկական գյուղում (Ջավախք, Վրացական ԽՍՀ): Հայրանունը՝ Արշալույս:

Արժաթ մեդալով ավարտել է միջնակարգ դպրոցը Լենինականում (այժմ՝ Գյումրի): Ուսանել է Խարկովի բարձրագույն ավիացիոն-ճարտարագիտական զինվորական ուսումնարանում (ավարտել է 1960թ-ին): Արժանացել է տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի (1984թ.) և պրոֆեսորի կոչման (1990թ.):

Զինվորական ծառայությունն անցկացրել է հրթիռային զորամիավորումներում՝ Դաղստանում (1961-1963թթ.), Վիննիցայում (1967-71թթ.): Եղել է ԽՍՀՄ պաշտպանության նախարարության 4-րդ կենտրոնական ռազմական գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատող, ապա ավագ գիտաշխատող, այնուհետև լաբորատորիայի վարիչ և գիտական բաժնի ղեկավար (1971-89թթ.): Նշանակվել է Ձերժինսկու անվան ռազմական ակադեմիայի (այժմ՝ Պետրոս Մեծի անվան ռազմավարական նշանակության հրթիռային զորքերի ակադեմիա) գեներալի շահագործման ամբիոնի վարիչ (1989-92թթ.), ապա նույն ակադեմիայի հրամանատարի տեղակալ կրթության գծով (սկսած 1992թ-ից): Ստացել է գեներալ-լեյտենանտի զինվորական աստիճան (1995թ.):

Հեղինակ է երեք դասագրքի, վեց ուսումնական ձեռնարկի, մոտ 250 գիտական և գիտա-մեթոդական հրատարակման: Հիշարժան են նրա «Մեծ համակարգերի հուսալիության որոշման և ստուգման մեթոդներ» (1976թ.), «Ձեռքերի արդյունավետության գնահատման հավանական եղանակները» (1979թ.), «Շահագործման պահանջների որոշման և հսկողության մեթոդները բարդ համակարգերում» (2005թ.) և «Բարդ համակարգերի հեռանկարային շահագործման պրոցեսների մեթոդներ և մաթեմատիկական մոդելներ» (2005թ.) մենագրությունները: Հեղինակ է հատուկ նշանակության նոր զինատեսակների ստեղծման: Ի թիվս բազմաթիվ գիտական մշակումների, վերջին տարիներին իրականացրել է հեքսագենային պարունակության զինատեսակների ոչնչացման և նրանց անթափոն օգտագործման նոր եղանակներ:

Անդամ է Ռուսաստանի հրթիռային և հրետանային գիտությունների ակադեմիայի և հինգ այլ ակադեմիայի: Հիմնադիրն ու ղեկավարն է Հրթիռային և տիեզերական տեխնիկայի հիմնախնդիրների Պետրովսկի կենտրոնի: Ռուսաստանի Դաշնության Պետական դրամայի Կրթության և գիտության հանձնաժողովի «Ռազմական ուսուցման խնդիրների հասարակական խորհրդի» նախագահության անդամ է: Ռուսաստանի բարձրագույն որակավորող հանձնաժողովի «Ավիացիոն-հրթիռային և տիեզերական տեխնիկայի փորձագիտական խորհրդի» անդամ է:

Պարգևատրվել է Խորհրդային Միության և Ռուսաստանի Դաշնության 12 պատվո շքանշանով: Արժանացել է Ռուսաստանի Դաշնության գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ կոչման (1995թ.): Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի կողմից նրան շնորհվել է Ալֆրեդ Նոբելի անվան մեդալ՝ գիտական նվաճումների համար (2007թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյունների տվյալների հիման վրա



ՉՈԲԱՐՅԱՆ Ալեքսանդր

CHUBARIAN Alexander

Պատմաբան: Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի և Նորվեգիայի թագավորական ակադեմիայի անդամ: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է Մոսկվայում 1931թ. հոկտեմբերի 14-ին (հայրանունը՝ Օհան): Ամուսնացած է:

Ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանը (1955թ.):

Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտում ստացել է պատմական գիտությունների թեկնածուի (1959թ.), ապա դոկտորի (1968թ.) գիտական աստիճաններ: Արժանացել է պրոֆեսորի կոչման (1979թ.):

Եղել է Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի գիտաշխատող (1958-62թթ.), ապա գիտական քարտուղար (1963-66թթ.): Աշխատել է որպես Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի Պատմության բաժանմունքի գիտական քարտուղար (1966-73թթ.): Պաշտոնավարել է իբրև Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի Ընդհանուր պատմության ինստիտուտի բաժանմունքի վարիչ (1973-88թթ.), ապա տնօրեն (սկսած 1988թ-ից): Դասավանդել է ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարության Դիվանագիտական ակադեմիայում (1966-76թթ.): Հասարակական գիտությունների պետական համալսարանի ռեկտորն է (սկսած 1996թ-ից):

Հեղինակ է մոտ 300 հոդվածի, որոնք հիմնականում նվիրված են Եվրոպայի պատմությանը, նորագույն ժամանակների միջազգային հարաբերությունների պատ-

մությանը, գրքերի, այդ թվում «Բրեստի հաշտությունը. 1918թ.» (1963թ.), «Ստալինը և սառը պատերազմը» (անգլերենով լույս է տեսել 2002թ-ին), «Պատերազմի դաշնակիցները՝ խորհրդային, ամերիկյան և բրիտանական փորձը, 1939-45թթ.» (1993թ.), «Խաղաղության մշակույթը և ժողովրդավարությունը» (համահեղինակ, 1997թ.), բազմաթիվ դասագրքերի: Գլխավոր խմբագիրն է «Եվրոպայի պատմությունը» 6-հատորանի և «Խաղաղությունը 20-րդ դարում» (նաև համահեղինակ) աշխատությունների:

Անդամ է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի (2000թ-ից, թղթակից-անդամ՝ 1994թ-ից): Նորվեգիայի թագավորական ակադեմիայի արտասահմանյան անդամ է (1996թ-ից): Եղել է Ժամանակակից Եվրոպայի պատմության միջազգային ընկերության փոխնախագահը (1973թ), Պատմական գիտությունների միջազգային հանձնախմբի անդամ (1900-95թթ.) և նրա փոխնախագահը (1995-2000թթ.): Ռուսաստանի պատմաբանների ազգային հանձնախմբի նախագահն է: Անդամ է Ժամանակակից պատմական գիտությունների միջազգային համաժողովի հանձնախմբի և Ռուսաստանի Դաշնության նախագահին առընթեր գիտական խորհրդի: Ռուսաստանի Դաշնության կրթության նախարարության ուսումնական ծրագրերի գիտամեթոդական հանձնախմբի նախագահն է: Ռուսաստանի հնագետ-պատմաբանների ընկերության նախագահն է: Ռուսաստանի նախագահին առընթեր Գերմանիայի և Ռուսաստանի հարաբերությունների պատմության ուսումնասիրության հանատեղ հանձնախմբի համանախագահն է: Նրա ջանքերով են ստեղծվել Ռուս-ռումինական և Ռուս-ուկրաինական հարաբերությունների պատմության ուսումնասիրության հանատեղ հանձնախմբի համանախագահն է: Նրա ջանքերով են ստեղծվել Ռուս-ռումինական և Ռուս-ուկրաինական հարաբերությունների պատմության ուսումնասիրության միջկառավարական պետական հանձնախմբերը: Արտասահմանում գտնվող հայրենակիցների պետական հանձնախմբի անդամ է (2006թ.): Ռուսաստանի Դաշնության նախագահական ընտրությունների ընթացքում եղել է Բ. Ելցինի վստահված անձը (1996թ.): Բազմաթիվ համալսարանների պատվավոր դոկտոր է:

Պարզևատրվել է «Պատվո նշան» (ԽՍՀՄ, 1976թ.), «Պատվո» (Ռուսաստանի Դաշնություն, 1999թ.), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար, 4-րդ կարգի» (Ռուսաստանի Դաշնություն, 2005թ.), «Պատվ լեգիոնի» (Ֆրանսիա, 2006թ.), «Սպայական խաչ» (Գերմանիա), «Սուրբ Գրիգորի» (Վատիկան) և բազմաթիվ այլ շքանշաններով, պարգևներով ու մրցանակներով:

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՉՈՒՐՈՒԿ Սերժ

TCHURUK Serge

Տնտեսական, ֆինանսական և վարչական գործիչ: Փարիզ, Ֆրանսիա: Ծնվել է 1937թ. նոյեմբերի 13-ին Մարսելում: Ծննդով՝ Չուրուկիչյան Սերժ: Ամուսնացած է:

Սովորել է Վենետիկի Մխիթարյան միաբանության Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում: Ուսումը շարունակել է Պոլիտեխնիկական դպրոցում՝ ստանալով զինագործ-ճարտարագետի մասնագիտություն (Փարիզ, 1958թ.):

Պաշտոնավարել է «Էքսոն Մոբիլ» ընկերությունում (ԱՄՆ, 1964-79թթ.): 1979թ-ին ստանձնել է ամերիկյան «Բենելուքս» ընկերություն նախագահի պաշտոնը: Վերադառնալով Ֆրանսիա, դարձել է «Ռեոն-Պուլենք» դեղագործական ընկերություն նախագահն ու գլխավոր գործադիր տնօրենը (1980-86թթ.): Դեկավարել է «Տոտալ» ֆրանսիական նավթային ընկերությունը (1986-90թթ.): Եղել է «Ալկատել-Ալստոմ» հեռահաղորդակցության և էլեկտրոնիկայի ֆրանսիական ընկերության նախագահը և գլխավոր գործադիր տնօրենը (1995-2006թթ.): Նախագահում է «Ալկատել-Լյուսեն» միավորման վարչական խորհրդում (սկսած 2006թ-ից):

Անդամ է Ֆրանսիական կառավարության Տեխնոլոգիական և տեղեկատվական ռազմավարության խորհրդի (սկսած 2004թ-ից), Պոլիտեխնիկական դպրոցի վարչական խորհրդի (Փարիզ, սկսած 2003թ-ից): Բազմաթիվ արդյունաբերական, պետական և հասարակական կազմակերպությունների ղեկավար խորհուրդների անդամ է:

Պատվավոր անդամ է Հայկական բարեգործական ընդհանուր միության:

Պարզևատրվել է Ֆրանսիայի «Պատվո լեգիոնի» շքանշանով (1998թ.), բազմաթիվ երկրների պետական շքանշաններով ու պարգևներով: Հայկական բարեգործական ընդհանուր միությունը նրան պարգևատրել է «Ոսկե կրծքանշանով» (Մարսել, 2005թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա

Պ



ՊԱՊՅԱՆ Հասմիկ

PAPIAN Hasmik

Օպերային երգչուհի (սոպրանո): Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստուհի: Վիեննա, Ավստրիա: Ծնվել է Երևանում 1961թ.: Ամուսնացած է, ունի մեկ դուստր՝ Սիրանուշ:

Ուսանել է Երևանի Կոմիտասի անվան պետական երաժշտանոցում՝ այն ավարտելով իբրև ջութակահար:

Օպերային դերերգով առաջին անգամ հանդես է եկել Օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում՝ կատարելով Միմի դերերգը Պուչինի «Բոհեմ» օպերայում (Երևան): Արժանացել է մի շարք միջազգային մրցույթների դափնեկրի կոչման, մասնավորապես Չայկովսկու անվան միջազգային մրցույթի (Մոսկվա), Վիեննայի Բելվեդերյան մրցույթի, Թուլուզի և Սոֆիայի միջազգային մրցույթների (1992թ.): Բելինի «Նորմա» օպերայում գլխավոր դերերգով հանդես է եկել Վարշավայի օպերային թատրոնում (1992թ.), այնուհետև ելույթներ է ունեցել Բոննի, Դյուսելդորֆի, Մոնրեալի և այլ օպերային թատրոններում (սկսած 1994թ.):

Կատարել է մոտ 40 դերերգ: Հանդես է եկել աշխարհի ամենահեղինակավոր օպերային բեմերում՝ Ամստերդամի Նիդերլանդական, Լիեժի թագավորական, Մանհայմի, Մոնրեալի, Ժնևի, Վիեննայի պետական, Բեռլինի, Միլանի «Լա Սկալա», Փարիզի «Բաստիլ», Տոկիոյի, Նյու Յորքի

«Մետրոպոլիտեն» և բազմաթիվ այլ օպերային թատրոններում: Բելինի «Նորմա-յում» Նորմայի դերերգի լավագույն կատարողներից մեկն է աշխարհում: Հիշարժան են նրա խաղացանկի Աբիգայի (Վերդիի «Նաբուկո»), Դոնա Աննայի (Մոցարտի «Դոն Ջիովանի»), Միմի (Պուչինի «Բոհեմ»), Աիդայի (Վերդիի «Աիդա»), Լիզայի (Չայկովսկու «Պիկովայա Դամա»), Վիոլետայի (Վերդիի «Տրավիատա»), Անելիայի (Վերդիի «Սինոն Բոկկանեգրա»), ինչպես նաև Օլիմպիայի (Չուխաջյանի «Արշակ Բ») և Անուշի (Տիգրանյանի «Անուշ») դերերգերի կատարումները:

Նրա համերգային ծրագրերն ընդգրկում են հայ երգահանների՝ Կոմիտասի, Եկմալյանի, Կանաչյանի, Տիգրանյանի ստեղծագործությունները: 2005թ-ին Գերմանիայում ձայնագրել է «Նվիրում Կոմիտասին» սեղմ սկավառակը, որն ընդգրկում է Կոմիտասի ստեղծագործությունների կատարումը (Վ.Մամիկոնյանի դաշնամուրային նվագակցությամբ) հայերեն և գերմաներեն լեզուներով: Նորմայի դերերգով նկարահանվել է Բելինի նույնանուն օպերայի հիման վրա Բորիս Հայրապետյանի կողմից նկարահանված օպերա-կինոնկարում (Երևան, 2003թ.):

Ի թիվս բազմաթիվ պարգևների և մրցանակների, արժանացել է Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստի կոչման (Երևան, 2004թ.): Պարզևատրվել է Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսի կողմից «Սուրբ Մաշտոց» շքանշանով (Անթիլիաս, 2004թ.) և Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից «Սուրբ Սահակ, Սուրբ Մեսրոպ» շքանշանով (Ս. Էջմիածին, 2005թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյ



ՊԱՐՍԱՄՅԱՆ Էլմա

PARSAMIAN Elma

Աստղագետ: Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից-անդամ: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է 1929թ. դեկտեմբերի 23-ին Երևանում: Մուրեն Պարսամյանի և Բուրաստան Սապոնջյանի դուստրն է:

Ուսանել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում (1949–54թթ.), այն ավարտել է գերազանցության վկայագրով: Եղել է Բյուրականի աստղադիտարանի ասպիրանտ (1957–60թթ.): Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում ստացել է գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (1963թ.): Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի Բյուրականի աստղադիտարանում արժանացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի (1963թ.): 1988թ-ին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Պաշտոնավարել է Բյուրականի աստղադիտարանում (ներկայումս՝ Բյուրականի Վիկտոր Համբարձումյանի անվան աստղադիտարան) նախ որպես կրտսեր (1954–56 և 1961–66թթ.), ապա իբրև ավագ (1967–85թթ.), այնուհետև առաջատար (1985–2000թթ.) և գլխավոր գիտաշխատող (սկսած 2000թ.): Ղեկավարել է Հայկական մանկավարժական ինստիտուտի Աստղագիտության և տեսական ֆիզիկայի ամբիոնը (1983–87թթ.): Իբրև պրոֆեսոր դասավանդել է Երևանի պետական համալսարանում (1989–95թթ.): Եղել է Մեխիկոյի Աստղագիտության ազգային ինստիտու-

տի «C» կարգի տիտղոսակիր հետազոտող (Մեքսիկա, 1991–95թթ.):

Հեղինակ կամ համահեղինակ է 140 գիտական և մոտ 20 գիտահանրամատչելի հոդվածի աստղաֆիզիկայի և աստղագիտության պատմության բնագավառներում: Համահեղինակ է «Մեծամոր» բազմաատոր աշխատության 4-րդ մասի: Հիմնական հետազոտությունները վերաբերում են աստղային միգամածությունների, փոփոխական աստղերի և աստղագիտական հնագիտության հարցերին:

Թղթակից-անդամ է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (սկսած 2000թ-ից): Անդամ է Աստղագետների միջազգային միության (սկսած 2000թ-ից), Բյուրականի աստղադիտարանի դոկտորական ատենախոսությունների պաշտպանության գիտական խորհրդի (սկսած 1980թ-ից), Եվրոպական աստղագիտական միության (սկսած 1990թ-ից), Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի (սկսած 1995թ-ից): Եղել է Սոցիալիստական երկրների գիտությունների ակադեմիաների աստղաֆիզիկայի հանձնախմբի «Բոցավառվող աստղերի» ուսումնասիրության աշխատանքային խմբի փոխնախագահը (1985–88թթ.), «Պատմա-աստղագիտական հետազոտություններ» հանդեսի (Մոսկվա, «Նաուկա» հրատարակչություն) խմբագրական կազմի անդամ (1988–92թթ.), Միջազգային անվտանգության պահպանման խորհրդային գիտնականների հանձնախմբի անդամ (1990–92թթ.), ԽՍՀՄ համալսարաններում և ինստիտուտներում աստղագիտության դասավանդման մեթոդաբանական գիտական խորհրդի անդամ (1990–92թթ.):

Աստղերի գրանցման միջազգային կազմակերպությունը (Շվեյցարիա) «Վիշապի համաստեղության» աստղերից մեկն անվանակոչել է «Էլմա Պարսամյան» (1997թ.):

Դիպլոմների և շնորհակալագրերի է արժանացել Երևանի պետական համալսարանի (1950թ.), Մեխիկոյի համալսարանի (1969թ.), Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի («Գովեստագիր», 1981թ.), Սոցիալիս-

տական երկրների գիտությունների ակադեմիաների աստղաֆիզիկայի հանձնախմբի (1985թ.), Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Բյուրականի Վիկտոր Համբարձումյանի անվան աստղադիտարանի կողմից (1996թ-ին, հիմնադրման 50-ամյակի առթիվ):

Արժանացել է «Բարեխիղճ աշխատանքի համար» (Հայկական ԽՍՀ, 1971թ.) և «Անանիա Շիրակացի» (Հայաստանի Հանրապետություն, 2003թ.) շքանշանների:

2005թ., Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաբերի» տվյալների հիման վրա



ՊՈՂՈՍՅԱՆ Էրիկ

BOGOSIAN Eric

Արձակագիր, թատերագիր, կինոյի և թատրոնի դերասան, բեմադրիչ: «Պուլիցեր» մրցանակի դափնեկիր: Նյու Յորք, ԱՄՆ: Ծնվել է 1953թ. ապրիլի 24-ին Վոբուրնում (Մասաչուսեթս, ԱՄՆ): Հարրի և Էդվինա Պողոսյանների որդին է: Ամուսնացել է Ջո Ան Բոնեի հետ, երկու երեխայի հայր է:

Ավարտել է Չիկագոյի համալսարանը (Իլինոյս), ապա Օբերլին քոլեջը (Օհայո, 1976թ.):

Հեղինակ է «Մել» (Մայմոն և Շուստեր հրատ., 2000թ.) և «Թմրամոլ գեղեցկուհի» (2005թ.) վեպերի, «Ընդհատակյա գրառումներ» (1993թ.) վիպակի, այսպես կոչված «մեկ անձի շուռ» ներկայացումների «Ռադիոխոսակցություն» (1988թ., որի հիման վրա նկարահանվել է բեմադրիչ Օլիվեր Ստոունի համանուն ֆիլմը 1987թ-ին, և որտեղ է. Պողոսյանը հանդես է եկել իբրև

դերակատար), «Արվարձան» (1994, նույնանուն ֆիլմը նկարահանվել է 1996թ-ին), «Մեքս, բմրաղեղեր, ռոք և ռոլ» (1990թ.), «Արթնացիր և անուշ արա սուրճը» (2000թ.), «Հարբեցողություն Ամերիկայում» (1986թ.), պիեսների՝ «Տանջահարվածը» (բեմադրվել է Գուտմանի թատրոնում և Բալթիմորի թատրոնում, 1998թ.), «Թզուկը» (բեմադրվել է Մակ-Քարտերի թատրոնում, 2000թ.), «Կարմիր հրեշտակ» (բեմադրվել է Վիլյամսոնի թատրոնում) և այլ ստեղծագործությունների, որոնց զգալի մասը լույս են տեսել առանձին գրքերով (նաև թարգմանաբար), ներկայացումները ձայնագրվել և տեսագրվել են: Նրա թատերական գործերը բեմադրվել են ամերիկյան և եվրոպական բազմաթիվ թատրոններում: Հյուրախաղերով հանդես է եկել ԱՄՆ-ի բազմաթիվ քաղաքներում, Կանադայում, Եվրոպայի երկրներում:

Իբրև դերասան և իր ստեղծագործությունների բեմադրիչ առաջին անգամ հանդես է եկել Նյու Յորքի «Օֆ-Բրոդվեյյան» (Բրոդվեյի մշակութային կենտրոնից դուրս գտնվող) թատրոնում, սկսած 1977թ-ից): Բացի թատերական դերերից, խաղացել է նաև կինոյում՝ համագործակցելով բեմադրիչներ Ռոբերտ Ալտմանի, Դեյվիս Գուզենհեյմի, Ջեյմս Քոքսի, Ատոմ Էգոյանի («Արարատ») և այլոց հետ, ինչպես նաև հեռուստատեսային սերիալներում («Օրենք և կարգ»): «Արամ Խաչատրյան» փաստագրական ֆիլմում հանդես է գալիս որպես պատմող (2003թ.):

Ամերիկյան գրողների միավորման բազմամյա անդամ է:

Արժանացել է «Պուլիցեր» ամերիկյան գրական հեղինակավոր մրցանակի («Ռադիոխոսակցություն» ստեղծագործության համար, 1987թ.), «Օբի» (Obie) օֆ-բրոդվեյյան թատերական մրցանակի՝ իբրև դերասան և թատերագիր (եռակի, 1986, 1989 և 1993թթ.), «Անահիտ» գրական մրցանակի («Արարատ» հանդես, Կոլումբիայի համալսարանի հայկական կենտրոն, 2004թ.), «Թատերական պատվո ցուցանակ» մրցանակի՝ թատերական մենախոսությունների համար (1986թ.), Բեռլինի միջազգային կինոփառատոնի «Արժաթ

արջ» մրցանակի՝ ինքնուրույն ձեռքբերումների համար, իբրև «Ռադիոխոսակցություն» ֆիլմի հեղինակ և դերակատար (1989թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա
Ծանոթություն. – Է. Պողոսյանի որոշ ստեղծագործությունների անվանումներ անգլերենից քարգմանված են բառացի և չեն կարող ճշգրիտ համարվել:



ՊՈՂՈՍՅԱՆ Սիխայի

POGOSYAN Mikhael

Քաղաքացիական և ռազմական օդանավաչինության ճարտարագետ: Տեխնիկական գիտությունների դոկտոր, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի քրթակից–անդամ, «Սուխոյ» օդանավաչինական ընկերության գլխավոր տնօրեն: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է Մոսկվայում 1956թ. ապրիլի 18–ին (հայրանունը՝ Ասլան): Ամուսնացած է, երկու երեխայի հայր է:

Ուսանել է Մոսկվայի Ձերժինսկու անվան ավիացիոն ինստիտուտի օդանավաչինության ֆակուլտետում, այն ավարտել է գերազանցության վկայագրով (1979թ.):

Աշխատել է «Սուխոյ» օդանավաչինական նախագծային բյուրոյում նախ իբրև նախագծող–ճարտարագետ (սկսած 1979թ.–ից), ապա գլխավոր նախագծողի տեղա-

կալ (1992–98թթ.), այնուհետև նախագծային բյուրոների տնօրենների խորհրդի նախագահ (1995–99թթ.) և նախագծային բյուրոյի գլխավոր տնօրեն (սկսած 1999թ.–ից): Ներկայումս «Սուխոյ» բաց բաժնետիրական օդանավաչինական ընկերության գլխավոր տնօրենն է (իր մեծությամբ և արտադրանքի արտահանման ծավալով աշխարհում 3–րդ խոշորագույն ընկերությունը, որն ունի մոտ 30000 աշխատող): Դեկավարում է Մոսկվայի ավիացիոն ինստիտուտի օդանավաչինության ամբիոնը (սկսած 2004թ.–ից):

Հեղինակ է 11 գյուտի և արտոնագրի, 15 գիտական հոդվածի: Նրա ղեկավարությամբ են նախագծվել և ստեղծվել Սու–27, Սու–30, Սու–33 (նավերի վրայից թռչող), Սու–37 «Բերկուտ» («Ոսկե արծիվ») ռազմական կործանիչ ինքնաթիռները, «Ռուսական նահանգային» (Sukhoi, SuperJet) քաղաքացիական օդանավը (2003թ.), ձևափոխել և արդիականացրել է բազմաթիվ քաղաքացիական և ռազմական ինքնաթիռներ:

Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից–անդամ է (Էներգետիկայի, մեքենաչինության, մեխանիկայի և կառավարման համակարգերի բաժանմունք, 2003թ.): Ռուսաստանի Դաշնության կառավարության արդյունաբերական խորհրդի անդամ է (սկսած 2000թ.–ից):

Ռուսաստանի Դաշնության պետական մրցանակի (1997թ.) և Ռուսաստանի Դաշնության կառավարական մրցանակի (1998թ.) դափնեկիր է: Պարգևատրվել է Ռուսաստանի Դաշնության «Պատվո» շքանշանով (Սու–33 ռազմական ինքնաթիռի ստեղծման համար, 2002թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՋԻԳԱՐԽԱՆՅԱՆ Արմեն

DJIGARKHANI AN Armen

Դերասան և բեմադրիչ: Խորհրդային Միության, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ժողովրդական դերասան: Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա: Ծնվել է 1935թ. հոկտեմբերի 3–ին Երևանում: Բորիս և Ելենա Ջիգարխանյանների որդին է: Ամուսնացած է Տատյանա Սերգենևա Ջիգարխանյանի հետ:

Ավարտել է Երևանի գեղարվեստաբանական ինստիտուտը (1958թ.): Եղել է Երևանի Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի դերասան (1955–67թթ.), այնուհետև Լենինյան կոմերիտմիության թատրոնի (Մոսկվա, սկսած 1967թ.–ից) և Մայակովսկու անվան թատրոնի (Մոսկվա, սկսած 1969թ.–ից) դերասան: Հիմնադիրն ու գեղարվեստական ղեկավարն է Մոսկվայի «Արմեն Ջիգարխանյան» գեղարվեստական թատրոնի (1996թ.): Դասավանդել է Մոսկվայի կինոյի պետական ինստիտուտում (1991–96թթ.):

Թատրոնում և կինոյում խաղացել է մոտ 300 դեր: Կինոնկարներում խաղացած գլխավոր դերերի թվով (մոտ 200) բացառիկ ցուցանիշ է սահմանել՝ մտնելով «Գիննեսի ռեկորդների գրքի» մեջ: Ի թիվս այլոց, հիշարժան են նրա կերտած կեպարները

Ֆ. Դովլաբյանի «Բարև, ես եմ», Վ. Տիտովի «Բարև Ձեզ, ես ձեր մորաքույրն եմ», Յ. Ֆրիդի «Շունը խոտի դեզի վրա», Ս. Գովորուխինի «Հանդիպման վայրը չի կարելի փոխել», Էդ. Քեոսայանի «Ռուսական կայսրության թագը», Գ. Դանելիայի «Անձնագիր», Վ. Մենշովի «Շիրլի–Միրլի», Ա. Ալովի և Վ. Նաումովի «Թեհրան–43» և այլ գեղարվեստական կինոնկարներում, «Ալի Բարան և քառասուն ավազակները», «Թագուհի Մարգոն» հեռուստատեսային ֆիլմերում և այլն: «Վերադարձ դեպի տուն» ներկայացման մեջ Մաքսի դերի կատարման համար արժանացել է Մոսկվայի թատերական–հեռուստատեսային ներկայացումների միջազգային փառատոնի (նվիրված Ի. Սմակտունովսկու ծննդյան 75–ամյակին) «20–րդ դարավերջի դերասանը» մրցանակի դափնեկրի կոչման (2000թ.):

Արժանացել է Հայկական ԽՍՀ պետական մրցանակների «Եռանկյունի» (1975թ.) և «Չյունը սզո մեջ» (1979թ.) կինոնկարներին մասնակցության համար: Ստացել է Խորհրդային Միության ժողովրդական դերասանի կոչում (1985թ.): Երևանի պատվավոր քաղաքացի է (2001թ.): Պարգևատրվել է Ստանիսլավսկու անվան թատերական մրցանակով (Մոսկվա, 2000թ.) և «Ոսկե դիմակ» մրցանակով (Մոսկվա, 2001թ.): 2002թ. լույս է տեսել Ա. Դորբովսկու «Ես միայնակ ծաղրածու եմ» գիրքը, նվիրված նրա գործունեությանը: Պարգևատրվել է Ռուսաստանի Դաշնության «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 3–րդ կարգի շքանշանով (2004թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա

Ս



ՍԱՀԱԿՅԱՆ Բակ

SAHAKIAN Bako

Քաղաքական գործիչ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ: Ստեփանակերտ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Ծնվել է 1960թ. օգոստոսի 30-ին Ստեփանակերտում: Ամուսնացած է, երկու երեխայի հայր է:

Ավարտել է Արցախի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը:

Ծառայել է Խորհրդային բանակում (1978-80թթ.): Աշխատել է Մեխանիկական և Շինարարական կառույցների գործարաններում (Ստեփանակերտ, 1981-83թթ.), ապա Պատմական հուշարձանների վերականգնման Ստեփանակերտի մասնաճյուղում (1983-85թթ.), այնուհետև Ղարաբաղի մատակարարման վարչությունում (1987-90թթ.):

Արցախյան շարժման (սկսած 1988թ-ից) և Արցախի ինքնապաշտպանության մարտերի մասնակից է (սկսած 1990թ-ից): Եղել է Արցախի ինքնապաշտպանության ուժերի հանձնախմբի նախագահի տեղակալը քիկունքի գծով (1992-93թթ.), քիկունքի շտաբի պետ (1993-95թթ.), Ինքնապաշտպանության բանակի հրամանատարի տեղակալ արտաքին կապերի գծով (1995-96թթ.), 10-րդ լեռնահրաձգային դիվիզիայի պետի տեղակալ քիկունքի գծով (1996-97թթ.): Պաշտոնավարել է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և Ազգային անվտանգության նախարար-

ություններում իբրև նախարարի օգնական (1997-99թթ.): Ղեկավարել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներքին գործերի (1999-2001թթ.) և Անվտանգության նախարարությունները (2001-2007թթ.):

Համաժողովրդական քվեարկությամբ ընտրվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ (2007թ.):

Անդամ է Ռուսաստանի Դաշնության անվտանգության, պաշտպանության և օրինականության ակադեմիայի:

Պարգևատրվել է «Պետրոս Մեծ» (Ռուսաստանի Դաշնություն), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար»՝ առաջին աստիճանի, «Մարտական խաչ»՝ առաջին աստիճանի, «Սպարապետ Վազգեն Սարգսյան» և այլ շքանշաններով ու պետական պարգևներով:

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների հիման վրա



ՍԱՐԳԻՍՈՎ Պավել

SARGISOV Pavel

Քիմիկոս: Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի անդամ: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է 1932թ. սեպտեմբերի 19-ին Թբիլիսիում: Ջիբրալթի և Աննա Սարգիսովների որդին է: Ամուսնացած է, ունի երկու դուստր՝ Կարինա և Էլիզաբեթ:

Ուսանել է Մոսկվայի Գ.Ի. Մենդելեևի



ՍԱՐԳՍՅԱՆ Սերժ

SARGSIAN Serge

Քաղաքական գործիչ: Հայաստանի Հանրապետության նախագահ: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է 1954 թ. հունիսի 30-ին Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտ քաղաքում: Ամուսնացած է, երկու երեխայի հայր է:

Ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը (1979թ.):

Ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում (1972-1974թթ.): Աշխատել է Երևանի էլեկտրատեխնիկական գործարանում որպես խառատ (1975-79 թթ.): Եղել է Կոմունիստական երիտասարդական միության Ստեփանակերտի կոմիտեի բաժնի վարիչ, ապա երկրորդ քարտուղար, այնուհետև առաջին քարտուղար: Պաշտոնավարել է իբրև Կոմունիստական կուսակցության Ստեփանակերտի քաղաքային կոմիտեի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ, Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտեի առաջին քարտուղարի օգնական (1979-88թթ.):

Ղեկավարել է Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության ուժերի կոմիտեն (1989-93թթ.): Ընտրվել է Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավոր (1990թ.): Եղել է Հայաստանի Հանրապետություն պաշտպանության նախարար (1993-95թթ.), ապա Պետական անվտանգության վարչության պետ, այնուհետև Ազգային անվտանգության նախարար (1995-1996 թթ.): Պաշտոնավարել է իբրև Հայաստանի Հանրապետություն ներքին գործերի և Ազգային անվտանգության նախարար (1996-99 թթ.): Նշանակվել է նախագահի աշխատակազմի ղեկավար (1999-2000թթ.): Եղել է Հայաստանի Հան-

անվան քիմիատեխնոլոգիական ինստիտուտում, այն ավարտել է 1956թ-ին: Քիմիական գիտությունների դոկտոր է (սկսած 1978թ-ից), թեկնածու՝ 1963թ-ից:

Պաշտոնավարել է իբրև Մոսկվայի Գ. Ի. Մենդելեևի անվան քիմիատեխնոլոգիական ինստիտուտի գիտաշխատող (1959-68թթ.), դոցենտ (1968-78թթ.), ֆակուլտետի ղեկան (1980-84թթ.), ռեկտորի տեղակալ (1984-85), ռեկտոր (1985-96թթ.): Ներկայումս նույն հաստատության նախագահն է (1996-ից):

Հեղինակ կամ համահեղինակ է մոտ 430 գիտական հրատարակման, 125 գյուտի և արտոնագրի, դասագրքերի: Հիշարժան են նրա «Սիտալի և ապակու քիմիական տեխնոլոգիան» (1986թ.), «Նոր երեսպատող նյութեր ապակու հիման վրա» (1987թ.), «Շինարարական և տեխնիկական ապակու արտադրությունը» (1991թ.), «Քիմիան ժամանակակից հասարակության մեջ» (1992թ.), «Ապակու նպատակաուղված բյուրեղացումը» (1997թ.) աշխատությունները:

Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի անդամ է (1997թ-ից., թղթակից-անդամ՝ 1994-ից): Գ.Ի. Մենդելեևի անվան ռուսական քիմիական ընկերության նախագահն է: Ղեկավարում է քիմիական տեխնոլոգիաների գծով Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնագետների կրթական-մեթոդական հանձնախումբը: Անդամ է Բարձրագույն կրթական հաստատությունների միջազգային միության, Ստեղծագործողների միջազգային ակադեմիայի և Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի: Կենսաքաղաքական շարժման միջազգային ընկերության փոխնախագահն է: Դիկենսոնի քոլեջի (ԱՄՆ) և Սանկտ Պետերբուրգի համալսարանի (Ռուսաստան) պատվավոր դոկտոր է:

Արժանացել է Ռուսաստանի Դաշնության նախագահի (2000թ.) և Կառավարության (2002թ. և 2006թ.) մրցանակների, Ուկրաինայի պետական մրցանակի (2001թ.): Պարգևատրվել է ԽՍՀՄ «Կարմիր դրոշի» և «Բարեկամություն» շքանշաններով:


2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների հիման վրա

րապետության պաշտպանության նախարար (2000–2007թթ.), ապա Հայաստանի Հանրապետության վարչապետ (2007–08թթ.): Ընտրվել է Հայաստանի Հանրապետության նախագահ (2008թ.):

Եղել է Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ և նրա խորհրդի նախագահը (2006–08թթ.):

Պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության «Մարտական խաչ»՝ առաջին աստիճանի, «Արցախի հերոս», «Ոսկե արծիվ», «Տիգրան Մեծ» շքանշաններով:

2008թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ՍԱՐԳՍՅԱՆ Սոս

SARKISSIAN Sos

Կինոյի և թատրոնի դերասան, հասարակական և քաղաքական գործիչ: Խորհրդային Միության ժողովրդական դերասան: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է 1929թ. հոկտեմբերի 24-ին Ստեփանավան քաղաքում (հայրամուտը՝ Արտաշես):

Ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետը (1954թ.):

Իբրև դերասան աշխատել է Երևանի Գ. Մուրղուկյանի անվան պետական դրամատիկական թատրոնում (սկսած 1954թ-ից): 1959թ-ից նկարահանվել է կինոյում (առաջին դերը եղել է «Նվազախմբի տղաները» («Հայֆիլմ») գեղարվեստական կինոնկարում՝ Արտաշես: Կինոյում խաղացել է 50-ից ավելի գլխավոր դեր: Հատկապես հիշարժան են նրա Արթա Ջոնի (Վ. Շերպալիի համանուն), Չամբախտվի (Գ. Մունրուկյանի «Խաթաբալա»), Բեն Ալեքսանդրի (Վ. Սարոյանի « Իմ սիրտը լեռներում է»)

և բացմաթիվ այլ գլխավոր դերերը թատրոնում, Մկրտիչի («Եռանկյունի», 1967թ.), լեյտենանտի («Մենք ենք մեր սարերը», 1969թ.), վարպետ Մկրտիչի («Հեղնար աղբյուր», 1971թ.), Գիբարյանի («Մոլյարիս», 1972թ.), պատմողի («Մատենադարան», հեռուստատեսային-փաստագրական, 1986թ.), Միրոյի («Չորի Միրոն» 1981թ.), Մարտինի («Խնձորի այգին», 1985թ.) և այլ դերակատարումները կինոյում:

Ընտրվել է Խորհրդային Միության Գերագույն Խորհրդի պատգամավոր (1989թ.): Եղել է Հայաստանի Հանրապետության նախագահի թեկնածու (1991թ. նախագահական ընտրություններում):

Հիմնադրել և ղեկավարել է «Համազգային» թատրոնը Երևանում (սկսած 1992թ-ից): Եղել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի ռեկտորը (1997–2006թթ.):

Արժանացել է նախկին Խորհրդային Միության ժողովրդական դերասանի կոչման (1985թ.): Հայկական ԽՍՀ պետական մրցանակի եռակի դափնեկիր է (1967թ. «Եռանկյունի» ֆիլմի համար, 1979թ. թատերական գործունեության համար, 1988թ. «Մատենադարան» ֆիլմում մասնակցության համար): Խորհրդային Միության համաժողովրդական կինոփառատոնի դափնեկիր է՝ «Լավագույն դերի համար» (1986թ.): Երևանի պատվավոր քաղաքացի է (2000թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ՍԱՐԳՍՅԱՆ Ֆադեյ

SARGSIAN Fadey

Հաշվողական տեխնիկայի և էլեկտրոնիկայի մասնագետ, պետական և վարչա-

կան գործիչ: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի անդամ և նախկին նախագահ, գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է 1927թ. սեպտեմբերի 18-ին Երևանում: Տաճատ և Մանյա Մարգարյանների որդին է: Ամուսնացել է Թագուհի Սարգսյանի հետ, դուստրը՝ Թամարա:

Ռուսներ է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում (այժմ՝ Ճարտարագիտական համալսարան, 1940–42թթ.) և Լենինգրադի Բուդյոննու անվան կապի էլեկտրատեխնիկական ռազմական ակադեմիայում (1942–46թթ.): Տեխնիկական գիտությունների դոկտորի կոչման է արժանացել 1971թ-ին:

Եղել է ԽՍՀՄ պաշտպանության նախարարության հրթիռահրետամային ռազմական ուժերի ղեկավարության գիտական հանձնախմբի գիտաշխատող (1946–63թթ.): Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում մասնակցել է ռազմական գործողություններին իբրև խորհրդատու (1952թ.): Եղել է Երևանի հաշվիչ մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի տնօրենը (1963–77թթ.): Պաշտոնավարել է իբրև Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ (1977–89թթ.): Ղեկավարել է Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի ֆիզիկամաթեմատիկական գիտությունների բաժանմունքը իբրև ակադեմիկոս-քարտուղար (1989–93թթ.): Ընտրվել է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ (1993թ., պաշտոնավարել է մինչև 2006թ.): 1964թ-ից բազմիցս ընտրվել է ԽՍՀՄ և Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի, ապա Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր: Հայաստանի Հանրապետության վարչապետի խորհրդականն է (սկսած 2006թ-ից):


Հեղինակ է ավելի քան 200 գիտական աշխատության՝ էլեկտրոնիկայի, հաշվողական տեխնիկայի, ավտոմատ կառավարման համակարգերի ասպարեզներում: Գլխավոր նախագծողն ու ստեղծողն է

«Նաիրի», «Հրազդան», EC–1030, EC–1040, EC–1045 հաշվիչ մեքենաների և կառավարման սարքերի: Կարևոր ներդրում ունի Հայաստանում արդյունաբերության զարգացման և խոշոր կառույցների («Արփա–Սևան», Երևանի մետրոպոլիտեն, 1988թ-ի երկրաշարժի աղետի գոտու վերականգնում և այլն) շինարարության իրականացման մեջ:

Անդամ է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (1977թ-ից, թղթակից-անդամ՝ 1971թ-ից): Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ է (2003թ.): Գիտությունների ակադեմիաների միջազգային ընկերության անդամ է, Միջազգային ճարտարագիտական ակադեմիայի պատվավոր անդամ, Պորտուգալիայի պատմության ակադեմիայի արտասահմանյան անդամ, Ինֆորմատիկացիայի միջազգային ակադեմիայի անդամ, «Արարատ» միջազգային ակադեմիայի պատվավոր անդամ, Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի անդամ, Հայաստանի փիլիսոփայության ակադեմիայի պատվավոր անդամ, Ռուսաստանի Գաշնուրյան «Գիտելիք» համազգային ակադեմիայի անդամ, «Էլիտ» միջազգային ակադեմիայի անդամ, Ռազմական գիտությունների ակադեմիայի անդամ, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի անդամ, Գիտության, կրթության, արդյունաբերության և արվեստի միջազգային ակադեմիայի պատվավոր անդամ:

ԽՍՀՄ (կրկնակի՝ 1971, 1981թթ.) և Ուկրաինական ԽՍՀ (1986թ.) պետական մրցանակների դափնեկիր է: Պարգևատրվել է նախկին ԽՍՀՄ «Լենինի», «Հոկտեմբերյան Հեղափոխության», «Աշխատանքային կարմիր դրոշի» (եռակի), Հայաստանի Հանրապետության «Սուրբ Մեսրոպ Մաշտոց», «Մխրանքի համար» (Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, 1952թ.) շքանշաններով, բազմաթիվ մեդալներով, մրցանակներով և պատվավոր կոչումներով:

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ՍԱՐՈՒԽԱՆ Խոսե

SARUKHAN Jose, SARUKHAN KERMEZ Jose

Կենսաբան: Մեքսիկայի և ԱՄՆ-ի գիտությունների ազգային ակադեմիաների, Լոնդոնի թագավորական ակադեմիայի և Եվրոպական գիտությունների ակադեմիայի անդամ: Մեքսիկայի նախագահական վարչակազմի Սոցիալական և հասարակական զարգացման վարչական գրասենյակի նախկին կոմիսար (այդ համակարգի բոլոր նախարարությունների աշխատանքը համակարգող նախարարի իրավասությամբ): Գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Մեխիկո, Մեքսիկա: Ծնվել է Մեխիկոյում 1940թ. հուլիսի 15-ին: Արթուր (Հարություն) և Ամեթյա Սարուխանների որդին է: Հայրը՝ Երևանից Մեքսիկա արտագաղթած (մայրը՝ Վենետիկից), մեքսիկահայ համայնքի հիմնադիրներից մեկն էր: Ամուսնացել է Ադելաիդա Սարուխանի հետ, ունի որդի և դուստր: Որդին՝ Արթուրո Սարուխանը, քաղաքական գործիչ է, եղել է Մեքսիկայի գլխավոր հյուպատոսը Նյու Յորքում:

Ավարտել է Մեքսիկայի ազգային ինքնավար համալսարանը՝ գիտության պակավորի աստիճանով (1964թ.), ապա Գյուդատնտեսական գիտությունների ավարտական դպրոցը (Մեխիկո) գյուղատնտեսական բուսաբանության մագիստրոսի աստիճանով (1968թ.): Ուելսի համալսարանում (Միացյալ Թագավորություն) ստացել է գիտության դոկտորի գիտական աստիճան բնապահպանության բնագավառում (1972թ.):

Եղել է Մեքսիկայի ազգային համալսարանի Կենսաբանության ինստիտուտի ավագ գիտաշխատող (1972-78թթ.): Ղեկավարել է Մեքսիկայի հետազոտությունների ակադեմիայի Բուսաբանական ընկերու-

թյունը (1972-75թթ.): Պաշտոնավարել է իբրև Մեխիկոյի համալսարանի Կենսաբանության ինստիտուտի տնօրեն (1978-86թթ.), ապա իբրև համալսարանի փոխնախագահ (1987-88թթ.), այնուհետև նախագահ (ռեկտոր, 1994-98թթ.): Եղել է Ստենֆորդի համալսարանի Տիմերի անվան պրոֆեսոր (1997-98թթ.): Նշանակվել է Լատինաամերիկյան բուսաբանական հետազոտությունների համակարգող (1998թ.): Իբրև ազգային համակարգող ղեկավարել է Բուսական բազմազանության ճանաչման և օգտագործման ազգային հանձնախումբը (1992-98թթ.), ապա Բուսական բազմազանության «Գիվերսիտաս» միջազգային ծրագիրը (1998-2001թթ.): Մեքսիկայի նախագահ Ֆոքսի կողմից նշանակվել է Մեքսիկայի սոցիալական և հասարակական զարգացման վարչական գրասենյակի կոմիսար, այդ համակարգի բոլոր նախարարությունների աշխատանքը համակարգող (2001-2002թթ.): Ներկայումս Մեքսիկայի ազգային համալսարանի Բնապահպանության ինստիտուտի պրոֆեսոր է և «Հազարամյակի էկոհամակարգերի գնահատումներ» հանդեսի համանախագահը:

Հեղինակ կամ համահեղինակ է 100 գիտական հոդվածի, 7 գրքի՝ մերձարևադարձային բնապահպանության, բույսերի բազմացման, էկոլոգիայի, կենսաբանական բազմազանության, ինչպես նաև Մեքսիկայի մերձարևադարձային ծառատեսակների վերաբերյալ դասագրքերի և Մեքսիկայում կրթության և գիտության զարգացման վերաբերյալ բազմաթիվ հրապարակումների:


Մեքսիկայի գիտության ակադեմիայի իսկական անդամ է: Ղեկավարում է Մեքսիկայի երկարաժամկետ էկոլոգիական հետազոտությունների հանձնախումբը (2004թ.): Անդամ է ԱՄՆ-ի գիտությունների ազգային ակադեմիայի (1993թ.), Ազգային կրթական կոլեգիայի (սկսած 1984թ-ից), Երրորդ աշխարհի գիտության համաշխարհային ակադեմիայի (1991թ.), Առաջատար գիտության ամերիկյան ընկերության (1993թ.), Լատինաամերիկյան գիտության ակադեմիայի (1993թ.), Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի (1994թ.),

Միջազգային քաղաքականության խաղաղասիրական խորհրդի (1995-99թթ.), Կալիֆոռնիայի գիտությունների ակադեմիայի (պատվավոր անդամ, 1998թ.), Գիտությունների եվրոպական ակադեմիայի (2004թ.): Նախագահն է Յունեսկո-ի «Դիվերսիտաս» (կենսաբանական բազմազանության ուսումնասիրության միջազգային ծրագիր) կազմակերպության (1998թ.), Բարձրագույն կրթության խորհրդատուների խմբի (1994թ.) և Գիտական իմացության և տեխնոլոգիայի բարոյականության համաշխարհային հանձնախմբի (1998թ.): Փոխնախագահն է Կիկսմալայի էկոլոգիական հաստատության և նախագահը Օմեյոկայի էկոլոգիական կենտրոնի (1999թ.): Լոնդոնի թագավորական ակադեմիայի արտասահմանյան անդամ է (2003թ.):

Արժանացել է «Լավագույն հոդվածի համար տրվող ազգային մրցանակի» (1996թ.), Մեքսիկայի գիտական հետազոտությունների ակադեմիայի մրցանակի (1984թ.), Մեքսիկայի բուսաբանական ընկերության պատվո շքանշանի (1991թ.), Ալֆոնսո Հերերայի անվան շքանշանի բնապահպանության բնագավառում (1990թ.), Մեքսիկայի կառավարության ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական ազգային մրցանակի (1990թ.), Միստրիի բուսաբանական այգու Հերի Շոուի անվան շքանշանի (1991թ.), Կենսաբանական պահպանության ընկերության մրցանակի (1994թ.), «Ամպարո» հաստատության շքանշանի (1995թ.), Կոլումբիայի համալսարանի «Լազարո Կադենաս Դել Ռիո» շքանշանի (1995թ.), «Ակնառու ծառայությունների համար» մրցանակի (Բնապահպանական կենսաբանության ընկերություն, 2001թ.). Ամերիկյան միջհամալսարանական կազմակերպության մրցանակի (2003թ.), Մեքսիկայի համալսարանի վաստակավոր հետազոտողի կոչման (2005թ.), Ալտայի կառավարման մարմինների «Ոսկե վարպետ» մրցանակի (2005թ.): Պատվավոր պրոֆեսոր է Պերուի «Սեսկա» կրթական և մշակութային ընկերության (1993թ.), Չիլիի Սամոյագոյի ճարտարագիտական համալսարանի (1993թ.) և այլ համալսարանների: Միջազգային բնապահպանական միության պատվավոր տնօրենն է (1994թ.): 7

համալսարանի պատվավոր դոկտոր է, այդ թվում Ուելսի համալսարանի (Միացյալ Թագավորություն, 1993թ.), Հիդալգո նահանգի պետական համալսարանի (1997թ.), Պերուի Սուրբ Մարկոսի անվան համալսարանի (1991թ.), Ավարտական քոլեջի (1995թ.), Կոլիմայի համալսարանի (1996թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ՍԵՂՐԱԿՅԱՆ Պերճ

SETRAKIAN Berge

Իրավաբան: Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) նախագահ: Նյու Յորք, ԱՄՆ: Ծնվել է Բեյրութում 1949թ.: Ամուսնացել է Վերա Նազարյանի հետ, ունի երկու դուստր՝ Անի և Լարա:

Ուսանել է Բեյրութի Սեն ժոզեֆ համալսարանում (լիբանանյան իրավագիտություն, 1972թ.), այնուհետև Լիոնի համալսարանում (ֆրանսիական իրավագիտություն, Ֆրանսիա), ապա դարձյալ Բեյրութի Սեն ժոզեֆ համալսարանում՝ ստանալով մագիստրոսի կոչում իրավագիտության ասպարեզում (1973թ.): Ուսումը կատարելագործել է Ստրասբուրգի համալսարանում՝ մասնագիտանալով միջազգային իրավագիտության ասպարեզում (1974թ.):

«Դեկի ընդ Լը Բուոֆ» փաստաբանական գրասենյակի բաժնետերն է և աշխատակիցը: Մասնագիտացած է միջազգային, առևտրական և կորպորատիվ իրավագիտության ասպարեզում:

Անդամ է Ամերիկյան իրավաբանների ընկերության, Նյու Յորք նահանգի փաստաբանների ընկերության, Բեյրութի փաստաբանների ընկերության, Ամերիկայի արտասահմանյան իրավունքի ընկերության, Հայ փաստաբանների ընկերության,

Հյուսիսային Ամերիկայի արարական դրամատների միության: «Ինթրաուդի» բանկի և «Ալթադիս» բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի անդամ է:

Եղել է ՀԲԸՄ Վարչական խորհրդի անդամ (1977-92թթ.), այնուհետև ՀԲԸՄ փոխնախագահ և քարտուղար (1992-02թթ.): 2002թ-ին ընտրվել է Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ: Հայաստանի ամերիկյան համալսարանի տնօրենների խորհրդի անդամ է:

Պարգևատրվել է «Էլիս Այլենդ» շքանշանով (ԱՄՆ, 1999թ.):

2006թ. Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաթերթի» տվյալների հիման վրա



ՍԵՂՐԱԿՅԱՆ Սեդրակ

SETRAKIAN Setrak

Երգահան, դաշնակահար: Պրոֆեսոր, Բեյրութի Բարսեղ Կանաչյանի անվան Երաժշտական ուսումնարանի նախկին տնօրեն: Բեյրութ, Լիբանան: Ծնվել է 1938թ. նոյեմբերի 23-ին Հալեպում:

Սկզբնական երաժշտական կրթությունը ստացել է Հալեպի «Էրնեստ Շուս» երաժշտական ուսումնարանում (1980-60թթ.): Ավարտել է Լիբանանի ազգային (1960-62թթ.) և Դամասկոսի (1962-64թթ.) երաժշտանոցները: Կատարելագործվել է պրոֆեսոր Գունտեր Կոնի (Երուսաղեմ) մոտ (1964-65թթ.), ապա նաև Երևանի պետական երաժշտանոցում (1971-74թթ.):

Դասավանդել է Բեյրութի տարբեր երաժշտական ուսումնական հաստատություններում՝ «Կոլեժ մոնոլ լա սալում» (1974-78թթ.), «Կոլեժ դեզ Ապտրում» (1978-80թթ.), Կիլիկիայի հայոց կաթողիկոսության Հոգևոր ճեմարանում (1985-88թթ.): Եղել է Բեյրութի Բարսեղ Կանաչ-

յանի անվան երաժշտական ուսումնարանի տնօրենը և դասավանդել է դաշնամուր, երաժշտական հարմոնիա, կոմպոզիցիա և երաժշտական վերլուծություն ուսումնական առարկաները (1987-99թթ.):

Հեղինակ է տարբեր ժանրերի մոտ 400 երաժշտական ստեղծագործության, այդ թվում նվագախմբային («Մանկունք», 12 մաս, լարային նվագախմբի համար, 1986թ., «Սիմֆոնիա լարային նվագախմբի համար», 2002թ.), սիմֆոնիկ («Լարային կվարտետ», «Դաշնամուրի, սրինգի և թավջութակի համար» 2002թ.), օրատորիաների («Ալրիլյան նահատակներ», մեներգչի, երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար, 1991թ.), երգչախմբային («Սուրբ Վարդան»), դաշնամուրային («Երևակայական սոնատ», «Բազմահնչյուն սոնատ»), ջազային և այլ գործերի: Հիշարժան են դասականների ստեղծագործությունների նրա դաշնամուրային բազմաթիվ կատարումները, որոնց մի մասը ձայնագրված է տարբեր տարիների լույս ընծայված խոսակավառակների վրա (Բեթհովենի և Բրամսի «Սոնատները», Լիստի «Էտյուդները», Խաչատրյանի «Սուներով պարը» և այլն):

Նրա ստացած պարգևների թվում են «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանը (Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Գարեգին Բ-ի կողմից, 1994թ.), «Սիսթյան արմավ» շքանշանը («Դարիան» երաժշտական միության կողմից, 2006թ.)

2006թ. Բազ տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ՍԵՄԵՐՋՅԱՆ Հրաչ

SEMERJIAN Hrach

ԱՄՆ-ի քիմիական հետազոտությունների խորհրդի նախագահ և գործադիր

տնօրեն: Չափօրիսակների և տեխնոլոգիայի ազգային ինստիտուտի (ԱՄՆ) գլխավոր գիտաշխատող: ԱՄՆ-ի ճարտարագիտության ազգային ակադեմիայի անդամ: Փիլիսոփայության դոկտոր ֆիզիկական քիմիայի բնագավառում: Գեյտսբուրգ, Մերիլենդ, ԱՄՆ: Ծնվել է 1945թ.:

Ուսանել է Բրաունի համալսարանում՝ ստանալով մագիստրոսի աստիճան (1968թ.): Փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան է ստացել ֆիզիկական քիմիայի բնագավառում (Բրաունի համալսարան, 1972թ.):

Դասավանդել է Տորոնտոյի համալսարանի քիմիական բաժնում՝ միաժամանակ շարունակելով հետդոկտորական գիտական հետազոտությունները: Իբրև գիտաշխատող պաշտոնավարել է «Յունայթիդ Տեքնոլոջիս» կորպորացիայի Արևելյան Հարտֆորդի օդանավաչինության բաժնում (1972-77թթ.): Եղել է ԱՄՆ-ի չափօրիսակների և տեխնոլոգիայի ազգային ինստիտուտի գիտաշխատող (1977-2003թթ.), ղեկավարել է այդ հաստատության Քիմիական գիտությունների և տեխնոլոգիայի լաբորատորիան (1992-03թթ.), այնուհետև եղել է ինստիտուտի փոխտնօրեն (2003թ-ից)՝ ղեկավարելով հաստատության միջազգային գործառույթները, տնօրեն (2004-05թթ.) և գլխավոր գիտաշխատող (սկսած 2006թ-ից): Նշանակվել է ԱՄՆ-ի քիմիական հետազոտությունների խորհրդի նախագահ և գործադիր տնօրեն (Վաշինգտոն, սկսած 2007թ-ից, Քիմիական հետազոտությունների խորհուրդը համակարգում է մոտ 200 գիտական, արդյունաբերական, կրթական և այլ հաստատությունների հետազոտական գործունեությունը քիմիայի բնագավառում):

Իրականցրել է ամերիկյան բազմաթիվ չափօրիսակների և չափման նոր գիտական եղանակների մշակումը ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության բնագավառներում, ստեղծել է չափագիտական սարքեր, ուսումնասիրել է այրման երևույթները:

Ընտրվել է ԱՄՆ-ի ճարտարագիտության ազգային ակադեմիայի անդամ (2000թ.): Մեխանիկական ճարտարագիտության ամերիկյան ընկերության անդամ

է (սկսած 1996թ-ից): Ղեկավարն է Չափօրիսակների և տեխնոլոգիայի ազգային ինստիտուտի «Բնագիտական առաջընթացի գիտական ծրագրերի» մշակման:

Նրա ստացած պարգևների թվում են Ֆուլբրայտի և Կինի անվան դրամաշնորհները, Բրաունի համալսարանի նշանավոր շրջանավարտի մեդալը (1997թ.), «Արժանավայել ծառայության համար» ԱՄՆ-ի առևտրի նախարարության արժաբե մեդալը (1984թ.), Դաշնային իշխանություններին մատուցած նշանակալից ծառայության համար՝ ԱՄՆ-ի առևտրի նախարարության ոսկե մեդալը (1995թ.):

2007թ. Բազ տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ՍԵՅՍՅԱՆ Ռուբեն

SEISYAN Ruben

Ֆիզիկոս: Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս: Սանկտ Պետերբուրգ, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է Սոչի քաղաքում 1936թ. օգոստոսի 7-ին: Պողոս Սեյսյանի և Լարիսա Շովեի որդին է: Ամուսնացած է Տատյանա Սավելևայի հետ, որդին՝ Ալեքսանդր:

Ուսանել է Լենինգրադի էլեկտրատեխնիկական ինստիտուտում (ներկայումս՝ Սանկտ Պետերբուրգի էլեկտրատեխնիկական համալսարան)՝ ստանալով ճարտարագետ-էլեկտրաֆիզիկոսի մասնագիտություն (1960թ.): Ա.Ֆ. Իոֆֆեի անվան ֆիզիկատեխնիկական ինստիտուտում նրան շնորհվել է գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (Լենինգրադ, 1969թ.): «Գիրկոնդ» գիտահետազոտական ինստի-

տուտում արժանացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի (Լենինգրադ, 1978թ.): Ա.Ֆ. Իոֆֆեի անվան ֆիզիկատեխնիկական ինստիտուտում 1983թ-ին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս է (2005թ., թղթակից անդամ՝ 2002-2005թթ.):

Իբրև ԽՍՀՄ էլեկտրոնային արդյունաբերության նախարարության «34» և «Գիրկոնդ» գիտահետազոտական ինստիտուտների ճարտարագետ, ավագ ճարտարագետ, առաջատար ճարտարագետ, լաբորատորիայի վարիչ (սկսած 1963թ-ից) և բաժնի վարիչ (սկսած 1966թ-ից) աշխատել է միկրոէլեկտրոնային տեխնոլոգիայի, կիսահաղորդիչների արտադրության և ինտեգրալ սխեմաների նախագծման ոլորտում (Լենինգրադ, 1961-81թթ.): Եղել է Լենինգրադի էլեկտրատեխնիկական ինստիտուտի «Դիէլեկտրիկների և կիսահաղորդիչների ամբիոնի» պրոֆեսոր (1973-81թթ.): Ա. Ֆ. Իոֆֆեի անվան ֆիզիկատեխնիկական ինստիտուտի «Ֆունկցիոնալ և ֆիզիկական միկրոէլեկտրոնիկայի լաբորատորիայի» վարիչն է (սկսած 1981թ-ից): Սանկտ Պետերբուրգի պետական ճարտարագիտական համալսարանի «Պիմո վիճակի էլեկտրոնիկայի ամբիոնի» վարիչն է (սկսած 1997թ-ից), եղել է նույն ամբիոնի վարիչի տեղակալը 1983-97թթ.:

Հեղինակ կամ համահեղինակ է մոտ 250 գիտական հոդվածի, 25 գյուտի, արտոնագրերի և գրքերի: Հիշարժան են նրա «Դիամագնիսական էքսիտոն սպեկտրոսկոպիա» («Նաուկա» հրատ., Մոսկվա, 1984թ.), «Կիրառական ֆիզիկա: Միկրոէլեկտրոնիկա» (Սանկտ Պետերբուրգի պետական ճարտարագիտական համալսարան, 2002թ.), «Միկրոէլեկտրոնիկայի սկզբունքները» (Լենինգրադի պոլիտեխնիկական ինստիտուտ, 1991թ.), 7-րդ գլուխը՝ «Լանդաուի մակարդակի սպեկտրոսկոպիա» գրքում («Էլսևիեր» հրատ., Հոլանդիա, 2001թ.) աշխատությունները: Հեղինակ է նաև գեղանկարչական երկու ցուցահանդեսի՝ «Երեք պրոֆեսորների» (Սանկտ Պետերբուրգի էլեկտրատեխնի-

կական համալսարան, 2003թ.) և «Անհատական» (Իոֆֆեի անվան ֆիզիկատեխնիկական ինստիտուտ, 2003թ.):

Հետազոտական դրամաշնորհների է արժանացել Սորոսի հիմնադրամի (1994-97թթ.), «ԻՆՏԱՍ-ի», «ՆԱՍՕ-ի» (Բրյուսել, 1995-96թթ.), Ռուսաստանի Դաշնության գիտության և կրթության նախարարության (1993-2005թթ.), Թագավորական ընկերության (Միացյալ Թագավորություն, 2002-2004թթ.), «ՍԿՕՊԵՍ-ի» (Շվեյցարիա, 2005-2008թթ.) կողմից: 7 անգամ հաղթող է ճանաչվել Սորոսի հիմնադրամի պրոֆեսորական մրցույթային ծրագրերում (Մոսկվա, 1997-2004թթ.): Դրամաշնորհների է արժանացել նաև Ռուսաստանի Դաշնության հիմնարար հետազոտությունների համար տրվող պետական դրամաշնորհային (Մոսկվա, 1993-2005թթ.) և «ԻՍՍՍ» ծրագրի (Մոսկվա, 2003-2006թթ.) մրցույթներում:

2005թ., Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաթերթի» տվյալների հիման վրա



ՍԵՅՐԱՆՅԱՆ Ալեքսանդր

SEYRANIAN Alexander

Մեխանիկայի և կիրառական մաթեմատիկայի բնագավառի մասնագետ: Գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է 1947թ. փետրվարի 17-ին Մոսկվայում: Պարույր Մեյրանյանի և Ջինաիդա Շիպովայի որդին է: Անուսնացել է Էլեոնորա Սահակյանի հետ (Թբիլիսի, Վրաստան, 1975թ.), դուստրը՝ Գայանե և որդին՝ Անդրեյ:

Ուսանել է Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում (ավարտել է 1971թ-ին): Ստացել է ֆիզիկամաթեմատի-

կական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Մեխանիկայի հիմնախնդիրների ինստիտուտ, Մոսկվա, 1977թ.): Նույն հաստատությունում 1988թ-ին նրան շնորհվել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Պաշտոնավարել է Աերոդինամիկայի կենտրոնական ինստիտուտում իբրև հետազոտող-ճարտարագետ (1971-73թթ.): ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Մեխանիկայի հիմնախնդիրների ինստիտուտում եղել է ասպիրանտ, ապա գիտաշխատող (Մոսկվա, 1973-91թթ.): Իբրև հրավիրված պրոֆեսոր դասավանդել է Գանիայի տեխնիկական համալսարանում (Կոպենհագեն, 1991-92թթ.): Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Մեխանիկայի ինստիտուտի առաջատար գիտաշխատող է և նույն հաստատության պրոֆեսոր (սկսած 1993թ-ից): Դասախոսություններով հանդես է եկել միջազգային բազմաթիվ գիտաժողովներում, ինչպես նաև Հայաստանի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Կանադայի, Միացյալ Թագավորության, Գերմանիայի, Ֆրանսիայի, Ճապոնիայի, Ավստրիայի, Իտալիայի, Չինաստանի, Դանիայի, Շվեդիայի, Ուկրաինայի, Լեհաստանի, Հունգարիայի, Սլովակիայի, Թուրքիայի համալսարաններում:

Հեղինակ կամ համահեղինակ է մոտ 120 գիտական հոդվածի, մենագրությունների: Հիշարժան են նրա «Կառուցվածքային կայունության ժամանակակից հիմնահարցերը» (համահեղինակ՝ Ի. Էլիշակով, «Սպրինգեր-Վերլագ» հրատ., Վիեննա և Նյու Յորք, 2002թ.), «Բազմաչափ կայունության տեսությունը մեխանիկայում ունեցած կիրառությամբ» (համահեղինակ՝ Մայիլբան, «Վոլդ Մայնրիֆ» հրատ., Սինգապուր, 2003թ.) գիտական աշխատությունները:

Անդամ է Կառուցվածքային և բազմաճյուղային նպատակահարմարեցման միջազգային միության: Խմբագրական կազմի անդամ է «Կառուցվածքային բազմաճյուղային նպատակահարմարեցման հանդեսի», «Տեսական և կիրառական մա-

թեմատիկայի հանդեսի» (Մերքիա, Չերնոգորիա): Գրախոսականներով աջակցում է «Կիրառական մեխանիկայի հանդես» (Ամերիկյան մաթեմատիկական ընկերության), «Մեխանիկայի եվրոպական հանդես», «Կառուցվածքային և բազմաճյուղային նպատակահարմարեցում», «Կիրառական մաթեմատիկայի և մեխանիկայի հանդես» (Ռուսաստան), «Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի զեկույցներ», «Պիմո մարմնի մեխանիկա» (Ռուսաստան) և այլ գիտական պարբերականների հրատարակմանը: Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի անդամ է:

Արժանացել է աշխարհի բազմաթիվ երկրների համալսարանների պարգևների և մրցանակների՝ այդ համալսարաններում տված դասախոսությունների համար: «Կիրառական մաթեմատիկա և մեխանիկա» հանդեսում տպագրված լավագույն հոդվածի համար նրան շնորհվել է «Էլսևիեր Պուրիշեր» հրատարակչության 2001թ. մրցանակը: Կենսագրականը ընդգրկված է «Ով ով է աշխարհում» (Մարկիս հրատ., 1999 և 2001թթ.) և «Ով ով է գիտության և ճարտարագիտության մեջ» (Մարկիս հրատ., 2005թ.) հատորներում:

2005թ., Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաթերթի» տվյալների հիման վրա



ՍԵՎԱՆ Սևդա

SEVAN Sevda

Գրող, բանաստեղծուհի, դիվանագետ: Հայաստանի Հանրապետության նախկին արտակարգ և լիազոր դեսպան Բուլղարիայի Հանրապետությունում: Սոֆիա, Բուլ-

դարիայի Հանրապետություն: Ծնվել է 1945թ. նոյեմբերի 6-ին Նովա Ջագորայում (Բուլղարիա): Ծննդով՝ Ֆրանսուհի Գևորգի Բախչեջյան (բուլղարերեն – Франсухи Кеворк Бахчеджиян): Ամուսնացել է երջանկահիշատակ գրող Կրթան Ստամատովի հետ, ունի մեկ որդի:

Ավարտել է Սոֆիայի Մուրբ Կլիմենտ Օֆրիդակու անվան համալսարանի բուլղարական բանասիրության ֆակուլտետը:

Հեղինակ է «Ռոդոսթո, Ռոդոսթո» (1982թ.), «Որևէ տեղ Բալկաններում» (1987թ.), «Դեր Ջոր» (1933թ.) վեպերի (առաջին երկուսը բուլղարերենից թարգմանված են հայերեն և ֆրանսերեն լեզուներով), բանաստեղծական ժողովածուների, ճամփորդական հուշագրությունների և մանկական գրքի՝ «Հեքիաթներ Նիլի, Պագանի, Բիենայի համար» (2006թ.): Հեղինակն է «Ցեղասպանություն» վավերագրական ֆիլմի (1989թ.):

Եղել է Հայաստանի Հանրապետության նախկին արտակարգ և լիազոր դեսպանը Բուլղարիայի Հանրապետությունում (1994–2004թթ.): Բուլղարիայի և Հայաստանի գրողների (1996թ–ից) միությունների անդամ է:

Պարգևատրվել է Բուլղարիայի Հանրապետության «Բալկանյան լեռներ», առաջին աստիճանի շքանշանով՝ հանրապետության նախագահ Գեորգի Պրվանովի կողմից, հայ–բուլղարական բարեկամությանը բերած ծառայությունների համար (Սոֆիա, 2005թ.): Արժանացել է Կոնստանտին Կոնստանտինովի անվան գրական մրցանակի (2006թ.), Բուլղարիայի գրողների միության Պետյա Կարակոլովի անվան ազգային մրցանակի (մանկական գրական ստեղծագործության համար, 2006թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ՍԻՄՈՆՅԱՆ Մարգարիտ

SIMONIAN Margarita

Լրագրող: «Ռուսաստանն այսօր» հեռուստաընկերության գլխավոր տնօրեն և գլխավոր խմբագիր: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է Կրասնոդարում (Ռուսաստան) 1980թ–ի ապրիլի 6–ին (հայրանունը՝ Սիմոն):

Միջնակարգ դպրոցի ավարտական դասարանում մեկնել է ԱՄՆ, Նյու Հեմպշիր՝ մասնագիտանալով անգլերենի ուսուցման մեջ: Ավարտել է Կուբանի պետական համալսարանի լրագրության ֆակուլտետը: Լրագրողական մասնագիտական դասընթացներ է անցել Վլադիմիր Պոզների «Հեռուստատեսային լրատվության վարպետության դպրոցում»:

Եղել է «Կրասնոդար» հեռուստաընկերության տեղեկատվական հաղորդումների պատասխանատու խմբագիր (1999–2000թթ.): Աշխատել է իբրև Հեռուստատեսային և ռադիո հեռարձակումների համառուսաստանյան ընկերության սեփական թղթակից Դոնի Ռոստովում (2001–2002թթ.): Նշանակվել է Ռուսաստանի «Լուրեր» հեռուստաընկերության հատուկ թղթակից (2002թ.): Պաշտոնավարել է իբրև Ռուսաստանի Դաշնության նախագահի Կրեմլի նախագահական լրագրողական խմբի (President Pool) անդամ (հինգ անդամից մեկը, 2002–2005թթ.): Ստանձնել է «Ռուսաստանն այսօր» (հեռարձակումը անգլերեն լեզվով) նորաբաց հեռուստաընկերության գլխավոր խմբագրի պաշտոնը (սկսած 2005թ–ից):

Ի թիվս այլոց, հիշարժան են նրա լրատվական տեղեկատվությունները Ռուսաստանի «թեժ կետերից», մասնավորապես Չեչնիայից (1999թ.), Օսեթիայից

(Բեսլանի դեպքերի առնչությամբ, 2004թ.), հաղորդագրությունները ռազմական գործողությունների մասին և այլն: Եղել է Ռուսաստանի նախագահ Պուտինին ուղեկցող լրագրողների խմբում, նրա Հայաստան կատարած պաշտոնական այցի ընթացքում (2005թ.):

Արժանացել է Կուբանի լրագրողների միության «Մասնագիտական արիության համար» մրցանակի (գինվորական լրատվական հաղորդագրությունների համար, 2000թ.), Հեռուստաընկերությունների 2–րդ համառուսաստանյան մրցանակաբաշխության մրցանակի (Անապայում հանգստացող չեչեն երեխաների մասին լրատվության համար, 2000թ.), Ռուսաստանի Դաշնության նախագահի հատուկ կրթաթղթակի (2000թ.), Ռուսաստանի պաշտպանության նախարարության «Մարտական համագործակցության ամրապնդման համար» շքանշանի (Բեսլանի դեպքերի մասին լրատվության համար, 2005թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ՍԻՍԱԿՅԱՆ Ալեքսեյ

SISSAKIAN Alexey

Ֆիզիկոս: Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի տնօրեն: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի անդամ: Բնական գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, պրոֆեսոր, գիտությունների դոկտոր: Դուբնա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է Մոսկվայում 1944թ. հոկտեմ-

բերի 14–ին: Նորայր Մարտիրոսի Միսակյանի (կենսաբան, Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի և ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս) և Վարվառա Պետրովնա Միսակյան–Ալեքսեևայի որդին է: Ամուսնացել է Նատալյա Ելցովա–Միսակյանի հետ, դուստրը՝ Անաստասիա:

Ուսանել է Մոսկվայի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում (1962–68թթ.): Ստացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի (1980թ.), ապա դոկտորի գիտական աստիճան (1980թ.): Տեսական ֆիզիկայի պրոֆեսոր է (սկսած 1986թ–ից): Ռուսաստանի ճարտարագիտական ակադեմիայի անդամ է (սկսած 1992թ–ից): Անդամ է Բնական գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի (սկսած 1994թ–ից): Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ է (սկսած 2003թ–ից): Ընտրվել է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի անդամ (2008թ.):

Աշխատել է իբրև Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի Տեսական ֆիզիկայի լաբորատորիայի գիտաշխատող, ապա ավագ գիտաշխատող (1968–78թթ.), այնուհետև նույն լաբորատորիայի վարիչ (1978–79թթ.): Պաշտոնավարել է իբրև ինստիտուտի ավագ գիտական քարտուղար (1979–89թթ.), ապա փոխտնօրեն (1989–2005թթ.): 2006թ–ից սկսած Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի և Բոգոլյուբովի անվան տեսական ֆիզիկայի լաբորատորիայի տնօրենն է: Մոսկվայի ռադիոտեխնիկայի էլեկտրոնիկայի և ավտոմատիկայի ինստիտուտի (սկսած 1989թ–ից) և Մոսկվայի պետական համալսարանի (սկսած 1992թ–ից) պրոֆեսոր է: Մոսկվայի ֆիզիկատեխնոլոգիական ինստիտուտի «Տարրական մասնիկների ֆիզիկայի» ամբիոնի ղեկավարն է (սկսած 1992թ–ից):

Հեղինակ է ավելի քան 350 գիտական հոդվածի և 3 գյուտի՝ տարրական մասնիկների ֆիզիկայի, ֆիզիկայի տեսական և մաթեմատիկական մեթոդների բնագավառում: Բանաստեղծական 5 հատորի և

գրական պարբերականներում տպագրված պոեմների և էսսեների հեղինակ է: «Տարրական մասնիկների ֆիզիկա և ատոմական միջուկներ» և «Մասնիկներ և միջուկներ, նամակներ» գիտական հանդեսների գլխավոր խմբագիրն է: Բազմաթիվ գիտական հանդեսների խմբագրական կազմերի և մասնագիտական գիտական խորհուրդների անդամ է: Կազմակերպիչն ու ղեկավարն է Բարձր էներգիաների ֆիզիկայի միջուկային հետազոտությունների եվրոպական կազմակերպության (CERN) և Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի ամենամյա համատեղ դասընթացների:

Փոխնախագահն է Դուբնայի բնության և հասարակության միջազգային համալսարանի (սկսած 1994թ-ից), վերջինիս տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչն է (սկսած 2003թ-ից): Մաքուր և կիրառական ֆիզիկայի միջազգային միության մասիկների և դաշտերի խորհրդի, Ապագայի արագացուցիչների միջազգային հանձնախմբի, Ապագայի արագացուցիչների եվրոպական հանձնախմբի (Ատոմական էներգիայի նախարարություն, Ռուսաստան), Հիմնարար հետազոտությունները համակարգող հանձնախմբի (Ռուսաստանի արդյունաբերության նախարարություն), Ռուսաստանի գիտության և տեխնիկայի հանձնախմբի անդամ է:

Պարգևատրվել է Գիտության և տեխնոլոգիայի գծով Լենինյան կոմերիտմիության մրցանակով (1973թ.), «Ժողովուրդների բարեկամության շքանշանով» (Ռուսաստան, 1995թ.), Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի մասնակից երկրների շքանշաններով, պարգևներով և մրցանակներով՝ «Կիրիլ Մեթոդիուսի, առաջին կարգի» շքանշանով (Բուլղարիա, 1981թ.), «Բարեկամության» շքանշանով (Մոնղոլիա, 1996թ.), «Բարեկամության, երկրորդ կարգի» շքանշանով (Կորեայի Ժողովրդական Հանրապետություն, 1996թ.), «Մոսկվայի 850-ամյակի» շքանշանով (Ռուսաստան, 1997թ.), «Պատվոնշան» (Ռուսաստան, 2005թ.) շքանշանով, Հայաստանի պետական մրցանակով և «Անանիա Շիրակացի» շքանշանով (Հա-

յաստան, 2006թ.), Բնական գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի Կապիցայի անվան՝ «Գիտական հայտնագործության հեղինակին» շքանշանով: Տվերի, Երևանի և Դուբնայի պետական համալսարանների պատվավոր պրոֆեսոր է, ռուսաստանյան և արտասահմանյան բազմաթիվ համալսարանների պատվավոր դոկտոր: Հայաստանի Աշտարակ քաղաքի պատվավոր քաղաքացի է: Արժանացել է «Նաուկա ինտերպրետողիկա» միջազգային հրատարակչական ընկերության մրցանակին (Ռուսաստան, 2002թ.):

2005թ. Գայկական կենսագրական կենտրոնի «Գարգաբերթի» տվյալների հիման վրա



**ՍՆԱԳՅԱՆ Պողոս
ՍՆԱՊԵԱՆ Պողոս**

SNABIAN Boghos

Խմբագիր, գրող, հրապարակախոս: Բեյրութ, Լիբանան: Ծնվել է 1927թ-ին Մուսա Լեռան Բիթիաս գյուղում: Մարկոս Սնայանի և Մարիամ Քեշիշյանի որդին է: Անունացել է Աղավնի Վարժապետյանի հետ (Բեյրութ, 1965թ.), ունի երկու դուստր և մեկ որդի:

Նախնական կրթությունը ստացել է Բիթիասի «Յառաջ» դպրոցում: Այնուհետև ուսանել է Երուսաղեմի «Ժառանգավորաց» ճեմարանում: Աշակերտել է Հակոբ Օշականին: Փարիզում երկու տարի հաճախել է գրականության դասընթացների:

Առաջին հոդվածը՝ «Տաղ տրտմության», լույս է տեսել է 1948թ-ին: Հրատարակել է «Միջնաբերդ» գրական տարեգիրքը (1960-62թթ.): Որպես խմբագիր աշխատել է «Բագին» ամսագրում (Կարո Սասունի և Երվանդ Բոյաջյանի հետ, սկսած 1962թ-ից), նաև «Ազդակ» օրաթերթում: Եղել է «Բագին» գրական հանդեսի գլխավոր խմբագիրը (մինչև 2003թ.): Հայ գրականություն է դասավանդել Համազգային կրթական հաստատության Բեյրութի հայագիտական հիմնարկում:

Մեկ տասնյակից ավելի գրքերի հեղինակ է: Հիշարժան են նրա «Յեղափոխութեան համար» (1956թ.), «Վերջին Արար» (1958թ.), «Ես այդ Շունն եմ» (1966թ. և 1992թ.), «Կորստական Թոյներ» (1970թ.),

«Աղբատներու Աանդութիւնը» (1983թ., 2002թ.), «Միջնարար 5» (1992թ.), «Ինչպէս Հայիոյեմ» (1990թ.) գրքերը, բազմաթիվ հոդվածները սփյուռքահայ պարբերականներում: Ի թիվս այլ հեղինակների, խմբագրել և հրատարակել է Հակոբ Օշականի երկերի ժողովածուները:

Պարգևատրվել է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսության «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյունների տվյալների հիման վրա

Վ



ՎԱՀՐԱՄՅԱՆ Հերման

VAHRAMIAN Herman

Ճարտարապետ, հայկական, իրանական և Մերձավոր Արևելքի երկրների ճարտարապետության հետազոտող-գիտնական, արվեստագետ, նկարիչ, քանդակագործ, գրող, խմբագիր, հրատարակիչ: Փիլիսոփայության դոկտոր ճարտարապետության ասպարեզում: Միլան, Իտալիա: Ծնվել է 1940թ-ին Թեհրանում:

Սկզբնական կրթությունը ստացել է Թեհրանի հայկական դպրոցում: 1960թ-ից ուսանել է Իտալիայում, Հռոմի համալսարանում, ապա Միլանի համալսարանի ճարտարապետության բաժնում: Միլանի տեխնոլոգիական համալսարանում ստացել է ճարտարապետության դոկտորի գիտական աստիճան (փիլիսոփայության դոկտոր ճարտարապետության ասպարեզում, 1972թ.):

Աշխատել է իբրև բնակավայրերի հատակագծման և կառույցների ճարտարապետ (1972-74թթ.): Հիմնադրել է Վտանգված մշակութային ժառանգության պահպանման ինստիտուտը (Միլան, 1977թ.): Համահիմնադիրն է «Մուզիքամ» ինստիտուտի (կոմպոզիտոր Լյուդվիգ Բագիլի հետ, Մյունխեն, Գերմանիա, 1981թ.). «ՕԵՄՄ» հրատարակչության (Միլան, 1985թ.):

Հեղինակ է 120 գիտական հոդվածի, մոտ 100 գրքի (հեղինակ կամ խմբագիր), բազմաթիվ հոդվածների իտալական մամուլում: Հիմնական աշխատությունները վերաբերում են հայկական, իրանական և մերձավորարևելյան ճարտարապետության ուսումնասիրությանը, արևելյան և արևմտյան քաղաքակրթությունների մշակութային առնչություններին, արվեստագիտությանը: Ի թիվս այլոց, հիշարժան են նրա «Ախթամար» (համահեղինակ՝ Սիրարփի Տեր-Ներսիսյան, Միլան, 1974թ.), «Գոչավանք», «Հայկական ճարտարապետության վավերագրեր» մատենաշար, համար 7 (համահեղինակ՝ Արմեն Զարյան, Միլան, 1974թ.), «Սևան, Հայրավանք, Նորադուր, Հացառատ, Մասրուտի անապատ, Շողակավանք, Վանեվան, Կոտայք...» (համահեղինակ՝ Ս. Մնացականյան, 1987թ.), «Լարաբաղ, վավերագրեր»

(1988թ.) և բազմաթիվ այլ աշխատություններ: Իտալիայում և Գերմանիայում ունեցել է նկարչական և քանդակագործական աշխատանքների բազմաթիվ անհատական և խմբական ցուցահանդեսներ: Եվրոպական տարբեր քաղաքներում արվեստի զանազան ասպարեզների բազմաթիվ ցուցահանդեսների ու ցուցադրությունների, դասախոսությունների, համերգների և փառատոների կազմակերպիչն է: Իտալիայի լրագրողների միության անդամ է (1996թ-ից):

Իտալիայի պատվավոր քաղաքացի է (1997թ.): Արժանացել է բազմաթիվ մրցանակների և պարգևների, այդ թվում «Տարվա լավագույն գիրքը» մրցանակի (նկարագարողման համար, Բելգիա, 1985թ.), Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթի նախարարի «Գովեստի նամակի» (2004թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆ Վարդուհի

VARDERESSIAN Varduhi

Թատրոնի և կինոյի դերասանուհի: Հայաստանի և նախկին ԽՍՀՄ ժողովրդական դերասանուհի: Ծնվել է 1928թ. մարտի 19-ին Բուխարեստում (Ռումինիա): Կարապետ և Աղավնի Վարդերեսյանների

դուստրն է: 1946թ-ին հայրենադարձվել է Հայաստան: Ամուսնացել է Գևորգ Աբաջյանի հետ, զավակները՝ Վահրամ և Սուրեն:

Ավարտել է Լենինականի (ներկայումս՝ Գյումրու) դրամատիկական թատրոնի ստուդիան (1947թ.): Եղել է Լենինականի դրամատիկական թատրոնի դերասանուհի (1947-58թթ.): Սկսած 1958 թվականից եղել է Երևանի Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնի դերասանուհի:

Սունդուկյանի անվան թատրոնի բեմում մոտ կես դար շարունակ խաղացել է մեծ թվով գլխավոր դերեր, այդ թվում Ջոնի (Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է»), Ռաննակայա (Չեխովի «Բալետո ալգին»), Վիրջինիա (Էդուարդո Գե Ֆիլիպոյի «Շաբաթ, կիրակի, երկուշաբթի»), Նաստասիա Ֆիլիպովնա (Դոստոևսկու «Ապուշը»), Կատարինե (Սարգոսի «Մադամ Սան Ժեն»), Տոմա տատիկ (Ալեխանդրո Կաստանյայի «Ծառերը կանգնած են մեռնում») և այլն: Իբրև գլխավոր դերերի դերակատար նկարահանվել է 15 գեղարվեստական կինոնկարում: Հիշարժան են նրա Մարգարիտի («Պատվի համար», 1956թ.), Մարիամի («Մոր սիրտը», 1958թ.), Նունեի («Հյուսիսսափայլ», 1961թ.), փաստաբանի կնոջ («Կարինե» 1967թ.), Մագթադի («Մորգանի Խնամին», 1970թ.), տատիկի (The Journey, 2002թ.) կերպարների մարմնավորումները կինոյում:

Հեղինակ է «Իմ կյանքի հեքիաթը» ինքնակենսագրական հատորի (Երևան, 2003թ.): Ի թիվս բազմաթիվ պետական պարգևների, արժանացել է նախկին ԽՍՀՄ ժողովրդական դերասանուհու պատվավոր կոչման (1988թ.): Երևանի պատվավոր քաղաքացի է (2002թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա

S



ՏԱՏՐՅԱՆ Վահագն

DADRIAN Vahakn

Պատմաբան-ցեղասպանագետ, սոցիոլոգ, իրավագետ: Ցեղասպանության ուսումնասիրությունների «Չորյան» ինստիտուտի տնօրեն: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ: Նյու Յորքի նահանգ, ԱՄՆ: Ծնվել է 1926թ-ի մայիսի 26-ին Կ.Պոլսում:

Ուսանել է Բեռլինի համալսարանի մաթեմատիկայի, այնուհետև Վիեննայի համալսարանի պատմության, ապա Ցյուրիխի համալսարանի միջազգային իրավունքի բաժիններում: Չիկագոյի համալսարանում արժանացել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճանի սոցիոլոգիայի ասպարեզում (1954թ.):

Դասավանդել է Նյու Յորքի պետական համալսարանում իբրև սոցիոլոգիայի պրոֆեսոր (1970-91թթ.): Այնուհետև ժամանակի մեծ մասը նվիրել է Հայոց ցեղասպանության ուսումնասիրությանը, եղել է ցեղասպանությունների ուսումնասիրության ծրագրի տնօրենը («Գուգենհայմի անվան հիմնարկության» մեկենասությամբ): Նրա հետազոտությունները արժանացել են նաև ԱՄՆ-ի ազգային գիտական հիմնադրամի դրամաշնորհներին: Միաժամանակ, մասնակցել է Հարվարդի համալսարանի հետազոտական աշխատանքներին իբրև գիտաշխատող, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտում եղել է հրավիրված

պրոֆեսոր և Ելի համալսարանում այցելու պրոֆեսոր:

Դասախոսել է (գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, հայերեն լեզուներով) աշխարհի բազմաթիվ նշանավոր համալսարաններում, այդ թվում Ամստերդամի և Ուորենխտի (Հոլանդիա, 1993-94թթ.), Ժնևի, Բրյուսելի (1996-98թթ.), Բեռլինի, Պարմայի, Տորինոյի (Իտալիա), Ֆրանկֆուրտի, Ցյուրիխի, Մյունխենի (Գերմանիա), Ուպսալայի (Շվեդիա), Երևանի և այլ համալսարաններում: Մասնակցել է Հայոց մեծ եղեռնի վերաբերյալ 1976թ. ԱՄՆ-ի կոնգրեսական լսումներին, 1999թ-ին դասախոսել է Միավորված ազգերի կազմակերպության Յունեսկո-ի Փարիզի կենտրոնում: 1995թ-ին Հայոց ցեղասպանության 80-ամյակի կապակցությամբ հրավիրվել է Մեծ Բրիտանիայի Պարլամենտ և դասախոսել Համայնքների պալատում:

Հեղինակ է «Հայոց ցեղասպանության պատմությունը, ազգային հակամարտությունը Բալկաններից մինչև Անատոլիա» (Օքսֆորդ և Պրովիդենս, 1995թ.) «Գերմանիայի պատասխանատվությունը Հայոց ցեղասպանության մեջ. պատմական վկայություններ Գերմանիայի մեղսակցության մասին» (Քեմբրիջ, 1996թ.), «Ցեղասպանության արդարացումը: Թուրք-հայկական հակամարտության հիմնական տարրերը» (Լոնդոն, Նյու Բրունսվիկ, Նյու Յորք, 1999), «Հայոց ցեղասպանության թուրքական մերժման հիմնական տարրերը» (Քեմբրիջ, 1999թ.) գրքերի, որոնց մի մասը թարգմանաբար լույս է տեսել նաև ֆրանսերեն, իտալերեն, ռուսերեն, հունարեն, բուլղարերեն, իսպաներեն լեզուներով, բազմաթիվ հոդվածների՝ ցեղասպանությունների պատմական, իրավական և հոգեբանական վերլուծության ասպարեզում:

Ընտրվել է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ (1998թ.):

Հայաստանի Հանրապետության չորս բարձրագույն ուսումնական հաստատության պատվավոր պրոֆեսոր է, այդ թվում Երևանի պետական համալսարանի (2005թ.): Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր դոկտոր է (1995թ.): Պարգևատրվել է Երևանի պետական համալսարանի «Ոսկե մեդալով» (2005թ.), մի շարք ուսումնական և գիտական հաստատությունների բարձրագույն պարգևներով:

Ցեղասպանությունն ուսումնասիրող գիտնականների միջազգային ընկերության կողմից պարգևատրվել է «Չեքքերումների համար» մրցանակով (2005թ.): Արժանացել է ԱՄՆ-ի «Էլիս Այլենդ» պատվո մեդալի (2005թ.), Հայաստանի Հանրապետության «Մովսես Խորենացի» մեդալի (2005թ.), Ամերիկայի հայկական ուսանողական ընկերության Դադյանի անվան մրցանակի (2004թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆՅ Նորատ

TER-GRIGORIANTS Norat

Զորահրամանատար: Պահեստագործի գեներալ-լեյտենանտ: Հայաստանի Հանրապետության զինված ուժերը ստեղծողներից մեկը: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է 1936թ. Վլադիկավկազում (Ռուսաստան), 1915թ. Հայոց ցեղասպանությունից փրկված և Վլադիկավկազում հաստատված Գրիգոր Տեր-Գրիգորյանցի ընտանիքում: Ամուսնացել է Վալենտինա Վասիլևնայի հետ, ունի երկու դուստր՝ Սվետլանա և Կարինա:

Ուսանել է Ուլյանովսկի տանկային ուսումնարանում, ապա Բարձրագույն սպայական դասընթացներում, ավարտել է Զրահատանկային զորքերի ակադեմիան: Երկու տարի ուսանել է ԽՍՀՄ զինված ուժերի գլխավոր շտաբի ակադեմիայում:

Ծառայել է Խորհրդային բանակում (1954-57թթ.): Ստանալով սպայական տարբեր աստիճաններ՝ ծառայությունը շարունակել է Նովոչերկասկում (դասակի հրամանատար), Բուրիաթիայում, Մոնղոլիայում, Բայկալյան երկրամասում: Հունգարիայում եղել է մոտոհրաձգային գնդի, ապա դիվիզիայի հրամանատար և շտաբի պետ (1973-78թթ.): Ստացել է գեներալ-մայորի զինվորական աստիճան (1976թ.): Նշանակվել է Թուրքեստանի զինվորական օկրուգի շտաբի պետի տեղակալ և մասնակցել Աֆղանական պատերազմին: Եղել է 40-րդ բանակի շտաբի պետը (1981թ.) և ղեկավարել ռազմական գործողությունները Աֆղանստանում մինչև պատերազմի ավարտը (1988թ.): Ստանալով գեներալ-լեյտենանտի զինվորական աստիճան, վերադարձել է Մոսկվա և նշանակվել Գլխավոր շտաբի ցամաքային զորքերի պետի տեղակալ և Ցամաքային զորքերի կազմակերպական-գորահավաքային վարչության պետ (մինչև 1991թ.): Թողնելով պաշտոնները, 1991թ-ին եկել է Հայաստան, ծայրահեղ սրված ռազմաքաղաքական իրավաճակում և տնտեսական ճգնաժամի պայմաններում ձեռնամուխ եղել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստեղծմանը (երջանկահիշատակ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի հետ): Նշանակվել է նորաստեղծ Հայկական բանակի գլխավոր շտաբի պետ, այնուհետև նաև Ռուսական ռազմակայանի պետ (1993թ.): Ղեկավարել է Արցախյան պատերազմի և Հայաստանի սահմանների պաշտպանության բազմաթիվ ռազմական գործողություններ մինչև 1994թ-ի զինադադարը (1995թ-ին վերադարձել է Մոսկվա):

Ռուսաստանի Դաշնություն ցամաքային զորքերի վետերանների միության նախագահն է: Անդամ է Աֆղանական պատերազմի վետերանների հանձնախմբի: Ռու-

սաստանի հայերի սիրության վարչության անդամ է:

Պարգևատրվել է Խորհրդային Միության տասնյակ մեդալներով ու շքանշաններով, որոնցից 6-ը՝ բարձրագույն պետական պարգևներ են մարտական ծառայությունների համար:

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



**ՏԵՐ- ԵՂԻԱՅԱՆ Սամվել
ՏԵՐ ԵՂԻԱՆԱՆ Սեւ**

DER-YEGHIAYAN Samuel

Իրավաբան: Ամերիկայի Միացյալ Նահանգների Իլինոյս նահանգի դաշնային դատավոր: Իրավագիտության դոկտոր: Ծնվել է 1952թ. փետրվարի 16-ին Հալեպում (Սիրիա): Ամուսնացած է Բեկի Տեր-Եղիայանի հետ, ունի դուստր և որդի:

Երկրորդական կրթությունն ստացել է Բեյրութում (Լիբանան): 19 տարեկանում մեկնել է ԱՄՆ: Սպրինգֆիլդի ավետարանական համալսարանում ստացել է արվեստների պսակավորի աստիճան քաղաքագիտության ասպարեզում (Միսսուրի, 1975թ.): Գերազանցությամբ ավարտելով Ֆրանկլին Պիրսի իրավագիտական կենտրոնը՝ ստացել է իրավագիտության դոկտորի կոչում (Կոնկորդ, Նյու Համպշիր, 1978թ.):

Պաշտոնավարել է ԱՄՆ-ի արդարադատության նախարարության Չիկագոյի ներգաղթի և հպատակագրման ծառայությունում (1978-82թթ.): Նշանակվել է նույն ծառայության գլխավոր դատախազ՝ Իլինոյս, Ինդիանա և Վիսկոնսին նահանգների դատախազական աշխատանքը վերահսկելու իրավասությամբ (1982-2000թթ.): Նախագահ Բիլնոնի կողմից նշանակվել է ԱՄՆ-ի արդարադատության նախարար-

ության Ներգաղթի վարչական ծառայության գլխավոր դատավոր (2000-2003թթ.): Նախագահ Բուշի կողմից առաջադրվել է Իլինոյս նահանգի դաշնային դատավորի պաշտոնում և հաստատվել Սենատի կողմից (2003թ.)՝ դառնալով առաջին հայազգի ներգաղթած դաշնային դատավորը ԱՄՆ-ի պատմության մեջ:

Ամերիկայի հայ իրավաբանների միության անդամ է (Լոս անջելոս):

Արժանացել է «Ակնառու ծառայություններ ունեցող պաշտոնյայի» աստիճանի՝ ԱՄՆ-ի արդարադատության նախարարության և գլխավոր դատախազի կողմից (1981-2000թթ. ընթացքում), «Բարձրագույն ձեռքբերումների համար» տրվող մրցանակի, «Գովասանագրերի»՝ Չիկագոյի իրավաբանների միության կողմից (օրենսդրության կատարելագործման ասպարեզում ունեցած ծառայությունների համար), Ֆրանկ Մակ-Գարրի անվան մրցանակի՝ Դաշնային իրավաբանների ընկերության կողմից, որպես Չիկագոյի ականավոր դաշնային դատախազ (1986թ.), ԱՄՆ-ի գլխավոր դատախազի և Ներգաղթի և հպատակագրման ծառայության կոմիսարի տարեկան մրցանակի (1998թ.), Սպրինգֆիլդի ավետարանական համալսարանի հասարակական գիտությունների ֆակուլտետի «Ռեզիդուս» մրցանակի (2004թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա:



ՏԵՐ-ԱՎԴԵՎՈՍՅԱՆ Արկադի

TER-TADEVOSSIAN Arkadi

Զորահրամանատար: Գեներալ-մայոր: Հայտնի է «Կոմանդոս» անունով: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է

1939թ. մայիսի 22-ին Թբիլիսիում (հայրանունը՝ Իվան):

Ուսանել է Բաքվի զինվորական հրամանատարական ուսումնարանում: Ավարտել է Լենինգրադի տրանսպորտի և քիկուցի ռազմական ակադեմիան: Խորհրդային բանակի կազմում ծառայել է Աֆղանստանում, Գերմանիայում, Չեխոսլովակիայում, Բելոռուսիայում, նաև Հայաստանում՝ 1987թ-ից: Աֆղանական պատերազմում աչքի է ընկել լեռնային պայմաններում ռազմական գործողությունները ղեկավարելու հմտությամբ, որի համար ստացել է «Լեռների աղվես» անունը:

Գործուն մասնակցություն է ունեցել Հայաստանի սահմանների պաշտպանության և Արցախյան պատերազմի աշխարհագրայինների ուսուցմանը (սկսած 1988թ-ից): Եղել է «Սասունցի Դավիթ» կամավորական ջոկատի անդամ, որի կազմում մասնակցել է Հայաստանի Հանրապետության սահմանամերձ շրջանների պաշտպանությանը ադրբեջանական հարձակումներից (սկսած 1990թ-ից): Նշանակվել է նորակախ Հայաստանի Հանրապետության պաշտպանության պետական հանձնախմբի պահեստագործի ուսուցման վարչության պետ (1991թ.) և մեկնել Արցախ (փոխգնդապետ Ֆ.Գոլյանի հետ) ղեկավարելու աշխարհագրայինների ռազմական ուսուցումը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի ստեղծման և ռազմական ուսուցման կազմակերպման մեջ ունեցած ծառայությունների համար ժողովրդի կողմից ստացել է «Կոմանդոս» անունը: Մշակել և փայլուն իրականացրել է Արցախյան պատերազմի վճռորոշ ռազմական գործողություններից մեկը՝ Շուշի քաղաքի ազատագրումը ադրբեջանական զորքերից (1992թ. մայիսի 8-9-ին): 1992թ-ին ստացել է զենքալ-մայրի զինվորական աստիճան: Եղել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կադրերի պատրաստման վարչության պետ և փոխնախարար: Ղեկավարում է Հայկական բանակի մարզական-պաշտպանական ընկերությունը (սկսած 2002թ-ից):

Պարգևատրվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Մարտական խաչ, առաջին աստիճանի» շքանշանով (2000թ.): Երևանի պատվավոր քաղաքացի է (1998թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ՏԵՐ-ԹՈՐՈՍՅԱՆ Բաբկեն

DER TOROSSIAN Papken

Էլեկտրոնիկայի ճարտարագետ, գործարար, բարերար: Էլեկտրոնային արդյունաբերության մի շարք ձեռնարկությունների տնօրենների խորհուրդների նախագահ և գլխավոր գործադիր տնօրեն: Սարատոգա, Կալիֆոռնիա, ԱՄՆ: Ծնվել է Լատակիա քաղաքում (Սիրիա) 1939թ-ին: Ամուսնացել է Զեր Տեր-Թորոսյանի հետ, 4 երեխայի հայր է՝ Գրեգ, Տինա, Ջիլ, Ջենիֆեր:

Մեխանիկական ճարտարագիտության ասպարեզում արվեստների պսակավորի կոչում է ստացել Մասաչուսետսի տեխնոլոգիական ինստիտուտում: Ավարտել է Ստենֆորդի համալսարանը՝ ստանալով մագիստրոսի աստիճան մեխանիկական ճարտարագիտության ասպարեզում: Սանտա Կլարայի համալսարանում մասնագիտացել է նաև բիզնեսի կառավարման ոլորտում:

Իբրև ճարտարագետ և արդյունաբերության ղեկավար տարբեր պաշտոններ է զբաղեցրել էլեկտրոնային արդյունաբերության «Սպեկտրա-ֆիզիկա» (4 տարի) և «Հյուլերդ Պաքկարդ» (մոտ 12 տարի) ընկերություններում: Եղել է «Պլանտրոնիկա» ընկերության Սանտա Կրուզի բաժանմունքի նախագահը և «Տելեֆոն Պրոդակտ» ընկերության փոխնախագահը (1976-81թթ.):

«Ի-ՄԻ-Էս միկրոսիստեմ» (հեռահաղորդակցության և անհատական համակարգիչների արտադրության ձեռնարկություն) ընկերությունում զբաղեցրել է գլխավոր գործադիր տնօրենի և նախագահի պաշտոնները: Եղել է էլեկտրոնային արդյունաբերության խոշոր ձեռնարկություններից մեկի՝ «Սիլիկոն Վալիի խմբի» նախագահը (սկսած 1984թ-ից), գլխավոր գործադիր տնօրենը (1986-91թթ.) և խորհրդի նախագահը (սկսած 1991թ-ից): Իբրև նախագահ ղեկավարել է «Սեմի-Սեմատեկ» ընկերությունը (1990-92թթ.): Եղել է Սիլիկոն Վալիի արդյունաբերողների խմբի խորհրդի անդամ (1997-2001թթ.): Եղել է նաև «Տերմա-Վեյվ» ընկերության խորհրդի նախագահ (սկսած 2003-07թթ.): Ներկայումս «Վեստեկ կիսահաղորդային համակարգեր» ընկերության մասնաճյուղի գործադիր տնօրեն է, «Պարկեր Վիզիոն» ընկերության տնօրենը և «Քրեստ Էնտերփրայզ ԼԼՍ» ընկերության առևտրական տնօրենը: Ամերիկյան էլեկտրոնային ընկերության Սիլիկոն Վալի և Բեյ շրջանների խորհուրդների, ինչպես նաև Միջազգային հասարակական գործերի հանձնախմբի նախագահն է:


ԱՄՆ-ի նախագահին կից Արտահանման կառավարման գրասենյակի խորհրդի ենթահանձնախմբի անդամ է (ԱՄՆ-ի արդյունաբերության ղեկավարման, Արդյունաբերության և անվտանգության պետական գրասենյակ): «Առաջատար եղանակով լիտոգրաֆիական կիսահաղորդային արտադրության» բաժնետիրական ընկերության հատուկ խորհրդական է: Կիսահաղորդային սարքերի և նյութերի, միջավայրի, առողջապահության և անվտանգության միջազգային հանձնախմբի նախագահն է: Անդամ է Ամերիկյան էլեկտրոնային ընկերության տնօրենների խորհրդի (նախագահ՝ 3 տարի ժամկետով), ինչպես նաև «Բեյ Շոր Լիրիկ Օպերա» ընկերության (հասարակական կազմակերպություն) խորհրդի, «Քրիստոնյաների և հրեաների ազգային կոնֆերանս» կազմակերպության խորհրդի, Սանտա Կլարայի «Արվեստների խորհրդի», Սանտա Կրուզի «Արդյունաբերողների

խորհրդի»: Մասաչուսետսի տեխնոլոգիական ինստիտուտի այցելու շրջանավարտ է և Սանտա Կրուզի Կալիֆոռնիայի համալսարանի հոգաբարձուների խորհրդի անդամ:

Հիմնադիրն ու հովանավորն է «Բեյ Շոր Լիրիկ Օպերա» («Կապիտոլա թատրոն») ընկերություն: «Սուրբ Անդրիաս» հայոց եկեղեցու մշակութային հանձնախմբի անդամ է և եկեղեցու բարերար-հովանավորներից մեկը (Սիլիկոն Վալի): Մեծարժեք նվիրատվություններ է կատարել Հայաստանի ամերիկյան համալսարանին, Մասաչուսետսի տեխնոլոգիական ինստիտուտին, սփյուռքի բազմաթիվ հայկական կազմակերպությունների:

Արժանացել է «Էլիս Այլենդ» պատվո շքանշանի (1995թ.), Խաղաղօվկիանոսյան արդյունաբերության և բիզնեսի ընկերության «Առաջատարի մրցանակի» (2000թ.), «Տարվա ձեռներեց» մրցանակի (Սիլիկոն Վալի, 2002թ.):

2006թ. Բաց տպագրության տեղեկատվական արքյուրների տվյալների հիման վրա



ՏԵՐ-ԿՅՈՒՐԵՂՅԱՆ Արմեն

DER KIUREGHIAN Armen

Քաղաքացիական ճարտարագիտության պրոֆեսոր: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ, Կալիֆոռնիայի համալսարանի Թայլեյի անվան պրոֆեսոր: Սան Ֆրանցիսկո, Կալիֆոռնիա, ԱՄՆ: Ծնվել է 1947թ. հոկտեմբերի 4-ին Նոր Ջուդայում (Սպահանի նահանգ, Իրան): Սնբատ Տեր-Կյուրեղյանի և Արաքս Աֆտանդիլյանի որդին է: Ամուսնացել է Նելլի Ուզունյանի հետ (Գլենդեյլ,

Կալիֆոռնիա, 1983թ.), դուստրը՝ Նաիրա, որդին՝ Սեպուհ:

Ուսանել է Թեհրանի համալսարանի քաղաքացիական ճարտարագիտության բաժնում՝ ստանալով պսակավորի գիտական աստիճան (Իրան, 1970թ.): Նույն հաստատությունում ստացել է մագիստրոսի գիտական աստիճան (1971թ.): Ուրբանա-Չենպեյնի Իլինոյսի համալսարանում արժանացել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճանի կառույցների ճարտարագիտության ասպարեզում (Իլինոյսի նահանգ, ԱՄՆ, 1975թ.):

Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի քաղաքացիական ճարտարագիտության բաժնում պաշտոնավարել է իբրև օգնական-պրոֆեսոր (Լոս Անջելոս, 1975-78թթ.): Նույն համալսարանի Քաղաքացիական ճարտարագիտության և շրջակա միջավայրի բաժնում եղել է պաշտոնակից-պրոֆեսոր (1981-85թթ.), պրոֆեսոր (1985-99թթ.), կառույցների ճարտարագիտության, մեխանիկայի և նյութերի ամբիոնի վարիչի տեղակալ (1990-93թթ.), ապա ամբիոնի վարիչ (Բերկլի, 1997-2001թթ.): 1999թ-ից ղեկավարում է Քաղաքացիական ճարտարագիտության ամբիոնն իբրև Թայգեյի անվան պրոֆեսոր (Կալիֆոռնիայի համալսարան, Բերկլի): Իբրև հրավիրյալ պրոֆեսոր դասավանդել է Տոկիոյի համալսարանի Առաջատար գիտության և տեխնոլոգիայի կենտրոնի Միցուբիշիի ծանր արդյունաբերության ամբիոնում (Ճապոնիա, 1989թ.): Եղել է Հայաստանի ամերիկյան համալսարանի ճարտարագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրենը (Երևան, 1989թ.): Ղեկավարում է Հայաստանի ամերիկյան համալսարանի ճարտարագիտական քոլեջը (Կալիֆոռնիայի համալսարանի մասնաճյուղը Երևանում, սկսած 1991թ-ից): Իբրև պրոֆեսորադասախոսական կազմի անդամ դասավանդում է Երկրաշարժային վտանգի նվազեցման համար առաջավոր հետազոտությունների եվրոպական դպրոցում (Պավիա, Իտալիա, 2002թ-ից սկսած):

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ է (սկսած

1998թ-ից): Անդամ է Քաղաքացիական ճարտարագետների ամերիկյան ընկերության (սկսած 1975թ-ից): Այդ ընկերության Ատոմակայանների կառույցների անվտանգության (1979-83թթ.), Շենքերի անվտանգության (1979-84թթ.), Ծրագրերի (1984-86թթ.), Երկրաշարժային վտանգի (սկսած 1981թ.), Ստուգող (1986-90թթ.), Հավանական մեթոդների (1980-88թթ. և սկսած 2003թ-ից) հանձնախմբերի անդամ է (1983-84 և 1986-87թթ. եղել է հանձնախմբի փոխնախագահ, իսկ 1984-86թթ.՝ նախագահ): Անդամ է նաև Երկրաշարժերի ճարտարագիտական ուսումնասիրության ինստիտուտի (սկսած 1979թ.), 1988թ. ղեկտնմբերի 7-ի հայաստանյան երկրաշարժի գիտական և ճարտարագիտական ուսումնասիրության ԱՄՆ-ի խմբի (1988թ.), Հայաստանի սեյսմոլոգիական ընկերության (սկսած 1975թ.): Կառուցվածքային անվտանգության և հուսալիության միջազգային ընկերության (Կառուցվածքային ճարտարագիտության հավանական մեթոդների հանձնախմբի, Հաշվողական մեխանիկայի և կառույցների հուսալիության ենթահանձնախմբերի անդամ է 1986թ-ից և նախագահ՝ 2001թ-ից): Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի արտասահմանյան անդամ է (սկսած 1994թ-ից) և Հայաստանի երկրաշարժների ճարտարագիտական ուսումնասիրության ընկերության անդամ (սկսած 2002թ-ից): Տեղեկատվության մշակման միջազգային միության «Կառուցվածքային համակարգերի հուսալիության և բարելավման աշխատանքային խմբի» անդամ է (1986թ-ից): Եղել է Երկրաշարժերի ճարտարագիտական ուսումնասիրության բնագավառում համալսարանների համադաշնության տնօրենների խորհրդում Բերկլիի Կալիֆոռնիայի համալսարանի ներկայացուցիչը (1998-2004թթ.), տնօրենների խորհրդի քարտուղարը (2000-2001թթ.) և գանձապահը (2001-2004թթ.): Նախագահն է Քաղաքացիական ճարտարագիտության հուսալիության և վտանգների ուսումնասիրության ընկերության (2003թ-ից, եղել է հանձնախմբի նախագահ՝ 1999-2003թթ.):

Հեղինակ է կամ համահեղինակ մոտ 300 գիտական հոդվածի, որից 87-ը հրատարակված արխիվային գիտական հանդեսներում, ճարտարագիտության տարբեր բնագավառներում, մասնավորապես կառուցվածքային հուսալիության, վտանգների վերլուծության, պատահական տատանումների, տվյալների վերլուծության, երկրաշարժային ճարտարագիտության ասպարեզներում: «Ճարտարագիտական մեխանիկայի ամսագիր» գիտական հանդեսի խմբագրական կազմի փոխնախագահն է և «Հավանականությունների ճարտարագիտական մեխանիկա», «Կառուցվածքային կայունություն», «Երկրաշարժերի ճարտարագիտություն և կառուցվածքային դինամիկա», «Երկրաշարժային սպեկտրներ», «Հաշվողական կառուցվածքային ճարտարագիտություն», «Սեյսմոլոգիայի և երկրաշարժային ճարտարագիտության ամսագիր» հանդեսների խմբագրական կազմի անդամ:

Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադիրներից մեկն է: Եղել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի հոգաբարձուների խորհրդի անդամ (1993-96թթ.): Ղեկավարել է Սան Ֆրանցիսկոյի ծովածոցի շրջանի Հայ արհեստավարժների ընկերությունը (1985-86թթ.), եղել է կրթաթոշակների հատկացման հանձնախմբի անդամ (1983-84թթ.): Եղել է նաև Կալիֆոռնիայի համալսարանի (Բերկլի) հայ ուսանողների ընկերության փոխնախագահը (1984-86թթ.) և նախագահը (1989-94թթ.) գործուն մասնակցություն ունենալով Վիյամ Սարոյանի անվան հայագիտական ուսումնասիրությունների կազմակերպմանը: Կալիֆոռնիայի համալսարանում ղեկավարել է հայագիտական ուսումնասիրությունների խորհրդակցական հանձնախումբը (Բերկլի, 1994-2004թթ.): Անդամակցում է Սան Ֆրանցիսկոյի Հայկական ամենօրյա դպրոցի խորհրդին (1980-82, 1987-89 և սկսած 1994թ-ից), եղել է այդ խորհրդի փոխնախագահը (1981-82թթ.):

Արժանացել է Գիտության զարգացման ճապոնական ընկերությանը գիտական անդամակցության կոչման (Ճապոնիա 1983թ.): Վախտեր Հյուբերի անվան քաղա-

քացիական ճարտարագիտության գիտական մրցանակի (Քաղաքացիական ճարտարագիտության ամերիկյան ընկերության կողմից, 1988թ.), Լյուբլիանայի համալսարանի Ֆուլբրայտի անվան ակադեմիկ (Սլովենիա, 1989թ.), Տոկիոյի համալսարանի Միցուբիշիի ծանր արդյունաբերության ամբիոնի այցելու պրոֆեսորի կոչման (Ճապոնիա, 1989թ.), «Տարվա մարդը» մրցանակի (Հայ արհեստավարժների միության կողմից, Լոս Անջելոս, 1996թ.), «Տարվա քաղաքացին» մրցանակի (Ամերիկահայ քաղաքացիական լիգայի կողմից, Սան Ֆրանցիսկո, 1997թ.), Թայգեյի անվան պրոֆեսորի կոչման քաղաքացիական ճարտարագիտության գծով (Կալիֆոռնիայի համալսարանի կողմից, 1999թ.), Քաղաքացիական ճարտարագիտության հուսալիության և վտանգների կանխարգելման ուսումնասիրման ընկերության մրցանակի (1999թ.), Հայաստանի Հանրապետության «Մովսես Խորենացի» մեդալի (Երևան, 2001թ.), Երկրաշարժային ճարտարագիտության հայկական ընկերության պատվոգրի (Երևան, 2003թ.), Թեհրանի համալսարանի ակադեմիկ շրջանավարտի մրցանակի (Իրան, 2004թ.), Ամերիկյան քաղաքացիական ճարտարագետների միության Ալֆրեդ Ֆրոյդենթալի անվան մեդալի (2006թ.):

2005թ. Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաթերթի» տվյալների հիման վրա



ՏԵՐ-ՂԱԶԱՐԻՅԱՆՑ Գեորգի

TER-GAZARIANTS Georgui

Քաղաքական գործիչ, դիվանագետ: Արտակարգ և լիազոր դեսպան (նախկին Խորհրդային Միության), պատվավոր

պրոֆեսոր: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է 1921թ-ի մարտի 10-ին Բաքվում: Արտաշես և Սոֆիա Տեր-Լազարյանցների որդին է: Ամուսնացել է Ելենա Տեր-Լազարյանցի հետ, դուստրերը՝ Կարինե և Մարինա:

Միջնակարգ կրթություն ստանալուց հետո (1941թ.) մեկնել է ռազմաճակատ, մասնակցել մարտական գործողություններին Հայրենական մեծ պատերազմում (1941-45թթ.), երկու անգամ վիրավորվել է: Վլադիկավկազի համար սնված մարտերում արժանացել է «Սխրանքի համար» շքանշանի (1942թ.):

Պատերազմի ավարտից հետո ուսանել է Լենինի անվան ռազմաքաղաքական ակադեմիայում՝ ստանալով պատմաբանի վկայական (1950թ.):

Իբրև սպա ծառայել է Հայկական 89-րդ Թամանյան հրաձգային դիվիզիայում: 1950թ-ից անցել է կուսակցական աշխատանքի Խորհրդային Միության համամիութենական կոմունիստական երիտասարդական միության ղեկավար մարմիններում: Եղել է Հայաստանի կոմունիստական երիտասարդական միության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար (Երևան, 1950): 1953թ-ին գործուղվել է Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն՝ օգնելու գերմանական երիտասարդական կազմակերպությունների աշխատանքին: 1954թ. ղեկավարել է առաջին խորհրդային երիտասարդական պատվիրակության այցը Ֆրանսիա: Նույն կազմակերպությունում եղել է Հակաֆաշիստական կոմիտեի նախագահի տեղակալ (1956թ.), այնուհետև Սոցիալիստական երկրների երիտասարդության հետ կապերի կոմիտեի նախագահ (Մոսկվա, 1957թ.): 1961թ-ին տեղափոխվել է Հայաստան՝ զբաղեցնելով Հայաստանի կոմունիստական կուսակցության բյուրոյի անդամի, այնուհետև բյուրոյի երկրորդ քարտուղարի կուսակցական պաշտոնները (1963-73թթ.): Նշանակվել է Խորհրդային Միության արտակարգ և լիազոր դեսպան Սենեգալի և Գամբիայի Հանրապետություններում (1973-81թթ.), իսկ 1981-87թթ-ին՝ Չինաստանի Հանրապետությունում (նրա ջանքերով այդ երկրում բացվել է

Խորհրդային Միության դեսպանատունը): Պաշտոնավարել է իբրև Խորհրդային Միության հեղինակային իրավունքի պաշտպանության պետական գործակալության նախագահի տեղակալ (1987-91թթ.):

Հեղինակ է բազմաթիվ հոդվածների, գրքերի: Հատկապես հիշարժան է նրա «Պատվո պահակախմբում՝ Ստալինի դազադի մոտ» հուշագրությունը: Ընդգրկված է «Մտավոր սեփականություն» (Ռուսաստանի Դաշնություն) հանդեսի և «Նոյան տապան» թերթի խմբագրական կազմում: Ռուսաստանի Դաշնություն լրագրողների միության անդամ է (սկսած 1997թ-ից): Հայկական բաց համալսարանի պատվավոր պրոֆեսոր է (Երևան, 1997թ.):

Ռուսաստանի հայերի միության փոխնախագահն է և Հայ առաքելական եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի թեմական խորհրդի անդամ:

Պարգևատրվել է «Հոկտեմբերյան հեղափոխության», «Կարմիր դրոշի» (երկու անգամ), «Հայրենական պատերազմի՝ առաջին աստիճանի», «Պատվո նշան», «Սխրանքի համար» և ԽՍՀՄ 12 այլ շքանշաններով ու մեդալներով, նախկին Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության և Լեհաստանի Ժողովրդական Հանրապետության պարգևներով և շքանշաններով:

2005թ. Դայկական կենսագրական կենտրոնի «Դարցաթերթի» տվյալների հիման վրա



ՏԵՐ-ՄԵՐԿԵՐՅԱՆ Ռոբերտ

DER MERGUERIAN Robert

Լեզվաբան: Գիտության դոկտոր, պրոֆեսոր: Մարսել, Ֆրանսիա: Ծնվել է 1938թ-ին Մարսելում: Հովհաննես և Անժել Տեր-Մեր-

կերյանների որդին է: Ամուսնացել է Էլենոր Գայանյանի հետ (1968թ.), որդին՝ Դոմինիկ, դուստրը՝ Օդրե:

Ուսանել է Երևանի պետական համալսարանում, այն ավարտել է 1962թ-ին: Պրովանսի համալսարանում արժանացել է դոկտորի գիտական աստիճանի լեզվաբանության ասպարեզում (Մարսել, 1982թ.): Նույն հաստատությունում ստացել է գիտահետազոտական աշխատանքի ղեկավարման իրավասություն (1998թ.):

Անգլերեն լեզու է դասավանդել Երևանի Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտում (1962-66թթ.): Եղել է Պրովանսի համալսարանի հայոց լեզվի և մշակույթի պրոֆեսոր (1982-06թթ.): Հիմնադիրն է Պրովանսի համալսարանի հայկագիտական հետազոտությունների ամբիոնի: Պաշտոնավարել է իբրև Պրովանսի համալսարանի «Չանագան լեզուներ» բաժնի տնօրեն (2003-06թթ.):

Հեղինակ է մեծ թվով գիտական հոդվածների՝ լեզվաբանության, հայագիտության, հայոց պատմության և հարակից գիտությունների ասպարեզում, որոնք հրատարակված են «Բազմավեպ» (Վենետիկ), «Պատմաբանասիրական հանդես» (Երևան), «Acta Orientalia» (Բուդապեշտ) և այլ գիտական հանդեսներում: Ֆրանսերենով, առանձին գրքերով լույս են տեսել նրա թարգմանությունները հայերենից՝ Ավ. Ահարոնյանի «Ազատության ճանապարհին» (Մարսել, 1978թ.) և Պ. Չեյթունցյանի «Ամենատխտի մարդը» (Մարսել, 2002թ.):

Գործուն մասնակցություն է ունեցել հայոց լեզվի և հայկական մշակութային արժեքների տարածմանը Ֆրանսիայում: Հիմնադիրն ու համակարգողն է «Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհրդի» (Մարսել, 1991թ.), համահեղինակն է այդ խորհրդի հրատարակած «Ուղեցույց»-ի չորս հատորի (Մարսել, 1993, 1995, 1998 և 2002թթ.): Անդամ է էքս-ան-Պրովանսի լեզվաբանական ակումբի (սկսած 1982թ-ից), Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային միության (Լեյդեն, սկսած 1983թ-ից), Հայագիտական ուսումնասիրությունների ընկերության (Փարիզ, սկսած 1993թ-ից), Հայոց լեզվի բարձրագույն խորհրդի (իբրև արտասահման-

յան անդամ, Երևան, սկսած 1996թ-ից), 15-րդ մասնագիտական հանձնախմբի (Պրովանսի համալսարան, 1999թ.): Եղել է «Հայագիտական ուսումնասիրություններ» միջազգային գիտական խորհրդակցության (Պրովանսի համալսարան, 2002թ.) կազմակերպիչը և այդ խորհրդակցության զեկուցումների հրատարակման խմբագիրը «Արմենիակա 1» և «Արմենիակա 2» հատորներում (2004թ. և 2008թ.):

Արժանացել է Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտորի կոչման (Երևան, 2007թ.): Ֆրանսիական մի շարք համալսարանների պատվավոր պրոֆեսոր է:

2005թ. Դայկական կենսագրական կենտրոնի «Դարցաթերթի» տվյալների հիման վրա



ՏԻԳՐԱՆՅԱՆ Հարրի

DIKRANIAN Harry

Իրավաբան, քաղաքացիական իրավունքի մասնագետ: Մոնրեալ, Զվերեկ, Կանադա: Ծնվել է Մոնրեալում 1967թ. օգոստոսի 8-ին: Տիգրան Տիգրանյանի և Մադլեն Չաքարյանի որդին է: Ամուսնացել է Նորա Ալեայանի հետ (Մոնրեալ, 1996թ.), երեխաները՝ Մարկ Տարո և Ալիսա Նորա:

Ուսանել է Մակ Գիլլի համալսարանում (Մոնրեալ), ստանալով քաղաքացիական իրավունքի և իրավագիտության պսակավորի կոչում, այնուհետև Զվերեկի Բարրոյի բարձրագույն դպրոցի Մոնրեալի բաժանմունքի մասնագիտական դասընթացներում (1997թ.): Արժանացել է արվեստների մագիստրոսի աստիճանի կառավարման և քաղաքական ուսումնասիրությունների ասպարեզում (1995թ.): Հաճախել է նաև Վենետիկի համալսարանի հայոց լեզվի և հայագիտության դասընթացներին

(Իտալիա, 1986թ.):

Պաշտոնավարում է «Ստերնթալ Կատ-գենլաուն Մոնտիինի» իրավաբանական ծա-ռայությունում (սկսած 1998թ.):

Հեղինակ է մի շարք հոդվածների իրա-վագիտության ասպարեզում: Կանադա-կան մի շարք հեռուստակայաններ հեռար-ձակել են նրա «Ցեղասպանության մեթո-ւմը» վավերագրությունը (սկսած 2005թ-ից): Կանադայի Գերագույն դատարանում շա-հել է 133 հազար ուսանողի համատեղ դա-տական հայցը՝ շահող կողմին բերելով 40 միլիոն դոլարի փոխհատուցում (2005թ.):

Եղել է Կանադայի հայ գործարարների խորհրդի նախագահ (2000թ.) և երկու ան-գամ փոխնախագահ (1999-2000թթ): Կա-նադահայերի կոնգրեսի տնօրենների խորհրդի անդամ է: Հիմնադիրն է «Կանա-դայի հայ երիտասարդների առաքելու-թյուն դեպի Հայաստան» կազմակերպու-թյան: Քվեբեկի ՀԲԸՄ «Ալեք Մանուկյան» վարժարանի ղեկավար խորհրդի անդամ է: Անդամ է Հայ իրավաբանների միության (Լոս Անջելոս):

2006թ., Դայվայկան կենսագրական կենտրոնի «Դարցաբերթի» տվյալների հիման վրա



ՏՅՈՒՐԵԿՅԱՆ Կարլ Գարեգին

TUREKIAN Karl Karekin

Ելի համալսարանի Ստերլինգի անվան պրոֆեսոր, երկրաքիմիկոս: Գիտություն-ների դոկտոր, ԱՄՆ-ի գիտությունների ազգային ակադեմիայի և Արվեստների և գիտությունների ամերիկյան ակադեմիայի անդամ: Նյու Հավեն, ԱՄՆ: Ծնվել է 1927թ-ին Նյու Յորք քաղաքում: Վոզան Թոմասի և Վիկտորիա Տյուրեկյանի որդին է: Ամուսնացել է Ռոբսան Տյուրեկյանի հետ, ունի մեկ դուստր՝ Կարլա Անն, և մեկ

որդի՝ Վոզան Չարլզ:

Ուսանել է Կոլումբիայի համալսարա-նում՝ ստանալով արվեստների մագիստրո-սի գիտական աստիճան (1951թ.): Նույն հաստատությունում ստացել է փիլիսոփա-յության դոկտորի գիտական աստիճան (1955թ.):

Գասավանդել է Կոլումբիայի համալսա-րանի Կոլումբիական քոլեջի երկրաբանու-թյան բաժնում իբրև դասախոս (1953-54թթ.), միաժամանակ եղել է Լամոնտ-Դո-հերտիի երկրաբանական դիտարանի գի-տաշխատող (1954-56թթ.), ապա Ելի հա-մալսարանի երկրաբանության և երկրա-ֆիզիկայի բաժնի պրոֆեսորի օգնական (1956-61թթ.), պաշտոնակից պրոֆեսոր (1961-65թթ.), պրոֆեսոր (1965-72թթ.), Հենրի Բեռնարդ Դեյվիսի անվան երկրա-բանության և երկրաֆիզիկայի պրոֆեսոր (1972-58թթ.), Բենյամին Սիլվանի անվան պրոֆեսոր (1985-2003), Ստերլինգի ան-վան պրոֆեսոր (սկսած 2003թ-ից): Ղեկա-վարել է Ելի համալսարանի երկրաբանու-թյան և երկրաֆիզիկայի բաժինը (1982-88թթ.) և Շրջակա միջավայրի ուսումնասի-րությունների կենտրոնը (1992-93թթ.): Ներկայումս ղեկավարում է Ելի համալսա-րանի Պիրոդի թանգարանի Երկնաքարերի և մոլորակների ուսումնասիրության գի-տական բաժինը և այդ հաստատության Հնագիտական ուսումնասիրությունների խորհրդի անդամ է: Ելի համալսարանի Համաշխարհային տեղաշարժերի ուսում-նասիրությունների կենտրոնի և Կենտրո-րի ուսումնասիրման ինստիտուտի տնօ-րենն է:

Հեղինակ կամ համահեղինակ է մեծ թվով գիտական հոդվածների և 5 գրքի՝ «Օվկիանոսներ» (2-րդ հրատ., 1976թ.), «Երկրի քիմիան» (1972թ.), «Մարդը և օվ-կիանոսը» (համահեղինակ՝ Բ.Շ.Սկիներ, 1973թ.), «Օվկիանոսագիտություն» (հա-մահեղինակներ՝ Կ.Լ.Դրեյկ, Ջ.Իմբրի, Ջ.Կնատու, 1978թ.), «Շրջակա միջավայրի համաշխարհային փոփոխությունները» (1996թ.): Եղել է «Համաշխարհային կեն-սաքիմիական ցիկլեր» (1990-95թթ.) և «Երկրաքիմիական և տիեզերաքիմիական ակտեր» (1997-99թթ.) գիտական հանդես-ների խմբագիրը, «Երկրաֆիզիկական հե-

տագոտություններ» հանդեսի «Օվկիա-նոսները և մթնոլորտը» բաժնի խմբագիրը (1969-75թթ.), «Թղթակցություններ Երկրի և մոլորակագիտության մասին» հանդեսի համախմբագիրը (1975-89թթ.), ԱՄՆ-ի «Գիտությունների ազգային ակադեմիայի աշխատություններ» հանդեսի խմբագրա-կան կազմի անդամ (1996-2000թթ.):

ԱՄՆ-ի գիտությունների ազգային ակադեմիայի և Արվեստների և գիտու-թյունների ամերիկյան ակադեմիայի ան-դամ է: Եղել է Երկրաքիմիական ընկերու-թյան (ԱՄՆ) նախագահը (1975-76թթ.):

Արժանացել է Գուգենհեյմի անվան մրցանակի (Քեմբրիջի համալսարան, 1963թ.), Գոլդշմիդտի անվան մրցանակի, Շերման Ֆերչայլդի անվան նշանավոր գիտնականի մրցանակի (Կալիֆոռնիայի տեխնոլոգիական ինստիտուտ, 1988թ.), Երկրաքիմիական ընկերության շքանշանի (1989թ.), Երկրաֆիզիկայի ամերիկյան ըն-կերության Մորիս Էվինգի անվան մեդալի (1997թ.), Լոնդոնի երկրաբանական ընկե-րության Վոլաստոնի անվան մեդալի (1998թ.), բազմաթիվ համալսարանների պատվավոր դոկտորի կոչման: 2000թ-ին նրան շնորհվել է Ամերիկայի հայկական ուսանողական միության Կարակչյանի ան-վան մրցանակը գիտության ասպարեզում:

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



**ՏՈՆԱՊԵՏՅԱՆ Պատրիկ
ՏՕՆԱՊԵՏԵԱՆ Պատրիկ**

DONABEDIAN Patrick

Հայագիտության պրոֆեսոր (Պրովան-սի համալսարան): Գիտության հավաս-տագրված դոկտոր արվեստի պատմու-

թյան ասպարեզում: Էքս-ան-Պրովանս, Ֆրանսիա: Ծնվել է Թունիսում (Թունիս), 1953թ. փետրվարի 13-ին: Չարեհ Տոնա-պետյանի և Կարմեն Չերվոսի որդին է: Ամուսնացած է Ռենատա Յադլաուսկայ-տեի (Jadlauskaitė) հետ, դուստրերը՝ Գա-յանե և Լուսինե:

Ավարտել է Պրովանսի համալսարանը (ռուսաց լեզվի մագիստրոսի աստիճանով, 1974թ.), այնուհետև Փարիզի 10-րդ-Նան-տեր համալսարանը (արվեստի պատմու-թյան մագիստրոսի աստիճանով, 1977թ.): Ուսանել է Երևանի պետական համալսա-րանի ասպիրանտուրայում (հայագիտու-թյուն և արվեստի պատմություն մասնագի-տությամբ, 1975-80թթ.): Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգի) գեղարվես-տի ակադեմիայում արժանացել է արվես-տագիտության թեկնածուի գիտական աս-տիճանի (1981թ.): Ավարտել է Երևանի պե-տական համալսարանը (հայոց լեզու մաս-նագիտությամբ, 2002թ.): Փարիզի 10-րդ-Նանտեր համալսարանում ստացել է դոկ-տորի գիտական աստիճան արվեստի պատմության ասպարեզում (1986թ.): Ար-վեստի պատմության և հայագիտության հավաստագրված դոկտոր է (գիտական հետազոտությունների ղեկավարման իրա-վասությամբ, Մոնպելիեի 3-րդ համալսա-րան, 2004թ.):

Ֆրանսերեն լեզու է դասավանդել Երևանի և Մոսկվայի համալսարաններում (1979-84թթ.): Եղել է Նիգերիայում Ֆրան-սիայի դեսպանատան Ֆրանսերեն լեզվի կենտրոնի տնօրենը (Լագոս, Նիգերիա, 1984-88թթ.): Ռուսաց լեզու է դասավանդել ֆրանսիական միջնակարգ դպրոցներում (1988-92թթ.): Արևելյան լեզուների և մշա-կույթի ազգային ինստիտուտում (Փարիզ) դասավանդել է հայոց մշակույթի պատմու-թյուն (արվեստի պատմություն) առարկան (1991-93թթ.): Եղել է Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության մշակութային հարցերի գծով կցորդ (1992-96թթ.), ապա Լիտվայում Ֆրանսիայի դեսպանության խորհրդական մշակույթի և համագործակ-ցության հարցերի գծով (1996-2001թթ.): Իբրև խմբագիր պաշտոնավարել է Ֆրան-սիայի արտաքին գործերի նախարարու-

թյունում՝ Ռուսաստանի և բալթյան պետությունների հետ համագործակցության հարցերի ոլորտում (2001–2004թթ.): Եղել է Ուկրաինայում Ֆրանսիայի դեսպանության խորհրդական մշակույթի և համագործակցության գծով (2004–2006թթ.): Պրովանսի համալսարանի հայագիտության պրոֆեսոր է և Միջերկրածովյան միջնադարյան հնագիտության լաբորատորիայի (Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի և Պրովանսի համալսարանի միացյալ գիտական ստորաբաժանում) գիտաշխատող (սկսած 2006թ–ից):

Հեղինակ է բազմաթիվ գիտական հոդվածների, մենագրությունների, գրքերի առանձին գլուխների, տեղեկատուների և այլն՝ արվեստի պատմության, հայագիտության, հայկական ճարտարապետության պատմության և հարակից այլ ասպարեզներում: Հիշարժան են նրա «Հայկական ճարտարապետության ոսկեդարը՝ 7–րդ դար» (Մարսել, 2008թ.) մենագրությունը, «Հայկական արվեստ» (համահեղինակ՝ Ժ.Մ. Տիերի, Փարիզ, 1987թ.), որը թարգմանված է գերմաներեն (Ֆրիբուրգ, 1988թ.) և անգլերեն (Նյու Յորք, 1989թ.) լեզուներով, «Լարաբադ» (համահեղինակ՝ Կ. Մուրաֆյան, 1989թ.), «Արցախ՝ Լարաբադի պատմությունը» (համահեղինակ՝ Կ. Մուրաֆյան (Փարիզ, 1991թ.) գրքերը: Համախմբագիրն է (Ռ. Տեր–Մերկերյանի հետ) «Արմենիակա 2»՝ «Հայ մշակույթը երեկ և այսօր» միջազգային հայագիտական գիտաժողովի (Պրովանսի համալսարան, Էքս–ան–Պրովանս, 2007թ.) զեկուցումների ժողովածուի (Էքս–ան–Պրովանսի համալսարանի հրատ., 2008թ.):

Անդամ է Ֆրանսիայի հնագետների ազգային միության (Փարիզ), Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային ընկերության (Լեյդեն, Նիդերլանդներ):

Արժանացել է Ֆրանսիական ակադեմիայի Էժեն Կարիերի անվան արվեստի պատմության մրցանակի՝ «Հայկական արվեստ» (համահեղինակ՝ Ժ.Մ. Տիերի, Փարիզ, 1987թ.) աշխատության համար: Պարգևատրվել է Լիտվայի Մեծ Իշխան Գեդիմինասի շքանշանով՝ Լիտվայի և

Ֆրանսիայի միջև մշակութային համագործակցության զարգացմանը բերած նպաստի համար (2001թ.):

2008թ. Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաթերթի» տվյալների հիման վրա



ՏՈՏՈԼՅԱՆ Արտյոմ

TOTOLIAN Artem

Կենսաբան, բժիշկ: Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս: Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Սանկտ Պետերբուրգ, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է 1929թ. սեպտեմբերի 25–ին Լենինական (այժմ՝ Գյումրի) քաղաքում (Հայկական ԽՍՀ): Հակոբ Տոտոլյանի և Մարիա Չուրաբյանի որդին է: Ամուսնացել է Սուրմա Թումանյանի հետ, դուստրը՝ Անահիտ, որդին՝ Արեգ:

Ուսանել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետում (ավարտել է 1954թ–ին): Եղել է ԽՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի Փորձարարական բժշկության գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտ (Լենինգրադ, 1957–60թթ.): Նույն հաստատությունում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն մանրէակենսաբանության բնագավառում և ստացել թեկնածուի գիտական աստիճան (1961թ.): Բժշկական գիտությունների դոկտոր է (1980թ.): 1983թ–ին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Եղել է Հայաստանի սանիտարահամաճարակային լաբորատորիայի վարիչ (1954–57թթ.): ԽՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի Փորձարարական բժշկության գիտահետազոտական ինստիտուտում պաշտոնավարել է իբրև կրտսեր

գիտաշխատող (1960–64թթ.), ավագ գիտաշխատող (1964–72թթ.), տնօրենի տեղակալ գիտական աշխատանքների գծով (1966–88թ.), Գենետիկայի և մանրէների լաբորատորիայի վարիչ (1972–87թթ.), Մոլեկուլային կենսաբանության բաժնի վարիչ (1972–80թթ.), Մոլեկուլային մանրէակենսաբանության բաժնի վարիչ (սկսած 1990թ–ից): Ղեկավարում է նաև Միջազգային առողջապահական կազմակերպության Ստրեպտոկոկային վարակների մասնագիտական ազգային կենտրոնը (սկսած 1984թ–ից):

Հեղինակ կամ համահեղինակ է ավելի քան 300 գիտական հրատարակման՝ ստրեպտոկոկսիների գենետիկայի և ախտաբանության, մոլեկուլային կենսաբանության, մանրէակենսաբանության և հարակից բնագավառներում: Գործուն մասնակցություն է ունեցել Ստրեպտոկոկսիների 12–րդ միջազգային գիտաժողովի կազմակերպմանը և անցկացմանը (Սանկտ Պետերբուրգ, 1993թ.): Խմբագրական կազմի անդամ է «Ամասնաբուժության էջեր» (սկսած 2003թ–ից), «Մանրէակեն-

սաբանություն, համաճարակաբանություն և վարակազերծում» (սկսած 1983թ–ից), «Մոլեկուլային գենետիկա, միկրոկենսաբանություն և մանրէաբանություն» (1985–96թթ.) գիտական հանդեսների:

Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս է (սկսած 1994թ–ից, թղթակից անդամ՝ 1984թ–ից): Մանրէակենսաբանների չեխոսլովակյան միության պատվավոր անդամ է (1995թ.):

Պարգևատրվել է Բնական գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի արժաթե շքանշանով (1998թ.), Ռուսաստանի Դաշնություն վաստակավոր գիտնականի կոչմամբ (1999թ.), «Պատվո նշան» շքանշանով (ԽՍՀՄ, 1971թ.), Օկլահոմայի համալսարանի (ԱՄՆ) պատվոգրով (2002թ.), Չեխիայի Հանրապետության փորձարարական բժշկության ինստիտուտի պատվավոր դոկտորի կոչմամբ (2004թ.), «Ժողովուրդների բարեկամություն» շքանշանով (Ռուսաստանի Դաշնություն, 2004թ.):

2006թ. Բաց տվյալության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՓԱՇԱՅԱՆ Չարլզ Կրտսեր

PASHAYAN Charles, Jr.

Իրավաբան, ԱՄՆ–ի Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի անդամ Կալիֆոռնիա նահանգից (1979–91թթ.): Ֆրեզնո, Կալիֆոռնիա: Ծնվել է Ֆրեզնոյում 1941թ. մարտի 27–ին: Ամուսնացել է Սալլի Քրիստիանի հետ (1985թ.):

Ուսանել է Քլարմոնտի (Կալիֆոռնիա) Պոմոնա քոլեջում՝ ստանալով արվեստների պսակավորի կոչում (1963թ.), այնու-

հետև Հաստինգսի իրավաբանական դպրոցում (Սան Ֆրանցիսկո, Կալիֆոռնիայի համալսարան), արժանանալով իրավագիտության դոկտորի գիտական աստիճանի (1968թ.): Սահմանադրական իրավունքի ուսումնասիրության մեջ կատարելագործվել է Օքսֆորդի համալսարանում՝ ստանալով նաև գրականության պսակավորի կոչում (Անգլիա, 1977):

Կապիտանի զինվորական աստիճանով ծառայել է Ամերիկյան բանակում, Վիետնամի պատերազմի տարիներին (1968–70թթ.): Եղել է դատավոր Կալիֆոռնիայի

նահանգում (սկսած 1969թ-ից), այնուհետև ընդգրկվել է ԱՄՆ-ի Գերագույն դատարանի կազմում (սկսած 1977թ-ից): Եղել է Միացյալ Նահանգների առողջապահության, կրթության և սոցիալական ապահովության պետական դեպարտամենտի հատուկ խորհրդատու (1973-75թթ.): Լինելով թեկնածու՝ առաջադրված Հանրապետական կուսակցության կողմից (Կալիֆոռնիայի նահանգի Ֆրեզնո և Բեյկերսֆիլդ քաղաքներում), 1979թ-ից սկսած՝ հինգ անգամ հաջորդաբար ընտրվել է իբրև ԱՄՆ-ի Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի կոնգրեսական (մինչև 1991թ.):

Եղել է Միավորված ազգերի կազմակերպությունում ԱՄՆ-ի ներկայացուցիչը սովորական ապառազիությունների կրճատման միջազգային խորհրդակցություններում (2001թ.):

ԱՄՆ-ի Կոնգրեսի ներկայացուցիչների պալատում հանդես է եկել բազմաթիվ օրենսդրական նախաձեռնություններով և օրինագծերով, այդ թվում 1915թ. Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ օրինագծի ներկայացմամբ:

Հայ արհեստավարների միության անդամ է (Գլենդեյլ, Կալիֆոռնիա):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՓԱՐԼԱԲՅԱՆ Նշան

PARLAKIAN Nishan

Թատերագիր, բեմադրիչ, թատերագետ, թարգմանիչ: Կոլումբիայի համալսարանի Ջոն Ջայ քոլեջի թատերագիտության պատվավոր պրոֆեսոր: Նյու Յորք, ԱՄՆ: Ծնվել է 1925թ-ին: Ամուսնացել է Ֆլորանս Փարլաքյանի հետ:

Ուսանել է Կոլումբիայի համալսարանի Ջոն Ջայ քոլեջում՝ ստանալով արվեստների մագիստրոսի գիտական աստիճան: Նույն համալսարանում արժանացել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճանի թատերագիտության ասպարեզում: Ջոն Ջայ քոլեջի թատերագիտության պատվավոր պրոֆեսոր է:

Նեկավարել է Ամերիկայի հայ ուսանողական միության թատերախումբը (սկսած 50-ական թվականներից), այնուհետև Հայ առաքելական եկեղեցու Ամերիկայի արևելյան թեմի թատերախումբը (հրավիրվել է Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի, ներկայիս՝ Երուսաղեմի հայոց պատրիարքի կողմից), որը շրջել է ԱՄՆ-ի բազմաթիվ քաղաքներում, հայերենով բեմադրելով Շիրվանզադեի, Պարոնյանի, Սունդուկյանի և այլ հայ հեղինակների ստեղծագործություններ (1972-86թթ.):


Հեղինակ է մեծ թվով հոդվածների թատերագիտության, հայ թատրոնի և թատերգության պատմության վերաբերյալ: Հիշարժան են նրա «Ազգային թատրոնը Միացյալ Նահանգներում» հոդվածը (1980թ.), ամերիկահայ թատերգությանը, Վիլյամ Մարոյանին և Եվզենի Վախթանգովին նվիրված հոդվածները (հրատարակվել են «Արարատ» պարբերականում): Թատերգության ասպարեզում հեղինակ է մի քանի ստեղծագործությունների, որոնցից հատկապես հիշարժան են «Գրագորություն» (1960թ., հրատարակված 1962թ-ին), «Տատիկ, աղոթիր ինձ համար» (1992թ., հրատարակված «Գրիֆտոն հաուզ»-ի, 1993թ.): Անգլերեն է թարգմանել Շիրվանզադեի «Պատվի համարը» և «Չար ոգին», Միսլիի «Նորահարսը», ինչպես նաև մի քանի ժամանակակից հայ հեղինակների ստեղծագործություններ: Հեղինակն է «Արդի հայ թատերգությունը՝ նախնիների ձայների անթուղի» («Կոլումբիա», 2004թ.) և համահեղինակը «Ժամանակակից հայ թատերգությունը» (Պիտեր Բոուլի հետ, 2001թ.), «Հայ գրականություն, արևելքի և արևմուտքի միջև» (համահեղինակ, «Ազգային գրականության հանդես» 1984թ.) աշխատությունների: Մասնակցել է «Ազգային նվիրում

մարդկությանը» կազմակերպության Շեքսպիրյան փառատոնին՝ ղեկավարելով «Շեքսպիրը և աշխարհը» ծրագրի հայկական երկլեզու (հայերեն-անգլերեն) բաժինը (Բնության պատմության թանգարան, 1981թ., «Ներածությունը» հրատարակված է «Ազգային գրականության խորհրդի համաշխարհային զեկույցներ» հանդեսում 1984թ-ին):

Համահիմնադիրն է, նախկին նախագահը և անդամը (սկսած 1958թ-ից) Պիրանդելլոյի ամերիկյան ընկերության (թատերական գործիչների միություն): Մոտ 30 տարի եղել է «Արարատ» պարբերականի խմբագրական կազմի անդամ: Իբրև Ֆուլբրայտի անվան ավագ դասախոս հրավիրվել է նաև Երևանի պետական համալսարան (1992թ.): 1990-ական թթ. Հայաստանում թատերարվեստի զարգացման մասին իր դիտարկումները ներկայացրել է «Ազգային գրականության խորհրդի համաշխարհային զեկույցներ» հանդեսում 1993թ-ին:

Արժանացել է Ամերիկայի հայ ուսանողական միության Արթուր Դադյանի անվան հայկական մշակութային ժառանգության պահպանման մրցանակի՝ հայ մշակույթին և նրա ուսումնասիրությանը մատուցած ծառայությունների համար (Նյու Յորք, 1999թ.), Ստանլեյի մրցույթային հանձնախմբի «Հիշատակման պատվավոր մրցանակի»՝ «Գրագորություն» թատերախաղի համար (1960թ.), «Կոլումբոս Զաունտղաուն»՝ Արվեստի միջազգային մրցանակի («Տատիկ, աղոթիր ինձ համար» թատերգության համար, 1992թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՓԵԼԵՇՅԱՆ Արտավազ

PELESHYAN Artavazd

Վավերագրական կինոյի բեմադրիչ, կինոարվեստի տեսաբան: Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստ և Ռուսաստանի Դաշնության արվեստի վաստակավոր գործիչ: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է Լենինականում (այժմ՝ Գյումրի) 1938թ. նոյեմբերի 22-ին (հայրանունը՝ Աշոտ):

Ավարտել է Կինեմատոգրաֆիայի համամիութենական պետական ինստիտուտը (Մոսկվա, 1968թ.):

Իբրև բեմադրիչ և սցենարիստ նկարահանել է բազմաթիվ ֆիլմեր, հիմնականում վավերագրական կինոյի ժանրում, այդ թվում «Մարդկանց երկիրը» (1966թ.), «Սկիզբ» (1967թ.), «Մենք» (1967թ.), «Մեր երկիրը» (1982թ.), «Բնակիչները» (1970թ.), «Մեր դարը» (1973թ.) «Տարվա եղանակները» (1975թ.), «Կյանք» (1993թ.), «Վերջ» (1994թ.): Նրա ֆիլմերը կարճամետրաժ են (6-ից մինչև 60 րոպե տևողությամբ): Դրանց բնորոշ է փաստագրության փիլիսոփայական ըմբռնումը, նորարարությունը մոնտաժի մեջ, ձայնային և երաժշտական ինքնատիպ լուծումները, որոնց համադրումը նրա ֆիլմերը դարձնում են ինքնատիպ և քնարական:

Հեղինակ է «Իմ կինոն» («Սովետական գրող», Երևան, 1988թ.) գրքի, ուր ամփոփված են նրա տեսական պատկերացումները կինոնկարահանման արվեստի մասին: Կինոարվեստի տեսության մեջ հայտնի է իր հեղինակած, այսպես կոչված հեռացված մոնտաժի ինքնատիպ նորամուտությամբ ֆիլմերի ստեղծման աշխատանքում («Վոպրոսի կինոխկուստվա» հ.15, Մոսկվա, 1974թ.):

Արժանացել է Օբերհաուզենի միջազգային կինոփառատոնի «Գրան պրի» մրցանակի («Մենք» ֆիլմի համար, 1970թ.), Հայկական ԽՍՀ պետական մրցանակի («Մեր դարը» ֆիլմի համար, 1985թ.), ԽՍՀՄ կինեմատոգրաֆիստների միության առաջին մրցանակի (1987թ.), Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործչի կոչման (1979թ.), Ռուսաստանի Դաշնության արվեստի վաստակավոր գործչի կոչման (1993թ.), Հայաստանի Հանրապետության «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանի (1995թ.), «Սքան Պրի» հեռուստատեսային մրցանակի (2000թ.), «Լավր» մրցանակի (Ռուսաստանի Դաշնություն, 2003թ.), Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստի կոչման (2004թ.), «Ոսկե ծիրան» ֆիլմերի միջազգային փառատոնի «Փարաջանովյան թախտ» մրցանակի՝ միջազգային կինոարվեստի զարգացմանը մատուցած ծառայությունների համար (Երևան, 2006թ.) և բազմաթիվ այլ մրցանակների :

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՓԻՐՈՒԶՅԱՆ ԼԵՎ

PIRUZIAN Lev

Կենսաֆիզիկոս: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի անդամ: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Դեղաբանության ֆիզիկական և քիմիական հիմնախնդիրների կենտրոնի տնօրեն: Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է 1937 թ. հունիսի

16-ին Մանես գյուղում (Ալավերդու շրջան, Հայաստան): Արամ Փիրուզյանի և Եվգենիա Մելիք-Ալախվերդովա-Փիրուզյանի որդին է: Ամուսնացել է Էլեոնորա Սուրենի Փիրուզյանի հետ, երկու երեխայի հայր է:

Ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը (1961թ.): Ուսանել է Մոսկվայի փորձարարական վիրաբուժության սարքերի և գործիքների գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրայում (1961-64թթ.): Ստացել է բժշկական գիտությունների թեկնածուի (1967թ.), ապա դոկտորի (1968թ.) գիտական աստիճաններ և պրոֆեսորի կոչում (1971թ.):

Աշխատանքի է անցել ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում (սկսած 1967թ-ից): Եղել է այդ հաստատության Բժշկական կենսաֆիզիկայի բաժնի հիմնադիրն ու ղեկավարը (1970-72թթ.): Հիմնադրել և որպես տնօրեն ղեկավարել է Քիմիական միացությունների կենսաբանական փորձարկման ինստիտուտը (միջգերատեսչական գիտահետազոտական հաստատություն, 1972-84թթ.): Միաժամանակ, հիմնադրել է նաև Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտի բժշկական կենսաֆիզիկայի ամբիոնը: Ներկայումս Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի գլխավոր գիտական աշխատակից է, Բժշկական կենսաբանության լաբորատորիայի վարիչ (սկսած 1985թ-ից), Դեղաբանության ֆիզիկական և քիմիական հիմնախնդիրների կենտրոնի տնօրեն (սկսած 2000թ-ից):

Հեղինակ է մոտ 400 գիտական հոդվածի և երեք մենագրության: Նրա կատարած հիմնարար հետազոտությունները վերաբերում են մոլեկուլային բժշկությանը, մոլեկուլային ախտաբանությանը, դեղաբանության մետաբոլիկ և էթնիկ հաստատագրմանը, թունաբանությանը, հիգիենայի և ուռուցքաբանության հիմնահարցերին: Բազմաթիվ նոր բժշկական դեղամիջոցների ստեղծման հեղինակ է: Նրա և աշխատակիցների գիտական հետազոտությունների կարևոր արդյունքների մի մասը տեղ է գտել «Բժշկական կենսաֆիզիկա: Քիմիական միացությունների կենսաբանական փոր-

ձարկում» երկհատորյակում («Մեդիցինա» հրատ., 2005թ.), ինչպես նաև «Մարդու մետաբոլիկ անձնագիրը որպես դեղաբանության նոր ստրատեգիայի հիմք» (2005թ.) նրա հիմնարար աշխատության մեջ:

Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի անդամ է (2000թ-ից, թղթակից անդամ՝ 1974թ-ից): Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ է: Անդամ է ԱՄՆ-ի Օդագնացության և տիեզերագնացության ընկերության (1971թ.), Տիեզերագնացության միջազգային ակադեմիայի (1976թ.): Եղել է ԽՍՀՄ մի քանի նախարարությունների և գերատեսչությունների Քիմիական միացությունների

կենսաբանական փորձարկման գծով կոլեգիայի անդամ՝ ունենալով գլխավոր նախագծողի պաշտոնական իրավասություններ (1980- 84թթ.):

Պարգևատրվել է ԽՍՀՄ «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով (1975թ.) և «Հոկտեմբերյան հեղափոխության» շքանշանով (1981թ.), Ռուսաստանի Դաշնության «Հայրենիքի առջև ծառայությունների համար», 4-րդ աստիճանի (1997թ.), 3-րդ աստիճանի (2002թ.) և 2-րդ աստիճանի (2008թ.) շքանշաններով:

2008թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ԶՅՈՒՐԶՅԱՆ Հարություն Լևոն ԹԻՐԹՃԵԱՆ Հարութիւն Լեւոն

KURKJIAN Haroutioun Leon

Հայոց լեզվի և գրականության բազմաթիվ դասագրքերի հեղինակ, հրապարակախոս, խմբագիր, թարգմանիչ: Աթենք, Հունաստան: Ծնվել է 1943թ. դեկտեմբերի 13-ին Բեյրութում (Լիբանան): 1984թ-ից բնակվում է Հունաստանում:


Ուսանել է Բեյրութի «Համազգային» վարժարանում, այնուհետև Բեյրութի համալսարանում, ապա Փարիզի Սորբոնի համալսարանում՝ մասնագիտանալով փիլիսոփայության ասպարեզում (1978թ.):

Հայոց լեզու և գրականություն է դասավանդել Բեյրութի «Համազգային» վարժա-

րանում, ինչպես նաև Հայկազյան համալսարանում (1964-84թթ.): Պարբերաբար հոդվածներ է տպագրել հայկական ամսագրերում և թերթերում («Բազին», «Յառաջ» և այլն):

Հեղինակ է "Essai sur l'Exil" (Ֆրանսերեն և հայերեն լեզուներով. Փարիզ, 1978թ.) աշխատության, հայոց լեզվի և գրականություն բազմաթիվ դասագրքերի, որոնցից հատկապես հիշարժան են «Նոր Բերականութիւն Հայերէն Լեզուի (արեւմտահայերէն)» (հ. Ա-Գ, Աթենք, 1989թ.), համահեղինակությամբ Մարո Գալայջյան-Քյուրքչյանի՝ «Հայրենի Աղբիւր» (Աթենք), «Բարև» («Մեդիատեք», Փարիզ), «Մեր Լեզուն» (Մոնրեալ), «Հայ Կեանք եւ Գրականութիւն» (Աթենք) դասագրքերը, ֆրանսերեն-հայերեն և հայերեն-ֆրանսերեն մի շարք բառարանները և հայերենի ուսուցման ձեռնարկները: Ֆրանսերենի թարգմանիչն ու խմբագիրն է Հրաչ Տասնապետյանի «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը 1890-1924թթ.» (Միլան, 1988թ.) աշխատության:

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՔՈՉԱՐՅԱՆ Ռոբերտ

KOCHARIAN Robert

Քաղաքական գործիչ: Հայաստանի Հանրապետության նախագահ 1998–2008թթ.: Երևան, Հայաստանի Հանրապետություն: Ծնվել է 1954թ. օգոստոսի 31–ին Ստեփանակերտում (Լեռնային Ղարաբաղ): Սեդրակ Քոչարյանի և Էմմա Օհանյանի որդին է: Ամուսնացել է Բելլա Քոչարյանի հետ, ունի երկու որդի՝ Սեդրակ և Լևոն, մեկ դուստր՝ Գայանե:

Գերազանցությամբ ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի (ներկայումս՝ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան) էլեկտրատեխնիկական ֆակուլտետը (1982թ.):

Ծառայել է Խորհրդային բանակում (1972–74թթ.): Աշխատել է Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանում որպես ինժեներ–մեխանիկ (1982–89թթ.): Նախկին Խորհրդային Միության կոմունիստական երիտասարդական միության և Կոմունիստական կուսակցության կազմակերպություններում զբաղեցրել է տարբեր պաշտոններ (սկսած 1980–ական թվականներից), այդ թվում եղել է էլեկտրատեխնիկական գործարանի կուսակցական կազմակերպության քարտուղար (1982–87թթ.):

Ընտրվել է Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավոր և Գերագույն Խորհրդի նախագահության անդամ (1989–91թթ.): Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումից հետո եղել է նրա Գերագույն Խորհրդի 1–ին գումարման պատգամավոր (1991–92թթ.): Պաշտոնավարել է իբրև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության պետական կոմիտեի նախագահ և վարչա-

պետ (1992–94թթ.): Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն Խորհրդի որոշմամբ նշանակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ (1994–96թթ.), նույն պաշտոնում ընտրվել է համաժողովրդական քվեարկությամբ (1997թ.): Պաշտոնավարել է իբրև Հայաստանի Հանրապետության վարչապետ (1997–98թթ.):

Եղել է Հայաստանի Հանրապետության նախագահը սկսած 1998թ. մարտի 30–ից (վերընտրվել է համաժողովրդական քվեարկության արդյունքում՝ 2003թ–ին) և պաշտոնավարել մինչև 2008թ. ապրիլ ամիսը:

Ղարաբաղյան ազատագրական շարժման առաջնորդներից մեկն է (սկսած 1988թ–ից): Եղել է «Կոունկ» կազմակերպության անդամ և հիմնադիրն ու ղեկավարը «Միացում» կազմակերպության: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության ու անվտանգության ապահովման կառույցների ստեղծման առաջին կազմակերպիչներից մեկն է:

Ի թիվս բազմաթիվ երկրների պետական պարզևների, արժանացել է Միջազգային օլիմպիական կոմիտեի բարձրագույն պարգևին՝ «Պատվո շքանշանի» (2003թ.), Մեկենասների միջազգային կազմակերպության «Մեկենասի աստղ» բարձրագույն կարգի աղամանդակու շքանշանի (Մոսկվա, 2005թ.), Ռուս ուղղափառ եկեղեցու «Ուղղափառ եկեղեցիների ժողովուրդների միասնություն» հաստատության գլխավոր մրցանակի՝ Մոսկվայի և համայն Ռուսաստանի պատրիարք Ալեքսի Բ–ի կողմից (2006թ.), Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Գրիգոր Լուսավորիչ» շքանշանի (2008թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական արդյունքների տվյալների հիման վրա



ՔՐՔԻԱՇԱՐՅԱՆ ՀԱԿՈՐ

KERKIACHARIAN Agos

Վիրաբույժ, հասարակական գործիչ: «Արարատ» գիտությունների միջազգային ակադեմիայի հիմնադիր և նախագահ: Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Մոնտմորենսի, Ֆրանսիա: Ծնվել է Բեյրութում (Լիբանան): Գևորգ Քրքիաշարյանի և Մարի Մեմարյանի որդին է: Ամուսնացած է, ունի երկու դուստր և մեկ որդի:

Պաշտոնավարել է իբրև վիրաբուժական կլինիկայի ղեկավար: Եղել է Փարիզի համալսարանի օրթոպեդիական վիրաբուժության ամբիոնի գլխավոր մասնագետ: Իբրև վիրաբուժության պրոֆեսոր դասավանդել է Ֆրանսիայի համալսարանական հիվանդանոցներում (Փարիզ, 1969թ.): Համագործակցել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (Ժնև) և Աշխատանքի միջազգային գրասենյակի (Մոսկվա, Կիև, Թբիլիսի, 1969թ.), իսկ 1997թ–ից սկսած նաև Եվրոպայի Խորհրդի գրասենյակի (Ստրասբուրգ) հետ: Առողջապահության հարցերով Յունեսկո–ի խորհրդական է: Բազմաթիվ մասնագիտական հանդեսներում հրատարակած գիտական աշխատությունները վերաբերում են ընդհանուր, օրթոպեդիական և մանկական վիրաբուժության ասպարեզներում կատարած ինքնատիպ ներդրումներին:

Բրիտանական վիրաբուժական ընկերության արտասահմանյան անդամ է (Լոնդոն, 1964թ.): Համահիմնադիրն ու անդամն է «Վիրաբույժների միջազգային համագործակցություն» կազմակերպության (Սան Ռեմո): Օրթոպեդիական և վնասվածքաբանական վիրաբուժության միջազգային ընկերության (Բրյուսել) և

Ֆրանսիական վիրաբուժական ընկերության պատվավոր անդամ է: Անդամ է Օրինական և սոցիալական բժշկության միջազգային ակադեմիայի (Հռոմ, 1974թ.), Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի: Գործուն մասնակցություն է ունեցել է Յունեսկո–ի հովանու ներքո Եթովպիական իրավունքների սահմանման առաջին համաշխարհային գիտաժողովին (Բուդապեշտ, 1999թ.):

Հիմնադիրն ու նախագահն է «Արարատ» գիտությունների միջազգային ակադեմիայի (Փարիզ, 1986թ.): Պատվավոր նախագահն է Հայ բժիշկների համաշխարհային միության: Նախագահն է Հաճնի հայրենակցական միության: Նախագահել է Հայ բժիշկների համաշխարհային (Բեյրութ, 1974թ.) և Հայ գիտնականների համաշխարհային երկրորդ համագումարներում (Փարիզ, 1993թ.), ինչպես նաև բժշկագիտության, արտակարգ իրավիճակների հարցերի, գիտության, կրթության առողջապահության, հայկական մշակույթի, բնապահպանության հիմնահարցերին մկիրված բազմաթիվ միջազգային գիտաժողովներում: Հայկական բարեգործական ընդհանուր միության «Վետերանների խմբի» նախագահն է: Նախիջևանի հայերի միության պատվավոր անդամ է: Ընտրվել է Հայերի համաշխարհային կոնգրեսի կենտրոնական խորհրդի անդամ (Մոսկվա, 2003):

Արժանացել է Հայաստանի բժշկական համալսարանի պատվավոր դոկտորի և Հրաչյա Աճառյանի անվան համալսարանի պատվավոր պրոֆեսորի կոչումներին: Պարգևատրվել է Լիբանանի, Հայաստանի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և այլ երկրների բազմաթիվ պետական ու կառավարական պարգևներով, ոսկե շքանշաններով և մրցանակներով:

2005թ. Հայկական կենսագրական կենտրոնի «Հարցաբերի» տվյալների հիման վրա, խմբագրված հատորի հեղինակի կողմից



ՔՐՔԻԱՇԱՐՅԱՆ Սերժ, Պերժ

KIRKIACHARIAN Serge, Berdj

Քիմիկոս, ղեղազոր: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ: Գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Շատնե Մալաթի, Ֆրանսիա: Ծնվել է Բեյրութում (Լիբանան) 1933թ. հունիսի 23-ին: Գևորգ Քրքիաշարյանի և Մարի Մեմարյանի որդին է: Ամուսնացել է Էսթեր Ապոշյանի հետ (1965թ.), երեխաները՝ Ժորժ և Բեռնար:

Սովորել է Փարիզի հարավային համալսարանում՝ ստանալով ղեղազորի (1958թ.), գիտությունների պսակավորի (1962թ.) և գիտությունների դոկտորի (1966թ.) կոչումները և գիտական աստիճանները:

Ստացել է Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի գիտական դրամաշնորհի (Փարիզ, 1964–70թթ.): Իրևն պրոֆեսոր դասավանդել է Կաենի (Ֆրանսիա) համալսարանի ղեղազորական ֆակուլտետում (1968–69թթ.): Ստացել է Կանադայի Արևմտյան Օնտարիոյի համալսարանի հետդոկտորական գիտական հետազոտությունների դրամաշնորհի (Լոնդոն և Արևմտյան Օնտարիո, 1969–70 թթ.): Եղել է Բեյրութի Սեն Ժոզեֆ համալսարանի բժշկության և թերապիական քիմիայի պրոֆեսոր (Լիբանան, 1971–76 թթ.), այնուհետև Փարիզի Հարավային համալսարանի պրոֆեսոր (Շատնե Մալաթի, Ֆրանսիա, սկսած 1976թ–ից): Ֆրանսիայի առողջապահության նախարարության ղեղանյութերի գլխավոր փորձագետն է և Փարիզի Բիսետր հիվանդանոցի բարոյագիտական հանձնաժողովի նախագահը (սկսած 1992թ–ից): Փարիզի Հարավային համալսարանի վաստակավոր պրոֆեսոր է

(2001թ.):

Հեղինակ է ավելի քան 150 գիտական հոդվածի, գյուտերի և դասագրքերի: Կարևոր մենագրություններն են «Տիրոհղային հորմոնների քիմիան» (1974թ.), «Դեղագործություն և թերապիա» (1986թ. երկրորդ հրատ.1992թ.), «Դեղագործական ցանկեր» (1994 թ., երկրորդ հրատ.1992թ.), «Բուժական քիմիայի ձեռնարկ» (1996թ.), «Քիմիական թերապիայի համառոտ ձեռնարկ», հ.1–3 (համահեղինակ, 1992թ.):

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի (1996թ.), Ֆրանսիայի ղեղաբանության (Փարիզ, 1973թ.), ինչպես նաև Բժշկական (Փարիզ, 1982թ.) ակադեմիաների անդամ է: «Արարատ» գիտությունների միջազգային ակադեմիայի գիտական քարտուղարն է (Փարիզ, 1993 թ.):

Պարգևատրվել է Պետրոս Մեծի (1996թ.) և Կապիցայի (1996թ.) անվան մեդալներով (Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի կողմից): Ֆրանսիայի ղեղաբանության (1973թ.) և Բժշկական (1982թ.) ակադեմիաների մրցանակների դափնեկիր է: Երևանի պետական բժշկական համալսարանի պատվավոր դոկտոր է (1994թ.):

2005թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՔՐՔՅԱՇԱՐՅԱՆ Ստեփան

KERKYASHARIAN Stepan

Հասարակական և պետական գործիչ: Գրականության պատվավոր դոկտոր: Նոր Հարավային Ռեյսի նահանգի համայնքային հարաբերությունների հանձնախմբի և

Ազգային խտրականության դեմ պայքարի գործակալության ղեկավար: Սիդնեյ, Նոր Հարավային Ռեյսի նահանգ, Ավստրալիա: Ծնվել է 1943թ–ին Կիպրոսում (Ավստրալիա է եկել 1967թ–ին): Ամուսնացել է Հիլդա Քրքյաշարյանի հետ, երկու երեխայի հայր է:

Գործուն մասնակցություն է ունեցել Ավստրալիայի հայ համայնքի կյանքին՝ լինելով Սիդնեյի կիրակնօրյա հայկական դպրոցի պատասխանատուն: Ստանձնել է 2ED փորձնական ռադիոկայանից հայերեն հաղորդումների հեռարձակման պատասխանատվությունը (1976–79թթ.): Եղել է Ավստրալիայի հատուկ հեռարձակումների միավորման 2ED ռադիոկայանի բաժնի վարիչ (1979–80թթ.), այնուհետև բազմալեզու ռադիոհաղորդումների հեռարձակման (ներառյալ Մելբուռնի 3ED ռադիոկայանը) ղեկավարը (1980–89թթ.): Ավստրալիայի հատուկ հեռարձակման ծառայության հեռուստատեսության հիմնադիրներից մեկն է (ղեկավար՝ Բրուս Ջինզլ, 1980թ.): Նրա գործուն մասնակցությամբ են հիմնադրվել Բրիսբենի 4EBI, Ադելաիդայի 5EBI և այլ բնակավայրերի բազմալեզու ռադիոհեռարձակումները: Իրևն նախագահ ղեկավարել է Նոր Հարավային Ռեյսի նահանգի ազգային գործերի հանձնախումբը (1989–2001թթ.), որը վերանվանվել է Համայնքային հարաբերությունների հանձնախումբ (սկսած 2001թ–ից): Նոր Հարավային Ռեյսի նահանգի ազգային խտրականության դեմ պայքարի հանձնախմբի նախագահն է (սկսած 2003թ–ից):

Կարևոր ներդրում ունի Ավստրալիայում բազմաձևակության հասարակության ձևավորման գործում, որը մասնավորապես ներառում է ներգաղթի վերաբերյալ օրենսդրության կատարելագործում, մշակության քաղաքականության հարցեր, պայքար ազգային խտրականության դրսևորումների դեմ, ներգաղթածների բնակարանային կարիքների բավարարում, բժշկական օգնության և կրթության կազմակերպում և այլն:

Ընդգրկված է Սիդնեյի տեխնոլոգիական համալսարանում դասավանդող մասնագետների կազմում (1995թ–ից): Անդամ է Նոր Հարավային Ռեյսի աշխարհագրական անունների խորհրդի, Ավստրալիայի հեռարձակողների միավորման «Բողոքների քննման անկախ հանձնախմբի» (10 տարի ժամկետով), Նոր Հարավային Ռեյսի ուսումնասիրման խորհրդի (1900–2004թթ.), Ավստրալիայի բժշկական պետական խորհրդի «Կլինիկական հետազոտությունների բողոքարկման» հանձնախմբի: Եղել է 2000թ. Սիդնեյի օլիմպիական խաղերի կազմակերպական հանձնախմբին կից «Բազմաձևակության հարաբերությունների խորհրդակցական խմբի» նախագահը:

Պարգևատրվել է Ավստրալիայի շքանշանով (1992թ.), Լեհաստանի «Մեծ խաչ» շքանշանով (1990թ.), Օլիմպիական խաղերի շքանշանով (2000թ.): Սիդնեյի համալսարանի գրականության պատվավոր դոկտոր է (2007թ.):

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՕԳԱՆԵՍՅԱՆ Յուրի

OGANESSIAN Yuri

Ֆիզիկոս: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի անդամ: Գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է Դոնի Ռոստովում (Ռուսաստան) 1933թ-ի ապրիլի 14-ին (հայրանունը՝ Յուրյակ): Ամուսնացած է, ունի երկու դուստր:

Ավարտել է Մոսկվայի ճարտարագիտական ֆիզիկայի ինստիտուտը (ներկայումս՝ ճարտարագիտական ֆիզիկայի պետական համալսարան, 1956թ.): Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր է սկսած 1970 թ-ից:

Աշխատել է Դուբնայի (Ռուսաստան) միջուկային ռեակցիաների լաբորատորիայում նախ իբրև ավագ գիտաշխատող (1967-76), ապա տնօրենի տեղակալ գիտական աշխատանքի գծով (1976-89), այնուհետև Ֆյուրովի անվան միջուկային ռեակցիաների լաբորատորիայի վարիչ (1989-97): Ներկայումս Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի խմբի ղեկավար է (սկսած 1997թ-ից):

Հեղինակ է երեք գիտական հայտնագործության, մենագրությունների և ավելի քան 230 գիտական հոդվածի՝ ծանր իոնների ֆիզիկայի, կիրառական միջուկային ֆիզիկայի, բժշկական գործածության համար գերմաքուր իզոտոպների ստացման (յոդ 123, պլուտոնիում 237), ծանր իոնների արագացուցիչների ֆիզիկայի և տեխնիկայի, մանրագույն մեմբրանների ուսում-

Օ

նասիրության և այլ բնագավառներում: Ծանր իոնների ֆիզիկայի ուսումնասիրության գիտական դպրոցի հիմնադիրներից մեկն է և մի շարք նոր քիմիական տարրերի հայնագործման հեղինակ (111-116 և 118 ատոմական համարներով ֆերմիանման քիմիական տարրեր): Խմբագրական կազմի անդամ է եվրոպական մի շարք գիտական հանդեսների՝ «Ֆիզիկայի ամսագիր», «Մասնիկների արագացուցիչներ», «Միջուկային ֆիզիկայի նորություններ», «Տարրական մասնիկների ֆիզիկա և ատոմական միջուկներ»:

Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս է (սկսած 2003թ-ից, թղթակից անդամ՝ 1991թ-ից): Նախագահում է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Կիրառական ֆիզիկայի խորհրդում: Ֆիզիկայի եվրոպական միության միջուկային հանձնախմբի անդամ է: Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի գիտական խորհրդի անդամ է: Ֆրանսիայի և Ճապոնիայի Ծանր իոնների հետազոտության ազգային կենտրոնների անդամ է:

Արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի (1975թ.), ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Կուրչատովի անվան մրցանակի, Ֆյուրովի անվան մրցանակի (1993թ.), Ալեքսանդր-Ֆոն-Հոլմբոլտի անվան մրցանակի (1995թ.), Ֆիզիկայի եվրոպական միության միջուկային գիտությունների համար տրվող մրցանակի (2003թ): Պարգևատրվել է «Պատվո ճշան», «Աշխատանքային կարմիր դրոշի», «Ժողովուրդների բարեկամություն», «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար»՝ չորրորդ (1999թ.) և երրորդ կարգի (2003թ.) շքանշաններով: Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի մասնակից երկրների կողմից պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով ու մեդալներով:

2007թ. Բաց տպագրության տեղեկատվական աղբյուրների տվյալների հիման վրա



ՕԿԱՆՈՎ Ռաֆայել

OGANOV Rafael

Սրտաբան: Ռուսաստանի Դաշնության գլխավոր սրտաբան: Ռուսաստանի Դաշնության բժշկական գիտությունների ակադեմիայի անդամ: Բժշկագիտության դոկտոր, պրոֆեսոր: Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն: Ծնվել է 1937թ. դեկտեմբերի 9-ին Մոսկվայում: Գեղամ Օհանովի (Օհանյանի) և Իրինա Ցիգանովայի որդին է: Ամուսնացել է Նատալյա Ժուրավկայի հետ (1968թ.), ունի մեկ որդի՝ Ալեքսեյ:

Ավարտել է Մոսկվայի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտը (Մոսկվա 1959թ.), ապա Մոսկվայի երկրորդ բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը (1966թ.):

Դասավանդել է Ուզբեկստանի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտում (1958-60թթ.): Եղել է Մոսկվայի երկրորդ բժշկական ինստիտուտի հիվանդանոցային թերապիայի ամբիոնի ասպիրանտ, իսկ այնուհետև ասիստենտ (1966-76թթ.): Պաշտոնավարել է իբրև ԽՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի Համամիութենական սրտաբանական կենտրոնի գիտական քարտուղար (1976-82թթ.): Իբրև տնօրեն ղեկավարել է ԽՍՀՄ (1991թ-ից՝ Ռուսաստանի Դաշնության) բժշկական գիտությունների ակադեմիայի Կանխարգելիչ սրտաբանության ինստիտուտը (սկսած 1982թ-ից), որը 1988թ-ին վերակազմավորվել է իբրև Կանխարգելիչ բժշկության գիտահետազոտական ինստիտուտ: Ներկայումս այդ հաստատության տնօրենն է: Ռուսաստանի Դաշնության առողջապահության նախարարության գլխավոր սրտաբան է (սկսած 2005թ-ից):

Հեղինակ կամ համահեղինակ է 11 մե-

